ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը		*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Պայմանագիր	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2018.03.12/17(1375).1	*Ընդունման վայրը*	Մոսկվա
Ընդունող մարմինը	Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ	*Ընդունման ամսաթիվը*	11.04.2017
Ստորագրող մարմինը	Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ	*Ստորագրման ամսաթիվը*	11.04.2017
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.01.2018	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝ անդամ պետություններ՝

հիմնվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի վրա, Եվրասիական տնտեսական միությունում միասնական մաքսային կարգավորում ապահովելու նպատակով, պայմանավորվեցին հետևյալի մասին.

Հոդված 1
Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգիրքը

Անդամ պետություններն ընդունում են Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգիրքը, որը ներկայացված է սույն Պայմանագրի թիվ 1 հավելվածում:

Հոդված 2
Պայմանագիրն ուժի մեջ մտնելը

Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից, սակայն 2017 թվականի հուլիսի 1-ից ոչ շուտ:

Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու կապակցությամբ դադարեցվում է Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող՝ սույն Պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված ցանկով նախատեսված միջազգային պայմանագրերի գործողությունը (ժամանակավոր կիրառումը), և ուժը կորցրած են ճանաչվում Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող՝ սույն Պայմանագրի թիվ 3 հավելվածով սահմանված ցանկով նախատեսված միջազգային պայմանագրերի դրույթները:

Հոդված 3
Պայմանագրում փոփոխություններ կատարելը

Անդամ պետությունների փոխադարձ համաձայնությամբ սույն Պայմանագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով և կազմում են սույն

Պայմանագրի անբաժանելի մասը:

Հոդված 4
Վերապահումները

Սույն Պայմանագրի մասով վերապահումներ չեն թույլատրվում:

Հոդված 5
Վեճերի կարգավորումը

Սույն Պայմանագրի մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով:

Հոդված 6
Եզրափակիչ դրույթներ

Սույն Պայմանագիրը Եվրասիական տնտեսական միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է և Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս է կազմում:
Սույն Պայմանագիրը գերակայում է մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի նկատմամբ, բացառությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2017 թվականի ապրիլի 11-ին, մեկ օրինակից՝ ռուսերենով:
Սույն Պայմանագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Պայմանագրի ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետությունից	Բելառուսի Հանրապետությունից	Ղազախստանի Հանրապետությունից	Ղրղզստանի Հանրապետությունից	Ռուսաստանի Դաշնությունից

ՀԱՎԵԼՎԱԾ 1
«Եվրասիական տնտեսական միության
մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ

ԲԱԺԻՆ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գլուխ 1

Հիմնական դրույթներ Եվրասիական տնտեսական միությունում մաքսային կարգավորման վերաբերյալ

Հոդված 1. Մաքսային կարգավորումը Եվրասիական տնտեսական միությունում

1. Եվրասիական տնտեսական միությունում (այսուհետ՝ Միություն) իրականացվում է միասնական մաքսային կարգավորում, որը ներառում է Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման, Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս դրանց գտնվելու և օգտագործման կարգի ու պայմանների, Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման, Միության մաքսային տարածքից դրանց մեկնման, ապրանքների ժամանակավոր պահպանման, դրանց մաքսային հայտարարագրման ու բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների, այլ մաքսային գործառնությունների կատարման կարգի, մաքսային վճարների, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ու մաքսային հսկողության անցկացման կարգի սահմանումը,

ինչպես նաև մաքսային մարմինների և Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքներ իրականացնող անձանց միջև իրավազոր հարաբերությունների կանոնակարգումը:

2. Միությունում մաքսային կարգավորումն իրականացվում է մաքսային իրավահարաբերությունները կարգավորող միջազգային պայմանագրերին՝ ներառյալ սույն Օրենսգիրքը, և Միության իրավունքի մաս կազմող ակտերին (այսուհետ՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրեր ու ակտեր) համապատասխան, ինչպես նաև «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին համապատասխան (այսուհետ՝ «Միության մասին» պայմանագիր):

3. Միությունում մաքսային կարգավորումը հիմնվում է Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման ժամանակ անձանց իրավահավասարության, մաքսային գործառնությունների կատարման հստակության, պարզության ու հետևողականության, մաքսային կարգավորման ոլորտում միջազգային պայմանագրերի ու ակտերի մշակման և կիրառման հրապարակայնության և միջազգային իրավունքի նորմերի հետ դրանց ներդաշնակեցման սկզբունքների, ինչպես նաև մաքսային մարմինների գործունեության ընթացքում մաքսային հսկողության ժամանակակից մեթոդների կիրառման ու տեղեկատվական տեխնոլոգիաների առավելագույն օգտագործման վրա:

4. Սույն Օրենսգրքի և մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի միջև հակասություններ ծագելու դեպքում կիրառվում են սույն Օրենսգրքի դրույթները:

5. Մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով ու ակտերով չկարգավորված մաքսային իրավահարաբերությունները, մինչև այդպիսի միջազգային պայմանագրերով ու ակտերով համապատասխան իրավահարաբերությունների կարգավորումը, կարգավորվում են Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ)՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

Հոդված 2. Սահմանումները

1. Սույն Օրենսգրքի նպատակներով գործածվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

1) «վթար»՝ մաքսային հսկողության տակ գտնվող տրանսպորտային միջոցների և (կամ) այլ ապրանքների հետ տեղի ունեցած՝ իր հետևանքներով վնասաբեր տեխնիկական, տեխնոլոգիական կամ այլ բնույթի պատահար, որը հանգեցրել է այդ ապրանքների՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով ու ակտերով չնախատեսված քանակական և (կամ) որակական փոփոխությունների, որոնք չեն առաջացել սեփականատիրոջ և (կամ) այն անձի դիտավորյալ գործողությունների հետևանքով, որի տիրապետության տակ գտնվել են ապրանքները՝ այդ փոփոխությունների պահին, բացառությամբ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական փոփոխությունների, ինչպես նաև անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած փոփոխությունների.

2) «վարչական իրավախախտումներ»՝ վարչական իրավախախտումներ, որոնց մասով մաքսային մարմինները, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, վարչական ընթացակարգ (վարույթ) են իրականացնում.

3) «ապրանքների ներմուծում Միության մաքսային տարածք»՝ Միության մաքսային սահմանը հատելու հետ կապված գործողությունների իրականացում, որոնց արդյունքում ապրանքները Միության մաքսային տարածք են ժամանել ցանկացած միջոցով, այդ թվում՝ միջազգային փոստային առաքանիներով առաքման, խողովակաշարային տրանսպորտի և էլեկտրահաղորդման գծերի օգտագործման միջոցով՝ մինչև մաքսային մարմինների կողմից այդպիսի ապրանքների բացթողումը.

4) «նավեր»՝ ծովով նավարկող նավեր, խառը (գետ-ծով) նավարկության նավեր, ինչպես նաև ներքին ջրային տրանսպորտի (նավարկության) նավեր, որոնք ենթակա են պետական գրանցման՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

5) «Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանում»՝ Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանմանն ուղղված գործողությունների իրականացում ցանկացած միջոցով, այդ թվում՝ միջազգային փոստային առաքանիներով առաքման, խողովակաշարային տրանսպորտի և էլեկտրահաղորդման գծերի օգտագործման միջոցով՝ ներառյալ Միության մաքսային սահմանը հատելը.

6) «ապրանքների բացթողում»՝ մաքսային մարմնի գործողություն, որն իրականացնելուց հետո շահագրգիռ անձինք իրավունք ունեն օգտագործելու ապրանքները՝ հայտագրված մաքսային ընթացակարգին համապատասխան կամ այն ապրանքների առանձին կատեգորիաների համար սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան, որոնք, սույն Օրենսգրքին համապատասխան, ենթակա չեն մաքսային ընթացակարգով ձևակերպման.

7) «հայտարարատու»՝ անձ, որը հայտարարագրում է ապրանքներ կամ որի անունից հայտարարագրվում են ապրանքներ.

8) «դրամական գործիքներ»՝ ճանապարհային չեկեր, մուրհակներ, չեկեր (բանկային չեկեր), ինչպես նաև փաստաթղթային արժեթղթեր, որոնցով հաստատվում է թողարկողի (պարտապանի)՝ դրամական միջոցներ վճարելու պարտավորությունը և որոնցում նշված չէ այն անձը, որին կատարվում է այդ վճարումը.

9) «շահագրգիռ անձ»՝ անձ, որի՝ ապրանքների հետ կապված շահերի վրա ազդում են մաքսային մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց որոշումները, գործողությունները (անգործությունը).

10) «արգելքներ ու սահմանափակումներ»՝ Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ կիրառվող ոչ սակագնային կարգավորման միջոցներ, այդ թվում՝ «Միության մասին» պայմանագրին համապատասխան միակողմանիորեն սահմանվող տեխնիկական կարգավորման միջոցներ, սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ, արտահանման վերահսկողության միջոցներ, այդ թվում՝ ռազմական նշանակության արտադրանքի նկատմամբ կիրառվող միջոցներ, և «Միության մասին» պայմանագրին և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված ճառագայթային անվտանգության պահանջներ.

11) «օտարերկրյա անձ»՝ անդամ պետության անձ չհանդիսացող անձ.

12) «օտարերկրյա ապրանքներ»՝ Միության ապրանքներ չհամարվող, այդ թվում՝ սույն Օրենսգրքին համապատասխան՝ Միության ապրանքների կարգավիճակը կորցրած ապրանքներ, ինչպես նաև ապրանքներ, որոնք ձեռք են բերել օտարերկրյա ապրանքների կարգավիճակ (ճանաչվել են որպես օտարերկրյա ապրանքներ)՝ սույն Օրենսգրքին համապատասխան.

13) «մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսներ»՝ մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերում ընդգրկված՝ փաստաթղթավորված տեղեկությունների (տվյալների բազաներ, տեղեկատվության այլ զանգվածներ) կանոնակարգված ամբողջություն.

14) «արհեստական կղզիներ»՝ դրանց ստեղծման վերաբերյալ նախագծային փաստաթղթերին համապատասխան՝ ըստ տեղակայման վայրի ամրացված օբյեկտներ, որոնք ունեն ողողաբերունկային, լիրքային, ցցային կամ առավելագույն մակընթացության ժամանակ ջրի մակերեսին ցցվող՝ չլողացող այլ հենակետային հիմք, և որոնք օգտագործվում են անդամ պետությունների պաշտպանության և անվտանգության ապահովման, տարածաշրջանային երկրաբանական ուսումնասիրության, երկրաբանական ուսումնասիրության, հանքային ռեսուրսների հետախուզման ու արդյունահանման, ջրային կենսաբանական ռեսուրսների վերաբերյալ ծովային ռեսուրսային հետազոտությունների անցկացման և ձկնորսության իրականացման, ծովային գիտական հետազոտությունների անցկացման նպատակներով, երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին և անդամ պետությունների օրենսդրությանը չհակասող այլ նպատակներով.

15) «առևտրային փաստաթղթեր»՝ փաստաթղթեր, որոնք օգտագործվում են արտաքին առևտրային և այլ գործունեության իրականացման ժամանակ, ինչպես նաև Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված գործարքների կատարումը հաստատելու նպատակով (հաշիվ-ապրանքագրեր (ինվոյսներ), տեխնիկական բնութագրեր, բեռնման (փաթեթավորման) թերթիկներ ու այլ փաստաթղթեր).

16) «անձ»՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, ինչպես նաև իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպություն.

17) «անդամ պետության անձ»՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ստեղծված իրավաբանական անձ, իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպություն, ինչպես նաև անդամ պետությունում մշտական բնակության վայր ունեցող ֆիզիկական անձ, այդ թվում՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան գրանցված անհատ ձեռնարկատեր.

18) «երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրեր»՝ երրորդ կողմի հետ անդամ պետություններից մեկի միջազգային պայմանագիր կամ երրորդ կողմի հետ միջազգային պայմանագիր, որի մասնակիցներն են մի քանի անդամ պետություն կամ բոլոր անդամ պետությունները.

19) «միջազգային փոստային առաքանիներ»՝ ծանրոցներ և նամակագրական թղթակցության առաքանիներ, որոնք, Համաշխարհային փոստային միության ակտերին համապատասխան, համարվում են փոստային փոխանակման օբյեկտներ, ուղեկցվում են Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված փաստաթղթերով, միջազգային փոստային փոխանակման վայրերից (հիմնարկներից) առաքվում են Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս կամ հասնում են Միության մաքսային տարածք՝ միջազգային փոստային փոխանակման վայրեր (հիմնարկներ), կամ տարանցման կարգով փոխադրվում են Միության մաքսային տարածքով.

20) «ներքին շուկայի պաշտպանության միջոցներ»՝ հատուկ պաշտպանական, հակազնազցման, փոխհատուցման միջոցներ և «Միության մասին» պայմանագրին համապատասխան սահմանված՝ ներքին շուկայի պաշտպանության այլ միջոցներ, որոնք սահմանվում են երրորդ երկրներից ծագող և Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների նկատմամբ.

21) «մաքսասակագնային կարգավորման միջոցներ»՝ միջոցներ, որոնք, «Միության մասին» պայմանագրին համապատասխան, կիրառվում են Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքների նկատմամբ և ներառում են ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի, սակագնային քվոտաների, սակագնային առանձնաշնորհումների, սակագնային արտոնությունների կիրառումը.

22) «փոստային կապի նշանակված օպերատոր»՝ անձ, որը պաշտոնապես նշանակվել է Համաշխարհային փոստային միության անդամ երկրի կողմից և ապահովում է փոստային կապի ծառայությունների մատուցումը՝ անդամ պետությունների օրենսդրությանը և Համաշխարհային փոստային միության ակտերին համապատասխան.

23) «կանխիկ դրամական միջոցներ»՝ անդամ պետություններում կամ Միության անդամ չհանդիսացող պետություններում (պետությունների խմբում) շրջանառության մեջ գտնվող և օրինական վճարամիջոց հանդիսացող՝ թղթադրամների և գանձապետական տոմսերի, մետաղադրամների տեսքով դրամանիշներ, բացառությամբ թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամների, ներառյալ՝ շրջանառությունից հանված կամ հանվող, սակայն

շրջանառության մեջ գտնվող դրամանիշների հետ փոխանակման ենթակա դրամանիշները.

24) «հարկեր»՝ ավելացված արժեքի հարկ, ակցիզներ (ակցիզային հարկ կամ ակցիզային վճար), որոնք գանձվում են Միության մաքսային տարածք ապրանքներ ներմուծելու դեպքում.

25) «Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխում»՝ ապրանքների տեղափոխում Միության մաքսային սահմանով այն վայրերից դուրս, որոնցով, տույն Օրենսգրքի 10-րդ հոդվածին համապատասխան, պետք է կամ կարող է իրականացվել ապրանքների տեղափոխում Միության մաքսային սահմանով, կամ այդ վայրերում գտնվող մաքսային մարմինների աշխատանքային ժամանակից դուրս, կամ մաքսային հսկողությունից թաքցնելու կամ ապրանքների ոչ հավաստի հայտարարագրման կամ չհայտարարագրման կամ ապրանքների վերաբերյալ ոչ հավաստի տեղեկություններ պարունակող փաստաթղթեր օգտագործելու միջոցով և (կամ) նույնականացման՝ կեղծ կամ այլ ապրանքներին վերաբերող միջոցներ օգտագործելու միջոցով.

26) «փոխադրող»՝ անձ, որն իրականացնում է ապրանքների և (կամ) ուղևորների փոխադրում (տրանսպորտային փոխադրում) Միության մաքսային սահմանով և (կամ) մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների փոխադրում (տրանսպորտային փոխադրում) Միության մաքսային տարածքով: Խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով ապրանքները տեղափոխելու դեպքում փոխադրող է համարվում այն անձը, որը պատասխանատու է խողովակաշարային տրանսպորտի կամ էլեկտրահաղորդման գծերի օգտագործման և (կամ) խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով ապրանքների տեղափոխման և (կամ) այդ ապրանքների նկատմամբ հսկողության ու դրանց հաշվառման համար.

27) «Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխում»՝ Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծում կամ Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանում.

28) «նախնական տեղեկատվություն»՝ Միության մաքսային սահմանով տեղափոխման համար նախատեսված ապրանքների, այդպիսի ապրանքներ փոխադրող միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների, Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման ժամի ու վայրի, Միության մաքսային տարածք ժամանող ուղևորների վերաբերյալ էլեկտրոնային եղանակով ներկայացվող տեղեկություններ.

29) «հանցագործություններ»՝ հանցագործություններ կամ քրեական իրավախախտումներ, որոնց մասով վարույթի իրականացումը վերապահված է մաքսային մարմիններին՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

30) «պաշարներ»՝ ապրանքներ, որոնք՝

անհրաժեշտ են նավերի, օդանավերի և գնացքների կայանման վայրերում ու ընթացուղում՝ դրանց բնականոն շահագործումը և տեխնիկական սպասարկումն ապահովելու համար՝ բացառությամբ պահեստամասերի ու սարքավորումների.

նախատեսված են նավերի, օդանավերի ուղևորների և անձնակազմերի անդամների կամ գնացքների ուղևորների ու գնացքի բրիգադների աշխատողների կողմից սպառման և (կամ) օգտագործման համար, ինչպես նաև այդ անձանց միջև բաշխելու կամ իրացնելու համար.

31) «կառույցներ, կայանքներ»՝ դրանց ստեղծման վերաբերյալ նախագծային փաստաթղթերին համապատասխան՝ ըստ տեղակայման վայրի ամբացված ստորջրյա օբյեկտներ, լողացող հորատման կայանքներ, ծովային լողացող հենահարթակներ, այլ նավեր, ստորջրյա կառույցներ, այդ թվում՝ հորատանցքեր, ծովային ստացիոնար հենահարթակներ, ստացիոնար հորատման կայանքներ, այլ լողացող և ստացիոնար օբյեկտներ, որոնք օգտագործվում են անդամ պետությունների պաշտպանության և անվտանգության ապահովման, տարածաշրջանային երկրաբանական ուսումնասիրության, հանքային ռեսուրսների երկրաբանական ուսումնասիրության, հետախուզման ու արդյունահանման, ջրային կենսաբանական ռեսուրսների վերաբերյալ ծովային ռեսուրսային հետազոտությունների անցկացման և ձկնորսության իրականացման, ծովային գիտական հետազոտությունների անցկացման նպատակներով, երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին և անդամ պետությունների օրենսդրությանը չհակասող այլ նպատակներով.

32) «մաքսային հայտարարագիր»՝ մաքսային փաստաթուղթ, որը պարունակում է տեղեկություններ ապրանքների վերաբերյալ կամ ապրանքների բացթողման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.

33) «մաքսատուրք»՝ պարտադիր վճար, որը գանձվում է մաքսային մարմինների կողմից Միության մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելու դեպքում.

34) «մաքսային ընթացակարգ»՝ նորմերի ամբողջություն, որոնցով մաքսային կարգավորման նպատակներով սահմանվում են Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս ապրանքների օգտագործման պայմաններն ու կարգը.

35) «մաքսային հայտարարագրում»՝ մաքսային մարմնում մաքսային հայտարարագրի միջոցով ապրանքների վերաբերյալ տեղեկությունների, ընտրված մաքսային ընթացակարգի վերաբերյալ և (կամ) ապրանքների բացթողման համար անհրաժեշտ այլ տեղեկությունների հայտագրում.

36) «մաքսային փաստաթղթեր»՝ մաքսային հայտարարագիր և այլ փաստաթղթեր, որոնք կազմվում են բացառապես մաքսային գործառնությունների կատարման և մաքսային հսկողության անցկացման համար, ինչպես նաև մաքսային գործառնությունների կատարման ու մաքսային հսկողության անցկացման ընթացքում և դրանց արդյունքներով.

37) «մաքսային գործառնություններ»՝ գործողություններ, որոնք կատարվում են անձանց և մաքսային մարմինների կողմից՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերին ու ակտերին և (կամ) մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

38) «մաքսային մարմիններ»՝ անդամ պետությունների մաքսային մարմիններ.

39) «միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքեր, հարկեր»՝ անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ՝ սույն Օրենսգրքի 53-րդ հոդվածին համապատասխան կիրառվող՝ մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերով հաշվարկված մաքսատուրքերի, հարկերի գումարը.

40) «միասնական դրույքաչափերով գանձվող մաքսատուրքեր, հարկեր»՝ անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ հաշվարկված մաքսատուրքերի, հարկերի գումարը՝ առանց այն դրա բաղկացուցիչ մաքսատուրքերի, հարկերի տրոհելու.

41) «մաքսային հսկողություն»՝ մաքսային մարմինների կողմից կատարվող գործողությունների ամբողջություն, որոնք ուղղված են մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և (կամ) ակտերի ու մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրության պահպանման ստուգմանը և (կամ) ապահովմանը.

42) «նշանակման մաքսային մարմին»՝ մաքսային մարմին, որի գործունեության տարածքում է գտնվում ապրանքների առաքման՝ ուղարկող մաքսային մարմնի կողմից սահմանված վայրը, կամ որն ավարտում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը.

43) «ուղարկող մաքսային մարմին»՝ մաքսային մարմին, որը կատարում է ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու հետ կապված մաքսային գործառնությունները.

44) «մաքսային ներկայացուցիչ»՝ իրավաբանական անձ, որը ներառված է մաքսային ներկայացուցիչների ռեեստրում և մաքսային գործառնություններ է կատարում հայտարարատուի կամ շահագրգիռ այլ անձի անունից և հանձնարարությամբ.

45) «ապրանք»՝ ցանկացած շարժական գույք, այդ թվում՝ անդամ պետությունների արժույթ, արժեթղթեր և (կամ) արժութային արժեքներ, ճանապարհային չեկեր, էլեկտրական էներգիա, ինչպես նաև անշարժ գույքին հավասարեցված այլ տեղափոխվող իրեր.

46) «անձնական օգտագործման ապրանքներ»՝ ապրանքներ, որոնք նախատեսված են ֆիզիկական անձանց՝ ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ չկապված անձնական, ընտանեկան, տնային և այլ կարիքների համար և Միության մաքսային սահմանով տեղափոխվում են ուղեկցվող կամ չուղեկցվող ուղեբեռով, միջազգային փոստային առաքանիներով առաքման կամ այլ եղանակով.

47) «Միության ապրանքներ»՝

Միության մաքսային տարածքում գտնվող ապրանքներ, որոնք ամբողջությամբ արտադրված (արդյունահանված, ստացված, աճեցված) են Միության մաքսային տարածքում.

Միության մաքսային տարածքում գտնվող ապրանքներ, որոնք ձեռք են բերել Միության ապրանքների կարգավիճակ կամ ճանաչվել են Միության ապրանքներ՝ սույն Օրենսգրքին համապատասխան կամ մինչև այն ուժի մեջ մտնելը.

Միության մաքսային տարածքում գտնվող ապրանքներ, որոնք արտադրված (պատրաստված) են մեկ կամ մի քանի անդամ պետությունում՝ սույն ենթակետի երկրորդ ու երրորդ պարբերություններում նշված ապրանքներից.

ապրանքներ, որոնք արտահանվել են Միության մաքսային տարածքից և պահպանել են Միության ապրանքների կարգավիճակը՝ սույն Օրենսգրքին համապատասխան.

48) «տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր»՝ փաստաթղթեր, որոնցով հաստատվում է ապրանքների փոխադրման պայմանագրի առկայությունը և որոնք ուղեկցում են ապրանքներն այդպիսի փոխադրման ժամանակ (կոնոսամենտ, բեռնագիր, տրանսպորտային առաքման պայմանագրի կնքումը հաստատող փաստաթուղթ և այլ փաստաթղթեր).

49) «տրանսպորտային միջոցներ»՝ ապրանքների կատեգորիա, որը ներառում է հետևյալը՝ նավ, օդանավ, ավտոմոբիլային տրանսպորտային միջոց, կցորդ, կիսակցորդ, երկաթուղային տրանսպորտային միջոց (երկաթուղային շարժակազմ, երկաթուղային շարժակազմի միավոր), բեռնարկղ՝ դրանց համար նախատեսված տեխնիկական անձնագրերով կամ տեխնիկական տեղեկամատյաններով, պահեստամասերով, պարագաներով և սարքավորումներով, դրանց կառուցվածքով նախատեսված լցավորման անոթներում պարունակվող վառելիքաքսուքային նյութերով, սառեցնող և այլ տեխնիկական հեղուկներով, եթե դրանք փոխադրվում են նշված տրանսպորտային միջոցների հետ միասին.

50) «անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ»՝ անձնական օգտագործման ապրանքների կատեգորիա, որը ներառում է ավտոտրանսպորտային ու մոտոտրանսպորտային միջոցների և ավտոտրանսպորտային ու մոտոտրանսպորտային միջոցների կցորդների առանձին տեսակներ, որոնք սահմանվում են Եվրասիական տնտեսական Հանձնաժողովի կողմից, նավ կամ օդանավ՝ դրանց պահեստամասերով և սովորական պարագաներով ու սարքավորումներով, դրանց կառուցվածքով նախատեսված լցավորման անոթներում պարունակվող վառելիքաքսուքային նյութերով, սառեցնող և այլ տեխնիկական հեղուկներով, որոնք տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքով պատկանում են այն ֆիզիկական անձին, որն այդ տրանսպորտային միջոցները Միության մաքսային սահմանով տեղափոխում է անձնական նպատակներով, այլ ոչ թե վարձատրության դիմաց անձանց փոխադրելու, ապրանքների արդյունաբերական կամ առևտրային փոխադրման համար՝ վարձատրության դիմաց կամ անվճար, այդ թվում՝ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի անուններով գրանցված տրանսպորտային միջոցները.

51) «միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ»՝ տրանսպորտային միջոցներ, որոնք օգտագործվում են բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռների միջազգային փոխադրման համար, դրանց վրա գտնվող հատուկ սարքավորումներով, որոնք նախատեսված են բեռների բեռնման, բեռնաթափման, մշակման և պաշտպանության համար, նյութատեխնիկական ապահովման և հանդերձման առարկաներով, ինչպես նաև

պահեստամասերով ու սարքավորումներով, որոնք նախատեսված են ընթացուղում տրանսպորտային միջոցի վերանորոգման, տեխնիկական սպասարկման կամ շահագործման համար.

52) «էքսպրես-բեռ»՝ տրանսպորտի ցանկացած տեսակով արագացված ռեժիմով փոխադրման շրջանակներում փոխադրվող բեռ՝ փոխադրումների կազմակերպման և հետագծելիության վերահսկման էլեկտրոնային տեղեկատվական համակարգի օգտագործմամբ՝ անհատական բեռնագրին համապատասխան այդ ապրանքը հնարավոր նվազագույն և (կամ) սահմանված ժամկետում ստացողին հասցնելու նպատակով՝ բացառությամբ միջազգային փոստային առաքանիով առաքվող ապրանքների:

2. Սույն Օրենսգրքի նպատակներով՝

«ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտի» (այսուհետ՝ ԱՏԳ), «լոգիստիկ ԱՏԳ», «նավահանգստային ԱՏԳ» և «ԱՏԳ ռեզիդենտ (մասնակից, սուբյեկտ)» հասկացությունները գործածվում են Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով.

«դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար», «դիվանագիտական ներկայացուցչության դիվանագիտական անձնակազմի անդամներ», «դիվանագիտական ներկայացուցչության վարչատեխնիկական անձնակազմի անդամներ», «դիվանագիտական ներկայացուցչության սպասարկող անձնակազմի անդամներ», «հյուպատոսական հիմնարկի ղեկավար», «հյուպատոսական հիմնարկների հյուպատոսական պաշտոնատար անձինք», «հյուպատոսական հիմնարկների հյուպատոսական ծառայողներ», «հյուպատոսական հիմնարկների սպասարկող անձնակազմի աշխատողներ», «ընտանիքների անդամներ», «դիվանագիտական ներկայացուցչության աշխատողներ», «հյուպատոսական հիմնարկի աշխատողներ» հասկացությունները գործածվում են «Դիվանագիտական կապերի մասին» 1961 թվականի ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիայով և «Հյուպատոսական կապերի մասին» 1963 թվականի ապրիլի 24-ի Վիեննայի կոնվենցիայով սահմանված իմաստներով:

3. Սույն Օրենսգրքում՝

1) ԱՏԳ տարածք ասելով ենթադրվում է ԱՏԳ ամբողջ տարածքը կամ ԱՏԳ տարածքի մի մասը, որտեղ այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում ստեղծվել է ԱՏԳ-ն, կիրառվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգը.

2) Միության մաքսային տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչություններ ու հյուպատոսական հիմնարկներ ասելով ենթադրվում են Միության անդամ չհանդիսացող պետությունների այն դիվանագիտական ներկայացուցչություններն ու հյուպատոսական հիմնարկները, որոնք տեղակայված են անդամ պետությունների տարածքներում, և մեկ անդամ պետության՝ այլ անդամ պետությունների տարածքներում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչություններն ու հյուպատոսական հիմնարկները.

3) այլ կազմակերպություններ կամ դրանց ներկայացուցչություններ ասելով ենթադրվում են այն կազմակերպությունները կամ դրանց ներկայացուցչություններ, որոնք անդամ պետության տարածքում, այդ անդամ պետության միջազգային պայմանագրերին համապատասխան, օգտվում են արտոնություններից և անձեռնմխելիություններից, և ներառված են Եվրասիական տնտեսական Հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից կազմվող ցանկում:

4. Հանձնաժողովը կազմում է անդամ պետության տարածքում, այդ անդամ պետության միջազգային պայմանագրերին համապատասխան, արտոնություններից և անձեռնմխելիություններից օգտվող կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների ցանկը՝ անդամ պետությունների կողմից ներկայացվող տեղեկատվության հիման վրա և ապահովում է դրա տեղադրումը տեղեկատվական-հեռահաղորդակցական «Ինտերնետ» ցանցում (այսուհետ՝ Ինտերնետ ցանց)՝ Միության պաշտոնական կայքում:

5. Սույն Օրենսգրքում գործածվող մյուս հասկացությունները կիրառվում են սույն Օրենսգրքի համապատասխան հոդվածներով, ինչպես նաև «Միության մասին» պայմանագրով սահմանված իմաստներով:

6. Քաղաքացիական օրենսդրության և օրենսդրության այլ ճյուղերի հասկացությունները, որոնք գործածվում են սույն Օրենսգրքում, անդամ պետություններից յուրաքանչյուրում կիրառվում են այն իմաստով, որով դրանք գործածվում են անդամ պետության օրենսդրության համապատասխան ճյուղերում, եթե այլ բան սահմանված չէ սույն Օրենսգրքով:

Հոդված 3. Մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի վերաբերյալ իրազեկումը

Մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի վերաբերյալ իրազեկումն իրականացվում է Հանձնաժողովի և մաքսային մարմինների կողմից՝ Ինտերնետ ցանցում՝ համապատասխանաբար Միության պաշտոնական կայքում և մաքսային մարմինների պաշտոնական կայքերում դրանք տեղադրելու միջոցով, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեղեկատվությունը հեռուստատեսությամբ ու ռադիոյով հանրությանը հասցնելու, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ինչպես նաև տեղեկատվության տարածման այլ հանրամատչելի մեթոդներ օգտագործելու միջոցով:

Հոդված 4. Մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով ու ակտերով սահմանվող ժամկետների հաշվարկման կարգը

1. Մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով ու ակտերով սահմանված ժամկետը որոշվում է օրացուցային ամսաթվով կամ որոշակի ժամանակահատվածի ավարտով, որը հաշվարկվում է տարիներով, ամիսներով, օրերով կամ ժամերով:

Ժամկետը կարող է որոշվել նաև այն իրադարձության մատնանշմամբ, որը պետք է տեղի ունենա, կամ այն գործողության մատնանշմամբ, որը պետք է կատարվի:

2. Այն դեպքում, երբ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով ու ակտերով ժամկետների հաշվարկման հատուկ կարգ չի սահմանվել, ժամանակահատվածով որոշվող ժամկետների սկիզբը և ավարտը որոշելու համար մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերում ու ակտերում կիրառվում են սույն հոդվածի 3-9-րդ կետերով նախատեսված կանոնները:

3. Ժամանակահատվածով որոշվող՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետի ընթացքն սկսվում է այն օրացուցային ամսաթվի կամ իրադարձության սկսվելու հաջորդ օրվանից, որով որոշվում է դրա սկիզբը, իսկ ժամերով հաշվարկվող ժամկետի ընթացքը՝ այն իրադարձության սկսվելու ժամին հաջորդող ժամից, որով որոշվում է դրա սկիզբը:

4. Տարիներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին:

5. Ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին:

Եթե ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է այն ամսին, որը չունի համապատասխան ամսաթիվ, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը:

6. Այն դեպքում, երբ ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ժամկետն ավարտվելու օր է համարվում դրան անմիջապես հաջորդող աշխատանքային օրը:

7. Այն դեպքում, երբ ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը:

Սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ սահմանված կանոններով այդ կազմակերպությունում դադարեցվում են համապատասխան գործառնությունները:

Եթե գրավոր դիմումներն ու ծանուցումները փոստային կապի հիմնարկ (կազմակերպություն) են ներկայացվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը, ապա սահմանված ժամկետը չի համարվում բաց թողնված:

8. Այն դեպքում, երբ ժամկետը հաշվարկվում է աշխատանքային օրերով, աշխատանքային օրեր ասելով ենթադրվում են՝

1) երկուշաբթիից ուրբաթ ընկած շաբաթվա օրերը, որոնք չեն համընկնում անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ոչ աշխատանքային հայտարարված օրերի հետ.

2) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան հանգստյան օրեր տեղափոխված աշխատանքային օրերը:

9. Այն դեպքում, երբ Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում և մաքսային մարմինների գտնվելու այլ վայրերում մաքսային մարմինների աշխատանքային ժամեր են սահմանված ոչ աշխատանքային օրերին, այդ մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների կատարման՝ աշխատանքային օրերով հաշվարկվող ժամկետը ներառում է ոչ աշխատանքային օրերը:

Հոդված 5. Միության մաքսային տարածքը և Միության մաքսային սահմանը

1. Միության մաքսային տարածքը կազմում են անդամ պետությունների տարածքները, ինչպես նաև անդամ պետությունների տարածքների սահմաններից դուրս գտնվող այն արհեստական կղզիները, կառույցները, կայանքները և մյուս օբյեկտները, որոնց նկատմամբ անդամ պետություններն ունեն բացառիկ իրավազորություն:

2. Միության մաքսային սահմանն են համարվում Միության մաքսային տարածքի սահմանագծերը, ինչպես նաև անդամ պետությունների տարածքներում գտնվող առանձին տարածքների սահմանագծերը՝ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին համապատասխան:

Հոդված 6. Մաքսասակագնային կարգավորման միջոցների, արգելքների ու սահմանափակումների, ներքին շուկայի պաշտպանության միջոցների, մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի, անդամ պետությունների՝ հարկման ոլորտին առնչվող օրենսդրական ակտերի կիրառումը

1. Մաքսային գործառնություններ կատարելիս և մաքսային հսկողություն անցկացնելիս կիրառվում են մաքսային հայտարարագրի կամ այլ մաքսային փաստաթղթերի գրանցման օրվա դրությամբ գործող մաքսասակագնային կարգավորման միջոցները, արգելքներն ու սահմանափակումները, ներքին շուկայի պաշտպանության միջոցները, անդամ պետությունների՝ հարկման ոլորտին առնչվող օրենսդրական ակտերը, եթե այլ բան սահմանված չէ սույն Օրենսգրքով, «Միության մասին» պայմանագրին կամ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին համապատասխան,

իսկ անդամ պետությունների՝ հարկման ոլորտին առնչվող օրենսդրական ակտերի կիրառման դեպքում՝ նաև անդամ պետությունների օրենսդրությամբ:

2. Մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով ու ակտերով սահմանված պայմանների խախտմամբ Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ կիրառվում են ապրանքների՝ Միության մաքսային սահմանը փաստացի հատելու օրվա դրությամբ գործող մաքսասակագնային կարգավորման միջոցները, արգելքներն ու սահմանափակումները, ներքին շուկայի պաշտպանության միջոցները, մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերն ու ակտերը, անդամ պետությունների՝ հարկման ոլորտին առնչվող օրենսդրական ակտերը, եթե այլ բան սահմանված չէ սույն Օրենսգրքով, «Միության մասին» պայմանագրին կամ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին համապատասխան, իսկ անդամ պետությունների՝ հարկման ոլորտին առնչվող օրենսդրական ակտերի կիրառման դեպքում՝ նաև անդամ պետությունների օրենսդրությամբ:

Եթե ապրանքների՝ Միության մաքսային սահմանը փաստացի հատելու օրը հայտնի չէ, ապա կիրառվում են խախտումը հայտնաբերելու օրվա դրությամբ գործող մաքսասակագնային կարգավորման միջոցները, արգելքներն ու սահմանափակումները, ներքին շուկայի պաշտպանության միջոցները, մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերն ու ակտերը, անդամ պետությունների՝ հարկման ոլորտին առնչվող օրենսդրական ակտերը, եթե այլ բան սահմանված չէ սույն Օրենսգրքով, «Միության մասին» պայմանագրին կամ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին համապատասխան, իսկ անդամ պետությունների՝ հարկման ոլորտին առնչվող օրենսդրական ակտերի կիրառման դեպքում՝ նաև անդամ պետությունների օրենսդրությամբ:

3. Եթե անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան որպես մաքսային հայտարարագրման առանձնահատկություններ նախատեսված է ապրանքների երկու և ավելի հայտարարագրեր ներկայացնելը, ապա այն ապրանքների նկատմամբ, որոնց մաքսային հայտարարագրումն իրականացվում է այդ առանձնահատկություններով, մաքսասակագնային կարգավորման միջոցները, արգելքներն ու սահմանափակումները, ներքին շուկայի պաշտպանության միջոցները, հարկման ոլորտում անդամ պետությունների օրենսդրական ակտերը կիրառվում են ապրանքների առաջին հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ:

Հոդված 7. Արգելքների և սահմանափակումների պահպանումը

1. Ապրանքները տեղափոխվում են Միության մաքսային սահմանով և (կամ) ձևակերպվում են մաքսային ընթացակարգերով՝ արգելքների ու սահմանափակումների պահպանմամբ:

2. Ոչ սակագնային կարգավորման միջոցների, այդ թվում՝ միակողմանիորեն սահմանվող ոչ սակագնային կարգավորման միջոցների և տեխնիկական կարգավորման միջոցների պահպանումը հաստատվում է «Միության մասին» պայմանագրին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից կամ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու կարգով, իսկ արտահանման վերահսկողության միջոցների, այդ թվում՝ ռազմական նշանակության արտադրանքի նկատմամբ կիրառվող միջոցների պահպանումը՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված դեպքերում ու կարգով՝ այդպիսի միջոցների պահպանումը հաստատող փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ ներկայացնելու միջոցով:

3. Սանիտարական, անասնաբուժասանիտարական ու կարանտինային բուսասանիտարական միջոցառումների ու ճառագայթային անվտանգության պահանջների պահպանումը հաստատվում է սանիտարահամաճարակաբանական, անասնաբուժական, կարանտինային բուսասանիտարական, ճառագայթային հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու արդյունքներով՝ «Միության մասին» պայմանագրով և դրան համապատասխան ընդունված՝ Հանձնաժողովի ակտերով սահմանված կարգով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. «Միության մասին» պայմանագրով նախատեսված՝ այն ապրանքների միասնական ցանկում որպես անձնական օգտագործման ապրանքներ ընդգրկված ապրանքները ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային տարածք ներմուծելու և (կամ) Միության մաքսային տարածքից արտահանելու առանձնահատկությունները, որոնց նկատմամբ երրորդ երկրների հետ առևտրի ժամանակ կիրառվում են ոչ սակագնային կարգավորման միջոցներ, սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

5. Այն դեպքում, երբ արգելքներ ու սահմանափակումներ սահմանող ակտերով չեն սահմանվում դրանց պահպանումը հաստատելու դեպքերը և (կամ) կարգը, այդպիսի արգելքների ու սահմանափակումների պահպանումը հաստատվում է Միության մաքսային սահմանով ապրանքները տեղափոխելիս, ինչպես նաև ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» կամ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս:

6. Միջազգային փոստային առաքանիները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս արգելքների ու սահմանափակումների պահպանման պարտականություն չի դրվում հայտարարատուների վրա, եթե դրանք փոխադրվում են՝

1) ժամանման վայրից մինչև միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների մասով մաքսային գործառնություններ կատարելու վայրը.

2) ժամանման վայրից մինչև մեկնման վայրը:

Հոդված 8. Մաքսային փաստաթղթերը

1. Մաքսային փաստաթղթերը լրացվում են ռուսերենով կամ այն անդամ պետության պետական լեզվով, որի մաքսային մարմին են ներկայացվում մաքսային փաստաթղթերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն Օրենսգրքով:

Մաքսային գործառնություններ կատարելիս մեկ անդամ պետության տարածքում լրացվող և մեկ այլ անդամ պետության մաքսային մարմիններին ներկայացնելու ենթակա մաքսային փաստաթղթերը լրացվում են ռուսերենով:

2. Մաքսային փաստաթղթերում ծածկագրված ձևով նշման ենթակա տեղեկությունները նշվում են Հանձնաժողովի կողմից հաստատվող դասակարգիչների օգտագործմամբ, իսկ մինչև Հանձնաժողովի կողմից դրանք հաստատելը՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

3. Էլեկտրոնային փաստաթղթերի ձևով մաքսային փաստաթղթերի կառուցվածքն ու ձևաչափը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ, սույն Օրենսգրքին, մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան, էլեկտրոնային փաստաթղթերի ձևով մաքսային փաստաթղթերի կառուցվածքն ու ձևաչափը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

4. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել սույն Օրենսգրքով, մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերով ու ակտերով չնախատեսված մաքսային փաստաթղթեր, դրանց ձևերը, այդ ձևերը լրացնելու, այդպիսի մաքսային փաստաթղթերում փոփոխություններ (լրացումներ) կատարելու կարգը:

5. Այն դեպքում, երբ սույն Օրենսգրքով, մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերով և ակտերով նախատեսված չէ մաքսային փաստաթղթերի ձևերը լրացնելու կարգի և (կամ) մաքսային փաստաթղթերում փոփոխություններ (լրացումներ) կատարելու կարգի սահմանում, այդ կարգը կարող է սահմանվել անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

Գլուխ 2

Ընդհանուր դրույթներ՝ Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման, Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս դրանց տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման վերաբերյալ

Հոդված 9. Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը

1. Բոլոր անձինք հավասար հիմքերով սույն Օրենսգրքով կամ սույն Օրենսգրքին համապատասխան սահմանված կարգով և պայմաններով Միության մաքսային սահմանով ապրանքները տեղափոխելու իրավունք ունեն:

2. Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները ենթակա են մաքսային հսկողության՝ սույն Օրենսգրքին համապատասխան:

Հոդված 10. Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերը

1. Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումն իրականացվում է Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը կարող է իրականացվել այլ վայրերում՝ սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան, և այդ վայրերում գտնվող մաքսային մարմինների աշխատանքի ժամանակ:

2. Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերն են անդամ պետությունների պետական սահմաններով անցակետերը կամ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված այլ վայրեր:

3. Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխումը կարող է իրականացվել սույն հոդվածի 2-րդ կետում նշված վայրերից բացի այլ վայրերում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված դեպքերում և կարգով:

4. Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման այն վայրերը, որտեղ ապրանքները ժամանում են Միության մաքսային տարածք, համարվում են ժամանման վայրեր:

Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման այն վայրերը, որտեղից ապրանքները մեկնում են Միության մաքսային տարածքից, համարվում են մեկնման վայրեր:

Ժամանման վայրերի ու մեկնման վայրերի վերաբերյալ տեղեկատվությունը մաքսային մարմինների կողմից ուղարկվում է Հանձնաժողով՝ ժամանման վայրերի ու մեկնման վայրերի ընդհանուր ցանկեր կազմելու և Ինտերնետ ցանցում՝ Միության պաշտոնական կայքում դրանք տեղադրելու համար:

Ժամանման վայրերի ու մեկնման վայրերի ընդհանուր ցանկերի ձևերը, դրանք կազմելու, վարելու ու դրանցում պարունակվող տեղեկություններն օգտագործելու կարգը, ինչպես նաև ժամանման վայրերի ու մեկնման վայրերի

վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու կարգն ու տեխնիկական պայմանները, այդ թվում՝ կառուցվածքն ու ձևաչափը, սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

5. Ապրանքների առանձին կատեգորիաներ կարող են ժամանել Միության մաքսային տարածք կամ մեկնել Միության մաքսային տարածքից Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման այն վայրերում միայն, որոնք անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ սահմանված են ապրանքների այդպիսի կատեգորիաները Միության մաքսային տարածք ներմուծելու (ժամանելու) կամ Միության մաքսային տարածքից արտահանելու (մեկնելու) համար:

6. Մաքսային մարմիններն իրավունք չունեն սահմանափակելու անձին Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրի ընտրության հարցում՝ ելնելով ապրանքների ծագումից, ապրանքների ուղարկման և նշանակման երկրից:

7. Միության մաքսային սահմանին տեղակայված՝ անդամ պետությունների պետական սահմանների անցակետերի մասին իրազեկելու նպատակով՝ Հանձնաժողովն անդամ պետությունների պետական մարմինների կողմից դրանց վերաբերյալ ներկայացվող տեղեկությունների հիման վրա կազմում և Ինտերնետ ցանցում՝ Միության պաշտոնական կայքում տեղադրում է այդպիսի անցակետերի տեղեկատվական-տեղեկատու ցանկն ու այդպիսի անցակետերի անձնագրերի ընդհանուր ռեեստրը:

Նշված ցանկի ու ռեեստրի ձևերը, դրանք կազմելու, վարելու և դրանցում պարունակվող տեղեկություններն օգտագործելու կարգը, ինչպես նաև Միության մաքսային սահմանին տեղակայված՝ անդամ պետությունների պետական սահմանների անցակետերի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու տեխնիկական պայմանները, այդ թվում՝ կառուցվածքն ու ձևաչափը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

8. Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում Միության մաքսային սահմանով խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքներ տեղափոխելու դեպքում:

Հոդված 11. Մաքսային մարմիններին նախնական տեղեկատվություն ներկայացնելը

1. Նախնական տեղեկատվություն ներկայացնելու նպատակը մաքսային մարմինների կողմից՝ Միության մաքսային սահմանով տեղափոխման համար նախատեսվող ապրանքների վերաբերյալ տեղեկություններ ստանալն է՝ մինչև Միության մաքսային տարածք ապրանքների ժամանումը՝ ռիսկերը գնահատելու և մաքսային հսկողության օբյեկտների, ձևերի ու մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցների ընտրության վերաբերյալ նախնական որոշումներ ընդունելու համար:

Նախնական տեղեկատվությունն օգտագործվում է մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների կատարումն արագացնելու և մաքսային հսկողությունը լավագույն ձևով անցկացնելու համար:

2. Մաքսային մարմիններ ներկայացվող նախնական տեղեկատվության կազմը, կախված դրա օգտագործման նպատակներից, լինում է՝

1) նախնական տեղեկատվության կազմ, որն օգտագործվում է մաքսային մարմինների կողմից ռիսկերը գնահատելու և մաքսային հսկողության օբյեկտների, ձևերի ու մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցների ընտրության վերաբերյալ նախնական որոշումներ ընդունելու համար.

2) նախնական տեղեկատվության կազմ, որն օգտագործվում է մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների կատարումն արագացնելու և մաքսային հսկողությունը լավագույն ձևով անցկացնելու համար:

3. Սույն հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված նպատակների համար սահմանվող կազմով նախնական տեղեկատվությունը ներկայացվում է պարտադիր կարգով:

Սույն հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված նպատակների համար սահմանվող կազմով նախնական տեղեկատվությունը ներկայացվում է այն անձանց ցանկությամբ, որոնք կարող են ներկայացնել այն:

4. Նախնական տեղեկատվությունը կարող է ներկայացվել էլեկտրոնային փաստաթղթի ձևով:

Էլեկտրոնային փաստաթղթի ձևով ներկայացված նախնական տեղեկատվությունը կարող է օգտագործվել Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման վերաբերյալ ծանուցելու, ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու, մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնություններ, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ մաքսային գործառնություններ կատարելիս:

5. Նախնական տեղեկատվությունը ներկայացվում է մինչև Միության մաքսային տարածք ապրանքների ժամանումը՝ այն անդամ պետության մաքսային մարմին, որի տարածքում տեղակայված է Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման նախատեսվող վայրը:

6. Նախնական տեղեկատվությունը ներկայացվում է Ինտերնետ ցանցի ռեսուրսների օգտագործմամբ՝ մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի և նախնական տեղեկատվություն ներկայացնող անձանց տեղեկատվական համակարգերի փոխգործակցության միջոցով և (կամ) Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ եղանակով:

7. Նախնական տեղեկատվությունը ներկայացվում է ռուսերենով, իսկ եթե ռուսերենը պետական լեզու չէ այն անդամ պետությունում, որի մաքսային մարմին է ներկայացվում նախնական տեղեկատվությունը, ապա անձի ընտրությամբ՝ նախնական տեղեկատվությունը ներկայացվում է ռուսերենով կամ այդ անդամ պետության պետական լեզվով:

Այն անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ, որի մաքսային մարմին է

ներկայացվում նախնական տեղեկատվությունը, կարող է սահմանվել նախնական տեղեկատվությունը անգլերենով ներկայացնելու հնարավորություն:

8. Մաքսային մարմինը գրանցում է ներկայացված նախնական տեղեկատվությունը կամ մերժում է դրա գրանցումը՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող կարգով ու ժամկետներում:

9. Մաքսային մարմինը գրանցում է ներկայացված նախնական տեղեկատվությունը՝ դրան գրանցման համար տալու միջոցով:

10. Մաքսային մարմինը մերժում է նախնական տեղեկատվության գրանցումը, եթե ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում Հանձնաժողովի կողմից սահմանված կազմին, կառուցվածքին ու ձևաչափին և (կամ) չի բավարարում սույն հոդվածի 7-րդ կետով նախատեսված պահանջը:

11. Նախնական տեղեկատվության գրանցման համարի նշմամբ նախնական տեղեկատվությունը գրանցելու կամ դրա գրանցումը մերժելու և գրանցումը մերժելու պատճառների վերաբերյալ տեղեկություններն էլեկտրոնային եղանակով ուղարկվում են նախնական տեղեկատվությունը ներկայացրած անձին:

12. Նախնական տեղեկատվությունը պահվում է մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերում դրա գրանցման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում, իսկ Հանձնաժողովի կողմից այլ ժամկետ սահմանված լինելու դեպքում, Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետի ընթացքում, որից հետո այդպիսի տեղեկատվությունը մաքսային մարմինների կողմից չի օգտագործվում որպես նախնական տեղեկատվություն:

Հանձնաժողովը իրավունք ունի սահմանելու մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերում նախնական տեղեկատվության պահման այլ ժամկետ, քան սահմանված է սույն կետի առաջին պարբերությունում:

13. Պարտադիր ներկայացման ենթակա նախնական տեղեկատվություն չներկայացնելու կամ դրա ներկայացման ժամկետները խախտելու դեպքում կիրառվում են այն անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող միջոցները, որի մաքսային մարմին է ենթակա ներկայացման այդպիսի նախնական տեղեկատվությունը:

14. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել պատասխանատվություն՝ մաքսային մարմիններին նախնական տեղեկատվություն չներկայացնելու կամ ներկայացնելու ժամկետները խախտելու համար:

15. Նախնական տեղեկատվություն կարող է չներկայացվել հետևյալ ապրանքների դեպքում՝

1) անձնական օգտագործման ապրանքներ, որոնք տեղափոխվում են Միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից.

2) ապրանքներ, որոնք ուղարկվում են միջազգային փոստային առաքանիներով.

3) ապրանքներ, որոնք նշված են սույն Օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետում.

4) ապրանքներ, որոնք տեղափոխվում են տարերային աղետների, վթարների և աղետների հետևանքները վերացնելու նպատակով.

5) ռազմական բեռներ, որոնց կարգավիճակը հաստատվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան տրված անցաթղթով (ռազմական անցաթղթով).

6) ապրանքներ, որոնք ձևակերպվում են ժամանման վայրում հատուկ մաքսային ընթացակարգով.

7) Միության ապրանքներ, որոնք փոխադրվում են Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքով.

8) Միության մաքսային սահմանով տեղափոխվող և ԱՏԳ այն տարածք ներմուծվող ապրանքներ, որի սահմաններն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են Միության մաքսային սահմանի հատվածների հետ, եթե դա նախատեսված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում ստեղծվել է այդպիսի ԱՏԳ-ն.

9) Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ ապրանքներ:

16. Խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների վերաբերյալ նախնական տեղեկատվություն չի ներկայացվում:

17. Նախնական տեղեկատվության կազմը, այդպիսի տեղեկատվության կառուցվածքն ու ձևաչափը, նախնական տեղեկատվության, այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթի ձևով ներկայացվող նախնական տեղեկատվության տրամադրման կարգն ու ժամկետները, էլեկտրոնային փաստաթղթի ձևով նախնական տեղեկատվության ձևավորման ու օգտագործման կարգը, մաքսային մարմիններին նախնական տեղեկատվություն ներկայացնելու պարտականություն կամ իրավունք ունեցող անձինք սահմանվում են Հանձնաժողովի կողմից՝ ելնելով այն տրանսպորտի տեսակից, որով իրականացվում է փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) և մաքսային մարմնի կողմից այդպիսի նախնական տեղեկատվության օգտագործման նպատակներից:

18. Որպես նախնական տեղեկատվություն կարող են օգտագործվել էլեկտրոնային փաստաթղթի ձևով այն մաքսային հայտարարագրում հայտագրված տեղեկությունները, որը տրվել է այն ապրանքների համար, որոնց մաքսային հայտարարագրումն իրականացվում է սույն Օրենսգրքի 114-րդ հոդվածով սահմանված առանձնահատկություններով՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում ու կարգով, իսկ մինչև Հանձնաժողովի կողմից դրանք սահմանելը՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանվող դեպքերում ու կարգով:

Հոդված 12. Արգելքների և սահմանափակումների պահպանումը Միության մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելիս

1. Միության մաքսային տարածք ժամանած ապրանքները, որոնք սահմանված արգելքներին և սահմանափակումներին համապատասխան ենթակա չեն ներմուծման Միության մաքսային տարածք, պետք է անհապաղ արտահանվեն Միության մաքսային տարածքից՝ առանց միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցից դրանք բեռնաթափելու՝ բացառությամբ դրանց՝ այդպիսի արտահանման նպատակներով միջազգային փոխադրումներ իրականացնող այլ տրանսպորտային միջոցի վրա վերաբեռնման, եթե այլ բան նախատեսված չէ սույն Օրենսգրքով, երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ:

Միության մաքսային տարածքից նշված ապրանքներն արտահանելուն ուղղված միջոցները ձեռնարկվում են փոխադրողի կողմից, իսկ նրա բացակայության դեպքում՝ Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման պահին այդ ապրանքները տիրապետելու, օգտագործելու և (կամ) տնօրինելու իրավունք ունեցող անձի կողմից, եթե երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ այլ անձինք սահմանված չեն:

2. Այն ապրանքները, որոնք սահմանված արգելքներին և սահմանափակումներին համապատասխան ենթակա չեն արտահանման Միության մաքսային տարածքից, չեն կարող Միության մաքսային տարածքից փաստացի արտահանվել, եթե այլ բան նախատեսված չէ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով:

3. Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման կամ Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման ժամանակ համապատասխան արգելքների և սահմանափակումների չպահպանման դեպքեր հայտնաբերելու դեպքում մաքսային մարմինը որոշում է ընդունում Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծումը կամ Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանումն արգելելու մասին և դրա մասին տեղեկացնում է փոխադրողին, իսկ նրա բացակայության դեպքում՝ Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման կամ Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանման պահին այդ ապրանքները տիրապետելու, օգտագործելու և (կամ) տնօրինելու իրավունք ունեցող անձին:

4. Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծումն արգելելու մասին մաքսային մարմնի որոշումն ստանալուց հետո սույն հոդվածի 1-ին կետի առաջին պարբերության մեջ նշված ապրանքները Միության մաքսային տարածքից անհապաղ արտահանելու անհնարինության դեպքում այդպիսի ապրանքներն արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմնի կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

5. Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանումն արգելելու մասին մաքսային մարմնի որոշումն ստանալու և մեկնման վայրից Միության մաքսային տարածք այդ ապրանքների վերադարձը անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված ժամկետում չիրականացնելու դեպքում սույն հոդվածի 2-րդ կետում նշված ապրանքներն արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմնի կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

Հոդված 13. Ապրանքների տիրապետումը, օգտագործումը և (կամ) տնօրինումը Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս

1. Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների տիրապետումը, օգտագործումը և (կամ) տնօրինումը, Միության մաքսային սահմանը հատելուց հետո և նախքան մաքսային մարմնի կողմից դրանց բացթողումը, իրականացվում են սույն գլխով, սույն Օրենսգրքի 14-րդ և 16-րդ գլուխներով, իսկ ապրանքների առանձին կատեգորիաների դեպքում՝ նաև սույն Օրենսգրքի 37-43-րդ գլուխներով սահմանված կարգով և պայմաններով:

2. Ապրանքների տիրապետումը, օգտագործումը և (կամ) տնօրինումը Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս, մաքսային մարմնի կողմից դրանց բացթողումից հետո իրականացվում են ապրանքների ձևակերպման մաքսային ընթացակարգով կամ առանց մաքսային ընթացակարգով ձևակերպվելու՝ մաքսային հայտարարագրման և (կամ) բացթողման ենթակա ապրանքների առանձին կատեգորիաների համար նախատեսված կարգով և պայմաններով:

3. Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների տիրապետումը, օգտագործումը և (կամ) տնօրինումը, մեկնման վայրեր ժամանելուց հետո՝ նախքան Միության մաքսային սահմանը հատելը, իրականացվում են սույն գլխով և սույն Օրենսգրքի 15-րդ գլխով, իսկ ապրանքների առանձին կատեգորիաների դեպքում՝ նաև սույն Օրենսգրքի 37-43-րդ գլուխներով սահմանված կարգով և պայմաններով:

Հոդված 14. Ապրանքների՝ մաքսային հսկողության տակ գտնվելը

1. Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքները Միության մաքսային սահմանը հատելու պահից գտնվում են մաքսային հսկողության տակ:

2. Միության մաքսային տարածքից արտահանվող Միության ապրանքները գտնվում են մաքսային հսկողության տակ մաքսային հայտարարագիրը գրանցելու կամ այնպիսի գործողություն կատարելու պահից, որն անմիջականորեն ուղղված է Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանումն իրականացնելուն:

3. Միության մաքսային տարածքում ստացված (գոյացած) և գտնվող վերամշակման արդյունքները, թափոններն ու մնացորդները, որոնք սույն Օրենսգրքին համապատասխան ստացել են օտարերկրյա ապրանքների կարգավիճակ, իրենց ստացվելու (գոյանալու) պահից համարվում են մաքսային հսկողության տակ գտնվող:

4. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, ինչպես նաև «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից ու Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներն իրենց պատրաստվելու (ստացվելու) պահից համարվում են մաքսային հսկողության տակ գտնվող:

«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, ինչպես նաև «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից ու Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներն իրենց պատրաստվելու (ստացվելու) պահից համարվում են մաքսային հսկողության տակ գտնվող:

5. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) Միության ապրանքները գտնվում են մաքսային հսկողության տակ ապրանքներն այդ մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագիրը գրանցելու պահից՝ բացառությամբ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվող (ներմուծված) և նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվելու պահից մաքսային հսկողության տակ գտնվող Միության ապրանքների:

«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքներից ու «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով չձևակերպված Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներն իրենց պատրաստվելու (ստացվելու) պահից համարվում են մաքսային հսկողության տակ գտնվող:

6. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) Միության ապրանքները գտնվում են մաքսային հսկողության տակ՝ ապրանքներն այդ մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագիրը գրանցելու պահից:

«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքներից ու «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով չձևակերպված Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներն իրենց պատրաստվելու (ստացվելու) պահից համարվում են մաքսային հսկողության տակ գտնվող:

7. Սույն հոդվածի 1-ին և 3-րդ կետերում նշված, ինչպես նաև սույն հոդվածի 4-րդ կետում նշված ապրանքները, որոնք չեն ճանաչվել որպես Միության ապրանքներ՝ սույն Օրենսգրքի 210-րդ և 218-րդ հոդվածներին համապատասխան, գտնվում են մաքսային հսկողության տակ մինչև հետևյալ հանգամանքների ի հայտ գալը՝

1) սույն Օրենսգրքին համապատասխան՝ Միության ապրանքների կարգավիճակ ստանալը՝ բացառությամբ սույն հոդվածի 12-րդ կետով նախատեսված դեպքի.

2) այդ ապրանքները Միության մաքսային տարածքից փաստացի արտահանելը.

3) «ոչնչացում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները փաստացի ոչնչացնելը.

4) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով կամ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների մի մասը որպես արտադրական կորուստներ ճանաչելը.

5) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ Միության մաքսային տարածքում վերամշակման, ներքին սպառման համար վերամշակման կամ «ոչնչացում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների ոչնչացման գործողությունների արդյունքում գոյացած թափոնները՝ դրանց հետագա առևտրային նպատակներով օգտագործման համար ոչ պիտանի ճանաչելը կամ գոյացած թափոններն այլ եղանակով թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ ոչնչացնելու փաստը կամ այդպիսի գործողությունների կատարման համար դրանց փոխանցման փաստը հաստատող փաստաթղթերը մաքսային մարմին ներկայացնելը.

6) այդ ապրանքները տիեզերական տարածք բաց թողնելը՝ բացառությամբ վերադարձող թռչող տիեզերական ապարատի և դրա մեջ գտնվող ապրանքների.

7) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը՝ կապված Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքով տեղափոխվող Միության ապրանքների հետ.

8) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության համաձայն մաքսային մարմնի կողմից վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով այդ ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի արդյունքում այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը ճանաչելը.

9) սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 10-րդ կետի 1-ին ենթակետում և 215-րդ հոդվածի 7-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքերում այդ ապրանքները թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ կերպ ոչնչացնելու փաստը հաստատող փաստաթղթերը մաքսային մարմին ներկայացնելը.

10) սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 10-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը.

11) մաքսատուրքերի, հարկերի վճարում և (կամ) բռնագանձում անձնական օգտագործման այն ապրանքների

համար, որոնք ներմուծվել են մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ՝ Միության մաքսային տարածք մաքսատուրքերից, հարկերից և (կամ) այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումներից ազատմամբ ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների համար սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան սահմանված պայմանների խախտմամբ գործողություններ կատարելու դեպքում.

12) Միության մաքսային տարածքից ժամանակավորապես արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները բաց թողնելը՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 272-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի երկրորդ և երրորդ պարբերություններում նշված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների, որոնք համարվում են պայմանականորեն բաց թողնված ապրանքներ, և բացառությամբ՝ սույն Օրենսգրքի 272-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերության մեջ նշված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների՝ դրանք Միության մաքսային տարածք հետադարձ ներմուծելու ժամանակ.

13) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների համար մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելը և (կամ) բռնագանձելը՝ սույն Օրենսգրքի 279-րդ հոդվածի 8-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում.

14) Հանձնաժողովի կողմից որոշվող և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող այլ հանգամանքներ:

8. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված Միության ապրանքները գտնվում են մաքսային հսկողության տակ մինչև Միության մաքսային սահմանը փաստացի հատելը, մաքսային հայտարարագիրը սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան հետ կանչելը կամ մինչև սույն հոդվածի 9-րդ և 10-րդ կետերում նշված հանգամանքների ի հայտ գալը:

9. Միության մաքսային տարածքից արտահանվող՝ մաքսային հայտարարագրման ոչ ենթակա անձնական օգտագործման ապրանքները, ինչպես նաև անձնական օգտագործման այն ապրանքները, որոնց բացթողումը մերժվել է, չեն համարվում մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքներ հետևյալ հանգամանքներից որևէ մեկի ի հայտ գալու դեպքում՝

1) նախքան Միության մաքսային սահմանը փաստացի հատելը այդպիսի ապրանքները դարձվել են անդամ պետության սեփականությունը (եկամուտը)՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, կամ մաքսային մարմնի կողմից անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության համաձայն, ճանաչվել է վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով դրանց ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ՝ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով դրանց անվերադարձ կորստի փաստը.

2) այդպիսի ապրանքները մեկնման վայրից արտահանվել են Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ մաքսային մարմնի թույլտվությամբ:

10. Միության՝ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով կամ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված կամ Միության մաքսային տարածքից արտահանված ապրանքները գտնվում են մաքսային հսկողության տակ՝ մինչև համապատասխան մաքսային ընթացակարգի գործողության ավարտը կամ դադարումը:

11. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված, սույն Օրենսգրքի 210-րդ և 218-րդ հոդվածներին համապատասխան՝ որպես Միության ապրանքներ ճանաչված ապրանքները, ինչպես նաև Միության՝ սույն հոդվածի 5-րդ և 6-րդ կետերում նշված ապրանքները գտնվում են մաքսային հսկողության տակ՝ մինչև հետևյալ հանգամանքների ի հայտ գալը՝

1) Միության մաքսային սահմանը փաստացի հատելը, եթե «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվել է՝ այդ ապրանքներն «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով.

2) այդ ապրանքները «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպելը.

3) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության համաձայն, մաքսային մարմնի կողմից՝ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով այդ ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի արդյունքում այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը ճանաչելը.

4) սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 10-րդ կետի 1-ին ենթակետում և 215-րդ հոդվածի 7-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքերում այդ ապրանքները թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ եղանակով ոչնչացնելու փաստը հաստատող փաստաթղթերը մաքսային մարմին ներկայացնելը.

5) սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 10-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը.

12. Ապրանքները, որոնք ստացել են Միության ապրանքների կարգավիճակ, և որոնց մաքսային հայտարարագրումն իրականացվել է սույն Օրենսգրքի 117-րդ հոդվածով սահմանված առանձնահատկություններով, գտնվում են մաքսային հսկողության տակ մինչև ապրանքի վերջին բաղադրիչի բացթողման օրը կամ մինչև ապրանքների հայտարարագրերում պարունակվող՝ ապրանքի բաղադրիչների վերաբերյալ տվյալներում փոփոխություններ (լրացումներ) կատարելը՝ սույն Օրենսգրքի 117-րդ հոդվածի 9-րդ կետին համապատասխան:

13. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ կետերում նշված ապրանքները այդ կետերով նախատեսված դեպքերում գտնվում են մաքսային հսկողության տակ՝

մինչև այդ ապրանքների նկատմամբ սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ կետերին համապատասխան «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը:

14. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 9-րդ կետում նշված ապրանքները այդ կետով նախատեսված դեպքում գտնվում են մաքսային հսկողության տակ՝ մինչև այդ ապրանքների նկատմամբ սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 9-րդ կետին համապատասխան «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը:

15. «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) Միության ապրանքները գտնվում են մաքսային հսկողության տակ՝ սկսած ապրանքներն այդ մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված մաքսային հայտարարագրի գրանցման պահից մինչև «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը՝ սույն Օրենսգրքի 246-րդ հոդվածի 1-ին կետին և 5-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան:

Հոդված 15. Ոչ պիտանի դարձած, փչացած կամ վնասված ապրանքները

1. Միության մաքսային տարածք ներմուծված ապրանքները, որոնք վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչ պիտանի են դարձել, փչացել են կամ վնասվել մինչև դրանց մաքսային հայտարարագրումը, այդ թվում՝ դրանց ժամանակավոր պահպանման ժամանակահատվածի ընթացքում, ինչպես նաև «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետում նշված ապրանքների, հետագայում դրանց նկատմամբ մաքսային գործառնություններ իրականացնելիս դիտարկվում են որպես ոչ պիտանի, փչացած կամ վնասված վիճակում Միության մաքսային տարածք ներմուծված:

2. Միության մաքսային տարածք ներմուծված ապրանքները, որոնք վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչ պիտանի են դարձել, փչացել են կամ վնասվել մինչև սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածին համապատասխան բացթողման համար դրանց հայտագրումը ապրանքների հայտարարագիրը ներկայացնելուց առաջ, կամ մինչև այն օրը, որից սկսած այդ ապրանքները համարվում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում՝ սույն Օրենսգրքի 204-րդ հոդվածին համապատասխան, այդ թվում՝ դրանց ժամանակավոր պահպանման ժամանակահատվածում, ինչպես նաև «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ՝ հետագայում դրանց նկատմամբ մաքսային գործառնություններ իրականացնելիս դիտարկվում են որպես ոչ պիտանի, փչացած կամ վնասված վիճակում Միության մաքսային տարածք ներմուծված:

Հոդված 16. Օտարերկրյա ապրանքները, որոնք դատարանի որոշմամբ բռնագրավվել են կամ դարձվել անդամ պետության սեփականությունը (եկամուտը) կամ որոնց վրա բռնագանձում է տարածվել

1. Օտարերկրյա ապրանքները, որոնք դատարանի որոշմամբ բռնագրավվել են կամ դարձվել անդամ պետության սեփականությունը (եկամուտը), ենթակա չեն մաքսային ընթացակարգերով ձևակերպման, իսկ անձնական օգտագործման ապրանքները՝ ազատ շրջանառության մեջ դրվելու: Նշված ապրանքները Միության ապրանքների կարգավիճակ են ձեռք բերում այդպիսի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից:

2. Օտարերկրյա ապրանքները, որոնց վրա դատարանի որոշմամբ բռնագանձում է տարածվել մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման դիմաց, Միության ապրանքների կարգավիճակ են ձեռք բերում անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 17. Ապրանքների փորձանմուշներ և (կամ) նմուշներ վերցնելը անդամ պետությունների շահագրգիռ անձանց և պետական մարմինների կողմից

1. Մաքսային մարմնի թույլտվությամբ անդամ պետությունների շահագրգիռ անձինք և պետական մարմիններն իրավասու են վերցնելու մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների փորձանմուշներ և (կամ) նմուշներ:

2. Ապրանքների փորձանմուշներ և (կամ) նմուշներ վերցնելու թույլտվությունը տալիս է մաքսային մարմինը, եթե վերցնելը՝

1) չի դժվարացնում մաքսային հսկողության իրականացումը,

2) չի փոխում ապրանքների առանձնահատկությունները,

3) չի հանգեցնում մաքսատուրքերի, հարկերի վճարումից խուսափելուն կամ արգելքներն ու սահմանափակումները, ներքին շուկայի պաշտպանական միջոցները չպահպանելուն:

3. Ապրանքների փորձանմուշներ և (կամ) նմուշներ վերցնելու թույլտվությունը կամ այդպիսի թույլտվության

մերժումը տրվում է ոչ ուշ, քան սույն հոդվածի 1-ին կետում նշված անձանց և մարմիններին դիմելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

4. Ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների համար առանձին մաքսային հայտարարագիր չի ներկայացվում՝ պայմանով, որ դրանք մատնանշվեն ապրանքների համար ներկայացվող հայտարարագրում՝ ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս, իսկ ապրանքները սույն Օրենսգրքի 37-րդ և 40-րդ գլուխներով նախատեսված կարգով և պայմաններով Միության մաքսային սահմանով տեղափոխելու դեպքում՝ ուղևորային մաքսային հայտարարագրում:

Հոդված 18. Մաքսային մարմիններ հաշվետվություն ներկայացնելը

1. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձինք, լիազորված տնտեսական օպերատորներն ու օտարերկրյա ապրանքները, ինչպես նաև Միության՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները տիրապետող և (կամ) օգտագործող անձինք պարտավոր են մաքսային մարմին ներկայացնել հաշվետվություն՝ պահպանվող, փոխադրվող, իրացվող, վերամշակվող և (կամ) օգտագործվող ապրանքների, ինչպես նաև իրականացված մաքսային գործառնությունների վերաբերյալ՝ հաշվի առնելով սույն կետի երկրորդ պարբերությունը:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ կարող է սահմանվել, որ նշված անձանց կողմից հաշվետվությունը ներկայացվի միայն մաքսային մարմնի պահանջով:

2. Հաշվետվությունը ներկայացնելու եղանակը, հաշվետվությունների ձևերը, էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ներկայացվող հաշվետվությունների կառուցվածքն ու ձևաչափը, դրանք լրացնելու կարգը, ինչպես նաև հաշվետվությունը ներկայացնելու կարգն ու ժամկետները որոշվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

Գլուխ 3

Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը: Ապրանքների դասակարգումը

Հոդված 19. Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկն ու դրա վարումը

1. Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը (այսուհետ՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ) ապրանքների նկարագրման և ծածկագրման համակարգ է, որն օգտագործվում է ապրանքների դասակարգման համար՝ մաքսասակագնային կարգավորման միջոցներ, արտահանման մաքսատուրքեր, արգելքներ ու սահմանափակումներ, ներքին շուկայի պաշտպանական միջոցներ կիրառելու, մաքսային վիճակագրություն վարելու նպատակներով:

Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը կարող է օգտագործվել ապրանքների հարկման նպատակներով և Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով ու ակտերով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ նպատակներով:

2. Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի համար միջազգային հիմք են հանդիսանում Համաշխարհային մաքսային կազմակերպության՝ ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգն ու Անկախ պետությունների համագործակցության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը:

3. Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը հաստատվում է Հանձնաժողովի կողմից:

4. Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի առնչությամբ պարզաբանումներն ընդունվում են Հանձնաժողովի կողմից:

5. Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի վարումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից: Այդ նպատակներով Հանձնաժողովը՝

1) իրականացնում է Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի միջազգային հիմքի փոփոխությունների, ինչպես նաև այդ միջազգային հիմքի մեկնաբանության վերաբերյալ պարզաբանումների դիտանցում.

2) իրականացնում է Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի և դրա պարզաբանումների համապատասխանեցումը դրա միջազգային հիմքին.

3) անդամ պետությունների առաջարկով կատարում է փոփոխություններ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում և դրա պարզաբանումներում.

4) աղյուսակների տեսքով կազմում և անդամ պետությունների լիազորված պետական մարմիններ է ուղարկում

տեղեկություններ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրերի՝ ապրանքային դիրքերի, ենթադիրքերի և ստորաենթադիրքերի մակարդակով համապատասխանության վերաբերյալ՝ դրա միջազգային հիմքի հերթական տարբերակին անցնելու դեպքում.

5) պատրաստում և անդամ պետությունների լիազորված պետական մարմիններ է ուղարկում Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկն ու դրան կից պարզաբանումները.

6) իրականացնում է Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի վարման համար անհրաժեշտ այլ գործառույթներ:

6. Հանձնաժողովի կողմից Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը վարելու, այդ թվում՝ դրանում և դրա պարզաբանումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հանձնաժողովի և անդամ պետությունների լիազորված պետական մարմինների՝ այդ հարցերով փոխգործակցության կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Հոդված 20. Ապրանքների դասակարգումը

1. Հայտարարատուն և այլ անձինք ապրանքների դասակարգումն իրականացնում են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան՝ մաքսային հայտարարագրման ժամանակ և այն դեպքերում, երբ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի համաձայն, մաքսային մարմին են հայտնում ապրանքի ծածկագիրը՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան:

Մաքսային հայտարարագրման ժամանակ ապրանքների դասակարգում չի իրականացվում այն դեպքում, երբ, սույն Օրենսգրքին համապատասխան, ապրանքի ծածկագրի վերաբերյալ տվյալները ենթակա չեն մատնանշման մաքսային հայտարարագրում՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան:

Ապրանքների դասակարգման ճշգրտության ստուգումն իրականացվում է մաքսային մարմինների կողմից:

2. Մաքսային մարմինն ապրանքների դասակարգում իրականացնում է հետևյալ դեպքերում՝

1) մաքսային հայտարարագրման ժամանակ մաքսային մարմնի կողմից ապրանքների ոչ ճիշտ դասակարգման հայտնաբերում՝ ինչպես դրանց բացթողումից առաջ, այնպես էլ դրանից հետո: Այդ դեպքում մաքսային մարմինն ապրանքների դասակարգման վերաբերյալ ընդունում է որոշում: Ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշման ձևը, դրա ընդունման կարգն ու ժամկետները սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան.

2) վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկի իրականացում՝

սույն Օրենսգրքի 56-րդ հոդվածին, 72-րդ հոդվածի 5-րդ կետին, 137-րդ հոդվածի 11-րդ կետին, 198-րդ հոդվածի 12-րդ կետին, 208-րդ հոդվածի 9-րդ կետին, 216-րդ հոդվածի 6-րդ կետին և 315-րդ հոդվածին համապատասխան,

սույն Օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ կետում, 97-րդ հոդվածի 3-րդ կետում, 103-րդ հոդվածի 4-րդ կետում, 153-րդ հոդվածի 5-րդ կետում, 279-րդ հոդվածի 8-րդ կետում, 280-րդ հոդվածի 4-րդ կետում, 284-րդ հոդվածի 4-րդ կետում, 295-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ կետերում և 309-րդ հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում,

սույն Օրենսգրքի 117-րդ հոդվածի 9-րդ կետում նշված գործողությունները հայտարարատուի կողմից չիրականացվելու դեպքում.

3) սույն գլխով նախատեսված այլ դեպքեր:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերում ապրանքների դասակարգման ժամանակ մաքսային մարմնի մոտ բացակայում են ապրանքների առանձնահատկությունների, դրանց անվանումների վերաբերյալ հստակ տվյալներ կամ 10 նիշի մակարդակով ապրանքների դասակարգման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ, ապա ապրանքների ծածկագրերը թույլատրվում է որոշել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան՝ առնվազն առաջին 4 նիշերի մակարդակով՝ ելնելով ապրանքի՝ դասակարգման հատկանիշների վրա ազդեցություն ունեցող առանձնահատկությունների վերաբերյալ ունեցած տվյալներից:

4. Առևտրային, տրանսպորտային (փոխադրման) և (կամ) այլ փաստաթղթերում, ինչպես նաև եզրակացություններում, տեղեկանքներում, փորձագիտական հիմնարկների կողմից տրվող փորձաքննության արձանագրություններում նշված ապրանքների ծածկագրերը պարտադիր չեն ապրանքների դասակարգման համար:

Հոդված 21. Մաքսային մարմինների կողմից ընդունվող՝ ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումները, ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ որոշումներն ու պարզաբանումները

1. Համապատասխան անձանց դիմումով մաքսային մարմինները կարող են իրականացնել ապրանքների դասակարգում նախքան դրանց մաքսային հայտարարագրումը՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային

անվանացանկի համաձայն ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումներ (այսուհետ՝ ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումներ) և չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումներ ընդունելու միջոցով:

2. Ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումներն ընդունվում են սույն գլխին համապատասխան:

3. Միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում տեղափոխվող ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումներն ընդունվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան սահմանված ձևով, կարգով ու ժամկետներում:

Այն ապրանքների ցանկը, որոնց առնչությամբ մաքսային մարմինները մաքսային հայտարարագրում իրականացնելու նպատակով ընդունում են ապրանքների դասակարգման վերաբերյալ նշված որոշումները սույն Օրենսգրքի 117-րդ հոդվածին համապատասխան նախատեսված առանձնահատկություններով, սահմանվում է Հանձնաժողովի կողմից և, Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում, անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

4. Ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումները կիրառվում են այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմիններն ընդունել են ապրանքների դասակարգման մասին այդպիսի նախնական որոշումներ, իսկ սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում՝ նաև այլ անդամ պետությունների տարածքներում: Ապրանքների մաքսային հայտարարագրման դեպքում ապրանքների ծածկագրերի վերաբերյալ տվյալները, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, նշվում են ապրանքների հայտարարագրերում՝ ապրանքների դասակարգման մասին ընդունված նախնական որոշումներին համապատասխան:

Այն ապրանքների «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան մաքսային հայտարարագրման դեպքում, որոնք Միության մաքսային սահմանով տեղափոխվում են չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում և որոշակի ժամանակահատվածի ընթացքում Միության մաքսային սահմանով տեղափոխվում են մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցներով, և որոնց նկատմամբ ընդունվել են ապրանքների դասակարգման մասին նախնական որոշումներ, կարող են նշվել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքների ծածկագրերի մասին տեղեկություններ, որոնք նշված են ապրանքների դասակարգման մասին այդ նախնական որոշումներում:

5. Միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում տեղափոխվող ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումները կիրառվում են այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմիններն ընդունել են այդպիսի որոշումներ:

Միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում տեղափոխվող ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումները կիրառվում են նաև այլ անդամ պետությունների տարածքում մաքսային հայտարարագրման ժամանակ՝ Միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում տեղափոխվող այն ապրանքների բաղադրիչների «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, որոնք նշված են այդպիսի որոշումներում և որոնք այդ որոշումների գործողության ժամկետների ընթացքում տեղափոխվում են Միության մաքսային սահմանով՝ մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցներով և հասնում այդպիսի որոշումներ ընդունած մաքսային մարմինների անդամ պետություն: Այդ ապրանքների բաղադրիչների մաքսային հայտարարագրման ժամանակ Միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում տեղափոխվող ապրանքների դասակարգման մասին ընդունված որոշումներին համապատասխան՝ տարանցման հայտարարագրերում կարող են նշվել կոմպլեկտավորված կամ ավարտուն վիճակում գտնվող ապրանքների ծածկագրերի վերաբերյալ տվյալները՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի:

6. Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակներով՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված մաքսային մարմինները կարող են ընդունել որոշումներ և տալ պարզաբանումներ ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով: Մաքսային մարմիններն ապահովում են այդ որոշումների և պարզաբանումների հրապարակումը:

Նշված որոշումներն ու պարզաբանումները պարտադիր են այն անդամ պետության տարածքում ապրանքների դասակարգում իրականացնելիս, որի մաքսային մարմնի կողմից դրանք ընդունվել են:

7. Սույն գլխի դրույթների կիրառման նպատակներով՝ ապրանքների առանձին տեսակը ենթադրում է դասակարգման այնպիսի ընդհանուր հատկանիշներ ունեցող ապրանքների ամբողջություն, որոնք հնարավորություն են տալիս որոշակի անվանումների, որոշակի մակնիշների, մոդելների, ապրանքատեսակների (արտիկուլների) պատկանող, փոփոխությունների ենթարկված և այլ նմանատիպ առանձնահատկություններ ունեցող ապրանքները դասել մեկ ծածկագրի՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան:

Հոդված 22. Հանձնաժողովի որոշումներն ու պարզաբանումներն ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ

1. Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակներով մաքսային մարմինների առաջարկների հիման վրա Հանձնաժողովն ընդունում է որոշումներ ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ:

Սույն Օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան՝ ապրանքների դասակարգման վերաբերյալ մաքսային մարմինների ընդունած նախնական որոշումներում, ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ մաքսային մարմինների ընդունած (տված) որոշումներում կամ պարզաբանումներում Հանձնաժողովի կողմից ապրանքների տարբերվող դասակարգում հայտնաբերելու դեպքում, Հանձնաժողովն ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ որոշումներն ընդունում է սեփական նախաձեռնությամբ:

2. Ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ որոշումներն ընդունվում են Հանձնաժողովի որոշումների տեսքով:

3. Հանձնաժողովի կողմից սույն հոդվածին համապատասխան ընդունված որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան ընդունված (տրված)՝ ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ որոշումներն ու պարզաբանումները չեն կիրառվում և ենթակա են վերացման այն ապրանքների առնչությամբ, որոնց վերաբերյալ Հանձնաժողովը որոշում է ընդունել: Սույն Օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան մաքսային մարմինների կողմից ընդունված (տրված)՝ ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ որոշումների և պարզաբանումների՝ չեղյալ ճանաչման մասին որոշումներն ուժի մեջ են մտնում սույն հոդվածին համապատասխան ընդունված Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից:

4. Հանձնաժողովի կողմից սույն հոդվածին համապատասխան ընդունված որոշումները ճանաչվում են ուժը կորցրած կամ ենթակա են փոփոխման հետևյալ հիմքերով՝

1) Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը փոփոխելը.

2) Հանձնաժողովի այդպիսի որոշումների ընդունման ժամանակ թույլ տրված և ապրանքների առանձին տեսակների դասակարգման վրա ազդեցություն չունեցող սխալները հայտնաբերելը՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, օրինակ՝ վրիպակներ, տեխնիկական սխալներ և այլն.

3) Հանձնաժողովի որոշման մեջ նշված ապրանքների առանձին տեսակների վերաբերյալ լրացուցիչ այնպիսի տեղեկություններ ստանալը, որոնք ազդում են ապրանքների առանձին տեսակների ծածկագրերի վրա՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, և որոնք ազդում են ապրանքների առանձին տեսակների նկարագրության և Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական կանոնների կիրառության վրա.

4) Եվրասիական տնտեսական Միության դատարանի կողմից Հանձնաժողովի՝ սույն հոդվածին համապատասխան ընդունած որոշումը կամ դրա առանձին դրույթները «Միության մասին» պայմանագրին, Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին և (կամ) Միության մարմինների որոշումներին չհամապատասխանող ճանաչելը:

5. Հանձնաժողովի՝ ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ որոշումները նախապատրաստելու կարգը՝ ներառյալ մաքսային մարմինների կողմից այդպիսի որոշումներ ընդունելու վերաբերյալ առաջարկները Հանձնաժողով ներկայացնելու, Հանձնաժողովի կողմից դրանք քննարկելու, սույն հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությանը համապատասխան նախապատրաստած՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերը մաքսային մարմինների կողմից համաձայնեցնելու կանոնները որոշվում են Հանձնաժողովի կողմից:

6. Մաքսային մարմինների առաջարկներով Հանձնաժողովը տալիս է պարզաբանումներ ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ:

Ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ պարզաբանումներն ընդունվում են Հանձնաժողովի առաջարկությունների ձևով:

Ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ պարզաբանումներն ընդունվում են այն դեպքում, երբ սույն Օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված մաքսային մարմիններն այդպիսի ապրանքների դասակարգման վերաբերյալ ունեն միասնական կարծիք՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան:

Ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ Հանձնաժողովի պարզաբանումները նախապատրաստելու կարգը, այդ թվում՝ մաքսային մարմինների կողմից այդպիսի պարզաբանումներ տալու վերաբերյալ առաջարկները Հանձնաժողով ներկայացնելու, Հանձնաժողովի կողմից դրանք քննարկելու, այդպիսի պարզաբանումների նախագծերը մաքսային մարմինների հետ համաձայնեցնելու կանոնները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Հոդված 23. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշում ընդունելու կարգը

1. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշում ընդունելու կարգը սահմանվում է սույն հոդվածով և սույն Օրենսգրքի 24-27-րդ հոդվածներով, իսկ նշված հոդվածներով չկարգավորվող մասով՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

2. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումն ընդունվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված մաքսային մարմինների կողմից:

3. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումն ընդունվում է այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որտեղ պետք է անցկացվի ապրանքի բացթողումը դրա՝ մաքսային ընթացակարգով ձևակերպման ժամանակ՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման դեպքերի:

4. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումն ընդունվում է ապրանքի՝ որոշակի մակնիշ, մոդել, ապրանքատեսակ (արտիկուլ) և մոդիֆիկացիա ներառող յուրաքանչյուր անվանման առնչությամբ:

5. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման ձևը, դրա լրացման ու ապրանքի դասակարգման վերաբերյալ այդպիսի նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

6. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումն ստացած անձի կողմից դրա օրինակը կորցնելու դեպքում այդ անձին տրվում է ապրանքի դասակարգման վերաբերյալ այդպիսի նախնական որոշման կրկնօրինակը:

Հոդված 24. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշում ընդունելու մասին դիմումը

1. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումն ընդունվում է մաքսային մարմնի կողմից անձի (այսուհետ սույն գլխում՝ դիմումատու)՝ էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ներկայացված դիմումի հիման վրա:

2. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշում ընդունելու մասին դիմումը պետք է պարունակի ապրանքի լրիվ առևտրային անվանումը, ֆիրմային անվանումը (ապրանքային նշանը), հիմնական տեխնիկական և կոմերցիոն հատկանիշները և ապրանքը միանշանակորեն դասակարգելու հնարավորություն տվող այլ տեղեկություններ: Անհրաժեշտության դեպքում ներկայացվում են ապրանքի փորձանմուշները և (կամ) նմուշները, արտադրատեսակների լուսանկարները, նկարները, գծագրերը, անձնագրերը և ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշում ընդունելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

3. Դիմումատուի ներկայացրած տվյալներն ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշում ընդունելու համար բավարար չլինելու դեպքում մաքսային մարմինը ոչ ուշ, քան ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշում ընդունելու մասին դիմումը մաքսային մարմնում գրանցելու օրվանից 30 օրացուցային օր հետո դիմումատուին լրացուցիչ տեղեկություններ ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ հարցում է ուղարկում: Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել այդպիսի հարցում ուղարկելու ավելի կարճ ժամկետ:

Լրացուցիչ տեղեկությունները պետք է ներկայացվեն՝ լրացուցիչ տեղեկություններ ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ դիմումատուին ուղարկված հարցումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվանից ոչ ուշ, քան 60 օրացուցային օր հետո:

Լրացուցիչ տեղեկությունները սահմանված ժամկետում չներկայացնելու կամ ներկայացված լրացուցիչ տեղեկություններն ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշում ընդունելու հնարավորություն տվող տվյալներ չպարունակելու դեպքում մաքսային մարմինը մերժում է ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման ընդունումը և դրա մասին տեղեկացնում դիմումատուին՝ մերժման պատճառների մատնանշմամբ:

Հոդված 25. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշում ընդունելու ժամկետը և գործողության ժամկետը

1. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումն ընդունվում է ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումն ընդունելու մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվանից հետո 90 օրացուցային օրվանից ոչ ուշ:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշում ընդունելու ավելի կարճ ժամկետ:

Լրացուցիչ տեղեկություններ ներկայացնելու անհրաժեշտության դեպքում սույն Օրենսգրքի 24-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված կամ սույն կետի երկրորդ պարբերության համապատասխան սահմանված ժամկետը կասեցվում է լրացուցիչ տեղեկություններ ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ դիմումատուին ուղարկված հարցումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվանից և վերսկսվում է մաքսային մարմնի կողմից լրացուցիչ տեղեկություններ ստանալու օրվանից:

2. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման գործողության ժամկետը՝ դրա ընդունման օրվանից հաշված 3 տարի է, եթե անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման գործողության ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

Հոդված 26. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման մեջ փոփոխություններ կատարելը, դրա գործողության դադարեցումը կամ հետկանչը

1. Մաքսային մարմինն ընդունում է որոշում ապրանքի դասակարգման վերաբերյալ իր կողմից ընդունված նախնական որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ, ինչպես նաև ընդունում է որոշում ապրանքի դասակարգման վերաբերյալ իր կամ ստորադաս մաքսային մարմնի կողմից ընդունված նախնական որոշման գործողությունը դադարեցնելու կամ այն հետ կանչելու վերաբերյալ:

2. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշումն ընդունվում է մաքսային մարմնի կամ դիմումատուի կողմից այնպիսի սխալներ հայտնաբերելու դեպքում, որոնք թույլ են տրվել ապրանքի դասակարգման վերաբերյալ այդ նախնական որոշումն ընդունելիս և որոնք չեն ազդում ապրանքի՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ծածկագրի վերաբերյալ տվյալների վրա:

Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ է մտնում ապրանքի դասակարգման վերաբերյալ այդպիսի նախնական որոշումն ընդունելու օրվանից:

3. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումն ընդունվում է հետևյալ դեպքերում՝

1) մաքսային մարմինը պարզել է, որ դիմումատուն ապրանքի դասակարգման վերաբերյալ այդ նախնական որոշումն ընդունելու համար ներկայացրել է ոչ հավաստի և (կամ) ոչ ամբողջական տվյալներ պարունակող փաստաթղթեր, կեղծ փաստաթղթեր կամ ոչ հավաստի և (կամ) ոչ ամբողջական տվյալներ,

2) մաքսային մարմինը հայտնաբերել է սխալներ, որոնք թույլ են տրվել ապրանքի դասակարգման վերաբերյալ այդ նախնական որոշումն ընդունելիս և որոնք, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, ազդում են ապրանքի ծածկագրի վերաբերյալ տվյալների վրա:

4. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումը, սույն հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում, ուժի մեջ է մտնում ապրանքի դասակարգման վերաբերյալ այդպիսի նախնական որոշումն ընդունելու օրվանից:

Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումը, սույն հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում, ուժի մեջ է մտնում ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ այդ որոշումն ընդունելու օրվանից:

5. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշում ընդունելիս, սույն հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում, ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումը տրամադրած մաքսային մարմինը ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշում ընդունելուց տասն աշխատանքային օրվանից ոչ ուշ ընդունում է ապրանքի դասակարգման վերաբերյալ նոր նախնական որոշում՝ հիմք ընդունելով այն տվյալները, որոնք դիմումատուն ներկայացրել է ապրանքի դասակարգման վերաբերյալ այն նախնական որոշումն ընդունելու մասին դիմում ներկայացնելիս, որի գործողությունը դադարեցվել է: Ապրանքի դասակարգման վերաբերյալ այդպիսի նոր նախնական որոշումն ուժի մեջ է մտնում այն ընդունելու օրվանից:

6. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումը հետ կանչելու վերաբերյալ որոշումն ընդունվում է հետևյալ դեպքերում՝

1) Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում կատարվել են փոփոխություններ, որոնք ազդում են այն ապրանքի դասակարգման վրա, որի առնչությամբ ընդունվել է ապրանքի դասակարգման վերաբերյալ այդ նախնական որոշումը.

2) Հանձնաժողովի կողմից որոշում է ընդունվել ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ, որը փոփոխություն է առաջացնում ապրանքի դասակարգման վերաբերյալ այդ նախնական որոշման մեջ նշված ապրանքի դասակարգման մեջ.

3) սույն Օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան՝ ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ մաքսային մարմինների կողմից ընդունվել են որոշումներ կամ տրվել են պարզաբանումներ, որոնք փոփոխություն են առաջացնում ապրանքի դասակարգման վերաբերյալ այդ նախնական որոշման մեջ նշված ապրանքի դասակարգման մեջ.

4) Համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից ընդունվել են ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումներ, որոնք կիրառվում են անդամ պետությունների կողմից:

7. Սույն հոդվածի 6-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումը հետ կանչելու վերաբերյալ որոշումն ընդունվում է մաքսային մարմնի կողմից ոչ ուշ, քան Հանձնաժողովի համապատասխան որոշման պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օր հետո, և

ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի այդ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից:

Սույն հոդվածի 6-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքերում ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումը հետ կանչելու վերաբերյալ որոշումն ընդունվում է մաքսային մարմնի կողմից ոչ ուշ, քան սույն Օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան մաքսային մարմինների կողմից ընդունված (տրված)՝ ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ համապատասխան որոշումների կամ պարզաբանումների պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օր հետո, և ուժի մեջ է մտնում ապրանքների առանձին տեսակների դասակարգման վերաբերյալ այդպիսի որոշումները կամ պարզաբանումներն ուժի մեջ մտնելու հետ միաժամանակ:

Սույն հոդվածի 6-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքում մաքսային մարմնի կողմից ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումը հետ կանչելու վերաբերյալ որոշումն ընդունելու և այդ որոշումն ուժի մեջ մտնելու ժամկետները սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

8. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշումը, ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումը, ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումը հետ կանչելու վերաբերյալ որոշումն ուղարկվում են դիմումատուին՝ այդպիսի որոշումներն ընդունելու պատճառների նշումով, ինչպես նաև դրանց մասին տեղեկացվում է մաքսային մարմիններին այդ որոշումներն ընդունելու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ:

Հոդված 27. Ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումների հրապարակայնությունը

Ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումներից տեղեկությունները՝ բացառությամբ շահագրգիռ անձին վերաբերող՝ պետական, առևտրային, բանկային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք կազմող տեղեկությունների կամ այլ գաղտնի տեղեկությունների, տեղադրվում են Ինտերնետ ցանցում՝ Միության պաշտոնական կայքում:

Մաքսային մարմինների կողմից այդպիսի տեղեկությունները Հանձնաժողով ուղարկելու կարգը՝ ներառյալ տեղեկություններ ներկայացնելու տեխնիկական պայմանները, սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Գլուխ 4

Ապրանքների ծագումը

Հոդված 28. Ապրանքների ծագումը որոշելը

1. Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների ծագումը որոշելն իրականացվում է այն ապրանքների ծագումը որոշելու նպատակով և կանոններով, որոնք նախատեսված են «Միության մասին» պայմանագրին համապատասխան (այսուհետ՝ ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոններ):

2. Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների ծագումը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կանոններով, եթե Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով, երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրերով կամ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով այլ կանոններ սահմանված չեն (այսուհետ՝ արտահանվող ապրանքների ծագումը որոշելու կանոններ):

Հոդված 29. Ապրանքների ծագման հավաստումը և ապրանքների ծագման մասին փաստաթղթերը

1. Ապրանքների ծագումը հավաստվում է բոլոր այն դեպքերում, երբ մաքսասակագնային կարգավորման միջոցների, արգելքների և սահմանափակումների, ներքին շուկայի պաշտպանության միջոցների կիրառումը կախված է ապրանքների ծագումից՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի:

2. Ապրանքների ծագման հավաստում չի պահանջվում հետևյալ դեպքերում՝

1) Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքները ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով.

2) ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխվում են սույն Օրենսգրքի 37-րդ գլխին համապատասխան.

3) ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոններով կամ արտահանվող ապրանքների ծագումը որոշելու կանոններով նախատեսված այլ դեպքեր:

3. Անկախ սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներից՝ ապրանքների ծագումը հավաստվում է, եթե մաքսային մարմնի

կողմից հայտնաբերվել են նշաններ, որ ապրանքները ծագում են այնպիսի երկրից (երկրների խմբից, երկրների մաքսային միությունից, երկրի շրջանից կամ մասից), որտեղից ծագող ապրանքներն արգելված են՝

1) Միության մաքսային տարածք կամ անդամ պետության տարածք ներմուծվելու համար՝ համաձայն «Միության մասին» պայմանագրին համապատասխան սահմանված արգելքների և սահմանափակումների.

2) Միության մաքսային տարածքից կամ անդամ պետության տարածքից արտահանվելու համար՝ համաձայն «Միության մասին» պայմանագրին համապատասխան սահմանված արգելքների և սահմանափակումների.

3) անդամ պետության տարածք ներմուծվելու համար՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

4) անդամ պետության տարածքով տարանցելու համար՝ երրորդ կողմի հետ այդ անդամ պետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

4. Եթե սույն հոդվածի 3-րդ կետի 1-3-րդ ենթակետերում նշված՝ անդամ պետության օրենսդրությամբ այդ անդամ պետության տարածք ներմուծվելու համար արգելված ապրանքները ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ Միության մաքսային տարածքով այն անդամ պետություն փոխադրելու (տրանսպորտային փոխադրում իրականացնելու) համար, որի տարածք այդ ապրանքների ներմուծումն արգելված չէ, ապրանքների ծագման հավաստում չի պահանջվում:

5. Անդամ պետության այն օրենսդրության պահպանումը ստուգելու նպատակով, որի պահպանման նկատմամբ հսկողությունը դրված է մաքսային մարմինների վրա, անդամ պետության մաքսային մարմիններն իրավունք ունեն այդ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով պահանջելու ապրանքի ծագման հավաստում՝ բացառությամբ Միության մաքսային տարածքով այլ անդամ պետություն փոխադրելու (տրանսպորտային փոխադրում իրականացնելու) համար «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների:

6. Ապրանքի ծագման մասին փաստաթուղթը ապրանքի ծագման հայտարարագիրը կամ ապրանքի ծագման հավաստագիրն է: Ապրանքի ծագումը հավաստվում է ապրանքի ծագման հայտարարագրով կամ ապրանքի ծագման հավաստագրով՝ ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոններին կամ արտահանվող ապրանքների ծագումը որոշելու կանոններին համապատասխան:

Հոդված 30. Ապրանքի ծագման հայտարարագիրը

1. Ապրանքի ծագման հայտարարագիր՝ առևտրային կամ ցանկացած այլ փաստաթուղթ, որը վերաբերում է ապրանքին և պարունակում է ապրանքի ծագման մասին ապրանքի ծագման երկրի (երկրների խմբի, երկրների մաքսային միության, երկրի շրջանի կամ մասի) կամ ապրանքի արտահանման երկրի (երկրների խմբի, երկրների մաքսային միության, երկրի շրջանի կամ մասի) պատրաստողի, վաճառողի կամ ուղարկողի կողմից հայտագրված տեղեկություններ:

2. Եթե պարզվում է, որ ապրանքի ծագման մասին հայտարարագրի մեջ ապրանքի ծագման մասին հայտագրված տեղեկությունները հիմնված են այլ չափորոշիչների վրա, քան այն չափորոշիչները, որոնց կիրառումը սահմանված է ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոններով կամ արտահանվող ապրանքների ծագումը որոշելու կանոններով, ապա ապրանքի ծագման տվյալ հայտարարագիրը չի դիտվում որպես ապրանքի ծագման մասին փաստաթուղթ:

Հոդված 31. Ապրանքի ծագման հավաստագիրը

1. Ապրանքի ծագման հավաստագիր՝ որոշակի ձևի փաստաթուղթ, որը վկայում է ապրանքի ծագման մասին և տրամադրվել է ապրանքի ծագման երկրի (երկրների խմբի, երկրների մաքսային միության, երկրի շրջանի կամ մասի) կամ ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոններով կամ արտահանվող ապրանքների ծագումը որոշելու կանոններով սահմանված դեպքերում՝ ապրանքի արտահանման երկրի (երկրների խմբի, երկրների մաքսային միության, երկրի շրջանի կամ մասի) լիազորված պետական մարմնի կամ լիազորված կազմակերպության կողմից:

Ապրանքի ծագման հավաստագրի, այդ թվում՝ այն ձևակերպելու և (կամ) լրացնելու կարգի նկատմամբ պահանջները սահմանվում են ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոններով կամ արտահանվող ապրանքների ծագումը որոշելու կանոններով:

2. Եթե ապրանքի ծագման հավաստագրի մեջ ապրանքի ծագման մասին տեղեկությունները հիմնված են այլ չափորոշիչների վրա, քան այն չափորոշիչները, որոնց կիրառումը սահմանված է ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոններով կամ արտահանվող ապրանքների ծագումը որոշելու կանոններով, ապա ապրանքի ծագման տվյալ հավաստագիրը չի դիտվում որպես ապրանքի ծագման մասին փաստաթուղթ:

3. Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանման ժամանակ ապրանքի ծագման հավաստագիրը տրամադրվում է անդամ պետությունների լիազորված պետական մարմինների կամ լիազորված կազմակերպությունների կողմից, եթե նշված հավաստագիրը պահանջվում է պայմանագրի պայմաններով, ապրանքների ներմուծման երկրի (երկրների խմբի, երկրների մաքսային միության, երկրի շրջանի կամ մասի) կանոններով կամ եթե ապրանքի ծագման հավաստագրի առկայությունը նախատեսված է արտահանվող ապրանքների ծագումը որոշելու կանոններով:

Անդամ պետությունների լիազորված պետական մարմինները կամ լիազորված կազմակերպությունները, որոնք տրամադրել են ապրանքի ծագման հավաստագիր, պարտավոր են ապրանքի ծագման հավաստագիր տրամադրելու օրվանից 3 տարուց ոչ պակաս պահել դրա պատճենը և մյուս փաստաթղթերը, որոնց հիման վրա որոշվել է ապրանքի ծագումը:

4. Ապրանքի ծագման հավաստագիրը չի դիտվում որպես ապրանքի ծագման մասին փաստաթուղթ, եթե ապրանքի ծագման հավաստագիրը ձևակերպվել է այն ձևակերպելու և (կամ) լրացնելու կարգին ներկայացվող այն պահանջների խախտմամբ, որոնք սահմանվել են ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոններով կամ արտահանվող ապրանքների ծագումը որոշելու կանոններով:

Հոդված 32. Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների ծագման մասին նախնական որոշումները

1. Մաքսային գործառնությունների կատարման ժամանակի կրճատման նպատակով մաքսային հայտարարագրման ժամանակ անձանց դիմումի հիման վրա մաքսային մարմինները կայացնում են Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների ծագման մասին նախնական որոշումներ (այսուհետ սույն գլխում՝ ապրանքների ծագման մասին նախնական որոշումներ)՝ նախքան այդ ապրանքների մաքսային հայտարարագրումը:

2. Ապրանքների ծագման մասին նախնական որոշումները կիրառվում են այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմինները կայացրել են ապրանքների ծագման մասին նախնական որոշումները՝ ապրանքների ծագման մասին այդ նախնական որոշումների գործողության ժամկետի ընթացքում: Եթե տվյալ ապրանքների նկատմամբ կայացվել են ապրանքների ծագման մասին նախնական որոշումներ, ապա դրանց մաքսային հայտարարագրման ժամանակ դրանց ծագման մասին տեղեկությունները նշվում են ապրանքների հայտարարագրերի մեջ՝ ապրանքների ծագման մասին կայացված նախնական որոշումներին համապատասխան:

Հոդված 33. Ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնելու կարգը

1. Ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնելու կարգը սահմանվում է սույն հոդվածով և սույն Օրենսգրքի 34-36-րդ հոդվածներով, իսկ նշված հոդվածներով չկարգավորված մասով՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

2. Ապրանքի ծագման մասին նախնական որոշումը կայացվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված մաքսային մարմինների կողմից:

3. Ապրանքի ծագման մասին նախնական որոշումը կայացվում է այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որտեղ տեղի է ունենալու ապրանքի բացթողումը՝ այն որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելիս՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի:

4. Ապրանքի ծագման մասին նախնական որոշումը կայացվում է կոնկրետ երկրից Միության մաքսային տարածք ներմուծվող յուրաքանչյուր անուն ապրանքի համար:

5. Ապրանքի ծագման մասին նախնական որոշման ձևը, այն լրացնելու և ապրանքի ծագման մասին այդպիսի նախնական որոշման մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

6. Ապրանքի ծագման մասին նախնական որոշումը ստացած անձի կողմից այն կորցնելու դեպքում այդ անձին տրամադրվում է ապրանքի ծագման մասին տվյալ նախնական որոշման կրկնօրինակը:

Հոդված 34. Ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնելու համար դիմումը

1. Ապրանքի ծագման մասին նախնական որոշումը մաքսային մարմնի կողմից կայացվում է անձի (այսուհետ սույն գլխում՝ դիմումատու) էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչի վրա ամրագրված փաստաթղթի ձևով ներկայացված դիմումի հիման վրա:

2. Ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնելու համար դիմումը պետք է պարունակի տեղեկություններ՝

1) դիմումատուի մասին (անվանում և հասցե).

2) ապրանքի մասին (լրիվ առևտրային անվանումը, ֆիրմային անվանումը (ապրանքային նշանը), հիմնական տեխնիկական և առևտրային բնութագրերը (ֆունկցիոնալ նշանակություն, տրտ, մակնիշ, մոդել, ապրանքատեսակ (արտիկուլ), անհատական և տրանսպորտային փաթեթվածքի նկարագրություն), ծածկագիրը՝ համաձայն Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի, արժեքը).

3) նյութերի մասին, որոնցից պատրաստված է ապրանքը, դրանց ծագման մասին, ծածկագրերի մասին՝ համաձայն Ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգի, արժեքի մասին.

4) ապրանքը պատրաստելու համար կատարված արտադրական և տեխնոլոգիական գործողությունների մասին:

3. Ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնելու համար դիմումին կցվում են ապրանքն արտադրող երկրի (երկրների խմբի, երկրների մաքսային միության, երկրի շրջանի կամ մասի) առևտրաարդյունաբերական պալատների և (կամ) այլ փորձագիտական կազմակերպությունների փորձաքննության ակտերը և այն ապրանքի ծագման հավաստագիրը, որի վերաբերյալ կայացվում է ապրանքի ծագման մասին նախնական որոշում:

Ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնելու համար դիմումին կարող են կցվել դրա մեջ նշված տեղեկությունները հաստատող այլ փաստաթղթեր՝ փորձարկումների արձանագրություններ, փորձագիտական կազմակերպությունների մասնագետների եզրակացություններ, որոնցում բերված են ապրանքի հետազոտության արդյունքները, Միության մաքսային սահմանով ապրանքի տեղափոխում նախատեսող գործարքի կատարումը հաստատող փաստաթղթեր, արտադրվող ապրանքի արժեքի հաշվարկ, առևտրային հաշիվներ, հաշվապահական փաստաթղթեր, ապրանքի պատրաստման տեխնոլոգիական գործընթացի մանրամասն նկարագրությունը և այլ փաստաթղթեր, որոնք վկայում են, որ տվյալ ապրանքն ամբողջությամբ ստացվել, արտադրվել կամ բավարար մշակման (վերամշակման) է ենթարկվել ապրանքի ծագման երկրի (երկրների խմբի, երկրների մաքսային միության, երկրի շրջանի կամ մասի) տարածքում, արտադրատեսակների լուսանկարներ, նկարներ, գծագրեր, անձնագրեր և ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր: Ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնելու համար դիմումին կարող են կցվել նաև ապրանքի փորձանմուշները և (կամ) նմուշները:

Մաքսային մարմինն իրավունք ունի պահանջելու ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնելու համար դիմումին կցվող՝ այն անդամ պետության պետական լեզու չհամարվող լեզվով կազմված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների թարգմանություն, որի մաքսային մարմին ներկայացվել է դիմումը:

4. Եթե դիմումատուի կողմից ներկայացվող տեղեկությունները բավարար չեն ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնելու համար, ապա ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնելու համար դիմումի՝ մաքսային մարմնում գրանցվելու օրվանից 30 օրացուցային օրվանից ոչ ուշ մաքսային մարմինը դիմումատուին հարցում է ուղարկում լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու անհրաժեշտության մասին: Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել այդպիսի հարցում ուղարկելու ավելի կարճ ժամկետ:

Լրացուցիչ տեղեկությունները պետք է ներկայացվեն՝ լրացուցիչ տեղեկություններ ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ դիմումատուին ուղարկված հարցումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվանից ոչ ուշ, քան 60 օրացուցային օր հետո:

Եթե լրացուցիչ տեղեկատվությունը չի ներկայացվել սահմանված ժամկետում կամ ներկայացված լրացուցիչ տեղեկատվությունը չի պարունակում տեղեկություններ, որոնք թույլ կտան ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնել, ապա մաքսային մարմինը մերժում է ապրանքի ծագման մասին այդպիսի նախնական որոշում կայացնելը և դրա մասին ծանուցում է դիմումատուին՝ նշելով մերժման պատճառները:

5. Եթե ապրանքի ծագման մասին նախնական տեղեկատվություն ներկայացնելիս հայտնաբերվել են նշաններ, որ ապրանքի ծագման ներկայացված հավաստագիրը կեղծ է և (կամ) պարունակում է ոչ հավաստի տեղեկություններ, ապա մաքսային մարմինն իրավունք ունի ապրանքի ծագման այդ հավաստագիրն ուղարկելու ապրանքի ծագման հավաստագիրը տրամադրած և (կամ) այն ստուգելու համար լիազորված պետական մարմին կամ լիազորված կազմակերպություն՝ ապրանքի ծագման այդ հավաստագրի ստուգում անցկացնելու համար:

Եթե ապրանքի ծագման հավաստագիրը տրամադրած և (կամ) այն ստուգելու համար լիազորված պետական մարմինը (լիազորված կազմակերպությունը) հաստատում է, որ ապրանքի ծագման հավաստագիրը իսկական չէ և (կամ) պարունակում է ոչ հավաստի տեղեկություններ, ապա մաքսային մարմինը մերժում է ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնելը և դրա մասին ծանուցում է դիմումատուին՝ նշելով մերժման պատճառները:

Հոդված 35. Ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնելու ժամկետը և դրա գործողության ժամկետը

1. Ապրանքի ծագման մասին նախնական տեղեկատվությունը կայացվում է ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնելու համար դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվանից 90 օրացուցային օրվանից ոչ ուշ:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել ապրանքի ծագման մասին նախնական որոշում կայացնելու ավելի կարճ ժամկետ:

Սույն Օրենսգրքի 34-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու անհրաժեշտության դեպքում կամ Սույն Օրենսգրքի 34-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան ապրանքի ծագման հավաստագիրը ստուգում անցկացնելու համար ուղարկելու դեպքում սույն կետի առաջին պարբերության մեջ նշված կամ սույն կետի երկրորդ պարբերությանը համապատասխան սահմանված ժամկետի ընթացքը կասեցվում է լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացնելու անհրաժեշտության մասին դիմումատուին ուղարկված հարցումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվանից կամ ապրանքի ծագման մասին հավաստագիրը ստուգում անցկացնելու համար ուղարկելու օրվանից և վերականգնվում է մաքսային մարմնի կողմից լրացուցիչ տեղեկատվությունը կամ ապրանքի ծագման հավաստագիրը տրամադրած և (կամ) այն ստուգելու համար լիազորված պետական մարմնի (լիազորված կազմակերպության) պատասխանն ստանալու օրվանից:

Սույն Օրենսգրքի 34-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան մաքսային մարմնի կողմից ապրանքի ծագման հավաստագիրը ստուգում անցկացնելու համար ուղարկելու դեպքում մաքսային մարմինը ծանուցում է դիմումատուին սույն կետի առաջին պարբերության մեջ նշված կամ սույն կետի երկրորդ պարբերությանը համապատասխան սահմանված ժամկետի կասեցման մասին:

2. Ապրանքի ծագման մասին նախնական որոշումը գործում է ապրանքի ծագման այն հավաստագրի գործողության ժամկետի ընթացքում, որի հիման վրա ընդունվել է տվյալ նախնական որոշումը:

Հոդված 36. Ապրանքի ծագման մասին նախնական որոշման մեջ փոփոխություններ կատարելը, դրա գործողության դադարեցումը կամ հետկանչը

1. Մաքսային մարմինը կայացնում է ապրանքի ծագման մասին իր կողմից ընդունված նախնական որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշում, ինչպես նաև իր կամ ստորադաս մաքսային մարմնի կողմից ապրանքի ծագման մասին նախնական որոշման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշում կամ այն հետ կանչելու վերաբերյալ որոշում:

2. Ապրանքի ծագման մասին նախնական որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշում կայացվում է այն դեպքում, երբ մաքսային մարմնի կամ դիմումատուի կողմից հայտնաբերվում են սխալներ, որոնք թույլ են տրվել ապրանքի ծագման մասին այդ նախնական որոշումը կայացնելիս և որոնք չեն ազդում ապրանքի ծագման մասին տեղեկությունների վրա:

Ապրանքի ծագման մասին նախնական որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ է մտնում ապրանքի ծագման մասին այդ նախնական որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից:

3. Ապրանքի ծագման մասին նախնական որոշման գործողության դադարեցման վերաբերյալ որոշում կայացվում է հետևյալ դեպքերում՝

1) մաքսային մարմնի կողմից հայտնաբերվել է, որ ապրանքի ծագման մասին այդ նախնական որոշումը կայացնելու համար դիմումատուն ներկայացրել է ոչ հավաստի և (կամ) ոչ ամբողջական տեղեկություններ պարունակող փաստաթղթեր, կեղծ փաստաթղթեր կամ ոչ հավաստի և (կամ) ոչ ամբողջական տեղեկություններ.

2) մաքսային մարմնի կողմից հայտնաբերվել են սխալներ, որոնք թույլ են տրվել ապրանքի ծագման մասին այդ նախնական որոշումը կայացնելիս և որոնք ազդում են ապրանքների ծագման մասին տեղեկությունների վրա:

4. Ապրանքի ծագման մասին նախնական որոշման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումը, սույն հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում, ուժի մեջ է մտնում ապրանքի ծագման մասին այդպիսի նախնական որոշումն ընդունելու օրվանից:

Ապրանքի ծագման մասին նախնական որոշման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումը, սույն հոդվածի 3-րդ կետի 2-ին ենթակետում նշված դեպքում, ուժի մեջ է մտնում ապրանքի ծագման մասին նախնական որոշման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ այդ որոշումն ընդունելու օրվանից:

5. Սույն հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում ապրանքի ծագման մասին նախնական որոշման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում ապրանքի ծագման մասին նախնական որոշումը տրամադրած մաքսային մարմինը ապրանքի ծագման մասին նախնական որոշման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումը կայացնելու օրվանից հետո ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում ապրանքի ծագման մասին նոր նախնական որոշում է կայացնում՝ հիմք ընդունելով այն տվյալները, որոնք դիմումատուն ներկայացրել է ապրանքի ծագման վերաբերյալ այն նախնական որոշումն ընդունելու մասին դիմում ներկայացնելիս, որի գործողությունը դադարեցվել է: Ապրանքի ծագման մասին այդպիսի նոր նախնական որոշումն ուժի մեջ է մտնում այն ընդունելու օրվանից:

6. Ապրանքի ծագման մասին նախնական որոշումը հետ կանչելու վերաբերյալ որոշում կայացվում է այն դեպքում, երբ ներմուծվող ապրանքների ծագումը սահմանող կանոնների մեջ կատարվել են ապրանքների ծագումը որոշելու չափանիշների մասով փոփոխություններ, որոնք ազդում են այն ապրանքների ծագումը որոշելու վրա, որոնց վերաբերյալ կայացվել է ապրանքի ծագման մասին նախնական որոշումը:

Ապրանքի ծագման մասին նախնական որոշումը հետ կանչելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ է մտնում ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոնների մեջ կատարված՝ նշված փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից:

7. Ապրանքի ծագման մասին նախնական որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշումը, ապրանքի ծագման մասին նախնական որոշման գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումը, ապրանքի ծագման մասին նախնական որոշումը հետ կանչելու վերաբերյալ որոշումը ուղարկվում են դիմումատուին՝ այդպիսի որոշումներն ընդունելու պատճառների նշումով, ինչպես նաև դրանց մասին տեղեկացվում է մաքսային մարմիններին այդ որոշումներն ընդունելու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ:

Գլուխ 5

Ապրանքների մաքսային արժեքը

Հոդված 37. Սահմանումները

Սույն գլխի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

«փոխկապակցված անձինք»՝ անձինք, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններից առնվազն մեկին՝

նրանք մեկը մյուսի ընկերության աշխատակիցներ են կամ տնօրեն (ղեկավար).

նրանք իրավաբանորեն ճանաչված գործընկերներ են, այսինքն՝ միմյանց հետ կապված են պայմանագրային հարաբերություններով, գործում են շահույթ ստանալու նպատակով և միասին կրում են իրենց համատեղ գործունեության իրականացման հետ կապված ծախսերն ու կորուստները.

նրանք գործատու և աշխատող են.

որևէ անձ ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում, վերահսկում է կամ ունի նրանց երկուսի՝ շրջանառության մեջ բաց թողնված քվեարկող բաժնետոմսերի 5 և ավելի տոկոսը.

նրանցից մեկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում է մյուսին.

նրանք երկուսն էլ ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվում են երրորդ անձի կողմից.

նրանք միասին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում են երրորդ անձի.

նրանք ազգականներ կամ նույն ընտանիքի անդամներ են:

Եթե անձինք գործընկերներ են համատեղ ձեռնարկատիրական կամ այլ գործունեության շրջանակներում, ընդ որում՝ նրանցից մեկը մյուսի բացառիկ (միակ) գործակալն է, բացառիկ դիստրիբյուտորը կամ բացառիկ կոնցեսիոները (անկախ այն բանից, թե դա ինչ ձևով է ներկայացված), ապա այդ անձինք սույն գլխի նպատակներով պետք է համարվեն փոխկապակցված, եթե համապատասխանում են նշված պայմաններից առնվազն մեկին:

Անձը համարվում է մյուս անձին վերահսկող, եթե նա իրավաբանորեն կամ գործնականում հնարավորություն ունի սահմանափակելու այդ անձի գործողությունները կամ կառավարելու դրանք,

«նույնական ապրանքներ»՝ ապրանքներ, որոնք բոլոր առումներով նույնն են, այդ թվում՝ իրենց ֆիզիկական հատկանիշներով, որակով և համբավով: Արտաքին տեսքի աննշան տարբերությունները հիմք չեն՝ ապրանքները նույնական չհամարելու համար, եթե մնացած բոլոր հատկանիշներով տվյալ ապրանքները համապատասխանում են սույն պարբերությամբ նախատեսված պահանջներին: Ապրանքները չեն համարվում նույնական, եթե դրանք չեն արտադրվել նույն երկրում, որտեղ արտադրվել են Միության մաքսային տարածք ներմուծվող՝ գնահատվող ապրանքները (այսուհետ սույն գլխում՝ գնահատվող ապրանքներ), կամ եթե այդ ապրանքների նախագծումը, մշակումը, ինժեներական, կոնստրուկտորական աշխատանքները, գեղարվեստական ձևավորումը, դիզայնի, էսքիզների և գծագրերի մշակումն ու համանման այլ աշխատանքներ կատարվել են Միության մաքսային տարածքում: Ապրանքների նկատմամբ կիրառվող «արտադրված» («արտադրվել են») հասկացությունն ունի նաև «արդյունահանված», «աճեցված», «պատրաստված, այդ թվում՝ ապրանքների հավաքակցման, հավաքման կամ կազմատման միջոցով» հասկացությունների իմաստները: Նույնական ապրանքները, որոնք արտադրվել են ոչ թե գնահատվող ապրանքներն արտադրողի, այլ մեկ այլ անձի կողմից, դիտարկվում են միայն այն դեպքում, երբ չեն հայտնաբերվել միևնույն արտադրողի կողմից արտադրված նույնական ապրանքներ կամ առկա տեղեկատվությունը օգտագործման համար ընդունելի չի համարվում,

«հաշվապահական հաշվառման համընդհանուր սկզբունքներ»՝ հաշվապահական հաշվառման կանոնների համակարգ, որը սահմանված կարգով կիրառվում է համապատասխան պետության տարածքում համապատասխան ժամանակահատվածում,

«համանման ապրանքներ»՝ ապրանքներ, որոնք նույնական չեն բոլոր առումներով, սակայն ունեն նման բնութագրեր և կազմված են նման բաղադրիչներից, արտադրված են նույն նյութերից, որը թույլ է տալիս դրանց կատարել նույն գործառույթները, ինչ գնահատվող ապրանքները, և առևտրային տեսանկյունից վերջիններիս հետ լինել փոխադարձ փոխարինելի: Ապրանքների համանման լինելը որոշելիս հաշվի են առնվում դրանց այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք որակը, համբավը և ապրանքային նշանի առկայությունն են: Ապրանքները չեն համարվում համանման, եթե դրանք չեն արտադրվել նույն երկրում, որտեղ արտադրվել են գնահատվող ապրանքները, կամ եթե այդ ապրանքների նախագծումը, մշակումը, ինժեներական, կոնստրուկտորական աշխատանքները, գեղարվեստական ձևավորումը, դիզայնի, էսքիզների և գծագրերի մշակումն ու համանման այլ աշխատանքներ կատարվել են Միության մաքսային տարածքում: Ապրանքների նկատմամբ կիրառվող «արտադրված» («արտադրվել են») հասկացությունն ունի նաև «արդյունահանված», «աճեցված», «պատրաստված, այդ թվում՝ ապրանքների հավաքակցման, հավաքման կամ կազմատման միջոցով» հասկացությունների իմաստները: Համանման ապրանքները, որոնք արտադրվել են ոչ թե գնահատվող ապրանքներն արտադրողի, այլ մեկ այլ անձի կողմից, դիտարկվում են միայն այն դեպքում, երբ չեն հայտնաբերվել միևնույն արտադրողի կողմից արտադրված համանման ապրանքներ կամ առկա տեղեկատվությունը օգտագործման համար ընդունելի չի համարվում,

«միևնույն դասի կամ տեսակի ապրանքներ»՝ ապրանքներ, որոնք պատկանում են ապրանքների մեկ խմբի կամ շարքի (ներառյալ նույնական և համանման ապրանքները) և որոնց պատրաստումը դասակարգվում է որպես տնտեսական գործունեության համապատասխան տեսակ:

Հոդված 38. Ընդհանուր դրույթներ ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ

1. Սույն գլխի դրույթները հիմնված են 1994 թվականի «Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի» (ՍԱԳՀ, 1994 թվական) VII հոդվածով և 1994 թվականի «Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի VII հոդվածի կիրառման մասին» համաձայնագրով սահմանված ընդհանուր սկզբունքների և կանոնների վրա:

2. Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների (այսուհետ՝ սույն գլխում՝ ներմուծվող ապրանքներ) մաքսային արժեքը որոշվում է սույն գլխին համապատասխան, եթե Միության մաքսային տարածք ներմուծվելիս ապրանքները հատել են Միության մաքսային սահմանը և այդ ապրանքների նկատմամբ առաջին անգամ հայտագրվում է սույն հոդվածի 3-րդ կետում նշված ընթացակարգերից տարբերվող մաքսային ընթացակարգ:

Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է սույն գլխին համապատասխան նաև այն դեպքում, երբ ապրանքների մաքսային հայտարարագրումը՝ դրանք սույն հոդվածի 3-րդ կետում նշված ընթացակարգերից տարբերվող մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում իրականացվում է սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված առանձնահատկություններով կամ սույն Օրենսգրքի 114-րդ և 116-րդ հոդվածներով սահմանված առանձնահատկություններով:

3. Անկախ սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներից՝ ապրանքների մաքսային արժեքը չի որոշվում դրանք «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով, «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով, «ոչնչացում» մաքսային ընթացակարգով, «հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով կամ հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում:

4. Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է այն անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան, որի մաքսային մարմնին ուղղված է ապրանքների մաքսային հայտարարագրումը:

5. Սույն Օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին կետում, 209-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությունում, 2-րդ և 3-րդ կետերում, և 217-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությունում, 2-րդ և 3-րդ կետերում նշված ապրանքների, ինչպես նաև սույն Օրենսգրքի 170-րդ, 195-րդ և 250-րդ հոդվածներին համապատասխան մաքսային ընթացակարգերով ձևակերպման ենթակա թափոնների մաքսային արժեքը որոշվում է սույն գլխին համապատասխան՝ հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից սահմանվող առանձնահատկությունները:

6. Սույն Օրենսգրքի 56-րդ հոդվածին և 72-րդ հոդվածի 5-րդ կետին, 137-րդ հոդվածի 11-րդ կետին, 198-րդ հոդվածի 12-րդ կետին համապատասխան վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման նպատակով ապրանքների մաքսային արժեքը որոշվում է սույն գլխին համապատասխան՝ հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից սահմանվող առանձնահատկությունները:

Մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման նպատակով, որոնք ենթակա են վճարման սույն Օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ կետում, 97-րդ հոդվածի 3-րդ կետում, 103-րդ հոդվածի 4-րդ կետում, 153-րդ հոդվածի 5-րդ կետում, 162-րդ հոդվածի 6-րդ կետում, 241-րդ հոդվածի 3-րդ կետում, 279-րդ հոդվածի 8-րդ կետում, 280-րդ հոդվածի 4-րդ կետում, 284-րդ հոդվածի 4-րդ կետում և 309-րդ հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքների, ինչպես նաև այնպիսի հանգամանքների ի հայտ գալու դեպքում, որոնց պարագայում մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման ապրանքների մաքսային արժեքը որոշվում է սույն գլխին և նշված հոդվածների դրույթներին համապատասխան:

7. Այն դեպքում, երբ սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերից մեկով ձևակերպված ապրանքները՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության և 217-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերության մեջ նշված ապրանքների, ձևակերպվում են այլ մաքսային ընթացակարգով կամ նույնպիսի մաքսային ընթացակարգով, այդ ապրանքների մաքսային արժեք է համարվում ապրանքների այն մաքսային արժեքը, որը որոշվել է դրանք առաջին անգամ սույն հոդվածի 3-րդ կետում նշված ընթացակարգերից տարբերվող ընթացակարգով ձևակերպելիս, իսկ եթե ապրանքների հայտարարագրի մեջ փոփոխություններ են կատարվել ապրանքների մաքսային արժեքի մասին տեղեկություններին վերաբերող մասում, ապա այդ փոփոխությունները կատարելիս որոշված ապրանքների մաքսային արժեքը:

«Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու համար ապրանքների մաքսային արժեքը՝ դրանք «վերաարտահանում» մաքսային ընթացակարգից բացի այլ մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս, որոշվում է սույն գլխին համապատասխան՝ հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից սահմանվող առանձնահատկությունները:

8. Ապրանքների մաքսային արժեքը որոշվում է այն անդամ պետության արժույթով, որտեղ, սույն Օրենսգրքի 61-րդ և 74-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան, վճարման են ենթակա մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը:

Եթե ապրանքների մաքսային արժեքը որոշելիս պահանջվում է արտարժույթը վերահաշվարկել անդամ պետության արժույթով, ապա այդպիսի վերահաշվարկը կատարվում է այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանվող (որոշվող)՝ մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող տարադրամի փոխարժեքով (այսուհետ՝ փոխարժեք), եթե այլ բան սահմանված չէ սույն Օրենսգրքով:

9. Ապրանքների մաքսային արժեքը որոշելը չպետք է հիմնվի ապրանքների կամայական կամ շինծու (ֆիկտիվ)

մաքսային արժեք օգտագործելու վրա:

10. Ապրանքների մաքսային արժեքը և դրա որոշմանն առնչվող տեղեկությունները պետք է հիմնվեն հավաստի, քանակապես որոշվող և փաստաթղթերով հաստատված տեղեկատվության վրա:

11. Ապրանքների մաքսային արժեքը որոշելու ընթացակարգերը պետք է լինեն համընդհանուր կիրառելի, այսինքն չտարբերվեն՝ կախված ապրանքների մատակարարման աղբյուրներից, այդ թվում՝ ապրանքների ծագումից, ապրանքների տեսակից, գործարքի մասնակիցներից և այլ գործոններից:

12. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու ընթացակարգերը չպետք է օգտագործվեն գնագցման դեմ պայքարի նպատակով:

13. Սույն գլխի դրույթները չեն կարող դիտվել որպես մաքսային մարմինների՝ ապրանքների մաքսային արժեքը հաստատելու համար ներկայացված ցանկացած դիմումի, փաստաթղթի կամ հայտարարագրի հավաստի կամ ճշգրիտ լինելու հարցում համոզվելու իրավունքը սահմանափակող կամ կասկածի տակ դնող:

14. Ապրանքների մաքսային արժեքը որոշվում է հայտարարատուի կողմից, իսկ եթե սույն Օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետին և 71-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են մաքսային մարմնի կողմից, ապա ապրանքների մաքսային արժեքը որոշվում է մաքսային մարմնի կողմից:

15. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի համար առավելագույն հնարավոր չափով հիմք պետք է ծառայի այդ ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքը՝ սույն Օրենսգրքի 39-րդ հոդվածով սահմանված իմաստով:

Ներմուծվող ապրանքների արժեքն այդ ապրանքների վերաբերյալ գործարքի գնի հիման վրա որոշելու անհնարինության դեպքում ապրանքների մաքսային արժեքը որոշվում է սույն Օրենսգրքի 41-րդ և 42-րդ հոդվածներին համապատասխան, որոնք կիրառվում են ըստ հերթականության: Ընդ որում, մաքսային մարմնի և հայտարարատուի միջև կարող են անցկացվել խորհրդակցություններ՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու նպատակով՝ սույն Օրենսգրքի 41-րդ և 42-րդ հոդվածներին համապատասխան արժեքային հիմքի հիմնավորված ընտրություն կատարելու նպատակով: Խորհրդակցությունների ընթացքում մաքսային մարմինը և հայտարարատուն կարող են փոխանակել իրենց մոտ առկա տեղեկատվությունը՝ անդամ պետությունների՝ առևտրային գաղտնիքի մասին օրենսդրությունը պահպանելու պայմանով:

Խորհրդակցություններն անցկացվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը սույն Օրենսգրքի 41-րդ և 42-րդ հոդվածներին համապատասխան որոշելու անհնարինության դեպքում ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար որպես հիմք կարող է օգտագործվել կամ այն գինը, որով գնահատվող, նույնական կամ համանման ապրանքները վաճառվել են Միության մաքսային տարածքում՝ սույն Օրենսգրքի 43-րդ հոդվածին համապատասխան, կամ ապրանքների հաշվարկային արժեքը՝ սույն Օրենսգրքի 44-րդ հոդվածին համապատասխան: Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելիս հայտարարատուն իրավունք ունի ընտրելու նշված հոդվածների կիրառման հերթականությունը:

Եթե ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար հնարավոր չէ կիրառել սույն Օրենսգրքի 39-րդ, 41-44-րդ հոդվածները, ապա ապրանքների մաքսային արժեքը որոշվում է սույն Օրենսգրքի 45-րդ հոդվածին համապատասխան:

16. Այն դեպքում, երբ ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ դրանց մաքսային արժեքի ճշգրիտ մեծությունը չի կարող որոշվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագիրը այն գործարքի պայմաններին համապատասխան գրանցելու օրվա դրությամբ, որի համաձայն ապրանքները վաճառվում են Միության մաքսային տարածք արտահանվելու համար, բացակայում են դրա հաշվարկման համար անհրաժեշտ ճշգրիտ տեղեկություններ պարունակող փաստաթղթերը, թույլատրվում է հետաձգել ապրանքների մաքսային արժեքի ճշգրիտ մեծության որոշումը: Այդ դեպքում թույլատրվում է ապրանքների մաքսային արժեքի որոշում ու հայտագրում հայտարարատուի մոտ առկա փաստաթղթերի և տեղեկությունների հիման վրա (այսուհետ սույն հոդվածում՝ ապրանքների մաքսային արժեքի նախնական մեծություն), ինչպես նաև մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկում՝ ելնելով ապրանքների մաքսային արժեքի հայտագրված նախնական մեծությունից:

Ապրանքների մաքսային արժեքը հետաձգված կարգով որոշելու կարգը, որն այդ թվում ներառում է ապրանքների մաքսային արժեքը հետաձգված կարգով որոշելու դեպքերը, ապրանքների մաքսային արժեքը հետաձգված կարգով որոշելու դեպքում ըստ ներմուծվող ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքի մեթոդը կիրառելու առանձնահատկությունները, ապրանքների մաքսային արժեքի նախնական մեծության վերաբերյալ տեղեկությունները հայտագրելու առանձնահատկությունները, ապրանքների մաքսային արժեքի ճշգրիտ մեծությունը հայտագրելու կարգն ու ժամկետները, ապրանքների մաքսային արժեքի նկատմամբ հսկողության առանձնահատկությունները, սահմանվում են Հանձնաժողովի կողմից և, Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում, անդամ պետությունների օրենսդրությամբ:

Ապրանքների մաքսային արժեքի ճշգրիտ մեծության հիման վրա լրացուցիչ հաշվարկված մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարումը կատարվում է ապրանքների մաքսային արժեքի ճշգրիտ մեծությունը հայտագրելու ժամկետից ոչ ուշ:

17. Հանձնաժողովի կողմից ընդունվում են ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մեթոդների

կիրառման ժամանակ սույն գլխի դրույթների միանման կիրառությունն ապահովելուն ուղղված ակտեր՝ ելնելով 1994 թվականի «Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի VII հոդվածի կիրառման մասին» համաձայնագրի համապատասխան դրույթներից՝ ներառյալ դրան կից բացատրական նշումները, ինչպես նաև ելնելով ապրանքների մաքսային արժեքի մասին փաստաթղթերից, որոնք ընդունվել են Առևտրի համաշխարհային կազմակերպության մաքսային գնահատման կոմիտեի և Համաշխարհային մաքսային կազմակերպության մաքսային գնահատման տեխնիկական կոմիտեի կողմից:

18. Սույն գլխի դրույթները չեն կիրառվում Միության մաքսային սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ:

19. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մեթոդների կիրառման հարցերով նախնական որոշումներ կարող են կայացվել այն դեպքում, երբ դա սահմանված է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ: Անդամ պետության լիազորված մարմնի կողմից ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մեթոդների կիրառման հարցերով նախնական որոշումը տրամադրելու կարգն ու պայմանները, ինչպես նաև այդ նախնական որոշումը կիրառելու կարգն ու ժամկետները սահմանվում են անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

Հոդված 39. Ըստ ներմուծվող ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքի մեթոդը (մեթոդ 1)

1. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեք է համարվում այդ ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքը, այսինքն՝ այն գինը, որը փաստացի վճարվել է կամ ենթակա է վճարման այդ ապրանքների համար՝ դրանք Միության մաքսային տարածք արտահանելու նպատակով վաճառելիս և որը լրացվել է սույն Օրենսգրքի 40-րդ հոդվածին համապատասխան, հետևյալ պայմանները բավարարելու դեպքում՝

1) գնորդի՝ ապրանքների օգտագործման և տնօրինման իրավունքների մասով սահմանափակումներ չկան՝ բացառությամբ այն սահմանափակումների, որոնք՝

սահմանափակում են այն աշխարհագրական տարածաշրջանը, որտեղ ապրանքները կարող են վերավաճառվել.

էականորեն չեն ազդում ապրանքների արժեքի վրա.

սահմանված են Միության մարմինների ակտերով կամ անդամ պետությունների օրենսդրությամբ.

2) ապրանքների վաճառքը կամ դրանց գինը կախված չէ որևէ պայմանից կամ պարտավորությունից, որի ազդեցությունը ապրանքների գնի վրա չի կարող քանակապես որոշվել.

3) գնորդի կողմից ապրանքները հետագայում վաճառելու, այլ կերպ տնօրինելու կամ օգտագործելու արդյունքում ստացված եկամտի կամ հասույթի ոչ մի մաս ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի հատկացվում վաճառողին՝ բացի այն դեպքերից, երբ, սույն Օրենսգրքի 40-րդ հոդվածին համապատասխան, կարող են կատարվել լրացուցիչ հավելագրումներ.

4) գնորդը և վաճառողը փոխկապակցված անձինք չեն, կամ գնորդը և վաճառողն այնպես են փոխկապակցված մեկը մյուսի հետ, որ ներմուծվող ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքն ընդունելի է մաքսային նպատակների համար՝ սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

2. Եթե սույն հոդվածի 1-ին կետում նշված պայմաններից թեկուզ և մեկը չի բավարարվում, ապա փաստացի վճարված կամ վճարման ենթակա գումարը ընդունելի չի համարվում ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար, և 1-ին մեթոդը չի կիրառվում:

3. Ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գին է համարվում այդ ապրանքների համար այն բոլոր վճարումների ընդհանուր գումարը, որոնք գնորդի կողմից կատարվել են կամ ենթակա են կատարման անմիջապես վաճառողին կամ հօգուտ վաճառողի՝ այլ անձի: Ընդ որում, վճարումները կարող են կատարվել ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ անդամ պետությունների օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևով:

Եթե հայտարարագրվող ապրանքները մեկ գործարքի շրջանակներում ձեռք բերված առավել մեծ քանակությամբ միևնույն ապրանքների մաս են կազմում, ապա հայտարարագրվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինը որոշվում է նույն հարաբերակցությամբ (համամասնությամբ), որով հարաբերակցվում են հայտարարագրվող ապրանքների քանակը և ձեռք բերված ապրանքների ընդհանուր քանակը:

4. Գնորդի և վաճառողի միջև փոխկապակցվածության փաստն ինքնին չպետք է հիմք ծառայի գործարքի արժեքը ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու նպատակով անընդունելի համարելու համար: Այդ դեպքում պետք է վերլուծվեն վաճառքին զուգընթաց հանգամանքները: Եթե նշված փոխկապակցվածությունը չի ազդել փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի վրա, ապա գործարքի արժեքը համարվում է ընդունելի՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու նպատակով:

5. Եթե վաճառողը և գնորդը փոխկապակցված անձինք են և դրա հետ մեկտեղ՝ հայտարարատուի կողմից ներկայացված կամ մաքսային մարմնի կողմից այլ եղանակով ստացված տեղեկատվության հիման վրա մաքսային մարմինը հայտնաբերում է նշաններ, որոնք վկայում են, որ վաճառողի և գնորդի միջև փոխկապակցվածությունն ազդել է փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի վրա, ապա մաքսային մարմինն այդ նշանների մասին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է հայտարարատուին: Մաքսային մարմինն այդ դեպքում անցկացնում է մաքսային հսկողություն, այդ թվում՝ վաճառքին զուգընթաց հանգամանքների վերլուծություն: Հայտարարատուն իրավունք ունի ապացուցելու փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի վրա գնորդի և վաճառողի միջև

փոխկապակցվածության ազդեցության բացակայությունը հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ, այդ թվում՝ մաքսային մարմնի կողմից լրացուցիչ հարցված, որոնք բնութագրում (արտացոլում) են վաճառքին զուգընթաց հանգամանքները: Փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի վրա գնորդի և վաճառողի փոխկապակցվածության ազդեցությունը որոշելու նպատակով վաճառքին զուգընթաց հանգամանքները վերլուծելիս մաքսային մարմինը դիտարկում է գործարքի բոլոր պայմանները՝ ներառյալ գնորդի և վաճառողի կողմից իրենց առևտրային հարաբերությունները կազմակերպելու եղանակը և այն, թե ինչպես էր սահմանվել դիտարկվող գինը: Եթե անցկացված վերլուծության արդյունքում մաքսային մարմինը հայտնաբերում է, որ գնորդը և վաճառողը, լինելով փոխկապակցված անձինք, միմյանցից գնում և միմյանց վաճառում են ապրանքներ՝ այնպիսի պայմաններով, այդ թվում՝ համադրելի գներով (այսինքն՝ միևնույն մակարդակի գներով), ինչպիսիք կարող էին լինել նրանց՝ փոխկապակցված անձինք չլինելու պարագայում, ապա այդ փաստը համարվում է ապացույց այն բանի, որ գնորդի և վաճառողի փոխկապակցվածությունը չի ազդել փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի վրա.

2) ներկայացնել փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք հաստատում են, որ ներմուծվող ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքը մոտ է ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծվելու կամ դրան համապատասխան ժամանակահատվածում առկա հետևյալ ստուգիչ մեծություններից մեկին՝

նույնական կամ համանման ապրանքների վերաբերյալ գործարքի արժեք՝ այդ ապրանքները Միության մաքսային տարածք արտահանելու համար վաճառողի հետ չփոխկապակցված գնորդներին վաճառելիս.

նույնական կամ համանման ապրանքների մաքսային արժեք, որը որոշվել է սույն Օրենսգրքի 43-րդ հոդվածին համապատասխան.

նույնական կամ համանման ապրանքների մաքսային արժեք, որը որոշվել է սույն Օրենսգրքի 44-րդ հոդվածին համապատասխան:

6. Եթե մաքսային մարմինը բավարար տեղեկատվություն ունի այն մասին, որ սույն հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ստուգիչ մեծություններից մեկը մոտ է ներմուծվող ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքին, ապա այն չպետք է հայտարարատուից պահանջի լրացուցիչ տեղեկատվություն, որն ապացուցում է, որ ներմուծվող ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքը մոտ է այդ ստուգիչ մեծությանը:

7. Սույն հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ստուգիչ մեծությունների՝ ներմուծվող ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքի հետ համեմատություն անցկացնելիս հաշվի են առնվում հայտարարատուի կողմից ներկայացված տեղեկությունները՝ վաճառքի առևտրային մակարդակների, ապրանքների քանակի, սույն Օրենսգրքի 40-րդ հոդվածում նշված լրացուցիչ հավելագրումների միջև տարբերությունների, ինչպես նաև այն ծախսերի միջև տարբերությունների մասին, որոնք սովորաբար վաճառքի ժամանակ կրում է վաճառողը, երբ վաճառողը և գնորդը փոխկապակցված անձինք չեն՝ այն ծախսերի համեմատությամբ, որոնք վաճառողը վաճառքի ժամանակ չի կրում, երբ վաճառողն ու գնորդը փոխկապակցված անձինք են:

8. Սույն հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ստուգիչ մեծություններն օգտագործվում են հայտարարատուի նախաձեռնությամբ և բացառապես համեմատության նպատակով՝ սույն հոդվածի 7-րդ կետին համապատասխան, և չեն կարող օգտագործվել որպես հիմք՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար:

9. Ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գինը վերաբերում է այն ապրանքներին, որոնք տեղափոխվում են Միության մաքսային սահմանով, ինչի կապակցությամբ գնորդի կողմից վաճառողին փոխանցված շահաբաժինները կամ այլ վճարումներ, եթե դրանք կապված չեն ներմուծվող ապրանքների հետ, ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի մեջ չեն ներառվում:

Հոդված 40. Ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի լրացուցիչ հավելագրումները

1. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը դրանց վերաբերյալ գործարքի արժեքի հիման որոշելիս՝ դրանց համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին գումարվում են հետևյալ լրացուցիչ հավելագրումները՝

1) ծախսերը՝ այնքանով, որքանով դրանք կատարվել են կամ ենթակա են կատարման գնորդի կողմից, սակայն ներառված չեն ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ, այդ թվում՝

ա) միջնորդների (գործակալների) և բրոքերների վարձատրությունը՝ բացառությամբ գնման համար վարձատրության, որը գնորդի կողմից վճարվում է իր գործակալին (միջնորդին)՝ ներմուծվող ապրանքների գնման կապակցությամբ Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս գնորդին ներկայացնելու մասով մատուցված ծառայությունների դիմաց,

բ) տարայի հետ կապված ծախսերը, եթե մաքսային նպատակներով այն դիտարկվում է որպես ներմուծվող ապրանքների անբաժանելի մաս,

գ) ներմուծվող ապրանքների փաթեթավորման հետ կապված ծախսերը, այդ թվում՝ փաթեթավորման նյութերի և փաթեթավորման աշխատանքների արժեքը.

2) հետևյալ այն ապրանքների և ծառայությունների՝ համապատասխան ձևով բաշխված արժեքը, որոնք գնորդի կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրվել են վաճառողին՝ անվճար կամ իջեցված գնով, Միության

մաքսային տարածք արտահանելու նպատակով ներմուծվող ապրանքների արտադրության և վաճառքի մեջ օգտագործելու համար՝ այնքանով, որքանով այն ներառված չէ ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ՝

ա) հումք, նյութեր, դետալներ, կիսաֆաբրիկատներ և այլ ապրանքներ, որոնցից արտադրված (բաղկացած) են ներմուծվող ապրանքները,

բ) գործիքներ, դրոշմներ, կաղապարներ և նմանատիպ այլ ապրանքներ, որոնք օգտագործվել են ներմուծվող ապրանքների արտադրության ժամանակ,

գ) նյութեր, որոնք սպառվել են ներմուծվող ապրանքների արտադրության ժամանակ,

դ) Միության տարածքից դուրս կատարված և ներմուծվող ապրանքների արտադրության համար անհրաժեշտ նախագծում, մշակում, ինժեներական, կոնստրուկտորական աշխատանքներ, գեղարվեստական ձևավորում, դիզայն, էսքիզներ և գծագրեր.

3) ներմուծվող ապրանքների հետագա վաճառքի, այլ եղանակով տնօրինելու կամ օգտագործելու արդյունքում ստացված՝ վաճառողին ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասանելիք եկամտի (հասույթի) մասը.

4) ներմուծվող ապրանքների՝ մինչև Միության մաքսային տարածք այդ ապրանքների ժամանման վայր, իսկ եթե ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) իրականացրած տրանսպորտի տեսակից և այդպիսի փոխադրման (տրանսպորտային փոխադրման) առանձնահատկություններից կախված Հանձնաժողովի կողմից սահմանվել են այլ վայրեր՝ ապա մինչև Հանձնաժողովի կողմից սահմանված վայր փոխադրման (տրանսպորտային փոխադրման) հետ կապված ծախսերը:

5) ներմուծվող ապրանքների բեռնման, բեռնաթափման կամ փոխաբեռնման և դրանց՝ մինչև Միության մաքսային տարածք այդ ապրանքների ժամանման վայր, իսկ եթե ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) իրականացրած տրանսպորտի տեսակից և այդպիսի փոխադրման (տրանսպորտային փոխադրման) առանձնահատկություններից կախված Հանձնաժողովի կողմից սահմանվել են այլ վայրեր՝ ապա մինչև Հանձնաժողովի կողմից սահմանված վայր փոխադրման (տրանսպորտային փոխադրման) հետ կապված այլ գործողությունների ծախսերը.

6) սույն կետի 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված գործողությունների հետ կապված ապահովագրական ծախսերը.

7) մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման համար թույլտվության և նմանատիպ այլ վճարումներ՝ ներառյալ ռոյալթիները, արտոնագրերի, ապրանքային նշանների, հեղինակային իրավունքների համար կատարվող վճարումները, որոնք վերաբերում են ներմուծվող ապրանքներին և որոնք գնորդը, որպես Միության մաքսային տարածք արտահանելու նպատակով ներմուծվող ապրանքների վաճառքի պայման, ուղղակիորեն կամ անուղղակիորեն կատարել է կամ պետք է կատարի՝ այդ ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի մեջ չներառված չափով: Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելիս փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնին չպետք է գումարվեն՝

ա) Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների վերարտադրման (բազմացման) իրավունքի համար իրականացվող վճարումները,

բ) ներմուծվող ապրանքների բաշխման կամ վերավաճառքի իրավունքի համար իրականացվող վճարումները, եթե նման վճարումները Միության մաքսային տարածք արտահանելու նպատակով ներմուծվող ապրանքների վաճառքի պայման չեն համարվում:

2. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը չպետք է ներառի հետևյալ ծախսերը՝ պայմանով, որ դրանք առանձնացված են փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնից, հայտագրվել և փաստաթղթերի միջոցով հաստատվել են հայտարարատուի կողմից՝

1) ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելուց հետո այնպիսի ապրանքների հետ կապված շինարարական, տեղադրման, հավաքման, հավաքակցման, սպասարկման կամ տեխնիկական աջակցություն ցուցաբերելու ծախսերը, ինչպիսիք են արդյունաբերական տեղակայանքները, մեքենաները կամ սարքավորումները.

2) ներմուծվող ապրանքների՝ Միության մաքսային տարածքով այդ ապրանքների ժամանման վայրից Միության մաքսային տարածք, իսկ եթե ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) իրականացրած տրանսպորտի տեսակից և այդպիսի փոխադրման (տրանսպորտային փոխադրման) առանձնահատկություններից կախված Հանձնաժողովի կողմից սահմանվել են այլ վայրեր՝ ապա Հանձնաժողովի կողմից սահմանված վայրից փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ծախսերը.

3) Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման կամ Միության մաքսային տարածքում ներմուծվող ապրանքների վաճառքի հետ կապված վճարվող տուրքերը, հարկերը և վճարները:

3. Ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա ապրանքների գնին սույն հոդվածի 1-ին կետում նշված լրացուցիչ հավելագրումները կատարվում են հավաստի, քանակապես որոշվող և փաստաթղթերով հաստատված տեղեկատվության հիման վրա: Այդպիսի տեղեկատվության բացակայության դեպքում 1-ին մեթոդը չի կիրառվում:

4. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելիս այդ ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի լրացուցիչ հավելագրումներ չեն կատարվում՝ բացի սույն հոդվածի 1-ին կետում նշվածներից:

5. Ներմուծվող ապրանքների համար փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի լրացուցիչ հավելագրումներ կատարելիս՝

1) սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «բ» ենթակետում նշված ապրանքների արժեքի բաշխումը կարող է իրականացվել այդ ամբողջ արժեքն ապրանքների առաջին խմբաքանակի մաքսային արժեքին կամ հայտարարատուի կողմից որոշված ապրանքների այլ քանակի մաքսային արժեքին վերագրելու միջոցով, որը չի կարող հայտարարագրվող ապրանքների քանակից քիչ լինել: Այդպիսի բաշխումը պետք է իրականացվի կոնկրետ հանգամանքների նկատմամբ կիրառելի ողջամիտ եղանակով՝ կախված հայտարարատուի մոտ առկա փաստաթղթերից, և հաշվապահական հաշվառման համընդհանուր սկզբունքներին համապատասխան: Ընդ որում, որպես նշված ապրանքների արժեք են ընդունվում դրանց ձեռքբերման ծախսերը, եթե գնորդն ապրանքները ձեռք է բերել իր հետ փոխկապակցված անձ չհամարվող վաճառողից, կամ դրանց պատրաստման ծախսերը, եթե ապրանքներն արտադրվել են գնորդի կողմից: Եթե նշված ապրանքները նախկինում օգտագործվել են գնորդի կողմից, անկախ նրանից՝ գնորդը դրանք ձեռք է բերել, թե արտադրել, ձեռքբերման կամ արտադրության ելակետային գինը ենթակա է նվազեցման՝ այդ ապրանքների արժեքը դրանց օգտագործումը հաշվի առնելով ստանալու (որոշելու) նպատակով.

2) գնորդի կողմից տրամադրված և սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «դ» ենթակետում նշված ապրանքների և ծառայությունների ու գնորդի կողմից ձեռք բերված կամ վարձակալված ծառայությունների նկատմամբ լրացուցիչ հավելագրումները կատարվում են այդ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման կամ վարձակալման ծախսերի մասով: Եթե գնորդի կողմից տրամադրվել են ապրանքներ, որոնք հանրային սեփականության, այսինքն՝ պետական կամ մունիցիպալ սեփականության մաս են կազմում, ապա լրացուցիչ հավելագրումները կատարվում են այդ ապրանքների պատճենների ստացման հետ կապված արժեքի (ծախքերի) մասով:

6. Սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված լրացուցիչ հավելագրումներ կատարելիս անմիջականորեն ապրանքների արժեքից բացի՝ հաշվի են առնվում այն բոլոր ծախսերը, որոնք կապված են դրանք վաճառողին տրամադրելու (առաքելու), այդ թվում՝ վերադարձնելու հետ, եթե վերջինս նախատեսվում է:

Հոդված 41. Ըստ նույնական ապրանքների վերաբերյալ գործարքի գնի մեթոդը (մեթոդ 2)

1. Այն դեպքում, երբ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը չի կարող որոշվել սույն Օրենսգրքի 39-րդ հոդվածին համապատասխան, այդպիսի ապրանքների մաքսային արժեք է համարվում այնպիսի նույնական այն ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքը, որոնք վաճառվել են Միության մաքսային տարածք արտահանելու նպատակով և Միության մաքսային տարածք են ներմուծվել գնահատվող ապրանքների հետ նույն կամ դրան համապատասխան ժամանակահատվածում, սակայն ոչ ավելի վաղ, քան գնահատվող ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելուց 90 օրացուցային օր առաջ:

Նույնական ապրանքների վերաբերյալ գործարքի արժեք է համարվում այդ ապրանքների՝ սույն Օրենսգրքի 39-րդ հոդվածին համապատասխան որոշված և մաքսային մարմնի կողմից ընդունված մաքսային արժեքը:

Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը սույն հոդվածին համապատասխան որոշելիս օգտագործվում է այնպիսի նույնական ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքը, որոնք վաճառվել են նույն առևտրային մակարդակում և, ըստ էության, նույն քանակությամբ, ինչ գնահատվող ապրանքները:

Այն դեպքում, երբ այդպիսի վաճառքի դեպք չի հայտնաբերվել, օգտագործվում է այնպիսի նույնական ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքը, որոնք վաճառվել են առևտրային այլ մակարդակում և (կամ) այլ քանակությամբ՝ համապատասխան ճշգրտմամբ, որով հաշվի են առնվում վաճառքի առևտրային մակարդակում առկա և (կամ) ապրանքների քանակության տարբերությունները:

Նշված ճշգրտումն իրականացվում է այնպիսի տվյալների հիման վրա, որոնք փաստաթղթերով հաստատում են ճշգրտման հիմնավորված և ստույգ լինելը՝ անկախ այն բանից՝ ճշգրտումը հանգեցնում է նույնական ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքի աճին, թե նվազելուն: Այդպիսի տվյալների բացակայության դեպքում գնահատվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու նպատակով ըստ նույնական ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքի մեթոդը չի կիրառվում:

2. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը սույն հոդվածին համապատասխան որոշելիս անհրաժեշտության դեպքում կատարվում է նույնական ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքի ճշգրտում՝ հաշվարկելու համար սույն Օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին կետի 4-6-րդ ենթակետերում նշված՝ գնահատվող և նույնական ապրանքների հետ կապված ծախսերի միջև էական տարբերությունը՝ պայմանավորված դրանց փոխադրման (տրանսպորտային փոխադրման) հեռավորությունների և ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) իրականացնելու համար օգտագործվող տրանսպորտի տեսակների տարբերություններով:

3. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան կատարված ճշգրտումները հաշվի առնելով՝ հայտնաբերվել են նույնական ապրանքների վերաբերյալ գործարքի մեկից ավելի արժեքներ, ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար կիրառվում է դրանցից ամենացածրը:

Հոդված 42. Ըստ համանման ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքի մեթոդը (մեթոդ 3)

1. Այն դեպքում, երբ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը չի կարող որոշվել սույն Օրենսգրքի 39-րդ և 41-րդ

հոդվածներին համապատասխան, այդպիսի ապրանքների մաքսային արժեք է համարվում այնպիսի համանման ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքը, որոնք վաճառվել են Միության մաքսային տարածք արտահանելու նպատակով և ներմուծվել են Միության մաքսային տարածք գնահատվող ապրանքների հետ նույն կամ դրան համապատասխան ժամանակահատվածում, սակայն ոչ ավելի վաղ, քան գնահատվող ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելուց 90 օրացուցային օր առաջ:

Համանման ապրանքների վերաբերյալ գործարքի արժեք է համարվում այդ ապրանքների՝ սույն Օրենսգրքի 39-րդ հոդվածին համապատասխան որոշված և մաքսային մարմնի կողմից ընդունված մաքսային արժեքը:

Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը սույն հոդվածին համապատասխան որոշելիս օգտագործվում է այնպիսի համանման ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքը, որոնք վաճառվել են նույն առևտրային մակարդակում և, ըստ էության, նույն քանակությամբ, ինչ գնահատվող ապրանքները:

Այն դեպքում, երբ այդպիսի վաճառքի դեպք չի հայտնաբերվել, օգտագործվում է այնպիսի համանման ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքը, որոնք վաճառվել են այլ առևտրային մակարդակում և (կամ) այլ քանակությամբ՝ համապատասխան ճշգրտմամբ, որով հաշվի են առնվում վաճառքի առևտրային մակարդակում առկա և (կամ) ապրանքների քանակության տարբերությունները:

Նշված ճշգրտումն իրականացվում է այնպիսի տվյալների հիման վրա, որոնք փաստաթղթերով հաստատում են ճշգրտման հիմնավորված և ստույգ լինելը՝ անկախ այն բանից՝ ճշգրտումը հանգեցնում է համանման ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքի աճին, թե նվազելուն: Այդպիսի տվյալների բացակայության դեպքում գնահատվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու նպատակով ըստ համանման ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքի մեթոդը չի կիրառվում:

2. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը սույն հոդվածին համապատասխան որոշելիս անհրաժեշտության դեպքում կատարվում է համանման ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքի ճշգրտում՝ հաշվարկելու համար սույն Օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին կետի 4-6-րդ ենթակետերում նշված՝ գնահատվող և համանման ապրանքների հետ կապված ծախսերի միջև էական տարբերությունը՝ պայմանավորված դրանց փոխադրման (տրանսպորտային փոխադրման) հեռավորությունների և ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) իրականացնելու համար օգտագործվող տրանսպորտի տեսակների տարբերություններով:

3. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան կատարված ճշգրտումները հաշվի առնելով՝ հայտնաբերվել են համանման ապրանքների վերաբերյալ գործարքի մեկից ավելի արժեքներ, ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար կիրառվում է դրանցից ամենացածրը:

Հոդված 43. Նվազեցման մեթոդը (մեթոդ 4)

1. Այն դեպքում, երբ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը չի կարող որոշվել սույն Օրենսգրքի 39-րդ, 41-րդ և 42-րդ հոդվածներին համապատասխան, այդպիսի ապրանքների մաքսային արժեքը որոշվում է սույն հոդվածին համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հայտարարատուի դիմումի հիման վրա սույն հոդվածի և սույն Օրենսգրքի 44-րդ հոդվածի կիրառման հերթականությունը կարող է փոփոխվել:

2. Այն դեպքում, երբ գնահատվող ապրանքները կամ դրանց հետ նույնական կամ դրանց համանման ապրանքները Միության մաքսային տարածքում վաճառվում են այն նույն վիճակում, որում դրանք ներմուծվել են Միության մաքսային տարածք, ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար հիմք է ընդունվում ապրանքի միավորի այն գինը, որով գնահատվող ապրանքները կամ դրանց հետ նույնական կամ դրանց համանման ապրանքներն ամենամեծ հանրագումարային քանակությամբ վաճառվում են անձանց, որոնք փոխկապակցված չեն այն անձանց հետ, որոնք Միության մաքսային տարածքում այդպիսի վաճառք են իրականացնում՝ գնահատվող ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծվելու կամ դրան համապատասխան ժամանակահատվածում՝ հետևյալ գումարները նվազեցնելու պայմանով՝

1) միջնորդին (գործակալին) սովորաբար վճարվող կամ վճարման ենթակա վարձատրությունը կամ գնի հավելումը, որը սովորաբար կատարվում է շահույթ ստանալու և ընդհանուր ծախսերը (առևտրային և կառավարչական ծախսերը) ծածկելու համար՝ այն չափերով, որոնցով դրանք սովորաբար տեղի են ունենում Միության մաքսային տարածքում՝ միևնույն դասի կամ տեսակի ապրանքների վաճառքի դեպքում.

2) Միության մաքսային տարածքում իրականացված փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և ապահովագրության՝ սովորաբար իրականացվող ծախսերը և այդպիսի գործողությունների հետ կապված այլ ծախսեր.

3) մաքսատուրքերը, հարկերը, վճարները և անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան կիրառվող այլ հարկեր, որոնք ենթակա են վճարման անդամ պետությունների տարածքում ապրանքների ներմուծման և (կամ) վաճառքի հետ կապված՝ ներառյալ անդամ պետությունների սուբյեկտների հարկերն ու վճարները և տեղական հարկերն ու վճարները:

3. Այն դեպքում, երբ գնահատվող ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծվելու կամ դրան համապատասխան ժամանակահատվածում Միության մաքսային տարածքում չեն վաճառվում ո՛չ գնահատվող, ո՛չ գնահատվող ապրանքների հետ նույնական, ո՛չ գնահատվող ապրանքներին համանման ապրանքներ, այդպիսի ապրանքների մաքսային արժեքը որոշվում է ապրանքի միավորի այն գնի հիման վրա, որով համապատասխանաբար

գնահատվող կամ նույնական կամ համանման ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծվելու օրվան ամենամոտ օրվա դրությամբ, սակայն ոչ ուշ, քան ներմուծման օրվանից 90 օրացուցային օրը լրանալուց հետո վաճառվում են Միության մաքսային տարածքում՝ այնպիսի քանակությամբ, որը բավարար է այդպիսի ապրանքի միավորի գինը սահմանելու համար և այն նույն վիճակում, որում դրանք ներմուծվել են:

4. Այն դեպքում, երբ ո՛չ գնահատվող, ո՛չ գնահատվող ապրանքների հետ նույնական, ո՛չ գնահատվող ապրանքներին համանման ապրանքները չեն վաճառվում Միության մաքսային տարածքում միևնույն վիճակում, որում դրանք ներմուծվել էին Միության մաքսային տարածք, հայտարարատուի դիմումի հիման վրա՝ գնահատվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է այդպիսի ապրանքների միավորի գնով, որով վերամշակումից (մշակումից) հետո դրանք ամենամեծ հանրագումարային քանակությամբ վաճառվում են այնպիսի անձանց, որոնք փոխկապակցված չեն այն անձանց հետ, որոնցից նրանք գնում են այդ ապրանքները Միության մաքսային տարածքում՝ վերամշակման (մշակման) արդյունքում ավելացված արժեքը և սույն հոդվածի 2-րդ կետում նշված գումարները գնից նվազեցնելու պայմանով:

Վերամշակման (մշակման) արդյունքում ավելացված արժեքի նվազեցումն իրականացվում է վերամշակման (մշակման) արժեքին վերաբերող հավաստի, քանակապես որոշվող և փաստաթղթերով հաստատված տեղեկությունների հիման վրա:

5. Սույն հոդվածի 4-րդ կետի դրույթները չեն կիրառվում ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար հետևյալ դեպքերում՝

հետագա վերամշակման (մշակման) արդյունքում գնահատվող ապրանքները կորցնում են իրենց անհատական հատկանիշները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ, չնայած իրենց անհատական հատկանիշները կորցնելուն, վերամշակման (մշակման) արդյունքում ավելացված արժեքի մեծությունը կարող է ճշգրտորեն որոշվել.

գնահատվող ապրանքները չեն կորցնում իրենց անհատական հատկանիշները, սակայն Միության մաքսային տարածքում վաճառվող ապրանքների այնքան աննշան մասն են կազմում, որ գնահատվող ապրանքների արժեքն էապես չի ազդում վաճառվող ապրանքների արժեքի վրա:

Սույն հոդվածի 4-րդ կետը կիրառելու հնարավորությունը որոշվում է յուրաքանչյուր առանձին դեպքում՝ ելնելով կոնկրետ հանգամանքներից:

6. Միության մաքսային տարածքում գնահատվող կամ գնահատվող ապրանքների հետ նույնական կամ գնահատվող ապրանքներին համանման ապրանքների վաճառքը դիտարկելիս հաշվի չի առնվում դրանց վաճառքն այնպիսի անձանց, որոնք գնահատվող ապրանքներն արտադրելու և Միության մաքսային տարածք արտահանելու նպատակով մատակարարելու կապակցությամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, անվճար կամ իջեցված գնով օգտագործման համար տրամադրում են սույն Օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված ապրանքներն ու ծառայությունները:

7. Սույն հոդվածի նպատակներից ելնելով՝ շահույթի և ընդհանուր այն ծախսերի (առևտրային և կառավարչական ծախսերի) գումարը, որոնք կարող են լինել ապրանքների իրացման ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ծախսեր, դիտարկվում է որպես ապրանքի գնի հավելում, որը ծածկում է այդ ծախսերը, ինչպես նաև ապահովում է շահույթի ստացում՝ միևնույն դասի կամ տեսակի ապրանքների վաճառքի դեպքում:

Շահույթի և ընդհանուր ծախսերի (առևտրային և կառավարչական ծախսերի) գումարը հաշվի է առնվում ամբողջությամբ և որոշվում է հայտարարատուի ունեցած տեղեկությունների հիման վրա՝ այն դեպքում, երբ նրա կողմից տրամադրված տվյալները համադրելի են Միության մաքսային տարածքում միևնույն դասի կամ տեսակի ապրանքների վաճառքի վերաբերյալ առկա տվյալների հետ: Այն դեպքում, երբ այդ տվյալները չեն համապատասխանում միևնույն դասի կամ տեսակի ապրանքների վաճառքից սովորաբար ստացվող շահույթի և սովորաբար կատարվող ընդհանուր ծախսերի (առևտրային և կառավարչական ծախսերի) չափի մասին մաքսային մարմնի տրամադրության տակ եղած տվյալներին, մաքսային մարմինը շահույթի և ընդհանուր ծախսերի (առևտրային և կառավարչական ծախսերի) գումարը կարող է որոշել իր ունեցած տվյալների հիման վրա:

8. Սույն հոդվածի նպատակներից ելնելով՝ օգտագործվում են միևնույն դասի կամ տեսակի այնպիսի ապրանքների վաճառքի մասին տվյալները, որոնք ներմուծվել են այն նույն պետությունից, որտեղից ներմուծվել են գնահատվող ապրանքները, ինչպես նաև այլ երկրներից ապրանքների մասին տվյալները: Այն հարցը, թե արդյոք գնահատվող ապրանքները և այն ապրանքները, որոնց հետ դրանք համեմատվում են, միևնույն դասի կամ տեսակի ապրանքներ են, որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առանձին՝ հաշվի առնելով համապատասխան հանգամանքները: Ընդ որում, դիտարկվում է Միության մաքսային տարածք ներմուծված հնարավոր ավելի նեղ խմբի կամ շարքի միևնույն դասի կամ տեսակի ապրանքների վաճառքը՝ ներառյալ գնահատվող ապրանքները, որոնց վերաբերյալ կարող են տեղեկություններ տրամադրվել:

9. Այն դեպքում, երբ մաքսային մարմինը որոշում է ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը սույն հոդվածին համապատասխան՝ իր տրամադրության տակ առկա տվյալների հիման վրա, այն էլեկտրոնային կամ գրավոր եղանակով տեղեկացնում է հայտարարատուին այդպիսի տվյալների աղբյուրների, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված հաշվարկների մասին:

Հոդված 44. Գումարման մեթոդը (մեթոդ 5)

1. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը սույն հոդվածին համապատասխան որոշելիս հիմք է ընդունվում ապրանքների հաշվարկային արժեքը, որը որոշվում է հետևյալն իրար գումարելու միջոցով՝

1) գնահատվող ապրանքների արտադրության հետ կապված նյութերի պատրաստման կամ ձեռքբերման ծախսերը և գնահատվող ապրանքների արտադրության, ինչպես նաև արտադրության հետ կապված մյուս գործողություններին առնչվող ծախսերը.

2) շահույթի և ընդհանուր ծախսերի (առևտրային և կառավարչական ծախսերի) գումարը, որը համարժեք է այն մեծությանը, որը սովորաբար հաշվի է առնվում գնահատվող ապրանքների հետ միևնույն դասին կամ տեսակին պատկանող ապրանքների վաճառքի դեպքում՝ այն երկրում, որտեղ ապրանքները վաճառվել են Միության մաքսային տարածք արտահանելու նպատակով.

3) սույն Օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին կետի 4-6-րդ ենթակետերում նշված ծախսերը:

2. Սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ծախսերը որոշվում են գնահատվող ապրանքների արտադրության մասին տվյալների հիման վրա, որոնք ներկայացվել են դրանք արտադրողի կողմից կամ նրա անունից և հաստատվել են արտադրողի առևտրային փաստաթղթերով՝ պայմանով, որ այդ փաստաթղթերը կազմված լինեն ապրանքների արտադրության երկրում կիրառվող հաշվապահական հաշվառման համընդհանուր սկզբունքներին համապատասխան:

3. Սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ծախսերը պետք է ներառեն սույն Օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» և «գ» ենթակետերում նշված ծախսերը և սույն Օրենսգրքի 40-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան բաշխված այն ապրանքների և ծառայությունների արժեքը, որոնք նշված են սույն Օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում և որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրվել են գնորդի կողմից՝ ներմուծվող ապրանքների արտադրության համար օգտագործելու նպատակով: Սույն Օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «դ» ենթակետում նշված այն ապրանքների ու ծառայությունների արժեքը, որոնք արտադրվել (մատուցվել) են Միության մաքսային տարածքում, ներառվում է միայն այնքանով, որքանով այդ ապրանքների ու ծառայությունների համար վճարել է արտադրողը: Ընդ որում, հաշվարկային արժեքը որոշելիս ծախսերը երկրորդ անգամ հաշվի չեն առնվում:

Որպես ընդհանուր ծախսեր (առևտրային և կառավարչական ծախսեր) հաշվի են առնվում Միության մաքսային տարածք արտահանելու նպատակով ներմուծվող ապրանքների արտադրության և վաճառքի ուղղակի ու անուղղակի ծախսերը, որոնք նշված չեն սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում:

4. Շահույթի և ընդհանուր ծախսերի (առևտրային և կառավարչական ծախսերի) գումարը հաշվի է առնվում ամբողջությամբ և որոշվում է արտադրողի կողմից կամ նրա անունից ներկայացված տվյալների հիման վրա: Այն դեպքում, երբ այդ տվյալները չեն համապատասխանում Միության մաքսային տարածք արտահանելու նպատակով միևնույն դասի կամ տեսակի ապրանքների վաճառքից սովորաբար ստացվող շահույթի և սովորաբար կատարվող ընդհանուր ծախսերի (առևտրային և կառավարչական ծախսերի) չափի մասին մաքսային մարմնի տրամադրության տակ եղած տվյալներին, մաքսային մարմինը շահույթի և ընդհանուր ծախսերի (առևտրային և կառավարչական ծախսերի) գումարը կարող է որոշել իր ունեցած տվյալների հիման վրա:

5. Սույն հոդվածի նպատակներից ելնելով՝ օգտագործվում են միևնույն դասի կամ տեսակի այնպիսի ապրանքների վաճառքի մասին տվյալները, որոնք արտադրվել են այն նույն պետությունում, որտեղ արտադրվել են գնահատվող ապրանքները: Այն հարցը, թե արդյոք գնահատվող ապրանքները և այն ապրանքները, որոնց հետ դրանք համեմատվում են, միևնույն դասի կամ տեսակի ապրանքներ են, որոշվում է յուրաքանչյուր դեպքում առանձին՝ հաշվի առնելով համապատասխան հանգամանքները: Ընդ որում, դիտարկվում է Միության մաքսային տարածք արտահանելու նպատակով հնարավոր ավելի նեղ խմբի կամ շարքի միևնույն դասի կամ տեսակի ապրանքների վաճառքը, որոնց վերաբերյալ կարող են տեղեկություններ տրամադրվել:

6. Մաքսային մարմիններն իրավունք չունեն օտարերկրյա անձից պահանջելու ներկայացնել փաստաթղթեր և տվյալներ՝ ապրանքների հաշվարկային արժեքը որոշելու համար, եթե մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով և ակտերով, երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրերով կամ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

Ապրանքների հաշվարկային արժեքը որոշելու համար օտարերկրյա արտադրողի կողմից կամ նրա անունից ներկայացված փաստաթղթերն ու տեղեկությունները կարող են ստուգվել ապրանքներն արտադրողի երկրում՝ անդամ պետության լիազորված մարմնի կողմից՝ ապրանքների օտարերկրյա արտադրողի համաձայնությամբ, ինչպես նաև ապրանքներն արտադրողի երկրի լիազորված մարմնին նախապես ծանուցելու պայմանով և այդպիսի ստուգում անցկացնելու վերաբերյալ վերջինիս առարկությունների բացակայության դեպքում: Ապրանքների օտարերկրյա արտադրողի կողմից կամ նրա անունից ներկայացված փաստաթղթերի ու տվյալների ստուգումը կատարվում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից՝ այն միջազգային պայմանագրերի համաձայն, որոնց մասնակիցն է տվյալ անդամ պետությունը:

7. Այն դեպքում, երբ մաքսային մարմինը որոշում է ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը սույն հոդվածին համապատասխան՝ իր տրամադրության տակ առկա տվյալների հիման վրա, այն էլեկտրոնային կամ գրավոր եղանակով տեղեկացնում է հայտարարատուին այդպիսի տվյալների աղբյուրների, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված հաշվարկների մասին:

Հոդված 45. Պահուստային մեթոդը (մեթոդ 6)

1. Այն դեպքում, երբ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը չի կարող որոշվել սույն Օրենսգրքի 39-րդ և 41-44-րդ հոդվածներին համապատասխան, այդպիսի ապրանքների մաքսային արժեքը որոշվում է սույն գլխի սկզբունքներից և դրույթներից ելնելով՝ Միության մաքսային տարածքում առկա տվյալների հիման վրա:

2. Ապրանքների մաքսային արժեքը որոշելու՝ սույն հոդվածին համապատասխան օգտագործվող մեթոդներն այն նույն մեթոդներն են, որոնք նախատեսված են սույն Օրենսգրքի 39-րդ և 41-44-րդ հոդվածներով, սակայն մաքսային արժեքը սույն հոդվածին համապատասխան որոշելիս թույլատրվում է այդ մեթոդները կիրառելիս ցուցաբերել ճկուն մոտեցում: Մասնավորապես, թույլատրվում է հետևյալը՝

1) գնահատվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար որպես հիմք կարող է ընդունվել նույնական կամ համանման այն ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքը, որոնք արտադրվել են գնահատվող ապրանքների արտադրման երկրից տարբեր երկրում.

2) նույնական կամ համանման ապրանքների վերաբերյալ գործարքի արժեքի հիման վրա գնահատվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու դեպքում թույլատրվում է ողջամիտ շեղում կատարել սույն Օրենսգրքի 41-րդ և 42-րդ հոդվածներով սահմանված պահանջներից, որոնցով նախատեսվում է, որ գնահատվող ապրանքների հետ նույնական կամ գնահատվող ապրանքներին համանման ապրանքները պետք է վաճառվեն Միության մաքսային տարածք արտահանելու նպատակով և ներմուծվեն Միության մաքսային տարածք գնահատվող ապրանքների հետ նույն կամ դրան համապատասխան ժամանակահատվածում, սակայն ոչ ավելի վաղ, քան գնահատվող ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելուց 90 օրացուցային օր առաջ.

3) գնահատվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար որպես հիմք կարող է ընդունվել գնահատվող ապրանքների հետ նույնական կամ գնահատվող ապրանքներին համանման ապրանքների մաքսային արժեքը, որը որոշվել է սույն Օրենսգրքի 43-րդ և 44-րդ հոդվածներին համապատասխան.

4) սույն Օրենսգրքի 43-րդ հոդվածին համապատասխան գնահատվող ապրանքների մաքսային արժեքը որոշելիս թույլատրվում է շեղում կատարել սույն Օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետից:

3. Սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան, ապրանքների մաքսային արժեքը որոշելու մի քանի մեթոդներ կիրառելու հնարավորության առկայության դեպքում անհրաժեշտ է պահպանել դրանք կիրառելու հաջորդականությունը:

4. Ներմուծվող ապրանքների՝ սույն հոդվածին համապատասխան որոշված մաքսային արժեքը պետք է հնարավոր առավելագույն չափով հիմնված լինի ավելի վաղ որոշված մաքսային արժեքների վրա:

5. Ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը սույն հոդվածին համապատասխան որոշելիս չեն կարող հիմք ընդունվել՝

1) Միության մաքսային տարածքում արտադրված ապրանքների գները Միության ներքին շուկայում.

2) մաքսային նպատակներով երկու այլընտրանքային արժեքներից ավելի բարձր արժեքի ընդունումը նախատեսող համակարգերը.

3) ապրանքների գները արտահանման երկրի ներքին շուկայում.

4) նույնական կամ համանման ապրանքների համար սույն Օրենսգրքի 44-րդ հոդվածին համապատասխան որոշված հաշվարկային արժեքում ներառված ծախսերից բացի այլ ծախսեր.

5) ապրանքների արտահանման երկրից Միության անդամ չհանդիսացող պետություններ մատակարարվող ապրանքների գները.

6) ապրանքների նվազագույն մաքսային արժեքը.

7) կամայական կամ շինծու (ֆիկտիվ) արժեքը:

6. Այն դեպքում, երբ մաքսային մարմինը որոշում է ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը սույն հոդվածին համապատասխան իր տրամադրության տակ առկա տվյալների հիման վրա, այն էլեկտրոնային կամ գրավոր եղանակով տեղեկացնում է հայտարարատուին այդպիսի տվյալների աղբյուրների, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված հաշվարկների մասին:

ԲԱԺԻՆ II

ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԸ, ՀԱՏՈՒԿ, ՀԱԿԱԳՆԱԳՑՄԱՆ, ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ

Գլուխ 6

Ընդհանուր դրույթներ մաքսային վճարների վերաբերյալ

Հոդված 46. Մաքսային վճարները

1. Մաքսային վճարներն են՝
1) ներմուծման մաքսատուրքը.
2) արտահանման մաքսատուրքը.
3) ավելացված արժեքի հարկը, որը գանձվում է Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման ժամանակ.
4) Միության մաքսային տարածք ապրանքները ներմուծելիս գանձվող ակցիզները (ակցիզային հարկը կամ ակցիզային վճարը).
5) մաքսավճարները:
2. Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների համար պետք է վճարվեն միասնական դրույքաչափերով գանձվող մաքսատուրքեր, հարկեր կամ միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքեր, հարկեր՝ սույն Օրենսգրքի 37-րդ գլխին համապատասխան: Սույն գլխի և սույն Օրենսգրքի 7-11-րդ գլուխների դրույթները կիրառվում են սույն Օրենսգրքի 37-րդ գլխով նախատեսված դեպքերում:

Հոդված 47. Մաքսավճարները

1. Մաքսավճարներ են համարվում պարտադիր վճարները, որոնք գանձվում են մաքսային մարմինների կողմից ապրանքների բացթողման, տրանսպորտային միջոցների մաքսային ուղեկցման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման համար, ինչպես նաև սույն Օրենսգրքով և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված այլ գործողությունների իրականացման համար:
2. Մաքսավճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:
3. Մաքսավճարների չափերը չեն կարող գերազանցել մաքսային մարմինների այն գործողությունների իրականացման ծախսերի մոտավոր արժեքը, որոնց համար սահմանվել են մաքսավճարները:
4. Մաքսավճարներ վճարողները, մաքսավճարներով հարկվող օբյեկտները, մաքսավճարների հաշվարկման բազան, մաքսավճարները վճարելու պարտավորության ծագումը և դադարումը, մաքսավճարները վճարելու ժամկետները, դրանց հաշվարկման, վճարման, բռնագանձման և վերադարձման (հաշվանցման) կարգը, ինչպես նաև այն դեպքերը, երբ մաքսավճարները չեն վճարվում, սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 48. Կանխավճարները

1. Կանխավճարներ են համարվում առաջիկայում վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի, մաքսավճարների, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի վճարման հաշվին կատարված և վճարողի կողմից կոնկրետ ապրանքների համար մաքսատուրքերի, հարկերի, մաքսավճարների, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի կոնկրետ տեսակների և գումարների կտրվածքով չհատակեցված դրամական միջոցները (փողը), եթե անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանվում է այդպիսի կանխավճարների կատարում:
2. Անդամ պետության օրենսդրությամբ կարող է նախատեսվել կանխավճարների օգտագործման հնարավորություն՝ անձնական օգտագործման ապրանքների համար մաքսատուրքերի, հարկերի վճարման, մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարման ապահովման, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության կատարման ապահովման, ինչպես նաև սույն Օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին կետում և 71-րդ հոդվածի 1-ին կետում նշվածներից բացի այլ վճարումների հաշվին, որոնց գանձումն այդ անդամ պետության օրենսդրությամբ վերապահված է մաքսային մարմիններին: Այն դեպքում, երբ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ մաքսային վճարները գանձելու պարտավորությունը դրված է այլ պետական մարմինների վրա, անդամ պետության օրենսդրությամբ կարող է նախատեսվել այլ այնպիսի վճարների հաշվին կանխավճարների օգտագործման հնարավորություն, որոնք նշված չեն սույն Օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին կետում և 71-րդ հոդվածի 1-ին կետում, և որոնք գանձելու պարտավորությունը դրված է այդպիսի պետական մարմինների վրա:
3. Կանխավճարները կատարվում են այն անդամ պետության արժույթով, որի տարածքում այդ կանխավճարները ենթադրվում է, որ օգտագործվելու են մաքսային վճարները, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը վճարելու նպատակով, իսկ եթե Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով և (կամ) անդամ պետությունների երկկողմ միջազգային պայմանագրերով նախատեսվում է մաքսային վճարները, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը վճարել այն անդամ պետության արժույթից տարբերվող այլ արժույթով, որի տարածքում ենթադրվում է, որ այդ կանխավճարներն օգտագործվելու են մաքսային վճարները, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը վճարելու նպատակով, ապա այդպիսի միջազգային պայմանագրերով սահմանված արժույթով:
4. Որպես կանխավճարներ տրված դրամական միջոցները (փողը) համարվում են կանխավճարները կատարած անձի սեփականությունը և չեն կարող դիտվել որպես մաքսային վճարներ, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքեր կամ որպես մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում, որպես հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը, սույն հոդվածի 2-րդ կետում նշված այլ վճարները վճարելու

պարտավորության կատարման ապահովում մուտքագրված դրամական միջոցներ (փող)՝ այնքան ժամանակ, մինչև կանխավճարներ կատարած անձն այդ մասին կարգադրություն չտա մաքսային մարմնին կամ մաքսային մարմինը բռնագանձում չտարածի կանխավճարների վրա: Որպես կանխավճարներ կատարած անձի կարգադրություն է դիտարկվում նրա կողմից կամ նրա անունից մաքսային հայտարարագիր կամ կանխավճարների գումարների վերադարձի մասին դիմում ներկայացնելը կամ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ այլ գործողությունների կատարումը, որոնք վկայում են այդ անձի՝ իր դրամական միջոցները (փողը) որպես մաքսային վճարներ, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր կամ որպես մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում օգտագործելու մտադրության մասին:

5. Կանխավճարները կատարած անձի կողմից անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված մաքսային մարմին ներկայացված դիմումի հիման վրա այդ մաքսային մարմինը կանխավճարները կատարած անձին ներկայացնում է որպես կանխավճարներ մուտքագրված դրամական միջոցները (փողը) ծախսելու մասին հաշվետվություն՝ այն ժամանակահատվածի համար, որը չի գերազանցում կանխավճարները վերադարձնելու համար անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող ժամկետը:

Կանխավճարները կատարած անձի դիմումի ձևը և մաքսային մարմին այն ներկայացնելու կարգը, ինչպես նաև նշված հաշվետվության ձևը, մաքսային մարմնի կողմից այն ներկայացնելու կարգը և ժամկետները սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

6. Կանխավճարների գումարների վերադարձը (հաշվանցումը) իրականացվում է սույն Օրենսգրքի 67-րդ հոդվածին համապատասխան:

7. Կանխավճարների չպահանջված գումարների տնօրինումն իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

8. Կանխավճարների կատարման կարգը և ձևերը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 49. Մաքսային վճարների վճարման արտոնությունները և սակագնային առանձնաշնորհումները

1. Սույն Օրենսգրքում մաքսային վճարների վճարման արտոնություններ ասելով ենթադրվում է՝

1) ներմուծման մաքսատուրքերի վճարման արտոնությունները (սակագնային արտոնությունները).

2) արտահանման մաքսատուրքերի վճարման արտոնությունները.

3) հարկերի վճարման արտոնությունները.

4) մաքսավճարների վճարման արտոնությունները (մաքսավճարների վճարումից ազատումը):

2. Ներմուծման մաքսատուրքերի վճարման արտոնությունների (սակագնային արտոնությունների) տրամադրման դեպքերն ու պայմանները, ինչպես նաև դրանք կիրառելու կարգը սահմանվում են «Միության մասին» պայմանագրին համապատասխան:

«Միության մասին» պայմանագրի 43-րդ հոդվածին համապատասխան ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը նվազեցնելու միջոցով ներմուծման մաքսատուրքերի վճարման արտոնություններ (սակագնային արտոնություններ) տրամադրելու դեպքերն ու պայմանները սահմանելիս Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու այլ հանգամանքներ, քան սույն Օրենսգրքով նախատեսված հանգամանքները, որոնց ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքեր վճարելու պարտավորությունը դադարում է և (կամ) վրա է հասնում ներմուծման մաքսատուրքերը վճարելու ժամկետը:

3. Արտահանման մաքսատուրքերի վճարման արտոնությունները, հարկերի վճարման արտոնությունները, ինչպես նաև մաքսավճարների վճարման արտոնությունները (մաքսավճարների վճարումից ազատումը) սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

4. Սակագնային առանձնաշնորհումները տրամադրվում են «Միության մասին» պայմանագրին և երրորդ կողմի հետ Միության միջազգային այն պայմանագրերին համապատասխան, որոնցով նախատեսվում է ազատ առևտրի ռեժիմի կիրառում: Սակագնային առանձնաշնորհումները վերականգնվում են Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում և պայմանների պահպանման դեպքում:

Հոդված 50. Մաքսատուրքեր, հարկեր վճարողները

Մաքսատուրքեր, հարկեր վճարողներ են համարվում հայտարարատուն կամ այլ անձինք, որոնց համար առաջացել է մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորություն:

Գլուխ 7

Մաքսատուրքերի, հարկերի հաշվարկումը

Հոդված 51. Մաքսատուրքերով, հարկերով հարկվող օբյեկտը և մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման բազան

1. Մաքսատուրքերով, հարկերով հարկվող օբյեկտ են համարվում Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները, ինչպես նաև սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում այլ ապրանքները:

2. Մաքսատուրքերի հաշվարկման բազա են համարվում, կախված ապրանքի տեսակից և կիրառվող դրույքաչափերի տեսակներից, ապրանքների մաքսային արժեքը և (կամ) դրանց՝ բնաիրային արտահայտությամբ ֆիզիկական բնութագիրը (ապրանքի քանակը, զանգվածը, այդ թվում՝ հաշվի առնելով առաջնային փաթեթվածքը, որն անբաժանելի է ապրանքից մինչև դրա սպառումը և (կամ) որով կատարվում է ապրանքի մանրածախ առևտուրը, ծավալը կամ այլ բնութագիր), եթե սույն Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

3. Հարկերի հաշվարկման բազան սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 52. Մաքսատուրքերի, հարկերի հաշվարկումը

1. Մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են մաքսատուրքեր, հարկեր վճարողի կողմից, իսկ սույն հոդվածով սահմանված դեպքերում՝ մաքսային մարմնի կողմից:

2. Մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են մաքսային մարմնի կողմից՝

1) ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողության անցկացման արդյունքների հիման վրա՝ մաքսատուրքերի, հարկերի ոչ ճիշտ հաշվարկում հայտնաբերելու դեպքում.

2) սույն Օրենսգրքի 56-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա մաքսատուրքերը, հարկերը հաշվարկելիս.

3) սույն Օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ կետում, 97-րդ հոդվածի 3-րդ կետում, 103-րդ հոդվածի 4-րդ կետում, 153-րդ հոդվածի 5-րդ կետում, 162-րդ հոդվածի 6-րդ կետում, 241-րդ հոդվածի 3-րդ կետում, 279-րդ հոդվածի 8-րդ կետում, 280-րդ հոդվածի 4-րդ կետում, 284-րդ հոդվածի 4-րդ կետում, 288-րդ հոդվածի 4-րդ կետում, 295-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ կետերում և 309-րդ հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ այն ապրանքների համար, որոնք բաց են թողնվել մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը, սույն Օրենսգրքով սահմանված ժամկետում ապրանքների հայտարարագիր չի ներկայացվել.

4) հայտարարատուի կողմից սույն Օրենսգրքի 117-րդ հոդվածի 9-րդ կետում նշված գործողությունները չկատարելու դեպքում.

5) սույն Օրենսգրքի 208-րդ հոդվածի 7-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում, որոնց դեպքում մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն Օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ կետում նշված անձանց կողմից.

6) սույն Օրենսգրքի 208-րդ հոդվածի 9-րդ կետին և 216-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան մաքսատուրքերը, հարկերը հաշվարկելիս.

7) սույն Օրենսգրքի 254-րդ հոդվածին համապատասխան Հանձնաժողովի կողմից և Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված հանգամանքների ի հայտ գալու դեպքում, երբ մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման.

8) սույն Օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին կետում նշված դեպքերում մաքսային հսկողության անցկացման արդյունքների հիման վրա.

9) սույն Օրենսգրքի 325-րդ հոդվածի 17-րդ և 18-րդ կետերով նախատեսված դեպքերում մաքսային հսկողության անցկացման արդյունքների հիման վրա.

10) սույն Օրենսգրքին համապատասխան նախատեսված հանգամանքներն ի հայտ գալու դեպքում, որոնց պարագայում մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունը ենթակա է կատարման այն ապրանքների համար, որոնց մաքսային հայտարարագրումը դրանք մաքսային ընթացակարգով ձևակերպելիս իրականացվել է տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթերը որպես մաքսային հայտարարագիր օգտագործելով.

11) այլ դեպքերում, երբ մաքսատուրքերը, հարկերը սույն Օրենսգրքին համապատասխան ենթակա են վճարման՝ ապրանքների բացթողումից հետո ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ, և ապրանքների նկատմամբ մաքսատուրքերը, հարկերը չեն հաշվարկվել վճարողի կողմից:

3. Մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման վերաբերյալ տվյալները նշվում են ապրանքների հայտարարագրում, մաքսային մուտքի օրդերում կամ սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 24-րդ կետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանված այլ մաքսային փաստաթղթում, սույն Օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված մաքսային փաստաթղթում կամ սույն հոդվածի 4-րդ կետում նշված մաքսային փաստաթղթում:

4. Սույն հոդվածի 2-րդ կետի 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ և 11-րդ ենթակետերում նշված դեպքերում մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման դեպքում մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման վերաբերյալ տվյալները նշվում են

մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկում:

Մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկի ձևը, այդպիսի հաշվարկի կառուցվածքը և ձևաչափն էլեկտրոնային փաստաթղթի ձևով, դրանք լրացնելու կարգը և այդպիսի հաշվարկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից նշված հաշվարկը թղթային կրիչի վրա լրացնելիս կազմվում է այդպիսի մաքսային փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը:

5. Այն դեպքում, երբ մաքսատուրքերը, հարկերը, սույն Օրենսգրքին համապատասխան, վճարվում են մաքսային մուտքի օրդերի հիման վրա կամ սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 24-րդ կետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանված այլ մաքսային փաստաթղթի հիման վրա, մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման վերաբերյալ տվյալները մաքսային մարմնի կողմից նշվում են մաքսային մուտքի օրդերում կամ սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 24-րդ կետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանված այլ մաքսային փաստաթղթում:

Մաքսային մուտքի օրդերի կամ սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 24-րդ կետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանված այլ մաքսային փաստաթղթի ձևերը, դրանք լրացնելու և դրանցում փոփոխություններ (լրացումներ) կատարելու կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Մաքսային մուտքի օրդերը կամ սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 24-րդ կետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանված այլ մաքսային փաստաթուղթ լրացնելիս մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից կազմվում է այդ փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակը:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է նախատեսվել մաքսային մուտքի օրդերն այլ այնպիսի վճարների հաշվարկման և վճարման համար օգտագործելու հնարավորություն, որոնք գանձելու պարտավորությունն անդամ պետությունների օրենսդրությամբ դրված է մաքսային մարմինների վրա: Նշված դեպքում մաքսային մուտքի օրդերի ձևը լրացնելու, դրանում փոփոխություններ (լրացումներ) կատարելու և այն օգտագործելու կարգը սահմանվում է այդ անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

6. Մաքսատուրքերը, հարկերը հաշվարկում են այն անդամ պետության արժույթով, որտեղ դրանք ենթակա են վճարման սույն Օրենսգրքի 61-րդ հոդվածին համապատասխան՝ բացառությամբ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով և (կամ) անդամ պետությունների երկկողմ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի, երբ մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են այլ արժույթով:

Եթե մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման համար պահանջվում է արտարժույթը վերահաշվարկել անդամ պետության արժույթով կամ այլ արժույթով, ապա այդպիսի վերահաշվարկը կատարվում է մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագիրը գրանցելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով, եթե սույն Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

7. Մաքսատուրքը հաշվարկվում է մաքսատուրքի հաշվարկման բազայի և ապրանքի համար սահմանված մաքսատուրքի համապատասխան դրույքաչափի հիման վրա:

Հարկերը հաշվարկվում են այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որտեղ դրանք ենթակա են վճարման՝ սույն Օրենսգրքի 61-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 53. Մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման համար կիրառվող մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերը

1. Մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման համար կիրառվում են մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագիրը գրանցելու օրվա դրությամբ գործող դրույքաչափերը, եթե սույն Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

Այն դեպքում, երբ արտահանման մաքսատուրքերը հաշվարկվում են այնպիսի ապրանքների համար, որոնց մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները սահմանված են սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ, կիրառվում են անդամ պետությունների նշված օրենսդրությամբ սահմանված օրվա դրությամբ գործող դրույքաչափերը:

2. Ներմուծման մաքսատուրքերը հաշվարկելու համար կիրառվում են Եվրասիական տնտեսական Միության միասնական մաքսային սակագնի դրույքաչափերը՝ բացառությամբ «Միության մասին» պայմանագրին համապատասխան նախատեսված դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին կամ երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի դրույքաչափերից տարբերվող դրույքաչափեր:

Ներմուծման մաքսատուրքերը հաշվարկելու համար սակագնային առանձնաշնորհումների տրամադրման պայմանները չպահպանելու դեպքում կիրառվում են Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի դրույքաչափերը, եթե «Միության մասին» պայմանագրով այլ բան սահմանված չէ:

3. Արտահանման մաքսատուրքերը հաշվարկելու համար կիրառվում են այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դրույքաչափերը, որտեղ դրանք ենթակա են վճարման սույն Օրենսգրքի 61-րդ հոդվածին համապատասխան, եթե Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով և (կամ) անդամ պետությունների

երկկողմ միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

4. Հարկերի հաշվարկման համար կիրառվում են այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դրույքաչափերը, որտեղ դրանք ենթակա են վճարման՝ սույն Օրենսգրքի 61-րդ հոդվածին համապատասխան:

Անդամ պետությունների լիազորված պետական մարմինների կողմից ներկայացված տվյալների հիման վրա Հանձնաժողովը ձևավորում է անդամ պետություններում ապրանքների նկատմամբ կիրառվող հարկերի դրույքաչափերի ընդհանուր ցանկը և այն տեղադրում է Ինտերնետ ցանցում՝ Միության պաշտոնական կայքում:

Անդամ պետություններում ապրանքների նկատմամբ կիրառվող հարկերի դրույքաչափերի ընդհանուր ցանկի ձևաչափը, այն ձևավորելու, վարելու և դրանում առկա տվյալներն օգտագործելու կարգը, ինչպես նաև այդպիսի դրույքաչափերի մասին տվյալները ներկայացնելու կարգն ու տեխնիկական պայմանները, այդ թվում՝ կառուցվածքն ու ձևաչափը, որոշվում են Հանձնաժողովի կողմից:

Հոդված 54. Մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորության առաջացումը և դադարումը: Մաքսատուրքեր, հարկեր չվճարելու դեպքերը

1. Մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորություն առաջանում է սույն Օրենսգրքի 56-րդ, 91-րդ, 97-րդ, 103-րդ, 136-րդ, 137-րդ, 141-րդ, 153-րդ, 162-րդ, 174-րդ, 185-րդ, 198-րդ, 208-րդ, 216-րդ, 225-րդ, 232-րդ, 241-րդ, 247-րդ հոդվածներին, 277-րդ հոդվածի 4-րդ կետին, 279-րդ, 280-րդ, 284-րդ, 288-րդ, 295-րդ և 309-րդ հոդվածներին համապատասխան, ինչպես նաև սույն Օրենսգրքի 254-րդ հոդվածին համապատասխան Հանձնաժողովի կողմից և Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված հանգամանքներն ի հայտ գալու դեպքում:

2. Մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորությունը դադարում է՝

1) սույն Օրենսգրքի 56-րդ, 91-րդ, 97-րդ, 103-րդ, 136-րդ, 137-րդ, 141-րդ, 153-րդ, 162-րդ, 174-րդ, 185-րդ, 198-րդ, 208-րդ, 216-րդ, 225-րդ, 232-րդ, 241-րդ, 247-րդ հոդվածներով, 277-րդ հոդվածի 4-րդ կետով, 279-րդ, 280-րդ, 284-րդ, 288-րդ, 295-րդ և 309-րդ հոդվածներով նախատեսված հանգամանքների ի հայտ գալու և մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորության դադարման հետ կապված պայմանների պահպանման դեպքում.

2) սույն Օրենսգրքի 254-րդ հոդվածին համապատասխան Հանձնաժողովի կողմից և Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված հանգամանքներն ի հայտ գալու դեպքում:

3) սույն Օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ կետում և 68-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված դեպքերում.

4) այն դեպքում, երբ մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման միջոցները սույն Օրենսգրքի 68-րդ հոդվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետին համապատասխան չեն կիրառվում անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան բռնագանձման համար անհուսալի ճանաչված մաքսատուրքերի, հարկերի գումարի առնչությամբ:

3. Հանձնաժողովն իրավունք ունի որոշելու այն հանգամանքները, որոնց պարագայում դադարում է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը այն դեպքերում, երբ միևնույն ապրանքների համար մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորությունը տարբեր անձանց համար առաջացել է տարբեր հանգամանքներում և (կամ) բազմիցս, այդ թվում՝ այն դեպքում, երբ մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորությունն առաջացել է մեկ անդամ պետությունում, իսկ այն հանգամանքները, որոնց ժամանակ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարում է, ի հայտ են եկել այլ անդամ պետությունում, ինչպես նաև այդ հանգամանքների ի հայտ գալու հաստատման գործում մաքսային մարմինների փոխգործակցության կարգը:

4. Մաքսատուրքեր, հարկեր չեն վճարվում՝

1) այն ապրանքների համար, որոնք ձևակերպվում են (ձևակերպվել են) այնպիսի մաքսային ընթացակարգով, որով ձևակերպվելու պայմանները չեն նախատեսում մաքսատուրքերի, հարկերի վճարում նախքան այդպիսի մաքսային ընթացակարգի գործողության ավարտը կամ դադարեցումը, և այդպիսի մաքսային ընթացակարգին համապատասխան այդ ապրանքներն օգտագործելու պայմանները պահպանելու դեպքում.

2) առանձին կատեգորիայի ապրանքների համար, որոնք սույն Օրենսգրքի 272-րդ հոդվածի 4-րդ կետին և 281-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան ենթակա չեն մաքսային ընթացակարգով ձևակերպման, ապրանքների այդ կատեգորիաների համար սույն Օրենսգրքով սահմանված օգտագործման պայմանները պահպանելու դեպքում.

3) «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների նկատմամբ՝ ներմուծման մաքսատուրքերի վճարման գծով ներմուծման մաքսատուրքերի վճարումից ազատման ձևով արտոնությունների կիրառմամբ և հարկերի վճարման արտոնությունների կիրառմամբ, մինչև այդպիսի մաքսային ընթացակարգի գործողության ավարտը կամ դադարեցումը՝ այդպիսի արտոնություններ տրամադրելու պայմանները պահպանելու պայմանով, արտոնությունները տրամադրելու պայմաններին համապատասխանող նպատակներով ապրանքներն օգտագործելու պայմանով, այդպիսի ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումները պահպանելու պայմանով, ինչպես նաև այդպիսի ապրանքների օգտագործման պայմանները նշված մաքսային ընթացակարգին համապատասխան պահպանելու պայմանով՝ բացառությամբ հայտարարատուի կողմից այդպիսի արտոնություններից հրաժարվելու դեպքերի.

4) «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների նկատմամբ՝ ներմուծման մաքսատուրքերի վճարման գծով ներմուծման մաքսատուրքերի վճարումից ազատման ձևով այնպիսի արտոնությունների, ինչպես նաև հարկերի վճարման այնպիսի արտոնությունների կիրառմամբ, որոնք ուղեկցվում են այդպիսի ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումներով, այդպիսի արտոնություններ տրամադրելու պայմանները պահպանելու պայմանով, արտոնությունները տրամադրելու պայմաններին համապատասխան նպատակներով ապրանքներն օգտագործելու պայմանով, ինչպես նաև այդպիսի ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման մասով սահմանափակումները պահպանելու պայմանով՝ բացառությամբ հայտարարատուի կողմից այդպիսի արտոնություններից հրաժարվելու դեպքերի:

Հոդված 55. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումը

1. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարվում է մաքսատուրքերը, հարկերը վճարողի կողմից, այն անձանց կողմից, որոնք, սույն Օրենսգրքին համապատասխան, մաքսատուրքերը, հարկերը վճարող անձի հետ միասին կրում են մաքսատուրքերը, հարկերը վճարելու համապարտ պարտավորություն կամ, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ, մաքսատուրքերը, հարկերը վճարելու սուբսիդիար պարտավորություն:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել նաև այլ անձանց կողմից մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարելու հնարավորություն:

Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարվում է մաքսային ներկայացուցչի կողմից՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 405-րդ հոդվածը:

2. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարվում է դրանք սույն Օրենսգրքի 57-61-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում, սույն Օրենսգրքին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա գումարների չափով վճարելու միջոցով:

Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման առանձնահատկությունները կազմակերպության լուծարման, անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման, կազմակերպության վերակազմակերպման դեպքում սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

Այն դեպքում, երբ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված է չվճարված մաքսային վճարների ձևով պատճառված վնասի փոխհատուցման միջոցով մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարման հնարավորություն, այդ պարտավորության կատարման առանձնահատկությունները սահմանվում են այդ անդամ պետության օրենսդրությամբ:

3. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում մաքսային մարմինն անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում մաքսատուրքերը, հարկերը վճարողին, ինչպես նաև այն անձանց, որոնք սույն Օրենսգրքին համապատասխան մաքսատուրքերը, հարկերը վճարողի հետ կրում են մաքսատուրքերը, հարկերը վճարելու համապարտ պարտավորություն կամ, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ, մաքսատուրքերը, հարկերը վճարելու սուբսիդիար պարտավորություն, ծանուցում է ուղարկում մաքսատուրքերի, հարկերի՝ սահմանված ժամկետում չվճարված գումարների մասին՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքերի և սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Նշված ծանուցման ձևը, այդպիսի ծանուցմամբ նախատեսված պահանջների կատարման կարգն ու ժամկետը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Այն դեպքերում, երբ մաքսատուրքերը, հարկերը սույն Օրենսգրքի 61-րդ հոդվածին համապատասխան ենթակա են վճարման մեկ անդամ պետությունում, իսկ մաքսատուրքերի, հարկերի բռնագանձումը, սույն Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, իրականացվում է մեկ այլ անդամ պետության մաքսային մարմնի կողմից, նշված ծանուցումն ուղարկվում է մաքսատուրքերի, հարկերի գանձումն իրականացնող մաքսային մարմնի կողմից՝ մաքսատուրքերի, հարկերի գանձման համար անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝ սույն Օրենսգրքի 1-ին հավելվածով նախատեսված կարգով:

4. Մաքսային մարմինը սույն հոդվածի 3-րդ կետում նշված ծանուցումը չի ուղարկում հետևյալ դեպքերում՝

1) ապրանքների բացթողումից հետո, իսկ այն ապրանքների դեպքում, որոնց բացթողումն իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ էլեկտրոնային փաստաթուղթ ուղարկելուց կամ սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 17-րդ կետով նախատեսված համապատասխան նշումները կատարելուց հետո հայտնաբերվում է ապրանքների մեկ հայտարարագրում հաշվարկված մաքսային վճարները, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը չվճարելու փաստը, որոնց հանրագումարը չի գերազանցում 5 եվրոյին համարժեք գումարը՝ սույն Օրենսգրքին համապատասխան մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման փոխարժեքի կիրառման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

2) հայտնաբերվում է սույն Օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ կետում նշված, կամ սույն Օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված մեկ մաքսային փաստաթղթում՝ մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի մեկ հաշվարկում հաշվարկված մաքսային վճարները, հատուկ,

հակագնագցման, փոխհատուցման տուրքերը չվճարելու փաստը, որոնց հանրագումարը չի գերազանցում 5 եվրոյին համարժեք գումարը՝ սույն Օրենսգրքին համապատասխան մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման փոխարժեքի կիրառման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

5. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել սույն հոդվածի 4-րդ կետում նշված դեպքերից տարբեր դեպքեր, երբ սույն հոդվածի 3-րդ կետում նշված ծանուցումը չի ուղարկվում:

6. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված դեպքերում մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարում է:

7. Սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետում մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, ինչպես նաև երբ սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերում նման ծանուցում չի ուղարկվում, մաքսատուրքերի, հարկերի բռնագանձումն իրականացնող մաքսային մարմինը սույն Օրենսգրքի 11-րդ գլխին համապատասխան միջոցներ է ձեռնարկում՝ մաքսատուրքերը, հարկերը բռնագանձելու ուղղությամբ:

8. Հանձնաժողովն իրավունք ունի որոշելու մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարելու առանձնահատկություններն այն դեպքերում, երբ միևնույն ապրանքների համար մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորություն է առաջացել տարբեր անձանց մոտ տարբեր հանգամանքներում և (կամ) բազմիցս:

Հոդված 56. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության առաջացումը և դադարեցումը Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում, դրանք վճարելու ժամկետները և հաշվարկման առանձնահատկությունները

1. Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունն առաջանում է Միության մաքսային տարածք ապրանքները ներմուծելու ժամանակ:

Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում արտահանման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունն առաջանում է Միության մաքսային տարածքից ապրանքներն արտահանելու ժամանակ:

2. Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունն առաջանում է ապրանքներն անօրինական տեղափոխող անձանց մոտ: Անօրինական տեղափոխմանը մասնակցող անձինք, եթե նրանք գիտեին կամ պետք է իմանային այդպիսի տեղափոխման անօրինականության մասին, իսկ Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման դեպքում՝ նաև այն անձինք, որոնք սեփականության կամ տիրապետման իրավունքով ձեռք են բերել անօրինական ներմուծված ապրանքները, եթե ձեռքբերման պահին նրանք գիտեին կամ պետք է իմանային Միության մաքսային տարածք դրանց ներմուծման անօրինականության մասին, ապրանքներն անօրինական տեղափոխող անձանց հետ միասին կրում են մաքսատուրքերը, հարկերը վճարելու համապարտ պարտավորություն:

3. Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարում է սույն հոդվածի 2-րդ կետում նշված անձանց համար՝ հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) դրանց բռնագանձում՝ սույն հոդվածի 5-8-րդ կետերին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով.

2) մաքսային ընթացակարգերով ապրանքների ձևակերպում՝ սույն Օրենսգրքին համապատասխան.

3) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ տեղափոխման (փոխադրման) և պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը ճանաչելը, բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան նման ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան այդ օտարերկրյա ապրանքների նկատմամբ վրա է հասել մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը.

4) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

5) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

6) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

4. Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետ է համարվում ապրանքները Միության մաքսային սահմանը հատելու օրը, իսկ եթե այդ օրը որոշված չէ, ապա Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման փաստը հայտնաբերելու օրը:

5. Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման այն չափով, որով ենթակա կլինեին վճարման, եթե այդ ապրանքները ձևակերպվեին հետևյալ մաքսային ընթացակարգերով՝

1) Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման դեպքում՝ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումներ և ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու արտոնություններ կիրառելու.

2) Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանման դեպքում՝ «արտահանում» մաքսային ընթացակարգով՝ առանց արտահանման մաքսատուրքերը վճարելու արտոնություններ կիրառելու:

6. Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են սույն գլխին համապատասխան՝ հաշվի առնելով սույն հոդվածի 7-րդ կետը, իսկ եթե մաքսային մարմինն ապրանքների վերաբերյալ հստակ տեղեկություններ չունի՝ նաև սույն հոդվածի 8-րդ կետը:

7. Մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման համար կիրառվում են ապրանքները Միության մաքսային սահմանը հատելու օրվա դրությամբ գործող մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերը, իսկ եթե այդ օրը հայտնի չէ, ապա Միության մաքսային սահմանով ապրանքներն անօրինական տեղափոխելու փաստը հայտնաբերելու օրվա դրությամբ գործող դրույքաչափերի հիման վրա:

Այն դեպքում, երբ ապրանքների մաքսային արժեքը որոշելու, ինչպես նաև մաքսատուրքերը, հարկերը հաշվարկելու համար պահանջվում է արտարժույթը վերահաշվարկել անդամ պետության արժույթով, այդպիսի վերահաշվարկը կատարվում է ապրանքները Միության մաքսային սահմանը հատելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով, իսկ եթե այդ օրը հայտնի չէ, ապա Միության մաքսային սահմանով ապրանքներն անօրինական տեղափոխելու փաստը հայտնաբերելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

8. Այն դեպքում, երբ մաքսային մարմինը չունի հստակ տվյալներ ապրանքների (բնույթի, անվանման, քանակի, ծագման և (կամ) մաքսային արժեքի) վերաբերյալ, վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման բազան որոշվում է մաքսային մարմնի մոտ առկա տվյալների հիման վրա, իսկ ապրանքների դասակարգումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ կետը:

Եթե ապրանքի ծածկագիրը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանվել է 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով, ապա՝

մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հարկերը հաշվարկելու համար կիրառվում է այն խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող ավելացված արժեքի հարկի դրույքաչափերից ամենամեծը, ակցիզների (ակցիզային հարկի կամ ակցիզային վճարի) դրույքաչափերից ամենամեծը, որոնց համար սահմանվել է մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը:

Ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները հետագայում պարզվելու դեպքում մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են այդ ճշգրիտ տեղեկությունների հիման վրա, կատարվում է ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի գումարների վերադարձ (հաշվանցում) կամ չվճարված գումարների բռնագանձում՝ սույն Օրենսգրքի 10-րդ և 11-րդ գլուխներին համապատասխան:

9. Անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ ապրանքները բռնագրավելու կամ այդ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելու, սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան՝ մաքսային մարմինների կողմից ապրանքներն արգելանքի վերցնելու (արգելապահելու), ժամանակավոր պահպանման հանձնելու, մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարելուց հետո ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելու և (կամ) դրանք (լրիվ կամ մասնակիորեն) բռնագանձելու դեպքում սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին համապատասխան:

10. Սույն հոդվածի 1-9-րդ կետերի դրույթները չեն կիրառվում Միության մաքսային սահմանով ոչ հավաստի մաքսային հայտարարագրմամբ ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում:

Միության մաքսային սահմանով ոչ հավաստի մաքսային հայտարարագրմամբ ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են սույն Օրենսգրքին համապատասխան: Ընդ որում, ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ փաստացի վճարված մաքսատուրքերը, հարկերը երկրորդ անգամ չեն վճարվում (բռնագանձվում), իսկ մաքսատուրքերի, հարկերի՝ ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման) սույն Օրենսգրքին համապատասխան:

Գլուխ 8

Մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետները և կարգը

Հոդված 57. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետները

1. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետները սահմանվում են՝ սույն Օրենսգրքի 56-րդ, 58-րդ, 91-րդ, 97-րդ, 103-րդ, 136-րդ, 137-րդ, 141-րդ, 153-րդ, 162-րդ, 174-րդ, 185-րդ, 198-րդ, 208-րդ, 216-րդ, 225-րդ, 232-րդ, 241-րդ, 247-րդ հոդվածներին, 277-րդ հոդվածի 4-րդ կետին, 279-րդ, 280-րդ, 284-րդ, 288-րդ, 295-րդ և 309-րդ հոդվածներին համապատասխան:

2. Այն ապրանքների համար, որոնց մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան սահմանված են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ, մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետները սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

3. Հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների համար մաքսատուրքերի, հարկերի վճարման ժամկետները սույն Օրենսգրքի 254-րդ հոդվածին համապատասխան սահմանվում են Հանձնաժողովի կողմից և անդամ պետությունների օրենսդրությամբ՝ Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում:

4. Մաքսատուրքերը, հարկերը սույն Օրենսգրքով սահմանված ժամկետում վճարելու պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վճարվում են տույժեր:

Տույժերի հաշվեգրումը, վճարումը, բռնագանձումն ու վերադարձն իրականացվում են այն անդամ պետությունում, որտեղ սույն Օրենսգրքի 61-րդ հոդվածին համապատասխան ենթակա են վճարման մաքսատուրքերը, հարկերը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Տույժեր չեն վճարվում այն դեպքում, երբ սույն Օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով մաքսատուրքերի, հարկերի բռնագանձում իրականացնող մաքսային մարմնի կողմից ստացվել է այն հանգամանքների ի հայտ գալու հաստատումը, որոնց ժամանակ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունը դադարեցվում է:

5. Այն դեպքերում, երբ սույն Օրենսգրքին համապատասխան ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարներից ենթակա են վճարման տոկոսներ՝ այնպես, ինչպես դա կարվեր, եթե այդ գումարների համար տրամադրվեր դրանց վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն, այդ տոկոսները հաշվեգրվում և վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածով ներմուծման մաքսատուրքերի գումարներից տոկոսների հաշվեգրման և վճարման համար սահմանված կարգով:

Հոդված 58. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետների փոփոխությունը

1. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետների փոփոխությունը կատարվում է հետաձգման կամ տարաժամկետ վճարման ձևով:

2. Հարկերը վճարելու ժամկետների փոփոխության հիմքերը, ինչպես նաև դրանց փոփոխման պայմանները և կարգը սահմանվում են այն անդամ պետության օրենսդրությամբ, որտեղ դրանք վճարվում են:

3. Ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրվում է այն ապրանքների համար, որոնք ձևակերպվում են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

4. Ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելը կամ տարաժամկետ կատարելը համարվում է ներմուծման մաքսատուրքերը վճարելու ժամկետի փոփոխություն՝ հետաձգված կամ տարաժամկետ վճարված գումարի՝ վճարողի կողմից համապատասխանաբար միանվագ կամ փուլ առ փուլ վճարմամբ:

5. Ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրվում է վճարման ենթակա ամբողջ գումարի կամ այդ գումարի մի մասի համար:

6. Ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու հնարավորության տրամադրմամբ ապրանքների բացթողման դեպքում ներմուծման մաքսատուրքերի գումարը, որի համար տրամադրվել է վճարումը հետաձգելու հնարավորությունը, ենթակա է վճարման այն ժամկետի վերջին օրվանից ոչ ուշ, որով տրամադրվել է այդպիսի հետաձգման հնարավորությունը:

Ներմուծման մաքսատուրքերի վճարումը տարաժամկետ կատարելու հնարավորության տրամադրմամբ ապրանքների բացթողման դեպքում ներմուծման մաքսատուրքերի գումարը, որի համար տրամադրվել է վճարումը տարաժամկետ կատարելու հնարավորություն, ենթակա է վճարման ներմուծման մաքսատուրքերի գումարների փուլ առ փուլ վճարման հաստատված ժամանակացույցին համապատասխան: Ընդ որում, փուլ առ փուլ վճարման համար հաստատված գումարներից յուրաքանչյուրը ենթակա է վճարման համապատասխան ժամանակահատվածում այդպիսի վճարման համար սահմանված ժամկետի վերջին օրվանից ոչ ուշ:

7. Ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրվում է ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու պայմանով, եթե այլ բան սահմանված չէ սույն Օրենսգրքով:

Ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրվում է՝ սույն Օրենսգրքի 9-րդ գլխին համապատասխան:

Հոդված 59. Ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրելու ժամկետներն ու հիմքերը

1. Սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու համար տոկոսներ վճարելու պայմանով ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու հնարավորություն տրամադրվում է ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողնելու օրվան հաջորդող օրվանից ոչ ավելի, քան 1 ամիս ժամկետով:

2. Առանց ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու համար տոկոսներ վճարելու ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրվում է ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողնելու օրվան հաջորդող օրվանից ոչ ավելի, քան 6 ամիս ժամկետով՝ հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝

1) տարերային աղետի, տեխնոլոգիական աղետի կամ անհաղթահարելի ուժ հանդիսացող այլ հանգամանքների հետևանքով ներմուծման մաքսատուրքեր վճարող անձին վնաս պատճառվելը.

2) ներմուծման մաքսատուրքեր վճարող անձին դաշնային (հանրապետական, պետական) բյուջեից ֆինանսավորումը կամ այդ անձի կողմից կատարված պետական պատվերի համար վարձատրությունն ուշացնելը.

3) այն միջազգային պայմանագրերի շրջանակներում մատակարարումներ իրականացնելը, որոնց կողմերից մեկն անդամ պետությունն է, եթե այդ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված չէ, որ սույն հանգամանքը ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրելու համար հիմք չի համարվում.

4) անդամ պետությունների՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից Միության մաքսային տարածք տնկանյութ կամ սերմանյութ, բույսերի պաշտպանության միջոցներ, տոհմային անասնաբուծության օբյեկտներ (տոհմային գյուղատնտեսական կենդանիներ, թռչուններ, ձուկ և տոհմային անասնաբուծության այլ օբյեկտներ), տոհմային արտադրանք (նյութեր), կենդանիներին կերակրելու համար օգտագործվող արտադրանք ներմուծելը կամ դրանք նշված կազմակերպությունների համար մատակարարելը: Նշված այն ապրանքների ցանկը, որոնց համար կարող է տրամադրվել ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ծածկագրերի նշմամբ, որոշվում է Հանձնաժողովի կողմից.

5) Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ հիմքեր:

3. Սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու համար տոկոսներ վճարելու պայմանով ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրվում է ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողնելու օրվան հաջորդող օրվանից ոչ ավելի, քան 6 ամիս ժամկետով՝ այնպիսի հիմքի առկայության դեպքում, ինչպիսին է արդյունաբերական վերամշակման մեջ օգտագործելու նպատակով Միության մաքսային տարածք ապրանքների, այդ թվում՝ հումքի, նյութերի, տեխնոլոգիական սարքավորումների, դրանց լրամասերի և պահեստամասերի ներմուծումը: Սույն կետի կիրառման նպատակներով «արդյունաբերական վերամշակում» ասելով ենթադրվում է արտադրության մեջ ապրանքների օգտագործումը նոր ապրանքներ ստանալու համար, որոնց ծածկագրերը, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, առաջին 4 նիշերից ցանկացածի մակարդակով տարբերվում են արդյունաբերական վերամշակման համար ներմուծվող ապրանքների ծածկագրերից: Նշված այն ապրանքների ցանկը, որոնց համար կարող է տրամադրվել ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ծածկագրերի նշմամբ, ինչպես նաև այդպիսի ապրանքները արդյունաբերական վերամշակման մեջ օգտագործելու համար նախատեսված ապրանքներին դասելու պայմանները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում նշված հիմքերի առկայությունը պետք է հաստատվի ներմուծման մաքսատուրքերը վճարողի կողմից:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել անդամ պետության՝ նշված հիմքերի առկայությունը հաստատելու համար լիազորված պետական մարմինները, ինչպես նաև այդպիսի հաստատումներ տրամադրելու կարգը:

5. Ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրվում է ներմուծման մաքսատուրքերը վճարողի դիմումի հիման վրա՝ մաքսային մարմնի որոշմամբ:

Ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրելու մասին որոշումը կայացվում է այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որի մաքսային մարմնի կողմից իրականացվելու է ապրանքների բացթողումը՝ դրանք «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում:

Ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրելու մասին մաքսային մարմնի որոշման մեջ նշվում են ժամկետը, որով տրամադրվում է ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորությունը, այն ներմուծման

մաքսատուրքերի գումարը, որոնց վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն է տրամադրվում, և ապրանքների բացթողման ժամանակ այդ որոշումը կիրառելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Մաքսային մարմնի կողմից ներմուծման մաքսատուրքերի վճարումը տարաժամկետ կատարելու հնարավորություն տրամադրելու մասին որոշում ընդունելիս հաստատվում է նաև ներմուծման մաքսատուրքերի գումարների փուլ առ փուլ վճարման ժամանակացույցը:

Նշված որոշումն ընդունելու և չեղյալ ճանաչելու կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

6. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել այնպիսի դեպքեր, երբ ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն չի տրամադրվում:

Հոդված 60. Ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու համար գանձվող տոկոսները

1. Սույն Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերին համապատասխան ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորությունից օգտվելու յուրաքանչյուր օրվա համար, սկսած «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքները բաց թողնելու օրվան հաջորդող օրվանից մինչև ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը դադարելու օրը, վճարման ենթակա են տոկոսներ:

2. Ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու համար տոկոսները ենթակա են վճարման վերաֆինանսավորման դրույքաչափի (առանցքային դրույքաչափի, հաշվառման դրույքաչափի) 1/360-րդի չափով, որը սահմանվում է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որտեղ ապրանքները ձևակերպվել են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով, և կիրառվում է տոկոսների հաշվարկման համար: Ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու համար տոկոսները հաշվեգրելու համար կիրառվում է վերաֆինանսավորման դրույքաչափը (առանցքային դրույքաչափը, հաշվառման դրույքաչափը), որը գործում է վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորությունից փաստացի օգտվելու համապատասխան ժամանակահատվածներում:

3. Ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու համար տոկոսները ենթակա են վճարման՝ ներմուծման մաքսատուրքերը վճարելու կամ բռնագանձելու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ:

4. Ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու համար տոկոսների վճարումը կամ բռնագանձումը, ինչպես նաև վերադարձը (հաշվանցումը) իրականացվում են սույն Օրենսգրքով ներմուծման մաքսատուրքերի գումարների վճարման կամ բռնագանձման, ինչպես նաև վերադարձի (հաշվանցման) համար նախատեսված կարգով:

Հոդված 61. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու կարգը

1. Մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման այն անդամ պետությունում, որի մաքսային մարմինն իրականացնում է ապրանքների բացթողումը՝ բացառությամբ ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողնելու և սույն Օրենսգրքի 38-րդ գլխին համապատասխան՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներ բաց թողնելու դեպքում, կամ որի տարածքում բացահայտվել են սույն Օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ կետում, 97-րդ հոդվածի 3-րդ կետում, 103-րդ հոդվածի 4-րդ կետում, 279-րդ հոդվածի 8-րդ կետում, 280-րդ հոդվածի 4-րդ կետում և 288-րդ հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքները, կամ որի տարածքում բացահայտվել է Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման փաստը՝ բացառությամբ Միության մաքսային սահմանով ոչ հավաստի մաքսային հայտարարագրմամբ ապրանքների անօրինական տեղափոխման դեպքի:

Սույն Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների դեպքում Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերով հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի գումարների և ապրանքների բացթողման ժամանակ վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարների տարբերության չափով կամ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով կամ երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրերով սահմանված այլ չափով ներմուծման մաքսատուրքերը կարող են վճարվել այնպիսի անդամ պետությունում, որն այն անդամ պետությունը չէ, որի մաքսային մարմինն իրականացնում է ապրանքների բացթողումը, եթե դա նախատեսված է Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով և (կամ) երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրերով:

2. Սույն Օրենսգրքի 153-րդ հոդվածի 5-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների համար ներմուծման

մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման այն անդամ պետությունում, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողումը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, եթե սույն կետի երկրորդ պարբերությամբ և սույն հոդվածի 3-րդ կետով այլ բան սահմանված չէ:

Սույն Օրենսգրքի 153-րդ հոդվածի 5-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված միջազգային փոստային առաքանիների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման այն անդամ պետությունում, որտեղ գտնվում է նշանակման մաքսային մարմինը:

3. Այն դեպքում, երբ սույն կետին համապատասխան պարզվում (հաստատվում) է, որ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները գտնվում են այլ անդամ պետության տարածքում, որն այն անդամ պետությունը չէ, որի մաքսային մարմնի կողմից իրականացվել է ապրանքների բացթողումը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման այն անդամ պետությունում, որի տարածքում գտնվում են այդպիսի ապրանքները, եթե այլ բան սահմանված չէ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով:

Այն դեպքում, երբ չի պարզվում (հաստատվում), որ ապրանքները գտնվում են այլ անդամ պետության տարածքում, որն այն անդամ պետությունը չէ, որի մաքսային մարմնի կողմից իրականացվել է ապրանքների բացթողումը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, սակայն սույն կետին համապատասխան պարզվել (հաստատվել) է, որ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները արտահանվել են մեկ անդամ պետության տարածքից և ներմուծվել են մեկ այլ անդամ պետության տարածք, ապա ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման այն անդամ պետությունում, որի տարածք ներմուծումը պարզվել (հաստատվել) է, եթե այլ բան սահմանված չէ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով:

Այն անդամ պետության տարածքում ապրանքների գտնվելը կամ դրանց ներմուծումն այնպիսի անդամ պետության տարածք, որի մաքսային մարմինը չի իրականացրել ապրանքների բացթողումը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, պարզվում (հաստատվում) է մաքսային հսկողություն անցկացնելու ընթացքում ստացված և (կամ) այդպիսի մաքսային հսկողություն անցկացնելու արդյունքների հիման վրա կազմված փաստաթղթերի հիման վրա, ինչպես նաև վարչական վարույթի (ընթացակարգի), քրեական գործերով քննության կամ ստուգման ընթացքում, որոնք իրականացվում են (անցկացվում են) անդամ պետությունների մաքսային կամ այլ պետական մարմինների կողմից՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Սույն կետը կիրառելու նպատակներով ապրանքների՝ այն անդամ պետության տարածքում գտնվելը, որի մաքսային մարմինը չի իրականացրել ապրանքների բացթողումը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, կամ դրանք այդ անդամ պետության տարածք ներմուծումը պարզվելը (հաստատվելը) պետք է ճանաչվի այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որն իրականացրել է ապրանքների բացթողումը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան:

Այն դեպքերի համար, երբ պարզվում (հաստատվում) է, որ օտարերկրյա ապրանքները գտնվում են այնպիսի անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմինը չի իրականացրել ապրանքների բացթողումը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, անդամ պետությունների մաքսային մարմինների միջև փոխգործակցության կամ անդամ պետության տարածք այդպիսի ապրանքների ներմուծման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

4. Սույն Օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում Միության՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների համար արտահանման մաքսատուրքերը ենթակա են վճարման այն անդամ պետությունում, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողումը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան:

5. Ներմուծման մաքսատուրքերը վճարվում են այն անդամ պետության արժույթով, որտեղ ներմուծման մաքսատուրքերը ենթակա են վճարման, եթե այլ բան սահմանված չէ «Միության մասին» պայմանագրով:

Արտահանման մաքսատուրքերը, հարկերը վճարվում են այն անդամ պետության արժույթով, որտեղ արտահանման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման, եթե Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով, անդամ պետությունների երկկողմ միջազգային պայմանագրերով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

6. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու ձևերն ու միջոցները, ինչպես նաև դրանք վճարելու պարտավորությունը կատարելու պահը (վճարելու օրը) սահմանվում են այն անդամ պետության օրենսդրությամբ, որտեղ մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման:

7. Ներմուծման մաքսատուրքերը վճարվում են «Միության մասին» պայմանագրին համապատասխան սահմանվող հաշիվներին:

Արտահանման մաքսատուրքերը վճարվում են այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանվող հաշիվներին, որտեղ այդպիսի արտահանման մաքսատուրքերը ենթակա են վճարման սույն հոդվածին համապատասխան, եթե Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով և (կամ) անդամ պետությունների երկկողմ միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

Հարկերը վճարվում են այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանվող հաշիվներին,

որտեղ հարկերը ենթակա են վճարման սույն հոդվածին համապատասխան:

8. Արտահանման մաքսատուրքերը վճարելու առանձնահատկությունները կարող են սահմանվել Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով և (կամ) անդամ պետությունների երկկողմ միջազգային պայմանագրերով:

9. Վճարողի հաշվին հանձնարարականի կատարման համար բավարար դրամական միջոցների (փողի) առկայության դեպքում բանկն իրավունք չունի ուշացնելու վճարողի՝ մաքսատուրքերի, հարկերի գումարների փոխանցման հանձնարարության կատարումը և պարտավոր է կատարել այն 1 գործառնական օրվա ընթացքում, եթե այն կատարելու համար անդամ պետությունների օրենսդրությամբ այլ ժամկետ սահմանված չէ:

Գլուխ 9

Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը

Հոդված 62. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման ընդհանուր պայմանները

1. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է սույն Օրենսգրքի 58-րդ, 120-122-րդ, 143-րդ, 177-րդ և 304-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, եթե նշված հոդվածներին համապատասխան այլ բան սահմանված չէ:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել այլ դեպքեր, երբ ապահովվում է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումը:

2. Անդամ պետությունների օրենսդրությամբ սույն Օրենսգրքին համապատասխան այնպիսի դեպքեր սահմանվելու դեպքում, երբ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում չի տրամադրվում, անդամ պետությունների այդպիսի օրենսդրությամբ կարող են սահմանվել կարգը և պայմանները, որոնք պահպանելու դեպքում այդպիսի ապահովում չի տրամադրվում:

3. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է մաքսատուրքեր, հարկեր վճարողի կամ այլ անձի կողմից՝ սույն Օրենսգրքով սահմանված դեպքերում:

«Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների դեպքում վճարողի փոխարեն մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումը կարող է ապահովվել առաքողի (էքսպեդիտորի) և (կամ) այլ անձի կողմից, եթե այդ անձն ունի այն ապրանքները տիրապետելու, օգտագործելու և (կամ) տնօրինելու իրավունք, որոնց համար ապահովվում է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումը, եթե սույն Օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

Մաքսային ներկայացուցիչն իրավունք ունի սույն գլխին համապատասխան ապահովելու մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն այն դեպքում, երբ մաքսային ներկայացուցիչը մաքսատուրքերը, հարկերը վճարողի հետ կրում է սույն Օրենսգրքի 405-րդ հոդվածին համապատասխան մաքսատուրքերը, հարկերը վճարելու համապարտ պարտավորություն: Այն դեպքում, երբ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովված է մաքսային ներկայացուցչի կողմից, սույն Օրենսգրքով նախատեսված այնպիսի հանգամանքների ի հայտ գալու դեպքում, որոնց պարագայում մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման, մաքսատուրքերը, հարկերը վճարելու այդպիսի պարտավորությունը կատարվում է մաքսային ներկայացուցչի և իր կողմից ներկայացվող անձի կողմից՝ համապարտության կարգով՝ անկախ սույն Օրենսգրքի 405-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի դրույթներից:

4. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրվում է ապրանքների բացթողումն իրականացնող մաքսային մարմնին՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 146-րդ հոդվածում նշված դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան մաքսատուրքերը, հարկերը վճարելու այդպիսի պարտավորության կատարման ընդհանուր ապահովումը կարող է տրամադրվել այլ մաքսային մարմնի:

Հոդված 63. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման եղանակները

1. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է հետևյալ միջոցներով՝

1) դրամական միջոցներ (փող).

2) բանկային երաշխիք.

3) երաշխավորություն.

4) գույքի գրավ:

2. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել մաքսատուրքերը, հարկերը վճարելու

պարտավորության կատարումն ապահովելու՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված եղանակներից տարբեր եղանակներ:

3. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է սույն հոդվածի 1-ին կետում նշված կամ սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված եղանակներից ցանկացածով:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են նախատեսվել այնպիսի դեպքեր, երբ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու որոշակի միջոցներով՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների համար մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության:

Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումը կարող է ապահովվել սույն Օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետում նշված անձանց կողմից ընտրված մի քանի միջոցներով՝ հաշվի առնելով սույն կետի երկրորդ պարբերությունը:

Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովող անձն իրավունք ունի մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովող միջոցներից մեկը փոխարինել մյուսով՝ հաշվի առնելով սույն կետի երկրորդ պարբերությունը, եթե մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման փոխարինվող ապահովման վրա չի տարածվել բռնագանձում՝ սույն Օրենսգրքի 11-րդ գլխին համապատասխան:

4. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումը պետք է ապահովվի անընդմեջ՝ մինչև մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության դադարումը՝ սույն Օրենսգրքին համապատասխան:

5. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման գործողության ժամկետը, որը տրամադրվում է սույն հոդվածի 1-ին կետի 2-4-րդ ենթակետերում նշված կամ սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված եղանակներով, այդ թվում՝ մաքսային մարմնի կողմից ավելի վաղ ընդունված ապահովման միջոցի փոխարեն, պետք է բավարար լինի՝ մաքսային մարմնի կողմից մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահոված անձին ժամանակին այդ միջոցների շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարման պահանջ ուղարկելու համար:

6. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու միջոցների կիրառման կարգը, մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրելու օրը, ինչպես նաև արժույթը, որով տրամադրվում է այդպիսի ապահովումը, սահմանվում են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի մաքսային մարմնին տրամադրվում է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը:

Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու միջոցների կիրառման առանձնահատկությունները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի դեպքում կարող են սահմանվել սույն Օրենսգրքի 146-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված՝ Միության շրջանակներում միջազգային պայմանագրով:

7. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել սույն հոդվածի 1-ին կետի 2-4-րդ ենթակետերում նշված կամ սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված եղանակներով մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը վերադարձնելու կարգը և դեպքերը:

Հոդված 64. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովումը

1. Այն դեպքում, երբ միևնույն անձի կողմից որոշակի ժամանակահատվածում կատարվում է մի քանի մաքսային գործառնություն, մաքսային բոլոր այդպիսի գործառնությունները կատարելու դեպքում առաջացող՝ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու համար կարող է տրամադրվել մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովում:

2. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովումը կարող է կիրառվել, եթե՝

1) մաքսային բոլոր գործառնությունները կատարվում են այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմնին տրամադրվել է ընդհանուր ապահովումը.

2) մաքսային գործառնությունները կատարվում են մի քանի անդամ պետությունների տարածքներում՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրում (տրանսպորտային փոխադրում) իրականացնելիս:

3. Մաքսային մարմիններն ընդունում են մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովումը, եթե այդպիսի ընդհանուր ապահովման հաշվին սույն Օրենսգրքի 69-րդ հոդվածին համապատասխան մաքսատուրքերի, հարկերի բռնագանձում իրականացնող ցանկացած մաքսային մարմնի կողմից կարող են բռնագանձվել այն մաքսատուրքերը, հարկերը, որոնք վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է այդպիսի ընդհանուր ապահովմամբ:

4. Այն դեպքում, երբ մաքսային բոլոր գործառնությունները կատարվում են այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմնին տրամադրվել է ընդհանուր ապահովումը, մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովումը կիրառելու կարգը սահմանվում է տվյալ անդամ պետության օրենսդրությամբ:

Անդամ պետության օրենսդրությամբ այդպիսի կարգ սահմանելու դեպքում կարող են սահմանվել այն դեպքերն ու պայմանները, որոնց պարագայում այն մաքսատուրքերի, հարկերի ընդհանուր չափը, որոնք վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է այդպիսի ընդհանուր ապահովմամբ, գերազանցում է այդպիսի ընդհանուր ապահովման չափը և այդպիսի գերազանցման սահմանները:

5. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովումը կիրառելու կարգն այն դեպքում, երբ մաքսային գործառնությունները կատարվում են մի քանի անդամ պետությունների տարածքներում՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրում (տրանսպորտային փոխադրում) իրականացնելիս, սահմանվում է սույն Օրենսգրքի 146-րդ և 147-րդ հոդվածներին համապատասխան:

Հոդված 65. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չափը որոշելը

1. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չափը որոշվում է՝ ելնելով այն մաքսատուրքերի, հարկերի գումարներից, որոնք ենթակա կլինեին վճարման՝ ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով կամ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կամ արտահանման մաքսատուրքերի գծով արտոնությունների կիրառման՝ համապատասխանաբար այն անդամ պետությունում, որի մաքսային մարմինն իրականացնում է ապրանքների բացթողումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն հոդվածին, սույն Օրենսգրքի 146-րդ հոդվածին և 287-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է այլ չափով:

2. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է նախատեսվել մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չափում ներառել մաքսային մարմինների կողմից ապրանքների բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման դիմաց վճարման ենթակա մաքսավճարների գումարները:

3. Եթե մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չափը որոշելիս հնարավոր չէ ճշգրիտ որոշել վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարը՝ ապրանքների (բնույթի, անվանման, քանակի, ծագման և (կամ) մաքսային արժեքի) մասին ճշգրիտ տեղեկությունների բացակայության պատճառով, մաքսատուրքերի, հարկերի այդ գումարը որոշվում է ապրանքների արժեքի և (կամ) դրանց՝ բնաիրային արտահայտությամբ ֆիզիկական բնութագրերի (քանակի, զանգվածի, ծավալի կամ այլ բնութագրերի), մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերից ամենամեծի հիման վրա, որոնք կարող են որոշվել առկա տեղեկությունների հիման վրա, որոնց օգտագործման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

4. Սույն Օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածներով նախատեսված առանձնահատկություններով ապրանքների բացթողման դեպքում մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չափը որոշվում է որպես այն մաքսատուրքերի, հարկերի գումար, որոնք կարող են ենթակա լինել լրացուցիչ վճարման՝ մաքսային հսկողության, մաքսային փորձաքննության արդյունքներով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ և 5-րդ կետերը:

5. Սույն Օրենսգրքի 121-րդ հոդվածով նախատեսված առանձնահատկություններով ապրանքների բացթողման դեպքում մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման գումարները հաշվարկելու համար ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ տվյալների նկատմամբ մաքսային հսկողություն անցկացնելու դեպքում կարող են, մասնավորապես, օգտագործվել՝

1) նույն դասի կամ տեսակի ապրանքների արժեքի մասին մաքսային մարմնի տրամադրության տակ եղած տեղեկությունները.

2) ապրանքների մաքսային արժեքը՝ առանց հաշվի առնելու հայտագրված նվազեցումները և զեղչերը, եթե մաքսային մարմինը կասկածներ ունի դրանց հիմնավորվածության վերաբերյալ.

3) ապրանքների մաքսային արժեքը՝ հաշվի առնելով փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի նկատմամբ լրացուցիչ հավելագրումների հնարավոր մեծությունը, եթե մաքսային մարմինը կասկածներ ունի հայտագրված լրացուցիչ հավելագրումների հիմնավորվածության վերաբերյալ:

6. Այն դեպքում, երբ սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 13-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման պայմանը մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորության կատարման ապահովում տրամադրելն է, այդ ապահովման չափը սահմանելիս մաքսատուրքերի, հարկերի գումարը սահմանվում է՝ ելնելով մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումի մեջ և այդ դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերում պարունակվող տեղեկություններից՝ հաշվի առնելով սույն հոդվածի 1-ին և 3-րդ կետերը: Մաքսատուրքերի, հարկերի այն գումարը որոշելու համար, որից ելնելով սահմանվում է մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարման ապահովման չափը, կիրառվում են ապրանքների բացթողման մասին դիմումի գրանցման օրվա դրությամբ գործող

մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերը՝ նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը:

Այն դեպքում, երբ մաքսատուրքերի, հարկերի նշված գումարի որոշման համար անհրաժեշտ է կատարել արտարժույթի վերահաշվարկ անդամ պետության արժույթի, այդպիսի վերահաշվարկը կատարվում է ապրանքների բացթողման մասին դիմումի գրանցման օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝ նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը:

7. Անդամ պետությունների օրենսդրությամբ ապրանքների առանձին տեսակների նկատմամբ կարող են սահմանվել մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման ֆիքսված չափեր՝ հաշվի առնելով սույն հոդվածի 1-3-րդ կետերով նախատեսված պահանջները, իսկ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների դեպքում՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 146-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պահանջները:

Գլուխ 10

Մաքսատուրքերի, հարկերի և այլ դրամական միջոցների (փողի) գումարների վերադարձը (հաշվանցումը)

Հոդված 66. Ավել վճարված կամ ավել բռնագանձված մաքսատուրքերը, հարկերը

Ավել վճարված կամ ավել բռնագանձված մաքսատուրքեր, հարկեր են համարվում որպես մաքսատուրքեր, հարկեր վճարված կամ բռնագանձված դրամական միջոցները (դրամը), որոնք նույնականացվել են որպես որոշակի ապրանքների համար մաքսատուրքերի, հարկերի որոշակի տեսակներ ու գումարներ և որոնց չափը գերազանցում է սույն Օրենսգրքին և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի չափը:

Հոդված 67. Որպես մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում մուտքագրված մաքսատուրքերի, հարկերի, կանխավճարների, դրամական միջոցների (փողի), ինչպես նաև այլ դրամական միջոցների (փողի) գումարների վերադարձը (հաշվանցումը)

1. Մաքսատուրքերի, հարկերի գումարները սույն հոդվածին համապատասխան ենթակա են վերադարձման (հաշվանցման) հետևյալ դեպքերում՝

1) մաքսատուրքերը, հարկերը համարվում են ավել վճարված կամ ավել բռնագանձված մաքսատուրքեր, հարկեր՝ սույն Օրենսգրքի 66-րդ հոդվածին համապատասխան.

2) «Միության մասին» պայմանագրին համապատասխան սահմանված հաշիվներին վճարված ներմուծման մաքսատուրքերը չեն նույնականացվել որպես որոշակի ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերի գումարներ.

3) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող հաշիվներին վճարված արտահանման մաքսատուրքերը, հարկերը չեն նույնականացվել որպես որոշակի ապրանքների համար արտահանման մաքսատուրքերի, հարկերի գումարներ.

4) ապրանքները բռնագանձվել կամ դարձել են անդամ պետության սեփականություն (եկամուտ) այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, եթե այդ ապրանքների առնչությամբ մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորությունը նախկինում կատարվել է, բացառությամբ այն դեպքի, երբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարվել են «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարում կիրառելու ժամանակահատվածում.

5) հայտագրված մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը մերժված է, եթե մաքսային հայտարարագիրը կամ նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելու ժամանակ առաջացած՝ մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորությունը նախկինում կատարվել է.

6) մաքսային հայտարարագիրը հետկանչված է սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան և (կամ) ապրանքների բացթողումն չեղյալ է ճանաչվել սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան, եթե մաքսային հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորությունը նախկինում կատարվել է.

7) սույն Օրենսգրքի 237-րդ և 242-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում.

8) սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված՝ մաքսային հայտարարագրման առանձնահատկությունների առնչությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում.

9) սույն Օրենսգրքով և (կամ) Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով նախատեսված այլ

դեպքերում:

2. Ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի գումարների վերադարձը (հաշվանցումը) իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ ապրանքների հայտարարագրում հայտագրված՝ հաշվարկված մաքսատուրքերի, հարկերի վերաբերյալ տվյալներում սահմանված կարգով փոփոխություններ (լրացումներ) կատարելու կամ մաքսային մուտքի օրդերում կամ սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 24-րդ կետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանված այլ մաքսային փաստաթղթում կամ սույն Օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ կետում և 277-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված մաքսային փաստաթղթերում հաշվարկված մաքսային վճարների վերաբերյալ տվյալներում սահմանված կարգով ճշգրտումներ կատարելու պայմանով, և ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի վերադարձման (հաշվանցման) այլ պայմաններ պահպանելու դեպքում, որոնք սահմանվում են այն անդամ պետության օրենսդրությամբ, որտեղ կատարվել են մաքսատուրքերի, հարկերի վճարումը և (կամ) բռնագանձումը:

3. Սույն հոդվածի 1-ին կետի 4-9-րդ ենթակետերում նշված դեպքերում մաքսատուրքերի, հարկերի գումարների վերադարձը (հաշվանցումը) իրականացվում է մաքսատուրքերի, հարկերի գումարների վերադարձին (հաշվանցմանը) հանգեցնող հանգամանքների ի հայտ գալու մասին անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված կարգով մաքսային մարմին հաստատում ներկայացնելու դեպքում և մաքսատուրքերի, հարկերի գումարների վերադարձման (հաշվանցման) այլ պայմանները պահպանելու դեպքում, որոնք սահմանվում են այն անդամ պետության օրենսդրությամբ, որտեղ կատարվել են մաքսատուրքերի, հարկերի վճարումը և (կամ) բռնագանձումը:

4. Ներմուծման մաքսատուրքերի գումարների վերադարձը (հաշվանցումը) իրականացվում է այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, որտեղ կատարվել է այդպիսի ներմուծման մաքսատուրքերի վճարումը և (կամ) բռնագանձումը՝ հաշվի առնելով «Միության մասին» պայմանագրի դրույթները:

5. Արտահանման մաքսատուրքերի գումարների վերադարձը (հաշվանցումը) իրականացվում է այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, որտեղ կատարվել են այդպիսի արտահանման մաքսատուրքերի վճարումը և (կամ) բռնագանձումը, եթե Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով և (կամ) անդամ պետությունների երկկողմ միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

6. Հարկերի գումարների վերադարձը (հաշվանցումը) իրականացվում է այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, որտեղ կատարվել են այդպիսի հարկերի վճարումը և (կամ) բռնագանձումը:

7. Կանխավճարների, այլ դրամական միջոցների (փողի) գումարների վերադարձը (հաշվանցումը) իրականացվում է այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում այն դեպքերում, որտեղ կատարվել է այդպիսի կանխավճարների, այլ դրամական միջոցների (փողի) վճարումը:

8. Որպես մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում մուտքագրված դրամական միջոցների (փողի) վերադարձը (հաշվանցումը) իրականացվում է այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որտեղ տրամադրվել է տվյալ ապահովումը՝ այդ անդամ պետության օրենսդրությամբ սահմանվող կարգով և ժամկետներում:

9. Որպես մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում մուտքագրված դրամական միջոցների (փողի) գումարների վերադարձ (հաշվանցում) իրականացվում է հետևյալ դեպքերում՝

1) մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը, որի կատարումն ապահովված է որպես մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում մուտքագրված դրամական միջոցներով (փողով), կատարվել է ամբողջ ծավալով, դադարեցվել է կամ չի առաջացել.

2) որպես մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում՝ մուտքագրված դրամական միջոցների (փողի) փոխարեն մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրվել է այլ միջոցով:

10. Եթե վճարողն ունի սահմանված ժամկետում մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը, տույժերը, տոկոսները վճարելու չկատարված (ամբողջությամբ կամ մասնակիորեն) պարտավորություն, ապա որպես մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում մուտքագրված մաքսատուրքերի, հարկերի, կանխավճարների, դրամական միջոցների (փողի), ինչպես նաև այլ դրամական միջոցների (փողի) գումարների վերադարձ՝ այդպիսի չկատարված պարտավորության չափով չի կատարվում:

Անդամ պետության օրենսդրությամբ կարող է սահմանված լինել, որ որպես մաքսատուրքերը, հարկերը, ինչպես նաև այլ դրամական միջոցները (փողը) վճարելու պարտավորության կատարման ապահովում մուտքագրված մաքսատուրքերի, հարկերի, կանխավճարների, դրամական միջոցների (փողի) գումարների հաշվանցում չի կատարվում, եթե վճարողն ունի սահմանված ժամկետում մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը, տույժերը, տոկոսները վճարելու չկատարված (ամբողջությամբ կամ մասնակիորեն) պարտավորություն՝ բացառությամբ նշված պարտավորությունը կատարելու հաշվին այդպիսի մաքսատուրքերի, հարկերի, կանխավճարների, դրամական միջոցների (փողի) գումարների հաշվանցման:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել այլ դեպքեր, երբ որպես մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում մուտքագրված մաքսատուրքերի, հարկերի, կանխավճարների, դրամական միջոցների (փողի), ինչպես նաև այլ դրամական միջոցների (փողի) գումարների վերադարձ (հաշվանցում) չի կատարվում:

Գլուխ 11

Մաքսատուրքերի, հարկերի բռնագանձումը

Հոդված 68. Մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման մասին ընդհանուր դրույթներ

1. Սույն Օրենսգրքի 55-րդ հոդվածի 7-րդ կետում նշված դեպքերում մաքսային մարմինը միջոցներ է ձեռնարկում մաքսատուրքերը, հարկերը սույն գլխին համապատասխան բռնագանձելու համար:

2. Մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման միջոցներին է դասվում մաքսատուրքերի, հարկերի բռնագանձումը վճարողի դրամական միջոցների (փողի) և (կամ) այլ գույքի հաշվին, այդ թվում՝ այն մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների հաշվին, որոնք ենթակա են վերադարձման սույն Օրենսգրքի 67-րդ և 76-րդ հոդվածներին համապատասխան, և (կամ) կանխավճարների գումարների հաշվին, մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման, մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովման, լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման հաշվին, եթե սույն Օրենսգրքով և (կամ) «Միության մասին» պայմանագրով այլ բան սահմանված չէ:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված միջոցներից բացի անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման այնպիսի միջոց, ինչպիսին է այն ապրանքների վրա բռնագանձում տարածելը, որոնց համար մաքսատուրքեր, հարկեր չեն վճարվել, և մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման այլ միջոցներ:

Բռնագանձման տարածումն այնպիսի ապրանքների վրա, որոնց համար մաքսատուրքերը, հարկերը չեն վճարվել, դադարեցնում է այդպիսի ապրանքների համար մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորությունը:

4. Մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման միջոցներ չեն կիրառվում հետևյալ դեպքերում՝

1) չվճարված մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման ժամկետը, որը սահմանված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի մաքսային մարմնի կողմից իրականացվում է մաքսատուրքերի, հարկերի բռնագանձումը, լրացել է.

2) մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարել է մաքսատուրքերը, հարկերը վճարելու արդյունքում կամ սույն Օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված այլ հանգամանքների արդյունքում.

3) մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարել է սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված՝ մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման միջոցների կիրառման արդյունքում.

4) մաքսատուրքերի, հարկերի գումարները, որոնց բռնագանձումը հնարավոր չի եղել այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի մաքսային մարմինն իրականացրել է այդպիսի գումարների բռնագանձումը, ճանաչվել են բռնագանձման համար անհուսալի.

5) Հանձնաժողովի կողմից սահմանվող՝ ներմուծման մաքսատուրքերին առնչվող այլ դեպքեր.

6) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող՝ արտահանման մաքսատուրքերին, հարկերին առնչվող այլ դեպքեր:

5. Մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման միջոցներ չեն կիրառվում այն ապրանքների նկատմամբ, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգի իրականացման) ընթացքում, որոնց վերաբերյալ կայացվել է դրանք վերադարձնելու մասին որոշում և որոնք ենթակա են մաքսային հայտարարագրման՝ սույն Օրենսգրքին համապատասխան, մինչև այդպիսի ապրանքները վերադարձնելու մասին որոշում ընդունելն առաջացած՝ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության նկատմամբ, սույն Օրենսգրքի 98-րդ հոդվածի 4-րդ կետում նշված որոշումներից մեկն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև այդ ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու կամ դրանք մաքսային ընթացակարգերից մեկով ձևակերպելու օրը:

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում նշված՝ մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման միջոցները կիրառվում են այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի մաքսային մարմնի կողմից իրականացվում է մաքսատուրքերի, հարկերի բռնագանձումը:

Հոդված 69. Մաքսատուրքերի, հարկերի բռնագանձումն իրականացնող մաքսային մարմինը

1. Մաքսատուրքերը, հարկերը բռնագանձվում են այն մաքսային մարմնի կողմից, որն իրականացրել է ապրանքների բացթողումը կամ այլ մաքսային մարմնի կողմից, որը որոշվում է այն անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ, որտեղ կատարվել է ապրանքների բացթողումը՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

Միության մաքսային սահմանով անօրինականորեն տեղափոխված ապրանքների համար, բացառությամբ Միության

մաքսային սահմանով ոչ հավաստի հայտարարագրմամբ անօրինականորեն տեղափոխված ապրանքների, մաքսատուրքերը, հարկերը բռնագանձվում են այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որի տարածքում բացահայտվել է մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման փաստը:

Սույն Օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ կետում, 97-րդ հոդվածի 3-րդ կետում, 103-րդ հոդվածի 4-րդ կետում, 279-րդ հոդվածի 8-րդ կետում, 280-րդ հոդվածի 4-րդ կետում և 288-րդ հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում մաքսատուրքերը, հարկերը բռնագանձվում են այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որի տարածքում հայտնաբերվել են այդպիսի հանգամանքները:

2. Սույն Օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությունում և 3-րդ կետում նշված դեպքերում մաքսատուրքերը, հարկերը բռնագանձվում են այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որտեղ սույն Օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությանը և 3-րդ կետին համապատասխան մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման, եթե սույն հոդվածի 3-րդ կետով այլ բան սահմանված չէ:

3. Այն դեպքում, երբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ տրամադրվել է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում, սույն Օրենսգրքի 153-րդ հոդվածի 5-րդ կետում և 309-րդ հոդվածի 3-րդ կետում նշված նախատեսված հանգամանքների ի հայտ գալու դեպքում չվճարված մաքսատուրքերը, հարկերը բռնագանձվում են այն անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող մաքսային մարմնի կողմից, որի մաքսային մարմնին տրամադրվել է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում՝ այդպիսի տրամադրման հաշվին:

Եթե «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ որպես այդպիսի ապրանքների հայտարարատու հանդես է գալիս լիազորված տնտեսական օպերատորը կամ մաքսային փոխադրողը, ապա սույն Օրենսգրքի 153-րդ հոդվածի 5-րդ կետով և 309-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված հանգամանքների ի հայտ գալու դեպքում չվճարված մաքսատուրքերը, հարկերը բռնագանձվում են այն անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող մաքսային մարմնի կողմից, որի մաքսային մարմնի կողմից որպես «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատու հանդես եկող անձն ընդգրկվել է լիազորված տնտեսական օպերատորների կամ մաքսային փոխադրողների ռեեստրում:

4. Մաքսային մարմինների փոխգործակցությունը մաքսատուրքերը, հարկերը սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան բռնագանձելիս և մաքսատուրքերի, հարկերի բռնագանձված գումարներն այն անդամ պետությանը փոխանցելիս, որտեղ մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման, իրականացվում է սույն Օրենսգրքի 1-ին հավելվածով նախատեսված կարգով, իսկ նշված հավելվածով չկարգավորվող մասով՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող կարգով:

Հոդված 70. Մաքսային վճարները, տույժերը, տոկոսները բռնագանձման համար անհուսալի ճանաչելը և դրանց դուրսգրումը

Մաքսային վճարների, տույժերի, տոկոսների գումարները, որոնց բռնագանձումը հնարավոր չի եղել, ճանաչվում են բռնագանձման համար անհուսալի և դուրս են գրվում այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու հիմքերով, որի մաքսային մարմինն իրականացրել է այդպիսի գումարների բռնագանձումը:

Գլուխ 12

Ներքին շուկայի պաշտպանության նպատակով կիրառվող հատուկ, հակագնագցման, փոխհատուցման և այլ տուրքեր

Հոդված 71. Ներքին շուկայի պաշտպանության նպատակով հատուկ, հակագնագցման, փոխհատուցման և այլ տուրքերի կիրառումը

1. Միությունում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի տեսքով ներքին շուկայի պաշտպանության միջոցների ներմուծման դեպքում այդ տուրքերը ենթակա են վճարման սույն Օրենսգրքով սահմանված կարգով:

Հատուկ քվոտա սահմանելու միջոցով Միությունում ներքին շուկայի պաշտպանության միջոցներ ներմուծելու դեպքում այն ապրանքների ներմուծման ժամանակ, որոնց նկատմամբ սահմանվել է քվոտայից դուրս կամ այդ քվոտան գերազանցող ծավալներով հատուկ պաշտպանական միջոց, հատուկ տուրքը ենթակա է վճարման սույն Օրենսգրքով սահմանված կարգով:

Միությունում «Միության մասին» պայմանագրի 50-րդ հոդվածին համապատասխան տուրքերի տեսքով ներքին շուկայի պաշտպանության միջոցներ սահմանելու դեպքում, եթե այլ բան որոշված չէ Հանձնաժողովի կողմից, այդ տուրքերը սույն Օրենսգրքին համապատասխան մաքսատուրքեր, հարկեր վճարող հանդիսացող անձանց կողմից

ենթակա են վճարման հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման համար նախատեսված դեպքերում և կարգով:

2. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարող են հանդիսանում հայտարարատուն կամ այլ անձինք, որոնց համար առաջացել է հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորություն այն ապրանքների մասով, որոնց նկատմամբ կիրառվում է ներքին շուկայի պաշտպանության միջոց՝ հատուկ, հակագնագցման կամ փոխհատուցման տուրք, հատուկ քվոտաներ ներմուծելու միջոցով:

3. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկումն ու վճարումն իրականացվում են սույն Օրենսգրքով ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման և վճարման համար սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն գլխով և «Միության մասին» պայմանագրով նախատեսված առանձնահատկությունները:

4. Սույն գլխի դրույթները չեն կիրառվում Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ:

Հոդված 72. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացումն ու դադարումը: Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը չվճարելու դեպքերը

1. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան, սույն Օրենսգրքի 91-րդ, 97-րդ, 103-րդ, 136-րդ, 137-րդ, 153-րդ, 162-րդ, 174-րդ, 198-րդ, 208-րդ, 216-րդ, 225-րդ, 241-րդ, 247-րդ, 279-րդ, 284-րդ և 295-րդ հոդվածներին համապատասխան, ինչպես նաև սույն Օրենսգրքի 254-րդ հոդվածին համապատասխան Հանձնաժողովի կողմից և Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

2. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորությունը դադարում է

1) սույն Օրենսգրքի 91-րդ, 97-րդ, 103-րդ, 136-րդ, 137-րդ, 153-րդ, 162-րդ, 174-րդ, 198-րդ, 208-րդ, 216-րդ, 225-րդ, 241-րդ, 247-րդ, 279-րդ, 284-րդ և 295-րդ հոդվածներով նախատեսված հանգամանքների ի հայտ գալու և հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորության դադարման հետ կապված պայմանների պահպանման դեպքում;

2) սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան;

3) սույն Օրենսգրքի 254-րդ հոդվածին համապատասխան Հանձնաժողովի կողմից և Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

4) սույն Օրենսգրքի 73-րդ հոդվածի 4-րդ կետում և 77-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված դեպքերում;

5) այն դեպքում, երբ սույն Օրենսգրքի 77-րդ հոդվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետին համապատասխան՝ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձման միջոցներ չեն կիրառվում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն գումարի նկատմամբ, որն անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ճանաչվել է բռնագանձման համար անհուսալի:

3. Հանձնաժողովն իրավունք ունի որոշելու այն հանգամանքները, որոնց պարագայում դադարում է հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը այն դեպքերում, երբ միևնույն ապրանքների համար հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորությունը տարբեր անձանց համար առաջացել է տարբեր հանգամանքներում և (կամ) բազմիցս, այդ թվում, այն դեպքում, երբ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորությունն առաջացել է մեկ անդամ պետությունում, իսկ այն հանգամանքները, որոնց ժամանակ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորությունը դադարում է, ի հայտ են եկել այլ անդամ պետությունում, ինչպես նաև այդ հանգամանքների ի հայտ գալու հաստատման գործում մաքսային մարմինների փոխգործակցության կարգը:

4. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը չեն վճարվում՝

1) այն ապրանքների համար, որոնք ձևակերպվում են (ձևակերպվել են) այնպիսի մաքսային ընթացակարգով, որով ձևակերպելու պայմաններով չի նախատեսվում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարում մինչև այդպիսի մաքսային ընթացակարգի գործողության ավարտը կամ դադարումը, և այդ մաքսային ընթացակարգին համապատասխան այդ ապրանքները օգտագործելու պայմանները պահպանելու դեպքում.

2) ապրանքների առանձին կատեգորիաների համար, որոնք սույն Օրենսգրքի 272-րդ հոդվածի 4-րդ կետին և 281-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ ենթակա չեն մաքսային ընթացակարգերով ձևակերպման՝ ապրանքների այդ կատեգորիաների համար սույն Օրենսգրքով սահմանված օգտագործման պայմանները պահպանելու դեպքում:

5. Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը առաջանում, դադարում է և ենթակա է կատարման այն հանգամանքներն ի հայտ գալու դեպքում, որոնք սահմանված են ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորության առաջացման, դադարման և կատարման համար սույն Օրենսգրքի 56-րդ հոդվածով՝ հաշվի առնելով Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով նախատեսված առանձնահատկությունները:

Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այն չափերով, ինչպես դա կարվեր, եթե ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են սույն գլխին համապատասխան, հաշվի առնելով Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով նախատեսված առանձնահատկությունները: Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար կիրառվում են Միության մաքսային սահմանը հատելու օրվա դրությամբ գործող հատուկ հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը, իսկ եթե այդ օրը որոշված չէ՝ Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման փաստը բացահայտելու օրվա դրությամբ գործող փոխարժեքներով:

Այն դեպքում, երբ ապրանքների մաքսային արժեքը որոշելու, ինչպես նաև հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար անհրաժեշտ է կատարել արտարժույթի վերահաշվարկ անդամ պետության արժույթի, այդպիսի վերահաշվարկը կատարվում է ապրանքները Միության մաքսային սահմանով անցնելու օրվա դրությամբ գործող փոխարժեքներով, իսկ եթե այդ օրը որոշված չէ՝ Միության մաքսային սահմանով ապրանքներն անօրինական տեղափոխման փաստը բացահայտելու օրվա դրությամբ գործող փոխարժեքներով: Եթե մաքսային մարմինը չունի ապրանքների (դրանց բնույթի, անվանման, քանակի, ծագման և (կամ) մաքսային արժեքի) մասին ճշգրիտ տեղեկություններ, վճարման ենթակա հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար բազան որոշվում է մաքսային մարմնի մոտ առկա տեղեկությունների հիման վրա, իսկ ապրանքների դասակարգումը իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ կետը:

Եթե ապրանքի ծածկագիրը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան որոշվում է 10 նիշից պակաս քանակով խմբավորման մակարդակով, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում է նման խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով ապրանքների՝ սույն Օրենսգրքի 4-րդ գլխին համապատասխան հաստատված ծագումից և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններից: Եթե ապրանքների ծագումը և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ հաստատված չեն, ապա հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը, որոնք սահմանվել են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն ծածկագրին դասվող ապրանքների համար, եթե ապրանքի դասակարգումն իրականացվել է 10 նիշի մակարդակով, կամ խմբավորման մեջ մտնող ապրանքների համար, եթե ապրանքների ծածկագրերը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, սահմանվել են 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով:

Ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները հետագայում պարզվելու դեպքում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով այդ ճշգրիտ տեղեկությունները, կատարվում է հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի՝ ավել վճարված կամ ավել բռնագանձված գումարների վերադարձ (հաշվանցում) կամ սույն Օրենսգրքի 76-րդ և 77-րդ հոդվածներին համապատասխան չվճարված գումարների բռնագանձում:

6. Անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ ապրանքները բռնագրավելու կամ այդ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելու, սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան՝ մաքսային մարմինների կողմից ապրանքներն արգելանքի վերցնելու (արգելապահելու), ժամանակավոր պահպանման հանձնելու, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը կատարելուց հետո ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելու և (կամ) դրանք (լրիվ կամ մասնակիորեն) բռնագանձելու դեպքում սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 76-րդ հոդվածին համապատասխան:

7. Սույն հոդվածի 5-րդ կետի դրույթները չեն կիրառվում Միության մաքսային սահմանով ոչ հավաստի մաքսային հայտարարագրմամբ ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում:

Միության մաքսային սահմանով ոչ հավաստի հայտարարագրմամբ ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են սույն Օրենսգրքին համապատասխան: Ընդ որում, ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ փաստացի վճարված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը երկրորդ անգամ չեն վճարվում (բռնագանձվում), իսկ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի՝ ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման) սույն Օրենսգրքին համապատասխան:

Հոդված 73. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումը

1. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը կատարվում է հատուկ,

հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարողի կողմից, սույն Օրենսգրքին համապատասխան հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարողի հետ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու համապարտ պարտավորություն կրող կամ, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ՝ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու սուբսիդիար պարտավորություն կրող անձանց կողմից:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել նաև այլ անձանց կողմից հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորություն կատարելու հնարավորություն:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը կատարվում է մաքսային ներկայացուցչի կողմից՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 405-րդ հոդվածը:

2. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը կատարվում է սույն Օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում, սույն Օրենսգրքին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա գումարների չափով դրանք վճարելու միջոցով:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման առանձնահատկությունները կազմակերպության լուծարման, անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման կամ կազմակերպության վերակազմակերպման դեպքում սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

Այն դեպքում, երբ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված է չվճարված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի տեսքով հասցված վնասի փոխհատուցման ճանապարհով հատուկ հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության կատարման հնարավորությունը, այդպիսի պարտավորության կատարման առանձնահատկությունները սահմանվում են այդ անդամ պետության օրենսդրությամբ:

3. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում մաքսային մարմինը անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարողին, ինչպես նաև սույն Օրենսգրքին համապատասխան հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարողի հետ միասին հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու համապարտ պարտավորություն կրող կամ, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու սուբսիդիար պարտավորություն կրող անձանց ծանուցում է ուղարկում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի՝ սահմանված ժամկետում չվճարված գումարների մասին՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված և սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Նշված ծանուցման ձևը, այդպիսի ծանուցմամբ նախատեսված պահանջների կատարման կարգն ու ժամկետը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Այն դեպքերում, երբ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը սույն Օրենսգրքի 74-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան մեկ անդամ պետությունում ենթակա են վճարման, իսկ սույն Օրենսգրքի 77-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձումն իրականացվում է մեկ այլ անդամ պետության մաքսային մարմնի կողմից, նշված ծանուցումն ուղարկվում է հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձումն իրականացնող մաքսային մարմնի կողմից՝ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձման համար անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո՝ սույն Օրենսգրքի 1-ին հավելվածով նախատեսված կարգով:

4. Մաքսային մարմինը սույն հոդվածի 3-րդ կետում նշված ծանուցումը չի ուղարկում հետևյալ դեպքերում՝

1) հայտնաբերվում է ապրանքների բացթողումից հետո, իսկ այն ապրանքների դեպքում, որոնց բացթողումն իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ էլեկտրոնային փաստաթուղթն ուղարկելուց կամ սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 17-րդ կետով նախատեսված համապատասխան նշումները կատարելուց հետո, ապրանքների մեկ հայտարարագրում հաշվարկված մաքսային վճարները, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը չվճարելու փաստը, որոնց հանրագումարը չի գերազանցում 5 եվրոյին համարժեք գումար՝ սույն Օրենսգրքին համապատասխան մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման փոխարժեքի կիրառման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

2) հայտնաբերվում է սույն Օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ կետում նշված՝ մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի մեկ հաշվարկում հաշվարկված մաքսային վճարները, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը չվճարելու փաստը, որոնց հանրագումարը չի գերազանցում 5 եվրոյին համարժեք գումարը՝ սույն Օրենսգրքին համապատասխան մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման փոխարժեքի կիրառման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

5. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել սույն հոդվածի 4-րդ կետում նշված դեպքերից տարբեր դեպքեր, երբ սույն հոդվածի 3-րդ կետում նշված ծանուցումը չի ուղարկվում:

6. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված դեպքերում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է:

7. Սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, ինչպես նաև սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ

սահմանված այն դեպքերում, երբ այդպիսի ծանուցում չի ուղարկվում, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձումը իրականացնող մաքսային մարմինը սույն Օրենսգրքի 77-րդ հոդվածին համապատասխան միջոցներ է ձեռնարկում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը բռնագանձելու համար:

8. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորությունը կատարելու առանձնահատկություններն այն դեպքերում, երբ միևնույն ապրանքների համար հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջացել է տարբեր անձանց մոտ տարբեր հանգամանքներում և (կամ) բազմիցս:

Հոդված 74. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետներն ու կարգը

1. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետները սահմանվում են սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան, սույն Օրենսգրքի 91-րդ, 97-րդ, 103-րդ, 136-րդ, 137-րդ, 153-րդ, 162-րդ, 174-րդ, 198-րդ, 208-րդ, 216-րդ, 225-րդ, 241-րդ, 247-րդ, 279-րդ, 284-րդ և 295-րդ հոդվածներին համապատասխան՝ բացառությամբ այն դեպքի, երբ սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված է հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու այլ ժամկետ:

2. Միության մաքսային սահմանով ապրանքների անօրինական տեղափոխման դեպքում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման ներմուծման մաքսատուրքերի համար սույն Օրենսգրքի 56-րդ հոդվածով սահմանված ժամկետներում:

Հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների համար հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետները սահմանվում են սույն Օրենսգրքի 254-րդ հոդվածին համապատասխան Հանձնաժողովի կողմից և անդամ պետությունների օրենսդրությամբ՝ Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում:

3. «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառման մասին» արձանագրության («Միության մասին» պայմանագրի թիվ 8 հավելված) 104-րդ և 169-րդ կետերին համապատասխան հակագնագցման կամ փոխհատուցման տուրք կիրառելիս հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան 30 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Անդամ պետությունների օրենսդրությամբ են սահմանվում այն ապրանքների մասով հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետները, որոնց մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները սահմանված են սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

5. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետները հետաձգման կամ տարաժամկետ վճարման ձևով չեն փոփոխվում:

6. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը սույն Օրենսգրքով սահմանված ժամկետում վճարելու պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վճարվում են տույժեր:

Տույժերի հաշվեգրումը, վճարումը, բռնագանձումն ու վերադարձն իրականացվում են այն անդամ պետությունում, որտեղ սույն հոդվածի 7-րդ կետին համապատասխան ենթակա են վճարման հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Տույժեր չեն վճարվում այն դեպքում, երբ սույն Օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձում իրականացնող մաքսային մարմնի կողմից ստացվել է այն հանգամանքների ի հայտ գալու հաստատումը, որոնց ժամանակ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարեցվում է:

7. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այն անդամ պետությունում, որտեղ սույն Օրենսգրքի 61-րդ հոդվածին համապատասխան ենթակա են վճարման մաքսատուրքերը, հարկերը:

8. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարվում են այն անդամ պետության արժույթով, որում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման, եթե այլ բան սահմանված չէ «Միության մասին» պայմանագրով:

9. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը մուտքագրվում են «Միության մասին» պայմանագրով որոշված հաշիվներին:

10. «Միության մասին» պայմանագրով սահմանված դեպքերում նախնական հատուկ, նախնական հակագնագցման, նախնական փոխհատուցման տուրքերի վճարված և (կամ) բռնագանձված, ինչպես նաև նախնական տուրքերի համապատասխան տեսակների գանձման համար սահմանված կարգով վճարված հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են հաշվանցման հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դիմաց և հաշվեգրման «Միության մասին» պայմանագրով սահմանված հաշիվներին՝ «Միության մասին» պայմանագրով սահմանված կարգով անդամ պետությունների միջև բաշխելու համար:

11. Այն դեպքերում, երբ սույն Օրենսգրքին համապատասխան հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի

գումարներից վճարվում են տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե այդ գումարների համար ընձեռվեր դրանց վճարումը հետաձգելու հնարավորություն, այդ տոկոսները հաշվեգրվում և վճարվում են ներմուծման մաքսատուրքերի գումարներից տոկոսների հաշվեգրման և վճարման համար սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 75. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը

1. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է սույն Օրենսգրքի 120-122-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, ինչպես նաև սույն Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում, եթե նշված հոդվածներին համապատասխան այլ բան նախատեսված չէ:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման համար՝ սույն Օրենսգրքով նախատեսված եղանակներով և կարգով:

2. Եթե սույն Օրենսգրքին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվում են դեպքեր, երբ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում չի տրամադրվում, անդամ պետությունների այդ օրենսդրությամբ կարող են սահմանվել այն կարգն ու պայմանները, որոնք պահպանելու դեպքում այդպիսի ապահովում չի տրամադրվում:

3. «Միության մասին» պայմանագրի 50-րդ հոդվածին համապատասխան՝ Միությունում ներքին շուկայի պաշտպանության՝ տուրքերի տեսքով միջոցներ ներմուծելու դեպքում այդպիսի տուրքերը վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է այն դեպքերում, երբ սույն Օրենսգրքով նախատեսված է հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում՝ ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման համար սույն Օրենսգրքով նախատեսված եղանակներով և կարգով:

4. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չափը որոշվում է՝ հիմք ընդունելով հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն գումարները, որոնք վճարման ենթակա կլինեին ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն հոդվածին համապատասխան հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է այլ չափով:

Եթե հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չափը որոշելիս հնարավոր չէ ճշգրիտ որոշել վճարման ենթակա հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարը՝ ապրանքների (բնույթի, անվանման, քանակի, ծագման և (կամ) մաքսային արժեքի) մասին ճշգրիտ տեղեկությունների բացակայության պատճառով, ապա հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այդ գումարը որոշվում է ապրանքների արժեքի և (կամ) դրանց՝ բնաիրային արտահայտությամբ ֆիզիկական բնութագրերի (քանակի, զանգվածի, ծավալի կամ այլ բնութագրերի), հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծի հիման վրա, որոնք կարող են որոշվել առկա տեղեկությունների հիման վրա, որոնց օգտագործման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

5. Սույն Օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածներով նախատեսված առանձնահատկություններով ապրանքների բացթողման դեպքում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չափը որոշվում է որպես հատուկ, հակագնագցման, փոխհատուցման այնպիսի տուրքերի գումար, որոնք կարող են լրացուցիչ վճարման ենթակա լինել մաքսային հսկողության, մաքսային փորձաքննության արդյունքներով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 4-րդ և 6-րդ կետի երկրորդ պարբերությունը:

6. Ապրանքների մաքսային արժեքի մաքսային հսկողություն իրականացնելու դեպքում սույն Օրենսգրքի 121-րդ հոդվածով նախատեսված առանձնահատկություններով ապրանքների բացթողման ժամանակ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չափը հաշվարկելու համար կարող է մասնավորապես օգտագործվել՝

1) նույն դասի կամ տեսակի ապրանքների արժեքի մասին մաքսային մարմնի տրամադրության տակ առկա տեղեկատվությունը.

2) ապրանքների մաքսային արժեքը՝ առանց հաշվի առնելու հայտագրված նվազեցումները և զեղչերը, եթե մաքսային մարմինը կասկածներ ունի դրանց հիմնավորվածության վերաբերյալ.

3) ապրանքների մաքսային արժեքը՝ հաշվի առնելով փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի նկատմամբ լրացուցիչ հավելագրումների հնարավոր մեծությունը, եթե մաքսային մարմինը կասկածներ ունի հայտագրված լրացուցիչ հավելագրումների հիմնավորվածության վերաբերյալ:

7. Ապրանքների առանձին տեսակների համար Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման հաստատագրված բաժիններ՝ հաշվի առնելով սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված պահանջները:

8. «Միության մասին» պայմանագրով նախատեսված դեպքերում հակագնագցման տուրքը վճարելու

պարտավորության կատարման ապահովումը տրամադրվում է ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման համար սույն Օրենսգրքով սահմանված կարգով՝ «Միության մասին» պայմանագրով սահմանված չափերով և եղանակներով:

«Միության մասին» պայմանագրով նախատեսված հանգամանքների ի հայտ գալու դեպքում հակազնազցման տուրքը վճարելու պարտավորության կատարման ապահովման գումարը ենթակա է հակազնազցման տուրքի դիմաց հաշվանցման և «Միության մասին» պայմանագրով որոշված հաշվին հաշվեգրման՝ «Միության մասին» պայմանագրով սահմանված կարգով և չափերով անդամ պետությունների միջև բաշխելու համար:

9. Հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է սույն Օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետում նշված անձանց կողմից:

Մաքսային ներկայացուցիչը իրավասու է ապահովելու սույն գլխին համապատասխան հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումը, եթե, սույն Օրենսգրքի 405-րդ հոդվածին համապատասխան, մաքսային ներկայացուցիչը հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարողի հետ հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու համապարտ պարտավորություն է կրում: Եթե հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումն ապահովվել է մաքսային ներկայացուցչի կողմից, ապա սույն Օրենսգրքին համապատասխան նախատեսված այն հանգամանքների ի հայտ գալու դեպքում, որոնց ժամանակ հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու այդ պարտավորությունը մաքսային ներկայացուցչի կողմից կատարվում է նրա կողմից ներկայացվող անձի հետ համապարտ կերպով՝ անկախ սույն Օրենսգրքի 405-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի դրույթներից:

10. Հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման համար կարող է կիրառվել հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովում՝ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման համար սույն Օրենսգրքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում և կարգով:

Հոդված 76. Որպես հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում մուտքագրված հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի, դրամական միջոցների (փողի) գումարների վերադարձը (հաշվանցումը)

1. Նախնական հատուկ, նախնական հակազնազցման, նախնական փոխհատուցման տուրքերի գումարների, ինչպես նաև նախնական տուրքերի համապատասխան տեսակների գանձման համար սահմանված կարգով վճարված հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վերադարձը (հաշվանցումը) բացառությամբ սույն Օրենսգրքի 74-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան դրանց հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի դիմաց հաշվանցման, իրականացվում է «Միության մասին» պայմանագրով սահմանված դեպքերում: Նշված գումարների վերադարձը (հաշվանցումը) իրականացվում է այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որտեղ կատարվել է նախնական հատուկ, նախնական հակազնազցման, նախնական փոխհատուցման տուրքերի, ինչպես նաև նախնական տուրքերի համապատասխան տեսակների գանձման համար սահմանված կարգով վճարված հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարումը և (կամ) բռնագանձումը:

2. Ավել վճարված կամ ավել բռնագանձված հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքեր են համարվում որպես հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքեր վճարված կամ բռնագանձված դրամական միջոցները (փողը), որոնց չափը գերազանցում է «Միության մասին» պայմանագրին համապատասխան վճարման ենթակա հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի չափը, և որոնք հստակեցված են որպես կոնկրետ ապրանքների համար հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի կոնկրետ տեսակներ և գումարներ:

3. Հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի գումարները սույն հոդվածին համապատասխան ենթակա են վերադարձման (հաշվանցման) հետևյալ դեպքերում՝

1) հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը, սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան, ավել վճարված կամ ավել բռնագանձված հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքեր են.

2) «Միության մասին» պայմանագրին համապատասխան որոշված հաշիվներին վճարված հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը չեն հստակեցվել որպես կոնկրետ ապրանքների համար հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի գումարներ.

3) ապրանքները բռնագրավվել են կամ դարձել են անդամ պետության սեփականություն (եկամուտ) այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, եթե այդ ապրանքների համար հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորությունը նախկինում կատարվել է.

4) հայտագրված մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը մերժված է, եթե մաքսային հայտարարագիրը կամ նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելու ժամանակ առաջացած՝ հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորությունը նախկինում կատարվել է.

5) մաքսային հայտարարագիրը հետ է կանչվել սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ է ճանաչվել, եթե մաքսային հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը նախկինում կատարվել է.

6) սույն Օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.

7) սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված՝ մաքսային հայտարարագրման առանձնահատկությունների կիրառման առնչությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում.

8) սույն Օրենսգրքով և (կամ) Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով նախատեսված այլ դեպքերում:

4. Ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման գումարների վերադարձը (հաշվանցումը) մաքսային մարմնի կողմից իրականացվում է ապրանքների հայտարարագրում՝ հաշվարկված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վերաբերյալ հայտագրված տեղեկությունների մեջ սահմանված կարգով փոփոխություններ (լրացումներ) կատարելու կամ սույն Օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ կետում նշված մաքսային փաստաթղթում՝ հաշվարկված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վերաբերյալ տեղեկությունները սահմանված կարգով ճշգրտելու պայմանով, և ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված՝ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների վերադարձման (հաշվանցման) համար այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված այլ պայմանների պահպանման դեպքում, որտեղ իրականացվել են հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարումը և (կամ) բռնագանձումը:

5. Սույն հոդվածի 3-րդ կետի 3-8-րդ ենթակետերում նշված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների վերադարձը (հաշվանցումը) կատարվում է հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների վերադարձին (հաշվանցմանը) հանգեցնող հանգամանքների ի հայտ գալու փաստը անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված կարգով մաքսային մարմնին հավաստելու դեպքում և հատուկ, հակագնագցման, փոխհատուցման գումարների վերադարձման (հաշվանցման) համար այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված այլ պայմանների պահպանման դեպքում, որտեղ իրականացվել են հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարումը և (կամ) բռնագանձումը:

6. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների վերադարձը (հաշվանցումը) իրականացվում է այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանվող կարգով և ժամկետներում, որտեղ կատարվել է այդպիսի հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարումը և (կամ) բռնագանձումը՝ հաշվի առնելով «Միության մասին» պայմանագրի դրույթները:

7. Որպես հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության կատարման ապահովում մուտքագրված դրամական միջոցների (փողի) գումարների վերադարձը (հաշվանցումը) իրականացվում է այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որտեղ տրամադրվել է այդ ապահովումը՝ այդ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

8. «Միության մասին» պայմանագրին համապատասխան որպես հակագնագցման տուրքի վճարման պարտավորության կատարման ապահովում մուտքագրված դրամական միջոցների (փողի) վերադարձը (հաշվանցումը)՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 75-րդ հոդվածի 8-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան հակագնագցման տուրքի դիմաց հաշվանցման, իրականացվում է այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որտեղ տրամադրվել է այդ ապահովումը՝ այդ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

9. Որպես հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում մուտքագրված դրամական միջոցների (փողի) վերադարձը (հաշվանցումը) իրականացվում է հետևյալ դեպքերում՝

1) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը, որի կատարումը ապահովվել է որպես հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում մուտքագրված դրամական միջոցներով (փողով), կատարվել է լրիվ ծավալով, դադարել է կամ չի առաջացել.

2) որպես հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում մուտքագրված դրամական միջոցների (փողի) փոխարեն տրամադրվել է հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում այլ եղանակով:

10. Մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսների վճարման՝ սահմանված ժամկետում վճարողի կողմից (լրիվ կամ մասնակիորեն) չկատարված պարտավորության առկայության դեպքում որպես հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում մուտքագրված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների, դրամական միջոցների (փողի) վերադարձ չի իրականացվում այդ չկատարված պարտավորության չափով:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների հաշվանցումը, ինչպես նաև որպես հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում մուտքագրված դրամական միջոցների (փողի) գումարների հաշվանցումը, բացառությամբ սույն Օրենսգրքի 75-րդ հոդվածի 8-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան հակագնագցման տուրքի դիմաց այդպիսի գումարների հաշվանցման, չի

իրականացվում մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսների վճարման՝ սահմանված ժամկետում վճարողի կողմից (լրիվ կամ մասնակիորեն) չկատարված պարտավորության առկայության դեպքում՝ բացառությամբ նշված պարտավորության կատարման հաշվին հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այդպիսի գումարների հաշվանցման:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել այլ դեպքեր, երբ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների վերադարձ (հաշվանցում) չի կատարվում:

Հոդված 77. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձումը

1. Սույն Օրենսգրքի 73-րդ հոդվածի 7-րդ կետում նշված դեպքերում մաքսային մարմինը միջոցներ է ձեռնարկում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը բռնագանձելու համար: Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձման ժամանակ կիրառվում են սույն Օրենսգրքի 11-րդ գլխի՝ ներմուծման մաքսատուրքերի բռնագանձմանը վերաբերող դրույթները՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

2. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձման միջոցների շարքին են դասվում սույն Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ կետում նշված միջոցները, որոնք կիրառվում են մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման ժամանակ:

3. Ի լրումն սույն Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ կետում նշված միջոցների՝ անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձման այնպիսի միջոց, ինչպիսին բռնագանձման տարածումն է այն ապրանքների վրա, որոնց համար հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը չեն վճարվել, և հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձման այլ միջոցներ:

Բռնագանձման տարածումն այն ապրանքների վրա, որոնց համար հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր չեն վճարվել, դադարեցնում է այդպիսի ապրանքների համար հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորությունը:

4. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձման միջոցներ չեն կիրառվում հետևյալ դեպքերում՝

1) լրացել է չվճարված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձման՝ այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետը, որի մաքսային մարմնի կողմից իրականացվում է հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձումը.

2) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորությունը դադարել է հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու արդյունքում կամ սույն Օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված այլ հանգամանքների արդյունքում.

3) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորությունը դադարել է սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձման միջոցների կիրառման արդյունքում.

4) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները, որոնց բռնագանձումը հնարավոր չի եղել այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի մաքսային մարմինն իրականացրել է այդ գումարների բռնագանձումը, ճանաչվել են բռնագանձման համար անհուսալի.

5) Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ դեպքեր:

5. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը բռնագանձվում են սույն Օրենսգրքի 69-րդ հոդվածին համապատասխան մաքսատուրքերի, հարկերի բռնագանձում իրականացնող մաքսային մարմնի կողմից՝ հաշվի առնելով սույն կետով նախատեսված առանձնահատկությունները:

Եթե ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան տրամադրվել է հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում, ապա սույն Օրենսգրքի 153-րդ հոդվածի 5-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում չվճարված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը բռնագանձվում են այն անդամ պետության մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված մաքսային մարմնի կողմից, որի մաքսային մարմնին է տրամադրվել հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը՝ այդ ապահովման հաշվին:

Սույն Օրենսգրքի 153-րդ հոդվածի 5-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում չվճարված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը բռնագանձվում են նաև մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման հաշվին այն անդամ պետության մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված մաքսային մարմնի կողմից, որի մաքսային մարմնին է տրամադրվել այդ ապահովումը, եթե մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը, որի կատարումը ապահովվում էր, կատարվել է լրիվ ծավալով:

Եթե «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման

(տրանսպորտային փոխադրման) ժամանակ որպես այդ ապրանքների հայտարարատու հանդես է գալիս լիազորված տնտեսական օպերատորը կամ մաքսային փոխադրողը, ապա սույն Օրենսգրքի 153-րդ հոդվածի 5-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում չվճարված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը բռնագանձվում են այն անդամ պետության մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված մաքսային մարմնի կողմից, որի մաքսային մարմնի կողմից որպես «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատու հանդես եկող անձը ընդգրկվել է լիազորված տնտեսական օպերատորների կամ մաքսային փոխադրողների ռեեստրում:

Մաքսային մարմինների փոխգործակցությունը սույն կետի երկրորդից չորրորդ պարբերություններին համապատասխան՝ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը բռնագանձելու և հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձված գումարներն այն անդամ պետություն փոխանցելու ժամանակ, որտեղ ենթակա են վճարման հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը, իրականացվում է սույն Օրենսգրքի 1-ին հավելվածով նախատեսված կարգով, իսկ նշված հավելվածով չկարգավորվող մասով՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող կարգով:

6. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսների գումարները, որոնց բռնագանձումը հնարավոր չի եղել, ճանաչվում են բռնագանձման համար անհուսալի և դուրս են գրվում այն անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, որի մաքսային մարմինն իրականացրել է այդ գումարների բռնագանձումը:

ԲԱԺԻՆ III

ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻՆՔ

Գլուխ 13

Ընդհանուր դրույթներ՝ մաքսային գործառնությունների և դրանք իրականացնող անձանց մասին

Հոդված 78. Մաքսային գործառնությունների իրականացման կարգը

1. Մաքսային գործառնությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են սույն Օրենսգրքով, մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերով և ակտերով, իսկ սույն Օրենսգրքով չկարգավորված մասով՝ մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերով և ակտերով, կամ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով և ակտերով նախատեսված դեպքերում:

Մաքսային գործառնությունների իրականացման տեխնոլոգիաները սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

2. Մաքսային գործառնությունների իրականացման կարգն ու տեխնոլոգիաները որոշվում են՝ ելնելով Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների կատեգորիաներից, այն տրանսպորտային փոխադրամիջոցի տեսակից, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը), Միության մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխող անձանցից, մաքսային հայտարարագրման և ապրանքների բացթողման առանձնահատկություններից, ինչպես նաև այն մաքսային ընթացակարգերից, որոնցով ապրանքները ձևակերպվում են:

Մաքսային գործառնությունների իրականացման կարգն ու տեխնոլոգիաները սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ, չպետք է հանգեցնեն մաքսասակագնային կարգավորման միջոցների, արգելքների և սահմանափակումների, ներքին շուկայի պաշտպանության միջոցների լրիվ կամ մասնակի չկիրառմանը:

3. Մաքսային գործառնություններն իրականացվում են նույն կերպ՝ անկախ ապրանքների ծագումից, ապրանքների ուղարկման երկրից և նշանակման երկրից:

4. Մաքսային գործառնություններ իրականացնելիս մաքսային մարմինների պահանջները պետք է հիմնավորված լինեն և սահմանափակվեն այն պահանջներով, որոնք անհրաժեշտ են մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի և անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության պահպանումն ապահովելու համար:

Հոդված 79. Մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների իրականացման վայրն ու ժամը

1. Մաքսային գործառնություններն իրականացվում են մաքսային մարմինների կողմից՝ նրանց գտնվելու վայրերում և աշխատանքային ժամերին:

2. Սույն Օրենսգրքով կամ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ անձի պատճառաբանված պահանջով առանձին մաքսային գործառնություններ մաքսային մարմինների կողմից կարող են իրականացվել մաքսային մարմինների գտնվելու վայրից և (կամ) աշխատանքային ժամերից դուրս:

Հոդված 80. Մաքսային գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները

1. Սույն Օրենսգրքով սահմանված անձինք պարտավոր են մաքսային մարմիններ ներկայացնել սույն Օրենսգրքին համապատասխան մաքսային գործառնություններ իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները:

Մաքսային մարմիններն իրավասու են սույն Օրենսգրքով սահմանված անձանցից պահանջելու, որ ներկայացվեն միայն այն փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի, անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության և անդամ պետությունների այն օրենսդրության պահպանման համար, որի պահպանման նկատմամբ հսկողությունը դրված է մաքսային մարմինների վրա, և որոնք ներկայացնելու պահանջը նախատեսված է սույն Օրենսգրքին համապատասխան:

2. Մաքսային գործառնություններ իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները կարող են դրանք իրականացնելու ժամանակ չներկայացվել մաքսային մարմին, եթե այդ փաստաթղթերի մասին տեղեկությունները և (կամ) դրանցից վերցված տեղեկությունները և (կամ) մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսային մարմիններին անհրաժեշտ այլ տեղեկություններ մաքսային մարմինները կարող են ստանալ մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերից, ինչպես նաև անդամ պետությունների պետական մարմինների (կազմակերպությունների) տեղեկատվական համակարգերից՝ անդամ պետությունների մաքսային մարմինների և պետական մարմինների (կազմակերպությունների) տեղեկատվական փոխգործակցության շրջանակներում: Այդ դեպքում սույն Օրենսգրքով սահմանված անձինք մաքսային հայտարարագրում նշում են այդ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների մասին տեղեկությունները կամ սույն Օրենսգրքին համապատասխան դրանք այլ կերպ ներկայացնում մաքսային մարմիններ:

Սույն կետի դրույթների իրագործման նպատակներով մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնություններ իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և (կամ) այդ փաստաթղթերից վերցված տեղեկությունները և (կամ) մաքսային գործառնությունների իրականացման համար մաքսային մարմիններին անհրաժեշտ այլ տեղեկություններ տեղեկատվական փոխգործակցության շրջանակներում մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերից, ինչպես նաև անդամ պետությունների պետական մարմինների (կազմակերպությունների) տեղեկատվական համակարգերից ստանալու հնարավորության մասին տեղեկատվությունը բոլորին մատչելի է դարձվում «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում, մաքսային մարմինների պաշտոնական կայքերում այն տեղադրելու և (կամ) այլ եղանակով տեղեկատվություն տարածելու միջոցով:

3. Մաքսային գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ցանկը, դրանք ներկայացնելու եղանակն ու ժամկետները սահմանվում են սույն Օրենսգրքին համապատասխան:

4. Այն տեղեկությունների կազմը, որոնք տեղեկատվական փոխգործակցության շրջանակներում մաքսային մարմինները կարող են ստանալ անդամ պետությունների մաքսային մարմինների և պետական մարմինների (կազմակերպությունների) տեղեկատվական համակարգերից, և այդ տեղեկությունները ստանալու կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից, իսկ այն դեպքերում, երբ տեղեկատվական փոխգործակցությունն իրականացվում է մեկ անդամ պետության մաքսային մարմինների և պետական մարմինների (կազմակերպությունների) միջև՝ սահմանվում են այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

5. Մաքսային մարմիններն իրավունք չունեն մերժելու փաստաթղթերի ընդունումը վրիպակների կամ քերականական սխալների առկայության պատճառով, եթե դրանց արդյունքում չեն փոփոխվում փաստաթղթերում ներառված այն տեղեկությունները, որոնք ազդում են մաքսային մարմնի կողմից որոշումների ընդունման վրա:

6. Մաքսային գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային փաստաթղթերի կամ թղթային կրիչով փաստաթղթերի տեսքով: Թույլատրվում է ներկայացնել նշված փաստաթղթերի պատճենները (այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթերի թղթային պատճենները), եթե «Միության մասին» պայմանագրով, մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով և ակտերով և (կամ) երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով չի սահմանվել այդ փաստաթղթերի բնօրինակների պարտադիր ներկայացման պայման:

7. Մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսային մարմիններ կարող են ներկայացվել անդամ պետությունների պետական լեզուներով կամ օտար լեզուներով կազմված փաստաթղթեր:

Մաքսային մարմինը իրավասու է պահանջել մաքսային գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների թարգմանությունը, եթե դրանք կազմված են այն անդամ պետության պետական լեզու չհանդիսացող լեզվով, որի մաքսային մարմին են ներկայացվում այդ փաստաթղթերը:

8. Սույն Օրենսգրքին և երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան՝ մաքսային գործառնություններ իրականացնելու համար կարող են կիրառվել Միության անդամ չհանդիսացող պետություններում կազմված և կիրառվող մաքսային փաստաթղթեր:

Հոդված 81. Ապրանքների առանձին կատեգորիաների համար մաքսային գործառնություններ իրականացնելու առաջնահերթ կարգը

1. Տարերային աղետների, բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման համար անհրաժեշտ ապրանքների, խաղաղության պահպանմանն ուղղված գործողությունների իրականացման կամ վարժանքների անցկացման համար անհրաժեշտ ռազմական նշանակության արտադրանքի, արագ փչացող ապրանքների, ինչպես նաև կենդանիների, ռադիոակտիվ նյութերի, պայթուցիկ նյութերի, միջազգային փոստային առաքանիների, էքսպրես բեռների, միջազգային ցուցահանդեսային միջոցառումներում ցուցադրության, մարդասիրական և տեխնիկական օգնության համար նախատեսված ապրանքների, զանգվածային լրատվության միջոցների համար հաղորդումների ու նյութերի, միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների վերանորոգման համար անհրաժեշտ պահեստամասերի, շարժիչների, սպառման նյութերի, սարքավորումների, գործիքների, անդամ պետությունների արժույթի, արտարժույթի, այլ արժութային արժեքների, թանկարժեք մետաղների, այդ թվում՝ ոսկու, որոնք ներմուծվում են անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի և դրանց մասնաճյուղերի կողմից, ու նմանատիպ այլ ապրանքների մասով իրականացվող մաքսային գործառնություններն իրականացվում են առաջնահերթ կարգով:

2. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու այլ ապրանքներ, որոնց մասով մաքսային գործառնություններն իրականացվում են առաջնահերթ կարգով:

3. Սույն հոդվածի կիրառման նպատակով՝ արագ փչացող ապրանքների կատեգորիաների ցանկը սահմանվում է Հանձնաժողովի կողմից, իսկ մինչև Հանձնաժողովի կողմից այն սահմանելը՝ անդամ պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 82. Մաքսային մարմինների և անձանց կողմից մաքսային գործառնությունների իրականացումը

1. Մաքսային գործառնություններն իրականացվում են մաքսային մարմինների, հայտարարատուների, փոխադրողների, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց, այլ շահագրգիռ անձանց կողմից:

2. Մաքսային մարմինների անունից մաքսային գործառնություններն իրականացվում են մաքսային մարմինների այն պաշտոնատար անձանց կողմից, որոնք իրենց պաշտոնական (գործառութային) պարտականություններին համապատասխան ունեն այդպիսի մաքսային գործառնություններ իրականացնելու լիազորություն:

3. Առանձին մաքսային գործառնություններ մաքսային մարմինների կողմից կարող են իրականացվել մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի միջոցով՝ առանց մաքսային մարմինների պաշտոնատար անձանց մասնակցության:

Առանց մաքսային մարմինների պաշտոնատար անձանց մասնակցության՝ մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի միջոցով մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների իրականացման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից, իսկ մինչև Հանձնաժողովի կողմից այն սահմանելը՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

4. Հայտարարատուները, փոխադրողները, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձինք, այլ շահագրգիռ անձինք մաքսային գործառնություններն իրականացնում են անմիջականորեն կամ այդ անձանց հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողների միջոցով:

Հայտարարատուի, փոխադրողի, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձի, այլ շահագրգիռ անձի անունից մաքսային գործառնությունները կարող է իրականացնել մաքսային ներկայացուցիչը, իսկ սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այդ անձանց հանձնարարությամբ գործող այլ անձ:

Հոդված 83. Հայտարարատուն

1. Որպես մաքսային ընթացակարգերով ձևակերպվող ապրանքների հայտարարատուներ կարող են հանդես գալ՝

1) անդամ պետության անձը՝

որն օտարերկրյա անձի կետ կնքված այն գործարքի կողմերից է, որի հիման վրա ապրանքները տեղափոխվում են Միության մաքսային սահմանով.

որի անունից և (կամ) որի հանձնարարությամբ կնքվել է սույն ենթակետի երկրորդ պարբերության մեջ նշված գործարքը.

որն ունի ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունք, եթե ապրանքները Միության

մաքսային սահմանով տեղափոխվում են այն գործարքի շրջանակներից դուրս, որի կողմերից մեկն օտարերկրյա անձ է.

որը Միության մաքսային տարածքում գտնվող օտարերկրյա ապրանքների մասով օտարերկրյա անձի կամ անդամ պետության անձի հետ կնքված գործարքի կողմերից է.

որը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի հայտագրման ժամանակ առաքողն (էքսպեդիտորն) է.

2) օտարերկրյա անձը՝

որն անդամ պետության տարածքում սահմանված կարգով ստեղծված և (կամ) գրանցված ներկայացուցչություն կամ մասնաճյուղ ունեցող կազմակերպություն է միայն այն ապրանքները մաքսային ընթացակարգերով հայտագրելիս, որոնք տեղափոխվում են այդ ներկայացուցչության կամ մասնաճյուղի սեփական կարիքների համար.

որն ապրանքների սեփականատերն է, եթե ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխվում են օտարերկրյա անձի և անդամ պետության անձի միջև կնքված գործարքի շրջանակներից դուրս.

որն ունի ապրանքների տիրապետման և օգտագործման իրավունք, եթե ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխվում են օտարերկրյա անձի և անդամ պետության անձի միջև գործարքի շրջանակներից դուրս՝ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի, «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի, «վերաարտահանում» մաքսային ընթացակարգի, հատուկ մաքսային ընթացակարգի հայտագրման դեպքում.

3) Միության մաքսային տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունները, հյուպատոսական հիմնարկները, պետությունների՝ միջազգային կազմակերպություններին կից ներկայացուցչությունները, միջազգային կազմակերպությունները կամ դրանց ներկայացուցչությունները, այլ կազմակերպություններ կամ դրանց ներկայացուցչությունները.

4) փոխադրողը, այդ թվում՝ մաքսային փոխադրողը՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի հայտագրման դեպքում.

5) օտարերկրյա այն անձը, որը, երրորդ կողմի հետ անդամ պետության միջազգային պայմանագրին համապատասխան, ստացել է այդ միջազգային պայմանագրով նախատեսված փաստաթուղթ, որն այդ անձին տալիս է Միության մաքսային տարածքում գտնվող ապրանքները Միության մաքսային տարածքից արտահանելու իրավունք՝ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի, «վերաարտահանում» մաքսային ընթացակարգի, «արտահանում» մաքսային ընթացակարգի հայտագրման դեպքում:

2. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ որպես ապրանքների հայտարարատու կարող է հանդես գալ անդամ պետության անձը, որը մեկ անդամ պետության անձանց միջև կնքված այն գործարքի կողմերից է, որի հիման վրա ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքից:

3. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերից և պայմաններից տարբեր այլ դեպքեր և պայմաններ, որոնց ժամանակ այդ անդամ պետության հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով անդամ պետության տարածքում գրանցված մասնաճյուղ ունեցող օտարերկրյա անձը կարող է հանդես գալ որպես ապրանքների հայտարարատու:

4. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու այն դեպքերը, երբ սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի երրորդ պարբերության մեջ նշված օտարերկրյա անձը չի կարող հանդես գալ որպես ապրանքների հայտարարատու:

5. Այն լրացուցիչ պայմանները, որոնց պահպանման դեպքում սույն հոդվածի 1-ին կետում նշված անձինք կարող են հանդես գալ որպես առանձին մաքսային ընթացակարգերով ձևակերպվող ապրանքների հայտարարատուներ, ինչպես նաև այլ անձինք և այն պայմանները, որոնց պահպանման դեպքում այդ անձինք կարող են հանդես գալ որպես նշված ապրանքների հայտարարատուներ, սահմանվում են սույն Օրենսգրքով: Այն լրացուցիչ պայմանները, որոնց պահպանման դեպքում սույն հոդվածի 1-ին կետում նշված անձինք կարող են հանդես գալ որպես հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների հայտարարատուներ, ինչպես նաև այլ անձինք և այն պայմանները, որոնց պահպանման դեպքում այդ անձինք կարող են հանդես գալ որպես նշված ապրանքների հայտարարատուներ, սահմանվում են Հանձնաժողովի կողմից և անդամ պետությունների օրենսդրությամբ՝ Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում:

6. Սույն Օրենսգրքին համապատասխան՝ մաքսային հայտարարագրման և (կամ) առանց մաքսային ընթացակարգերով ձևակերպելու բացթողման ենթակա ապրանքների հայտարարատուներ կարող են հանդես գալ սույն Օրենսգրքի 260-րդ հոդվածի 6-8-րդ կետերով, 278-րդ հոդվածի 2-րդ կետով և 281-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված անձինք:

Հոդված 84. Հայտարարատուի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը

1. Հայտարարատուն իրավունք ունի՝

1) զննելու և չափելու մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքները և բեռնային գործողություններ կատարելու դրանց հետ.

2) մաքսային մարմնի՝ սույն Օրենսգրքի 17-րդ հոդվածին համապատասխան տրված թույլտվությամբ փորձանմուշներ և (կամ) նմուշներ վերցնելու մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքներից.

3) ներկա գտնվելու մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից մաքսային տեսազննման և մաքսային

զննման ձևով մաքսային հսկողություն անցկացնելու և այդ անձանց կողմից ապրանքներից փորձանմուշներ և (կամ) նմուշներ վերցնելու ժամանակ.

4) ծանոթանալու իր կողմից հայտարարագրվող ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ուսումնասիրության արդյունքներին, որոնք առկա են մաքսային մարմիններում.

5) բողոքարկելու մաքսային մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց որոշումները, գործողությունները (անգործությունը).

6) ներգրավելու փորձագետներ՝ իր կողմից հայտարարագրվող ապրանքների մասին տեղեկությունները հստակեցնելու համար.

7) օգտվելու սույն Օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներից:

2. Հայտարարատուն պարտավոր է՝

1) կատարել ապրանքների մաքսային հայտարարագրում.

2) սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում մաքսային մարմին ներկայացնել մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթեր.

3) ներկայացնել հայտարարագրվող ապրանքները՝ սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում կամ մաքսային մարմնի պահանջով.

4) վճարել մաքսային վճարները, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը և (կամ) ապահովել դրանց վճարման պարտավորության կատարումը՝ սույն Օրենսգրքին համապատասխան.

5) պահպանել մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները կամ ապրանքների առանձին կատեգորիաների համար սահմանված այն պայմանները, որոնք, սույն Օրենսգրքին համապատասխան, ենթակա չեն մաքսային ընթացակարգերով ձևակերպման.

6) կատարել սույն Օրենսգրքով նախատեսված այլ պահանջներ:

3. Հայտարարատուն, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, պատասխանատվություն է կրում սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված պարտականությունները չկատարելու, մաքսային հայտարարագրում ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելու, ինչպես նաև մաքսային ներկայացուցչին անվավեր, այդ թվում՝ կեղծ և (կամ) ակնհայտ ոչ հավաստի (սուտ) տեղեկություններ պարունակող փաստաթղթեր ներկայացնելու համար:

Հոդված 85. Շահագրգիռ անձանց ներկայությունը մաքսային գործառնություններ իրականացնելիս

1. Շահագրգիռ անձինք իրավունք ունեն ներկա գտնվելու մաքսային գործառնությունների իրականացման ժամանակ:

2. Մաքսային մարմնի պահանջով շահագրգիռ անձինք պարտավոր են ներկա գտնվել մաքսային գործառնություններ իրականացնելիս՝ մաքսային մարմիններին դրանց իրականացման մեջ աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Հոդված 86. Միության մաքսային սահմանով անօրինականորեն տեղափոխված ապրանքների նկատմամբ մաքսային գործառնությունների իրականացումը

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել մաքսային հայտարարագրման, այլ մաքսային գործառնություններ իրականացնելու և մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման հնարավորություն այն ապրանքների համար, որոնք անօրինականորեն տեղափոխվել են Միության մաքսային սահմանով, կամ որոնց բացթողումը չի իրականացվել մաքսային մարմինների կողմից սույն Օրենսգրքին համապատասխան, ինչը հանգեցրել է մաքսատուրքերի, հարկերի չվճարման կամ արգելքների և սահմանափակումների, ներքին շուկայի պաշտպանության միջոցների չպահպանման, և որոնք մաքսային մարմինների կողմից հայտնաբերվել են Միության մաքսային տարածքում այդ ապրանքները ձեռք բերած անձանց մոտ:

Գլուխ 14

Ապրանքների ժամանումը Միության մաքսային տարածք և ժամանման հետ կապված մաքսային գործառնությունները

Հոդված 87. Ապրանքների ժամանումը Միության մաքսային տարածք

1. Միության մաքսային սահմանը հատելուց հետո ապրանքները պետք է փոխադրողի կամ անձնական օգտագործման ապրանքներ տեղափոխող անձի կողմից հասցվեն ժամանման վայր կամ սույն Օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ կետում նշված այլ վայրեր: Ընդ որում, ապրանքների փաթեթվածքի ամբողջականության խախտում, ինչպես նաև դրված կապարակնիքների, կնիքների և նույնականացման այլ միջոցների փոփոխություն, հեռացում, ոչնչացում, վնասում

կամ փոխարինում չեն թույլատրվում:

2. Եթե Միության մաքսային սահմանը հատելուց հետո ապրանքները ժամանման վայր կամ սույն Օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ կետում նշված այլ վայրեր հասցնելն ընդհատվում է, ինչպես նաև եթե նավը կամ օդանավը հարկադրված կանգառ կամ վայրէջք է կատարում Միության մաքսային տարածքում վթարի, անհաղթահարելի ուժի ազդեցության կամ ապրանքներն առաքելուն, սահմանված վայրերում կանգառ կամ վայրէջք կատարելուն խոչընդոտող այլ հանգամանքների հետևանքով, փոխադրողը կամ անձնական օգտագործման ապրանքներ տեղափոխող անձը պարտավոր է ձեռնարկել ապրանքների պահպանվածությունն ապահովելուն ուղղված բոլոր միջոցները, անհապաղ տեղեկացնել մոտակա մաքսային մարմնին այդ հանգամանքների և ապրանքների գտնվելու վայրի մասին, ինչպես նաև տրանսպորտային միջոցի վնասված լինելու դեպքում փոխադրել ապրանքները կամ ապահովել դրանց փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) մոտակա մաքսային մարմին կամ մաքսային մարմնի կողմից նշված այլ վայր:

Փոխադրողի կամ այլ անձանց՝ սույն կետի պահանջների կատարման առնչությամբ կրած ծախսերը մաքսային մարմինների կողմից չեն փոխհատուցվում:

3. Ապրանքները ժամանման վայր կամ սույն Օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ կետում նշված այլ վայրեր հասցնելուց հետո դրանք պետք է գտնվեն մաքսային հսկողության գոտում՝ բացառությամբ նավերով փոխադրվող ապրանքների:

4. Սույն Օրենսգրքի 88-91-րդ հոդվածների դրույթները չեն կիրառվում ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ:

Ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների մասով մաքսային գործառնությունները դրանց՝ Միության մաքսային տարածք ժամանելուց հետո իրականացվում են սույն Օրենսգրքի 37-րդ գլխին համապատասխան:

5. Սույն գլխի դրույթները չեն կիրառվում՝

1) նավերով և օդանավերով փոխադրվող ապրանքների նկատմամբ, որոնք Միության մաքսային տարածքը հատում են՝ առանց Միության մաքսային տարածքում տեղակայված նավահանգիստ մտնելու կամ օդանավակայանում վայրէջք կատարելու.

2) Միության և սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 4-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքների նկատմամբ, որոնք Միության մաքսային տարածքի մի մասից նավերով և օդանավերով փոխադրվում են Միության մաքսային տարածքի մյուս մասը՝ Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով՝ առանց Միության անդամ չհանդիսացող պետության տարածքում վայրէջք կատարելու կամ Միության անդամ չհանդիսացող պետության նավահանգիստ նավի մուտք գործելու.

3) խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով փոխադրվող ապրանքների նկատմամբ:

Հոդված 88. Ապրանքների՝ Միության մաքսային տարածք ժամանելու հետ կապված մաքսային գործառնությունները և դրանց իրականացման կարգը

1. Փոխադրողը պարտավոր է Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման մասին մաքսային մարմնին ծանուցել՝ ներկայացնելով սույն Օրենսգրքի 89-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը և տեղեկությունները՝ կախված այն տրանսպորտային միջոցի տեսակից, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը), կամ ներկայացնելով էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ներկայացված նախնական տեղեկատվության գրանցման համարի մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթը հետևյալ ժամկետներում՝

1) ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող ապրանքների համար՝ ապրանքները ժամանման վայր հասցնելու պահից 1 ժամվա ընթացքում, իսկ մաքսային մարմնի աշխատանքային ժամերից դուրս ապրանքները ժամանման վայր հասցնելու դեպքում՝ տվյալ մաքսային մարմնի աշխատանքային ժամի մեկնարկից հաշված 1 ժամվա ընթացքում.

2) նավերով, օդանավերով կամ երկաթուղային տրանսպորտով փոխադրվող ապրանքների համար՝ նավահանգստի, օդանավակայանի կամ երկաթուղային կայարանի տեխնոլոգիական գործընթացով (ժամանակացույցով) սահմանված ժամանակի ընթացքում՝ միջազգային փոխադրում իրականացնելու դեպքում, կամ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող այլ ժամկետում:

2. Փոխադրողի անունից սույն հոդվածի 1-ին կետում նշված փաստաթղթերը և տեղեկությունները կարող են ներկայացվել մաքսային ներկայացուցչի կամ փոխադրողի հանձնարարությամբ գործող այլ անձանց կողմից, եթե դա թույլատրվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

3. Եթե ներկայացվող փաստաթղթերը կազմված են այն անդամ պետության պետական լեզու չհանդիսացող լեզվով, որի տարածք են ժամանել ապրանքները, ապա այդ փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների թարգմանությունն ապահովվում է փոխադրողի կամ այլ շահագրգիռ անձի կողմից:

4. Ապրանքների՝ Միության մաքսային տարածք ժամանելու մասին ծանուցման ամսաթիվն ու ժամը մաքսային մարմնի կողմից արձանագրվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Փոխադրողը կամ սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածում նշված այլ անձինք մաքսային մարմնի աշխատանքային ժամերին՝ ժամանման մասին ծանուցման պահից սկսած 3 ժամվա ընթացքում, եթե անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ այլ ժամկետ չի սահմանվել նավով, օդանավով կամ երկաթուղային

տրանսպորտով փոխադրվող ապրանքների համար կամ միջազգային փոստային առաքանիների համար, պարտավոր են կատարել մաքսային գործառնություններից որևէ մեկը, որը կապված է՝

1) ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու հետ.

2) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանման վայրերից ժամանակավոր պահպանման վայրեր ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) հետ.

3) ապրանքների մաքսային հայտարարագրման հետ.

4) նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման հետ:

5) Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանման հետ:

6. Սույն հոդվածի 5-րդ կետի դրույթները չեն կիրառվում Միության մաքսային տարածք ժամանած՝

1) այն ապրանքների նկատմամբ, որոնք, սույն Օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, պետք է անհապաղ արտահանվեն Միության մաքսային տարածքից.

2) այն ապրանքների նկատմամբ, որոնք գտնվում են նավերի վրա կամ օդանավերի մեջ և ենթակա չեն այդ նավերից և օդանավերից դատարկման Միության մաքսային տարածքում.

3) այն ապրանքների նկատմամբ, որոնք փոխաբեռնվում են մեկ օդանավից մյուսը և ենթակա են Միության մաքսային տարածքից արտահանման.

4) Միության և սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 4-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքների նկատմամբ, որոնք ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մյուս մասը դրանց փոխադրման (տրանսպորտային փոխադրման) դեպքում.

5) Միության ապրանքների և օտարերկրյա ապրանքների նկատմամբ, որոնք Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով նավերով և օդանավերով փոխադրվում են Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մյուս մասը սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքերում, Միության մաքսային տարածք են ժամանել Միության անդամ չհանդիսացող պետության տարածքում օդանավի հարկադրված վայրէջքից հետո կամ վթարի, անհաղթահարելի ուժի ազդեցության կամ այլ հանգամանքների հետևանքով Միության անդամ չհանդիսացող պետության նավահանգիստ՝ նավի մտնելուց հետո.

6) սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 5-րդ կետի 2-4-րդ ենթակետերում նշված Միության ապրանքների նկատմամբ.

7) սույն Օրենսգրքի 301-րդ հոդվածում նշված ապրանքների նկատմամբ:

7. Սույն հոդվածի 5-րդ կետի առաջին պարբերությամբ սահմանված ժամկետում մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագիրը գրանցելու դեպքում սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածում նշված անձինք պարտավոր են իրականացնել ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու հետ կապված մաքսային գործառնությունները մաքսային մարմնի աշխատանքային ժամերին հետևյալի ստացման պահից սկսած 3 ժամվա ընթացքում՝

մաքսային հայտարարագրի հետկանչի համար մաքսային մարմնի թույլտվությունը՝ սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան.

ապրանքների բացթողման ժամկետների երկարաձգման մասին մաքսային մարմնի որոշումը՝ սույն Օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-8-րդ կետերին համապատասխան.

ապրանքների բացթողման ժամկետի կասեցման մասին մաքսային մարմնի որոշումը՝ սույն Օրենսգրքի 124-րդ հոդվածին համապատասխան.

ապրանքների բացթողման մերժումը՝ սույն Օրենսգրքի 125-րդ հոդվածին համապատասխան:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման այլ ժամկետներ, և (կամ) նախատեսվել այդ հանգամանքների ի հայտ գալուց հետո այլ մաքսային գործառնությունների իրականացում:

8. Սույն Օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետին համապատասխան՝ ապրանքների բացթողման մերժման դեպքում հայտարարատուն պարտավոր է իրականացնել ապրանքների մաքսային հայտարարագրման, ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու կամ Միության մաքսային տարածքից դրանց արտահանման հետ կապված մաքսային գործառնությունները, եթե դրանք դուրս չեն բերվել ժամանման վայրից մաքսային մարմնի աշխատանքային ժամերին՝ ապրանքների բացթողման մերժումը ստանալու պահից սկսած 3 ժամվա ընթացքում:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել նշված մաքսային գործառնությունների իրականացման այլ ժամկետներ, և (կամ) նախատեսվել այլ մաքսային գործառնությունների իրականացում՝ սույն Օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետին համապատասխան ապրանքների բացթողման մերժման դեպքում:

9. Ժամանման վայրում ժամանակավոր պահպանման հանձնված ապրանքները պահվում են ժամանման վայրում գտնվող ժամանակավոր պահպանման վայրերում կամ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ ժամանակավոր պահպանման այլ վայրերում:

Եթե օտարերկրյա ապրանքների ժամանակավոր պահպանումն իրականացվելու է ժամանման վայրից դուրս գտնվող ժամանակավոր պահպանման վայրում, ապա ժամանման վայրից մինչև ժամանակավոր պահպանման այդպիսի վայր

օտարերկրյա ապրանքների փոխադրումն իրականացվում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, կամ եթե դա նախատեսված է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ՝ առանց «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման՝ այդ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

10. Այն ապրանքները, որոնց նկատմամբ սույն հոդվածի 5-րդ, 7-րդ կետերով և 8-րդ կետի առաջին պարբերությամբ սահմանված ժամկետներում կամ սույն հոդվածի 7-րդ կետի վեցերորդ պարբերությանը և 8-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չեն իրականացվել այդ կետերով նախատեսված մաքսային գործառնությունները կամ սույն հոդվածի 7-րդ կետի վեցերորդ պարբերությանը և 8-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված մաքսային գործառնությունները արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

Հոդված 89. Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման մասին մաքսային մարմնին ծանուցելու ժամանակ ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները

1. Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման մասին մաքսային մարմնին ծանուցելիս փոխադրողը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները՝

1) ավտոմոբիլային տրանսպորտով միջազգային փոխադրում իրականացնելիս՝

միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի վերաբերյալ փաստաթղթեր.

տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր.

միջազգային փոստային առաքանիների փոխադրման ժամանակ դրանց ուղեկցող փաստաթուղթ՝ սահմանված Համաշխարհային փոստային Միության ակտերով.

փոխադրվող ապրանքների վերաբերյալ փոխադրողի մոտ առկա առևտրային փաստաթղթեր.

տեղեկություններ՝

միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի պետական գրանցման մասին.

ապրանքները փոխադրողի մասին (անվանումն ու հասցեն).

ապրանքների ուղարկման երկրի և նշանակման երկրի մասին (անվանումները).

ապրանքներն ուղարկողի և ստացողի մասին (անվանումներն ու հասցեները).

ապրանքները վաճառողի և ստացողի մասին՝ փոխադրողի մոտ առկա առևտրային փաստաթղթերին համապատասխան.

բեռնատեղիների քանակի, դրանց նշագրումների և ապրանքների փաթեթվածքների տեսակների մասին.

ապրանքների մասին (ապրանքների անվանումները և ծածկագրերը՝ նվազագույնը առաջին 6 նիշերով՝ Ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգին կամ Արտաքին առևտրային գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան).

ապրանքների համաքաշի մասին (արտահայտված կիլոգրամներով) կամ ապրանքների ծավալի մասին (արտահայտված խորանարդ մետրերով).

այնպիսի ապրանքների առկայության (բացակայության) մասին, որոնց ներմուծումը Միության մաքսային տարածք արգելված կամ սահմանափակված է.

միջազգային ապրանքատրանսպորտային բեռնագրի կազմման վայրի ու ամսաթվի մասին.

բեռնարկղերի նույնականացման համարների մասին.

2) ջրային տրանսպորտով միջազգային փոխադրում իրականացնելիս՝

ընդհանուր հայտարարագիր.

բեռի հայտարարագիր.

նավում առկա պաշարների հայտարարագիր.

նավի անձնակազմի անձնական իրերի հայտարարագիր.

նավի անձնակազմի ցուցակ.

ուղևորների ցուցակ.

տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր, եթե ապրանքի մասին սույն ենթակետով նախատեսված տեղեկությունները չեն պարունակվում բեռի հայտարարագրում.

միջազգային փոստային առաքանիների փոխադրման ժամանակ դրանց ուղեկցող փաստաթուղթ՝ սահմանված Համաշխարհային փոստային Միության ակտերով.

տեղեկություններ՝

նավի գրանցման և ազգային պատկանելիության մասին.

նավի մասին (անվանումը և նկարագրությունը.

նավապետի մասին (ազգանունը).

ծովային գործակալի մասին (ազգանունը և հասցեն).

նավի ուղևորների մասին (նրանց թիվը, ազգանունները, անունները, քաղաքացիությունը (հպատակագրումը),

ծննդյան ամսաթիվն ու վայրը, նստեցման և իջեցման նավահանգիստները).
նավի անձնակազմի անդամների թվի և կազմի մասին.
նավի ելքի նավահանգստի և մուտքի նավահանգստի (անվանումները) մասին.
բեռնատեղիների քանակի, դրանց նշագրումների և ապրանքների փաթեթվածքների տեսակների մասին.
ապրանքների մասին (անվանումները, ընդհանուր քանակը և նկարագրությունը).
ապրանքների բեռնման նավահանգստի և դատարկման նավահանգստի մասին (անվանումները).
տվյալ նավահանգստում դատարկման ենթակա ապրանքների վերաբերյալ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի համարների մասին.
նավում մնացող ապրանքների դատարկման նավահանգիստների մասին (անվանումները).
առաջին նավահանգիստների մասին, որտեղից ուղարկվում են ապրանքները (անվանումները).
նավում առկա պաշարների մասին (անվանումները և քանակը).
նավում միջազգային փոստային առաքանիների առկայության (բացակայության) մասին.
նավում այնպիսի դեղամիջոցների առկայության մասին, որոնց բաղադրության մեջ պարունակվում են թմրանյութեր, ուժեղ ազդեցություն ունեցող նյութեր, հոգեմետ (հոգեներգործուն) և թունավոր նյութեր.
նավում վտանգավոր ապրանքների, այդ թվում՝ զենքի, զինամթերքի առկայության (բացակայության) մասին.
բեռնարկղերի նույնականացման համարների մասին.
3) օդային տրանսպորտով միջազգային փոխադրում իրականացնելիս՝
քաղաքացիական ավիացիայի ոլորտում գործող միջազգային պայմանագրերով նախատեսված փոխադրողի ստանդարտ փաստաթուղթ (ընդհանուր հայտարարագիր).
օդանավով փոխադրվող ապրանքների մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ (բեռնային փոխադրման ամփոփագիր).
օդանավում առկա պաշարների մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ.
տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր.
օդանավով փոխադրվող ուղևորների և նրանց ուղեբեռների մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ (ուղևորային փոխադրման ամփոփագիր).
միջազգային փոստային առաքանիների փոխադրման ժամանակ դրանց ուղեկցող փաստաթուղթ՝ սահմանված Համաշխարհային փոստային Միության ակտերով.
փոխադրվող ապրանքների վերաբերյալ փոխադրողի մոտ առկա առևտրային փաստաթղթեր.
տեղեկություններ՝
օդանավի ազգային պատկանելիության նշանների և գրանցման նշանների մասին.
չվերթի համարի, թռիչքի երթուղու, օդանավի թռիչքի մեկնարկային կետի և ժամանման կետի մասին.
օդանավը շահագործողի մասին (անվանումը).
օդանավի անձնակազմի անդամների թվի և կազմի մասին.
օդանավի ուղևորների մասին (նրանց թիվը, ազգանունները և սկզբնատառերը, նստեցման ու իջեցման կետերի անվանումները).
ապրանքների մասին (անվանումները).
բեռնագրի համարի, բեռնատեղիների քանակի մասին՝ ըստ յուրաքանչյուր բեռնագրի.
ապրանքների բեռնման կետի և դատարկման կետի մասին (անվանումները).
օդանավ բեռնվող կամ դրանից դատարկվող պաշարների քանակի մասին.
օդանավում միջազգային փոստային առաքանիների առկայության (բացակայության) մասին.
օդանավում այնպիսի ապրանքների առկայության (բացակայության) մասին, որոնց ներմուծումը Միության մաքսային տարածք արգելված կամ սահմանափակված է, ինչպես նաև իրենց բաղադրության մեջ թմրանյութեր, ուժեղ ազդեցություն ունեցող միջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) և թունավոր նյութեր պարունակող դեղամիջոցների, զենքի, զինամթերքի առկայության (բացակայության) մասին.
բեռնարկղերի նույնականացման համարների մասին.
4) երկաթուղային տրանսպորտային միջոցով միջազգային փոխադրում իրականացնելիս՝
տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր.
երկաթուղային շարժակազմի վերաբերյալ փոխանցման ամփոփագիր.
պաշարների մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ.
միջազգային փոստային առաքանիների փոխադրման ժամանակ դրանց ուղեկցող փաստաթուղթ՝ սահմանված Համաշխարհային փոստային Միության ակտերով.
փոխադրվող ապրանքների վերաբերյալ փոխադրողի մոտ առկա առևտրային փաստաթղթեր.
տեղեկություններ՝
ապրանքներն ուղարկողի և ստացողի մասին (անվանումներն ու հասցեները).
ապրանքներն ուղարկող կայարանի և նշանակման կայարանի մասին.
բեռնատեղիների քանակի, դրանց նշագրումների և ապրանքների փաթեթվածքների տեսակների մասին.
ապրանքների մասին (ապրանքների անվանումները և ծածկագրերը՝ նվազագույնը առաջին 6 նիշերով՝ Ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգին կամ Արտաքին առևտրային գործունեության

ապրանքային անվանացանկին համապատասխան).

ապրանքների համաքաշի մասին (արտահայտված կիլոգրամներով).

բեռնարկղերի նույնականացման համարների մասին:

2. Անկախ տրանսպորտային միջոցի տեսակից, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը), Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման մասին մաքսային մարմնին սույն հոդվածում նշված փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացնելու միջոցով ծանուցելիս փոխադրողի կողմից ներկայացվում են՝

1) փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ, որոնք հաստատում են սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան սահմանված արգելքների և սահմանափակումների պահպանումը.

2) նախնական տեղեկատվության գրանցման մասին տեղեկություններ՝ նշելով նախնական տեղեկատվության գրանցման համարը, եթե սույն Օրենսգրքի 11-րդ հոդվածին համապատասխան Միության մաքսային տարածք ժամանած ապրանքների համար մաքսային մարմին է ներկայացվել նախնական տեղեկատվություն.

3) տարանցման հայտարարագիր՝ Միության մաքսային տարածք ժամանած Միության ապրանքների և սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 4-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքների համար, որոնք ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքով և (կամ) ծովով փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար:

3. Եթե սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան ներկայացման ենթակա տեղեկություններն առկա չեն փոխադրողի կողմից ներկայացված փաստաթղթերում, կամ եթե արգելքների և սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթերը չեն ներկայացվում սույն Օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, ապա փոխադրողը պարտավոր է ներկայացնել պակասող տեղեկությունները պարունակող այլ փաստաթղթեր կամ ազատ ձևով շարադրված դիմում ներկայացնելու միջոցով հայտնել պակասող տեղեկությունները և (կամ) չներկայացվող փաստաթղթերի մասին տեղեկությունները:

4. Միության մաքսային տարածք միջազգային փոստային առաքանիների ժամանման մասին մաքսային մարմնին ծանուցելիս փոխադրողն այդ փոստային առաքանիների համար ներկայացնում է միջազգային փոստային առաքանիների փոխադրման ժամանակ դրանց ուղեկցող՝ Համաշխարհային փոստային Միության ակտերով սահմանված փաստաթղթերը և տեղեկություններ՝ սույն Օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան:

5. Կախված տրանսպորտային միջոցի տեսակից, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը), Հանձնաժողովն իրավասու է որոշելու Միության մաքսային տարածք ժամանած ապրանքների մասին մաքսային մարմնին ծանուցելու առանձնահատկությունները՝ որոշակի ժամանակահատվածում միջազգային փոխադրում իրականացնող միևնույն տրանսպորտային միջոցով Միության մաքսային սահմանով ապրանքների պարբերական տեղափոխման դեպքում:

Հոդված 90. Ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և ապրանքների հետ կատարվող բեռնային մյուս գործողությունները, ինչպես նաև միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների փոխարինումը, որոնք իրականացվում են ժամանման վայրում

1. Ժամանման վայրում կարող է իրականացվել ապրանքների բեռնաթափում, փոխաբեռնում (վերաբեռնում) և ապրանքների հետ կատարվող բեռնային այլ գործողություններ, ինչպես նաև Միության մաքսային տարածք ապրանքները հասցրած միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների փոխարինում՝ այլ տրանսպորտային միջոցներով:

2. Ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և ապրանքների հետ կատարվող բեռնային մյուս գործողությունները, ինչպես նաև ապրանքները Միության մաքսային տարածք հասցրած միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների փոխարինումն այլ տրանսպորտային միջոցներով իրականացվում են մաքսային մարմնի աշխատանքային ժամերին և հատուկ այդ նպատակով նախատեսված վայրերում՝ շահագրգիռ անձի հարցման հիման վրա տրվող՝ մաքսային մարմնի թույլտվությամբ, իսկ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ և (կամ) երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ մաքսային մարմնին էլեկտրոնային կամ գրավոր ձևով ծանուցելուց հետո:

3. Վթարի, անհաղթահարելի ուժի ազդեցության կամ ժամանման վայրում առաջացած այլ հանգամանքների դեպքում ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և ապրանքների հետ կատարվող բեռնային մյուս գործողությունները, ինչպես նաև ապրանքները Միության մաքսային տարածք հասցրած՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների փոխարինումն այլ տրանսպորտային միջոցներով կարող են կատարվել առանց մաքսային մարմնի՝ սույն հոդվածի 2-րդ կետում նշված թույլտվության կամ ծանուցման, եթե այդ գործողությունները չկատարելը կարող է հանգեցնել ապրանքների անվերադարձ կորստի և (կամ) ոչնչացման: Այդ դեպքում այդպիսի գործողություններ կատարած անձը մաքսային մարմնին տեղեկացնում է դրանց կատարման մասին այդ գործողությունները կատարելու պահից ոչ ուշ, քան 2 ժամվա ընթացքում:

Հոդված 91. Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացումն ու դադարումը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման դեպքում փոխադրողի՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է ապրանքների՝ Միության մաքսային սահմանը հատելու պահից:

2. Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման դեպքում փոխադրողի՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) ապրանքները ժամանման վայր հասցնելը և ժամանակավոր պահպանման հանձնելը կամ մաքսային մարմնի կողմից ժամանման վայրում ապրանքների բացթողումը.

2) Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնումը, եթե այդ ապրանքները Միության մաքսային տարածք ժամանելուց հետո դուրս չեն բերվել Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրից.

3) օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ապրանքների ձևակերպումը՝ սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո.

4) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձում.

5) վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան վրա է հասել այդ օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը.

6) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

7) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

8) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

4. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) այն օրը, երբ ապրանքները հատում են Միության մաքսային սահմանը՝ ապրանքները ժամանման վայր չհասցվելու դեպքում, իսկ եթե այդ օրը որոշված չէ, ապա ապրանքները ժամանման վայր չհասցնելու փաստը հայտնաբերելու օրը.

2) ապրանքների կորստի օրը՝ ժամանման վայրում ապրանքների կորստի դեպքում՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի դեպքերի, իսկ եթե այդ օրը որոշված չէ, ապա այն օրը, երբ ապրանքները հատում են Միության մաքսային սահմանը.

3) ապրանքների արտահանման օրը, ապրանքները ժամանման վայրից Միության մաքսային տարածքի այլ հատվածներ արտահանելու դեպքում՝ առանց դրանք ժամանակավոր պահպանման հանձնելու կամ առանց ժամանման վայրում մաքսային մարմնի կողմից դրանց բացթողման, իսկ եթե այդ օրը որոշված չէ, ապա այն օրը, երբ ապրանքները հատում են Միության մաքսային սահմանը:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե ապրանքները ձևակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են

սույն Օրենսգրքի 7-րդ և 12-րդ գլուխներին համապատասխան:

Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերը, որոնք գործում են սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ հանդիսացող օրվա դրությամբ:

Եթե ապրանքների մաքսային արժեքը որոշելու, ինչպես նաև ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար պահանջվում է արտարժույթը վերահաշվարկել անդամ պետության արժույթով, ապա այդ վերահաշվարկն իրականացվում է սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ հանդիսացող օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Այն դեպքում, երբ մաքսային մարմինն իր տրամադրության տակ չունի ապրանքների (դրանց բնույթի, անվանման, քանակի, ծագման և (կամ) մաքսային արժեքի) մասին ճշգրիտ տեղեկություններ, վճարման ենթակա ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար բազան որոշվում է մաքսային մարմնի մոտ առկա տեղեկությունների հիման վրա, իսկ ապրանքների դասակարգումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ կետը:

Եթե ապրանքի ծածկագիրն Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանվել է 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով, ապա՝

ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հարկերի հաշվարկման համար կիրառվում է այն խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող ավելացված արժեքի հարկի, ակցիզների (ակցիզային հարկի կամ ակցիզային վճարի) դրույքաչափերից ամենամեծը, որոնց նկատմամբ սահմանվել է ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը՝ հաշվի առնելով սույն կետի տասներորդ պարբերությունը:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով ապրանքների՝ սույն Օրենսգրքի 4-րդ գլխին համապատասխան հաստատված ծագումից և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններից: Եթե ապրանքների ծագումը և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ հաստատված չեն, ապա հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը, որոնք սահմանվել են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն ծածկագրին դասվող ապրանքների համար, եթե ապրանքի դասակարգումն իրականացվել է 10 նիշի մակարդակով, կամ խմբավորման մեջ մտնող ապրանքների համար, եթե ապրանքների ծածկագրերը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանվել են 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով:

Ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները հետագայում պարզվելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով այդ ճշգրիտ տեղեկությունները, կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի՝ ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված գումարների վերադարձ (հաշվանցում) կամ չվճարված գումարների բռնագանձում՝ սույն Օրենսգրքի 10-րդ և 11-րդ գլուխներին և 76-րդ և 77-րդ հոդվածներին համապատասխան:

6. Օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ապրանքները ձևակերպելու, սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան մաքսային մարմինների կողմից ապրանքներն արգելանքի վերցնելու (արգելապահելու), ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը կատարելուց հետո ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու և (կամ) դրանք (լրիվ կամ մասնակիորեն) բռնագանձելու դեպքում սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին և 76-րդ հոդվածին համապատասխան:

Գլուխ 15

Ապրանքների մեկնումը Միության մաքսային տարածքից և մեկնման հետ կապված մաքսային գործառնությունները

Հոդված 92. Ապրանքների՝ Միության մաքսային տարածքից մեկնման հետ կապված մաքսային գործառնությունները և դրանց իրականացման կարգը

1. Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման համար փոխադրողը պարտավոր է մաքսային մարմին

ներկայացնել սույն Օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները՝ կախված այն տրանսպորտային միջոցի տեսակից, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը), եթե սույն Օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

2. Անկախ տրանսպորտի տեսակից, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը), Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման համար փոխադրողի կամ այլ անձի կողմից սույն հոդվածի 8-րդ կետին համապատասխան ներկայացվում են՝

1) ապրանքների հայտարարագիրը կամ դրա պատճենը, տարանցման հայտարարագիրը՝ սույն հոդվածի 3-րդ կետում նշված ապրանքների համար, կամ ապրանքների հայտարարագրի կամ տարանցման հայտարարագրի մասին տեղեկությունները, եթե ապրանքների այդ հայտարարագիրը կամ տարանցման հայտարարագիրը չեն ներկայացվում սույն Օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, կամ Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանումը թույլատրող այլ փաստաթուղթ.

2) սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան սահմանված արգելքների և սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները:

3. Միության մաքսային տարածքից մեկնելու համար տարանցման հայտարարագիր ներկայացվում է այն ապրանքների համար, որոնք՝

1) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ Միության մաքսային տարածքով փոխադրվել են ժամանման վայրում տեղակայված ուղարկող մաքսային մարմնից մինչև մեկնման վայրում տեղակայված նշանակման մաքսային մարմին.

2) հասցվել են մեկնման վայրում տեղակայված մաքսային մարմին՝ կապված սույն Օրենսգրքի 145-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան ապրանքների առաքման վայրի փոփոխության հետ.

3) ձևակերպվել են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ սույն Օրենսգրքի 43-րդ գլխին համապատասխան Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մյուս մաս փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար:

4. Սույն հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը կամ տեղեկությունները Միության մաքսային տարածքից օտարերկրյա ապրանքների մեկնման համար չեն ներկայացվում հետևյալ դեպքերում՝

1) այդ օտարերկրյա ապրանքները Միության մաքսային տարածք ժամանելուց հետո դուրս չեն բերվել Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրից.

2) այդ օտարերկրյա ապրանքները գտնվում են օդանավում և սույն Օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան չեն ձևակերպվել «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով:

5. Եթե սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան ներկայացման ենթակա տեղեկություններն առկա չեն փոխադրողի կողմից ներկայացված փաստաթղթերում, կամ եթե ապրանքների հայտարարագիրը, տարանցման հայտարարագիրը և (կամ) արգելքների և սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթերը չեն ներկայացվում սույն Օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, ապա փոխադրողն իրավասու է ներկայացնելու պակասող տեղեկությունները պարունակող այլ փաստաթղթեր կամ ազատ ձևով շարադրված դիմում ներկայացնելու միջոցով հայտնել պակասող տեղեկությունները և (կամ) չներկայացվող փաստաթղթերի մասին տեղեկությունները:

6. Միության մաքսային տարածքից միջազգային փոստային առաքանիների մեկնման դեպքում փոխադրողն այդ փոստային առաքանիների համար ներկայացնում է միջազգային փոստային առաքանիների փոխադրման ժամանակ դրանց ուղեկցող փաստաթղթերը՝ սահմանված Համաշխարհային փոստային Միության ակտերով, և տեղեկություններ՝ սույն Օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան:

7. Փոխադրողի անունից սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված փաստաթղթերն ու տեղեկությունները կարող են ներկայացվել մաքսային ներկայացուցչի կամ փոխադրողի հանձնարարությամբ գործող այլ անձանց կողմից, եթե դա թույլատրվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

8. Ապրանքները ջրային տրանսպորտով փոխադրելիս սույն հոդվածի 2-րդ կետում նշված փաստաթղթերն ու տեղեկությունները կարող են ներկայացվել հայտարարատուի կամ առաքողի (էքսպեդիտորի) կողմից, եթե դա թույլատրվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

9. Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնումը կարող է իրականացվել մաքսային մարմնի թույլտվությամբ:

Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման համար մաքսային մարմնի թույլտվությունը, բացառությամբ անձնական օգտագործման ապրանքների, ձևակերպվում է մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի կիրառմամբ և մաքսային հայտարարագրում կամ դրա պատճենի կամ Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանումը թույլատրող այլ փաստաթղթի և տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի վրա մաքսային մարմնի կողմից համապատասխան նշումներ կատարելու միջոցով:

Եթե Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման համար սույն Օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան մաքսային հայտարարագիր չի ներկայացվում, Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման համար մաքսային մարմնի թույլտվությունը ձևակերպվում է մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի կիրառմամբ և տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի վրա մաքսային մարմնի կողմից համապատասխան

նշումներ կատարելու միջոցով:

Ուղեկցվող ուղեբեռով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների՝ Միության մաքսային տարածքից մեկնման համար մաքսային մարմնի թույլտվությունն այդ ապրանքների բացթողումն է:

10. Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման համար, բացառությամբ ուղեկցվող ուղեբեռով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների, մաքսային մարմնի թույլտվության մասին տեղեկությունները մուտքագրվում են մաքսային մարմինների տեղեկատվական համակարգեր:

11. Կախված տրանսպորտային միջոցի տեսակից, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը), Հանձնաժողովն իրավասու է որոշելու Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման համար փոխադրողի կողմից փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացման առանձնահատկությունները՝ որոշակի ժամանակահատվածում միջազգային փոխադրում իրականացնող միևնույն տրանսպորտային միջոցով Միության մաքսային սահմանով ապրանքների պարբերական տեղափոխման դեպքում:

12. Սույն գլխի դրույթները, բացառությամբ սույն հոդվածի 9-րդ կետի, չեն կիրառվում Միության մաքսային տարածքից ֆիզիկական անձանց կողմից արտահանվող անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ:

Միության մաքսային տարածքից ֆիզիկական անձանց կողմից արտահանվող անձնական օգտագործման ապրանքների մեկնման համար մաքսային գործառնություններն իրականացվում են սույն Օրենսգրքի 37-րդ գլխին համապատասխան:

13. Սույն գլխի դրույթները չեն կիրառվում՝

1) նավերով և օդանավերով փոխադրվող ապրանքների նկատմամբ, որոնք Միության մաքսային տարածքը հատում են՝ առանց Միության մաքսային տարածքում տեղակայված նավահանգիստ մտնելու կամ օդանավակայանում վայրէջք կատարելու.

2) Միության ապրանքների և օտարերկրյա ապրանքների նկատմամբ, որոնք Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով նավերով և օդանավերով փոխադրվում են Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մյուս մասը՝ սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքերում.

3) խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով փոխադրվող ապրանքների նկատմամբ:

Հոդված 93. Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանման հաստատումը

Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումը մաքսային մարմինների կողմից հաստատելու կարգը որոշվում է Հանձնաժողովի կողմից:

Հոդված 94. Ապրանքներին ներկայացվող պահանջները Միության մաքսային տարածքից դրանց մեկնման ժամանակ

1. Օտարերկրյա ապրանքները պետք է փաստացի արտահանվեն Միության մաքսային տարածքից նույն քանակով և նույն վիճակում, ինչպես որ եղել են այն պահին, երբ դրանք ձևակերպվել են որոշակի մաքսային ընթացակարգով, կամ երբ դրանք ժամանել են Միության մաքսային տարածք, եթե այդ ապրանքները դուրս չեն բերվել Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրից՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի:

Թույլատրվում է այդ օտարերկրյա ապրանքների քանակի և (կամ) վիճակի փոփոխությունը՝ բնական մաշվածության կամ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում ապրանքների բնական հատկությունների փոփոխության հետևանքով, կամ դրանց քանակի փոփոխությունը այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցում առկա մնացորդներն անհնար է դատարկել:

2. Միության ապրանքները պետք է փաստացի արտահանվեն Միության մաքսային տարածքից նույն քանակով և նույն վիճակում, ինչպես որ եղել են այն պահին, երբ դրանք ձևակերպվել են որոշակի մաքսային ընթացակարգով՝ բացառությամբ սույն կետի 3-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերի:

3. Թույլատրվում է Միության ապրանքների քանակի և (կամ) վիճակի փոփոխությունը՝

1) բնական մաշվածության կամ կորստի կամ փոխադրման, (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում ապրանքների բնական հատկությունների փոփոխության հետևանքով, կամ դրանց քանակի փոփոխությունը այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցում առկա մնացորդներն անհնար է դատարկել.

2) Միության մաքսային տարածքից նավերով արտահանվող, լիրքով, խուռնաբեռն, լցվածքով փոխադրվող ապրանքների դեպքում, եթե դա տեղի է ունեցել նավի բեռնասրահ (հատվածամաս, լցարան) Միության այդ ապրանքները բեռնելու ժամանակ դրանք խառնելու արդյունքում:

4. Միության մաքսային տարածքից նավերով արտահանվող, լիրքով, խուռնաբեռն, լցվածքով փոխադրվող ապրանքների ցանկը, որոնց դեպքում Միության մաքսային տարածքից մեկնման ժամանակ թույլատրվում է քանակի և

(կամ) վիճակի այնպիսի փոփոխություն, որը տեղի է ունեցել նավի բեռնասրահներ (հատվածամասեր, լցարաններ) այդ ապրանքները բեռնելու ժամանակ դրանք խառնելու արդյունքում, սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

5. Միության ապրանքները Միության մաքսային տարածքից կարող են արտահանվել դրանք որոշակի մաքսային ընթացակարգով ձևակերպելու ժամանակ հայտագրված քանակից ավելի քիչ քանակով՝ անկախ ապրանքների քանակի նվազման պատճառներից:

Սույն կետի առաջին պարբերությունը չի կիրառվում սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում և 215-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված ապրանքների նկատմամբ:

6. Անձինք պատասխանատվություն չեն կրում սույն հոդվածի 1-ին կետի առաջին պարբերության և 2-րդ կետի դրույթները չպահպանելու համար այն դեպքում, երբ անվերադարձ կորուստը կամ ապրանքների քանակի և (կամ) վիճակի փոփոխությունը տեղի է ունեցել վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Հոդված 95. Ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և ապրանքների հետ կատարվող բեռնային մյուս գործողությունները, ինչպես նաև միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների փոխարինումը, որոնք իրականացվում են մինչև Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնելը

1. Մաքսային հսկողության տակ գտնվող և Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և ապրանքների հետ կատարվող բեռնային մյուս գործողությունները, ինչպես նաև այդպիսի ապրանքներ փոխադրող՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների փոխարինումն այլ տրանսպորտային միջոցներով թույլատրվում է այն մաքսային մարմնի թույլտվությամբ, որի գործունեության տարածքում իրականացվում է համապատասխան գործողությունը, իսկ եթե ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ իրականացվող այդպիսի գործողությունները կարող են իրականացվել առանց դրանց վրա դրված մաքսային կապարակնիքներն ու կնիքները վնասելու, կամ եթե ապրանքների վրա մաքսային կապարակնիքներ ու կնիքներ դրված չեն եղել՝ մաքսային մարմնին էլեկտրոնային կամ գրավոր ձևով ծանուցելուց հետո:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված գործողությունները կարող են իրականացվել առանց մաքսային մարմնի թույլտվությունը ստանալու կամ նրան ծանուցելու, եթե այդպիսի գործողությունները իրականացվում են առաջին կամ երրորդ տիպի վկայականներ ունեցող լիազորված տնտեսական օպերատորների կողմից:

3. Մաքսային մարմինն իրավասու է մերժելու սույն հոդվածի 1-ին կետում նշված գործողությունների իրականացման համար թույլտվություն տալը, եթե տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում, արգելքների կամ սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթերում կամ անդամ պետությունների պետական մարմինների կողմից տրված այլ փաստաթղթերում առկա է այդպիսի գործողություններ իրականացնելու արգելք:

4. Անձի դիմումի հիման վրա՝ մաքսային մարմինը թույլատրում է մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների հետ մաքսային մարմնի աշխատանքային ժամերից դուրս բեռնային գործողությունների կատարումը՝ հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ կետը:

5. Սույն գլխի կիրառման նպատակներով միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոց ասելով ենթադրվում է նաև այն տրանսպորտային միջոցը, որով ապրանքները փոխադրվում են Միության մաքսային տարածքով՝ Միության մաքսային տարածքի սահմանների ներսում:

6. Սույն հոդվածի 1-ին կետում նշված գործողությունները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) ապրանքների նկատմամբ կատարվում են սույն Օրենսգրքի 148-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 96. Վթարի, անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում կամ այլ հանգամանքներում ձեռնարկվող միջոցները

1. Եթե ապրանքները մեկնման վայրից մինչև Միության մաքսային սահմանի փաստացի հատման վայր հասցնելն ընդհատվում է վթարի, անհաղթահարելի ուժի ազդեցության կամ ապրանքներն առաքելուն խոչընդոտող այլ հանգամանքների հետևանքով, ապա փոխադրողը պարտավոր է ձեռնարկել ապրանքների պահպանվածությունն ապահովելուն ուղղված բոլոր միջոցները, անհապաղ տեղեկացնել մոտակա մաքսային մարմնին այդ հանգամանքների և ապրանքների գտնվելու վայրի մասին, ինչպես նաև (տրանսպորտային միջոցի վնասված լինելու դեպքում) փոխադրել ապրանքները կամ ապահովել դրանց փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) մոտակա մաքսային մարմին կամ մաքսային մարմնի կողմից նշված այլ վայր:

2. Փոխադրողի կամ այլ անձանց՝ սույն հոդվածի 1-ին կետի պահանջների կատարման առնչությամբ կրած ծախսերը մաքսային մարմինների կողմից չեն փոխհատուցվում:

Հոդված 97. Միության մաքսային տարածքից օտարերկրյա ապրանքների մեկնման դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացումն ու դադարումը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. Միության մաքսային տարածքից օտարերկրյա ապրանքների մեկնման դեպքում փոխադրողի՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման համար թույլտվությունը մաքսային մարմնի կողմից տրամադրվելու պահից:

2. Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման դեպքում փոխադրողի՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) ապրանքների՝ Միության մաքսային սահմանը փաստացի հատելը.

2) օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ապրանքների ձևակերպումը՝ սույն հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալուց հետո.

3) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձում.

4) վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան վրա է հասել այդ օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը.

5) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

6) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

7) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման Միության մաքսային տարածքից մեկնելուց մինչև Միության մաքսային սահմանի փաստացի հատման պահը օտարերկրյա ապրանքների կորստի դեպքում՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով դրանց ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի դեպքերի:

Նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում ապրանքների կորստի օրը, իսկ եթե այդ օրը որոշված չէ, ապա՝ Միության մաքսային սահմանից ապրանքների մեկնման թույլտվությունը մաքսային մարմնի կողմից տրամադրվելու օրը:

4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե ապրանքները ձևակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են սույն Օրենսգրքի 7-րդ և 12-րդ գլուխներին համապատասխան:

Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերը, որոնք գործում են սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ հանդիսացող օրվա դրությամբ:

Եթե ապրանքների մաքսային արժեքը որոշելու, ինչպես նաև ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար պահանջվում է արտարժույթը վերահաշվարկել անդամ պետության արժույթով, այդ վերահաշվարկն իրականացվում է սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան

ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ հանդիսացող օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Այն դեպքում, երբ մաքսային մարմինն իր տրամադրության տակ չունի ապրանքների (դրանց բնույթի, անվանման, քանակի, ծագման և (կամ) մաքսային արժեքի) մասին ճշգրիտ տեղեկություններ, վճարման ենթակա ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար բազան որոշվում է մաքսային մարմնի մոտ առկա տեղեկությունների հիման վրա, իսկ ապրանքների դասակարգումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ կետը:

Եթե ապրանքի ծածկագիրը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանվել է 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով, ապա՝

ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հարկերի հաշվարկման համար կիրառվում է այն խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող ավելացված արժեքի հարկի դրույքաչափերից ամենամեծը, ակցիզների (ակցիզային հարկի կամ ակցիզային տուրքի) դրույքաչափերից ամենամեծը, որոնց նկատմամբ սահմանվել է մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը՝ հաշվի առնելով սույն կետի տասներորդ պարբերությունը:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով ապրանքների՝ սույն Օրենսգրքի 4-րդ գլխին համապատասխան հաստատված ծագումից և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններից: Եթե ապրանքների ծագումը և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ հաստատված չեն, ապա հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը, որոնք սահմանվել են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն ծածկագրին դասվող ապրանքների համար, եթե ապրանքի դասակարգումն իրականացվել է 10 նիշի մակարդակով, կամ խմբավորման մեջ մտնող ապրանքների համար, եթե ապրանքների ծածկագրերը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանվել են 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով:

Ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները հետագայում պարզվելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով այդ ճշգրիտ տեղեկությունները, կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի՝ ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված գումարների վերադարձ (հաշվանցում) կամ չվճարված գումարների բռնագանձում՝ սույն Օրենսգրքի 10-րդ և 11-րդ գլուխներին և 76-րդ և 77-րդ հոդվածներին համապատասխան:

5. Օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ապրանքները ձևակերպելու, սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան մաքսային մարմինների կողմից ապրանքներն արգելանքի վերցնելու (արգելապահելու), ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը կատարելուց հետո ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու և (կամ) դրանք (լրիվ կամ մասնակիորեն) բռնագանձելու դեպքում սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին և 76-րդ հոդվածին համապատասխան:

Գլուխ 16

Ապրանքների ժամանակավոր պահպանումը և ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու հետ կապված մաքսային գործառնությունները

Հոդված 98. Ապրանքների ժամանակավոր պահպանման մասին ընդհանուր դրույթներ

1. Ապրանքների ժամանակավոր պահպանում ասելով ենթադրվում է ժամանակավոր պահպանման վայրերում օտարերկրյա ապրանքների պահպանում մինչև դրանց բացթողումը մաքսային մարմնի կողմից կամ Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման համար մաքսային մարմնի թույլտվությունն ստանալը, եթե օտարերկրյա ապրանքները պահվում են Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրում, կամ մինչև հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով կամ վարչական իրավախախտման մասին գործով վարույթի (վարչական վարույթի վարման) ընթացքում ապրանքներն առգրավելու կամ դրանց վրա արգելանք դնելու օրը:

2. Ապրանքները ենթակա են ժամանակավոր պահպանման հանձնելու այն դեպքերում և այն ժամկետներով, որոնք նախատեսված են սույն Օրենսգրքի սույն հոդվածի 4-րդ կետով, 88-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով, 114-րդ հոդվածի 7-րդ կետով, 129-րդ հոդվածի 6-րդ կետով, 152-րդ հոդվածով, 240-րդ հոդվածի 3-րդ կետով, 259-րդ հոդվածով և 286-րդ հոդվածի 12-րդ կետով, ինչպես նաև սահմանված են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ

օրենսդրությամբ՝ սույն Օրենսգրքի 7-րդ կետի վեցերորդ պարբերությանը և 88-րդ հոդվածի 8-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան:

3. Ապրանքների ժամանակավոր պահպանում չի կիրառվում այն ապրանքների նկատմամբ, որոնք տեղափոխվում են խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով, ինչպես նաև սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում:

4. Այն ապրանքները, որոնք առգրավվել են կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումներն ստուգելու, քրեական գործով կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական վարույթ վարելու) ընթացքում, և որոնք ենթակա են մաքսային հայտարարագրման, և որոնց նկատմամբ ընդունվել է դրանք վերադարձնելու մասին որոշում, այդ թվում՝ ապրանքների բռնագրավման մասին որոշումը վերացնելու կամ բռնագրավման ձևով պատիժը (բռնագանձումը) պատժի (բռնագանձման) այլ տեսակով փոխարինելու դեպքում, պետք է հանձնվեն ժամանակավոր պահպանման՝

1) դատարանի կամ այլ լիազորված մարմնի (պաշտոնատար անձի)՝ քրեական կամ վարչական պատասխանատվությունից ազատելու մասին որոշումը.

2) լիազորված մարմնի (պաշտոնատար անձի)՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը.

3) դատարանի կամ լիազորված մարմնի (պաշտոնատար անձի)՝ քրեական գործը կամ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը դադարեցնելու մասին որոշումը.

4) դատարանի մեղադրական (արդարացման) դատավճիռը.

5) դատարանի կամ լիազորված մարմնի (պաշտոնատար անձի)՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը.

6) ապրանքների բռնագրավման մասին որոշումը վերացնելու կամ բռնագրավման ձևով պատիժը (բռնագանձումը) պատժի (բռնագանձման) այլ տեսակով փոխարինելու մասին դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ, քան 10 օրացուցային օրվա ընթացքում:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված ժամկետում ժամանակավոր պահպանման չհանձնված ապրանքներն արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմնի կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

6. Սույն հոդվածի 4-րդ կետի դրույթները չեն կիրառվում, եթե այս կետում նշված ապրանքների նկատմամբ մինչև ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար այս կետով նախատեսված ժամկետը լրանալը ներկայացվել է մաքսային հայտարարագիր:

7. Այն անձինք, որոնք ունեն լիազորություններ ժամանակավոր պահպանման հանձնված ապրանքների նկատմամբ, իրավունք չունեն օգտագործելու այդ ապրանքները, այդ թվում՝ դրանք ժամանակավոր պահպանման վայրի տարածքից մինչև դրանց բացթողումն արտահանելու, իսկ եթե օտարերկրյա ապրանքները գտնվում են ժամանակավոր պահպանման տակ Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում, ապա՝ մինչև դրանց բացթողումը կամ Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման համար մաքսային մարմնի թույլտվությունն ստանալը:

Սույն կետի առաջին պարբերությունը չի կիրառվում անդամ պետություն մշտական բնակության համար տեղափոխվելու, այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան փախստականի, հարկադրաբար տեղահանված անձի կարգավիճակ ստանալու մտադրություն ունեցող օտարերկրյա ֆիզիկական անձի այն անձնական օգտագործման ապրանքների առնչությամբ, որոնց ժամանակավոր պահպանումն իրականացվում է սույն Օրենսգրքի 259-րդ հոդվածին համապատասխան:

8. Անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերում թույլատրվում է մինչև ապրանքների բացթողումը փոխել ապրանքների ժամանակավոր պահպանման վայրը:

Օտարերկրյա ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) ապրանքների ժամանակավոր պահպանման մի վայրից ապրանքների ժամանակավոր պահպանման մեկ այլ վայր իրականացվում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան կամ, եթե դա նախատեսված է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ, առանց «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու՝ այդ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 99. Ապրանքների ժամանակավոր պահպանման վայրերը

1. Ապրանքների ժամանակավոր պահպանման վայրեր են համարվում ժամանակավոր պահպանման պահեստները և այն վայրերը, որտեղ, սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան, կարող է իրականացվել ապրանքների ժամանակավոր պահպանումը (այսուհետ՝ ժամանակավոր պահպանման վայրեր):

2. Ապրանքների ժամանակավոր պահպանումը կարող է իրականացվել ազատ պահեստի տարածքում, ԱՏԳ տարածքում, ապրանքներն ստացողի շինություններում, պահեստներում, բաց հրապարակներում և այլ տարածքներում, ինչպես նաև սույն Օրենսգրքով կամ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված այլ վայրերում:

3. Այն ապրանքները, որոնք կարող են վնաս պատճառել մյուս ապրանքներին, կամ որոնց համար պահանջվում են

պահպանման հատուկ պայմաններ, պետք է պահվեն այդպիսի ապրանքների պահպանման համար հատուկ հարմարեցված ժամանակավոր պահպանման վայրերում:

4. Ժամանակավոր պահպանման վայրերում ապրանքները տեղավորելը հաստատվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 100. Ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու հետ կապված մաքսային գործառնությունները և դրանց կատարման կարգը

1. Ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար փոխադրողը կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձ մաքսային մարմին է ներկայացնում տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր, առևտրային և (կամ) մաքսային փաստաթղթեր, որոնք պարունակում են ապրանքների, ապրանքներն ուղարկողի (ստացողի), ուղարկող երկրի և նշանակման երկրի մասին տեղեկություններ, կամ փաստաթուղթ, որը պարունակում է տեղեկություններ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ներկայացված նախնական տեղեկատվության գրանցման համարի մասին:

Փաստաթղթերը կարող են մաքսային մարմին ներկայացվել էլեկտրոնային տեսքով:

2. Մաքսային մարմինը ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված փաստաթղթերը գրանցում է այդ փաստաթղթերը մաքսային մարմին հանձնելուց հետո՝ ոչ ուշ, քան 1 ժամվա ընթացքում, և սույն հոդվածի 1-ին կետում նշված անձին տրամադրում է փաստաթղթերի գրանցումը հաստատող փաստաթուղթ:

Մաքսային մարմնի կողմից ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված փաստաթղթերի գրանցման և դրանց գրանցումը հաստատող փաստաթուղթ տրամադրելու հետ կապված մաքսային գործառնությունների կատարման կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

3. Ապրանքները համարվում են ժամանակավոր պահպանման տակ գտնվող՝ ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված փաստաթղթերը մաքսային մարմնի կողմից գրանցվելուց հետո, եթե սույն Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

4. Անդամ պետություն մշտական բնակության համար տեղափոխվելու, այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան փախստականի, հարկադրաբար տեղահանված անձի կարգավիճակ ստանալու մտադրություն ունեցող օտարերկրյա ֆիզիկական անձի անձնական օգտագործման ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու հետ կապված մաքսային գործառնությունները կատարվում են՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 259-րդ հոդվածը:

5. Ապրանքները երկրորդ կամ երրորդ տեսակի վկայականներ ունեցող, լիազորված տնտեսական օպերատորի՝ մաքսային հսկողության գոտի հանդիսացող կառույցներ, շինություններ (շինությունների մասեր) և (կամ) բաց հրապարակներ (բաց հրապարակների մասեր) առաքելիս ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու հետ կապված մաքսային գործառնությունները կատարվում են՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 440-րդ հոդվածը:

Հոդված 101. Ապրանքների ժամանակավոր պահպանման ժամկետը

1. Ապրանքների ժամանակավոր պահպանման ժամկետը հաշվարկվում է ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված փաստաթղթերը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվան հաջորդող օրվանից և կազմում է 4 ամիս՝ բացառությամբ սույն Օրենսգրքի սույն հոդվածի 2-րդ կետում և 259-րդ հոդվածում նշված դեպքերի:

Հանձնաժողովն իրավունք ունի ապրանքների առանձին կատեգորիաների համար սահմանել սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված ժամկետից առավել կարճ՝ ժամանակավոր պահպանման ժամկետ:

2. Միջազգային փոստային փոխանակման վայրերում (հաստատություններում) պահպանվող միջազգային փոստային առաքանիների, ինչպես նաև ուղևորին չհանձնված կամ նրա կողմից չպահանջված, օդային տրանսպորտային միջոցով Միության մաքսային սահմանով տեղափոխվող ուղեբեռի դեպքում ժամանակավոր պահպանման ժամկետը կազմում է 6 ամիս:

3. Ապրանքների ժամանակավոր պահպանման ժամկետը լրանալու դեպքում այն ապրանքները, որոնց բացթողումը չի իրականացվել, կամ որոնց վերաբերյալ չի ստացվել Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման թույլտվություն, եթե օտարերկրյա ապրանքները պահվում են Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրում, արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմնի կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությունում նշված դեպքի:

Նշված ապրանքներն արգելանքի չեն վերցվում (չեն արգելապահվում) մաքսային մարմնի կողմից այն դեպքում, երբ մաքսային հայտարարագիրը գրանցված է մաքսային մարմնի կողմից մինչև ժամանակավոր պահպանման ժամկետի լրանալը, սակայն մաքսային մարմինը մինչև ապրանքների ժամանակավոր պահպանման ժամկետի լրանալը չի

իրականացրել ապրանքների բացթողումը կամ չի մերժել ապրանքների բացթողումը: Ապրանքների բացթողումը մերժելու դեպքում այն ապրանքները, որոնց ժամանակավոր պահպանման ժամկետը լրացել է, արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմնի կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

Հոդված 102. Ժամանակավոր պահպանման տակ գտնվող ապրանքների հետ կապված գործողությունները

1. Ժամանակավոր պահպանման տակ գտնվող ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձինք իրավունք ունեն այդպիսի ապրանքների նկատմամբ իրականացնելու դրանց անփոփոխ վիճակի պահպանվածությունն ապահովելու համար անհրաժեշտ ընթացիկ գործողություններ, այդ թվում՝ տեսազննել և չափել ապրանքները, տեղափոխել դրանք ժամանակավոր պահպանման վայրի տարածք:

2. Սույն հոդվածի 1-ին կետում չնշված գործողությունները, այդ թվում՝ ապրանքների փորձանմուշներ և (կամ) նմուշներ վերցնելը, փաթեթվածքի վնասվածքները վերացնելը, ապրանքների քանակը և (կամ) բնութագրերը պարզելու համար փաթեթվածքը բացելը, ինչպես նաև հետագա փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար ապրանքները նախապատրաստելու համար անհրաժեշտ գործողությունները կատարվում են մաքսային մարմնի թույլտվությամբ:

Սույն կետի առաջին պարբերությունում նշված՝ մաքսային մարմնի թույլտվությունը տրամադրելու և այդպիսի թույլտվության տրամադրումը մերժելու կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

3. Անդամ պետություն մշտական բնակության համար տեղափոխվելու, այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան փախստականի, հարկադրաբար տեղահանված անձի կարգավիճակ ստանալու մտադրություն ունեցող օտարերկրյա ֆիզիկական անձի՝ ժամանակավոր պահպանման տակ գտնվող անձնական օգտագործման ապրանքների հետ կապված գործողություններն իրականացվում են սույն Օրենսգրքի 259-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 103. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացումը և դադարումը ապրանքների ժամանակավոր պահպանման դեպքում, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. Ժամանակավոր պահպանման հանձնվող օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է՝

1) փոխադրողի կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի համար, որը ներկայացրել է փաստաթղթեր ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար՝ այդ փաստաթղթերը մաքսային մարմնի կողմից գրանցվելու պահից.

2) ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի համար՝ ապրանքները ժամանակավոր պահպանման պահեստում տեղավորելու պահից.

3) ժամանակավոր պահպանման պահեստ չհամարվող վայրում ապրանքների ժամանակավոր պահպանում իրականացնող անձի համար՝ ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված փաստաթղթերը մաքսային մարմնի կողմից գրանցվելու պահից:

2. Ժամանակավոր պահպանման հանձնվող (հանձնված) օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) փոխադրողի կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի համար, որը ներկայացրել է փաստաթղթեր ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար՝

ժամանակավոր պահպանման պահեստում ապրանքների տեղավորում կամ ժամանակավոր պահպանման պահեստ չհամարվող վայրում այլ անձի կողմից ի ժամանակավոր պահպանում դրանց ընդունում.

սույն հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ապրանքների ձևակերպում.

2) ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի համար՝

ժամանակավոր պահպանման պահեստից ապրանքների տրամադրում՝ կապված դրանք մաքսային ընթացակարգով ձևակերպելու հետ.

սույն հոդվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ապրանքների ձևակերպում.

3) ժամանակավոր պահպանման պահեստներ չհամարվող վայրերում ապրանքների ժամանակավոր պահպանում իրականացնող անձի համար՝

սույն հոդվածի 4-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո օտարերկրյա

ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ապրանքների ձևակերպում.

4) այն անձանց համար, որոնք նշված են սույն կետի 1-3-րդ ենթակետերում՝

ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձում.

վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան վրա է հասել այդ օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու ժամկետը.

ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ մաքսային ընթացակարգերից որևէ մեկով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումը ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական վարույթի իրականացման) ընթացքում, և որոնց մասով ընդունվել է որոշում՝ դրանք վերադարձնելու մասին, եթե նախկինում այդպիսի ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

4. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) փոխադրողի կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի համար, որը ներկայացրել է փաստաթղթեր ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար՝

ապրանքների կորստի օրը, եթե ժամանակավոր պահպանման հանձնված ապրանքները կորսվել են նախքան ապրանքները ժամանակավոր պահպանման պահեստում տեղավորելը կամ ժամանակավոր պահպանման պահեստ չհամարվող վայրում դրանք այլ անձի կողմից ժամանակավոր պահպանման ընդունելը՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի դեպքերի, իսկ եթե այդ օրը որոշված չէ՝ ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված փաստաթղթերը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրը.

ապրանքները հանձնելու օրը՝ այն դեպքում, երբ ժամանակավոր պահպանման հանձնված ապրանքներն ստացողին կամ այլ անձի հանձնվել են առանց մաքսային մարմնի թույլտվության՝ մինչև ապրանքները ժամանակավոր պահպանման պահեստում տեղավորելը կամ ժամանակավոր պահպանման պահեստ չհամարվող վայրում դրանք այլ անձի կողմից ժամանակավոր պահպանման ընդունելը, իսկ եթե այդ օրը որոշված չէ՝ ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված փաստաթղթերը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրը.

2) ժամանակավոր պահպանման պահեստներ չհամարվող վայրերում ապրանքների ժամանակավոր պահպանումն իրականացնող անձի համար՝

ապրանքների կորստի օրը, եթե ժամանակավոր պահպանման հանձնված ապրանքները կորսվել են նախքան ժամանակավոր պահպանման պահեստ չհամարվող վայրում դրանք այլ անձի կողմից ժամանակավոր պահպանման ընդունելը՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի դեպքերի, իսկ եթե այդ օրը որոշված չէ՝ ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված փաստաթղթերը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրը.

ապրանքների փոխանցման օրը՝ այն դեպքում, երբ ժամանակավոր պահպանման հանձնված ապրանքներն ստացողին կամ այլ անձի փոխանցվել են առանց մաքսային մարմնի թույլտվության՝ մինչև ժամանակավոր պահպանման պահեստ չհամարվող վայր դրանք հանձնելը, իսկ եթե այդ օրը որոշված չէ՝ ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված փաստաթղթերը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրը.

3) ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի կամ ժամանակավոր պահպանման պահեստներ չհամարվող վայրերում ապրանքների ժամանակավոր պահպանում իրականացնող անձի համար՝

ապրանքների կորստի օրը՝ այն դեպքում, երբ ապրանքները կորսվել են ժամանակավոր պահպանման պահեստում կամ ժամանակավոր պահպանման պահեստ չհամարվող վայրում՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի դեպքերի, իսկ եթե այդ օրը որոշված չէ՝

ապրանքները ժամանակավոր պահպանման պահեստում կամ ժամանակավոր պահպանման պահեստ չհամարվող վայրում տեղավորելու օրը.

ապրանքների փոխանցման օրը՝ այն դեպքում, երբ ժամանակավոր պահպանման պահեստ կամ ժամանակավոր պահպանման պահեստ չհամարվող վայր հանձնված ապրանքներն ստացողին կամ այլ անձի փոխանցվել են առանց մաքսային մարմնի թույլտվության, իսկ եթե այդ օրը որոշված չէ՝ ապրանքները ժամանակավոր պահպանման պահեստ կամ ժամանակավոր պահպանման պահեստ չհամարվող վայր հանձնելու օրը.

ապրանքների օգտագործման օրը՝ այն դեպքում, երբ պահեստում պահպանվող ապրանքներն օգտագործվել են ոչ ապրանքների ժամանակավոր պահպանման նպատակով, իսկ եթե այդ օրը որոշված չէ՝ ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված փաստաթղթերը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրը:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե ապրանքները ձևակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են սույն Օրենսգրքի 7-րդ և 12-րդ գլուխներին համապատասխան:

Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերը, որոնք գործում են սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ հանդիսացող օրվա դրությամբ:

Եթե ապրանքների մաքսային արժեքը որոշելու, ինչպես նաև ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար պահանջվում է արտարժույթը վերահաշվարկել անդամ պետության արժույթով, այդ վերահաշվարկն իրականացվում է սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ հանդիսացող օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Եթե մաքսային մարմինն իր տրամադրության տակ չունի ապրանքների (դրանց բնույթի, անվանման, քանակի, ծագման և (կամ) մաքսային արժեքի) մասին ճշգրիտ տեղեկություններ, վճարման ենթակա ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար նախատեսված բազան որոշվում է մաքսային մարմնի մոտ առկա տեղեկությունների հիման վրա, իսկ ապրանքների դասակարգումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ կետը:

Եթե ապրանքի ծածկագիրը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանվել է 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով, ապա՝

ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում է նման խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող մաքսատուրքերի ամենամեծ դրույքաչափը.

հարկերի հաշվարկման համար կիրառվում է այն խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող ավելացված արժեքի հարկի, ակցիզների (ակցիզային հարկ կամ ակցիզային տուրք) դրույքաչափերից ամենամեծը, որոնց նկատմամբ սահմանվել է ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը՝ հաշվի առնելով սույն կետի տասներորդ պարբերությունը:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով սույն Օրենսգրքի 4-րդ գլխին համապատասխան հաստատված ապրանքների ծագումից և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններից: Եթե ապրանքների ծագումը և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ հաստատված չեն, ապա հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը, որոնք սահմանվել են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն ծածկագրին դասվող ապրանքների համար, եթե ապրանքի դասակարգումն իրականացվել է 10 նիշի մակարդակով, կամ խմբավորման մեջ մտնող ապրանքների համար, եթե ապրանքների ծածկագրերը, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, սահմանվել են 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով:

Ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները հետագայում պարզվելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով այդ ճշգրիտ տեղեկություններից, կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի՝ ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված գումարների վերադարձ (հաշվանցում) կամ չվճարված գումարների բռնագանձում՝ սույն Օրենսգրքի 10-րդ և 11-րդ գլուխներին ու 76-րդ և 77-րդ հոդվածներին համապատասխան:

6. Ապրանքներն օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ձևակերպելու, մաքսային մարմինների կողմից ապրանքները սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան արգելանքի վերցնելու (արգելապահելու), ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը

վճարելու պարտավորությունը կատարելուց հետո ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու և (կամ) դրանք (ամբողջությամբ կամ մասամբ) բռնագանձելու դեպքում ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները, որոնք վճարվել և (կամ) բռնագանձվել են սույն հոդվածին համապատասխան, ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին և 76-րդ հոդվածին համապատասխան:

Գլուխ 17

Մաքսային հայտարարագրում և մաքսային գործառնություններ, որոնք կապված են մաքսային հայտարարագիր ներկայացնելու, գրանցելու և հետ կանչելու, մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները փոփոխելու (լրացնելու) հետ

Հոդված 104. Ընդհանուր դրույթներ մաքսային հայտարարագրման վերաբերյալ

1. Ապրանքները ենթակա են մաքսային հայտարարագրման դրանք մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում կամ սույն Օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ կետով, 272-րդ հոդվածի 4-րդ կետով և 281-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերում:

Ապրանքները ենթակա չեն մաքսային հայտարարագրման դրանք՝ սույն Օրենսգրքի 204-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան «ազատ մաքսային գոտի» ընթացակարգով ձևակերպելու դեպքում, ինչպես նաև սույն Օրենսգրքի 286-րդ հոդվածի 3-րդ, 14-17-րդ կետերով և 301-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված դեպքերում:

2. Մաքսային հայտարարագրումն իրականացվում է հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կողմից, եթե սույն Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

3. Մաքսային հայտարարագրումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

4. Գրավոր մաքսային հայտարարագրումը թույլատրվում է՝

1) ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում.

2) անձնական օգտագործման ապրանքների դեպքում.

3) միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների դեպքում.

4) միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների դեպքում.

5) սույն Օրենսգրքի 105-րդ հոդվածի 6-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան՝ որպես մաքսային հայտարարագիր տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթեր, այդ թվում՝ անդամ պետությունների՝ երրորդ երկրների հետ միջազգային պայմանագրերով նախատեսված փաստաթղթեր օգտագործելու դեպքում.

6) Հանձնաժողովի կողմից և անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող՝ Հանձնաժողովի կողմից նախատեսված այլ դեպքերում:

5. Սույն հոդվածի 4-րդ կետի դրույթից անկախ՝ գրավոր մաքսային հայտարարագրումը կարող է իրականացվել այն դեպքում, երբ մաքսային մարմինը չի կարող ապահովել հայտարարատուի կողմից մաքսային հայտարարագրման իրականացումն էլեկտրոնային եղանակով տեխնիկական խափանումների, կապի միջոցների (հեռահաղորդակցական ցանցերի և «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցի) աշխատանքի ընդհատումների կամ էլեկտրաէներգիայի անջատման հետևանքով մաքսային մարմինների կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգերի անսարքությունների պատճառով, ինչպես նաև անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

6. Կախված մաքսային հայտարարագրման ձևից՝ օգտագործվում է մաքսային հայտարարագիր՝ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով (այսուհետ՝ էլեկտրոնային մաքսային հայտարարագիր), կամ մաքսային հայտարարագիր՝ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով (այսուհետ՝ թղթային կրիչով հայտարարագիր):

7. Մաքսային հայտարարագրման առանձնահատկություններն այն դեպքում, երբ օտարերկրյա ապրանքների վերաբերյալ մաքսային հայտարարագիրը ներկայացվում է մինչև դրանք Միության մաքսային տարածք ներմուծելը կամ մինչև ապրանքները՝ ուղարկող մաքսային մարմնի կողմից սահմանված առաքման վայր առաքելը, եթե այդ ապրանքները փոխադրվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան (այսուհետ՝ նախնական մաքսային հայտարարագրում), սահմանվում են սույն Օրենսգրքի 114-րդ հոդվածով:

Մաքսային հայտարարագրման առանձնահատկություններն այն դեպքում, երբ հայտարարատուն ապրանքների հայտարարագիր ներկայացնելու պահին չի տիրապետում ապրանքների մասին այդպիսի հայտարարագրում ներկայացնելու համար անհրաժեշտ ճշգրիտ տեղեկությունների (այսուհետ՝ ոչ լրիվ մաքսային հայտարարագրում), սահմանվում են սույն Օրենսգրքի 115-րդ հոդվածով:

Մաքսային հայտարարագրման առանձնահատկություններն այն դեպքում, երբ անձն իրականացնում է ապրանքների տեղափոխումը Միության մաքսային սահմանով երկու կամ ավելի խմբաքանակներով և միևնույն պայմաններով մատակարարման ժամանակահատվածում (այսուհետ՝ պարբերական մաքսային հայտարարագրում), սահմանվում են սույն Օրենսգրքի 116-րդ հոդվածով:

Միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում տեղափոխվող ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները սահմանվում են սույն Օրենսգրքի 117-րդ հոդվածով:

8. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել մաքսային հայտարարագրման առանձնահատկություններ, որոնք տարբերվում են սույն Օրենսգրքով սահմանված առանձնահատկություններից՝

1) եթե հայտարարատուն չունի մաքսային հայտարարագրման համար անհրաժեշտ ճշգրիտ տեղեկություններ.

2) եթե Միության ապրանքների ներմուծումը ԱՏԳ տարածք այն անդամ պետության տարածքի մնացած մասից, որի տարածքում ստեղծվել է ԱՏԳ-ն, և Միության ապրանքների արտահանումը ԱՏԳ տարածքից այն անդամ պետության տարածքի մնացած մաս, որի տարածքում ստեղծվել է ԱՏԳ-ն, իրականացվում են մատակարարման ժամանակահատվածում երկու կամ ավելի խմբաքանակներով, միևնույն պայմաններով.

3) եթե Միության ապրանքների ներմուծումն ազատ պահեստի տարածք այն անդամ պետության տարածքի մնացած մասից, որի տարածքում ազատ պահեստի տիրապետողն ընդգրկվել է ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում, և Միության ապրանքների արտահանումն ազատ պահեստի տարածքից այն անդամ պետության մնացած տարածք, որի տարածքում ազատ պահեստի տիրապետողն ընդգրկվել է ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում, իրականացվում են մատակարարման ժամանակահատվածում երկու կամ ավելի խմբաքանակներով, միևնույն պայմաններով.

4) խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով փոխադրվող ապրանքների նկատմամբ:

9. Հանձնաժողովն իրավասու է սահմանելու այն ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները, որոնց առնչությամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորություն չի առաջանում՝ սույն Օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերությանը և 225-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան:

Հոդված 105. Մաքսային հայտարարագիրը

1. Մաքսային հայտարարագրման ժամանակ կիրառվում են մաքսային հայտարարագրի հետևյալ տեսակները՝

1) ապրանքների հայտարարագիր.

2) տարանցման հայտարարագիր.

3) ուղևորային մաքսային հայտարարագիր.

4) տրանսպորտային միջոցի հայտարարագիր:

2. Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում լրացվում է մաքսային արժեքի հայտարարագիր, որի մեջ ներկայացվում են տեղեկություններ ապրանքների մաքսային արժեքի, այդ թվում՝ ապրանքների մաքսային արժեքի սահմանման մեթոդի, ապրանքների մաքսային մեծության, ապրանքների մասով գործարքի պայմանների և հանգամանքների մասին, որոնք առնչվում են ապրանքների մաքսային արժեքի սահմանմանը:

Մաքսային արժեքի հայտարարագիրն ապրանքների հայտարարագրի անբաժանելի մասն է:

Մաքսային արժեքի հայտարարագրի ձևը, էլեկտրոնային փաստաթղթի ձևով մաքսային արժեքի հայտարարագրի և թղթային կրիչով մաքսային արժեքի հայտարարագրի էլեկտրոնային տարբերակի կառուցվածքը և ձևաչափը, դրանց լրացման կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

3. Ապրանքների հայտարարագիրը կիրառվում է ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս, բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի, իսկ սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ պաշարների մաքսային հայտարարագրման ժամանակ:

Տարանցման հայտարարագիրն օգտագործվում է ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում:

Ուղևորային մաքսային հայտարարագիրն օգտագործվում է անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրման դեպքում, իսկ սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ անձնական օգտագործման ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում:

Տրանսպորտային միջոցի հայտարարագիրն օգտագործվում է միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրման դեպքում, իսկ սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ պաշարների մաքսային հայտարարագրման ժամանակ:

4. Մաքսային հայտարարագրում նշման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանափակվում է միայն այն տեղեկություններով, որոնք անհրաժեշտ են մաքսային վճարների հաշվարկման և վճարման, ներքին շուկայի պաշտպանության միջոցների կիրառման, մաքսային վիճակագրության ձևավորման, արգելքների և սահմանափակումների պահպանման նկատմամբ հսկողության, մաքսային մարմինների կողմից մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության համար միջոցների ձեռնարկման, ինչպես նաև մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի և անդամ պետությունների օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողության համար:

5. Մաքսային հայտարարագրի ձևերը, էլեկտրոնային մաքսային հայտարարագրի և թղթային կրիչով մաքսային

հայտարարագրի էլեկտրոնային տարբերակների կառուցվածքները և ձևաչափերն ու դրանց լրացման կարգերը սահմանվում են Հանձնաժողովի կողմից՝ կախված սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված մաքսային հայտարարագրի տեսակներից, մաքսային ընթացակարգերից, ապրանքների կատեգորիաներից, դրանք Միության մաքսային սահմանով տեղափոխող անձանցից:

6. Որպես ապրանքների հայտարարագիր և տարանցման հայտարարագիր թույլատրվում է օգտագործել տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթեր, այդ թվում՝ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված փաստաթղթեր, որոնք պարունակում են ապրանքների բացթողման համար անհրաժեշտ տեղեկություններ՝ սույն Օրենսգրքով, երրորդ կողմի և (կամ) Հանձնաժողովի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով և անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող դեպքերում և կարգով՝ Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում:

Որպես ապրանքների հայտարարագիր և տարանցման հայտարարագիր տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթեր, այդ թվում՝ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված փաստաթղթեր օգտագործելու դեպքում մաքսային հայտարարագրումն իրականացվում է գրավոր, եթե Հանձնաժողովի կողմից և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

Կախված այն տրանսպորտի տեսակից, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) Միության մաքսային տարածքով՝ Հանձնաժողովն իրավասու է սահմանելու որպես տարանցման հայտարարագիր օգտագործվող տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթերի, այդ թվում՝ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև դրանց օգտագործման դեպքերը և կարգը:

7. Որպես տարանցման հայտարարագիր թույլատրվում է օգտագործել էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ներկայացված տեղեկատվությունը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

Հոդված 106. Ապրանքների հայտարարագրում նշման ենթակա տեղեկությունները

1. Ապրանքների հայտարարագրում նշման են ենթակա հետևյալ տեղեկությունները՝

1) հայտագրվող մաքսային ընթացակարգի մասին.

2) ապրանքների հայտարարատուի, մաքսային ներկայացուցչի, ուղարկողի, ստացողի, վաճառողի և գնողի մասին.

3) միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների, ինչպես նաև այն տրանսպորտային միջոցների մասին, որոնցով ապրանքները տեղափոխվել են (տեղափոխվելու են) Միության մաքսային տարածքով.

4) ապրանքների մասին՝

անվանումը, նկարագրությունը, որն անհրաժեշտ է այն մաքսային վճարների, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի և այլ վճարների հաշվարկման և գանձման համար, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին, արգելքների և սահմանափակումների պահպանման, ներքին շուկայի պաշտպանության միջոցների, մաքսային մարմնի կողմից մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության համար միջոցների ձեռնարկման, նույնականացման, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 10 նիշ ունեցող ծածկագրերից մեկին դասելն ապահովելու համար.

ապրանքների ծածկագիրը՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան.

ապրանքների ծագումը.

ուղարկող երկրի և նշանակման երկրի անվանումը.

ապրանքներն արտադրողը.

ապրանքային նշանը.

մտավոր սեփականության օբյեկտ հանդիսացող այն ապրանքի ծագման վայրի անվանումը, որն ընդգրկված է անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում և (կամ) մտավոր սեփականության օբյեկտների ազգային մաքսային ռեեստրում, որը վարում է այն անդամ պետության մաքսային մարմինը, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների հայտարարագիրը.

փաթեթվածքի նկարագրությունը.

գինը, քանակը՝ արտահայտված կիլոգրամներով (համաքաշը և զտաքաշը) և չափման լրացուցիչ միավորներով.

ապրանքների մաքսային արժեքը (մեծությունը, ապրանքների մաքսային արժեքը սահմանելու մեթոդը).

վիճակագրական արժեքը.

5) մաքսային վճարների, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման մասին՝

մաքսատուրքերի, հարկերի, մաքսավճարների, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը.

մաքսային վճարների վճարման արտոնությունները.

սակագնային առանձնաշնորհումները.

հաշվարկված մաքսատուրքերի, հարկերի, մաքսավճարների, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի

գումարները.

մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվող փոխարժեքը՝ սույն Օրենսգրքին համապատասխան.

6) ապրանքների մասով գործարքի և դրա պայմանների մասին.

7) սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան՝ արգելքների և սահմանափակումների պահպանման մասին.

8) ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանների կատարման մասին.

9) սույն Օրենսգրքի 108-րդ հոդվածում նշված՝ ապրանքների հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի մասին.

10) անդամ պետությունների այն օրենսդրության պահպանումը հաստատող փաստաթղթերի մասին, որի պահպանման նկատմամբ հսկողությունը վերապահված է մաքսային մարմիններին.

11) ապրանքների հայտարարագիրը լրացրած անձի և դրա լրացման ամսաթվի մասին.

12) Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ տեղեկություններ:

2. Ապրանքների հայտարարագրի ձևը լրացնելու կարգը սահմանելիս Հանձնաժողովն իրավասու է կրճատել ապրանքների հայտարարագրում նշման ենթակա տեղեկությունները՝ կախված մաքսային ընթացակարգից, ապրանքների կատեգորիաներից, Միության մաքսային սահմանով դրանք տեղափոխող անձանցից և (կամ) այն տրանսպորտի տեսակից, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը):

Հոդված 107. Տարանցման հայտարարագրում նշման ենթակա տեղեկությունները

1. Տարանցման հայտարարագրում նշման են ենթակա հետևյալ տեղեկությունները՝

1) ապրանքներն ուղարկողի և ստացողի մասին՝ տրասնպորտային (փոխադրման) փաստաթղթերին համապատասխան, հայտարարատուի, փոխադրողի մասին.

2) ապրանքներն ուղարկող երկրի և նշանակման երկրի մասին.

3) այն տրանսպորտային միջոցի մասին, որով տեղափոխվում են ապրանքները.

4) ապրանքների անվանման, քանակի և արժեքի մասին՝ տրասնպորտային (փոխադրման) փաստաթղթերին համապատասխան.

5) ապրանքների ծածկագրի մասին՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան՝ առնվազն առաջին 6 նիշերի մակարդակով: Այն ապրանքների (ապրանքների բաղադրիչների) վերաբերյալ, որոնք չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում որոշ ժամանակահատվածում տեղափոխվում են Միության մաքսային սահմանով մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցներով, կարող են նշվել տեղեկություններ ապրանքի ծածկագրի մասին՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան՝ առնվազն 10 նիշի մակարդակով՝ այդ ապրանքների վերաբերյալ ապրանքների դասակարգման մասին նախապես ընդունված որոշմանը կամ Միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում տեղափոխվող ապրանքների դասակարգման մասին որոշմանը համապատասխան.

6) ապրանքների համաքաշը կամ ծավալը, ինչպես նաև ապրանքների քանակը՝ արտահայտված չափման լրացուցիչ միավորներով, եթե Եվրասիական տնտեսական Միության միասնական մաքսային սակագնով հայտարարագրվող ապրանքի նկատմամբ սահմանված է չափման լրացուցիչ միավոր՝ ըստ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի յուրաքանչյուր ծածկագրի.

7) բեռնատեղիների քանակի մասին.

8) տրասնպորտային (փոխադրման) փաստաթղթերին համապատասխան՝ ապրանքների նշանակման կետի մասին.

9) սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան՝ արգելքների և սահմանափակումների պահպանման մասին.

10) ճանապարհին ապրանքների նախատեսված փոխաբեռնման կամ այլ բեռնային գործողությունների մասին:

2. Տարանցման հայտարարագրի ձևը լրացնելու կարգը սահմանելիս Հանձնաժողովն իրավասու է կրճատելու ապրանքների հայտարարագրում նշման ենթակա տեղեկությունները՝ կախված ապրանքների կատեգորիաներից, Միության մաքսային սահմանով դրանք տեղափոխող անձանցից և (կամ) այն տրանսպորտի տեսակից, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը):

3. Որպես տարանցման հայտարարագիր թույլատրվում է օգտագործել տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթեր, այդ թվում՝ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված փաստաթղթեր՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ կետով և 306-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքերի:

Որպես տարանցման հայտարարագիր տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթեր, այդ թվում՝ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված փաստաթղթեր օգտագործվելու դեպքում այդպիսի փաստաթղթերը պետք է պարունակեն սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկությունները:

Եթե որպես տարանցման հայտարարագիր օգտագործվող փաստաթղթերը չեն պարունակում սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված բոլոր տեղեկությունները, ապա պակասող տեղեկությունները պետք է ներառվեն մաքսային

մարմին ներկայացվող տարանցման հայտարարագրին կցվող կամ դրան ուղեկցող փաստաթղթերում:

4. Միության անդամ չհանդիսացող պետության տարածքով փոխադրվող Միության ապրանքների տարանցման հայտարարագրում ներկայացվում են սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկությունները՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան արգելքների և սահմանափակումների պահպանման մասին, այդ ապրանքների արժեքի մասին տեղեկությունների և այլ տեղեկությունների, եթե դա սահմանված է սույն Օրենսգրքին համապատասխան: Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու, որ Միության անդամ չհանդիսացող պետության տարածքով փոխադրվող Միության ապրանքների տարանցման հայտարարագրում նշման են ենթակա ապրանքների արժեքի մասին տեղեկություններ:

5. Սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 4-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքների տարանցման հայտարարագրում, ի լրումն սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկությունների, ներկայացվում են այն մաքսային հայտարարագրերի մասին տեղեկություններ, որոնց համապատասխան ապրանքները ձևակերպվել են «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով կամ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով կամ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով:

Հոդված 108. Մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը

1. Մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթեր են համարվում.

1) ապրանքների մասով գործարքի իրականացումը հաստատող փաստաթղթերը, իսկ այդպիսի գործարքի բացակայության դեպքում՝ այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքը, ինչպես նաև հայտարարատուի մոտ գտնվող այլ առևտրային փաստաթղթեր.

2) տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը.

3) մաքսային հայտարարագիր ներկայացնող անձի լիազորությունները հաստատող փաստաթղթերը.

4) արգելքների և սահմանափակումների, ներքին շուկայի պաշտպանության միջոցների պահպանումը հաստատող փաստաթղթերը.

5) ապրանքների ծագման մասին փաստաթղթերը.

6) փաստաթղթերը, որոնք հաստատում են ապրանքների՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան դրանց դասակարգման ժամանակ օգտագործվող բնութագրերը, ապրանքների դասակարգման մասին նախնական որոշումը՝ դրա առկայության դեպքում, իսկ այն ապրանքների (ապրանքների բաղադրիչների) մաքսային հայտարարագրման դեպքում, որոնք տեղափոխվում են Միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ այդպիսի ապրանքների վերաբերյալ ցանկացած անդամ պետության մաքսային մարմնի կողմից ապրանքների դասակարգման մասին նախնական որոշումը կամ Միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում տեղափոխվող ապրանքների դասակարգման մասին որոշումը.

7) մաքսային վճարների, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարումը և (կամ) մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը հաստատող փաստաթղթերը.

8) մաքսային վճարների վճարման արտոնությունների տրամադրման նպատակների և պայմանների պահպանումը հաստատող փաստաթղթերը.

9) մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետի փոփոխությունը հաստատող փաստաթղթերը.

10) ապրանքների հայտագրված մաքսային արժեքը, այդ թվում՝ դրա մեծությունը և ապրանքների մաքսային արժեքի սահմանման մեթոդը հաստատող փաստաթղթերը.

11) միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների գրանցման և ազգային պատկանելիության մասին փաստաթուղթը՝ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցով ապրանքների տեղափոխման դեպքում դրանք «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս.

12) հայտագրված մաքսային ընթացակարգերով ապրանքները ձևակերպելու պայմանները հաստատող փաստաթղթերը.

13) փաստաթղթեր, որոնք հաստատում են ապրանքների վերամշակման հետ կապված գործողությունների հայտագրված արժեքը «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակումից ստացված արտադրատեսակները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս.

14) սույն Օրենսգրքի 261-րդ հոդվածում նշված փաստաթղթերը:

2. Եթե սույն հոդվածի 1-ին կետում նշված փաստաթղթերը չեն պարունակում մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող տեղեկություններ, ապա այդ տեղեկությունները հաստատվում են այլ փաստաթղթերով:

3. Մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը պետք է

հայտարարատուի մոտ գտնվեն մաքսային հայտարարագիր ներկայացնելու պահին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան սահմանված ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկություններից ելնելով՝ այդ փաստաթղթերը կարող են բացակայել մաքսային հայտարարագիր ներկայացնելու պահին:

Հոդված 109. Մաքսային հայտարարագիր ներկայացնելու հետ կապված մաքսային գործառնությունները և դրանց կատարման կարգը

1. Մաքսային հայտարարագիրը ներկայացվում է մաքսային մարմին, որը, անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան, իրավասու է գրանցելու մաքսային հայտարարագրերը:

2. Մաքսային հայտարարագիր ներկայացնելիս ապրանքները պետք է գտնվեն այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմին է ներկայացվում այդ ապրանքների մասին մաքսային հայտարարագիրը՝ բացառությամբ՝

1) Միության մաքսային տարածքից արտահանված այն ապրանքների, որոնք, սույն Օրենսգրքին համապատասխան, թույլատրվում է ձևակերպել մաքսային ընթացակարգով՝ առանց դրանք Միության մաքսային տարածք ներմուծելու՝

2) խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների.

3) այն օտարերկրյա ապրանքների, որոնց մաքսային հայտարարագրումն իրականացվում է՝ հաշվի առնելով անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան սահմանված առանձնահատկությունները.

4) այն օտարերկրյա ապրանքների, որոնց մաքսային հայտարարագրումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 114-րդ և 116-րդ հոդվածներով սահմանված առանձնահատկությունները:

3. Հանձնաժողովն իրավասու է սահմանելու այն դեպքերը, երբ Միության ապրանքները կարող են չգտնվել այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմին է ներկայացվում այդ ապրանքների մասին մաքսային հայտարարագիրը, ինչպես նաև այդ դեպքերում մաքսային գործառնությունների կատարման առանձնահատկությունները:

4. Մաքսային հայտարարագիր ներկայացնելու ամսաթիվն ու ժամը արձանագրում է մաքսային մարմինը:

5. Թղթային կրիչով մաքսային հայտարարագրի հետ միասին մաքսային մարմին է ներկայացվում դրա էլեկտրոնային տարբերակը, եթե այլ բան սահմանված չէ սույն Օրենսգրքով, Հանձնաժողովի կողմից և Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

6. Եթե որպես տարանցման հայտարարագիր օգտագործվում են տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթեր, այդ թվում՝ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված փաստաթղթեր, և սույն Օրենսգրքի 11-րդ հոդվածին համապատասխան ներկայացվել է նախնական տեղեկատվություն, որը պարունակում է սույն Օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին կետում նշված տեղեկությունները, ապա նախնական տեղեկատվության և նշված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների միջև տարբերությունների բացակայության դեպքում այդ տարանցման հայտարարագրի հետ միասին դրա էլեկտրոնային տարբերակը մաքսային մարմին չի ներկայացվում:

7. Ապրանքների հայտարարագրի հետ միասին ապրանքների հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը մաքսային մարմին չեն ներկայացվում՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի:

Թղթային կրիչով ապրանքների հայտարարագրի հետ միասին մաքսային մարմին են ներկայացվում ապրանքների հայտարարագիր ներկայացրած անձի լիազորությունները հաստատող փաստաթղթեր, եթե անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է նախատեսված լինել հայտարարատուի՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը կամ ապրանքների հայտարարագիր ներկայացնելուց հետո մինչև ապրանքների բացթողումն ապրանքների ծագման մասին տեղեկությունները, արգելքների և սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու իրավունքը, եթե այդպիսի փաստաթղթերի մասին տեղեկությունները և (կամ) դրանցում պարունակվող տեղեկությունները մաքսային մարմինը չի կարող ստանալ սույն Օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, ինչպես նաև կարող է սահմանվել նշված փաստաթղթերը ներկայացնելու կարգը:

8. Տարանցման հայտարարագրի հետ միասին տարանցման հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը մաքսային մարմին չեն ներկայացվում՝ բացառությամբ սույն կետի երկրորդ և երրորդ պարբերություններով նախատեսված դեպքերի:

Տարանցման հայտարարագրի հետ միասին ներկայացվում են արգելքների և սահմանափակումների պահպանումը հաստատող, մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման տրամադրումը, անդամ պետությունների օրենսդրության պահպանումը, որի պահպանման նկատմամբ հսկողությունը վերապահված է մաքսային մարմիններին, հաստատող փաստաթղթեր, եթե այդպիսի փաստաթղթերի մասին տեղեկությունները և (կամ) դրանցում պարունակվող տեղեկությունները մաքսային մարմինը չի կարող ստանալ սույն Օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

Թղթային կրիչով տարանցման հայտարարագրի հետ միասին մաքսային մարմին են ներկայացվում տարանցման

հայտարարագիր ներկայացրած անձի լիազորությունները հաստատող փաստաթղթերը, եթե անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

9. Ուղևորային մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին է ներկայացվում դրանում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի հետ միասին:

Ուղևորային մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի ցանկը կարող է կրճատվել Հանձնաժողովի կողմից և Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

10. Ապրանքների հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը կարող են չներկայացվել մաքսային մարմին, եթե այդ տեղեկություններն ավելի վաղ ներկայացվել են այդ մաքսային մարմին մաքսային գործառնություններ կատարելիս կամ այդ մաքսային մարմնի պահանջով մաքսային հսկողություն իրականացնելու ժամանակ և պահվում են այդ մաքսային մարմնում՝ սույն Օրենսգրքի 320-րդ հոդվածին համապատասխան:

Այդ դեպքում սույն Օրենսգրքով սահմանված անձինք նշում են այդ փաստաթղթերի մասին տեղեկություններն ապրանքների հայտարարագրում կամ այլ կերպ ներկայացնում են դրանք մաքսային մարմին՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 110. Մաքսային հայտարարագիր ներկայացնելու ժամկետը

1. Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասին մաքսային հայտարարագիրը ներկայացվում է մինչև ապրանքների ժամանակավոր պահպանման ժամկետի լրանալը կամ սույն Օրենսգրքով սահմանված այլ ժամկետում:

2. Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների մասին մաքսային հայտարարագիրը ներկայացվում է մինչև Միության մաքսային տարածքից դրանց մեկնումը, եթե սույն Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

Հոդված 111. Ներկայացված մաքսային հայտարարագրի ստուգումը, ներկայացված մաքսային հայտարարագիրը գրանցելու կամ դրա գրանցումը մերժելու հետ կապված մաքսային գործառնությունները և դրանց կատարման կարգը

1. Մաքսային մարմինն իրականացնում է ներկայացված մաքսային հայտարարագրի ստուգումը սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված՝ դրա գրանցումը մերժելու համար հիմքերի բացակայությունը որոշելու նպատակով:

2. Մաքսային հայտարարագիրը գրանցելու կամ դրա գրանցումը մերժելու հետ կապված մաքսային գործառնությունները կատարվում են մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագիր ներկայացնելու պահից մաքսային մարմնի առնվազն 1 աշխատանքային ժամվա ընթացքում, եթե անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ ավելի կարճ ժամկետ սահմանված չէ:

3. Ապրանքների հայտարարագրի, տարանցման հայտարարագրի կամ տրանսպորտային միջոցի հայտարարագրի գրանցումը կամ գրանցումը մերժելը ձևակերպվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով, իսկ Հանձնաժողովի կողմից չկարգավորված մասում՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան սահմանվող կարգով:

4. Ուղևորային մաքսային հայտարարագրի գրանցումը կամ գրանցումը մերժելը ձևակերպվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ուղևորային մաքսային հայտարարագրի գրանցումը կամ գրանցումը մերժելը միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման այն ապրանքների համար, որոնց համար որպես ուղևորային մաքսային հայտարարագիր օգտագործվում են Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված և միջազգային փոստային առաքանիներն ուղեկցող փաստաթղթերը, կարող է չիրականացվել, եթե դա նախատեսված է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

5. Մաքսային մարմինը մերժում է մաքսային հայտարարագրի գրանցումը հետևյալ հիմքերով՝

1) մաքսային հայտարարագիրը ներկայացվել է մաքսային հայտարարագրերի գրանցման լիազորություն չունեցող մաքսային մարմին.

2) մաքսային հայտարարագիրը ներկայացվել է լիազորություն չունեցող անձի կողմից և (կամ) ստորագրված կամ պատշաճ կերպով վավերացված չէ.

3) մաքսային հայտարարագրման ձևը պահպանված չէ.

4) մաքսային հայտարարագրում նշված չեն տեղեկություններ, որոնք ենթակա են նշման՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերին և ակտերին համապատասխան, և (կամ) մաքսային հայտարարագիրը լրացված չէ դրա լրացման սահմանված կարգին համապատասխան.

5) թղթային կրիչով մաքսային հայտարարագիրը կազմված չէ սահմանված ձևով, և (կամ) էլեկտրոնային մաքսային հայտարարագրի կամ թղթային կրիչով մաքսային հայտարարագրի էլեկտրոնային տարբերակի կառուցվածքը և

ձևաչափը չեն համապատասխանում այդպիսի փաստաթղթերի սահմանված կառուցվածքներին և ձևաչափերին.

6) այն ապրանքները, որոնց համար ներկայացվում է մաքսային հայտարարագիր, բացառությամբ սույն Օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետում նշված ապրանքների կամ ապրանքների՝ սույն Օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում, չեն գտնվում այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմին է ներկայացվում մաքսային հայտարարագիրը.

7) չեն իրականացվել գործողություններ, որոնք, սույն Օրենսգրքին և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, պետք է իրականացվեին մինչև մաքսային հայտարարագիր ներկայացնելը կամ դրա հետ միաժամանակ.

8) չեն պահպանվել անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան սահմանված՝ ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները, որոնք պետք է պահպանվեն մինչև մաքսային հայտարարագիր ներկայացնելը կամ դրա հետ միաժամանակ:

6. Մաքսային հայտարարագրի գրանցումը մերժելը ձևակերպելիս մաքսային մարմինը նշում է բոլոր պատճառները, որոնք սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան հիմք են հանդիսացել մերժման համար, ինչպես նաև՝ այն դեպքում, եթե դա նախատեսված է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ՝ դրանք վերացնելու վերաբերյալ առաջարկությունները:

Թղթային կրիչով մաքսային հայտարարագրի գրանցումը մերժելու դեպքում այդ մաքսային հայտարարագիրը և այն ներկայացնելու ժամանակ ներկայացված փաստաթղթերը, եթե մաքսային հայտարարագիրը ներկայացվել է փաստաթղթերի հետ միասին, վերադարձվում են հայտարարատուին կամ մաքսային ներկայացուցչին, ընդ որում, մաքսային հայտարարագրի մեկ օրինակը մնում է մաքսային մարմնում:

7. Եթե մաքսային հայտարարագիրը չի գրանցվել մաքսային մարմնում, ապա այդ հայտարարագիրը համարվում է մաքսային նպատակներով չներկայացված:

8. Գրանցման պահից մաքսային հայտարարագիրը դառնում է իրավական նշանակություն ունեցող փաստերի մասին վկայող փաստաթուղթ:

9. Տեխնիկական խափանումների, կապի միջոցների («Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցի, հեռահաղորդակցության ցանցերի) աշխատանքի ընդհատումների կամ էլեկտրաէներգիայի անջատման հետևանքով մաքսային մարմինների կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգերի անսարքությունների դեպքում մաքսային մարմինը, գրանցումը մերժելու համար հիմքերի բացակայության դեպքում, բացառությամբ թղթային կրիչով մաքսային հայտարարագրի էլեկտրոնային տարբերակի կառուցվածքի և ձևաչափի համապատասխանության վերաբերյալ սույն հոդվածի 5-րդ կետի 5-րդ ենթակետում նշված հիմքի, իրականացնում է ներկայացված թղթային կրիչով մաքսային հայտարարագրի գրանցումը առանց տեղեկատվական համակարգերի օգտագործման:

Մաքսային հայտարարագրի գրանցման կամ մաքսային մարմինների կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգերի անսարքության պատճառով այդպիսի գրանցման մերժման հետ կապված մաքսային գործառնությունների կատարման կարգի առանձնահատկությունները սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

Հոդված 112. Մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունների փոփոխման (լրացման) հետ կապված մաքսային գործառնությունները և դրանց կատարման կարգը

1. Մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները մաքսային մարմնի թույլտվությամբ կարող են նախքան ապրանքների բացթողումը փոփոխվել (լրացվել) հայտարարատուի՝ էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ներկայացրած հիմնավորված դիմումի հիման վրա, եթե հայտարարատուի դիմումն ստանալու պահին մաքսային մարմինը չի պահանջել փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները՝ սույն Օրենսգրքի 325-րդ հոդվածին համապատասխան, չի տեղեկացրել նրան մաքսային զննում անցկացնելու վայրի և ժամի մասին, որոշում չի ընդունել մաքսային տեսազննում անցկացնելու մասին և (կամ) չի նշանակել մաքսային փորձաքննություն:

Անկախ սույն կետի առաջին պարբերության դրույթներից՝ հայտարարատուի՝ էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ներկայացրած հիմնավորված դիմումի հիման վրա մաքսային մարմնի թույլտվությամբ նախքան ապրանքների բացթողումը թույլատրվում է մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունների փոփոխությունը (լրացումը), եթե այդ փոփոխությունները (լրացումները) կապված են հայտարարագրվող ապրանքների գտնվելու վայրի կամ այնպիսի վրիպակների կամ քերականական սխալների ուղղման հետ, որոնք չեն ազդում ապրանքների բացթողման վրա:

Գրանցված մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունների փոփոխության և լրացման հետևանքով տեղեկությունները չեն կարող հայտարարագրվել այլ ապրանքների մասին, որոնք նշված չեն եղել տվյալ գրանցված մաքսային հայտարարագրում:

Մաքսային հայտարարագրում և թղթային կրիչով մաքսային հայտարարագրի էլեկտրոնային տարբերակում ներկայացված տեղեկությունների՝ մինչև ապրանքների բացթողումը փոփոխման (լրացման) հետ կապված մաքսային

գործառնությունների կատարման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

2. Եթե մաքսային հսկողություն իրականացնելիս բացահայտվել են մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի կամ ակտերի խախտումներ, որոնք, սույն Օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին կետի 9-րդ ենթակետին համապատասխան, վերացվելու դեպքում հիմք չեն հանդիսանա ապրանքների բացթողումը մերժելու համար, և մաքսային մարմնի կողմից այդպիսի խախտումների վերացման համար սահմանված է մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները փոփոխելու (լրացնելու) անհրաժեշտություն, ապա այդ տեղեկությունները պետք է փոփոխվեն (լրացվեն) հայտարարատուի կողմից մաքսային մարմնի պահանջով, սույն Օրենսգրքի 119-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ կետերով սահմանված՝ ապրանքների բացթողման ժամկետի սահմաններում:

Նախքան ապրանքների բացթողումը մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունների փոփոխման (լրացման) պահանջի ձևը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

3. Ապրանքների բացթողումից հետո ապրանքների հայտարարագրում և թղթային կրիչով ապրանքների հայտարարագրի էլեկտրոնային տարբերակում ներկայացված տեղեկությունների փոփոխությունը (լրացումը) իրականացվում է սույն Օրենսգրքով նախատեսված և (կամ) Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում, մաքսային մարմնի որոշմամբ կամ մաքսային մարմնի թույլտվությամբ:

Ապրանքների բացթողումից հետո մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունների փոփոխության (լրացման) պահանջի ձևը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Ապրանքների բացթողումից հետո ապրանքների հայտարարագրում և թղթային կրիչով ապրանքների հայտարարագրի էլեկտրոնային տարբերակում ներկայացված տեղեկությունների փոփոխության (լրացման) հետ կապված մաքսային գործառնությունների կատարման ժամկետները և կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

4. Ապրանքների հայտարարագրում ներկայացված և թղթային կրիչով ապրանքների հայտարարագրի էլեկտրոնային տարբերակում պարունակվող տեղեկությունների փոփոխման (լրացման) համար կիրառվում է ապրանքների հայտարարագրի ճշգրտումը՝ բացառությամբ Հանձնաժողովի կողմից սահմանվող այն դեպքերի, երբ տեղեկությունները կարող են փոփոխվել (լրացվել) առանց այդ մաքսային փաստաթղթի կիրառման:

Ապրանքների հայտարարագրի ճշգրտման ձևը, էլեկտրոնային տեսքով ապրանքների հայտարարագրի ճշգրտման և թղթային կրիչով ապրանքների հայտարարագրի ճշգրտման էլեկտրոնային տարբերակի կառուցվածքը և ձևաչափը, դրանց լրացման կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

5. Ապրանքների հայտարարագրի ճշգրտումն ապրանքների այդպիսի հայտարարագրի անբաժան մասն է:

Թղթային կրիչով ապրանքների հայտարարագրի ճշգրտման հետ միասին մաքսային մարմին է ներկայացվում դրա էլեկտրոնային տարբերակը, եթե Հանձնաժողովի կողմից այլ բան սահմանված չէ:

6. Հանձնաժողովն իրավասու է սահմանելու այն դեպքերը, երբ ապրանքների բացթողումից հետո տարանցման հայտարարագրում, ուղևորային հայտարարագրում և տրանսպորտային միջոցի հայտարարագրում և թղթային կրիչներով այդպիսի հայտարարագրերի էլեկտրոնային տարբերակներում կատարվում է ներկայացված տեղեկությունների փոփոխություն (լրացում), ինչպես նաև այդպիսի մաքսային հայտարարագրերում ներկայացված տեղեկությունների փոփոխության (լրացման) ժամկետները և կարգը, մաքսային փաստաթղթերի ձևերը, որոնցով փոփոխվում (լրացվում) են այդպիսի մաքսային հայտարարագրերում ներկայացված տեղեկությունները, էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով այդպիսի մաքսային փաստաթղթերի և թղթային կրիչներով այդպիսի մաքսային փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակների կառուցվածքները և ձևաչափերը, ինչպես նաև դրանց լրացման կարգը:

Թղթային կրիչով մաքսային փաստաթուղթը, որով փոփոխվում (լրացվում) են մաքսային հայտարարագրի նշված տեսակներում ներկայացված տեղեկությունները, մաքսային մարմին է ներկայացվում դրա էլեկտրոնային տարբերակի հետ միասին, եթե Հանձնաժողովի կողմից այլ բան սահմանված չէ:

Այն մաքսային փաստաթղթերը, որոնցով փոփոխվում (լրացվում) են տարանցման հայտարարագրում, ուղևորային հայտարարագրում և տրանսպորտային միջոցի հայտարարագրում ներկայացված տեղեկությունները, մաքսային հայտարարագրի նշված տեսակների անբաժանելի մասն են:

Հոդված 113. Մաքսային հայտարարագրի հետկանչի հետ կապված մաքսային գործառնությունները և դրանց կատարման կարգը

1. Հայտարարատուի՝ էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ներկայացված դիմումի հիման վրա օտարերկրյա ապրանքների՝ գրանցված մաքսային հայտարարագիրը, բացառությամբ սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 4-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքների տարանցման հայտարարագրի, կարող է հետ կանչվել նրա կողմից մինչև մաքսային մարմնի կողմից ապրանքների բացթողումը:

2. Մաքսային հայտարարագիրը հետ կանչելու դեպքում նոր մաքսային հայտարարագիրը պետք է ներկայացվի ապրանքների ժամանակավոր պահպանման ժամկետի շրջանակներում:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված ժամկետում մաքսային հայտարարագիրը չներկայացնելու դեպքում ապրանքներն արգելապահվում են մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

4. Հայտարարատուի՝ էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ներկայացված դիմումի հիման վրա սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 4-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքների՝ գրանցված

տարանցման հայտարարագիրը կարող է հետ կանչվել նրա կողմից մինչև մաքսային մարմնի կողմից ապրանքների բացթողումը կամ մաքսային մարմնի կողմից ապրանքները բաց թողնելուց հետո՝ մինչև այդ ապրանքների փաստացի մեկնումը Միության մաքսային տարածքից:

5. Հայտարարատուի՝ էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ներկայացված դիմումի հիման վրա Միության ապրանքների՝ գրանցված մաքսային հայտարարագիրը կարող է հետ կանչվել նրա կողմից մինչև ապրանքների փաստացի մեկնումը Միության մաքսային տարածքից, այդ թվում՝ մաքսային մարմնի կողմից ապրանքները բաց թողնելուց հետո՝ հաշվի առնելով սույն հոդվածի 6-րդ կետը:

6. Հայտարարատուի՝ էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ներկայացրած դիմումի հիման վրա Միության այն ապրանքների մաքսային հայտարարագիրը, որոնք ձևակերպվել են «արտահանում» մաքսային ընթացակարգով՝ «ազատ մաքսային գոտի» կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը եզրափակելու նպատակով, կարող է հետ կանչվել նրա կողմից, եթե՝

1) այդ ապրանքները գտնվում են ԱՏԳ տարածքում կամ ազատ պահեստի տարածքում, այդ թվում՝ մաքսային մարմնի կողմից ապրանքները բաց թողնելուց հետո.

2) այդ ապրանքները գտնվում են ԱՏԳ տարածքից դուրս կամ ազատ պահեստի տարածքից դուրս և փաստացի չեն մեկնել Միության մաքսային տարածքից՝ սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին ենթակետին, 215-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան՝ միաժամանակ՝ այդ ապրանքներն այլ մաքսային ընթացակարգով ձևակերպելու մասին մաքսային հայտարարագիր ներկայացնելու պայմանով:

7. Մաքսային հայտարարագրի հետկանչը թույլատրվում է մաքսային մարմնի թույլտվությամբ: Մաքսային մարմնի թույլտվությունը կամ այդպիսի թույլտվության տրամադրման մերժումը ձևակերպվում է էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով:

Մաքսային հայտարարագրի հետկանչը թույլատրվում է, եթե մինչև հայտարարատուի դիմումն ստանալը մաքսային մարմինը չի տեղեկացրել հայտարարատուին մաքսային հայտարարագրում հայտագրված ապրանքների մաքսային զննման տեղի և ժամի մասին, չի կայացրել որոշում մաքսային հայտարարագրում ներկայացված ապրանքների մաքսային տեսազննման վերաբերյալ, չի նշանակել մաքսային փորձաքննություն, և (կամ) չեն հայտնաբերվել վարչական կամ քրեական պատասխանատվության հանգեցնող՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության և (կամ) անդամ պետությունների այն օրենսդրության խախտումները, որի նկատմամբ վերահսկողությունը վերապահված է մաքսային մարմիններին:

Ապրանքների մաքսային տեսազննումից, ապրանքների մաքսային զննումից, մաքսային փորձաքննության արդյունքներն ստանալուց հետո մաքսային հայտարարագիրը կարող է հետ կանչվել, եթե դրանց անցկացման արդյունքներով չեն հայտնաբերվել վարչական կամ քրեական պատասխանատվության հանգեցնող՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության և (կամ) անդամ պետությունների այն օրենսդրության խախտումները, որի նկատմամբ վերահսկողությունը վերապահված է մաքսային մարմիններին:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել սույն կետով նախատեսված պայմաններից տարբեր՝ այն ապրանքների նկատմամբ ներկայացված մաքսային հայտարարագրի հետկանչի պայմաններ, որոնց մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները սահմանված են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ՝ սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին:

8. Սույն հոդվածի 1-7-րդ կետերի դրույթները չեն կիրառվում սույն Օրենսգրքի 116-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված դեպքերում ապրանքների հայտարարագիրը հետ կանչելիս:

Սույն Օրենսգրքի 116-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված դեպքերում ապրանքների հայտարարագիրը հետ է կանչվում հայտարարատուի՝ էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ներկայացրած դիմումի հիման վրա:

Հոդված 114. Նախնական մաքսային հայտարարագրումը

1. Նախնական մաքսային հայտարարագրման դեպքում պետք է ներկայացվեն տեղեկություններ, որոնք ենթակա են նշման մաքսային հայտարարագրում՝ բացառությամբ հետևյալ տեղեկությունների, որոնք իրենց բնույթով կարող են հայտնի չլինել հայտարարատուին մաքսային հայտարարագիր ներկայացնելու պահին՝

1) այն տրանսպորտային միջոցների մասին, որոնցով փոխադրվելու են ապրանքները՝ բացի այն տրանսպորտի տեսակի մասին տեղեկություններից, որով փոխադրվելու են ապրանքները.

2) մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող առանձին փաստաթղթերի մասին.

3) այլ տեղեկություններ, որոնք սահմանվում են Հանձնաժողովի կողմից՝ կախված մաքսային հայտարարագրի տեսակից և (կամ) ապրանքների կատեգորիաներից և դրանք փոխադրող տրանսպորտի տեսակից:

2. Սույն հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերում նշված տեղեկությունները, որոնք չեն ներկայացվել նախնական մաքսային հայտարարագրման ժամանակ կամ ներկայացվել են, բայց ենթակա են հստակեցման, պետք է փոփոխվեն (լրացվեն) մինչև ապրանքների բացթողումը՝ սույն Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան:

3. Միության մաքսային տարածք ներմուծելուց կամ ուղարկող մաքսային մարմնի կողմից սահմանված առաքման վայր առաքելուց հետո, այն դեպքում, երբ ապրանքները փոխադրվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, այն ապրանքները, որոնց վերաբերյալ իրականացվել է նախնական մաքսային հայտարարագրում, պետք է տեղավորվեն մաքսային հայտարարագրում նշված մաքսային հսկողության գոտում, իսկ նավերով փոխադրվող ապրանքները՝ գտնվեն մաքսային հայտարարագրում նշված՝ ապրանքների ժամանման վայրում:

Հայտարարատուն պարտավոր է տեղեկացնել մաքսային հայտարարագիրը գրանցած մաքսային մարմնին ապրանքները մաքսային հայտարարագրում նշված մաքսային հսկողության գոտում տեղավորելու կամ նավերով փոխադրվող ապրանքների ժամանման վայրում դրանց գտնվելու մասին, ներկայացնել մաքսային մարմին չներկայացված կամ հստակեցված տեղեկությունները մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները փոփոխելու (լրացնելու) միջոցով, կամ տեղեկացնել մաքսային մարմնին այդպիսի փոփոխություններ (լրացումներ) կատարելու անհրաժեշտության բացակայության մասին:

Եթե այն ապրանքները, որոնց վերաբերյալ իրականացվել է նախնական մաքսային հայտարարագրում, փոխադրվել են Միության մաքսային տարածքով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, ապա հայտարարատուն տեղեկացնում է մաքսային հայտարարագիրը գրանցած մաքսային մարմնին «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտից հետո ապրանքները մաքսային հսկողության տարածքում տեղավորելու մասին:

4. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել դեպքեր, երբ այն ապրանքները, որոնց վերաբերյալ իրականացվել է նախնական մաքսային հայտարարագրում, կարող են տեղավորվել (գտնվել) մաքսային հսկողության այն գոտում, որը գտնվում է մաքսային հայտարարագիրը գրանցած մաքսային մարմնից տարբերվող մաքսային մարմնի գործունեության տարածքում:

5. Նախնական մաքսային հայտարարագրման ժամանակ կիրառվում են արգելքներ և սահմանափակումներ, ներքին շուկայի պաշտպանության միջոցներ, որոնք գործում են մաքսային մարմնի կողմից այն մաքսային փաստաթուղթը գրանցելու օրվա դրությամբ, որով փոփոխվում (լրացվում) են մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները, կամ մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագրում փոփոխություններ (լրացումներ) կատարելու անհրաժեշտության բացակայության մասին ծանուցման գրանցման օրվա դրությամբ:

6. Մաքսային մարմինը մերժում է ապրանքների բացթողումը, եթե մաքսային հայտարարագրի գրանցմանը հաջորդող օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում՝

1) ապրանքները չեն տեղավորվում մաքսային հայտարարագրում նշված մաքսային հսկողության գոտում.

2) նավերով փոխադրվող ապրանքների վերաբերյալ մաքսային մարմինը չի տրամադրել թույլտվություն դրանք սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան մաքսային հայտարարագրում նշված ժամանման վայրում դատարկելու համար.

3) մաքսային հայտարարագիրը գրանցած մաքսային մարմինը տեղեկացված չէ մաքսային հայտարարագրում նշված՝ մաքսային հսկողության գոտում ապրանքները տեղավորելու մասին.

4) մաքսային մարմին չեն ներկայացվել պակասող տեղեկությունները մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունների փոփոխման (լրացման) միջոցով, կամ մաքսային մարմինը տեղեկացված չէ այդպիսի փոփոխություններ (լրացումներ) կատարելու անհրաժեշտության բացակայության մասին:

7. Եթե ապրանքների բացթողման ժամկետը երկարաձգվել է, կամ ապրանքների բացթողումը մերժվել է, ապա հայտարարատուն պարտավոր է իրականացնել մաքսային գործառնություններ, որոնք կապված են սույն Օրենսգրքի 16-րդ գլխին համապատասխան ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու հետ:

8. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել դեպքեր, երբ նախնական մաքսային հայտարարագրումն ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս, բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի, պետք է իրականացվի պարտադիր կարգով:

9. Հանձնաժողովն իրավասու է սահմանելու մաքսային գործառնությունների կատարման կարգն անձնական օգտագործման ապրանքների, միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների, ինչպես նաև «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նախնական մաքսային հայտարարագրման դեպքում՝ սույն հոդվածով չկարգավորվող մասում:

Հոդված 115. Ոչ լրիվ մաքսային հայտարարագրումը

1. Ոչ լրիվ մաքսային հայտարարագրումն իրականացվում է Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների վերաբերյալ:

2. Ոչ լրիվ մաքսային հայտարարագրման դեպքում պետք է ներկայացվեն տեղեկություններ, որոնք ենթակա են նշման ապրանքների հայտարարագրում՝ սույն Օրենսգրքի 106-րդ հոդվածին համապատասխան՝ բացառությամբ հետևյալ տեղեկությունների, որոնք կարող են չնշվել՝

1) ապրանքներն ստացողի մասին.

2) ապրանքների նշանակման երկրի և (կամ) վաճառող երկրի մասին.

3) հայտարարագրվող ապրանքների փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցների մասին.

4) ապրանքների փաթեթվածքների մասին (քանակը, տեսակը, դրոշմավորումը և հերթական համարները):

3. Այն ապրանքների բացթողումից հետո, որոնց մաքսային հայտարարագրումն իրականացվել է սույն հոդվածին համապատասխան, հայտարարատուն պարտավոր է մաքսային մարմին ներկայացնել պակասող տեղեկությունները մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունների փոփոխման (լրացման) միջոցով՝ ապրանքների բացթողման օրվանից ոչ ուշ, քան 8 ամսվա ընթացքում, եթե անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ ավելի կարճ ժամկետներ սահմանված չեն:

4. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել այն ապրանքների կատեգորիաները, որոնց առնչությամբ սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում:

Հոդված 116. Պարբերական մաքսային հայտարարագրումը

1. Պարբերական մաքսային հայտարարագրման դեպքում ապրանքների հայտարարագիրը ներկայացվում է բոլոր այն ապրանքների վերաբերյալ, որոնք կարող են տեղափոխվել Միության մաքսային սահմանով երկու կամ ավելի խմբաքանակներով՝ մատակարարման ընթացքում, գործարքներից մեկով նախատեսված պարտավորությունների կատարման դիմաց, իսկ գործարքի բացակայության դեպքում՝ ապրանքների տիրապետման, օգտագործման կամ տնօրինման իրավունքը հաստատող փաստաթղթով կամ, վերամշակման արդյունքում ստացվելիք ապրանքների մաքսային հայտարարագրման դեպքում, ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթով նախատեսված պարտավորությունների կատարման դիմաց:

2. Ապրանքների հայտարարագիրը ներկայացվում է մինչև հայտագրվող մատակարարման ժամանակահատվածի սկիզբը:

Մատակարարման ժամանակահատված է համարվում հայտարարատուի կողմից հայտագրվող ժամանակահատվածը, որը չի գերազանցում 31 օրացուցային օրը, և որի ընթացքում պլանավորվում է՝

1) մաքսային մարմին ներկայացնել Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքները.

2) բեռնառաքել Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքները (հանձնել ապրանքները փոխադրողին, որն իրականացնելու է ապրանքների միջազգային փոխադրումը, կամ առաջին փոխադրողին՝ Միության մաքսային տարածքից ապրանքներն արտահանելու նպատակով դրանք այլ տրանսպորտային միջոցի փոխաբեռնմամբ (վերաբեռնմամբ) միջազգային փոխադրում իրականացնելիս):

3. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ սույն հոդվածի 2-րդ կետում նշված մատակարարման ժամանակահատվածը չի կարող գերազանցել 1 օրացուցային ամիսը:

4. Պարբերական մաքսային հայտարարագրման դեպքում ապրանքների ներմուծումը Միության մաքսային տարածք կամ Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանումն ապրանքների հայտարարագրում ներկայացված քանակը գերազանցող քանակով չի թույլատրվում՝ բացառությամբ Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերի:

5. Պարբերական մաքսային հայտարարագրման դեպքում պետք է ներկայացվեն տեղեկություններ, որոնք ենթակա են նշման ապրանքների հայտարարագրում՝ սույն Օրենսգրքի 106-րդ հոդվածին համապատասխան, ելնելով հայտագրված մատակարարման ժամանակահատվածի ընթացքում Միության մաքսային սահմանով տեղափոխման համար նախատեսված ապրանքների քանակից՝ բացառությամբ հետևյալ տեղեկությունների, որոնք իրենց բնույթով կարող են հայտնի չլինել հայտարարատուին ապրանքների հայտարարագիր ներկայացնելու պահին՝

1) այն տրանսպորտային միջոցների մասին, որոնցով փոխադրվելու են ապրանքները՝ բացի այն տրանսպորտի տեսակի մասին տեղեկություններից, որով փոխադրվելու են ապրանքները.

2) մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող առանձին փաստաթղթերի մասին.

3) այլ տեղեկություններ, որոնք սահմանվում են Հանձնաժողովի կողմից՝ կախված ապրանքների կատեգորիաներից ու դրանք փոխադրող տրանսպորտի տեսակից:

6. Այն ապրանքների հայտագրված մատակարարման ժամանակահատվածի ավարտից հետո, որոնց մաքսային հայտարարագրումն իրականացվել է սույն հոդվածին համապատասխան, հայտարարատուն պարտավոր է մաքսային մարմին ներկայացնել պակասող տեղեկությունները, ինչպես նաև՝ տեղեկություններ ապրանքների փաստացի քանակի մասին՝ ապրանքների հայտարարագրում ներկայացված տեղեկությունների փոփոխման (լրացման) միջոցով, հետևյալ ժամկետներում՝

1) Միության մաքսային տարածք ապրանքները ներմուծելու մատակարարման ժամանակահատվածի ավարտվելու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ, քան 1 ամսվա ընթացքում.

2) ապրանքների հայտարարագրում հայտագրված ապրանքների ամբողջ խմբաքանակը Միության մաքսային տարածքից փաստացի արտահանելու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ, քան 2 ամսվա ընթացքում:

7. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել ապրանքների հայտարարագրում ներկայացված տեղեկությունների փոփոխման (լրացման)՝ սույն հոդվածի 6-րդ կետով սահմանված ժամկետներից ավելի կարճ ժամկետներ կամ սույն հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ժամկետների երկարաձգման հնարավորություն, իսկ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սույն հոդվածի 3-ին կետին համապատասխան մատակարարման ժամանակահատվածը սահմանելու դեպքում՝ ապրանքների հայտարարագրում ներկայացված տեղեկությունների փոփոխման (լրացման) այլ ժամկետ:

8. Այն ապրանքները, որոնց վերաբերյալ իրականացվել է պարբերական մաքսային հայտարարագրում, և որոնք նախատեսված են Միության մաքսային տարածքից արտահանելու համար, պետք է փաստացի արտահանվեն Միության մաքսային տարածքից մատակարարման ժամանակահատվածն ավարտվելու օրվան հաջորդող օրվանից՝ 6 ամսվա ընթացքում:

Նշված ժամկետը հայտարարատուի հիմնավորված դիմումի հիման վրա երկարաձգվում է ապրանքների բացթողումն իրականացրած մաքսային մարմնի կողմից՝ դրա լրանալու օրվանից 3 ամիսը չգերազանցող ժամկետով:

9. Եթե պարբերական մաքսային հայտարարագրման դեպքում ապրանքների հայտարարագրում հայտագրված ապրանքները հայտագրված ժամանակահատվածում չեն ներկայացվել ապրանքների այդ հայտարարագիրը գրանցած մաքսային մարմին կամ փաստացի չեն արտահանվել Միության մաքսային տարածքից սույն հոդվածի 8-րդ կետով սահմանված ժամկետի ընթացքում, ապա ապրանքների այդպիսի հայտարարագիրը պետք է հետ կանչվի սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան:

10. Սահմանված ժամկետներում հայտարարատուի կողմից սույն հոդվածի 9-րդ կետին համապատասխան հայտարարագրի հետկանչի հետ կապված գործողությունները չիրականացնելու դեպքում մաքսային մարմինը չեղյալ է ճանաչում ապրանքների բացթողումը՝ սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

11. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել այն ապրանքների կատեգորիաները, որոնց առնչությամբ սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում:

12. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պայմաններ, որոնց կատարման դեպքում կարող է իրականացվել պարբերական մաքսային հայտարարագրումը սույն հոդվածին համապատասխան:

13. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել մատակարարման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ապրանքների մաքսային հայտարարագրում պարբերական մաքսային հայտարարագրման ժամանակ հայտագրված ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության անցկացման առանձնահատկությունները:

Հոդված 117. Միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում տեղափոխվող ապրանքի մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները

1. Չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում ապրանքը, որը սահմանված ժամանակահատվածի ընթացքում տեղափոխվում է Միության մաքսային սահմանով առանձին բաղադրիչների տեսքով, կարող է հայտարարագրվել այդպիսի ապրանքի բաղադրիչների վերաբերյալ ապրանքների մի քանի հայտարարագիր ներկայացնելու միջոցով՝ նշելով կոմպլեկտավորված կամ ավարտուն վիճակում գտնվող ապրանքի ծածկագրին համապատասխանող ծածկագիրը՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան:

Ապրանքի բաղադրիչ ասելով ենթադրվում է ապրանքի՝ կոմպլեկտավորված կամ ավարտուն վիճակում գտնվող բաղկացուցիչ մասը, որը նշված է որպես այդպիսի մաս չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում գտնվող՝ Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների դասակարգման մասին որոշման մեջ, որն ընդունվում է սույն Օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան (այսուհետ սույն հոդվածում՝ ապրանքների դասակարգման մասին որոշում):

2. Սույն հոդվածով սահմանված՝ ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները կիրառվում են ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով, «արտահանում» մաքսային ընթացակարգով, «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով, «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով, «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով և «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում:

3. Սույն հոդվածով սահմանված՝ ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները կիրառվում են հետևյալ պայմանների միաժամանակյա պահպանման դեպքում՝

1) ապրանքների վերաբերյալ տրամադրված է ապրանքների դասակարգման մասին որոշում.

2) ապրանքի բաղադրիչների հայտարարատուն այն անձն է, որին տրամադրվել է ապրանքների դասակարգման մասին որոշումը.

3) ապրանքի բոլոր բաղադրիչների մաքսային հայտարարագրումն իրականացվել է մեկ մաքսային մարմնում.

4) ապրանքի բաղադրիչները ներմուծվում են Միության մաքսային տարածք մեկ ստացողի հասցեով կամ արտահանվում են այդ տարածքից մեկ ուղարկողից:

4. Ի հավելումն սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված պայմանների՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ ապրանքի բաղադրիչները պետք է ներմուծվեն Միության մաքսային տարածք մեկ գործարքի շրջանակներում:

5. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է նախատեսված լինել հայտարարատուի կողմից ապրանքների դասակարգման մասին որոշումը ստանալուց հետո մինչև ապրանքի առաջին

բաղադրիչի վերաբերյալ ապրանքների հայտարարագիր ներկայացնելն այդ անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող ձևով և կարգով ապրանքի բաղադրիչների նախատեսվող մատակարարումների մասին ծանուցումը մաքսային մարմին ներկայացնելու անհրաժեշտություն:

6. Օտարերկրյա ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելու դեպքում ապրանքի բաղադրիչների մաքսային հայտարարագրումը կարող է իրականացվել՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 114-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

7. Սույն հոդվածին համապատասխան ապրանքի բաղադրիչների մաքսային հայտարարագրման դեպքում կիրառվում են մաքսասակագնային կարգավորման միջոցները, արտահանման մաքսատուրքերի դրույքաչափերը, հարկերի դրույքաչափերը, արտահանման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունները, արգելքները և սահմանափակումները, ներքին շուկայի պաշտպանության միջոցները, որոնք սահմանված են կոմպլեկտավորված կամ ավարտուն վիճակում գտնվող ապրանքի համար և գործում են ապրանքի բաղադրիչների վերաբերյալ ապրանքների հայտարարագիրը գրանցելու օրվա դրությամբ:

8. Կոմպլեկտավորված կամ ավարտուն վիճակում գտնվող ապրանքի վերջին բաղադրիչի վերաբերյալ ապրանքների հայտարարագիրը պետք է ներկայացվի այդպիսի ապրանքի վերջին բաղադրիչի վերաբերյալ ապրանքների հայտարարագիրը գրանցելու օրվանից 2 տարին չգերազանցող ժամկետում:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել սույն կետի առաջին պարբերությունում նշված ժամկետի երկարաձգում, այդպիսի երկարաձգման կարգ, ինչպես նաև կոմպլեկտավորված կամ ավարտուն վիճակում գտնվող ապրանքի վերջին բաղադրիչի վերաբերյալ ապրանքների հայտարարագիր ներկայացնելու վերջնաժամկետ:

9. Եթե խախտվել է սույն հոդվածի 8-րդ կետին համապատասխան սահմանված՝ ապրանքի վերջին բաղադրիչի վերաբերյալ ապրանքների հայտարարագիր ներկայացնելու ժամկետը, և (կամ) եթե մինչև այդ ժամկետի լրանալը ապրանքների դասակարգման մասին որոշումը դադարել է գործել կամ չեղյալ է ճանաչվել, ապա ապրանքի այն բաղադրիչների վերաբերյալ ապրանքների հայտարարագրերում պարունակվող տեղեկություններում, որոնք բաց են թողնվել մինչև այդ որոշման գործողության ավարտը կամ չեղյալ ճանաչվելը, կատարվում են համապատասխան փոփոխություններ (լրացումներ), որոնք կապված են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան՝ կոմպլեկտավորված կամ ավարտուն վիճակում գտնվող ապրանքի ծածկագիրը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան՝ ապրանքի բաղադրիչների ծածկագրերով փոխարինելու հետ:

Ապրանքի բաղադրիչների վերաբերյալ ապրանքների հայտարարագրում պարունակվող տեղեկությունների փոփոխությունները (լրացումները) կատարվում են հայտարարատուի կողմից՝ սույն Օրենսգրքի 112-րդ հոդվածին համապատասխան սահմանված կարգով, սույն հոդվածի 8-րդ կետին համապատասխան սահմանված ժամկետը լրանալու կամ հայտարարատուին ապրանքների դասակարգման մասին որոշման գործողության դադարման կամ չեղյալ ճանաչվելու մասին տեղեկացնելու օրվանից 30 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում, եթե ապրանքների դասակարգման մասին որոշման գործողությունը դադարում է, կամ այդ որոշումը չեղյալ է ճանաչվում այլ հիմքերով և ոչ սույն հոդվածի 8-րդ կետին համապատասխան սահմանված ժամկետի լրանալու հետևանքով:

10. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել այն ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության իրականացման առանձնահատկությունները, որոնց մաքսային հայտարարագրումն իրականացվել է սույն հոդվածին համապատասխան:

Գլուխ 18

Ապրանքների բացթողումը և ապրանքների բացթողման հետ կապված մաքսային գործառնությունները

Հոդված 118. Ապրանքների բացթողման և ապրանքների բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների կատարման կարգի և դրա չեղյալ ճանաչման վերաբերյալ ընդհանուր դրույթները

1. Ապրանքների բացթողումն իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ պայմանով, որ անձի կողմից՝

1) պահպանվել են ապրանքները հայտագրված մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանները կամ այն ապրանքների առանձին կատեգորիաների օգտագործման համար սահմանված պայմանները, որոնք սույն Օրենսգրքին համապատասխան ենթակա չեն մաքսային ընթացակարգերով ձևակերպման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այնպիսի պայմանը, ինչպիսին է արգելքների և սահմանափակումների պահպանումը «Միության մասին» պայմանագրին և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, կարող է հաստատվել ապրանքների բացթողումից հետո.

2) մաքսային մարմինների կողմից ապրանքների բացթողման հետ կապված գործողությունների իրականացման դիմաց մաքսավճարները վճարված են, եթե այդ վճարները սահմանված են անդամ պետության օրենսդրությամբ, և դրանց վճարման ժամկետը սահմանված է նախքան ապրանքների բացթողումը, այդ թվում՝ նախքան մաքսային

հայտարարագրի գրանցումը:

2. Ապրանքների բացթողումը ձևակերպվում է՝ օգտագործելով մաքսային մարմնի տեղեկատվական համակարգը՝ էլեկտրոնային փաստաթուղթ ձևակերպելու կամ թղթային կրիչով մաքսային հայտարարագրի կամ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին՝ թղթային կրիչով ներկայացված դիմումի վրա համապատասխան նշումներ կատարելու միջոցով:

3. Ապրանքների բացթողման հետ կապված մաքսային գործառնությունները կատարվում են սույն Օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված ժամկետներում կամ նշված հոդվածի 10-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող ժամկետներում, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով, իսկ Հանձնաժողովի կողմից չհամակարգված մասում՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան սահմանվող կարգով:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել ժամանման վայրերում ապրանքների բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների կատարման առանձնահատկությունները:

4. Սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածի 4-6-րդ կետերով և 116-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված դեպքերում, ինչպես նաև սույն Օրենսգրքի 116-րդ հոդվածի 10-րդ կետով նախատեսված դեպքում մաքսային հայտարարագրի հետկանչի դեպքում մաքսային մարմինը չեղյալ է ճանաչում ապրանքների բացթողումը:

Հանձնաժողովի կողմից և անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ՝ Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում, նույնպես կարող են սահմանվել այնպիսի դեպքեր և պայմաններ, երբ հայտարարատուի հիմնավորված դիմումի հիման վրա մաքսային մարմինը կարող է չեղարկել ապրանքների բացթողումը:

Ապրանքների բացթողումը չեղարկելը ձևակերպվում է՝ օգտագործելով մաքսային մարմնի տեղեկատվական համակարգը՝ էլեկտրոնային փաստաթուղթ ձևակերպելու կամ թղթային կրիչով մաքսային հայտարարագրի վրա համապատասխան նշումներ կատարելու միջոցով:

Ապրանքների բացթողումը չեղարկելու հետ կապված մաքսային գործառնությունների կատարման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից, իսկ Հանձնաժողովի կողմից չհամակարգված մասում՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

5. Եթե ապրանքների հայտարարագրում ներկայացված են տեղեկություններ 2 և ավելի ապրանքների մասին, ապա մաքսային մարմինն իրականացնում է այն ապրանքների բացթողումը, որոնց առնչությամբ պահպանվել են սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ բացթողման պայմանները, եթե անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

6. Մաքսային մարմինն ապրանքների բացթողման մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է այն ապրանքների ժամանակավոր պահպանումն իրականացնող անձին, որոնց առնչությամբ իրականացվել է ապրանքների բացթողումը, իսկ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նաև այլ անձանց՝ մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի և այդ անձանց տեղեկատվական համակարգերի փոխգործակցության առկայության դեպքում՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան սահմանված ժամկետում:

7. Սույն Օրենսգրքի 120-122-րդ և 126-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, ինչպես նաև անձնական օգտագործման ապրանքների, միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների և պաշարների առնչությամբ ապրանքների բացթողումն իրականացվում է սույն հոդվածին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 120-122-րդ և 126-րդ հոդվածներով և 37-39-րդ գլուխներով սահմանված՝ ապրանքների բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների կատարման պայմանները և (կամ) առանձնահատկությունները:

8. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան կարող են սահմանվել առևտրային, տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի վրա ապրանքների բացթողման մասին կամ առևտրային, տրանսպորտային (փոխադրման) այն փաստաթղթերի վրա ապրանքների բացթողումը չեղարկելու մասին նշումներ կատարելու դեպքերն ու կարգը, որոնց վրա կատարվել են նշումներ ապրանքների բացթողման մասին:

Հոդված 119. Ապրանքների բացթողման ժամկետները

1. Ապրանքների բացթողումը պետք է ավարտվի մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագրի գրանցման պահից կամ սույն հոդվածի 2-րդ կետում նշված հանգամանքներից մեկի ի հայտ գալու պահից 4 ժամվա ընթացքում, իսկ եթե ապրանքների հայտարարագիրը գրանցվել է ավելի ուշ, քան մաքսային մարմնի աշխատանքային ժամի ավարտին նախորդող 4 (չորս) ժամը, կամ սույն հոդվածի 2-րդ կետում նշված հանգամանքներից մեկն ի հայտ է եկել ավելի ուշ, քան մաքսային մարմնի աշխատանքային ժամի ավարտին նախորդող 4 (չորս) ժամը, ապա այդ մաքսային մարմնի աշխատանքային ժամը սկսվելու պահից 4 ժամվա ընթացքում՝ բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Ապրանքների նախնական մաքսային հայտարարագրման ժամանակ սույն հոդվածով նախատեսված՝ ապրանքների բացթողման ժամկետները հաշվարկվում են հետևյալ հանգամանքներից մեկի ի հայտ գալու պահից՝

1) մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունների փոփոխում (լրացում)՝ պայմանով, որ մաքսային

հայտարարագիրը գրանցած մաքսային մարմինն ստացել է մաքսային հայտարարագրում նշված մաքսային հսկողության գոտում ապրանքները տեղավորելու մասին ծանուցումը, իսկ նավերով փոխադրվող ապրանքների առնչությամբ մաքսային մարմինը տրամադրել է սույն Օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան մաքսային հայտարարագրում նշված ապրանքների ժամանման վայրում դրանց դատարկման թույլտվություն.

2) մաքսային հայտարարագիրը գրանցած մաքսային մարմինն ստացել է մաքսային հայտարարագրում նշված մաքսային հսկողության գոտում ապրանքները տեղավորելու մասին ծանուցում, իսկ նավերով փոխադրվող ապրանքների առնչությամբ մաքսային մարմինը տրամադրել է սույն Օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան մաքսային հայտարարագրում նշված ապրանքների ժամանման վայրում դրանց դատարկման թույլտվություն՝ պայմանով, որ մաքսային մարմինը տեղեկացված է ներկայացված մաքսային հայտարարագրում փոփոխություններ (լրացումներ) կատարելու անհրաժեշտության բացակայության մասին, կամ փոփոխությունները (լրացումները) կատարվել են մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագրում նշված մաքսային հսկողության գոտում ապրանքները տեղավորելու մասին ծանուցում ստանալուց կամ նավերով փոխադրվող ապրանքների առնչությամբ սույն Օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան մաքսային հայտարարագրում նշված ժամանման վայրում դատարկման թույլտվությունն ստանալուց առաջ մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկություններում:

3. Ապրանքների բացթողումը պետք է ավարտվի ոչ ուշ, քան մաքսային հայտարարագիրը գրանցելու օրվան կամ սույն հոդվածի 2-րդ կետում նշված հանգամանքներից որևէ մեկի ի հայտ գալու օրվան հաջորդող 1 աշխատանքային օրվա ընթացքում, եթե սույն հոդվածի 1-ին կետում նշված ժամանակի ընթացքում ի հայտ է եկել հետևյալ հանգամանքներից որևէ մեկը՝

1) մաքսային մարմինը սույն Օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերին համապատասխան պահանջել է մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթեր, և (կամ) ընդունվել է որոշում այլ ձևերով մաքսային հսկողություն անցկացնելու կամ մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցներ ձեռնարկելու մասին.

2) հայտարարատուն մաքսային մարմին է ներկայացրել մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները փոփոխելու (լրացնելու) մասին հիմնավորված դիմում՝ սույն Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան.

3) հայտարարատուն չի կատարել մաքսային մարմնի՝ մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները փոփոխելու (լրացնելու) պահանջը՝ սույն Օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված՝ ապրանքների բացթողման ժամկետը կարող է երկարաձգվել այնքան ժամանակով, որքան անհրաժեշտ է՝

1) սկսված մաքսային հսկողությունը սույն Օրենսգրքով նախատեսված՝ մաքսային հսկողության ձևերի և (կամ) մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցների կիրառմամբ անցկացնելու կամ ավարտելու համար.

2) սույն Օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները փոփոխելու (լրացնելու) մաքսային մարմնի պահանջը կատարելու համար.

3) սույն Օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածներին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրելու համար:

5. Ապրանքների բացթողման ժամկետը երկարաձգվում է մաքսային մարմնի ղեկավարի (պետի), նրա կողմից լիազորված՝ մաքսային մարմնի ղեկավարի (պետի) տեղակալի կամ նրանց փոխարինող անձանց թույլտվությամբ:

6. Ապրանքների բացթողման ժամկետը երկարաձգելու դեպքում ապրանքների բացթողումը պետք է ավարտվի մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագիրը գրանցելու օրվան կամ սույն հոդվածի 2-րդ կետում նշված հանգամանքներից որևէ մեկի ի հայտ գալու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե սույն Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

«Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների բացթողման ժամկետը երկարաձգելու դեպքում ապրանքների բացթողումը մաքսային մարմնի կողմից պետք է ավարտված լինի տարանցման հայտարարագրի գրանցման օրվան կամ սույն հոդվածի 2-րդ կետում նշված հանգամանքներից որևէ մեկի ի հայտ գալու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

7. Եթե մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումը չի կարող ավարտին հասցվել սույն հոդվածի 6-րդ կետով սահմանված ժամկետում, և սույն Օրենսգրքի 121-րդ հոդվածին համապատասխան ապրանքների բացթողումը չի կարող իրականացվել սույն Օրենսգրքի 121-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված դեպքում, ապա ապրանքների բացթողման ժամկետը երկարաձգվում է մաքսային մարմնի ղեկավարի (պետի), նրա կողմից լիազորված՝ մաքսային մարմնի ղեկավարի (պետի) տեղակալի կամ նրանց փոխարինող անձանց թույլտվությամբ՝ սույն հոդվածի 6-րդ կետով սահմանված ժամկետի լրացման օրվան հաջորդող օրվանից՝ այդպիսի ստուգում անցկացնելու ժամկետով:

8. Եթե նշանակվել է մաքսային փորձաքննություն, և այն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է սույն հոդվածի 6-րդ կետով սահմանված ժամկետից երկար ժամկետ, և չի տրամադրվել սույն Օրենսգրքի 122-րդ հոդվածին համապատասխան ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը, կամ սույն Օրենսգրքի 122-րդ հոդվածին համապատասխան ապրանքների բացթողումը չի կարող իրականացվել սույն Օրենսգրքի 122-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված դեպքում, ապա ապրանքների բացթողման ժամկետը երկարաձգվում է մաքսային մարմնի ղեկավարի (պետի), նրա

կողմից լիազորված՝ մաքսային մարմնի ղեկավարի (պետի) տեղակալի կամ նրանց փոխարինող անձանց թույլտվությամբ՝ սույն հոդվածի 6-րդ կետով սահմանված ժամկետի լրացման օրվան հաջորդող օրվանից՝ մաքսային փորձաքննությունն անցկացնելու ժամկետով:

9. Սույն հոդվածի 4-8-րդ կետերին համապատասխան ապրանքների բացթողումը երկարաձգելու դեպքում մաքսային մարմինն ուղարկում է հայտարարատուին կամ մաքսային ներկայացուցչին այդ երկարաձգման մասին ծանուցում ոչ ուշ, քան թույլտվության տրամադրման օրվան հաջորդող 1 աշխատանքային օրվա ընթացքում:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ ծանուցման մեջ նշվում են այն պատճառները, որոնց հիման վրա երկարաձգվում է ապրանքների բացթողման ժամկետը:

10. Հանձնաժողովի կողմից կամ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել ապրանքների բացթողման՝ սույն հոդվածի 1-ին և 3-րդ կետերում նշված ժամկետներից ավելի կարճ ժամկետներ:

11. Ապրանքների բացթողման ժամկետը կարող է կասեցվել սույն Օրենսգրքի 124-րդ հոդվածին և (կամ) Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին համապատասխան:

Հոդված 120. Մաքսային գործառնությունների կատարման և մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման առանձնահատկությունները

1. Մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը, «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան, ապրանքների բացթողման համար կարող են հայտագրվել՝

1) սույն Օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին կետում նշված ապրանքները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սույն Օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան սահմանված ապրանքները.

2) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանվող ներդրումային ծրագրերի իրականացման շրջանակներում ներմուծվող ապրանքները.

3) ըստ Հանձնաժողովի կողմից հաստատվող ցանկի՝ այն ապրանքների կատեգորիաները, որոնք ներմուծվում են Հանձնաժողովի կողմից սահմանվող չափանիշներին համապատասխանող իրավաբանական անձանց առանձին կատեգորիաների կողմից:

2. Ապրանքները կարող են հայտագրվել բացթողման համար մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգին, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին, «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգին, առանց ներմուծման մաքսատուրքերի (հարկերի) վճարման «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ, ինչպես նաև այլ մաքսային ընթացակարգերին համապատասխան, որոնք սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել այն ապրանքների կատեգորիաների ցանկը, որոնք կարող են հայտագրվել բացթողման համար մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգին, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին, «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգին, առանց ներմուծման մաքսատուրքերի (հարկերի) վճարման «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան:

3. Մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքները բացթողման համար հայտագրելու դեպքում այն անձը, որը հանդես է գալու որպես ապրանքների հայտարարատու ապրանքների հայտարարագիր ներկայացնելիս, մաքսային մարմին է ներկայացնում մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմում՝ էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով:

Մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմում ներկայացվում է այն անձի կողմից, որը կարող է հանդես գալ որպես ապրանքների հայտարարատու (այսուհետ սույն հոդվածում՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմում ներկայացրած անձ):

Մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը պետք է պարունակի տեղեկություններ այն անձի մասին, որը հանդես է գալու որպես հայտարարատու, ընտրված մաքսային ընթացակարգի մասին և այլ ապրանքների բացթողման համար անհրաժեշտ տեղեկություններ, որոնք սահմանվում են Հանձնաժողովի կողմից՝ կախված մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումի տեսակից, որպես հայտարարատու հանդես եկող անձից, ապրանքների կատեգորիաներից և մաքսային ընթացակարգերից:

Մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումի ձևը, դրա կառուցվածքն ու ձևաչափը՝ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով, դրանք լրացնելու կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

4. Թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ներկայացվող՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումի հետ մեկտեղ պետք է ներկայացվեն՝

1) այն պայմանների պահպանումը հաստատող փաստաթղթեր, որոնք պահպանելու դեպքում սույն հոդվածի 13-րդ կետին համապատասխան մաքսային մարմինն իրականացնում է ապրանքների բացթողումը մինչև ապրանքների

հայտարարագիր ներկայացնելը.

2) առևտրային կամ այլ փաստաթղթեր, որոնք ներառում են տեղեկություններ ապրանքներն ուղարկողի և ստացողի, ապրանքներն ուղարկող երկրի և դրանց նշանակման երկրի մասին, ապրանքների մասին (անվանումը, ապրանքային նշանը, անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում և (կամ) մտավոր սեփականության օբյեկտների ազգային մաքսային այն ռեեստրում ընդգրկված՝ մտավոր սեփականության օբյեկտ հանդիսացող ապրանքի ծագման վայրի անվանումը, որը վարում է այն անդամ պետության մաքսային մարմինը, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների բացթողման մասին դիմումը մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը, նկարագրությունը, ծածկագիրը՝ նվազագույնը առաջին 6 նիշերով՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, քանակը, համաքաշը և արժեքը): Սույն ենթակետում նշված փաստաթղթերում անհրաժեշտ տեղեկությունների բացակայության դեպքում այդ տեղեկությունները նշվում են մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումում:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված փաստաթղթերը կարող են չներկայացվել մաքսային մարմին, եթե այդպիսի փաստաթղթերի մասին տեղեկությունները և (կամ) դրանցում պարունակվող տեղեկությունները կարող են ստացվել սույն Օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

6. Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ներկայացվող՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումի հետ միասին ներկայացվում են արգելքների և սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթերը, մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը, եթե այդպիսի փաստաթղթերի մասին տեղեկությունները և (կամ) դրանցում պարունակվող տեղեկությունները չեն կարող ստացվել մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

7. Մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը ներկայացվում է անդամ պետության՝ մաքսային հայտարարագրերը գրանցելու իրավունք ունեցող մաքսային մարմին, որին հետագայում ներկայացվելու է ապրանքների հայտարարագիրը:

8. Մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքները բացթողման համար հայտագրելիս այդ ապրանքները պետք է գտնվեն այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմին է ներկայացվում ապրանքների բացթողման մասին դիմումը՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը:

9. Մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը ներկայացրած անձը անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան պատասխանատվություն է կրում մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի պահանջները չպահպանելու, այդ թվում՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումում ոչ հավաստի տեղեկություններ նշելու, անվավեր փաստաթղթեր, այդ թվում՝ կեղծ և (կամ) ակնհայտ ոչ հավաստի (սուտ) տեղեկություններ պարունակող փաստաթղթեր ներկայացնելու, ապրանքների հայտարարագիրը ժամանակին չներկայացնելու համար:

10. Մաքսային մարմինը գրանցում է մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը կամ մերժում է դրա գրանցումը՝ այդ դիմումը ներկայացնելու պահից ոչ ուշ, քան մաքսային մարմնի 1 (մեկ) աշխատանքային ժամվա ընթացքում՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող կարգով, իսկ Հանձնաժողովի կողմից չկարգավորված մասով՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան սահմանվող կարգով:

11. Մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցման պահից դառնում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի մասին վկայող փաստաթուղթ:

12. Մաքսային մարմինը մերժում է մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումի գրանցումը հետևյալ հիմքերով՝

1) մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը ներկայացվել է մաքսային հայտարարագրերը գրանցելու իրավունք չունեցող մաքսային մարմին.

2) մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը ներկայացվել է չլիազորված անձի կողմից կամ ստորագրված կամ պատշաճ կերպով վավերացված չէ.

3) մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին թղթային կրիչով դիմումը կազմված չէ սահմանված կարգով, էլեկտրոնային փաստաթղթի տեսքով դիմումի կառուցվածքը և ձևաչափը չեն համապատասխանում այդպիսի դիմումի սահմանված կառուցվածքին և ձևաչափին.

4) մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումում նշված չեն սույն հոդվածի 3-րդ կետի երրորդ պարբերությանը համապատասխան նշման ենթակա տեղեկությունները.

5) թղթային կրիչով ներկայացվող՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումի հետ միասին չեն ներկայացվել սույն հոդվածի 4-րդ կետում նշված փաստաթղթերը.

6) էլեկտրոնային փաստաթղթի ձևով ներկայացվող՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումի հետ միասին սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան չեն ներկայացվել փաստաթղթերը.

7) մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը ներկայացնելու

օրվա դրությամբ այդպիսի դիմում ներկայացրած անձը սույն Օրենսգրքի սույն հոդվածի 16-րդ կետով և 441-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված ժամկետում չի կատարել այն ապրանքների վերաբերյալ ապրանքների հայտարարագիր ներկայացնելու պարտավորությունը, որոնց բացթողումն ավելի վաղ իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը.

8) այն ապրանքները, որոնց առնչությամբ ներկայացվել է մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմում, չեն գտնվում այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմին է ներկայացվել մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումն ապրանքների բացթողման մասին դիմումը:

13. Ապրանքների բացթողումը մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ պայմանով, որ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմում ներկայացրած անձը՝

1) պահպանել է սույն Օրենսգրքի սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները կամ 441-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները, եթե մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումն ապրանքների բացթողման մասին դիմումը ներկայացվել է լիազորված տնտեսական օպերատորի կողմից.

2) պահպանել է ապրանքները հայտագրված մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանները՝ բացառությամբ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պայմանների, ինչպես նաև այն դեպքերի, երբ այնպիսի պայմանը, ինչպիսին է արգելքների և սահմանափակումների պահպանումը «Միության մասին» պայմանագրին և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, կարող է հաստատվել ապրանքների բացթողումից հետո.

3) տրամադրվել է ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը սույն հոդվածի 1-ին կետում նշված ապրանքների առնչությամբ՝ բացառությամբ սույն հոդվածի 14-րդ կետում նշված ապրանքների, ինչպես նաև բացառությամբ այն դեպքի, երբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման տրամադրում չի պահանջվում՝ սույն Օրենսգրքի 441-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

14. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման տրամադրում չի պահանջվում հետևյալի առնչությամբ՝

1) տարերային աղետների, բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման համար անհրաժեշտ ապրանքների.

2) խաղաղության պահպանման կամ վարժանքների անցկացման միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ռազմական նշանակության արտադրանքի.

3) մարդասիրական ու տեխնիկական օգնության.

4) անդամ պետությունների արժույթի, արտարժույթի, այլ արժութային արժեքների, թանկարժեք մետաղների, այդ թվում՝ ոսկու, որոնք ներմուծվում են անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի և դրանց մասնաճյուղերի կողմից.

5) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող այլ ապրանքների:

15. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրվում է սույն Օրենսգրքի 75-րդ հոդվածին և 9-րդ գլխին համապատասխան:

16. Այն ապրանքների հայտարարագիրը, որոնց բացթողումն իրականացվել է սույն հոդվածին համապատասխան, պետք է ներկայացվի մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումն ապրանքների բացթողման մասին դիմում ներկայացրած անձի կողմից ոչ ուշ, քան ապրանքների բացթողման ամսվան հաջորդող ամսվա 10-րդ օրը, կամ սույն Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված ժամկետում:

Սույն կետում նշված ժամկետի հաշվարկումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 4-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները:

17. Մաքսային մարմինը սույն Օրենսգրքի 111-րդ հոդվածին համապատասխան ապրանքների հայտարարագրի և ապրանքները հայտագրված մաքսային ընթացակարգով ձևակերպելու այն պայմանների պահպանման ստուգման արդյունքներով, որոնք սույն հոդվածի 13-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան չեն պահպանվել ապրանքների բացթողման ժամանակ, ինչպես նաև սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված պայմանի պահպանման ստուգման արդյունքներով ձևակերպում և հայտարարատուին է ուղարկում էլեկտրոնային փաստաթուղթ կամ համապատասխան նշումներ է կատարում թղթային կրիչով ներկայացրած՝ ապրանքների հայտարարագրի և (կամ) մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման մասին տեղեկություններ պարունակող առևտրային, տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերի վրա:

18. Մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը մաքսային գործառնություններ կատարելու և ապրանքները բաց թողնելու դեպքում կիրառվում են մաքսասակագնային կարգավորման միջոցները, հարկման ոլորտում անդամ պետությունների օրենսդրական ակտերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը և փոխարժեքը, որոնք գործում են մաքսային մարմնի կողմից մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելու օրվա դրությամբ:

19. Ապրանքների բացթողումը մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն իրականացվում է սույն

Օրենսգրքի 119-րդ հոդվածով սահմանված ժամկետներում: Ընդ որում, մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման ժամկետները հաշվարկվում են՝ մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումի գրանցման օրվանից:

20. Մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելն ապրանքների բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների կատարման այլ առանձնահատկություններ կարող են սահմանվել Հանձնաժողովի կողմից և անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ՝ մինչև Հանձնաժողովի կողմից դրանց սահմանումը, կամ Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում:

21. Մինչև այն ապրանքների հայտարարագրի ներկայացումն ապրանքների բացթողման հետ կապված մաքսային գործառնությունները, որոնց հայտարարատուն լինելու է լիազորված տնտեսական օպերատորը, կատարվում են՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 441-րդ հոդվածը:

Հոդված 121. Մինչև մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգման ավարտն ապրանքների բացթողման առանձնահատկությունները

1. Ապրանքների բացթողումը մինչև մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների այն ստուգման ավարտը, որը չի կարող ավարտվել ապրանքների բացթողման ժամկետներում, իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ պայմանով, որ վճարվել են մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը՝ ապրանքների հայտարարագրում հաշվարկված չափով, և տրամադրվել է մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը՝ սույն Օրենսգրքի 65-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերին և 75-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերին համապատասխան սահմանված չափով՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով և 3-րդ կետով նախատեսված դեպքերի և սույն հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

2. Մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը չի տրամադրվում հետևյալ դեպքերում՝

1) ապրանքների հայտարարատուն լիազորված տնտեսական օպերատորն է.

2) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

3. Եթե մաքսային գործառնությունները հայտարարատուի անունից և նրա հանձնարարականով կատարում է մաքսային ներկայացուցիչը, և այդ մաքսային ներկայացուցիչը սույն Օրենսգրքի 405-րդ հոդվածին համապատասխան հայտարարատուի հետ միասին կրում է մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու համապարտ պարտավորություն, ապա մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը կարող է չտրամադրվել Հանձնաժողովի կողմից սահմանված պայմանները, իսկ մինչև Հանձնաժողովի կողմից դրանց սահմանումը՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պայմանները պահպանելու դեպքում:

4. Մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրվում է սույն Օրենսգրքի 75-րդ հոդվածին և 9-րդ գլխին համապատասխան:

5. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում, եթե մաքսային մարմինը հայտնաբերում է փաստեր, որոնք վկայում են ապրանքների նկատմամբ այն արգելքների և սահմանափակումների և (կամ) ներքին շուկայի պաշտպանության միջոցների կիրառման հնարավորության մասին, որոնք սահմանվել են ոչ որպես հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքեր և (կամ) «Միության մասին» պայմանագրի 50-րդ հոդվածին համապատասխան սահմանվել են որպես այլ տուրքեր, և եթե հայտարարատուն չի հաստատում դրանց պահպանումը:

Հոդված 122. Ապրանքների բացթողման առանձնահատկությունները մաքսային փորձաքննություն նշանակելու դեպքում

1. Ապրանքների բացթողումը մինչև ապրանքների բացթողումը նշանակված մաքսային փորձաքննության արդյունքներն ստանալը իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ պայմանով, որ վճարվել են մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը՝ ապրանքների հայտարարագրում հաշվարկված չափով, և տրամադրվել է մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը՝ սույն Օրենսգրքի 65-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերին և 75-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերին համապատասխան սահմանված չափով՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով և 3-րդ կետով նախատեսված դեպքերի և սույն հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

2. Մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը չի տրամադրվում հետևյալ դեպքերում՝

1) ապրանքների հայտարարատուն լիազորված տնտեսական օպերատորն է.

2) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

3. Եթե մաքսային գործառնությունները հայտարարատուի անունից և նրա հանձնարարականով կատարում է մաքսային ներկայացուցիչը, և այդ մաքսային ներկայացուցիչը սույն Օրենսգրքի 405-րդ հոդվածին համապատասխան հայտարարատուի հետ միասին կրում է մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու համապարտ պարտավորություն, ապա մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը կարող է չտրամադրվել Հանձնաժողովի կողմից սահմանված պայմանները, իսկ մինչև Հանձնաժողովի կողմից դրանց սահմանումը՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պայմանները պահպանելու դեպքում:

4. Մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրվում է սույն Օրենսգրքի 75-րդ հոդվածին և 9-րդ գլխին համապատասխան:

5. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում, եթե մաքսային մարմինը հայտնաբերում է փաստեր, որոնք վկայում են ապրանքների նկատմամբ այն արգելքների և սահմանափակումների և (կամ) ներքին շուկայի պաշտպանության միջոցների կիրառման հնարավորության մասին, որոնք սահմանվել են ոչ որպես հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր և (կամ) «Միության մասին» պայմանագրի 50-րդ հոդվածին համապատասխան սահմանվել են որպես այլ տուրքեր, և եթե հայտարարատուն չի հաստատում դրանց պահպանումը:

Հոդված 123. Ապրանքների բացթողումը վարչական իրավախախտման կամ հանցագործության բացահայտման դեպքում

Վարչական իրավախախտման կամ հանցագործության բացահայտման դեպքում ապրանքների բացթողումը մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի (վարչական վարույթի) ավարտը կամ քրեական գործով վարույթի ավարտն իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ պայմանով, որ այդ ապրանքները չեն առգրավվել, կամ դրանց վրա արգելանք չի դրվել՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 124. Մտավոր սեփականության օբյեկտներ պարունակող ապրանքների բացթողման ժամկետի կասեցումը և այդ ապրանքների բացթողման ժամկետի վերականգնումը

1. Եթե մաքսային մարմինն այնպիսի մաքսային գործառնություններ կատարելիս, որոնք կապված են այնպիսի մտավոր սեփականության օբյեկտներ պարունակող ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելու հետ, որոնք ընդգրկված են անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում կամ մտավոր սեփականության օբյեկտների ազգային մաքսային ռեեստրում, որը վարում է այն անդամ պետության մաքսային մարմինը, որի տարածքում ապրանքները ձևակերպվում են մաքսային ընթացակարգերով, հայտնաբերում է մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավատիրոջ իրավունքների խախտման նշաններ, ապա այդ ապրանքների բացթողումը կասեցվում է 10 (տասը) աշխատանքային օր ժամկետով:

2. Իրավատիրոջ կամ նրա շահերը կամ մի քանի իրավատերերի շահերը ներկայացնող անձի խնդրանքով այդ ժամկետը երկարաձգվում է մաքսային մարմնի կողմից, բայց ոչ ավելի, քան 10 (տասը) աշխատանքային օրով, եթե իրավատերը կամ նրա շահերը կամ մի քանի իրավատերերի շահերը ներկայացնող անձը դիմել է լիազորված մարմիններին իրավատիրոջ իրավունքների պաշտպանության ակնկալիքով՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

3. Ապրանքների բացթողման ժամկետի կասեցման և ապրանքների բացթողման ժամկետի կասեցման ժամկետի երկարաձգման մասին որոշումներն ընդունվում են մաքսային մարմնի ղեկավարի (պետի) կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ժամկետները հաշվարկվում են սույն Օրենսգրքի 4-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան:

5. Մաքսային մարմինը, մտավոր սեփականության օբյեկտներ պարունակող ապրանքների բացթողման ժամկետը կասեցնելու մասին որոշումն ընդունելու օրվան հաջորդող 1 աշխատանքային օրվանից ոչ ուշ, հայտարարատուին և իրավատիրոջը կամ նրա շահերը կամ մի քանի իրավատերերի շահերը ներկայացնող անձին տեղեկացնում է այդպիսի կասեցման, կասեցման պատճառների և ժամկետների մասին, ինչպես նաև հայտարարատուին հայտնում է իրավատիրոջ և (կամ) նրա շահերը կամ մի քանի իրավատերերի շահերը ներկայացնող անձի անվանումը (ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում)) և գտնվելու վայրը (հասցեն), իսկ իրավատիրոջը կամ նրա շահերը կամ մի քանի իրավատերերի շահերը ներկայացնող անձին՝ հայտարարատուի անվանումը (ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում)) և գտնվելու վայրը (հասցեն):

6. Մտավոր սեփականության օբյեկտներ պարունակող ապրանքների բացթողման ժամկետը կասեցնելու ժամկետը լրանալուն պես այդ ապրանքների բացթողման ժամկետը վերականգնվում է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մաքսային մարմին են ներկայացվում ապրանքների առգրավման, դրանց վրա արգելանք դնելու կամ բռնագրավելու մասին հավաստող փաստաթղթեր կամ այլ փաստաթղթեր՝ անդամ պետությունների օրենսդրությանը

համապատասխան:

7. Մաքսային մարմիններն իրավունք ունեն կասեցնելու մտավոր սեփականության այնպիսի օբյեկտներ պարունակող ապրանքների բացթողման ժամկետը, որոնք ընդգրկված չեն անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում կամ մտավոր սեփականության օբյեկտների ազգային մաքսային ռեեստրում, որը վարում է այն անդամ պետության մաքսային մարմինը, որի տարածքում ապրանքները ձևակերպվում են մաքսային ընթացակարգերով, առանց իրավատիրոջ դիմումի՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

8. Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ իրավատերը պատասխանատվություն է կրում սույն հոդվածին համապատասխան ապրանքների բացթողման ժամկետը կասեցնելու արդյունքում մտավոր սեփականության օբյեկտներ պարունակող ապրանքների հայտարարատուին, սեփականատիրոջը, ստացողին պատճառված գույքային վնասի (կորստի) համար, եթե իրավատիրոջ իրավունքների խախտում չի բացահայտվել:

9. Ապրանքների բացթողման ժամկետի կասեցման մասին որոշումը ենթակա է վերացման՝ մինչև ապրանքների բացթողման ժամկետի կասեցման ժամկետի լրանալը հետևյալ դեպքերում՝

1) իրավատիրոջ կամ նրա շահերը կամ մի քանի իրավատերերի շահերը ներկայացնող անձի կողմից մաքսային մարմին դիմում է ներկայացվել այդ որոշումը վերացնելու վերաբերյալ.

2) մտավոր սեփականության օբյեկտը հանվել է անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրից կամ մտավոր սեփականության օբյեկտների ազգային մաքսային ռեեստրից, որը վարում է այն անդամ պետության մաքսային մարմինը, որի տարածքում ապրանքները ձևակերպվում են մաքսային ընթացակարգերով.

3) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

10. Ապրանքների բացթողման ժամկետը կասեցնելու մասին որոշումը վերացվում է մաքսային մարմնի ղեկավարի (պետի) կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

11. Ապրանքների բացթողման ժամկետը կասեցնելու մասին որոշումը վերացնելուց հետո այդ ապրանքների բացթողման ժամկետը վերականգնվում է:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել դեպքեր, երբ այդպիսի ապրանքների բացթողման ժամկետը չի վերականգնվում:

12. Մաքսային մարմինը հայտարարատուին, իրավատիրոջը կամ նրա շահերը կամ մի քանի իրավատերերի շահերը ներկայացնող անձին տրամադրում է տեղեկատվություն այն ապրանքների վերաբերյալ, որոնց բացթողման ժամկետը կասեցնելու մասին ընդունվել է որոշում՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

13. Հայտարարատուի, իրավատիրոջ կամ նրա շահերը կամ մի քանի իրավատերերի շահերը ներկայացնող անձի կողմից ստացված տեղեկատվությունը, սույն հոդվածին համապատասխան, համարվում է կոնֆիդենցիալ և չպետք է հրապարակվի նրանց կողմից, չպետք է փոխանցվի երրորդ անձանց, ինչպես նաև անդամ պետությունների պետական մարմիններին՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

14. Մաքսային մարմնի թույլտվությամբ հայտարարատուն, իրավատերը կամ նրա շահերը կամ մի քանի իրավատերերի շահերը ներկայացնող անձն իրավունք ունեն փորձանմուշներ և (կամ) նմուշներ վերցնելու այն ապրանքներից, որոնց բացթողման ժամկետը կասեցնելու մասին ընդունվել է որոշում, այդ թվում՝ դրանց ուսումնասիրությունն անցկացնելու համար, ինչպես նաև այդ ապրանքները տեսազննելու, լուսանկարելու կամ որևէ այլ կերպ արձանագրելու:

15. Ապրանքների բացթողման ժամկետի կասեցման մասին և ապրանքների բացթողման ժամկետի կասեցման ժամկետի երկարաձգման մասին որոշումները ձևակերպելու, հայտարարատուին, իրավատիրոջը կամ նրա շահերը կամ մի քանի իրավատերերի շահերը ներկայացնող անձին այդպիսի որոշումներ ընդունելու մասին տեղեկացնելու կարգը, ինչպես նաև ապրանքների բացթողման ժամկետի կասեցման մասին որոշումը վերացնելը ձևակերպելու կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Հոդված 125. Ապրանքների բացթողման մերժումը և ապրանքների բացթողման մերժման հետ կապված մաքսային գործառնությունների կատարման կարգը

1. Մաքսային մարմինը մերժում է ապրանքների բացթողումը հետևյալ հիմքերով՝

1) այն պայմանների չկատարումը, որոնց դեպքում մաքսային մարմինն իրականացնում է ապրանքների բացթողում, այդ թվում՝ սույն Օրենսգրքի 120-123-րդ հոդվածներով նախատեսված պայմանների, ինչպես նաև անձնական օգտագործման ապրանքների, միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների և պաշարների մասով պայմանների չկատարումը.

2) մաքսային մարմնի՝ մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները փոփոխելու (լրացնելու) վերաբերյալ պահանջների չկատարումը՝ սույն Օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում.

3) նախնական մաքսային հայտարարագրման ժամանակ սույն Օրենսգրքի 114-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված հանգամանքների ի հայտ գալը.

4) պարբերական մաքսային հայտարարագրման ժամանակ սույն Օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով

նախատեսված՝ այդպիսի մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները չպահպանելը և (կամ) հայտարարատուի մոտ մաքսային վճարները, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը, տոկոսները և (կամ) տույժերը վճարելու՝ սահմանված ժամկետում չկատարված պարտավորության առկայությունը.

5) սույն Օրենսգրքի 119-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ կետերով նախատեսված՝ ապրանքների բացթողման ժամկետներում մաքսային մարմնի պահանջով ապրանքը չներկայացնելը.

6) սույն Օրենսգրքի 124-րդ հոդվածի 6-րդ և 11-րդ կետերով նախատեսված դեպքերում ապրանքների բացթողումը չվերականգնելը.

7) սույն Օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ կետերով նախատեսված պայմանները չկատարելը.

8) ուղևորային մաքսային հայտարարագրում հայտագրված ապրանքները սույն Օրենսգրքի 256-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան անձնական օգտագործման ապրանքներին չդասելը.

9) ապրանքների մաքսային հսկողություն իրականացնելու ժամանակ մաքսային մարմինների կողմից մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի և (կամ) անդամ պետությունների օրենսդրության խախտումների բացահայտումը՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

բացահայտված խախտումները, որոնք հիմք չեն վարչական կամ քրեական գործ հարուցելու համար, վերացվել են.

բացահայտված խախտումները վերացվել են, հայտարարագրված ապրանքները չեն առգրավվել ու դրանց վրա արգելանք չի դրվել՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

2. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է նախատեսված լինել, որ մաքսային մարմինը մերժում է ապրանքների բացթողումը, եթե հայտարարատուի նկատմամբ հարուցվել է սնանկության մասին գործ:

3. Ապրանքների բացթողումը մերժելը ձևակերպվում է՝ օգտագործելով մաքսային մարմնի տեղեկատվական համակարգը՝ էլեկտրոնային փաստաթուղթ կազմելու կամ թղթային կրիչով մաքսային հայտարարագրի կամ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին՝ թղթային կրիչով ներկայացված դիմումի վրա համապատասխան նշումներ կատարելու միջոցով: Ապրանքների բացթողումը մերժելը ձևակերպելիս նշվում են բոլոր պատճառները, որոնք հիմք են հանդիսացել այդ մերժման համար, ինչպես նաև, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ, դրանք վերացնելու վերաբերյալ առաջարկություններ:

4. Ապրանքների բացթողումը մերժելու հետ կապված մաքսային գործառնությունները կատարվում են մաքսային մարմնի կողմից մինչև ապրանքների բացթողման ժամկետի լրանալը, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով, իսկ Հանձնաժողովի կողմից չկարգավորված մասում՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան սահմանվող կարգով:

Հոդված 126. Պայմանականորեն բաց թողնված ապրանքները

1. Պայմանականորեն բաց թողնված են համարվում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող այն ապրանքները, որոնց դեպքում՝

1) կիրառվել են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ, որոնք զուգակցված են այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով.

2) արգելքների և սահմանափակումների պահպանումը «Միության մասին» պայմանագրին և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան կարող է հաստատվել ապրանքների բացթողումից հետ.

3) Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին կամ Միությանն անդամակցելու վերաբերյալ միջազգային պայմանագրերին (պետության՝ «Միության մասին» պայմանագրին միանալու վերաբերյալ միջազգային պայմանագրերին) (այսուհետ՝ Միությանն անդամակցելու վերաբերյալ միջազգային պայմանագրեր) համապատասխան կիրառվել են Եվրասիական տնտեսական Միության միասնական մաքսային սակագնով սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերից ավելի ցածր ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր:

2. Սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների առնչությամբ պետք է պահպանվեն ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների տրամադրման նպատակներն ու պայմանները, ինչպես նաև այդպիսի արտոնությունների կիրառման հետ կապված այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման մասով սահմանափակումները:

Թույլատրվում է օգտագործել սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված՝ տրանսպորտային միջոցներ հանդիսացող՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքները՝ որպես միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ՝ սույն Օրենսգրքի 38-րդ գլխին համապատասխան, պայմանով, որ այդպիսի օգտագործումը չի խախտում ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների տրամադրման նպատակներն ու պայմանները, ինչպես նաև չի հանգեցնում այդպիսի արտոնությունների կիրառման հետ կապված այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման մասով սահմանված սահմանափակումները չպահպանելուն:

3. Արգելված է սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների փոխանցումը երրորդ անձանց, այդ թվում՝ դրանց վաճառքի կամ այլ եղանակով օտարման միջոցով, իսկ այն դեպքերում, երբ նշված ապրանքների՝ Միության մաքսային տարածք ներմուծման մասով սահմանափակումները սահմանված են՝ կապված այդ ապրանքների անվտանգության ստուգման հետ, ապա արգելված է նաև ցանկացած ձևով

դրանց օգտագործումը (շահագործումը, սպառումը):

4. Սույն հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքները կարող են օգտագործվել միայն այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմինն իրականացրել է դրանց բացթողումը, եթե Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ:

5. Սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ապրանքները մինչև Միության ապրանքների կարգավիճակ ձեռք բերելը մնում են պայմանականորեն բաց թողնված՝ սույն հոդվածին համապատասխան դրանք՝

1) սույն Օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս.

2) սույն Օրենսգրքի 184-րդ հոդվածին համապատասխան «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու համար կամ սույն Օրենսգրքի 277-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում «բացթողում ներքին սպառման համար» ընթացակարգով ձևակերպելիս:

6. Պայմանականորեն բաց թողնված ապրանքներն ունեն օտարերկրյա ապրանքների կարգավիճակ և գտնվում են մաքսային հսկողության ներքո մինչև Միության ապրանքների կարգավիճակ ձեռք բերելը:

7. Պայմանականորեն բաց թողնված ապրանքները ձեռք են բերում Միության ապրանքների կարգավիճակ այն բանից հետո, երբ՝

1) դադարել է սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը, եթե անդամ պետությունների օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ.

2) հաստատվել է սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված ապրանքների մասով արգելքների և սահմանափակումների պահպանումը.

3) կատարվել է ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը, և (կամ) դրանք գանձվել են Եվրասիական տնտեսական Միության միասնական մաքսային սակագնով սահմանված ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերով հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի գումարների և ապրանքների բացթողման ժամանակ վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարների տարբերության չափով կամ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերին համապատասխան սահմանված այլ չափով, եթե ներմուծման մաքսատուրքերի վճարումն այդ չափով նախատեսված է Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերին համապատասխան, կամ դադարել է ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը՝ պայմանավորված սույն Օրենսգրքի 136-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված այլ հանգամանքների ի հայտ գալով, սույն հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված ապրանքների առնչությամբ:

8. Միության ապրանքների կարգավիճակ ձեռք բերելու համար բաց թողնված ապրանքները ենթակա չեն «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով կրկնակի ձևակերպման:

Սույն հոդվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում ապրանքների բացթողումից հետո արգելքների և սահմանափակումների պահպանումը հաստատելու կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

9. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել ապրանքները պայմանականորեն բաց թողնված ապրանքների շարքին դասելու այլ դեպքեր և կարգ:

ԲԱԺԻՆ IV

ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Գլուխ 19

Ընդհանուր դրույթներ մաքսային ընթացակարգերի վերաբերյալ

Հոդված 127. Մաքսային ընթացակարգերի կիրառումը

1. Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և այլ ապրանքներ սույն Օրենսգրքով սահմանված դեպքերում Միության մաքսային տարածքում գտնվելու և օգտագործվելու, Միության մաքսային տարածքից արտահանվելու և (կամ) Միության մաքսային տարածքից դուրս գտնվելու և օգտագործվելու համար ենթակա են մաքսային ընթացակարգերով ձևակերպման, եթե սույն Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

2. Կախված ապրանքները Միության մաքսային տարածքում գտնվելու և օգտագործվելու, Միության մաքսային տարածքից արտահանվելու և (կամ) Միության մաքսային տարածքից դուրս գտնվելու և օգտագործվելու նպատակներից՝ ապրանքների նկատմամբ կիրառվում են հետևյալ մաքսային ընթացակարգերը՝

1) ներքին սպառման համար բացթողում.

2) արտահանում.

3) մաքսային տարանցում.
4) մաքսային պահեստ.
5) մաքսային տարածքում վերամշակում.
6) մաքսային տարածքից դուրս վերամշակում.
7) ներքին սպառման համար վերամշակում.
8) ազատ մաքսային գոտի.
9) ազատ պահեստ.
10) ժամանակավոր ներմուծում (թույլտվություն).
11) ժամանակավոր արտահանում.
12) վերաներմուծում.
13) վերաարտահանում.
14) անմաքս առևտուր.
15) ոչնչացում.
16) հրաժարում՝ հօգուտ պետության.
17) հատուկ մաքսային ընթացակարգ:

3. Մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները կարող են ձևակերպվել այլ մաքսային ընթացակարգերով կամ նույնանման մաքսային ընթացակարգով՝

1) այն մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու համար, որով ձևակերպվել են ապրանքները.
2) այն մաքսային ընթացակարգի գործողությունը կասեցնելու համար, որով ձևակերպվել են ապրանքները.
3) սույն Օրենսգրքին համապատասխան՝ ապրանքների՝ Միության մաքսային տարածքով փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մյուս մաս փոխադրման համար:

4. Մաքսային ընթացակարգերի բովանդակությունը և մաքսային ընթացակարգերի կիրառման կարգը կարգավորող դրույթները, այդ թվում՝ ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելու պայմանները, այդ մաքսային ընթացակարգերով ապրանքները ձևակերպելուց հետո դրանք մաքսային ընթացակարգերին համապատասխան օգտագործելու պայմանները և կարգը, մաքսային ընթացակարգերի գործողությունն ավարտելու, դադարեցնելու, կասեցնելու և վերականգնելու կարգը, ինչպես նաև մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացման և դադարման հանգամանքները, մաքսային ընթացակարգերով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների կամ մաքսային ընթացակարգեր կիրառելու շրջանակներում ստացված (գոյացած), պատրաստված (ստացված) ապրանքների մասով դրանց հաշվարկման և վճարման ժամկետները և (կամ) առանձնահատկությունները սահմանվում են սույն բաժնի համապատասխան գլուխներով, իսկ սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ Հանձնաժողովի կողմից և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

5. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ, ի լրումն ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելու պայմանների՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի և «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի, կարող է սահմանվել ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելու այնպիսի պայման, ինչպիսին է մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը:

Հոդված 128. Ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելը

1. Սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածում նշված անձինք իրավունք ունեն ընտրելու սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգը ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ այն հայտագրելու, կամ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքները բացթողման համար հայտագրելու, կամ ապրանքները նավահանգստային ԱՏԳ-ի կամ լոգիստիկ ԱՏԳ-ի տարածք ներմուծելու միջոցով:

2. Ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելն սկսվում է մաքսային հայտարարագիրը կամ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմին ներկայացնելու պահից, եթե սույն Օրենսգրքով այլ բան սահմանված չէ, և ավարտվում է ապրանքների բացթողմամբ՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքի:

3. Ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելու օր է համարվում ապրանքների բացթողման օրը՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքի:

4. Ապրանքները հայտագրված մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանների կատարումը հաստատելու պարտականությունը դրվում է հայտարարատուի վրա:

5. Սանիտարակարանտինային, անասնաբուժական, կարանտինային բուսասանիտարական և պետական հսկողության (վերահսկման) այլ տեսակների ենթակա ապրանքները ձևակերպվում են մաքսային ընթացակարգով միայն պետական հսկողության (վերահսկման) համապատասխան տեսակի իրականացումից հետո:

6. Եթե ոչ սակագնային կարգավորման միջոց սահմանելիս սահմանվում են մաքսային ընթացակարգեր, որոնցով չի

թույլատրվում ձևակերպել ապրանքներ, որոնց առնչությամբ սահմանվում է այդպիսի միջոց, ապա նշված ապրանքները ենթակա չեն այդպիսի մաքսային ընթացակարգերով ձևակերպման՝ անկախ սույն բաժնի դրույթներից:

Հոդված 129. Մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը, դադարեցնելը, կասեցնելը և վերականգնելը

1. Մաքսային ընթացակարգերի գործողությունը պետք է ավարտվի սույն Օրենսգրքով, իսկ եթե դա նախատեսված է սույն Օրենսգրքով, ապա Հանձնաժողովի կողմից կամ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, կարգով և ժամկետներում:

2. Մաքսային ընթացակարգի գործողությունը համարվում է ավարտված մինչև մաքսային մարմնի կողմից սահմանված՝ մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալը, եթե մաքսային հայտարարագիրը, որը ներկայացվել է ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար՝ այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու համար, գրանցված է մաքսային մարմնի կողմից մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու համար նախատեսված ժամկետում՝ բացառությամբ այն դեպքի, երբ մաքսային մարմինը մերժել է ապրանքների բացթողումը հայտագրված մաքսային ընթացակարգին համապատասխան, կամ մաքսային հայտարարագիրը հետ է կանչվել սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան:

3. Մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատու հանդիսացող անձի լուծարման դեպքում անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել սույն Օրենսգրքով նախատեսված ժամկետից տարբերվող ժամկետ, որը լրանալուց առաջ մաքսային ընթացակարգի գործողությունը պետք է ավարտվի, ինչպես նաև կարող են սահմանվել անձինք, որոնց վերապահվում է մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու պարտականությունը:

4. Մաքսային ընթացակարգերի գործողությունը դադարում է սույն Օրենսգրքով, իսկ եթե դա նախատեսված է սույն Օրենսգրքով՝ Հանձնաժողովի կողմից կամ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, կարգով և ժամկետներում:

5. Սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում այն մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները, որի գործողությունը դադարել է, ինչպես նաև այդ մաքսային ընթացակարգի կիրառման շրջանակներում ստացված (գոյացած), պատրաստված (ստացված) ապրանքները արգելապահվում են մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

6. Այն մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները, որի գործողությունը դադարել է, ինչպես նաև այդ մաքսային ընթացակարգի կիրառման շրջանակներում ստացված (գոյացած), պատրաստված (ստացված) ապրանքները, որոնք արգելանքի չեն վերցվել (չեն արգելապահվել) մաքսային մարմինների կողմից՝ սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան, ենթակա են հանձնման ժամանակավոր պահպանման՝ սույն Օրենսգրքի 16-րդ գլխին համապատասխան:

7. Միության մաքսային տարածքում գտնվող օտարերկրյա ապրանքները, որոնց նկատմամբ մաքսային ընթացակարգի գործողությունը դադարել է, Միության մաքսային տարածքում հետագայում գտնվելու և օգտագործվելու համար կամ Միության մաքսային տարածքից արտահանվելու համար ենթակա են ձևակերպման այն մաքսային ընթացակարգերով, որոնք կիրառելի են օտարերկրյա ապրանքների մասով՝ բացառությամբ սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Ապրանքները, որոնք ստացվել (գոյացել), պատրաստվել (ստացվել) են այն մաքսային ընթացակարգերի կիրառման շրջանակներում, որոնց գործողությունը դադարել է, Միության մաքսային տարածքում հետագայում գտնվելու և օգտագործվելու, Միության մաքսային տարածքից արտահանվելու կամ այդ տարածք ներմուծվելու համար ենթակա են ձևակերպման այդ ապրանքների մասով կիրառելի մաքսային ընթացակարգերով՝ կախված կարգավիճակից, որը դրանք ձեռք են բերել մաքսային ընթացակարգերի գործողության ընթացքում՝ բացառությամբ սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Միության մաքսային տարածքից դուրս գտնվող ապրանքները, որոնց նկատմամբ մաքսային ընթացակարգի գործողությունը դադարել է, հետագայում Միության մաքսային տարածքից դուրս գտնվելու համար ենթակա են ձևակերպման Միության ապրանքների մասով կիրառելի մաքսային ընթացակարգերով, իսկ Միության մաքսային տարածք ներմուծվելու համար՝ օտարերկրյա ապրանքների մասով կիրառելի մաքսային ընթացակարգերով:

8. Սույն հոդվածի 7-րդ կետին համապատասխան ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս մաքսային ընթացակարգերի գործողությունը դադարելուց հետո այդպիսի ապրանքների նկատմամբ կիրառվում են սույն Օրենսգրքի դրույթները՝ առանց հաշվի առնելու մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման և վճարման՝ սույն Օրենսգրքով նախատեսված առանձնահատկությունները, որոնք կիրառվում են համապատասխան մաքսային ընթացակարգերի գործողությունն ավարտելու համար ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 226-րդ հոդվածով նախատեսված առանձնահատկությունների:

9. Մաքսային ընթացակարգի գործողությունը կարող է կասեցվել մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները կամ այդպիսի ապրանքների վերամշակումից ստացված արտադրանքը այլ մաքսային ընթացակարգով

ձևակերպելու միջոցով, ինչպես նաև սույն Օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքում:

Մաքսային ընթացակարգերը, որոնք կիրառվում են այլ մաքսային ընթացակարգերի գործողության կասեցման համար, ինչպես նաև այն դեպքերը, երբ մաքսային ընթացակարգի գործողությունը կարող է կասեցվել, սահմանվում են սույն Օրենսգրքով, իսկ եթե դա նախատեսված է սույն Օրենսգրքով՝ Հանձնաժողովի կողմից:

Սահմանված դեպքերում մաքսային ընթացակարգերի գործողության կասեցման և վերականգնման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Հոդված 130. Մաքսային ընթացակարգերի գործողության ժամկետները երկարաձգելը

1. Մաքսային մարմնի կողմից սահմանված՝ մաքսային ընթացակարգերի գործողության ժամկետը երկարաձգվում է մաքսային մարմնի կողմից մինչև դրա լրանալը, իսկ սույն Օրենսգրքով կամ սույն Օրենսգրքի 165-րդ հոդվածի 3-րդ կետին, 178-րդ հոդվածի 3-րդ կետին և 190-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ դրա լրանալուց հետո սույն Օրենսգրքով նախատեսված ժամկետներում կամ Հանձնաժողովի կողմից որոշվող կամ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող ժամկետներում՝ սույն Օրենսգրքին համապատասխան:

2. Մաքսային մարմնի կողմից սահմանված՝ մաքսային ընթացակարգերի գործողության ժամկետի երկարաձգման կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

Հոդված 131. Ոչ որպես հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր և (կամ) «Միության մասին» պայմանագրի 50-րդ հոդվածին համապատասխան որպես այլ տուրքեր սահմանված՝ ներքին շուկայի պաշտպանության միջոցների պահպանումը՝ ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելիս

Ոչ որպես հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր և (կամ) «Միության մասին» պայմանագրի 50-րդ հոդվածին համապատասխան որպես այլ տուրքեր սահմանված՝ ներքին շուկայի պաշտպանության միջոցների պահպանումը հաստատվում է ապրանքներն այն մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս, որոնցով ձևակերպման պայմաններով նախատեսվում է այդ միջոցների պահպանումը, եթե սույն Օրենսգրքով, «Միության մասին» պայմանագրով կամ Հանձնաժողովի ակտերով, որոնցով սահմանվում են այդ միջոցները, այլ բան սահմանված չէ:

Հոդված 132. Ապրանքների օգտագործման պայմանների պահպանումը՝ հայտագրված մաքսային ընթացակարգին համապատասխան

1. Ապրանքները հայտագրված մաքսային ընթացակարգին համապատասխան օգտագործելու այն պայմանները պահպանելու պարտավորությունը, որոնք ենթակա են պահպանման ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելուց հետո, կրում է հայտարարատուն, ինչպես նաև այլ անձինք՝ սույն Օրենսգրքին համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված անձինք պատասխանատվություն են կրում հայտագրված մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների օգտագործման պայմանները խախտելու համար՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 133. Մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներն առգրավելու (դրանց վրա արգելանք դնելու), բռնագրավելու կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելու հետևանքները

1. Մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների առգրավման կամ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան այդպիսի ապրանքների վրա արգելանք դնելու դեպքում մաքսային ընթացակարգի գործողությունն այդ ապրանքների նկատմամբ կասեցվում է:

2. Եթե որոշում է ընդունվում ապրանքների առգրավումը կամ դրանց վրա արգելանք դնելը չեղյալ ճանաչելու մասին, մաքսային ընթացակարգի գործողությունը վերականգնվում է այդ որոշումն օրինական ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից կամ այդ որոշման մեջ նշված օրվանից:

3. Մաքսային ընթացակարգի գործողության վերականգնման դեպքում մաքսային ընթացակարգի գործողության կասեցման ժամանակահատվածի համար սահմանվող տոկոսները, որոնց հաշվեգրումն ու վճարումը նախատեսված են սույն բաժնին համապատասխան, չեն հաշվեգրվում և չեն վճարվում:

4. Մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները դատարանի որոշմամբ բռնագրավելու կամ անդամ պետության սեփականության (եկամուտ) դարձնելու դեպքում մաքսային ընթացակարգի գործողությունն այդ

ապրանքների նկատմամբ դադարում է:

5. Եթե անձը, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, վարչական կամ քրեական պատասխանատվության է ենթարկվում մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների օգտագործման պայմանները չկատարելու համար, և այդ չկատարման հետևանքով անհնար է տվյալ մաքսային ընթացակարգի հետագա կիրառումը, ապա մաքսային ընթացակարգի գործողությունը պետք է ավարտվի անձին պատասխանատվության ենթարկելու մասին համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 15 օրացուցային օրվա ընթացքում:

Սույն կետի առաջին պարբերությունում նշված ժամկետում մաքսային ընթացակարգի գործողությունը չավարտելու դեպքում մաքսային ընթացակարգի գործողությունը դադարում է, իսկ ապրանքներն արգելապահվում են մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

Գլուխ 20

«Ներքին սպառման համար բացթողում»

մաքսային ընթացակարգը

Հոդված 134. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգի բովանդակությունը և կիրառումը

1. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգն օտարերկրյա ապրանքների առնչությամբ կիրառվող այն մաքսային ընթացակարգն է, որին համապատասխան ապրանքները Միության մաքսային տարածքում գտնվում և օգտագործվում են առանց օտարերկրյա ապրանքների առնչությամբ՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով և ակտերով նախատեսված՝ տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների, եթե այլ բան սահմանված չէ սույն Օրենսգրքով:

2. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձեռք են բերում Միության ապրանքների կարգավիճակ՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների:

3. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգի կիրառումը թույլատրվում է հետևյալ ապրանքների նկատմամբ՝

1) այն ապրանքների վերամշակման արդյունքներ հանդիսացող ապրանքների, որոնց նկատմամբ կիրառվել է «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգը և որոնք Միության մաքսային տարածքից արտահանվել են «վերաարտահանում» մաքսային ընթացակարգին համապատասխան.

2) ժամանակավորապես արտահանված՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների, որոնք, սույն Օրենսգրքի 277-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան, ձևակերպված են «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով՝ սույն Օրենսգրքի 184-րդ հոդվածին համապատասխան՝ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու նպատակով.

3) ժամանակավորապես արտահանված՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների՝ սույն Օրենսգրքի 277-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքում:

Հոդված 135. Ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանները

1. Ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

1) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումը՝ սույն Օրենսգրքին համապատասխան.

2) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարումը՝ սույն Օրենսգրքին համապատասխան.

3) արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան.

4) «Միության մասին» պայմանագրի 50-րդ հոդվածին համապատասխան սահմանված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման և (կամ) այլ տուրքերից տարբեր՝ ներքին շուկայի պաշտպանության այլ միջոցներ պահպանելը:

2. Սույն Օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

1) ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելը՝ Միության մաքսային տարածքից դրանց փաստացի արտահանման օրվան հաջորդող օրվանից 3 տարվա ընթացքում.

2) ապրանքներն անփոփոխ վիճակում պահպանելը՝ բացառությամբ բնական մաշվածության հետևանքով առաջացած փոփոխությունների, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման

բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով առաջացած փոփոխությունների.

3) մաքսային մարմինների կողմից ապրանքների նույնականացման հնարավորությունը.

4) Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանման հանգամանքների մասին մաքսային մարմին այնպիսի տեղեկություններ ներկայացնելը, որոնք հաստատվում են մաքսային և (կամ) այլ փաստաթղթեր կամ այդ փաստաթղթերի մասին տեղեկություններ ներկայացնելով.

5) սույն հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված պայմանների պահպանումը:

Հոդված 136. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացումն ու դադարումը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նկատմամբ հայտարարատուի՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու պահից:

2. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող այն ապրանքների համար, որոնք ներմուծվում են մեկ առաքողի կողմից մեկ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթով մեկ ստացողի հասցեով, և որոնց ընդհանուր մաքսային արժեքը չի գերազանցում 200 եվրոյին համարժեք գումարը, իսկ Հանձնաժողովի կողմից այդպիսի գումարի այլ չափ որոշված լինելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից սահմանված գումարի չափը՝ մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագիրը գրանցելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորություն չի առաջանում: Ընդ որում, սույն կետի նպատակներով մաքսային արժեքում չեն ներառվում Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների՝ ժամանման վայր փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ծախսերը, այդպիսի ապրանքների բեռնման, բեռնաթափման կամ փոխաբեռնման ծախսերը և ապահովագրական ծախսերը՝ կապված այդ ապրանքների այդպիսի փոխադրման (տրանսպորտային փոխադրման), բեռնման, բեռնաթափման կամ փոխաբեռնման հետ:

Սույն Օրենսգրքի 199-րդ և 200-րդ հոդվածներում նշված և «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նկատմամբ հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորություն չի առաջանում:

Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու գումարի այլ՝ սույն կետի առաջին պարբերությամբ չնախատեսված չափ, որի սահմաններում մեկ առաքողի կողմից մեկ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթով մեկ ստացողի հասցեով ներմուծվող՝ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորություն չի առաջանում:

3. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նկատմամբ հայտարարատուի՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողում՝ այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումների հետ չզուգակցված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառմամբ.

2) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) դրանց բռնագանձում՝ սույն հոդվածի 14-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով, եթե սույն հոդվածի 5-րդ կետով այլ բան նախատեսված չէ.

3) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի արդյունքում այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան այդ օտարերկրյա ապրանքների նկատմամբ վրա է հասել ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը.

4) «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը մերժելը՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորության առնչությամբ.

5) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան մաքսային հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ ապրանքների բացթողումը չեղարկելը՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորության առնչությամբ.

6) անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ապրանքները բռնագրավելը կամ այդ անդամ

պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը.

7) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

8) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

4. Ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով զուգակցված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառմամբ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված այդ ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ հայտարարատուի պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողման օրվանից 5 տարին լրանալը, եթե չի սահմանվել ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումների գործողության այլ ժամկետ՝ պայմանով, որ այդ ժամանակահատվածում վրա չի հասել ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ սույն հոդվածի 11-րդ կետով սահմանված ժամկետը.

2) ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումների գործողության՝ սահմանված այլ ժամկետի լրանալը՝ պայմանով, որ այդ ժամանակահատվածում վրա չի հասել ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ սույն հոդվածի 11-րդ կետով սահմանված ժամկետը.

3) մինչև «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողման օրվանից 5 տարին լրանալը կամ նշված ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների հետ կապված՝ գործողության սահմանված այլ ժամկետի լրանալը՝ ապրանքները «ոչնչացում» մաքսային ընթացակարգով ձևակերպելը՝ պայմանով, որ այդ ժամանակահատվածում վրա չի հասել ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ սույն հոդվածի 11-րդ կետով սահմանված ժամկետը.

4) ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարումը և (կամ) դրանց բռնագանձումը՝ սույն հոդվածի 14-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով՝ սույն հոդվածի 11-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում.

5) մինչև «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողման օրվանից 5 տարին լրանալը կամ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումների գործողության սահմանված այլ ժամկետի լրանալը մաքսային մարմնի կողմից՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան, վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստի ճանաչումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մինչև այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան այդ օտարերկրյա ապրանքների մասով վրա է հասել սույն հոդվածի 11-րդ կետով սահմանված մաքսատուրքերի, հարկերի վճարման ժամկետը.

6) մինչև «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների բացթողման օրվանից 5 տարին լրանալը կամ նշված ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումների՝ գործողության սահմանված այլ ժամկետի լրանալը «հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով ապրանքները ձևակերպելը.

7) ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելը՝ պայմանով, որ նախքան այդպիսի մաքսային ընթացակարգով ձևակերպումը վրա չի հասել ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ սույն հոդվածի 11-րդ կետով սահմանված ժամկետը.

8) անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ ապրանքները բռնագրավելը կամ այդ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը:

5. Ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարումը և (կամ) սույն հոդվածի 14-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձումը «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների առնչությամբ՝ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով սահմանվածից ավելի ցածր դրույքաչափերով ներմուծման մաքսատուրքերի վճարմամբ չի դադարեցնում ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով սահմանված դրույքաչափերով հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի գումարների և ապրանքների բացթողման ժամանակ վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարների միջև եղած տարբերության չափով, կամ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերին համապատասխան սահմանված այլ չափով:

6. Սույն հոդվածի 5-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի վճարման

պարտավորությունը այս կետում նշված չափով դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարումը և (կամ) սույն հոդվածի 14-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձումը.

2) «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան այն ապրանքների բացթողման օրվանից 5 տարին լրանալը, որոնք ներառվել են Հանձնաժողովի կողմից՝ սույն հոդվածի 7-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան սահմանված ցանկում, եթե Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերով կամ Հանձնաժողովի կողմից՝ սույն հոդվածի 7-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան չի սահմանվել այլ ժամկետ, որի ընթացքում ապրանքները պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը, պայմանով, որ այդ ժամանակահատվածում վրա չի հասել ներմուծման մաքսատուրքերի վճարման՝ սույն հոդվածի 13-րդ կետով սահմանված ժամկետը.

3) Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերով սահմանված այլ ժամկետի լրանալը, որի ընթացքում ապրանքները պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը՝ պայմանով, որ այդ ժամանակահատվածում վրա չի հասել սույն հոդվածի 13-րդ կետով սահմանված ներմուծման մաքսատուրքերի վճարման ժամկետը.

4) Հանձնաժողովի կողմից՝ սույն հոդվածի 7-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան սահմանված ժամկետի լրանալը՝ այն ապրանքների առնչությամբ, որոնք ներառվել են սույն հոդվածի 7-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանված ցանկում (ցանկերում)՝ պայմանով, որ այդ ժամանակահատվածում վրա չի հասել սույն հոդվածի 13-րդ կետով սահմանված ներմուծման մաքսատուրքերի վճարման ժամկետը.

5) «հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպումը.

6) անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից՝ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի արդյունքում այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը ճանաչելը՝ նախքան սույն կետի 2-4-րդ ենթակետերով նախատեսված հանգամանքների ի հայտ գալը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան այդ օտարերկրյա ապրանքների առնչությամբ վրա է հասել սույն հոդվածի 13-րդ կետով սահմանված մաքսատուրքերը վճարելու ժամկետը.

7) «ոչնչացում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպումը՝ պայմանով, որ մինչև «ոչնչացում» մաքսային ընթացակարգով ձևակերպելը վրա չի հասել ներմուծման մաքսատուրքերի վճարման՝ սույն հոդվածի 13-րդ կետով սահմանված ժամկետը.

8) «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպումը՝ պայմանով, որ մինչև այդպիսի մաքսային ընթացակարգով ձևակերպումը վրա չի հասել ներմուծման մաքսատուրքերի վճարման՝ սույն հոդվածի 13-րդ կետով սահմանված ժամկետը.

9) անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ ապրանքները բռնագրավելը կամ այդ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը:

7. Այն ապրանքներից, որոնց նկատմամբ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերին համապատասխան նախատեսված է ներմուծման մաքսատուրքերի՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով սահմանվածից ավելի ցածր դրույքաչափերի կիրառում, Հանձնաժողովը որոշում է այն ապրանքների ցանկը (ցանկերը), որոնք «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան ձեռք են բերում Միության ապրանքների կարգավիճակ՝ ապրանքների բացթողման օրվանից 5 տարին լրանալուց հետո:

Հանձնաժողովը իրավունք ունի նշված ապրանքների առանձին կատեգորիաների համար որոշելու այն ապրանքների ցանկը (ցանկերը), որոնք ձեռք են բերում Միության ապրանքների կարգավիճակ սույն կետի առաջին պարբերության մեջ նշվածից այլ, առավել երկար ժամկետը լրանալուն պես, ինչպես նաև սահմանելու այդ ժամկետը:

8. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների նկատմամբ հայտարարատուի՝ հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման և (կամ) սույն հոդվածի 16-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձման.

2) վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ անդամ պետությունների մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան վրա է հասել այդ օտարերկրյա ապրանքների համար հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքեր վճարելու ժամկետը.

3) ապրանքների բացթողման մերժումը՝ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքեր,

հարկեր, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորության առնչությամբ.

4) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան մաքսային հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղարկելը՝ մաքսային հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

5) անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ապրանքները բռնագրավելը կամ այդ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը.

6) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

7) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

9. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման (ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման)՝ մինչև «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը, եթե ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման այլ ժամկետ սույն Օրենսգրքին համապատասխան սահմանված չէ:

10. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ՝ այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով զուգակցված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն հոդվածի 11-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

11. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում սույն հոդվածի 10-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված՝ ապրանքների հայտարարագրում ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնություններից հրաժարվելու վերաբերյալ փոփոխությունների կատարման օրը՝ այդ արտոնություններից հայտարարատուի հրաժարվելու դեպքում.

2) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների տրամադրման նպատակների ու պայմանների և (կամ) այդ արտոնությունների կիրառման հետ կապված՝ այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների խախտմամբ գործողություններ կատարելու դեպքում, այդ թվում՝ եթե այդ գործողությունների կատարումը հանգեցրել է այդ ապրանքների կորստին՝ նշված գործողությունները կատարելու առաջին օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ՝ ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը.

3) ապրանքների կորստի դեպքում՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով դրանց ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով անվերադարձ կորստի՝ այդ ապրանքների կորստի օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ՝ ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը.

4) այն դեպքում, երբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների տրամադրման նպատակների ու պայմանների պահպանումը և (կամ) այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների պահպանումը այդ արտոնությունների կիրառման հետ կապված համարվում են չհաստատված սույն Օրենսգրքի 316-րդ հոդվածին համապատասխան՝ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման օրը:

12. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ՝ ներմուծման մաքսատուրքերը՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով սահմանված ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերից ավելի ցածր դրույքաչափերով՝ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերին համապատասխան վճարելով՝ ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման՝ սույն հոդվածի 13-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

13. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում սույն հոդվածի 12-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) ներմուծման մաքսատուրքերի կամավոր վճարման դեպքում՝ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման համար ներկայացված ապրանքների հայտարարագրում ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման մասով փոփոխությունների կատարման օրը կամ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերին համապատասխան՝

Հանձնաժողովի կողմից սահմանված մեկ այլ օր,

2) սույն Օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված ապրանքների օգտագործման սահմանափակումների խախտմամբ և (կամ) Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերով սահմանված այլ պայմանների խախտմամբ գործողությունների կատարման դեպքում՝ նշված գործողությունների կատարման առաջին օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ՝ ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը:

14. Եթե սույն Օրենսգրքով այլ բան նախատեսված չէ, ապա ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման՝

1) սույն հոդվածի 9-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ՝ ապրանքների հայտարարագրում սույն Օրենսգրքին համապատասխան հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի չափով՝ հաշվի առնելով սակագնային առանձնաշնորհումները և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունները.

2) սույն հոդվածի 10-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ՝ սակագնային առանձնաշնորհումները հաշվի առնելով՝ սույն Օրենսգրքին համապատասխան ապրանքների հայտարարագրում հաշվարկված և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման հետ կապված չվճարված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարների չափով, իսկ եթե այդ ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ մինչև դրանց բացթողման օրվանից 5 տարին լրանալը կամ մինչև ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումների գործողության սահմանված այլ ժամկետի լրանալը սույն Օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ձևակերպվել են «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով՝ դրանց վերանորոգման համար՝ նաև սույն Օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-6-րդ կետերին համապատասխան հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարների չափով.

3) սույն հոդվածի 12-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերով սույն Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների և ապրանքների բացթողման ժամանակ վճարված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների միջև եղած տարբերության չափով կամ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերով սահմանված այլ չափով:

15. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների նկատմամբ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման (հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման) մինչև «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը:

16. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների նկատմամբ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման ապրանքների հայտարարագրում հաշվարկված չափով՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 12-րդ գլխով նախատեսված առանձնահատկությունները:

17. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների նկատմամբ նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը դրանք բաց թողնելիս սույն հոդվածը կիրառվում է հաշվի առնելով սույն Օրենսգրքի 137-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

Հոդված 137. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացման և դադարման առանձնահատկությունները, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը՝ ապրանքները նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը բաց թողնելու դեպքում

1. Նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը բացթողման համար հայտագրված՝ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նկատմամբ այդ ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը նախքան ապրանքների հայտարարագիրը ապրանքների բացթողման մասին դիմումը ներկայացրած անձի համար առաջանում է ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու պահից:

2. Նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը բացթողման համար հայտագրված՝ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող այն ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորությունը դադարում է մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմում ներկայացրած անձի համար՝ հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան մաքսային

մարմնի կողմից՝ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի արդյունքում այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը ճանաչելը, եթե այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը վրա են հասել մինչև այդ ապրանքները բաց թողնելը.

2) ապրանքների բացթողումը մերժելը մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը.

3) անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ապրանքները բռնագրավելը կամ այդ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը.

4) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

5) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված այն ապրանքների առնչությամբ, որոնց բացթողումն իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը, ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունը դադարում է մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը ներկայացրած անձի համար՝ հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) մաքսային մարմնի կողմից էլեկտրոնային փաստաթղթի ուղարկում կամ մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 17-րդ կետում նշված համապատասխան նշումների կատարում, եթե ապրանքների նկատմամբ կիրառվել են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնություններ, որոնք չեն զուգակցվում այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների հետ.

2) մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) դրանց բռնագանձում՝ սույն հոդվածի 12-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով, եթե սույն հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով այլ բան նախատեսված չէ, ինչպես նաև մաքսային մարմնի կողմից էլեկտրոնային փաստաթղթի ուղարկում կամ մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 17-րդ կետում նշված համապատասխան նշումների կատարում.

3) անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ ապրանքները բռնագրավելը կամ այդ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը:

4. Եթե «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումն իրականացվել է նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը և որոնց վերաբերյալ մաքսային մարմնի կողմից ուղարկվել է էլեկտրոնային փաստաթուղթ կամ կատարվել են սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 17-րդ կետում նշված համապատասխան նշումները, կիրառվել են այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների հետ զուգակցված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնություններ, ապա նման ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը նախքան ապրանքների հայտարարագիրը ապրանքների բացթողման մասին դիմում ներկայացրած անձի համար դադարում է սույն Օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

5. Եթե «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումն իրականացվել է նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը և որոնց վերաբերյալ մաքսային մարմնի կողմից ուղարկվել է էլեկտրոնային փաստաթուղթ կամ կատարվել են սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 17-րդ կետում նշված համապատասխան նշումները, Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերը վճարվել են ներմուծման մաքսատուրքերի՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով սահմանվածից ավելի ցածր դրույքաչափերով, ապա ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարմամբ և (կամ) սույն հոդվածի 12-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձմամբ չի դադարում ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով սահմանված ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերով հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի գումարների և ապրանքների բացթողման ժամանակ վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարների միջև եղած տարբերության չափով, կամ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերին համապատասխան սահմանված այլ չափով: Ներմուծման մաքսատուրքերը վճարելու այդ պարտավորությունը նախքան ապրանքների հայտարարագիրը ապրանքների բացթողման մասին դիմում ներկայացրած անձի համար դադարում է սույն Օրենսգրքի 136-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

6. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված այն ապրանքների առնչությամբ, որոնց բացթողումն իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը, հատուկ,

հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորությունը մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմում ներկայացրած անձի համար դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը կատարելը և (կամ) սույն հոդվածի 13-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանք բռնագանձելը և մաքսային մարմնի կողմից էլեկտրոնային փաստաթուղթ ուղարկելը կամ մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 17-րդ կետում նշված համապատասխան նշումներ կատարելը.

2) անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ապրանքները բռնագրավելը կամ այդ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը:

7. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումն իրականացվել է նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը, և որոնց համար ապրանքների հայտարարագիրը ներկայացվել է սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 16-րդ կետում նշված ժամկետից ոչ ուշ, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց հայտարարատու է հանդես գալիս լիազորված տնտեսական օպերատորը՝ սույն Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ կետում նշված ժամկետից ոչ ուշ, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման (ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման) նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը, եթե սույն Օրենսգրքին համապատասխան ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման այլ ժամկետ սահմանված չէ:

8. Եթե «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումն իրականացվել է նախքան ապրանքների հայտարարագրի ներկայացումը և որոնց վերաբերյալ մաքսային մարմնի կողմից ուղարկվել է էլեկտրոնային փաստաթուղթ կամ կատարվել են սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 17-րդ կետում նշված համապատասխան նշումները, կիրառվել են այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների հետ զուգակցված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնություններ, ապա այդ ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն Օրենսգրքի 136-րդ հոդվածի 11-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում և ժամկետներում:

9. Եթե «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումն իրականացվել է նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը և որոնց վերաբերյալ մաքսային մարմնի կողմից ուղարկվել է էլեկտրոնային փաստաթուղթ կամ կատարվել են սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 17-րդ կետում նշված համապատասխան նշումները, Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերը վճարվել են ներմուծման մաքսատուրքերի՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով սահմանված դրույքաչափերից ավելի ցածր դրույքաչափերով, ապա ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն Օրենսգրքի 136-րդ հոդվածի 13-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում և ժամկետներում:

10. «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումն իրականացվել է նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը և որոնց համար ապրանքների հայտարարագիրը ներկայացվել է սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 16-րդ կետում նշված ժամկետից ոչ ուշ, իսկ այն ապրանքների համար, որոնց հայտարարատու է հանդես եկել լիազորված տնտեսական օպերատորը՝ սույն Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ կետում նշված ժամկետից ոչ ուշ, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման (հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման) մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը:

11. Եթե «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումն իրականացվել է նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը, ապրանքների հայտարարագիրը չի ներկայացվել մինչև սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 16-րդ կետում նշված ժամկետի լրանալը, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց հայտարարատու է հանդես եկել լիազորված տնտեսական օպերատորը՝ մինչև սույն Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ կետում նշված ժամկետի լրանալը, ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորությունը ենթակա է կատարման: Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 16-րդ կետում նշված ժամկետի վերջին օրը, իսկ այն ապրանքների առնչությամբ, որոնց հայտարարատու է հանդես գալիս լիազորված տնտեսական օպերատորը՝ սույն Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ կետում նշված ժամկետի վերջին օրը:

12. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման՝

1) սույն հոդվածի 7-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ՝ ապրանքների հայտարարագրում սույն Օրենսգրքին համապատասխան հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարների չափով՝ հաշվի առնելով սակագնային առանձնաշնորհումները և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունները.

2) սույն հոդվածի 8-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ՝ ապրանքների հայտարարագրում սակագնային առանձնաշնորհումները հաշվի առնելով սույն Օրենսգրքին համապատասխան հաշվարկված և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման հետ կապված չվճարված՝ ներմուծման

մաքսատուրքերի, հարկերի գումարների չափով, իսկ եթե այդ ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ մինչև դրանց բացթողման օրվանից 5 տարին լրանալը կամ մինչև ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումների գործողության սահմանված այլ ժամկետի լրանալը սույն Օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ձևակերպվել են «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով՝ դրանց վերանորոգման համար՝ նաև սույն Օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-6-րդ կետերին համապատասխան հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարների չափով.

3) սույն հոդվածի 9-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ՝ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերով սույն Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների և ապրանքների բացթողման ժամանակ վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարների միջև եղած տարբերության չափով կամ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով կամ Միությանն անդամակցելու մասին միջազգային պայմանագրերով սահմանված այլ չափով:

13. Սույն հոդվածի 10-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման ապրանքների հայտարարագրում հաշվարկված չափով՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 12-րդ գլխով նախատեսված առանձնահատկությունները:

14. Սույն հոդվածի 11-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ վճարման ենթակա ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման բազան որոշվում է ապրանքների բացթողման մասին դիմումում և այդ դիմումի հետ համատեղ ներկայացված փաստաթղթերում նշված տեղեկությունների հիման վրա:

Եթե ապրանքների ծածկագրերը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանվել են 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով, ապա՝

մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հարկերի հաշվարկման համար կիրառվում է այն խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող ավելացված արժեքի հարկի, ակցիզների (ակցիզային հարկ կամ ակցիզային տուրք) դրույքաչափերից ամենամեծը, որոնց նկատմամբ սահմանվել է ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը՝ հաշվի առնելով սույն կետի վեցերորդ պարբերությունը:

Հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են ելնելով ապրանքների՝ սույն Օրենսգրքի 4-րդ գլխին համապատասխան հաստատված ծագումից և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններից: Եթե ապրանքների ծագումը և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ հաստատված չեն, ապա հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը, որոնք սահմանվել են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն ծածկագրին դասվող ապրանքների համար, եթե ապրանքի դասակարգումն իրականացվել է 10 նիշի մակարդակով, կամ խմբավորման մեջ մտնող ապրանքների համար, եթե ապրանքների ծածկագրերը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, սահմանվել են 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով:

15. Եթե սույն հոդվածի 11-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ հետագայում ներկայացվել է ապրանքների հայտարարագիր, ապա մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարվում են՝ ապրանքների հայտարարագրում սույն Օրենսգրքին համապատասխան հաշվարկված գումարների չափով՝ ելնելով ապրանքների հայտարարագրում նշված տեղեկություններից: Ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի գումարների վերադարձն (հաշվանցումն) իրականացվում է սույն Օրենսգրքի 76-րդ հոդվածին և 10-րդ գլխին համապատասխան:

Հոդված 138. Սույն Օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու առանձնահատկությունները

1. Սույն Օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի գումարների չափով, որոնք ենթակա կլինեին վճարման այնպես, ինչպես եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և սույն Օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված ապրանքների պատրաստման համար օգտագործված օտարերկրյա ապրանքները իրենց ելքի չափաքանակներին համապատասխան ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում»

մաքսային ընթացակարգով:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը նշված ապրանքների համար հաշվարկվում են սույն Օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան վճարվող (բռնագանձվող) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարներից վճարման են ենթակա տոկոսներ այնպես, ինչպես դա կլիներ, եթե նշված գումարների գծով տրամադրված լիներ դրանց վճարման հետաձգում՝ ապրանքները «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից մինչև ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության դադարումը:

Նշված տոկոսները հաշվեգրվում և վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

«Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն Օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան կասեցնելու դեպքում սույն կետով նախատեսված տոկոսները մաքսային ընթացակարգի գործողության կասեցման ժամանակահատվածում չեն հաշվեգրվում և չեն վճարվում:

3. Սույն Օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են և ենթակա են վճարման սույն Օրենսգրքի 186-րդ հոդվածին համապատասխան այնպես, ինչպես եթե այդ ապրանքները վերամշակման արդյունքներ լինեին:

Գլուխ 21

«Արտահանում» մաքսային ընթացակարգը

Հոդված 139. «Արտահանում» մաքսային ընթացակարգի բովանդակությունը և կիրառումը

1. «Արտահանում» մաքսային ընթացակարգը Միության ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան՝ նման ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքից դրա սահմաններից մշտապես դուրս գտնվելու համար:

2. «Արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և Միության մաքսային տարածքից փաստացիորեն արտահանված ապրանքները կորցնում են Միության ապրանքների կարգավիճակը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Օրենսգրքի 303-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ կետերին համապատասխան՝ նման ապրանքները պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը:

3. «Արտահանում» մաքսային ընթացակարգի կիրառումը թույլատրվում է ստորև նշվածների նկատմամբ՝

1) Միության մաքսային տարածքից արտահանված՝

«մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված ապրանքների՝ սույն Օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու համար.

«ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ՝ սույն Օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու նպատակով.

հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների՝ սույն Օրենսգրքի 254-րդ հոդվածին համապատասխան սահմանված դեպքերում Հանձնաժողովի կողմից և Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում անդամ պետությունների օրենսդրությամբ հատուկ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու համար.

միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների՝ սույն Օրենսգրքի 276-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան.

սույն Օրենսգրքի 303-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված՝ Միության ապրանքների.

2) վերամշակման արդյունքների՝ սույն Օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու համար.

3) սույն Օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ կետում նշված ապրանքները Միության մաքսային տարածքից արտահանելու համար:

4. Սույն հոդվածի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված ապրանքները ձևակերպվում են «արտահանում» մաքսային ընթացակարգով՝ առանց Միության մաքսային տարածք դրանց ներմուծման:

5. Սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված ապրանքները և սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված՝ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու համար Միության տարածքից պետք է արտահանվեն նման ապրանքները «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվան հաջորդող օրվանից

1 տարին չգերազանցող ժամկետում:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել ավելի կարճ ժամկետ, որի ընթացքում նշված ապրանքները պետք է արտահանվեն Միության մաքսային տարածքից:

Նշված ապրանքները Միության մաքսային տարածքից չարտահանելու դեպքում՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով դրանց ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով դրանց անվերադարձ կորստի դեպքերի, մինչև սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված կամ սույն կետի երկրորդ պարբերությանը համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված ժամկետի լրանալը, «արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարում է, իսկ այդ ապրանքները, սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան, արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմինների կողմից:

Նշված ապրանքներն արգելանքի չեն վերցվում (չեն արգելապահվում) մաքսային մարմինների կողմից, եթե «արտահանում» մաքսային ընթացակարգի գործողության դադարման պահին դրանք գտնվում են ԱՏԳ տարածքում կամ ազատ պահեստում:

Հոդված 140. «Արտահանում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման պայմանները

«Արտահանում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման պայմաններն են՝

արտահանման մաքսատուրքերի վճարումը՝ սույն Օրենսգրքին համապատասխան.

արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան.

Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով, անդամ պետությունների միջև երկկողմ միջազգային պայմանագրերով և երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված այլ պայմանների պահպանումը:

Հոդված 141. «Արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների համար արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության առաջացումն ու դադարումը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. «Արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների համար արտահանման մաքսատուրքերը վճարելու հայտարարատուի պարտավորությունն առաջանում է ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու պահից:

2. «Արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների համար արտահանման մաքսատուրքերը վճարելու հայտարարատուի պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) «արտահանում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողում՝ արտահանման մաքսատուրքերի վճարման արտոնությունների կիրառմամբ.

2) արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) դրանց բռնագանձում՝ սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով.

3) ապրանքների բացթողման մերժում՝ «արտահանում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

4) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան ապրանքների հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

5) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

6) մաքսային մարմնի կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

7) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. Արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման (արտահանման մաքսատուրքերը ենթակա են վճարման) նախքան «արտահանում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը, եթե այլ ժամկետ սահմանված չէ սույն Օրենսգրքով:

4. Արտահանման մաքսատուրքերը ենթակա են վճարման արտահանման մաքսատուրքերի այն գումարների չափով,

որոնք հաշվարկված են ապրանքների հայտարարագրում՝ հաշվի առնելով արտահանման մաքսատուրքերի վճարման արտոնությունները:

Գլուխ 22

«Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը

Հոդված 142. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի բովանդակությունը և կիրառումը

1. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան՝ ապրանքներն այդ մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանների պահպանման դեպքում ուղարկող մաքսային մարմնից նշանակման մաքսային մարմին ապրանքները փոխադրվում (տրանսպորտով փոխադրվում) են առանց մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման:

2. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառվում է՝

1) Միության մաքսային տարածքով այն օտարերկրյա ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար, որոնք ձևակերպված չեն այլ մաքսային ընթացակարգերով, ինչպես նաև Միության ապրանքների համար, որոնք՝

Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում ձևակերպված են «արտահանում» մաքսային ընթացակարգով.

ձևակերպված են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով, ԱՏԳ մեկ տարածքից փոխադրվում են ԱՏԳ այլ տարածք՝ սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված դեպքում.

2) Միության ապրանքների և սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 4-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքների՝ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մյուս մաս փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար:

3. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառվում է ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) դեպքում՝

1) ժամանման վայրի մաքսային մարմնից մինչև մեկնման վայրի մաքսային մարմինը.

2) ժամանման վայրի մաքսային մարմնից մինչև ներքին մաքսային մարմինը.

3) ներքին մաքսային մարմնից մինչև մեկնման վայրի մաքսային մարմինը.

4) մի ներքին մաքսային մարմնից մինչև մեկ այլ ներքին մաքսային մարմինը.

5) մաքսային մարմինների միջև՝ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով:

4. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը:

5. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ Միության ապրանքները պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 307-րդ հոդվածի 3-րդ կետում նշված դեպքի և Հանձնաժողովի կողմից սույն Օրենսգրքի 304-րդ հոդվածի 17-րդ կետին համապատասխան սահմանված դեպքերի:

6. Միության մաքսային տարածքով փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով չեն ձևակերպվում հետևյալ օտարերկրյա ապրանքները՝

1) այն օդանավում գտնվող ապրանքները, որը միջազգային փոխադրում իրականացնելու ժամանակ Միության մաքսային տարածքում կատարել է միջանկյալ, հարկադրված կամ տեխնիկական վայրէջք՝ առանց այդ ապրանքների բեռնաթափման (դատարկման).

2) այն ապրանքները, որոնք Միության մաքսային տարածք ժամանումից հետո Միության մաքսային սահմանով դուրս չեն բերվել դրանց տեղափոխման վայրից ու մեկնում են Միության մաքսային տարածքից.

3) էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքները.

4) այլ ապրանքներ՝ սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում:

7. Միության մաքսային տարածքով փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար մաքսային ընթացակարգերով ձևակերպված օտարերկրյա ապրանքները ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ սույն Օրենսգրքով և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

8. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մյուս մասը փոխադրվող Միության ապրանքների և սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 4-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքների նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառվում է հաշվի առնելով սույն Օրենսգրքի 43-րդ գլխով սահմանված առանձնահատկությունները:

9. Անձնական օգտագործման ապրանքների, միջազգային փոստային առաքանիների և խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառվում է հաշվի առնելով սույն Օրենսգրքի 263-րդ, 287-րդ և 294-րդ հոդվածներով սահմանված առանձնահատկությունները:

10. Միայն մեկ անդամ պետության տարածքով փոխադրվող ապրանքների նկատմամբ «մաքսային տարանցում»

մաքսային ընթացակարգի կիրառման առանձնահատկությունները կարող են սահմանվել այդ անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

11. Չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում Միության մաքսային սահմանով տեղափոխվող՝ միջազգային փոխադրում իրականացնող մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցներով որոշակի ժամանակահատվածի ընթացքում երկու և ավելի անդամ պետությունների տարածքներով փոխադրվող ապրանքների նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառման առանձնահատկությունները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

12. Միության մաքսային տարածքով տրանսպորտի տարբեր (երկու և ավելի) տեսակներով փոխադրվող ապրանքների նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառման առանձնահատկությունները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Հոդված 143. Ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանները

1. Միության մաքսային տարածքով փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

1) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը սույն Օրենսգրքի 146-րդ հոդվածին համապատասխան՝ օտարերկրյա ապրանքների նկատմամբ.

2) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը սույն Օրենսգրքի 146-րդ հոդվածին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում՝ օտարերկրյա ապրանքների նկատմամբ.

3) սույն Օրենսգրքի 341-րդ հոդվածով նախատեսված եղանակներով ապրանքների նույնականացման հնարավորության ապահովումը.

4) միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի համապատասխանությունը սույն Օրենսգրքի 364-րդ հոդվածում նշված պահանջներին, եթե ապրանքները փոխադրվում են տրանսպորտային միջոցի այն բեռնասրահներում (հատվածամասերում), որոնց վրա դրվում են մաքսային կապարակնիքներ և կնիքներ.

5) արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

2. Միության ապրանքները, այդ թվում՝ փոստային առաքանիներում ուղարկվող Միության ապրանքները, և սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 4-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքները Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մյուս մասը Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով փոխադրման (տրանսպորտային փոխադրման) նպատակով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանները սահմանված են սույն Օրենսգրքի 304-306-րդ հոդվածներով:

3. Որպես Միության մաքսային տարածքով տրանսպորտի երկու և ավելի տեսակների օգտագործմամբ փոխադրվող՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների հայտարարատու կարող են հանդես գալ սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված անձինք, կամ անդամ պետության այն անձը, որը այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան օժտված է տրանսպորտի երկու և ավելի տեսակների օգտագործմամբ փոխադրվող ապրանքների նկատմամբ լիազորություններով և ապահովում է ապրանքների այդպիսի փոխադրման կազմակերպումը:

4. Ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ուղարկող մաքսային մարմինը սույն Օրենսգրքի 144-րդ հոդվածին համապատասխան սահմանում է մաքսային տարանցման ժամկետը, սույն Օրենսգրքի 145-րդ, 263-րդ և 304-րդ հոդվածներին համապատասխան որոշում է ապրանքների առաքման վայրը, սույն Օրենսգրքի 341-րդ հոդվածին համապատասխան իրականացնում է ապրանքների, դրանց փաստաթղթերի նույնականացումը:

Եթե ապրանքների փոխադրումը՝ բացառությամբ ապրանքների՝ նավերով կամ օդանավերով փոխադրման, իրականացվում է սույն Օրենսգրքի 364-րդ հոդվածում նշված պահանջներին համապատասխանող տրանսպորտային միջոցի բեռնասրահում (հատվածամասում) կամ դրա մասում, ապա նույնականացումը, սույն Օրենսգրքի 341-րդ հոդվածով նախատեսված նույնականացման այլ եղանակներից բացի, պետք է ապահովվի տրանսպորտային միջոցի այդ բեռնասրահների (հատվածամասերի) կամ դրա մասերի վրա կնիքներ դնելու միջոցով՝ բացառությամբ սույն կետի երրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի:

Տրանսպորտային միջոցի բեռնասրահների (հատվածամասերի) կամ դրա մասերի վրա կնիքների կիրառում չի պահանջվում փոստային տարաներում (փոստային պարկերում, փոստային բեռնարկղերում) գտնվող կենդանի կենդանիները, միջազգային փոստային առաքանիները փոխադրելու դեպքում, ինչպես նաև «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով չձևակերպվող ապրանքների հետ միասին Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքով տրանսպորտային միջոցի կամ դրա մասի մեկ բեռնասրահում (հատվածամասում) փոխադրելու դեպքում:

Հոդված 144. Մաքսային տարանցման ժամկետը

1. Ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ուղարկող մաքսային մարմինը սահմանում է այն ժամկետը, որի ընթացքում ապրանքները ուղարկող մաքսային մարմնից պետք է հասցվեն նշանակման մաքսային մարմնին (այսուհետ՝ մաքսային տարանցման ժամկետ):

2. Երկաթուղային տրանսպորտով փոխադրվող ապրանքների նկատմամբ մաքսային տարանցման ժամկետը սահմանվում է ելնելով 1 ամսում 2 հազար կիլոմետրի հաշվարկից, սակայն առնվազն 7 օրացուցային օր:

Այն ապրանքների նկատմամբ, որոնց փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) իրականացվում է տրանսպորտի այլ տեսակներով, մաքսային տարանցման ժամկետը սահմանվում է ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) սովորական ժամկետին համապատասխան՝ ելնելով տրանսպորտի տեսակից և տրանսպորտային միջոցի հնարավորություններից, ապրանքների փոխադրման համար սահմանված երթուղուց, փոխադրման այլ պայմաններից և (կամ) հայտարարատուի կամ փոխադրողի դիմումից, ինչպես նաև հաշվի առնելով երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան՝ տրանսպորտային միջոցի վարորդի աշխատանքի և հանգստի ռեժիմի պահանջները, սակայն մաքսային տարանցման առավելագույն ժամկետից ոչ ավելի:

3. Մաքսային տարանցման առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 1 ամսում 2 հազար կիլոմետր հաշվարկով սահմանվող ժամկետը, կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների փոխադրման առանձնահատկությունների հաշվառմամբ Հանձնաժողովի կողմից սահմանվող ժամկետը:

4. Հայտարարատուի կամ փոխադրողի հիմնավորված դիմումի հիման վրա մաքսային մարմնի կողմից սահմանված՝ մաքսային տարանցման ժամկետը կարող է երկարաձգվել սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված ժամկետի սահմաններում:

Մաքսային տարանցման ժամկետի երկարաձգման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Հոդված 145. Ապրանքների առաքման վայրը: Ապրանքների առաքման վայրը փոխելը

1. Ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ուղարկող մաքսային մարմինը սահմանում է այն վայրը, որտեղ պետք է հասցվեն «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքները (այսուհետ՝ ապրանքների առաքման վայր):

2. Ապրանքների առաքման վայրը որոշվում է տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում նշված նշանակման կետի մասին տեղեկությունների հիման վրա, եթե սույն հոդվածի 3-5-րդ կետերով այլ բան սահմանված չէ:

Ապրանքների առաքման վայր է համարվում նշանակման մաքսային մարմնի գործունեության տարածքում գտնվող մաքսային հսկողության գոտին: Ընդ որում, ժամանման վայրից փոխադրվող ապրանքները հասցվում են մաքսային մարմնի գտնվելու վայր, եթե սույն Օրենսգրքով և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

Երկաթուղային տրանսպորտով փոխադրվող ապրանքների առաքման վայր է համարվում նշանակման կայարանի, նշանակման կայարանի մերձատար ուղիների կամ անմիջականորեն նշանակման կայարանին հարող՝ ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային ուղիների մաքսային հսկողության գոտին:

3. Մեկ անդամ պետության տարածքի սահմաններում ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) դեպքում ուղարկող մաքսային մարմինն իրավունք ունի սահմանելու ապրանքների առաքման վայրը՝ անկախ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում նշված տեղեկություններից՝ այդ անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

4. Երկու և ավելի անդամ պետությունների տարածքներով ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) դեպքում ուղարկող մաքսային մարմինն իրավունք ունի սահմանելու ապրանքների առաքման վայրը՝ անկախ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում նշված տեղեկություններից՝ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և (կամ) Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ դեպքերում:

5. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) դեպքում ուղարկող մաքսային մարմինն իրավունք ունի սահմանելու ապրանքների առաքման վայրը՝ անկախ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում նշված տեղեկություններից՝ սույն Օրենսգրքի 304-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում և (կամ) Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ դեպքերում:

6. Երկրորդ կամ երրորդ տիպի վկայական ունեցող լիազորված տնտեսական օպերատորի՝ մաքսային հսկողության գոտի հանդիսացող կառույցները, շինությունները (շինությունների մասերը) և (կամ) բաց հրապարակները (բաց հրապարակների մասերը) կարող են սահմանվել որպես իրենց ժամանման վայրից փոխադրվող ապրանքների առաքման վայր, եթե տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերին համապատասխան՝ այդ ապրանքները մեկնում են դեպի այդ լիազորված տնտեսական օպերատորի կառույցներ, շինություններ (շինությունների մասեր) և (կամ) բաց հրապարակներ (բաց հրապարակների մասեր):

7. Այն դեպքում, երբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների

փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ անդամ պետությունների՝ տրանսպորտի ոլորտի օրենսդրությանը համապատասխան նշանակման կետը փոփոխվում է, ապա մաքսային մարմնի թույլտվությամբ ապրանքների առաքման վայրը կարող է փոփոխվել:

Առաքման վայրի փոփոխության մասին մաքսային մարմնի թույլտվությունն ստանալու համար փոխադրողն իրավունք ունի դիմելու իր ընթացուղում գտնվող ցանկացած մաքսային մարմին՝ ներկայացնելով ապրանքների առաքման վայրի փոփոխության մասին ազատ ոճով կազմված դիմում: Ապրանքների առաքման վայրի փոփոխության մասին դիմումի հետ մեկտեղ ներկայացվում են նշանակման կետի փոփոխությունը հաստատող փաստաթղթերը, տարանցման հայտարարագիրը և ապրանքներին առնչվող այլ փաստաթղթեր:

Մաքսային մարմինն ընդունում է ապրանքների առաքման վայրի փոփոխության մասին թույլտվությունը՝ սույն կետի երկրորդ պարբերությունում նշված դիմումը և փաստաթղթերն ստանալու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ: Առաքման վայրի փոփոխության մասին թույլտվությունը տրամադրելուց հետո «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն այն ապրանքների նկատմամբ, որոնց առաքման վայրը փոփոխվել է, ավարտվում է, և ապրանքները ենթակա են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման:

Ապրանքների առաքման վայրի փոփոխության մասին մաքսային մարմնի թույլտվությունն ստանալու հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Ապրանքների առաքման վայրի փոփոխությունը թույլատրվում է առանց «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու, եթե առաքման այդ վայրը տեղակայված է մաքսային մարմնի գործունեության միևնույն տարածքում, որտեղ և ուղարկող մաքսային մարմնի կողմից սկզբնապես հաստատված՝ ապրանքների առաքման վայրը՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 146. Մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի դեպքում

1. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի դեպքում մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրվում է սույն Օրենսգրքի 9-րդ գլխին համապատասխան՝ հաշվի առնելով սույն հոդվածը և սույն Օրենսգրքի 271-րդ և 287-րդ հոդվածները:

Այն դեպքերում, երբ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը սույն Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետին համապատասխան համարվում է ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու նախապայման, ապա այդ ապահովումը տրամադրվում է սույն Օրենսգրքի 75-րդ հոդվածին համապատասխան՝ հաշվի առնելով սույն հոդվածի դրույթները:

2. Ապրանքները՝ բացառությամբ անձնական օգտագործման ապրանքների և միջազգային փոստային առաքանիների, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չափը որոշվում է ելնելով այն մաքսատուրքերի, հարկերի գումարներից, որոնք ենթակա կլինեին վճարման այն անդամ պետությունում, որի մաքսային մարմինն իրականացնում է ապրանքների բացթողումը, եթե տարանցման հայտարարագրի գրանցման ամսաթվի դրությամբ ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով կամ «արտահանում» մաքսային ընթացակարգով՝ համապատասխանաբար առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կամ արտահանման մաքսատուրքերի վճարման արտոնությունների կիրառման, բայց ոչ պակաս այն մաքսատուրքերի, հարկերի գումարներից, որոնք ենթակա կլինեին վճարման այլ անդամ պետություններում, որոնց տարածքներով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան իրականացվելու է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) այնպես, եթե ապրանքն այդ անդամ պետությունների տարածքներում ձևակերպվեր «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով կամ «արտահանում» մաքսային ընթացակարգով՝ համապատասխանաբար առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կամ արտահանման մաքսատուրքերի վճարման արտոնությունների կիրառման:

Սույն կետի առաջին պարբերությունում նշված մաքսատուրքերի, հարկերի գումարները որոշվում են ելնելով մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերի ամենաբարձր մեծությունից, ապրանքների արժեքից և (կամ) դրանց՝ բնաիրային արտահայտությամբ (քանակ, զանգված, ծավալ կամ այլ բնութագրեր) ֆիզիկական բնութագրերից, որոնք կարող են որոշվել առկա տեղեկությունների հիման վրա, որոնց օգտագործման կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

3. Չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները (ապրանքների բաղադրիչները) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չափը և հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու

պարտավորության կատարման ապահովման չափը որոշելու առանձնահատկությունները:

4. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նկատմամբ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում և հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում չի տրամադրվում հետևյալ դեպքերում՝

1) մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չափի ու հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չափի հանրագումարը չի գերազանցում տարանցման հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող փոխարժեքով 500 եվրոյին համարժեք գումարը, եթե նման ապահովման տրամադրումը սույն Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետին համապատասխան հանդիսանում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման պայման.

2) որպես հայտարարատու հանդես է գալիս հայտարարագրվող ապրանքների փոխադրում (տրանսպորտային փոխադրում) իրականացնող մաքսային փոխադրողը կամ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ներառման մասին առաջին կամ երրորդ տիպի վկայական ունեցող լիազորված տնտեսական օպերատորը.

3) ապրանքները փոխադրվում են երկաթուղային, օդային տրանսպորտով կամ տեղափոխվում են խողովակաշարային տրանսպորտով՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդ փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) տրանսպորտի երկու և ավելի տեսակների օգտագործմամբ ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) մաս է.

4) օտարերկրյա ապրանքները փոխադրվում են նավերով, այդ թվում՝ խառը (գետ-ծով) նավարկության նավերով, անդամ պետության և (կամ) անդամ պետությունների ծովային նավահանգիստների միջև՝ առանց անդամ պետության և (կամ) անդամ պետությունների ներքին ջրային ուղիներ մուտք գործելու՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդ փոխադրումը տրանսպորտի երկու և ավելի տեսակների օգտագործմամբ ապրանքների փոխադրման մաս է.

5) այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում, որտեղ ապրանքները ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով, եթե ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) իրականացվում է այդ անդամ պետության տարածքով.

6) սույն Օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում՝ սույն Օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի երրորդ պարբերությանը համապատասխան.

7) Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով և (կամ) երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում.

8) մաքսային մարմնի կողմից կայացվել է մաքսային ուղեկցում կիրառելու մասին որոշում.

9) ապրանքները նախատեսված են Միության մաքսային տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների պաշտոնական օգտագործման համար, ինչի մասին յուրաքանչյուր կոնկրետ փոխադրման վերաբերյալ ուղարկող մաքսային մարմնում առկա է տեղեկատվություն՝ այն անդամ պետության արտաքին գործերի նախարարությունից, որտեղ գտնվում է ուղարկող մաքսային մարմինը: Նշված տեղեկատվությունը մաքսային մարմնին փոխանցվում է այն անդամ պետության արտաքին գործերի նախարարության կողմից, որտեղ գտնվում է ուղարկող մաքսային մարմինը, եթե այդ տեղեկատվությունն ստացվել է՝

այն անդամ պետության արտաքին գործերի նախարարությունից, որն ապրանքների ստացողը հանդիսացող դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի նստավայր պետությունն է.

կամ այն անդամ պետության տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունից կամ հյուպատոսական հիմնարկից, որտեղ գտնվում է ուղարկող մաքսային մարմինը, և որն այն պետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկն է, որի դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկն ապրանքների ստացողն է.

10) ապրանքները նախատեսված են պետությունների՝ Միության մաքսային տարածքում տեղակայված միջազգային կազմակերպություններին կից ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների, այլ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների պաշտոնական օգտագործման համար, ինչի մասին յուրաքանչյուր կոնկրետ փոխադրման վերաբերյալ ուղարկող մաքսային մարմնում առկա է տեղեկատվություն այն անդամ պետության արտաքին գործերի նախարարությունից, որտեղ գտնվում է ուղարկող մաքսային մարմինը: Նշված տեղեկատվությունը մաքսային մարմնին փոխանցվում է այն անդամ պետության արտաքին գործերի նախարարության կողմից, որտեղ գտնվում է ուղարկող մաքսային մարմինը, եթե դա ստացվել է այն անդամ պետության արտաքին գործերի նախարարությունից, որը պետությունների՝ ապրանքների ստացողները հանդիսացող միջազգային կազմակերպություններին կից ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների, այլ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների նստավայր պետությունն է.

11) ապրանքները՝ ներառյալ առաջնահերթ ձեռքբերման ապրանքները, նախատեսված են Միության մաքսային տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցների, հյուպատոսական հիմնարկների աշխատողների, պետությունների՝ միջազգային կազմակերպություններին կից ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների, այլ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների անձնակազմի (աշխատակիցների, պաշտոնատար անձանց), ինչպես նաև նրանց

ընտանիքների անդամների անձնական օգտագործման համար, ինչի մասին յուրաքանչյուր կոնկրետ փոխադրման վերաբերյալ ուղարկող մաքսային մարմնում առկա է տեղեկատվություն այն անդամ պետության արտաքին գործերի նախարարությունից, որտեղ գտնվում է ուղարկող մաքսային մարմինը: Նշված տեղեկատվությունը մաքսային մարմնին փոխանցվում է այն անդամ պետության արտաքին գործերի նախարարության կողմից, որտեղ գտնվում է ուղարկող մաքսային մարմինը, եթե դա ստացվել է այն անդամ պետության արտաքին գործերի նախարարությունից, որը դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հիմնարկի, պետությունների՝ միջազգային կազմակերպություններին կից ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների, այլ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների նստավայր պետությունն է, որոնց աշխատակիցները, աշխատողները, անձնակազմը (աշխատակիցները, պաշտոնատար անձինք) ապրանքների ստացողներն են, կամ այն անդամ պետության տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունից կամ հյուպատոսական հիմնարկից, որտեղ գտնվում է ուղարկող մաքսային մարմինը, որն այն պետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկն է, որի դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի աշխատակիցները, աշխատողները ապրանքների ստացողներն են.

12) ապրանքները նախատեսված են մշակութային, գիտահետազոտական նպատակներով օգտագործման, մարզական մրցումների անցկացման կամ դրանց նախապատրաստման, տարերային աղետների, վթարների և աղետների հետևանքների վերացման, անդամ պետությունների պաշտպանունակության և պետական (ազգային) անվտանգության ապահովման, դրանց զինված ուժերի վերազինման, անդամ պետությունների պետական սահմանների պաշտպանության, անդամ պետությունների պետական մարմինների օգտագործման համար, ինչի մասին առկա է շահագրգիռ անդամ պետության այն համապատասխան պետական մարմնի հաստատումը, որը միջնորդել է առանց մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում տրամադրելու և (կամ) առանց հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում տրամադրելու՝ այդ ապրանքների բացթողման համար, որը ներկայացվել է այն անդամ պետության՝ Հանձնաժողովի կողմից սահմանված մաքսային մարմնի կողմից, որի տարածքում գտնվում է նշանակման մաքսային մարմինը, այն անդամ պետության՝ Հանձնաժողովի կողմից սահմանված մաքսային մարմին, որի տարածքում է գտնվում ուղարկման մաքսային մարմինը.

13) ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող ապրանքների նկատմամբ սույն Օրենսգրքի 114-րդ հոդվածով սահմանված առանձնահատկություններով իրականացվել է մաքսային հայտարարագրում այդ ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու նպատակով, և այդ ապրանքների մասով վճարվել են մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը, եթե փոխադրումը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան պետք է իրականացվի միայն այն անդամ պետության տարածքով, որտեղ ներկայացվել է ապրանքների հայտարարագիրը, և «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների հայտարարատուն և «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների հայտարարատուն միևնույն անձն է:

5. Այն դեպքում, երբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նկատմամբ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման սահմանված չափը և հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չափը, եթե այդ ապահովման տրամադրումը սույն Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետին համապատասխան ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայման է, հանրագումարում գերազանցում են սույն Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերում նշված գումարը՝ ոչ ավելի, քան տարանցման հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող փոխարժեքով 500 եվրոյին համարժեք գումարի չափով, ապա մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման լրացուցիչ ապահովման և (կամ) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման տրամադրում չի պահանջվում:

6. Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում տրամադրվում է այն ապրանքների նկատմամբ, որոնք փոխադրվում են մեկ տարանցման հայտարարագրով: Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովում կարող է տրամադրվել այն ապրանքների նկատմամբ, որոնք փոխադրվում են տարանցման մի քանի հայտարարագրերով:

7. Տարանցման մեկ հայտարարագրով փոխադրվող ապրանքների նկատմամբ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում կարող է տրամադրվել ուղարկող մաքսային մարմնին կամ նշանակման մաքսային մարմնին:

Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովումը կարող է տրամադրվել այն անդամ պետության ուղարկող մաքսային մարմնին, նշանակման մաքսային մարմնին կամ այլ մաքսային մարմնի, որի տարածքում գտնվում է ուղարկող մաքսային մարմինը կամ նշանակման մաքսային մարմինը, և որը սահմանվում է այդ անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

8. Եթե «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպումն իրականացնելու է մեկ անդամ պետության մաքսային մարմինը, իսկ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովումը տրամադրվել է մեկ այլ անդամ պետության մաքսային մարմնին, ապա մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովման կիրառման առանձնահատկությունները

սահմանվում են Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով:

Եթե «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպումն իրականացնելու է այն անդամ պետության մաքսային մարմինը, որի մաքսային մարմնին տրամադրվել է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովումը, ապա մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովման կիրառման առանձնահատկությունները սահմանվում են այդ անդամ պետության օրենսդրությամբ:

Հոդված 147. Մաքսային տարանցման դեպքում մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման տրամադրումը հաստատելու առանձնահատկությունները

1. Եթե «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպումն իրականացվելու է մեկ անդամ պետության մաքսային մարմնի կողմից, իսկ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրվելու է այլ անդամ պետության մաքսային մարմնին, որտեղ գտնվում է նշանակման մաքսային մարմինը, ապա այդ ապահովման տրամադրումը հաստատելու նպատակով կիրառվում է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման հավաստագիր (այսուհետ՝ ապահովման հավաստագիր):

Եթե ապրանքների ձևակերպումը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով իրականացվելու է այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որի մաքսային մարմնին տրամադրվել է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը, ապա թույլատրվում է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման ընդունումը հաստատող ապահովման հավաստագրի կամ այլ փաստաթղթի կիրառումը, որի օգտագործման ձևը և կարգը սահմանվում են այդ անդամ պետության օրենսդրությամբ:

2. Ապահովման հավաստագիրը ձևակերպվում է էլեկտրոնային փաստաթղթի տեսքով:

Ապահովման հավաստագրի՝ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ձևակերպումը թույլատրվում է անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ տեխնիկական խափանումների, կապի միջոցների (հեռահաղորդակցության ցանցերի և «Ինտերնետ» ցանցի) աշխատանքի ընդհատումների, էլեկտրաէներգիայի անջատման հետևանքով մաքսային մարմինների կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգերի անսարքությունների պատճառով մաքսային մարմինը հնարավորություն չունի ապահովելու ապահովման հավաստագրի՝ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով տրամադրումը:

3. Ապահովման հավաստագիրը ձևակերպվում է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրած անձի կողմից սահմանված գումարի չափով՝ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման տրամադրված ապահովման չափի սահմաններում: Սույն Օրենսգրքի 146-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված՝ Միության շրջանակներում միջազգային պայմանագրով կարող են սահմանվել այն դեպքերն ու պայմանները, երբ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովման դեպքում ապահովման հավաստագիրը (ապահովման հավաստագրերը) ձևակերպվում է (ձևակերպվում են) մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարում տրամադրված ապահովման չափը գերազանցող գումարի չափով:

4. Տարանցման մեկ հայտարարագրով փոխադրվող ապրանքների նկատմամբ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման տրամադրումը հաստատվում է մեկ կամ մի քանի ապահովման հավաստագրերով:

Մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովման դեպքում մեկ ապահովման հավաստագրով կարող է հաստատվել տարանցման մի քանի հայտարարագրերով փոխադրվող ապրանքների նկատմամբ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը:

5. Ապահովման հավաստագրի ձևը, ապահովման այդպիսի հավաստագրի կառուցվածքն ու ձևաչափը էլեկտրոնային փաստաթղթի տեսքով, ապահովման հավաստագիրը լրացնելու և դրա մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու կարգը, դրա գործողության ժամկետը որոշելու կարգը, ապահովման հավաստագիրն օգտագործելու կարգը, այդ թվում՝ դա մաքսային մարմին ներկայացնելու, գրանցելու, գրանցումը մերժելու, գրանցումը չեղյալ ճանաչելու, գործողությունը դադարեցնելու (մարելու) կարգը, ինչպես նաև ապահովման հավաստագրի գրանցումը մերժելու, գրանցումը չեղյալ ճանաչելու, գործողությունը դադարեցնելու (մարելու) հիմքերը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

6. Ուղարկող մաքսային մարմնի համար մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրելու հաստատում են համարվում՝

1) էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ձևակերպված ապահովման հավաստագիրը, որը գրանցված է մաքսային մարմնի կողմից և ստացվել է ուղարկող մաքսային մարմնի կողմից՝ մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ,

2) թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ձևակերպված և մաքսային մարմնի կողմից գրանցված ապահովման հավաստագիրն ու այդ ապահովման հավաստագրի մասին և այդ ապահովման հավաստագրից վերցված

տեղեկությունները, որոնք ուղարկող մաքսային մարմինն ստացել է՝ մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ:

7. Սույն Օրենսգրքի 146-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված՝ Միության շրջանակներում միջազգային պայմանագրով կարող են սահմանվել մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ընդհանուր ապահովման տրամադրումը հաստատելու առանձնահատկությունները:

8. Ուղարկող մաքսային մարմինը՝ որպես մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում տրամադրելու հաստատում, չի ընդունում այն ապահովման հավաստագիրը, որի մասին տեղեկությունները ներկայացված են տարանցման հայտարարագրում՝ հետևյալ դեպքերում՝

1) տարանցման հայտարարագիրը ներկայացնելու պահի դրությամբ ապահովման հավաստագրի գործողության ժամկետը լրացել է.

2) էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ձևակերպված ապահովման հավաստագրում նշված տեղեկությունները կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ձևակերպված ապահովման հավաստագրի մասին տեղեկությունները և (կամ) այդ ապահովման հավաստագրից վերցված՝ մաքսային մարմինների տեղեկատվական համակարգում պարունակվող տեղեկությունները չեն համապատասխանում տարանցման հայտարարագրում նշված տեղեկություններին.

3) թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ձևակերպված ապահովման հավաստագրի կիրառման ընթացքում ուղարկող մաքսային մարմինը չի ստացել ապահովման հավաստագրի մասին տեղեկությունները և (կամ) դրանից վերցված տեղեկությունները՝ սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան:

9. Սույն Օրենսգրքի 368-րդ հոդվածին համապատասխան՝ մաքսային մարմինները փոխանակում են էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ձևակերպված ապահովման հավաստագրերը, թղթային կրիչով փաստաթղթի տեսքով ձևակերպված՝ գրանցված ապահովման հավաստագրերի մասին տեղեկությունները և դրանցից վերցված տեղեկությունները, ինչպես նաև այն ապահովման հավաստագրերի վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց գործողությունը դադարել է (մարված ապահովման հավաստագրերի մասին), ապահովման հավաստագրի չօգտագործման, ապահովման հավաստագրի գրանցման վերացման, ապահովման հավաստագրի գործողության դադարման (մարման) հնարավորության մասին:

Հոդված 148. Ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և ապրանքների հետ կատարվող մյուս բեռնային գործողությունները, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ տրանսպորտային միջոցների փոխարինումը՝ Միության մաքսային տարածքով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան

1. Միության մաքսային տարածքով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը), այդ թվում՝ տրանսպորտի մի տեսակի տրանսպորտային միջոցից տրանսպորտի մեկ այլ տեսակի տրանսպորտային միջոցի վրա, և դրանց հետ կատարվող մյուս բեռնային գործողությունները, ինչպես նաև այդպիսի ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների փոխարինումն իրականացվում են այն մաքսային մարմնի թույլտվությամբ, որի գործունեության տարածքում իրականացվում են այդ գործողությունները՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետում նշված դեպքերի:

2. Եթե սույն հոդվածի 1-ին կետում նշված գործողությունները ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ կարող են կատարվել առանց դրված մաքսային կնիքները և կապարակնիքները հեռացնելու, կամ եթե ապրանքների վրա մաքսային կապարակնիքներ և կնիքներ չեն դրվել, ապա այդպիսի գործողությունների իրականացումը թույլատրվում է էլեկտրոնային կամ գրավոր եղանակով այն մաքսային մարմնին ծանուցելուց հետո, որի գործունեության տարածքում իրականացվում են այդ գործողությունները:

3. Միության մաքսային տարածքով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող ապրանքների բեռնաթափման, փոխաբեռնման (վերաբեռնման) և ապրանքների հետ կատարվող այլ բեռնային գործողությունների, ինչպես նաև այդպիսի ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների փոխարինման համար մաքսային մարմնի թույլտվությունն ստանալու կամ այդ գործողությունների իրականացման մասին մաքսային մարմնին ծանուցելու հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

4. Մաքսային մարմինն իրավունք ունի մերժելու Միության մաքսային տարածքով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող ապրանքների հետ բեռնային գործողությունների իրականացման թույլտվության տրամադրումը, եթե տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում, սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթերում կամ պետական մարմինների կողմից տրված այլ փաստաթղթերում առկա է այդպիսի գործողությունների իրականացման արգելք:

5. Անձի դիմումով մաքսային մարմնի թույլտվությամբ Միության մաքսային տարածքով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող ապրանքների հետ կապված բեռնային գործողությունների իրականացումը՝ մաքսային մարմնի աշխատանքային ժամերից դուրս իրականացվող մաքսային հսկողության ներքո:

Հոդված 149. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ առաջացած վթարի, անհաղթահարելի ուժի ազդեցության կամ այլ հանգամանքների դեպքում ձեռնարկվող միջոցները

1. Վթարի, անհաղթահարելի ուժի ազդեցության կամ այլ հանգամանքների դեպքում, որոնք խոչընդոտում են սույն Օրենսգրքի 150-րդ հոդվածով նախատեսված փոխադրողի պարտավորությունների կատարումը, փոխադրողը պարտավոր է ձեռնարկել ապրանքների և տրանսպորտային միջոցների պահպանվածությունն ապահովելու բոլոր միջոցները, մոտակա մաքսային մարմնին անհապաղ տեղեկացնել այդ հանգամանքների և ապրանքների գտնվելու վայրի մասին, ինչպես նաև փոխադրել ապրանքները կամ ապահովել դրանց փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) (եթե իր տրանսպորտային միջոցը վնասվել է)՝ մոտակա մաքսային մարմին կամ մաքսային մարմնի կողմից նշված այլ վայր:

Այդպիսի հանգամանքների մասին հաղորդում ստացած մաքսային մարմինը պարտավոր է ուղարկող մաքսային մարմնին և նշանակման մաքսային մարմնին տեղեկացնել ապրանքների՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով փոխադրմանը (տրանսպորտային փոխադրմանը) խոչընդոտող՝ առաջացած հանգամանքների մասին:

2. Մաքսային գործառնությունների իրականացման կարգը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ առաջացած վթարի, անհաղթահարելի ուժի ազդեցության կամ այլ հանգամանքների դեպքում սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

3. Սույն հոդվածի 1-ին կետի պահանջների պահպանման հետ կապված՝ փոխադրողի կրած ծախսերը չեն փոխհատուցվում մաքսային մարմինների կողմից:

Հոդված 150. Փոխադրողի պարտականությունները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ

1. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ փոխադրողը, անկախ այդ մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատուն լինելու հանգամանքից՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետում նշված դեպքի, պարտավոր է՝

1) ուղարկող մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետում ապրանքներն ու դրանց փաստաթղթերը հասցնել ապրանքների առաքման վայրը՝ հետևելով ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) սահմանված երթուղուն, եթե այդպիսին սահմանված է.

2) ապահովել ապրանքների, մաքսային կապարակնիքների և կնիքների, կամ նույնականացման այլ միջոցների պահպանվածությունը, եթե այդպիսիք կիրառվել են.

3) առանց մաքսային մարմինների թույլտվության՝ թույլ չտալ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և ապրանքների հետ այլ բեռնային գործողությունների կատարումը, ինչպես նաև այդպիսի ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների փոխարինումը՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 148-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքի:

2. Ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) տրանսպորտի երկու և ավելի տեսակի օգտագործմամբ իրականացնելու դեպքում սույն հոդվածի 1-ին կետում նշված պարտականությունները վերապահվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատուին:

3. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված, երկաթուղային տրանսպորտով փոխադրվող ապրանքներն ուղարկող մաքսային մարմնի կողմից սահմանված՝ ապրանքների առաքման վայր չհասցնելու դեպքում անդամ պետությունների՝ նշված ապրանքները փոխադրման համար ընդունած յուրաքանչյուր երկաթուղային փոխադրող պարտավոր է մաքսային մարմնի պահանջով տեղեկատվություն տրամադրել տեղ չհասցված այդ ապրանքների մասին: Համապատասխան պահանջն ու տեղեկատվությունը կարող են փոխանցվել ինչպես գրավոր, այնպես էլ տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Հոդված 151. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը և դադարումը

1. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է ուղարկող մաքսային մարմնի կողմից սահմանված՝ ապրանքների առաքման վայր ապրանքները հասցնելուց հետո:

2. Ապրանքների առաքման վայրում մինչև «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության

ավարտը ապրանքները տեղավորվում են մաքսային հսկողության գոտում, այդ թվում՝ առանց դրանք առաքող տրանսպորտային միջոցից դատարկելու:

Ապրանքները տեղավորում են մաքսային հսկողության գոտում օրվա ցանկացած պահի:

3. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու համար փոխադրողը կամ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատուն պարտավոր է նշանակման մաքսային մարմին ներկայացնել տարանցման հայտարարագիրը, ինչպես նաև իր մոտ առկա այլ փաստաթղթեր՝

1) ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող ապրանքների դեպքում՝ ապրանքների առաքման վայր դրանց ժամանման պահից 3 ժամվա ընթացքում, իսկ եթե ապրանքները ժամանում են մաքսային մարմնի աշխատանքային ժամերից դուրս, ապա՝ այդ մաքսային մարմնի աշխատանքային ժամն սկսելու պահից 3 ժամվա ընթացքում.

2) ջրային, օդային կամ երկաթուղային տրանսպորտի օգտագործմամբ փոխադրվող ապրանքների դեպքում՝ միջազգային փոխադրում իրականացնելիս նավահանգստի, օդանավակայանի կամ երկաթուղային կայարանի տեխնոլոգիական գործընթացով (ժամանակացույցով) սահմանված ժամանակի կամ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված այլ ժամկետի ընթացքում:

4. Սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված գործողությունները փոխադրողի անունից կարող են կատարվել այդ փոխադրողի հանձնարարությամբ գործող անձանց կողմից, եթե դա թույլատրվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

5. Մաքսային մարմնի պահանջով փոխադրողը պարտավոր է ներկայացնել ապրանքները:

6. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելու պահից 1 ժամվա ընթացքում նշանակման մաքսային մարմինը գրանցում է դրանք ներկայացնելու փաստը՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող կարգով:

7. Նշանակման մաքսային մարմինն ավարտում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը հնարավորինս կարճ ժամկետներում, բայց սույն հոդվածի 3-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելու փաստը գրանցելու պահից մաքսային մարմնի աշխատանքային ժամերի 4 ժամից ոչ ուշ, իսկ եթե այդ փաստաթղթերը ներկայացնելու փաստը գրանցվել է ավելի շուտ, քան մաքսային մարմնի աշխատանքային ժամերի ավարտին նախորդող 4 ժամը, ապա՝ այդ մաքսային մարմնի աշխատանքային ժամերն սկսելու պահից 4 ժամվա ընթացքում:

8. Եթե մաքսային մարմինը կայացնում է մաքսային զննում անցկացնելու մասին որոշում, ապա «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու ժամկետը նշանակման մաքսային մարմնի ղեկավարի (պետի), վերջինիս կողմից լիազորված՝ նշանակման մաքսային մարմնի ղեկավարի տեղակալի (պետի տեղակալի) կամ նրանց փոխարինող անձանց գրավոր թույլտվությամբ կարող է երկարաձգվել մաքսային զննում անցկացնելու համար անհրաժեշտ ժամանակով, բայց ոչ ավելի, քան սույն հոդվածի 3-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելու փաստի գրանցման օրվան հաջորդող օրվանից 10 աշխատանքային օրով, եթե անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված չէ ավելի կարճ ժամկետ՝ կախված տրանսպորտի այն տեսակից, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը):

9. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը ձևակերպվում է մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի օգտագործմամբ՝ էլեկտրոնային փաստաթուղթ կազմելու միջոցով կամ տարանցման հայտարարագրի կամ որպես տարանցման հայտարարագիր օգտագործվող այլ փաստաթղթերի վրա համապատասխան նշումներ կատարելու միջոցով:

10. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգը, այդ թվում՝ կախված տրանսպորտի այն տեսակից, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը), սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

11. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել այն դեպքերը, երբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելով, մաքսային հայտարարագիրը գրանցելով, ապրանքները բաց թողնելով, Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնմամբ, ինչպես նաև սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան մաքսային մարմինների կողմից ապրանքներն արգելանքի վերցնելով (արգելապահելով):

«Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգը, այդ թվում՝ կախված տրանսպորտի այն տեսակից, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը), այդ դեպքերում սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

12. Սույն Օրենսգրքի 145-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված դեպքում, ինչպես նաև՝ այն դեպքում, երբ ապրանքները հասցվել են նշանակման մաքսային մարմնից տարբեր մաքսային մարմին, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է սույն հոդվածով սահմանված կարգով:

13. Եթե ապրանքները լրիվ կամ մասնակիորեն չեն հասցվել ապրանքների առաքման վայրը, և մաքսային ընթացակարգի գործողությունը չի ավարտվել սույն հոդվածի 12-րդ կետով նախատեսված դեպքերում, ապա «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարում է:

«Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության դադարման հետ կապված մաքսային

գործառնությունների իրականացման կարգը, ժամկետները, որոնց ընթացքում «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը ենթակա է դադարման, ինչպես նաև «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության դադարման ձևակերպման կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

14. Երկրորդ կամ երրորդ տիպի վկայականներ ունեցող լիազորված տնտեսական օպերատորի կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում) ստեղծված մաքսային հսկողության գոտի ապրանքները հասցնելու դեպքում «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է սույն Օրենսգրքի 440-րդ հոդվածով սահմանված առանձնահատկություններով:

Հոդված 152. Ապրանքների առաքման վայր դրանք հասցնելուց հետո իրականացվող մաքսային գործառնությունները

1. Եթե անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ, ապա սույն Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելու փաստը նշանակման մաքսային մարմնի կողմից գրանցելուց հետո սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերում նշված անձինք պարտավոր են իրականացնել ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու կամ դրանց մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնությունները՝

1) ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող ապրանքների դեպքում՝ փաստաթղթերը ներկայացնելու փաստը նշանակման մաքսային մարմնի կողմից գրանցելուց հետո մաքսային մարմնի աշխատանքային ժամերի 8 ժամից ոչ ուշ.

2) նավերի, օդանավերի կամ երկաթուղային տրանսպորտի օգտագործմամբ փոխադրվող ապրանքների դեպքում՝ միջազգային փոխադրում իրականացնելիս նավահանգստի, օդանավակայանի կամ երկաթուղային կայարանի տեխնոլոգիական գործընթացով (ժամանակացույցով) սահմանված ժամանակի կամ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված այլ ժամկետի ընթացքում:

2. Նավերի օգտագործմամբ փոխադրվող ապրանքների դեպքում ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու հետ կապված մաքսային գործառնությունները պարտավոր են իրականացնել սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի վեցերորդ պարբերությունում և 4-րդ ենթակետում նշված անձինք:

3. Սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերում նշված անձանց կողմից սույն հոդվածի 1-ին կետի առաջին պարբերությամբ նախատեսված մաքսային գործառնությունները չիրականացնելու դեպքում փոխադրողը պարտավոր է իրականացնել ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու հետ կապված մաքսային գործառնությունները սույն Օրենսգրքի 16-րդ գլխին համապատասխան՝ փաստաթղթերը ներկայացնելու փաստը նշանակման մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվան հաջորդող 1 աշխատանքային օրվանից ոչ ուշ:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու կամ դրանց մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնությունները սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերում նշված անձանց կողմից չիրականացնելու մասին փոխադրողին ծանուցելու ժամկետները և (կամ) կարգը:

4. Սույն հոդվածի 1-3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ապրանքների նկատմամբ նախնական մաքսային հայտարարագրում է իրականացվել:

5. Ապրանքների մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնությունները սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան իրականացնելիս սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 1-3-րդ ենթակետերում նշված անձինք պարտավոր են իրականացնել ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու հետ կապված մաքսային գործառնությունները սույն Օրենսգրքի 16-րդ գլխին համապատասխան՝ ստորև ներկայացվածներն ստանալու պահից 3 ժամվա ընթացքում՝

1) մաքսային հայտարարագրի հետկանչի մասին մաքսային մարմնի թույլտվություն՝ սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան.

2) ապրանքների բացթողման ժամկետի կասեցման մասին մաքսային մարմնի որոշում՝ սույն Օրենսգրքի 124-րդ հոդվածին համապատասխան.

3) ապրանքների բացթողման մերժում՝ սույն Օրենսգրքի 125-րդ հոդվածին համապատասխան:

6. Ապրանքները, որոնց նկատմամբ սույն հոդվածի 1-ին և 4-րդ կետերում նշված ժամկետներում չեն իրականացվել սույն հոդվածով սահմանված մաքսային գործառնությունները, մաքսային մարմինների կողմից արգելանքի են վերցվում (արգելապահվում են)՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

7. Սույն հոդվածի դրույթները չեն կիրառվում՝

1) Միության մաքսային տարածք ժամանած Միության ապրանքների և սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 4-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքների նկատմամբ, որոնք Միության անդամ չհանդիսացող պետության տարածքով փոխադրման (տրանսպորտային փոխադրման) նպատակով ձևակերպված են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով.

2) միջազգային փոստային առաքանիների նկատմամբ.

3) Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների նկատմամբ՝ մեկնման վայրում «մաքսային

տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտի դեպքում.

4) երկրորդ կամ երրորդ տիպի վկայական ունեցող լիազորված տնտեսական օպերատորի կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում) ստեղծված մաքսային հսկողության գոտի հասցված ապրանքների նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտի դեպքում:

Հոդված 153. Միության մաքսային տարածքով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) դեպքում՝ դրանց նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացումն ու դադարումը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող օտարերկրյա ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է՝

1) հայտարարատուի համար՝ մաքսային մարմնի կողմից տարանցման հայտարարագրի գրանցման պահից.

2) անդամ պետության երկաթուղային փոխադրողի համար, որը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներն ընդունել է անդամ պետություններից մեկի տարածքի սահմաններում երկաթուղային տրանսպորտով փոխադրման համար՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտի միջազգային պայմանագրերով և Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների Երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի ակտերով սահմանված կարգով, եթե ապրանքների փոխանցումն իրականացվում է անդամ պետությունների երկաթուղային փոխադրողների միջև կամ անդամ պետությունների՝ տրանսպորտի ոլորտի օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե ապրանքների փոխանցումն իրականացվում է մեկ անդամ պետության երկաթուղային փոխադրողների միջև՝ ապրանքները սահմանված կարգով փոխադրման ընդունելու պահից:

2. Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորություն չի առաջանում անձնական օգտագործման ապրանքները և միջազգային փոստային առաքանիները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում:

3. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված անդամ պետության հայտարարատուի, ինչպես նաև երկաթուղային փոխադրողի համար, որն իրականացնում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը)՝ ուղարկող մաքսային մարմնի կողմից սահմանված՝ ապրանքների առաքման վայր հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) սույն Օրենսգրքի 151-րդ հոդվածին համապատասխան «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը՝ բացառությամբ սույն կետի 2-րդ ենթակետում նշված դեպքի.

2) լիազորված տնտեսական օպերատորի կողմից ապրանքների ընդունումը՝ սույն Օրենսգրքի 440-րդ հոդվածին համապատասխան.

3) սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը, որոնց նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարել է.

4) սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան այն ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելը, որոնց նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարել է.

5) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց գանձում.

6) վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ անդամ պետությունների մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան վրա է հասել այդ օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը.

7) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողման մերժումը՝ տարանցման հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

8) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան տարանցման հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն

Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ տարանցման հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

9) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

10) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

11) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

4. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է անդամ պետության երկաթուղային փոխադրողի համար, որը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված, երկաթուղային տրանսպորտով փոխադրվող ապրանքներն այլ անդամ պետության երկաթուղային փոխադրողին է փոխանցել՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտի միջազգային պայմանագրերով և Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների Երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի ակտերով սահմանված կարգով կամ անդամ պետությունների՝ տրանսպորտի ոլորտի օրենսդրությամբ սահմանված կարգով իր անդամ պետության երկաթուղային փոխադրողին՝ սահմանված կարգով ապրանքները փոխանցելիս:

5. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման, եթե ապրանքները մաքսային մարմնի կողմից սահմանված մաքսային տարանցման ժամկետում չեն հասցվել դրանց առաքման վայր, և մաքսային ընթացակարգի գործողությունը չի ավարտվել սույն Օրենսգրքի 151-րդ հոդվածի 12-րդ կետով նախատեսված դեպքերում:

Նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը:

6. Սույն հոդվածի 5-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես եթե «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման, իսկ անձնական օգտագործման ապրանքների դեպքում՝ այնպես, ինչպես եթե անձնական օգտագործման ապրանքները բաց թողնվեին ազատ շրջանառության մեջ:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար կիրառվում են տարանցման հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ գործող ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը:

Այն դեպքում, երբ մաքսային մարմինն իր տրամադրության տակ չունի ապրանքների (դրանց բնույթի, անվանման, քանակի, ծագման և (կամ) մաքսային արժեքի) մասին ճշգրիտ տեղեկություններ, վճարման ենթակա ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար բազան որոշվում է մաքսային մարմնի մոտ առկա տեղեկությունների հիման վրա, իսկ ապրանքների դասակարգումն իրականացվում է հաշվի առնելով սույն Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ կետը:

Այն դեպքում, երբ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքների ծածկագրերը սահմանված են 10 նիշից պակաս քանակով խմբավորման մակարդակով՝

ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հարկերի հաշվարկման համար կիրառվում են ավելացված արժեքի հարկի դրույքաչափերից ամենամեծը և այդ խմբավորման մեջ մտնող այն ապրանքներին համապատասխանող ակցիզների (ակցիզային հարկի կամ ակցիզային վճարի) դրույքաչափերից ամենամեծը, որոնց նկատմամբ սահմանվել է ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը՝ հաշվի առնելով սույն կետի ութերորդ պարբերությունը:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են ելնելով ապրանքների՝ սույն Օրենսգրքի 4-րդ գլխին համապատասխան հաստատված ծագումից և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններից: Եթե ապրանքների ծագումը և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ հաստատված չեն, ապա հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը, որոնք սահմանվել են

Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն ծածկագրին դասվող ապրանքների համար, եթե ապրանքի դասակարգումն իրականացվել է 10 նիշի մակարդակով, կամ խմբավորման մեջ մտնող ապրանքների համար, եթե ապրանքների ծածկագրերը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանվել են 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով:

Ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները հետագայում պարզվելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են ելնելով այդ ճշգրիտ տեղեկություններից, իրականացվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի՝ ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված գումարների վերադարձ (հաշվանցում) կամ չվճարված գումարների բռնագանձում՝ սույն Օրենսգրքի 10-րդ և 11-րդ գլուխներին ու 76-րդ և 77-րդ հոդվածներին համապատասխան:

Միջազգային փոստային առաքանիների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման սույն Օրենսգրքի 287-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված չափով:

7. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան ժամանակավոր պահպանման հանձնելու, կամ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան այդ ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելու, կամ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան մաքսային մարմինների կողմից դրանք արգելանքի վերցնելու (արգելապահելու) դեպքում մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումից և (կամ) դրանց (լրիվ կամ մասնակի) բռնագանձումից հետո սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված՝ մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին և 76-րդ հոդվածին համապատասխան:

8. Եթե ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը կատարելու ապահովումը սույն Օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան տրամադրում է այն անձը, որը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատուն չէ, ապա այդ այլ անձը հայտարարատուի հետ միասին կրում է մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու համապարտ պարտավորություն:

9. Եթե «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներ փոխադրող՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները սույն Օրենսգրքի 343-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ուղեկցվում են անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված կազմակերպության կողմից, ապա այդ կազմակերպությունը հայտարարատուի հետ միասին կրում է ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու համապարտ պարտավորություն:

10. Եթե ապրանքների՝ երկաթուղային տրանսպորտով փոխադրման դեպքում «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատու չի հանդիսացել անդամ պետության այն երկաթուղային փոխադրողը, որը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներն ընդունել է փոխադրման համար՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտի միջազգային պայմանագրերով և Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների Երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի ակտերով կամ անդամ պետությունների՝ տրանսպորտի ոլորտի օրենսդրությամբ սահմանված կարգով, ապա այդ երկաթուղային փոխադրողը հայտարարատուի հետ միասին կրում է ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու համապարտ պարտավորություն:

Հոդված 154. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը խախտելու դեպքում անձանց պատասխանատվությունը

1. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված բոլոր ապրանքները և դրանց առնչվող փաստաթղթերը ապրանքների առաքման վայր չհասցնելու դեպքում սույն Օրենսգրքի 150-րդ հոդվածում նշված անձինք պատասխանատվություն են կրում այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի մաքսային մարմինը, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, իրականացրել է ապրանքների բացթողումը:

Ապրանքների՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ պարտականությունները չկատարելու այլ դեպքերում, այդ թվում՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների մի մասը տեղ չհասցնելու դեպքում սույն Օրենսգրքի 150-րդ հոդվածում նշված անձինք պատասխանատվություն են կրում այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում հայտնաբերվել է խախտումը:

2. Ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան երկաթուղային տրանսպորտով փոխադրելիս փոխադրողի պարտականությունները չկատարելու համար պատասխանատվությունը կրում է այն երկաթուղային փոխադրողը, որն ապրանքներն ընդունել է անդամ պետություններից մեկի տարածքով

փոխադրման համար՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտի միջազգային պայմանագրերով և Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների Երկաթուղային տրանսպորտի հարցերով խորհրդի ակտերով կամ անդամ պետությունների՝ տրանսպորտի ոլորտի օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե ապրանքների փոխանցումն իրականացվում է մեկ անդամ պետության երկաթուղային փոխադրողների միջև:

Ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան երկաթուղային տրանսպորտով փոխադրելիս պարտականությունները չկատարելու համար սույն կետի առաջին պարբերությունում նշված երկաթուղային փոխադրողը պատասխանատվություն է կրում այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքով փոխադրման համար ապրանքներն ընդունվել են:

Գլուխ 23

«Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգը

Հոդված 155. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի բովանդակությունը և կիրառումը

1. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգը օտարերկրյա ապրանքների առնչությամբ կիրառելի մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան՝ այդպիսի ապրանքները պահպանվում են մաքսային պահեստում՝ առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի վճարման՝ պահպանելով այդ մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և դրանց օգտագործման պայմանները՝ այդպիսի մաքսային ընթացակարգին համապատասխան:

2. Այն ապրանքները, որոնք ձևակերպվել են «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով, պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը:

3. Թույլատրվում է «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի կիրառումը՝

1) «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության կասեցման համար՝ նախկինում «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելու միջոցով.

2) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության կասեցման համար՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները և (կամ) նախկինում «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման արդյունքները «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելու միջոցով.

3) «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության կասեցման համար՝ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները և (կամ) նախկինում «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման արդյունքները «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելու միջոցով:

4. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի կիրառումը թույլատրվում է այն ապրանքների առնչությամբ, որոնք խոշոր եզրաչափեր ունենալու պատճառով կամ բեռնման, բեռնաթափման և (կամ) պահպանման հատուկ պայմանների հետևանքով չեն կարող տեղավորվել մաքսային պահեստում:

Այդպիսի ապրանքների պահպանումը կարող է իրականացվել այն վայրերում, որոնք չեն հանդիսանում մաքսային պահեստներ՝ մաքսային մարմնի կողմից այդպիսի վայրերում պահպանման թույլտվության առկայության դեպքում, որը տրվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

5. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու այն ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ չի կիրառվում «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգը:

Հոդված 156. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և այդ մաքսային ընթացակարգին համապատասխան՝ դրանց օգտագործման պայմանները

1. Ապրանքները «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

1) ապրանքների պիտանիության և (կամ) իրացման ժամկետը դրանց մաքսային հայտարարագրման օրվա դրությամբ, «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգին համապատասխան, կազմում է 180 օրացուցային օրից ավելի.

2) արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

2. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմաններն են՝

1) ապրանքները մաքսային պահեստում տեղավորելը և մաքսային պահեստում դրանց գտնվելը, իսկ սույն Օրենսգրքի 155-րդ հոդվածի 4-րդ կետում նշված ապրանքները՝ այն վայրերում, որոնք նշված են ապրանքները մաքսային պահեստ չհանդիսացող վայրում պահելու մաքսային մարմնի թույլտվության մեջ.

2) «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը պահպանելը.

3) «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հետ կապված գործողություններ կատարելիս սույն Օրենսգրքի 158-րդ հոդվածի դրույթները պահպանելը:

Հոդված 157. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը

1. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը չի կարող գերազանցել ապրանքներն այդ մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից սկսած 3 տարին՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերի:

2. Միության մաքսային տարածքում գտնվող օտարերկրյա ապրանքների առնչությամբ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգը մի քանի անգամ կիրառելիս, այդ թվում՝ այն դեպքում, երբ որպես այդ ապրանքների հայտարարատու հանդես են գալիս տարբեր անձինք, «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողության ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված ժամկետը:

3. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները մինչև սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված ժամկետը լրանալը պետք է ձևակերպվեն սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով կամ բաց թողնվեն որպես պաշար՝ սույն Օրենսգրքի 39-րդ գլխին համապատասխան:

Սահմանափակ պիտանիության և (կամ) իրացման ժամկետ ունեցող ապրանքները պետք է այլ մաքսային ընթացակարգով ձևակերպվեն ոչ ուշ, քան պիտանիության և (կամ) իրացման ժամկետը լրանալուց 180 օրացուցային օր առաջ:

4. Մաքսային պահեստի գործունեության դադարեցման դեպքում այն ապրանքները, որոնք ձևակերպվել են «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով, և որոնք գտնվում են այդ մաքսային պահեստում, այդ մաքսային պահեստի գործունեության դադարեցման օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ, քան 60 օրացուցային օրվա ընթացքում պետք է տեղավորվեն այլ մաքսային պահեստում կամ ձևակերպվեն սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով կամ բաց թողնվեն որպես պաշար՝ սույն Օրենսգրքի 39-րդ գլխին համապատասխան:

Հոդված 158. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հետ կատարվող գործողությունները

1. Ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձինք կամ նրանց ներկայացուցիչներն իրավունք ունեն «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հետ կատարելու դրանց պահպանվածությունն ապահովելու համար անհրաժեշտ ընթացիկ գործողություններ, այդ թվում՝ զննելու և չափելու ապրանքները, դրանք տեղափոխելու մաքսային պահեստի սահմաններում, իսկ սույն Օրենսգրքի 155-րդ հոդվածի 4-րդ կետում նշված ապրանքների առնչությամբ՝ այդպիսի ապրանքների պահպանման վայրի սահմաններում՝ պայմանով, որ այդ գործողությունները չեն հանգեցնի ապրանքների վիճակի փոփոխությանը, դրանց փաթեթվածքի և (կամ) նույնականացման միջոցների խախտմանը:

2. Մաքսային մարմնի թույլտվությամբ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հետ կարող են կատարվել հավաքման պարզ գործողություններ, ինչպես նաև գործողություններ՝ կապված՝

1) ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրության հետ.

2) ապրանքների վաճառքի և փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար նախապատրաստման հետ՝ ներառյալ խմբաքանակի մասնատումը, առաքումների կազմավորումը, տեսակավորումը, փաթեթավորումը, վերափաթեթավորումը, դրոշմավորումը, ապրանքային տեսքի բարելավման հետ կապված գործողությունները.

3) տեխնիկական սպասարկման հետ՝ այն ապրանքների առնչությամբ, որոնց պահպանման ժամկետի ընթացքում պահանջվում է այդպիսի գործողությունների կատարում:

3. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հետ կատարվող գործողությունները չպետք է փոփոխեն այդ ապրանքների բնութագրերը, որոնք կապված են ծածկագրի փոփոխության հետ՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան:

4. Չի թույլատրվում «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների օգտագործումը ըստ իրենց ֆունկցիոնալ նշանակության:

5. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված բոլոր ապրանքների կամ դրանց մի մասի առնչությամբ կարող են կատարվել այդ ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքների փոխանցում նախատեսող գործարքներ:

Հոդված 159. Ապրանքների պահպանումը մաքսային պահեստում

1. Ապրանքները պետք է տեղավորվեն մաքսային պահեստում կամ ապրանքները մաքսային պահեստ չհանդիսացող

վայրում պահպանելու՝ մաքսային մարմնի թույլտվության մեջ նշված վայրերում, դրանք «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2. Այն ապրանքները, որոնք կարող են վնաս պատճառել մյուս ապրանքներին, կամ որոնց համար պահանջվում են պահպանման հատուկ պայմաններ, պետք է տեղավորվեն այդպիսի ապրանքների պահպանման պայմաններին համապատասխան սարքավորված մաքսային պահեստներում:

Հոդված 160. Մաքսային պահեստում պահպանման ժամանակահատվածում ոչ պիտանի դարձած, փչացած կամ վնասված ապրանքները

Մաքսային պահեստում պահպանման ժամանակահատվածում վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչ պիտանի դարձած, փչացած կամ վնասված ապրանքները հայտարարատուի կողմից ընտրված մաքսային ընթացակարգով ձևակերպվելու դեպքում դիտարկվում են որպես ոչ պիտանի, փչացած կամ վնասված վիճակում Միության մաքսային տարածք ներմուծված:

Հոդված 161. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը և դադարեցնելը

1. Մինչև սույն Օրենսգրքի 157-րդ հոդվածով նախատեսված՝ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալը այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝

1) ապրանքներն օտարերկրյա ապրանքների առնչությամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով՝ սույն Օրենսգրքով նախատեսված պայմաններով ձևակերպելով՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի, եթե սույն կետով այլ բան սահմանված չէ.

2) վերսկսելով «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը, որը կասեցվել էր՝ սույն Օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան.

3) վերսկսելով «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը, որը կասեցվել էր՝ սույն Օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան.

4) վերսկսելով «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը, որը կասեցվել էր՝ սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան.

5) ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով, եթե այդ ապրանքները ձևակերպված են այդ ընթացակարգով այն անդամ պետության տարածքից այլ անդամ պետության տարածք փոխադրման համար, որի մաքսային մարմնի կողմից կատարվել է ապրանքների բացթողումը «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով դրանք ձևակերպելիս.

6) ապրանքները որպես պաշար բաց թողնելով՝ սույն Օրենսգրքի 39-րդ գլխին համապատասխան.

7) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ մաքսային մարմինների կողմից՝ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի արդյունքում այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը ճանաչվելով.

8) Հանձնաժողովի և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող հանգամանքների ի հայտ գալով, նախքան որոնց ի հայտ գալը ապրանքները գտնվում են մաքսային հսկողության տակ:

2. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները մաքսային ընթացակարգերով կարող են ձևակերպվել մեկ կամ մի քանի խմբաքանակներով:

3. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում ապրանքները կարող են ձևակերպվել այլ մաքսային ընթացակարգերով «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու համար՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան՝ ապրանքի այն ծածկագրի հայտագրմամբ, որը համապատասխանում է կոմպլեկտավորված կամ ավարտուն վիճակում գտնվող ապրանքի ծածկագրին, երբ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան՝ հնարավոր է Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի XVI բաժնի ծանոթագրությունների և (կամ) Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանության 2(ա) կանոնի կիրառումը՝ հետևյալ պայմանների պահպանմամբ՝

1) «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու համար մաքսային ընթացակարգերով ձևակերպվող ապրանքների հայտարարատուն միևնույն անձն է.

2) ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխվել են մեկ գործարքի շրջանակներում.

3) Միության մաքսային սահմանով տեղափոխվող՝ չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված

կամ անավարտ վիճակում ապրանքների դասակարգման մասին որոշումը ներկայացնելը՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում.

4) Հանձնաժողովի կողմից սահմանվող մյուս պայմանները պահպանվել են:

4. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելուց հետո ապրանքները ենթակա են մաքսային պահեստից արտահանման սույն հոդվածի 1-ին կետի 1-6-րդ և 8-րդ ենթակետերով նախատեսված հանգամանքների ի հայտ գալու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը չավարտելու դեպքում «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարում է սույն Օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված ժամկետները լրանալուց հետո, իսկ այդ ապրանքներն արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

6. Այն դեպքում, երբ սույն Օրենսգրքի 157-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ պարբերության մեջ և 4-րդ կետում նշված գործողությունները դրանցում նշված ժամկետներում չեն կատարվել, այդ ժամկետները լրանալուց հետո «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարում է, իսկ ապրանքներն արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

Հոդված 162. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացումը և դադարումը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է՝

1) հայտարարատուի համար՝ մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագրի գրանցման պահից.

2) մաքսային պահեստի տիրապետողի համար՝ ապրանքները մաքսային պահեստում տեղավորելու պահից:

2. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը հայտարարատուի համար դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) ապրանքները մաքսային պահեստում տեղավորելը.

2) «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը՝ սույն Օրենսգրքի 161-րդ հոդվածին համապատասխան, եթե ապրանքների պահպանումը իրականացվել է ոչ մաքսային պահեստում, այդ թվում՝ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը սույն հոդվածի 6-րդ կետի 1-ին ենթակետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո:

3. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը մաքսային պահեստի տիրապետողի համար դադարում է սույն Օրենսգրքի 161-րդ հոդվածին համապատասխան «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելիս, այդ թվում՝ սույն հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելիս:

4. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց համար հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան՝ այն ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելը, որոնց առնչությամբ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվել է.

2) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը կատարելը և (կամ) սույն հոդվածի 7-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանք բռնագանձելը.

3) վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան վրա է հասել այդ օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը.

4) «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը մերժելը՝

ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

5) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան ապրանքների հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

6) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

7) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

8) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ մաքսային ընթացակարգերից որևէ մեկով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումը ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական վարույթի վարման) ընթացքում, և որոնց վերաբերյալ ընդունվել է որոշում՝ դրանք վերադարձնելու մասին, եթե նախկինում այդպիսի ապրանքների բացթողում չի իրականացվել:

5. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման՝ սույն հոդվածի 6-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

6. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) հայտարարատուի համար՝

ապրանքների կորստի օրը, եթե ապրանքները կորել են մինչև դրանք մաքսային պահեստում տեղավորելը՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի արդյունքում անվերադարձ կորստի, իսկ եթե այդ օրը սահմանված չէ՝ ապրանքները «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը.

ապրանքների կորստի կամ փոխանցման օրը, եթե ապրանքները կորել են կամ փոխանցվել են այլ անձի մինչև «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը, եթե ապրանքների պահպանումն իրականացվել է ոչ մաքսային պահեստում՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի արդյունքում անվերադարձ կորստի, իսկ եթե այդ օրը սահմանված չէ՝ ապրանքները «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը.

ապրանքները պահպանման վայրի սահմաններից դուրս արտահանելու դեպքում, եթե ապրանքների պահպանումն իրականացվել է ոչ մաքսային պահեստում՝ սույն Օրենսգրքի 155-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ այդ արտահանման օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ՝ ապրանքները «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը.

2) մաքսային պահեստի տիրապետողի համար՝

ապրանքների կորստի օրը, եթե ապրանքները կորել են՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի արդյունքում անվերադարձ կորստի, իսկ եթե այդ օրը սահմանված չէ՝ ապրանքները մաքսային պահեստում տեղավորելու օրը.

ապրանքները պահեստից հանելու օրը, եթե այդ ապրանքները մաքսային պահեստից հանվել են՝ առանց «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը հաստատող փաստաթղթերը նրան ներկայացնելու, իսկ եթե այդ օրը սահմանված չէ՝ ապրանքները մաքսային պահեստում տեղավորելու օրը:

7. Սույն հոդվածի 6-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի սակագնային առանձնաշնորհումների և վճարման արտոնությունների կիրառման:

Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը, որոնք գործում են ապրանքները «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ:

Այն դեպքում, երբ մաքսային մարմինն իր տրամադրության տակ չունի ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար անհրաժեշտ ճշգրիտ տեղեկություններ, ապրանքների մաքսային արժեքը որոշվում է մաքսային մարմնի մոտ առկա տեղեկությունների հիման վրա:

Ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար անհրաժեշտ ճշգրիտ տեղեկությունները հետագայում պարզվելու դեպքում ապրանքների մաքսային արժեքը որոշվում է՝ ելնելով այդ ճշգրիտ տեղեկություններից, և կատարվում է

ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի՝ ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված գումարների վերադարձ (հաշվանցում) կամ սույն Օրենսգրքի 10-րդ և 11-րդ գլուխներին և 76-րդ և 77-րդ հոդվածներին համապատասխան չվճարված գումարների բռնագանձում:

9. Սույն Օրենսգրքի 161-րդ հոդվածին համապատասխան՝ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգի գործողության ավարտի, կամ ապրանքներն օտարերկրյա ապրանքների առնչությամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան ձևակերպելու, կամ այդ ապրանքները մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումից և (կամ) դրանց բռնագանձումից հետո (ամբողջությամբ կամ մասնակի) սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցվելու (արգելապահվելու) դեպքում մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի՝ սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին և 76-րդ հոդվածին համապատասխան:

Գլուխ 24

«Մաքսային տարածքում վերամշակում»

մաքսային ընթացակարգը

Հոդված 163. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի բովանդակությունը և կիրառումը

1. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգն օտարերկրյա ապրանքների առնչությամբ կիրառելի մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան՝ Միության մաքսային տարածքում այդպիսի ապրանքների հետ կատարվում են վերամշակման գործողություններ՝ դրանց վերամշակման արդյունքներ ստանալու նպատակով, որոնք նախատեսված են Միության մաքսային տարածքից հետագա արտահանման համար՝ առանց այդպիսի օտարերկրյա ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման՝ պահպանելով այդ մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և դրանց օգտագործման պայմանները՝ այդ մաքսային ընթացակարգին համապատասխան:

2. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը, իսկ Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքները (վերամշակման արդյունքները, թափոններն ու մնացորդները) ստանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակ:

3. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառումը «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության կասեցման համար թույլատրվում է «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու միջոցով:

4. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու այն ապրանքների ցանկը, որոնց առնչությամբ չի կիրառվում «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգը:

Հոդված 164. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և այդ մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանները

1. Ապրանքները «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

1) անդամ պետությունների լիազորված մարմնի կողմից տրված և սույն Օրենսգրքի 168-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները պարունակող՝ Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթի առկայությունը: Որպես այդպիսի փաստաթուղթ կարող է օգտագործվել ապրանքների հայտարարագիրը, եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառման նպատակը ապրանքների վերանորոգումն է, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ դեպքերում.

2) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները մաքսային մարմինների կողմից նույնականացնելու հնարավորությունը՝ դրանց վերամշակման արդյունքներում՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 172-րդ հոդվածին համապատասխան այդպիսի օտարերկրյա ապրանքները համարժեք ապրանքներով փոխարինելու դեպքերի.

3) արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

2. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների

օգտագործման պայմաններն են՝

1) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության սահմանված ժամկետը պահպանելը.

2) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հետ կապված գործողություններ կատարելու դեպքում սույն Օրենսգրքի 166-րդ հոդվածի դրույթները պահպանելը.

3) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների՝ Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթում նշված անձանց մոտ գտնվելը և այդ անձանց կողմից ապրանքների վերամշակման գործողությունների կատարման համար այդպիսի ապրանքներն օգտագործելը:

3. Սույն գլխի կիրառման նպատակներով «վերամշակման արդյունքներում օտարերկրյա ապրանքների նույնականացում մաքսային մարմնի կողմից» նշանակում է սույն Օրենսգրքի 167-րդ հոդվածով սահմանված եղանակներից մեկով այն փաստի սահմանումը, որ վերամշակման արդյունքներ ստանալու նպատակով Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման գործողությունների են ենթարկվել հենց այն ապրանքները, որոնք ձևակերպվել են «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով:

Հոդված 165. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը

1. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը սահմանվում է Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետի հիման վրա, որը սահմանված է Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման պայմանների փաստաթղթում:

2. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության սահմանված ժամկետը երկարաձգվում է անձի դիմումի հիման վրա Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետը երկարաձգելիս:

3. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է նախատեսված լինել, որ Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետը երկարաձգելու դեպքում «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել այն լրանալուց հետո 10 աշխատանքային օրվանից ոչ ուշ: Մաքսային մարմնի կողմից սահմանված՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը երկարաձգելիս այն լրանալուց հետո այդ մաքսային ընթացակարգի գործողությունը վերսկսվում է այդ մաքսային ընթացակարգը դադարելու օրվանից:

Հոդված 166. Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունները

1. Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման գործողությունները ներառում են՝

1) ապրանքների վերամշակումը կամ մշակումը.

2) ապրանքների պատրաստումը՝ ներառյալ մոնտաժը, հավաքումը, քանդումը և հարմարեցումը.

3) ապրանքների վերանորոգումը՝ ներառյալ դրանց վերականգնումը, բաղադրատարրերի փոխարինումը, արդիականացումը.

4) այնպիսի ապրանքների օգտագործումը, որոնք նպաստում են վերամշակման արդյունքների արտադրությանը կամ դյուրացնում են դրանց արտադրությունը, նույնիսկ եթե այդ ապրանքներն ամբողջությամբ կամ մասամբ գործածվում են վերամշակման գործընթացում: Նշված գործողությունը պետք է կատարվի սույն կետի 1-3-րդ ենթակետերում նշված գործողություններից որևէ մեկի հետ միաժամանակ:

2. Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների շարքին չեն դասվում՝

1) ապրանքները վաճառքի և փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար նախապատրաստելու ժամանակ դրանց պահպանվածությունն ապահովող գործողությունները, այդ թվում՝ ապրանքների փաթեթավորումը, կշռածրարումը և տեսակավորումը, որոնց ժամանակ ապրանքները չեն կորցնում իրենց անհատական բնութագրերը.

2) ծին ստանալը, կենդանիների, ներառյալ՝ թռչունների, ձկների բուծումը և բտումը, ինչպես նաև խեցգետնանմանների և կակղամորթների բուծումը.

3) ծառերի և այլ բույսերի աճեցումը.

4) տեղեկությունների, ձայնագրությունների և տեսագրությունների պատճենումը և բազմացումը ցանկացած տեսակի տեղեկակիրների վրա.

5) տեխնոլոգիական գործընթացներում որպես օժանդակ միջոցներ օտարերկրյա ապրանքների օգտագործումը (սարքավորումներ, հաստոցներ, հարմարանքներ և այլն).

6) Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ գործողություններ:

3. Միության մաքսային տարածքում վերամշակման գործողություններ կատարելիս թույլատրվում է Միության ապրանքների օգտագործումը՝ բացառությամբ այն ապրանքների, որոնց նկատմամբ անդամ պետությունների

օրենսդրությամբ սահմանված են արտահանման մաքսատուրքերի դրույքաչափեր, և որոնք ընդգրկված են Հանձնաժողովի կողմից սահմանվող ցանկում:

Հանձնաժողովն իրավունք ունի որոշելու այն դեպքերը, երբ Միության այն ապրանքները, որոնց առնչությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված են արտահանման մաքսատուրքերի դրույքաչափեր, և որոնք ընդգրկված են սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված ցանկում, կարող են օգտագործվել Միության մաքսային տարածքում վերամշակման գործողություններ կատարելիս:

Հոդված 167. Օտարերկրյա ապրանքների նույնականացումը՝ դրանց վերամշակման արդյունքներում

Օտարերկրյա ապրանքները դրանց վերամշակման արդյունքներում նույնականացնելու նպատակով կարող են կիրառվել հետևյալ եղանակները՝

օտարերկրյա ապրանքների վրա հայտարարատուի, վերամշակման գործողություններ կատարող անձի կամ մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից կնիքների, դրոշմակնիքների, թվային և այլ դրոշմավորման զետեղում.

օտարերկրյա ապրանքների մանրամասն նկարագրում, լուսանկարում, մասշտաբային պատկերում.

օտարերկրյա ապրանքների և դրանց վերամշակման արդյունքների՝ նախապես վերցված փորձանմուշների և (կամ) նմուշների համադրում.

ապրանքների առկա դրոշմավորման օգտագործում, այդ թվում՝ սերիական համարների տեսքով.

այլ եղանակներ, որոնք կարող են կիրառվել՝ ելնելով ապրանքների բնույթից և Միության մաքսային տարածքում կատարվող վերամշակման գործողություններից, այդ թվում՝ Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների կատարման տեխնոլոգիական գործընթացում օտարերկրյա ապրանքների օգտագործման, ինչպես նաև վերամշակման արդյունքների արտադրության տեխնոլոգիայի մասին մանրամասն տեղեկություններ պարունակող՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության կամ Միության մաքսային տարածքում վերամշակման գործողություններ կատարելու ընթացքում մաքսային հսկողություն անցկացնելու միջոցով:

Հոդված 168. Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթը

1. Անդամ պետության լիազորված մարմնի կողմից տրվող՝ Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթը կարող է ստանալ այն անդամ պետության ցանկացած անձ, որի տարածքում տրվում է այդ փաստաթուղթը, այդ թվում՝ վերամշակման գործողություններ կատարող կամ այդպիսի գործողություններ անմիջականորեն չկատարող անձը:

2. Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթը պետք է ներառի տեղեկություններ՝

1) փաստաթուղթը տրամադրած՝ անդամ պետության լիազորված մարմնի մասին.

2) այն անձի մասին, որին տրվել է փաստաթուղթը.

3) այն անձի (անձանց) մասին, որը (որոնք) անմիջապես կատարելու է (կատարելու են) Միության մաքսային տարածքում վերամշակման գործողություններ.

4) օտարերկրյա ապրանքների և դրանց վերամշակման արդյունքների մասին (անվանումը, ծածկագիրը՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, քանակը և արժեքը): Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է նախատեսվել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ապրանքային դիրքի մակարդակով օտարերկրյա ապրանքների և դրանց վերամշակման արդյունքների ծածկագիրը նշելու հնարավորությունը, ինչպես նաև՝ ապրանքների և դրանց վերամշակման արդյունքների արժեքը չնշելու հնարավորությունը.

5) Միության այն ապրանքների մասին, որոնց առնչությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված են օտարերկրյա ապրանքների վերամշակման տեխնոլոգիական գործընթացի իրականացումն ապահովող արտահանման մաքսատուրքերի դրույքաչափերը (անվանումը, ծածկագիրը՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, և քանակը), եթե դա սահմանված է անդամ պետության օրենսդրությամբ.

6) ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքը հաստատող փաստաթղթերի մասին.

7) վերամշակման արդյունքների ելքի չափաքանակները՝ քանակական և (կամ) տոկոսային արտահայտությամբ.

8) մաքսային տարածքում վերամշակման գործողությունների, դրանց կատարման եղանակների մասին.

9) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող օտարերկրյա ապրանքները դրանց վերամշակման արդյունքներում նույնականացնելու եղանակների մասին.

10) թափոնների և մնացորդների մասին (անվանումը, ծածկագիրը՝ Արտաքին տնտեսական գործունեության

ապրանքային անվանացանկին համապատասխան, քանակը և արժեքը)։ Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է նախատեսվել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ապրանքային դիրքի մակարդակով թափոնների և մնացորդների ծածկագիրը նշելու հնարավորություն, ինչպես նաև այդ թափոնների ու դրանց մնացորդների արժեքը չնշելու հնարավորություն.

11) Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետի մասին.

12) ապրանքները համարժեք ապրանքներով փոխարինելու մասին՝ այնպես, ինչպես դրանք սահմանված են սույն Օրենսգրքի 172-րդ հոդվածում, եթե այդպիսի փոխարինում թույլատրվում է.

13) առևտրային նպատակներով թափոնների հետագա օգտագործման հնարավորության մասին.

14) այն մաքսային մարմնի (մարմինների) մասին, որում (որոնցում) ենթադրվում են ապրանքների՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպումը և այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը:

3. Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետը չի կարող գերազանցել 3 տարին կամ ապրանքների առանձին կատեգորիաների համար Հանձնաժողովի կողմից սահմանվող՝ ավելի տևական ժամկետը:

4. Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետը ներառում է՝

1) ապրանքների վերամշակման արտադրական գործընթացի տևողությունը.

2) Միության մաքսային տարածքից վերամշակման արդյունքների փաստացի արտահանման և օտարերկրյա ապրանքների թափոնների ու մնացորդների տնօրինման հետ կապված մաքսային գործառնությունների կատարման համար անհրաժեշտ ժամանակը:

5. Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետը հաշվարկվում է ապրանքները «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից, իսկ ապրանքների՝ մի քանի խմբաքանակներով մաքսային հայտարարագրման դեպքում՝ ապրանքների առաջին խմբաքանակը «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից:

6. Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման ժամկետը կարող է երկարաձգվել սույն հոդվածի 3-րդ կետում նշված ժամկետի սահմաններում:

7. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել լրացուցիչ տեղեկություններ, որոնք պետք է նշվեն Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթում:

8. Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթի ձևը, դրա լրացման կարգը և այդպիսի փաստաթղթի տրամադրման, դրա մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու, ինչպես նաև դրա հետկանչի (չեղյալ ճանաչելու) և (կամ) դրա գործողությունը վերսկսելու կարգը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

9. Ապրանքների հայտարարագիրը որպես Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթ օգտագործելու դեպքում Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման պայմանների վերաբերյալ տեղեկությունները նշվում են հայտարարատուի կողմից ապրանքների հայտարարագրում:

Հոդված 169. Վերամշակման արդյունքների ելքի չափաքանակները

1. «Վերամշակման արդյունքների ելքի չափաքանակ» ասելով ենթադրվում են Միության մաքսային տարածքում օտարերկրյա ապրանքների որոշակի քանակի վերամշակման գործողությունների կատարման արդյունքում գոյացած՝ վերամշակման արդյունքների քանակը և (կամ) տոկոսային պարունակությունը:

2. Եթե Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների են ենթարկվում այն ապրանքները, որոնց հատկանիշները մնում են գործնականորեն անփոփոխ՝ սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխան, և արդյունքում ստացվում են անփոփոխ որակի վերամշակման արդյունքներ, ապա անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից կարող են սահմանվել վերամշակման արդյունքների ելքի ստանդարտ չափաքանակներ:

Հոդված 170. Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում գոյացած թափոնները և արտադրական կորուստները

1. Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում գոյացած թափոնները ենթակա են սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով ձևակերպման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշված թափոնները, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ճանաչվել են առևտրային նպատակներով հետագա գործածության համար ոչ պիտանի, կամ այդպիսի թափոնները, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ենթակա են թաղման, վնասազերծման, ուտիլիզացման կամ այլ ձևով ոչնչացման:

2. Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում գոյացած թափոնները հայտարարատուի կողմից ընտրված մաքսային ընթացակարգով ձևակերպվելու դեպքում դիտարկվում են որպես

Միության մաքսային տարածք այդ վիճակում ներմուծված:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված այն թափոնները, որոնք ենթակա չեն մաքսային ընթացակարգերով ձևակերպման, ստանում են Միության ապրանքների կարգավիճակ և համարվում են մաքսային հսկողության տակ չգտնվող՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ առևտրային նպատակներով հետագա գործածության համար դրանք ոչ պիտանի ճանաչելու օրվանից կամ գոյացած թափոնները թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ եղանակով ոչնչացնելու փաստը կամ այդպիսի գործողությունների կատարման համար դրանց փոխանցման փաստը հաստատող փաստաթղթերը մաքսային մարմին ներկայացնելու օրվանից:

4. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների կատարման հետևանքով անվերադարձ կորսված օտարերկրյա ապրանքները, որոնք մաքսային մարմինների կողմից ճանաչվել են որպես արտադրական կորուստ, «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելիս ենթակա չեն մաքսային ընթացակարգերով ձևակերպման:

Հոդված 171. Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների կատարման արդյունքում գոյացած՝ օտարերկրյա ապրանքների մնացորդները

Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների կատարման արդյունքում գոյացած՝ օտարերկրյա ապրանքների մնացորդները, վերամշակման արդյունքների ելքի չափաքանակներին համապատասխան, ենթակա են մաքսային ընթացակարգերով ձևակերպման՝ սույն Օրենսգրքի 173-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 172. Օտարերկրյա ապրանքները համարժեք ապրանքներով փոխարինելը

1. Մաքսային մարմնի թույլտվությամբ թույլատրվում է «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված կամ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպման համար նախատեսվող օտարերկրյա ապրանքների փոխարինում, Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթին համապատասխան, Միության այն ապրանքներով, որոնք իրենց նկարագրությամբ, որակով և տեխնիկական բնութագրերով համընկնում են այդ օտարերկրյա ապրանքների հետ (այսուհետ սույն հոդվածում՝ համարժեք ապրանքներ):

Եթե «արտահանում» մաքսային ընթացակարգով նախկինում Միության մաքսային տարածքից արտահանված ապրանքների կազմի մեջ մտնող, անսարք վիճակում գտնվող մասերը, հանգույցները, ագրեգատները Միության մաքսային տարածք են ներմուծվում վերանորոգման նպատակով, ապա Միության մաքսային տարածք ներմուծված այդ մասերին, հանգույցներին, ագրեգատներին իրենց նկարագրով, որակով և տեխնիկական բնութագրերով համապատասխանող Միության ապրանքները դիտարկվում են որպես համարժեք ապրանքներ՝ առանց դրանց սարքինության և (կամ) մաշվածության աստիճանը հաշվի առնելու:

2. Վերամշակման արդյունքները, որոնք ստացվել են Միության մաքսային տարածքում համարժեք ապրանքների վերամշակման գործողությունների արդյունքում, դիտարկվում են որպես օտարերկրյա ապրանքների վերամշակման արդյունքներ՝ սույն գլխի դրույթներին համապատասխան:

3. Համարժեք ապրանքները ստանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակ, իսկ դրանցով փոխարինված ապրանքները՝ Միության ապրանքների կարգավիճակ:

4. Այն դեպքում, երբ թույլատրվում է օտարերկրյա ապրանքների փոխարինումը համարժեք ապրանքներով, համարժեք ապրանքներից ստացված՝ վերամշակման արդյունքների արտահանումը Միության մաքսային տարածքից հնարավոր է նախքան Միության մաքսային տարածք օտարերկրյա ապրանքների ներմուծումը:

5. Օտարերկրյա ապրանքները համարժեք ապրանքներով փոխարինելու կարգը և պայմանները սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 173. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը, կասեցնելը և դադարեցնելը

1. Մինչև «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության սահմանված ժամկետը լրանալը այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝ Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքները (վերամշակման արդյունքները, թափոնները՝ բացառությամբ այն թափոնների, որոնք նշված են սույն Օրենսգրքի 170-րդ հոդվածի 3-րդ կետում, և (կամ) մնացորդները) և (կամ) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների չենթարկված օտարերկրյա ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով:

2. Մինչև «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության սահմանված ժամկետը լրանալը այդ մաքսային ընթացակարգի գործողությունը կարող է ավարտվել՝

1) Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքները (վերամշակման արդյունքները, թափոնները՝ բացառությամբ այն թափոնների, որոնք նշված են սույն Օրենսգրքի 170-րդ հոդվածի 3-րդ կետում, և (կամ) մնացորդները) և (կամ) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների չենթարկված օտարերկրյա ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով կամ օտարերկրյա ապրանքների առնչությամբ կիրառելի այլ մաքսային ընթացակարգով՝ սույն Օրենսգրքով նախատեսված պայմաններով ձևակերպելով՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի, «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի: Ընդ որում, վերամշակման արդյունքների առնչությամբ չեն վճարվում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր, և չի պահանջվում ներքին շուկայի պաշտպանության միջոցների պահպանումը հաստատող փաստաթղթեր ներկայացնելը՝ հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերից և (կամ) «Միության մասին» պայմանագրի 50-րդ հոդվածին համապատասխան սահմանված այլ տուրքերից տարբեր ձևով.

2) վերսկսելով «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը, որը կասեցվել էր՝ սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան.

3) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքների (վերամշակման արդյունքների, թափոնների և (կամ) մնացորդների) և (կամ) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների չենթարկված օտարերկրյա ապրանքների՝ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ բնականոն պայմաններում փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման ժամանակ բնական կորստի հետևանքով դրանց անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմինների կողմից ճանաչվելով.

4) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների կատարման արդյունքում գոյացած թափոնները դրանք հետագա առևտրային նպատակներով օգտագործելու համար ոչ պիտանի ճանաչելով, կամ գոյացած թափոնները թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ եղանակով ոչնչացնելու փաստը կամ այդպիսի գործողությունների կատարման համար դրանց փոխանցման փաստը հաստատող փաստաթղթերը մաքսային մարմին ներկայացնելով.

5) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների մասերը մաքսային մարմինների կողմից արտադրական կորուստներ ճանաչվելով.

6) Հանձնաժողովի և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող հանգամանքների ի հայտ գալով, նախքան որոնց ի հայտ գալը ապրանքները գտնվում են մաքսային հսկողության տակ.

3. Նախքան «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության սահմանված ժամկետը լրանալը այդ մաքսային ընթացակարգի գործողությունը կարող է կասեցվել «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները և (կամ) դրանց վերամշակման արդյունքները «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով կամ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում:

4. Վերամշակման արդյունքները մաքսային ընթացակարգով կարող են ձևակերպվել մեկ կամ մի քանի խմբաքանակներով:

5. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության սահմանված ժամկետը լրանալուց հետո այդ մաքսային ընթացակարգի գործողությունը դադարում է:

Հոդված 174. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացումն ու դադարումը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. Հայտարարատուի՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու պահից, իսկ այն ապրանքների առնչությամբ, որոնք բացթողման մասին դիմում ներկայացրած անձի մոտ հայտագրված են բացթողման համար մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու պահից:

2. Հայտարարատուի՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող

(ձևակերպված) ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) սույն Օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին կետին և 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-6-րդ ենթակետերին համապատասխան «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը՝ մինչև մաքսային մարմնի կողմից սահմանված՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետի ավարտը, այդ թվում՝ սույն հոդվածի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո.

2) ապրանքները, որոնց առնչությամբ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվել է, և (կամ) գործողությունը դադարեցված այդ մաքսային ընթացակարգի կիրառման շրջանակներում Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան.

3) ապրանքները, որոնց առնչությամբ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվել է, և (կամ) գործողությունը դադարեցված այդ մաքսային ընթացակարգի կիրառման շրջանակներում Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելը՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան.

4) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձում.

5) վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպած օտարերկրյա ապրանքների և (կամ) մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը և (կամ) փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի արդյունքում այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ դեպքերի, երբ այդպիսի ոչնչացման կամ անվերադարձ կորստի հետևանքով սույն Օրենսգրքին համապատասխան, վրա է հասել այդպիսի ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ժամկետը.

6) «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողման մերժումը՝ մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացնելը ապրանքների հայտարարագրի կամ ապրանքների բացթողման մասին դիմումի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

7) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան ապրանքների հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

8) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

9) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

10) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

4. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) ապրանքների փոխանցման օրը, եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները մինչև այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը փոխանցվել են այն անձին (անձանց), որը (որոնք) նշված չէ (նշված չեն) մաքսային տարածքում վերամշակման պայմանների մասին փաստաթղթի մեջ, իսկ եթե այդ օրը որոշված չէ՝ ապրանքները «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը.

2) ապրանքների կորստի օրը, եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված

օտարերկրյա ապրանքները կորել են մինչև այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով անվերադարձ կորստի, իսկ եթե այդ օրը որոշված չէ՝ ապրանքները «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը.

3) մաքսային մարմնի կողմից սահմանված՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալու օրը, եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը չի ավարտվել մինչև մաքսային մարմնի կողմից սահմանված՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալը:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպված լինեն «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման:

Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը, որոնք գործում են ապրանքները «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ, իսկ այն ապրանքների առնչությամբ, որոնց բացթողումը կատարվել է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ:

6. Սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան վճարվող (բռնագանձվող) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարներից վճարման են ենթակա տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների գծով տրամադրված լիներ դրանց վճարման հետաձգում՝ ապրանքները «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից մինչև ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը լրանալու օրը: Նշված տոկոսները հաշվեգրվում և վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

Այն դեպքում, երբ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն Օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան կասեցվել է, սույն կետով նախատեսված տոկոսները մաքսային ընթացակարգի գործողության կասեցման ժամանակահատվածում չեն հաշվեգրվում և չեն վճարվում:

7. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտի դեպքում կամ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները և (կամ) մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու դեպքում կամ այդ ապրանքները սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան ձևակերպելու դեպքում կամ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումից և (կամ) դրանց բռնագանձումից հետո (ամբողջությամբ կամ մասնակի) սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան այդ ապրանքները մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցվելու (արգելապահվելու) դեպքում սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին և 76-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 175. Վերամշակման արդյունքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս դրանց համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունները

1. Վերամշակման արդյունքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն գումարների չափով, որոնք ենթակա կլինեին վճարման, եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և վերամշակման արդյունքների ելքի չափաքանակներին համապատասխան՝ վերամշակման արդյունքների պատրաստման համար օգտագործված օտարերկրյա ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը, որոնք գործում են ապրանքները «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով

ձևակերպելու համար ներկայացրած ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ, իսկ այն ապրանքների առնչությամբ, որոնց բացթողումը կատարվել է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելն ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ:

Այն դեպքում, երբ մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման համար պահանջվում է արտարժույթը վերահաշվարկել անդամ պետության արժույթով, այդ վերահաշվարկը կատարվում է սույն կետի առաջին պարբերության մեջ նշված օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան վճարվող (բռնագանձվող) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարներից վճարման են ենթակա տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների գծով տրամադրված լիներ դրանց վճարման հետաձգում՝ ապրանքները «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից մինչև ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարելու օրը: Նշված տոկոսները հաշվեգրվում և վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

Այն դեպքում, երբ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն Օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան կասեցվել է, սույն կետով նախատեսված տոկոսները մաքսային ընթացակարգի գործողության կասեցման ժամանակահատվածում չեն հաշվեգրվում և չեն վճարվում:

Գլուխ 25

«Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգը

Հոդված 176. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի բովանդակությունը և կիրառումը

1. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգը Միության ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ է, որի համաձայն այդ ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքից՝ Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողություններ կատարելու արդյունքում դրանց վերամշակման այն արդյունքներն ստանալու նպատակով, որոնք նախատեսված են Միության մաքսային տարածք հետագա ներմուծման համար, առանց Միության այդ ապրանքների համար արտահանման մաքսատուրքեր վճարելու՝ այդ մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և այդ մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանները պահպանելու դեպքում:

2. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և փաստացիորեն Միության մաքսային տարածքից արտահանված ապրանքները կորցնում են Միության ապրանքի կարգավիճակը:

3. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառումը թույլատրվում է՝

1) այն ապրանքների նկատմամբ, որոնք նախկինում ձևակերպվել են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումներով զուգակցված՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառմամբ կամ այդ ապրանքների մասերի նկատմամբ, եթե այդ ապրանքները կամ դրանց մասերը վերանորոգման նպատակով արտահանվում են Միության մաքսային տարածքից և «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպման պահի դրությամբ ունեն օտարերկրյա ապրանքի կարգավիճակ.

2) Միության մաքսային տարածքից արտահանված՝

«ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ՝ սույն Օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու նպատակով.

միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ՝ սույն Օրենսգրքի 277-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերությամբ նախատեսված դեպքում:

4. Սույն հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ապրանքները ձևակերպվում են «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով՝ առանց Միության մաքսային տարածք դրանք ներմուծելու:

5. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու այն ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ չի կիրառվում «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգը:

Հոդված 177. Ապրանքները «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու և այդ մաքսային ընթացակարգին համապատասխան օգտագործելու պայմանները

1. Ապրանքները «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու

պայմաններն են՝

1) Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման պայմանների մասին անդամ պետության լիազորված մարմնի կողմից տրված և սույն Օրենսգրքի 181-րդ հոդվածով սահմանված տեղեկություններ պարունակող փաստաթղթի առկայությունը: Որպես այդպիսի փաստաթուղթ կարող է օգտագործվել ապրանքների հայտարարագիրը, եթե «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի կիրառման նպատակն ապրանքների վերանորոգումն է.

2) «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքները դրանց վերամշակման արդյունքներում մաքսային մարմինների կողմից նույնականացնելու հնարավորությունը՝ բացառությամբ վերամշակման արդյունքները համարժեք օտարերկրյա ապրանքներով փոխարինելու դեպքերի, ինչպես որ դրանք սահմանված են սույն Օրենսգրքի 183-րդ հոդվածում՝ սույն Օրենսգրքի նշված հոդվածին համապատասխան.

3) արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման տրամադրումը՝ սույն Օրենսգրքի 9-րդ գլխին համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում չի տրամադրվում.

4) արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

2. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմաններն են՝

1) «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության համար սահմանված ժամկետի պահպանումը.

2) «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հետ Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողություններ իրականացնելիս սույն Օրենսգրքի 179-րդ հոդվածի դրույթների պահպանումը:

3. Սույն գլխի կիրառման նպատակներով «վերամշակման արդյունքներում Միության ապրանքների նույնականացում մաքսային մարմնի կողմից» նշանակում է սույն Օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված եղանակներից մեկով այն փաստի սահմանումը, որ վերամշակման արդյունքներ ստանալու նպատակով Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունների են ենթարկվել այն ապրանքները, որոնք ձևակերպվել են «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով:

Հոդված 178. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը

1. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը սահմանվում է Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման ժամկետի հիման վրա, որը սահմանվել է Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթում:

2. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության համար սահմանված ժամկետը երկարաձգվում է անձի դիմումի հիման վրա՝ Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման ժամկետի երկարաձգման դեպքում:

3. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է նախատեսվել, որ Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման ժամկետը երակարաձգելիս «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել այն լրանալուց հետո 10 աշխատանքային օրվանից ոչ ուշ: Մաքսային մարմնի կողմից սահմանված՝ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը երկարաձգելիս այն լրանալուց հետո այդ մաքսային ընթացակարգի գործողությունը վերսկսվում է այդ մաքսային ընթացակարգը դադարելու օրվանից:

Հոդված 179. Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունները

Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունները ներառում են՝

ապրանքների վերամշակումը կամ մշակումը.

ապրանքների պատրաստումը՝ ներառյալ մոնտաժը, հավաքումը, կազմատումը և հարմարեցումը.

ապրանքների վերանորոգումը՝ ներառյալ դրանց վերականգնումը, բաղադրիչների փոխարինումը, արդիականացումը:

Հոդված 180. Միության ապրանքների նույնականացումը վերամշակման արդյունքներում

Միության ապրանքները վերամշակման արդյունքներում նույնականացնելու նպատակով կարող են կիրառվել հետևյալ եղանակները՝

Միության ապրանքների վրա հայտարարատուի, Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողություններ իրականացնող անձի կամ մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից կնիքների, դրոշմակնիքների զետեղում, թվային և այլ դրոշմավորման կատարում.

Միության ապրանքների մանրամասն նկարագրում, լուսանկարում, մասշտաբային պատկերում.

Միության ապրանքների և դրանց վերամշակման արդյունքների՝ նախապես վերցված փորձանմուշների և (կամ) նմուշների համադրում.

ապրանքների առկա դրոշմավորման օգտագործում, այդ թվում՝ սերիական համարների տեսքով.

այլ եղանակներ, որոնք կարող են կիրառվել՝ ելնելով ապրանքների բնույթից և Միության մաքսային տարածքից դուրս իրականացվող վերամշակման գործողություններից, այդ թվում՝ ներկայացված այն փաստաթղթերն ուսումնասիրելու միջոցով, որոնք մանրամասն տեղեկություններ են պարունակում Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունների տեխնոլոգիական գործընթացում Միության ապրանքների օգտագործման, ինչպես նաև վերամշակման արդյունքների արտադրության տեխնոլոգիայի մասին:

Հոդված 181. Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման պայմանների մասին փաստաթուղթը

1. Անդամ պետության լիազորված մարմնի կողմից տրվող՝ Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթ կարող է ստանալ այն անդամ պետության ցանկացած անձ, որի տարածքում տրվում է այդ փաստաթուղթը:

2. Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթը պետք է տեղեկություններ ներառի՝

1) փաստաթուղթը տրամադրած՝ անդամ պետության լիազորված մարմնի մասին.

2) այն անձի մասին, որին տրվել է փաստաթուղթը.

3) այն անձի (անձանց) մասին, որը (որոնք) անմիջականորեն կատարելու է (կատարելու են) Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողություններ.

4) Միության ապրանքների և դրանց վերամշակման արդյունքների մասին (անվանումը, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ծածկագիրը, քանակը և արժեքը): Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է նախատեսվել Միության ապրանքների և դրանց վերամշակման արդյունքների ծածկագիրը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ապրանքային դիրքի մակարդակով նշելու հնարավորություն.

5) ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքը հաստատող փաստաթղթերի մասին.

6) վերամշակման արդյունքների ելքի չափաքանակները՝ քանակական և (կամ) տոկոսային արտահայտությամբ.

7) Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունների և դրանց կատարման եղանակների մասին.

8) վերամշակման արդյունքներում «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքների նույնականացման եղանակների մասին.

9) Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման ժամկետի մասին.

10) վերամշակման արդյունքները համարժեք օտարերկրյա ապրանքներով փոխարինելու մասին՝ ինչպես դրանք սահմանված են սույն Օրենսգրքի 183-րդ հոդվածում, եթե այդ փոխարինումը թույլատրվում է.

11) այն մաքսային մարմնի (մարմինների) մասին, որտեղ ենթադրվում է ապրանքների ձևակերպումը «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով և այդ մաքսային ընթացակարգի գործողության ավարտը:

3. Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման ժամկետը չի կարող գերազանցել 2 տարին:

4. Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման ժամկետը ներառում է՝

1) ապրանքների վերամշակման արտադրական գործընթացի տևողությունը.

2) վերամշակման արդյունքների՝ Միության մաքսային տարածք փաստացի ներմուծման և դրանք «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտող մաքսային ընթացակարգերով ձևակերպելու համար անհրաժեշտ ժամանակը:

5. Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման ժամկետը հաշվարկվում է ապրանքները «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից, իսկ ապրանքների՝ մի քանի խմբաքանակներով մաքսային հայտարարագրման դեպքում՝ ապրանքների առաջին խմբաքանակը «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից:

6. Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման ժամկետը կարող է երկարաձգվել սույն հոդվածի 3-րդ կետում նշված ժամկետի սահմաններում:

7. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթում պարտադիր նշվող լրացուցիչ տեղեկություններ:

8. Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթի ձևը, այդ

փաստաթղթի լրացման կարգը և տրման կարգը, դրա մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու, ինչպես նաև դրա հետկանչի (չեղյալ համարելու) և (կամ) դրա գործողությունը վերականգնելու կարգը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

9. Ապրանքների հայտարարագիրը որպես Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթ օգտագործելու դեպքում Միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման պայմանների վերաբերյալ տեղեկությունները նշվում են հայտարարատուի կողմից ապրանքների հայտարարագրում:

Հոդված 182. Վերամշակման արդյունքների ելքի չափաքանակները

1. Վերամշակման արդյունքների ելքի չափաքանակ ասելով ենթադրվում են Միության մաքսային տարածքից դուրս Միության ապրանքների որոշակի քանակի վերամշակման գործողությունների կատարման արդյունքում գոյացած՝ վերամշակման արդյունքների քանակը և (կամ) տոկոսային պարունակությունը:

2. Եթե Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունների են ենթարկվում այն ապրանքները, որոնց հատկանիշները մնում են գործնականորեն անփոփոխ՝ սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխան, և արդյունքում ստացվում են անփոփոխ որակի վերամշակման արդյունքներ, ապա անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից կարող են սահմանվել վերամշակման արդյունքների ելքի ստանդարտ չափաքանակներ:

Հոդված 183. Վերամշակման արդյունքների փոխարինումը համարժեք օտարերկրյա ապրանքներով

1. Մաքսային մարմնի թույլտվությամբ հնարավոր է վերամշակման արդյունքների փոխարինումն այն օտարերկրյա ապրանքներով, որոնք իրենց նկարագրով, որակով և տեխնիկական հատկանիշներով համապատասխանում են վերամշակման այդ արդյունքներին (այսուհետ սույն հոդվածում՝ համարժեք օտարերկրյա ապրանքներ), եթե Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունը վերանորոգումն է, ինչպես նաև եթե Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողություններն իրականացվում են խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների նկատմամբ:

Եթե Միության մաքսային տարածք նախկինում ներմուծված և «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների կազմի մեջ մտնող, անսարք վիճակում գտնվող մասերը, հանգույցները, ագրեգատները Միության մաքսային տարածքից արտահանվել են երաշխիքային վերանորոգման նպատակով, ապա օտարերկրյա այն ապրանքները, որոնք իրենց նկարագրով, որակով և տեխնիկական հատկանիշներով համապատասխանում են վերամշակման արդյունքներին, դիտարկվում են որպես համարժեք օտարերկրյա ապրանքներ՝ առանց հաշվի առնելու դրանց սարքինության և (կամ) մաշվածության աստիճանը:

2. Այն դեպքում, երբ թույլատրվում է վերամշակման արդյունքների փոխարինումը համարժեք օտարերկրյա ապրանքներով, այդ համարժեք օտարերկրյա ապրանքների ներմուծումը Միության մաքսային տարածք թույլատրվում է նախքան Միության մաքսային տարածքից Միության ապրանքների արտահանումը:

3. Վերամշակման արդյունքները համարժեք օտարերկրյա ապրանքներով փոխարինելու կարգը և պայմանները սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

Հոդված 184. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը և դադարումը

1. Նախքան «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության համար սահմանված ժամկետը լրանալը այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է վերամշակման արդյունքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու միջոցով, իսկ անհատույց (երաշխիքային) վերանորոգման նպատակով Միության մաքսային տարածքից արտահանված ապրանքների վերամշակման արդյունքները՝ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու միջոցով՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի:

«Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը չի կարող ավարտվել վերամշակման արդյունքները «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու միջոցով, եթե այդ վերամշակման արդյունքները այն ապրանքների վերամշակումից հետո ստացվող արդյունքներ են, որոնց՝ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան բացթողման դեպքում հաշվի է առնվել այդ ապրանքների անհատույց (երաշխիքային) վերանորոգման պատճառ հանդիսացող թերության (թերությունների) առկայությունը:

2. Նախքան «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության համար

սահմանված ժամկետը լրանալն այդ մաքսային ընթացակարգի գործողությունը կարող է ավարտվել՝

1) «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները՝ բացառությամբ սույն կետի 2-րդ ենթակետում նշված ապրանքների, «արտահանում» մաքսային ընթացակարգով կամ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու միջոցով.

2) սույն Օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված՝ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու միջոցով.

3) վերամշակման արդյունքներն «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու միջոցով՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում, պայմաններով և կարգով:

3. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը չի կարող ավարտվել ապրանքներն «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու միջոցով, եթե անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է, որ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» ընթացակարգով ձևակերպված ապրանքները և (կամ) դրանց վերամշակման արդյունքները պարտադիր կերպով ենթակա են վերադարձման այդ անդամ պետության տարածք:

4. Վերամշակման արդյունքները մաքսային ընթացակարգերով կարող են ձևակերպվել մեկ կամ մի քանի խմբաքանակներով:

5. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության համար սահմանված ժամկետը լրանալուց հետո այդ մաքսային ընթացակարգի գործողությունը դադարում է:

Հոդված 185. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) Միության ապրանքների համար արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության առաջացումն ու դադարումը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. Հայտարարատուի՝ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող Միության ապրանքների համար արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագիրը գրանցելու պահից:

2. Հայտարարատուի՝ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքների համար արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը՝ սույն Օրենսգրքի 184-րդ հոդվածին համապատասխան, այդ թվում՝ սույն հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո.

2) ապրանքները, որոնց առնչությամբ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվել է, և (կամ) գործողությունը դադարեցված այդ մաքսային ընթացակարգի կիրառման շրջանակներում Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելը՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան.

3) արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարումը և (կամ) դրանց բռնագանձումը՝ սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով.

4) ապրանքների բացթողումը մերժելը՝ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

5) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան ապրանքների հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

6) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

7) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

8) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում, և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդպիսի ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքների

համար արտահանման մաքսատուրքեր վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

4. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում արտահանման մաքսատուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) ապրանքների կորստի օրը՝ նախքան «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը սույն հոդվածի 1-ին կետում նշված ապրանքների կորստի դեպքում, իսկ եթե այդ օրը սահմանված չէ՝ մաքսային մարմնի կողմից այդ ապրանքների կորստի փաստը բացահայտվելու օրը.

2) «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալու օրը, եթե «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգը չի ավարտվել սույն Օրենսգրքի 184-րդ հոդվածին համապատասխան:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում արտահանման մաքսատուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքները ձևակերպված լինեին «արտահանում» մաքսային ընթացակարգով՝ առանց արտահանման մաքսատուրքերի վճարման արտոնությունների կիրառման:

Արտահանման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում են ապրանքները «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ գործող արտահանման մաքսատուրքերի դրույքաչափերը:

6. Սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան վճարվող (բռնագանձվող) արտահանման մաքսատուրքերի գումարներից վճարման են ենթակա տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների մասով տրամադրվեր դրանց վճարման հետաձգման հնարավորություն, եթե դա սահմանված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում ապրանքները ձևակերպվել են «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով: Նշված տոկոսները հաշվեգրվում և վճարվում են անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. «Մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու կամ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան ապրանքները սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով ձևակերպելու կամ ապրանքները արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարումից և (կամ) դրանց բռնագանձումից հետո (ամբողջությամբ կամ մասամբ) սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցվելու (արգելապահվելու) դեպքում սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված արտահանման մաքսատուրքերի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին համապատասխան:

Հոդված 186. Վերամշակման արդյունքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս դրանց համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունները

1. Վերամշակման արդյունքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ներմուծման մաքսատուրքերը հաշվարկվում են հիմք ընդունելով Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունների արժեքը:

2. Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունների արժեքը որոշվում է որպես հետևյալի մասով փաստացի կատարված ծախսերի հանրագումար՝

1) վերամշակման (վերանորոգման) գործողությունները.

2) վերամշակման (վերանորոգման) գործընթացում օգտագործված օտարերկրյա ապրանքները, եթե դրանք չեն ներառվել վերամշակման (վերանորոգման) գործողությունների ծախսերում:

3. Այն դեպքում, երբ Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունների հայտագրված արժեքը վերամշակման արդյունքների մաքսային հայտարարագրման ժամանակ փաստաթղթային կարգով չի հաստատվել կամ ներկայացված փաստաթղթերով չեն հաստատվում այդ գործողությունների արժեքի մասին հայտագրված տեղեկությունները, այն որոշվում է որպես վերամշակման արդյունքների մաքսային արժեքի և «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների արժեքի տարբերություն:

4. Այն դեպքում, երբ վերամշակման արդյունքների նկատմամբ կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի հատուկ դրույքաչափեր, ներմուծման մաքսատուրքերի՝ վճարման ենթակա գումարը որոշվում է որպես վերամշակման արդյունքների նկատմամբ հատուկ դրույքաչափով հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի գումարի և Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունների արժեքի ու վերամշակման արդյունքների մաքսային արժեքի հարաբերակցության արտադրյալ այնպես, ինչպես դա կարվեր, եթե վերամշակման արդյունքները ձևակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

5. Վերամշակման արդյունքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս վերամշակման արդյունքների մասով հարկերը հաշվարկվում են այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում վերամշակման արդյունքները ձևակերպվում են «ներքին սպառման համար

բացթողում» մաքսային ընթացակարգով:

Ակցիզներ (ակցիզային հարկ կամ ակցիզային տուրք) չեն հաշվարկվում և չեն վճարվում այն դեպքում, երբ Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունը Միության մաքսային տարածքից արտահանված ապրանքների վերանորոգումն է:

6. Վերամշակման արդյունքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման սույն հոդվածի 1-5-րդ կետերին համապատասխան հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարների չափով, եթե սույն հոդվածի 7-րդ կետով այլ բան նախատեսված չէ:

7. Սույն Օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված օտարերկրյա ապրանքների նկատմամբ Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունների կատարման արդյունքում ստացված՝ վերամշակման արդյունքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս սույն հոդվածի 1-5-րդ կետերին համապատասխան հաշվարկված ներմուծման մաքսատուրքերը, հարկերը չեն վճարվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Օրենսգրքի 136-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան վրա է հասել այդ օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը:

Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունների կատարման արդյունքում ստացված վերամշակման արդյունքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը սույն Օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված օտարերկրյա ապրանքների համար դադարում է այդ օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարելուց հետո:

Հոդված 187. Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունների չենթարկված ապրանքների և վերամշակման արդյունքների համար արտահանման մաքսատուրքերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունները՝ դրանք «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս

1. Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունների չենթարկված ապրանքներն «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս արտահանման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում են ապրանքները «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ գործող արտահանման մաքսատուրքերի դրույքաչափերը:

Այն դեպքում, երբ արտահանման մաքսատուրքերի հաշվարկման համար պահանջվում է արտարժույթը վերահաշվարկել անդամ պետության արժույթով, այդ վերահաշվարկը կատարվում է սույն կետի առաջին պարբերության մեջ նշված օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

2. «Արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված), Միության մաքսային տարածքից դուրս վերամշակման գործողությունների չենթարկված ապրանքների համար վճարվող (բռնագանձվող) արտահանման մաքսատուրքերի գումարներից վճարման են ենթակա տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների մասով տրամադրվեր դրանց վճարումը հետաձգելու հնարավորություն, եթե դա սահմանված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում ապրանքները ձևակերպվել են «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով: Նշված տոկոսները հաշվեգրվում և վճարվում են անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն Օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան սահմանված դեպքերում «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող վերամշակման արդյունքների համար արտահանման մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունները որոշվում են Հանձնաժողովի կողմից՝ այդ դեպքերը սահմանելիս:

Գլուխ 26

«Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգը

Հոդված 188. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի բովանդակությունը և կիրառումը

1. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգը օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառվող այն մաքսային ընթացակարգն է, որին համապատասխան այդ ապրանքները ենթարկվում են ներքին համար վերամշակման գործողությունների՝ դրանց վերամշակման արդյունքներն ստանալու նպատակով՝ հետագայում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվելու համար՝ առանց այդ օտարերկրյա

ապրանքների համար ներմուծման մաքսատուրքեր վճարելու, եթե պահպանվում են այդ մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և դրանք այդ մաքսային ընթացակարգին համապատասխան օգտագործելու պայմանները:

2. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը, իսկ ներքին սպառման համար ապրանքների վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքները (վերամշակման արդյունքներ, թափոններ և մնացորդներ) ստանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակ:

3. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգը կիրառվում է այն ապրանքների նկատմամբ, որոնց ցանկը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 189. Ապրանքները «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու և դրանք այդ մաքսային ընթացակարգին համապատասխան օգտագործելու պայմանները

1. Ապրանքները «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

1) ներքին սպառման համար ապրանքների վերամշակման պայմանների մասին անդամ պետությունների լիազորված մարմնի կողմից տրված փաստաթղթի առկայությունը, որը պարունակում է սույն Օրենսգրքի 193-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները.

2) մաքսային մարմինների կողմից վերամշակման արդյունքներում «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների նույնականացման հնարավորությունը.

3) եթե «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ապրանքները ձևակերպելու օրվա դրությամբ վերամշակման արդյունքների համար ներմուծման մաքսատուրքերի գումարները, որոնք հաշվարկվում են այնպես, ինչպես դա կարվեր, եթե Միության մաքսային տարածք ներմուծելիս դրանք ձևակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ հաշվի առնելով վերամշակման արդյունքների ելքի չափաքանակները, որոնք ներառված են ներքին սպառման համար ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթում, ավելի քիչ են, քան ներմուծման մաքսատուրքերի այն գումարները, որոնք հաշվարկվում են «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների համար այնպես, ինչպես դա կարվեր, եթե այդ ապրանքները ձևակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով.

4) վերամշակման արդյունքների նախնական վիճակը տնտեսապես շահավետ եղանակով վերականգնելու անհնարինությունը.

5) հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարումը.

6) հարկերի վճարումը, եթե հարկերի վճարման արտոնություններ չեն տրամադրվել.

7) հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերից և (կամ) «Միության մասին» պայմանագրի 50-րդ հոդվածին համապատասխան սահմանված այլ տուրքերից տարբեր՝ ներքին շուկայի պաշտպանության այլ միջոցներ պահպանելը.

8) արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

2. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմաններն են՝

1) «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության համար սահմանված ժամկետի պահպանումը.

2) «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հետ գործողություններ իրականացնելիս սույն Օրենսգրքի 191-րդ հոդվածի դրույթների պահպանումը.

3) «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների գտնվելը ներքին սպառման համար ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթում նշված անձանց մոտ, և այդ ապրանքների օգտագործումն այդ անձանց կողմից ապրանքների վերամշակման գործողությունների կատարման համար:

3. Սույն գլխի կիրառման նպատակներով «վերամշակման արդյունքներում օտարերկրյա ապրանքների նույնականացում մաքսային մարմնի կողմից» նշանակում է սույն Օրենսգրքի 192-րդ հոդվածով սահմանված եղանակներից մեկով այն փաստի սահմանումը, որ վերամշակման արդյունքներ ստանալու նպատակով ներքին սպառման համար ապրանքների վերամշակման գործողությունների են ենթարկվել այն ապրանքները, որոնք ձևակերպվել են «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով:

Հոդված 190. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը

1. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը սահմանվում է

ներքին սպառման համար ապրանքների վերամշակման ժամկետի հիման վրա, որը սահմանված է ներքին սպառման համար ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթում:

2. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության համար սահմանված ժամկետը երկարաձգվում է անձի դիմումի հիման վրա՝ ներքին սպառման համար ապրանքների վերամշակման ժամկետը երկարաձգելու դեպքում:

3. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է նախատեսվել, որ ներքին սպառման համար ապրանքների վերամշակման ժամկետը երկարաձգելիս, «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել այն լրանալուց հետո հետո 10 աշխատանքային օրվանից ոչ ուշ: Մաքսային մարմնի կողմից սահմանված՝ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը երկարաձգելիս այն լրանալուց հետո այդ մաքսային ընթացակարգի գործողությունը վերսկսվում է այդ մաքսային ընթացակարգը դադարելու օրվանից:

Հոդված 191. Ներքին սպառման համար վերամշակման գործողությունները

1. Ներքին սպառման համար վերամշակման գործողությունները ներառում են՝

1) ապրանքների վերամշակումը կամ մշակումը.

2) ապրանքների պատրաստումը՝ ներառյալ մոնտաժը, հավաքումը, կազմատումը և հարմարեցումը:

2. Ներքին սպառման համար վերամշակման գործողություններ չեն համարվում՝

1) ապրանքները վաճառքի և փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար նախապատրաստելու ժամանակ դրանց պահպանվածությունն ապահովող գործողությունները, այդ թվում՝ ապրանքների փաթեթավորումը, կշռածրարումը և տեսակավորումը, որոնց ժամանակ ապրանքները չեն կորցնում իրենց անհատական բնութագրերը.

2) ծին ստանալը, կենդանիների, ներառյալ՝ թռչունների, ձկների բուծումը և բտումը, ինչպես նաև խեցգետնանմանների և կակղամորթների բուծումը.

3) ծառերի և այլ բույսերի աճեցումը.

4) տեղեկությունների, ձայնագրությունների և տեսագրությունների պատճենումը և բազմացումը ցանկացած տեսակի տեղեկակիրների վրա.

5) Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ գործողություններ:

3. Ներքին սպառման համար վերամշակման գործողություններ կատարելիս թույլատրվում է Միության ապրանքների օգտագործումը:

Հոդված 192. Օտարերկրյա ապրանքների նույնականացումը՝ դրանց վերամշակման արդյունքներում

Օտարերկրյա ապրանքները դրանց վերամշակման արդյունքներում նույնականացնելու նպատակով կարող են կիրառվել հետևյալ եղանակները՝

օտարերկրյա ապրանքների վրա հայտարարատուի, վերամշակման գործողություններ կատարող անձի կամ մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից կնիքների, դրոշմակնիքների, թվային և այլ դրոշմավորման զետեղում.

օտարերկրյա ապրանքների մանրամասն նկարագրում, լուսանկարում, մասշտաբային պատկերում.

օտարերկրյա ապրանքների և դրանց վերամշակման արդյունքների՝ նախապես վերցված փորձանմուշների և (կամ) նմուշների համադրում.

ապրանքների առկա դրոշմավորման օգտագործում, այդ թվում՝ սերիական համարների տեսքով դրոշմավորումը.

այլ եղանակներ, որոնք կարող են կիրառվել՝ ելնելով ապրանքների և ներքին սպառման համար կատարվող վերամշակման գործողությունների բնույթից, այդ թվում՝ ներքին սպառման համար վերամշակման գործողությունների կատարման տեխնոլոգիական գործընթացում օտարերկրյա ապրանքների օգտագործման, ինչպես նաև վերամշակման արդյունքների արտադրման տեխնոլոգիայի մասին մանրամասն տեղեկություններ պարունակող՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության կամ ներքին սպառման համար վերամշակման գործողություններ կատարելու ընթացքում մաքսային հսկողություն իրականացնելու միջոցով:

Հոդված 193. Ներքին սպառման համար վերամշակման պայմանների մասին փաստաթուղթը

1. Անդամ պետության լիազորված մարմնի կողմից տրվող ներքին սպառման համար ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթը կարող է ստանալ այն անդամ պետության ցանկացած անձ, որի տարածքում տրվում է այդ փաստաթուղթը, այդ թվում՝ ապրանքների վերամշակման գործողություններ անմիջականորեն չկատարող անձը:

2. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթը պետք է տեղեկություններ պարունակի՝

1) փաստաթուղթը տրամադրած՝ անդամ պետության լիազորված մարմնի մասին.

2) այն անձի մասին, որին տրվել է փաստաթուղթը.

3) այն անձի (անձանց) մասին, որը (որոնք) անմիջականորեն կատարելու է (կատարելու են) ներքին սպառման համար վերամշակման գործողությունները.

4) օտարերկրյա ապրանքների և դրանց վերամշակման արդյունքների մասին (անվանումը, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ծածկագիրը, դրանց քանակը և արժեքը): Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է նախատեսվել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ապրանքային դիրքի մակարդակով օտարերկրյա ապրանքների և դրանց վերամշակման արդյունքների ծածկագիրը նշելու հնարավորությունը, ինչպես նաև՝ ապրանքների և դրանց վերամշակման արդյունքների արժեքը չնշելու հնարավորությունը.

5) ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքը հաստատող փաստաթղթերի մասին.

6) վերամշակման արդյունքների ելքի չափաքանակները՝ քանակական և (կամ) տոկոսային արտահայտությամբ.

7) ներքին սպառման համար վերամշակման գործողությունների և դրանց կատարման եղանակների մասին.

8) վերամշակման արդյունքներում՝ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների նույնականացման եղանակների մասին.

9) թափոնների և մնացորդների մասին (անվանումը, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ծածկագիրը, քանակը և արժեքը): Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է նախատեսվել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ապրանքային դիրքի մակարդակով թափոնների և մնացորդների ծածկագիրը նշելու հնարավորություն, ինչպես նաև այդ թափոնների ու դրանց մնացորդների արժեքը չնշելու հնարավորություն.

10) ներքին սպառման համար ապրանքների վերամշակման ժամկետի մասին.

11) առևտրային նպատակներով թափոնների հետագա օգտագործման հնարավորության մասին.

12) այն մաքսային մարմնի (մարմինների) մասին, որտեղ ենթադրվում են ապրանքների՝ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպումը և այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը.

13) վերամշակման արդյունքների նախնական վիճակը տնտեսապես շահավետ եղանակով վերականգնելու անհնարինության մասին:

3. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման ժամկետը չի կարող գերազանցել 1 տարին կամ ապրանքների առանձին կատեգորիաների համար Հանձնաժողովի կողմից սահմանվող՝ ավելի տևական ժամկետը:

4. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման ժամկետն իր մեջ ներառում է՝

1) ապրանքների վերամշակման արտադրական գործընթացի տևողությունը.

2) վերամշակման արդյունքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար անհրաժեշտ ժամանակը:

5. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման ժամկետը հաշվարկվում է ապրանքները «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից, իսկ ապրանքների՝ մի քանի խմբաքանակներով մաքսային հայտարարագրման դեպքում՝ ապրանքների առաջին խմբաքանակը «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից:

6. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման ժամկետը կարող է երկարաձգվել սույն հոդվածի 3-րդ կետում նշված ժամկետի սահմաններում:

7. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել լրացուցիչ տեղեկություններ, որոնք պետք է նշվեն ներքին սպառման համար ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթում:

8. Ներքին սպառման համար ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթի ձևը, դրա լրացման կարգը և տրման կարգը, դրա մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու, ինչպես նաև դրա հետկանչի (չեղյալ համարելու) և (կամ) դրա գործողությունը վերականգնելու կարգը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 194. Վերամշակման արդյունքների ելքի չափաքանակները

1. Վերամշակման արդյունքների ելքի չափաքանակ ասելով ենթադրվում են ներքին սպառման համար օտարերկրյա ապրանքների որոշակի քանակի վերամշակման գործողությունների արդյունքում գոյացած՝ վերամշակման արդյունքների քանակը և (կամ) տոկոսային պարունակությունը:

2. Եթե ներքին սպառման համար վերամշակման գործողությունների են ենթարկվում այն ապրանքները, որոնց հատկանիշները մնում են գործնականորեն անփոփոխ՝ սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխան, և արդյունքում ստացվում են անփոփոխ որակի վերամշակման արդյունքներ, ապա անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից կարող են սահմանվել վերամշակման արդյունքների ելքի ստանդարտ չափաքանակներ:

Հոդված 195. Ներքին սպառման համար վերամշակման գործողությունների արդյունքում գոյացած թափոնները և արտադրական կորուստները

1. Ներքին սպառման համար վերամշակման գործողությունների արդյունքում գոյացած թափոնները ենթակա են սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով ձևակերպման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշված թափոնները, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ճանաչվել են առևտրային նպատակներով հետագա օգտագործման համար ոչ պիտանի, կամ այդպիսի թափոնները, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ենթակա են թաղման, վնասազերծման, ուտիլիզացման կամ այլ եղանակով ոչնչացման:

2. Ներքին սպառման համար վերամշակման գործողությունների արդյունքում գոյացած թափոնները հայտարարատուի կողմից ընտրված մաքսային ընթացակարգով ձևակերպվելու դեպքում դիտարկվում են որպես Միության մաքսային տարածք այդ վիճակում ներմուծված:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված այն թափոնները, որոնք ենթակա չեն մաքսային ընթացակարգերով ձևակերպման, ստանում են Միության ապրանքների կարգավիճակ և համարվում են մաքսային հսկողության տակ չգտնվող՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ առևտրային նպատակներով հետագա գործածության համար դրանք ոչ պիտանի ճանաչելու օրվանից կամ թափոնները թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ եղանակով ոչնչացնելու փաստը կամ այդպիսի գործողությունների կատարման համար դրանց փոխանցման փաստը հաստատող փաստաթղթերը մաքսային մարմին ներկայացնելու օրվանից:

4. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա այն ապրանքները, որոնք ներքին սպառման համար վերամշակման գործողությունների կատարման հետևանքով անվերադարձ կորսվել են, և որոնք մաքսային մարմինների կողմից ճանաչվել են որպես արտադրական կորուստ, «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելիս ենթակա չեն մաքսային ընթացակարգերով ձևակերպման:

Հոդված 196. Օտարերկրյա ապրանքների՝ ներքին սպառման համար վերամշակման գործողությունների կատարման արդյունքում գոյացած մնացորդները

Օտարերկրյա ապրանքների՝ ներքին սպառման համար վերամշակման գործողությունների կատարման արդյունքում գոյացած մնացորդները, վերամշակման արդյունքների ելքի չափաքանակներին համապատասխան, ենթակա են մաքսային ընթացակարգերով ձևակերպման՝ սույն Օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 197. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը, կասեցնելը և դադարեցնելը

1. Նախքան «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալը այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝ ներքին սպառման համար վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքները (վերամշակման արդյունքներ, թափոններ, բացառությամբ սույն Օրենսգրքի 195-րդ հոդվածի 3-րդ կետում նշված թափոնների, և (կամ) մնացորդներ) և (կամ) «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և ներքին սպառման համար վերամշակման գործողությունների չենթարկված օտարերկրյա ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով: Ընդ որում, վերամշակման արդյունքների համար չեն վճարվում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր, և չի պահանջվում ներքին շուկայի պաշտպանության միջոցների պահպանման հաստատում հատուկ, հակագնագցման, փոխհատուցման և (կամ) «Միության մասին» պայմանագրի 50-րդ հոդվածին համապատասխան սահմանված այլ տուրքերից տարբեր ձևով:

2. Նախքան «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության համար սահմանված ժամկետը լրանալը այդ մաքսային ընթացակարգի գործողությունը կարող է ավարտվել՝

1) «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և ներքին սպառման համար վերամշակման գործողությունների չենթարկված օտարերկրյա ապրանքները, թափոնները, բացառությամբ սույն Օրենսգրքի 195-րդ հոդվածի 3-րդ կետում նշված թափոնների, և (կամ) ներքին սպառման համար վերամշակման գործողությունների արդյունքում գոյացած մնացորդները սույն Օրենսգրքով նախատեսված պայմաններով՝ օտարերկրյա ապրանքների համար կիրառելի այլ մաքսային ընթացակարգով ձևակերպելով՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի.

2) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան ներքին սպառման համար վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքների (վերամշակման արդյունքներ, թափոններ և (կամ) մնացորդներ), և (կամ) «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային

ընթացակարգով ձևակերպված և ներքին սպառման համար վերամշակման գործողությունների չենթարկված օտարերկրյա ապրանքների՝ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի փաստը մաքսային մարմինների կողմից ճանաչելով.

3) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ ներքին սպառման համար վերամշակման գործողությունների կատարման արդյունքում գոյացած թափոններն առևտրային նպատակներով հետագայում օգտագործելու համար ոչ պիտանի ճանաչելով կամ գոյացած թափոնները թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ եղանակով ոչնչացնելու փաստը կամ այդպիսի գործողություններ կատարելու համար դրանց փոխանցման փաստը հաստատող փաստաթղթերը մաքսային մարմին ներկայացնելով.

4) մաքսային մարմինների կողմից «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների մի մասը որպես արտադրական կորուստ ճանաչվելով.

5) Հանձնաժողովի և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող հանգամանքների ի հայտ գալով, նախքան որոնց ի հայտ գալը ապրանքները գտնվում են մաքսային հսկողության տակ.

3. Նախքան «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության համար սահմանված ժամկետը լրանալը այդ մաքսային ընթացակարգի գործողությունը կարող է կասեցվել՝ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները և (կամ) դրանց վերամշակման արդյունքները «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելով:

4. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության համար սահմանված ժամկետը լրանալուց հետո այդ մաքսային ընթացակարգի գործողությունը դադարում է:

Հոդված 198. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացումն ու դադարումը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. Հայտարարատուի՝ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու պահից, իսկ այն ապրանքների առնչությամբ, որոնք բացթողման մասին դիմում ներկայացրած անձի մոտ հայտագրված են բացթողման համար մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու պահից:

2. Հայտարարատուի՝ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը՝ սույն Օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին կետին և 2-րդ կետի 1-ին, 3-5-րդ ենթակետերին համապատասխան, այդ թվում՝ սույն հոդվածի 6-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո.

2) ապրանքները, որոնց առնչությամբ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվել է, և (կամ) գործողությունը դադարեցված այդ մաքսային ընթացակարգի կիրառման շրջանակներում ներքին սպառման համար վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան.

3) ապրանքները, որոնց առնչությամբ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվել է, և (կամ) գործողությունը դադարեցված այդ մաքսային ընթացակարգի կիրառման շրջանակներում ներքին սպառման համար վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելը՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան.

4) ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարումը և (կամ) ներմուծման մաքսատուրքերի բռնագանձումը սույն հոդվածի 7-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով.

5) վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների և (կամ) ներքին սպառման համար վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը և (կամ) փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի արդյունքում այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ դեպքերի, երբ այդպիսի ոչնչացման կամ անվերադարձ կորստի հետևանքով, սույն Օրենսգրքին համապատասխան, վրա է հասել

այդպիսի ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերի վճարման ժամկետը.

6) «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը մերժելը՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելն ապրանքների հայտարարագրի կամ ապրանքների բացթողման մասին դիմումի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

7) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան ապրանքների հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

8) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

9) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

10) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգի իրականացման) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդպիսի ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. Հայտարարատուի՝ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների համար հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում, եթե սույն հոդվածի 4-րդ կետով այլ բան սահմանված չէ՝

1) հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումը և (կամ) դրանց բռնագանձումը՝ սույն հոդվածի 13-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով.

2) վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ անդամ պետությունների մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան վրա է հասել այդ ապրանքների համար հարկեր, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու ժամկետը.

3) «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը մերժելը՝ մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելն ապրանքների հայտարարագրի կամ ապրանքների բացթողման մասին դիմումի գրանցման ժամանակ առաջացած՝ հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

4) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան ապրանքների հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

5) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

6) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

7) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգի իրականացման) ընթացքում և որոնց վերաբերյալ ընդունվել է դրանք վերադարձնելու մասին որոշում, եթե նախկինում այդպիսի ապրանքների բացթողում չի իրականացվել:

4. Հայտարարատուի՝ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված այն ապրանքների համար, որոնց բացթողումն իրականացվել է նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումը, ինչպես նաև մաքսային մարմնի կողմից էլեկտրոնային փաստաթուղթ ուղարկելը կամ սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 17-րդ կետում նշված՝ համապատասխան նշումները կատարելը.

2) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

5. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների համար

ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն հոդվածի 6-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

6. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) ապրանքները փոխանցելու օրը՝ նախքան «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը օտարերկրյա ապրանքները ներքին սպառման համար ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթղթում չնշված անձին (անձանց) փոխանցելու դեպքում, իսկ եթե այդ օրը սահմանված չէ՝ ապրանքները «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը.

2) ապրանքների կորստի օրը՝ նախքան «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը ներքին սպառման համար վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքների և (կամ) «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների կորստի դեպքում՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի դեպքերի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով անվերադարձ կորստի դեպքերի, իսկ եթե այդ օրը սահմանված չէ՝ ապրանքները «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը.

3) «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալու օրը, եթե «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը չի ավարտվել սույն Օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան:

7. Սույն հոդվածի 6-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը վճարման են ենթակա այնպես, ինչպես դա կարվեր, եթե «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի վճարման արտոնությունների կիրառման:

Ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում են մաքսային մարմնի կողմից «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ապրանքները ձևակերպելու համար ներկայացված՝ ապրանքների հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ գործող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը, իսկ այն ապրանքների համար, որոնց բացթողումն իրականացվել է նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ մաքսային մարմնի կողմից ապրանքների բացթողման մասին դիմումի գրանցման օրվա դրությամբ գործող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը:

8. Սույն հոդվածի 7-րդ կետին համապատասխան վճարվող (բռնագանձվող) ներմուծման մաքսատուրքերի գումարներից վճարման են ենթակա տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե այդ գումարների համար տրամադրված լիներ ապրանքները «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից մինչև ներմուծման մաքսատուրքերը վճարելու ժամկետը լրանալու օրը դրանց վճարման հետաձգման հնարավորություն: Նշված տոկոսները հաշվեգրվում և վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

«Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն Օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան կասեցնելու դեպքում սույն կետով նախատեսված տոկոսները մաքսային ընթացակարգի գործողության կասեցման ժամանակահատվածում չեն հաշվեգրվում և չեն վճարվում:

9. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու դեպքում, կամ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան՝ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները և (կամ) ներքին սպառման համար վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու դեպքում կամ սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով այդ ապրանքները սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան ձևակերպելու, կամ այդ ապրանքները ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարումից և (կամ) դրանց բռնագանձումից հետո (ամբողջությամբ կամ մասամբ)՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցվելու (արգելապահվելու) դեպքում սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված ներմուծման մաքսատուրքերի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին համապատասխան:

10. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների համար՝ բացառությամբ այն ապրանքների, որոնք հայտագրվում են բացթողման համար նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման (հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման) նախքան «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը:

11. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումն իրականացվել է նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը և որոնց համար ապրանքների հայտարարագիրը ներկայացվել է սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 16-րդ կետում նշված ժամկետից ոչ ուշ, իսկ այն ապրանքների համար, որոնց հայտարարատու է հանդես եկել լիազորված տնտեսական օպերատորը՝ սույն Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ կետում նշված ժամկետից ոչ ուշ, հարկեր, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման (հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման) մինչև ապրանքների հայտարարագիրը

ներկայացնելը:

12. «Ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված այն ապրանքների համար, որոնց բացթողումն իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացվելը, և որոնց համար ապրանքների հայտարարագիրը ներկայացվել է նախքան սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 16-րդ կետում նշված ժամկետը լրանալը, իսկ այն ապրանքների համար, որոնց հայտարարատուն հանդիսանում է լիազորված տնտեսական օպերատորը՝ նախքան սույն Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ կետում նշված ժամկետը լրանալը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 16-րդ կետում նշված ժամկետի վերջին օրը, իսկ այն ապրանքների համար, որոնց հայտարարատուն հանդիսանում է լիազորված տնտեսական օպերատորը՝ սույն Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ կետում նշված ժամկետի վերջին օրը:

13. Սույն հոդվածի 10-րդ և 11-րդ կետերում նշված ապրանքների համար հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման ապրանքների հայտարարագրում՝ սույն Օրենսգրքին համապատասխան հաշվարկված չափով՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 12-րդ գլխով նախատեսված առանձնահատկությունները:

14. Սույն հոդվածի 12-րդ կետում նշված ապրանքների մասով վճարման ենթակա հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման բազան որոշվում է ապրանքների բացթողման մասին դիմումում և այդ դիմումի հետ համատեղ ներկայացված փաստաթղթերում նշված տեղեկությունների հիման վրա:

Այն դեպքում, երբ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքների ծածկագրերը սահմանված են 10 նիշից պակաս քանակով խմբավորման մակարդակով՝

հարկերը հաշվարկելու համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող այն ապրանքներին համապատասխանող ավելացված արժեքի հարկի դրույքաչափերից ամենամեծը, ակցիզների (ակցիզային հարկի կամ ակցիզային վճարի) դրույքաչափերից ամենամեծը, որոնց համար սահմանվել է մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը;

հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը՝ հաշվի առնելով սույն կետի հինգերորդ պարբերությունը:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով ապրանքների՝ սույն Օրենսգրքի 4-րդ գլխին համապատասխան հաստատված ծագումից և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններից: Եթե ապրանքների ծագումը և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ հաստատված չեն, ապա հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը, որոնք սահմանվել են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն ծածկագրին դասվող ապրանքների համար, եթե ապրանքի դասակարգումն իրականացվել է 10 նիշի մակարդակով, կամ խմբավորման մեջ մտնող ապրանքների համար, եթե ապրանքների ծածկագրերը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանվել են 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով:

Եթե սույն հոդվածի 12-րդ կետում նշված ապրանքների համար հետագայում ներկայացվել է ապրանքների հայտարարագիր, ապա հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարվում են ապրանքների հայտարարագրում՝ սույն Օրենսգրքին համապատասխան հաշվարկված գումարների չափով՝ հիմք ընդունելով ապրանքների հայտարարագրում նշված տեղեկությունները: Հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի՝ ավել վճարված և (կամ) ավելի բռնագանձված գումարի վերադարձը (հաշվանցումը) կատարվում է սույն Օրենսգրքի 10-րդ գլխին և 76-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 199. Վերամշակման արդյունքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս դրանց համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունները

1. Վերամշակման արդյունքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս վերամշակման արդյունքների համար ներմուծման մաքսատուրքերը հաշվարկվում և վճարվում են սույն Օրենսգրքի 136-րդ հոդվածին համապատասխան:

2. Վերամշակման արդյունքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս հայտարարատուի մոտ հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորություն չի առաջանում:

Հոդված 200. Վերամշակման գործողությունների չենթարկված օտարերկրյա ապրանքների, ներքին սպառման համար վերամշակման գործողությունների կատարման արդյունքում գոյացած մնացորդների և թափոնների համար հարկեր, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու առանձնահատկությունները՝ դրանք «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս

Վերամշակման գործողությունների չենթարկված օտարերկրյա ապրանքները, ինչպես նաև ներքին սպառման համար վերամշակման գործողությունների կատարման արդյունքում գոյացած մնացորդներն ու թափոնները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս հայտարարատուի մոտ հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորություն չի առաջանում:

Գլուխ 27

«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգը

Հոդված 201. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի բովանդակությունը և կիրառումը

1. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգն օտարերկրյա ապրանքների և Միության ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ է, որի համաձայն այդպիսի ապրանքները տեղավորվում և օգտագործվում են ԱՏԳ տարածքի կամ դրա մի մասի սահմաններում՝ առանց մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման՝ այդպիսի մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և այդպիսի մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանների կատարմամբ:

2. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպվում են այն ապրանքները, որոնք նախատեսված են ԱՏԳ տարածքում ԱՏԳ ռեզիդենտների (մասնակիցների, սուբյեկտների) կողմից տեղավորման և (կամ) օգտագործման համար ԱՏԳ ռեզիդենտների (մասնակիցների, սուբյեկտների) կողմից ձեռնարկատիրական և այլ գործունեության իրականացման նպատակով՝ «ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին» համաձայնագրին (պայմանագրին) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրին, ներդրումային հայտարարագրին, ձեռնարկատիրական ծրագրին) համապատասխան, եթե անդամ պետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նկատմամբ այդպիսի անդամ պետության տարածքում ստեղծված առանձին ԱՏԳ տարածքում դրանց տեղավորման և (կամ) օգտագործման համար:

3. Միության ապրանքներ հանդիսացող՝ սույն հոդվածի 2-րդ կետում նշված ապրանքները, բացառությամբ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում տեղավորման և (կամ) օգտագործման համար ներմուծվող ապրանքների, ձևակերպվում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) ընտրությամբ, եթե այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում ստեղծվել է ԱՏԳ-ն, սահմանված չէ, որ Միության այդ ապրանքները ենթակա են պարտադիր ձևակերպման «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով:

4. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպվում են նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում այն անձանց կողմից տեղավորման համար նախատեսված ապրանքները, որոնք նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտներ (մասնակիցներ, սուբյեկտներ) չեն և որոնք նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտների (մասնակիցների, սուբյեկտների) հետ պայմանագիր են կնքել ապրանքների պահեստավորման (պահման), ապրանքների բեռնման (բեռնաթափման) և ապրանքների պահման, ինչպես նաև ապրանքների պահպանվածության ապահովման և ապրանքները փոխադրման (տրանսպորտային փոխադրման) նախապատրաստելու հետ կապված՝ ներառյալ խմբաքանակի մասնատման, առաքումների կազմավորման, տեսակավորման, փաթեթավորման, վերափաթեթավորման, մակնշման հետ կապված այլ բեռնային գործողությունների առնչությամբ ծառայությունների մատուցման մասին (հետագայում սույն գլխում՝ ծառայությունների մատուցման մասին պայմանագիր)՝ պայմանով, որ նշված ծառայությունները մատուցելիս ապրանքների հետ կատարվող գործառնությունները չեն փոփոխում ապրանքների բնութագրերը, որոնք կապված են ծածկագրի փոփոխության հետ՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան:

5. ԱՏԳ տարածքում գտնվող և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով չձևակերպված Միության ապրանքների նկատմամբ թույլատրվում է ցանկացած, այդ թվում՝ սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործառնությունների իրականացում:

6. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով չեն ձևակերպվում այն տրանսպորտային միջոցները, որոնք իրականացնում են բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռի փոխադրում ԱՏԳ տարածք և (կամ) իրականացնում են այդպիսի ԱՏԳ տարածքից ապրանքների փոխադրում, ինչպես նաև այդպիսի տրանսպորտային միջոցների վրա գտնվող պաշարները:

7. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը, իսկ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքները պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը:

8. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, ինչպես նաև «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքներից և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով չձևակերպված Միության ապրանքներից

պատրաստված (ստացված) ապրանքները ձեռք են բերում Միության ապրանքների կարգավիճակ:

9. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից և Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները (այսուհետ սույն գլխում՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ) ձեռք են բերում օտարերկրյա ապրանքների կարգավիճակ՝ հաշվի առնելով սույն կետի երկրորդ պարբերությունը:

Այն դեպքում, երբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքից, այդպիսի ապրանքների կարգավիճակը որոշվում է սույն Օրենսգրքի 210-րդ հոդվածին համապատասխան:

10. Այն դեպքում, երբ ԱՏԳ տարածքում գտնվող ապրանքները մաքսային մարմնի կողմից չեն կարող նույնականացվել որպես ապրանքներ, որոնք գտնվել են ԱՏԳ տարածքում նախքան դրա ստեղծումը, կամ որպես ԱՏԳ տարածք ներմուծված կամ ԱՏԳ տարածքում պատրաստված (ստացված) ապրանքներ, ապա այդպիսի ապրանքները, ԱՏԳ տարածքից դրանց արտահանման նպատակներից ելնելով, Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս դիտարկվում են որպես Միության ապրանքներ, իսկ այլ նպատակների դեպքում՝ որպես Միության մաքսային տարածք ներմուծվող օտարերկրյա ապրանքներ:

11. Սույն հոդվածի 10-րդ կետում նշված՝ ԱՏԳ տարածքից նախկինում արտահանված ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելու դեպքում այդպիսի ապրանքների նկատմամբ Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս չի կիրառվում «վերաներմուծում» մաքսային ընթացակարգը:

12. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները, որոնց վրա տարածվում են ներքին շուկայի պաշտպանության միջոցները, պետք է նույնականացվեն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում՝ այդպիսի ապրանքները ԱՏԳ տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս արտահանելու համար:

Այն դեպքում, եթե «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները, որոնց վրա տարածվում են ներքին շուկայի պաշտպանության միջոցները, օգտագործվել են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ պատրաստելու համար, սակայն չեն կարող նույնականացվել այդպիսի ապրանքներում, ապա «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված այդպիսի օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները պետք է արտահանվեն Միության մաքսային տարածքից:

13. Հանձնաժողովն իրավասու է սահմանել այն ապրանքների և (կամ) ապրանքների կատեգորիաների ցանկը, որոնք ենթակա չեն ձևակերպման «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով:

Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ կարող է սահմանվել այն ապրանքների և (կամ) ապրանքների կատեգորիաների ցանկը, որոնք ենթակա չեն այդ պետությունների տարածքներում ստեղծված (ստեղծվող) ԱՏԳ-ներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպման:

14. Այն մասերը, հանգույցները, ագրեգատները, որոնք մաքսային մարմնի կողմից կարող են նույնականացվել որպես «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների կազմի մեջ մտնող (մտած) ապրանքներ, ԱՏԳ տարածքից արտահանման նպատակով դիտարկվում են որպես «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներ, և դրանց նկատմամբ կիրառվում են սույն Օրենսգրքի դրույթները:

15. Անդամ պետության օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 3-րդ կետը, 207-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերը չեն կիրառվում այդ անդամ պետության տարածքում ստեղծված՝ այնպիսի ԱՏԳ-ների համար, որոնց սահմաններն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են Միության մաքսային սահմանի հատվածների հետ:

Հոդված 202. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և այդպիսի մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանները

1. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման պայմաններն են՝

1) ապրանքները նախատեսված են ԱՏԳ տարածքում ԱՏԳ ռեզիդենտների (մասնակիցների, սուբյեկտների) կողմից տեղավորման և (կամ) օգտագործման համար ԱՏԳ ռեզիդենտների (մասնակիցների, սուբյեկտների) կողմից ձեռնարկատիրական և այլ գործունեության իրականացման նպատակով՝ «ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին» համաձայնագրին (պայմանագրին) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրին, ներդրումային հայտարարագրին, ձեռնարկատիրական ծրագրին) համապատասխան, եթե անդամ պետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ սույն Օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ այդպիսի անդամ պետության տարածքում ստեղծված առանձին ԱՏԳ-ների տարածքում տեղավորման և (կամ) օգտագործման համար:

2) ապրանքները նախատեսված են նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում այն անձանց կողմից

տեղավորման համար, որոնք նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտներ (մասնակիցներ, սուբյեկտներ) չեն և որոնք նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտների (մասնակիցների, սուբյեկտների) հետ կնքել են ծառայությունների մատուցման մասին պայմանագիր՝ պայմանով, որ նշված ծառայությունները մատուցելիս ապրանքների հետ կատարվող գործառնությունները չեն փոփոխում ապրանքների բնութագրերը, որոնք կապված են ծածկագրի փոփոխության հետ՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան.

3) օտարերկրյա ապրանքների նկատմամբ արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

2. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների հայտարարատուներ կարող են հանդես գալ այն ԱՏԳ ռեզիդենտներ (մասնակիցներ, սուբյեկտներ) հանդիսացող անձինք, որի տարածքում պետք է տեղավորվեն այդ ապրանքները, իսկ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերում՝ նաև սույն հոդվածի 3-րդ կետում նշված կամ Հանձնաժողովի կողմից՝ սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան որոշված այլ անձինք:

3. Որպես Միության մաքսային տարածքի մնացած մաս կամ դրա սահմաններից դուրս նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվող կամ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքից արտահանվող՝ սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված ապրանքների հայտարարատուներ կարող են հանդես գալ սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում և 2-րդ ենթակետի երրորդ պարբերության մեջ նշված անձինք՝ ծառայությունների մատուցման մասին պայմանագրի հիման վրա:

4. Հանձնաժողովն իրավունք ունի որոշելու ԱՏԳ ռեզիդենտներ (մասնակիցներ, սուբյեկտներ) չհանդիսացող՝ անդամ պետությունների անձանց և այն դեպքերը, երբ այդ անձինք կարող են հանդես գալ որպես «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների հայտարարատուներ:

5. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմաններն են՝

1) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների տեղավորումը և դրանց գտնվելը ԱՏԳ տարածքում՝ ԱՏԳ գործունեության ժամկետի ընթացքում կամ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի՝ ԱՏԳ տարածքում կիրառման ժամկետի ընթացքում կամ նախքան անձի կողմից ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կարգավիճակը կորցնելը՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 4-րդ կետը.

2) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների օգտագործումը ԱՏԳ տարածքում՝

«ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին» համաձայնագրին (պայմանագրին) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրին, ներդրումային հայտարարագրին, ձեռնարկատիրական ծրագրին) համապատասխան կամ սույն Օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված նպատակներին համապատասխան.

նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտ (մասնակից, սուբյեկտ) չհանդիսացող անձի և նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) միջև կնքված ծառայությունների մատուցման մասին պայմանագրին համապատասխան, եթե ապրանքները «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպվել են նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում այդպիսի ծառայությունների մատուցման համար.

3) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների տեղավորումը և օգտագործումը ԱՏԳ տարածքում, որոնք իրականացվում են՝

այդպիսի ապրանքների հայտարարատուի կամ սույն Օրենսգրքով սահմանված կամ սույն Օրենսգրքին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող այլ անձանց կողմից.

նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից, եթե նա ապրանքների պահպանումն իրականացնում է ծառայությունների մատուցման մասին պայմանագրով և չի հանդիսանում այդպիսի ապրանքների հայտարարատու.

4) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ գործողությունների կատարումը՝ սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածին համապատասխան:

6. ԱՏԳ գործունեությունը դադարեցնելու կամ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կիրառումը դադարեցնելու մասին որոշում ընդունելու դեպքում կամ անձի կողմից ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կարգավիճակը կորցնելու դեպքում սույն հոդվածի 5-րդ կետով սահմանված «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների օգտագործման պայմանները պետք է պահպանվեն մինչև այդ մաքսային ընթացակարգի գործողության ավարտը կամ դադարեցումը՝ սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերին համապատասխան:

7. Այն դեպքում, երբ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտը (մասնակիցը, սուբյեկտը) ծառայությունների մատուցման պայմանագրով իրականացնում է այն ապրանքների պահպանումը, որոնց հայտարարատուն չէ, նա պարտավոր է պահպանել ապրանքների օգտագործման պայմանները՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան:

Հոդված 203. ԱՏԳ տարածքը և ԱՏԳ տարածքում իրականացվող մաքսային գործառնությունները

1. ԱՏԳ տարածքը համարվում է մաքսային հսկողության գոտի:

Անդամ պետության օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ այդպիսի անդամ պետության տարածքում ստեղծված առանձին ԱՏԳ-ների տարածքները մաքսային հսկողության գոտիներ չեն համարվում:

2. ԱՏԳ տարածքը պետք է ապահովված լինի մաքսային հսկողության իրականացման համար հարմարություններով:

ԱՏԳ տարածքը համապատասխան հարմարություններով ապահովելուն ներկայացվող պահանջները՝ ներառյալ այդ տարածքի սահմանագծի երկայնքով պարսպապատման և տեսահսկման համակարգի տեղադրման պահանջները, սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

ԱՏԳ տարածքում հսկիչ-անցագրային ռեժիմի ապահովումը՝ ներառյալ այդ տարածք անձանց մուտք գործելու կարգի սահմանումը, իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

3. ԱՏԳ տարածքում տեղավորվող ապրանքների նկատմամբ մաքսային գործառնություններն իրականացվում են սույն Օրենսգրքին համապատասխան՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

4. Ապրանքների ներմուծումը ԱՏԳ տարածք, բացառությամբ նավահանգստային ԱՏԳ և լոգիստիկ ԱՏԳ, իրականացվում է մաքսային մարմնին այդ ներմուծման մասին ծանուցելու միջոցով, մինչդեռ ապրանքների արտահանումը ԱՏԳ տարածքից իրականացվում է մաքսային մարմնի թույլտվությամբ:

Նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ապրանքների ներմուծումն իրականացվում է մաքսային մարմնի թույլտվությամբ:

Մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել նշված ծանուցումը ներկայացնելու և նշված թույլտվությունները տրամադրելու կարգը, ինչպես նաև այդպիսի ծանուցումների և թույլտվությունների ձևերը:

Նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքից այն ապրանքների մեկնման դեպքում, որոնք այդպիսի ԱՏԳ-ների տարածքների սահմաններից դուրս ձևակերպված են «արտահանում» մաքսային ընթացակարգով, «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով, «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով, «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով, հատուկ մաքսային ընթացակարգով, նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտը (մասնակիցը, սուբյեկտը) մաքսային մարմին է ներկայացնում տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ բեռնաթափման վայր (նավահանգիստ, օդանավակայան) է Միության մաքսային տարածքից դուրս գտնվող վայրը:

Մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել ԱՏԳ տարածք ապրանքների ներմուծման և ԱՏԳ տարածքից ապրանքների արտահանման՝ սույն կետով նախատեսվածից տարբերվող կարգ:

5. Նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ապրանքների ներմուծման ժամանակ սույն Օրենսգրքի 204-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան այն ապրանքների նկատմամբ, որոնք ենթակա չեն մաքսային հայտարարագրման, իրականացվում են միայն սույն Օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-5-րդ կետերով նախատեսված՝ Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման հետ կապված մաքսային գործառնությունները:

6. Մաքսային մարմիններն իրավասու են իրականացնել ԱՏԳ տարածք ներմուծվող ապրանքների նույնականացում: ԱՏԳ տարածք ներմուծվող ապրանքները մաքսային մարմնի կողմից նույնականացնելու կարգը սահմանվում է մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

7. Հայտարարատուն վարում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների հաշվառում և ներկայացնում է այդ ապրանքների հաշվետվությունն այն անդամ պետության մաքսային մարմին, որի տարածքում ստեղծվել է ԱՏԳ-ն:

«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հետ կատարվող ցանկացած փոփոխություն պետք է արտացոլվի հաշվառման փաստաթղթերում:

«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների հաշվառումը վարելու կարգը, ինչպես նաև այդպիսի ապրանքների մասին մաքսային մարմին հաշվետվություն ներկայացնելու կարգը սահմանվում են մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 204. Նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվող ապրանքների՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպման առանձնահատկությունները

1. Նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվող ապրանքները համարվում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք

դրանց ներմուծման օրվանից՝ բացառությամբ այն ապրանքների, որոնք սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան ենթակա չեն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպման:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծված միջազգային փոստային առաքանիների և միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների նկատմամբ: Այդպիսի միջազգային փոստային առաքանիների և միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների նկատմամբ մաքսային գործառնություններն իրականացվում են նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում տեղակայված միջազգային փոստափոխանակման վայրում (հաստատությունում)՝ սույն Օրենսգրքին համապատասխան:

3. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպման ենթակա չեն՝

1) միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները, որոնք ներմուծվում են նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք և արտահանվում են նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքից՝ կապված այդ տրանսպորտային միջոցներով ապրանքների միջազգային փոխադրում իրականացնելու հետ, ինչպես նաև նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվող և նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքից արտահանվող՝ Միության տարածքով ապրանքների փոխադրումն առանց այդ տարածքը լքելու իրականացնող տրանսպորտային միջոցները.

2) Միության ապրանքները, որոնք ներմուծվում են նավահանգստային ԱՏԳ տարածք կամ արտահանվում են նավահանգստային ԱՏԳ տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ ծովային նավահանգստի, գետային նավահանգստի, օդանավակայանի վարչակազմի կողմից, ինչպես նաև ԱՏԳ ռեզիդենտներ (մասնակիցներ, սուբյեկտներ) չհանդիսացող և ծովային նավահանգստում, գետային նավահանգստում, օդանավակայանում նավագնացության անվտանգության ապահովման, օդանավերի թռիչքների անվտանգության ապահովման, ծովային նավահանգստի, գետային նավահանգստի, օդանավակայանի ենթակառուցվածքի օբյեկտների շահագործման անվտանգության ապահովման մասով գործառույթներ կամ ծովային նավահանգստում, գետային նավահանգստում, օդանավակայանում գործունեության իրականացման հետ կապված այլ գործառույթներ իրականացնող անձանց կողմից.

3) Միության ապրանքները, որոնք նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ վարչակազմի կողմից ներմուծվում են նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք կամ արտահանվում են նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ կապված այդ ԱՏԳ-ների գործունեության ապահովման հետ.

4) նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվող և դրա սահմաններից դուրս նախքան այդպիսի ներմուծումը «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով, «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով, «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով, հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները.

5) նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվող և անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերում դրա սահմաններից դուրս նախքան այդպիսի ներմուծումն «արտահանում» մաքսային ընթացակարգով կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները.

6) նավահանգստային ԱՏԳ տարածք ներմուծվող և նավահանգստային ԱՏԳ տարածքից արտահանվող ձկնարդյունագործական նավատորմի նավերը՝ այդպիսի նավերից ջրային կենսաբանական պաշարների որսը, ջրային կենսաբանական պաշարներից արտադրված ձկնային և (կամ) այլ արտադրանքը նշված նավերի վրա բեռնաթափելու հետ կապված, և (կամ) պաշար հանդիսացող ապրանքներն այդպիսի նավերի վրա բեռնելու նպատակով.

7) սույն կետի 1-ին և 6-րդ ենթակետերում նշված տրանսպորտային միջոցներով տեղափոխվող պաշարները:

4. Նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծված ապրանքները ենթակա չեն մաքսային հայտարարագրման՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ և մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերի՝ սույն կետի երրորդ պարբերությանը համապատասխան:

Մաքսային հայտարարագրման ենթակա են այն ապրանքները, որոնք ներմուծված են ԱՏԳ ռեզիդենտների (մասնակիցների, սուբյեկտների) կողմից՝ նավահանգստային ԱՏԳ տարածքում տեղակայված ծովային նավահանգստի, գետային նավահանգստի, օդանավակայանի ենթակառուցվածքի օբյեկտների կամ լոգիստիկ ԱՏԳ ենթակառուցվածքի օբյեկտների կառուցման, վերակառուցման նպատակներով:

Մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել այլ դեպքեր, երբ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծված ապրանքները ենթակա են մաքսային հայտարարագրման, ինչպես նաև կարող է սահմանվել մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքների վերաբերյալ մաքսային հայտարարագրի ներկայացման ժամկետ:

Հոդված 205. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ իրականացվող գործողությունները

1. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ ԱՏԳ տարածքում թույլատրվում է ցանկացած գործառնության իրականացում, այդ թվում՝

1) պահպանումը.

2) ապրանքների բեռնման (բեռնաթափման) գործողությունները և պահպանման հետ կապված այլ բեռնային գործողություններ.

3) ապրանքների պահպանվածության ապահովման համար անհրաժեշտ գործառնությունները, ինչպես նաև ապրանքները փոխադրման (տրանսպորտային փոխադրման) նախապատրաստելու մասով սովորական գործառնությունները, այդ թվում՝ խմբաքանակի մասնատումը, առաքումների կազմավորումը, տեսակավորումը, փաթեթավորումը, վերափաթեթավորումը, մակնշումը, ապրանքների հատկությունների բարելավմանն ուղղված գործառնությունները.

4) ապրանքների վերամշակման (մշակման), ապրանքների պատրաստման (այդ թվում՝ հավաքման, կազմատման, մոնտաժման, հարմարեցման), ապրանքների վերանորոգման կամ տեխնիկական սպասարկման գործառնությունները, այդ թվում՝ այնպիսիք, որոնց իրականացման ժամանակ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները մասնակցում կամ օժանդակում են ապրանքների պատրաստմանը (ստացմանը), նույնիսկ եթե ապրանքների պատրաստման (ստացման) ընթացքում այդպիսի օտարերկրյա ապրանքներն ամբողջությամբ կամ մասամբ ծախսվում են (օգտագործվում են) և (կամ) չեն պարունակվում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում (այսուհետ սույն գլխում՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման գործողություններ): «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման գործողություններ իրականացնելիս ապրանքների պատրաստմանը (ստացմանը) մասնակցող կամ օժանդակող օտարերկրյա ապրանքների շարքին չեն դասվում տեխնոլոգիական գործընթացում օժանդակ միջոցներ հանդիսացող ապրանքները, օրինակ՝ սարքավորումները, հաստոցները, հարմարանքները.

5) սույն կետի 4-րդ ենթակետում նշված՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման գործողություններ իրականացնելիս ապրանքների ծախսում (սպառում) չհանդիսացող՝ ապրանքների սպառումը՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում.

6) ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրությունը՝ սույն Օրենսգրքի 17-րդ հոդվածին համապատասխան:

2. Ապրանքների ամբողջական կամ մասնակի սպառման փաստը՝ ներառյալ ապրանքների պատրաստման (ստացման) ընթացքում, ԱՏԳ տարածքում անշարժ գույքի օբյեկտների ստեղծման, արտադրական գործընթացների ապահովման, ԱՏԳ տարածքում օգտագործվող սարքավորումների, մեքենաների և ագրեգատների պահպանման և շահագործման ընթացքում ծախսման (սպառման) դեպքում պետք է արտացոլվի սույն Օրենսգրքի 203-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան մաքսային մարմին ներկայացվող հաշվետվության մեջ:

3. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ ԱՏԳ տարածքում թույլատրվում է սույն հոդվածի 1-ին կետում նշված գործառնությունների իրականացումը, եթե այդպիսի գործառնությունները համապատասխանում են «ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին» համաձայնագրի (պայմանագրի) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրի, ներդրումային հայտարարագրի, ձեռնարկատիրական ծրագրի) պայմաններին:

4. Մաքսային մարմնի թույլտվությամբ թույլատրվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների արտահանումն ԱՏԳ տարածքից՝ առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու՝ հետևյալ դեպքերում՝

1) սարքավորումներ, այլ հիմնական արտադրական միջոցներ հանդիսացող նշված ապրանքները, որոնք շահագործման մեջ են դրվել և օգտագործվում են ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից, կամ նշված հիմնական արտադրական միջոցների մասեր համարվող ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ դրանց վերանորոգման (բացառությամբ կապիտալ վերանորոգման, արդիականացման), տեխնիկական սպասարկման կամ այդ ապրանքները բնականոն (աշխատանքային) վիճակում պահելու նպատակով անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնելու համար.

2) նշված ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ դրանց տեխնիկական փորձարկման, հետազոտման, թեստավորման, ստուգման, այդ թվում՝ արտադրական գործընթացով նախատեսված գործողություններ իրականացնելու, ինչպես նաև որպես նմուշներ ցուցադրելու համար.

3) նշված ապրանքներն արտահանվում են այն անդամ պետության մաքսային տարածքի մնացած մաս, որի տարածքում ստեղծվել է ԱՏԳ-ն՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելուն ուղղված մաքսային գործառնություններն այն մաքսային մարմնում իրականացնելու համար, որը, մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, իրավասու է այդպիսի ապրանքների նկատմամբ իրականացնելու մաքսային գործառնություններ.

4) նշված ապրանքներն արտահանվում են այն անդամ պետության մնացած հատված, որի տարածքում ստեղծվել է

ԱՏԳ-ն՝ սեփական արտադրական և տեխնոլոգիական կարիքների համար: Պայմանները, որոնց դեպքում թույլատրվում է ԱՏԳ տարածքից նշված ապրանքների արտահանումը, ինչպես նաև անդամ պետության տարածքի այն հատվածը, որտեղ թույլատրվում է այդպիսի արտահանումը, սահմանվում են Հանձնաժողովի կողմից.

5) նշված ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքի մնացած մաս ապրանքների վերամշակման (մշակման), ապրանքների պատրաստման, այդ թվում՝ հավաքման, մոնտաժման, հարմարեցման և Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ գործողություններ իրականացնելու համար՝ պայմանով, որ այդպիսի ապրանքների հետ կապված այդ ԱՏԳ տարածքում բացակայում են այդպիսի գործողություններ իրականացնելու պայմանները և հնարավորությունը: Այն դեպքերը և պայմանները, երբ այդ դեպքում թույլատրվում է նշված ապրանքների արտահանումը ԱՏԳ տարածքից, սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

5. Սույն հոդվածի 4-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված ապրանքները ենթակա են հետադարձ ներմուծման ԱՏԳ տարածք մինչև մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալը՝ ելնելով այդ գործողությունների իրականացման նպատակներից և հանգամանքներից: Մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) հիմնավորված դիմումի հիման վրա:

Սույն հոդվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ապրանքների նկատմամբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը պետք է ավարտվի մինչև մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալը: Մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) հիմնավորված դիմումի հիման վրա:

6. Մաքսային մարմնի կողմից սույն հոդվածի 4-րդ կետում նշված թույլտվության տրամադրման կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

7. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված բոլոր ապրանքների կամ ապրանքների մի մասի, և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ ԱՏԳ տարածքում կարող են իրականացվել գործարքներ, որոնք նախատեսում են այդ ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքների փոխանցում: Ընդ որում, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը պետք է ավարտվի սույն Օրենսգրքով սահմանված կարգով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն հոդվածի 8-րդ, 10-րդ և 11-րդ կետերին համապատասխան՝ թույլատրվում է նշված ապրանքների փոխանցումը՝ առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու:

8. Թույլատրվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների փոխանցում տիրապետման և (կամ) օգտագործման՝ առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու.

1) կապալառուին (ենթակապալառուին) կամ այլ՝ այդ թվում ԱՏԳ ռեզիդենտ (մասնակից, սուբյեկտ) չհանդիսացող անձին՝ ԱՏԳ տարածքում շինարարական և (կամ) մոնտաժման կապալային աշխատանքների իրականացման համար.

2) փոխադրողին՝ դրանք փոխադրելու համար.

3) անձանց, որոնք իրականացնելու են վերանորոգում (բացառությամբ կապիտալ վերանորոգման, արդիականացման), տեխնիկական սպասարկում և (կամ) այդպիսի ապրանքները բնականոն (աշխատանքային) վիճակում պահպանելու համար անհրաժեշտ այլ գործողություններ.

4) անձանց, որոնք իրականացնելու են արտադրական գործընթացով նախատեսված՝ այդպիսի ապրանքների տեխնիկական փորձարկման, հետազոտման, թեստավորման, ստուգման գործառնություններ, ինչպես նաև դրանց՝ որպես նմուշ ցուցադրությունը.

5) անձանց, որոնք իրականացնելու են սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված գործառնություններ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում, իսկ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ-ներ չհանդիսացող ԱՏԳ-ների տարածքներում.

6) անձանց, որոնք իրականացնելու են ԱՏԳ տարածքից արտահանվող ապրանքների նկատմամբ գործառնություններ՝ սույն հոդվածի 4-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում:

9. Սույն հոդվածի 8-րդ կետում նշված անձանց տիրապետման և (կամ) օգտագործման համար ապրանքների փոխանցումը «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատուին չի ազատում սույն գլխով նախատեսված՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները պահպանելուց:

10. Մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել դեպքեր, երբ թույլատրվում է ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքների փոխանցում այդ ԱՏԳ այլ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի)՝ առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու, ինչպես նաև՝ այդ դեպքերում ապրանքների փոխանցման կարգը և պայմանները:

Այդպիսի դեպքեր հայտնաբերելու դեպքում անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ

«ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները պահպանելու և այդպիսի մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու հայտարարատուի պարտականությունները վերապահվում են այն անձանց, որոնց փոխանցվել են նշված ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքները, ինչպես նաև կարող է սահմանվել այն պահը, որից դրանք վերապահվում են այդ անձանց:

11. Մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետության օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ այդպիսի անդամ պետության տարածքում ստեղծված առանձին ԱՏԳ-ների տարածքներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքների փոխանցումը թույլատրվում է՝ առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու:

Նշված դեպքում անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները պահպանելու և այդպիսի մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտելու հայտարարատուի պարտականությունները վերապահվում են այն անձանց, որոնց փոխանցվել են նշված ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքները, ինչպես նաև կարող է սահմանվել այն պահը, որից դրանք վերապահվում են այդ անձանց:

12. Անձի կողմից նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կարգավիճակը կորցնելու դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները անձի կողմից կարգավիճակը կորցնելու օրվանից 4 ամսվա ընթացքում, ԱՏԳ այդպիսի ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) հետ ծառայությունների մատուցման մասին պայմանագիր կնքած անձանց կողմից կարող են փոխանցվել նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ այլ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի)՝ այդպիսի այլ ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) հետ կնքվող ծառայությունների մատուցման մասին պայմանագրի հիման վրա կամ կարող են ձևակերպվել սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով:

Այն դեպքում, եթե այդ գործողությունները սահմանված ժամկետում չեն կատարվում, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն այդ ժամկետը լրանալուց հետո դադարում է, իսկ ապրանքներն արգելապահվում են մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

13. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու այն գործողությունների, այդ թվում՝ գործառնությունների, ցանկը, որոնք չեն կարող իրականացվել «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հետ:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել տվյալ պետությունների տարածքներում ստեղծված (ստեղծվող) ԱՏԳ-ում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ արգելված գործողությունների, այդ թվում՝ գործառնությունների, ցանկը:

Հոդված 206. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների նույնականացումը «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում

1. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում նույնականացնելու նպատակներով կարող են օգտագործվել հետևյալ միջոցները՝

1) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների վրա կնիքների, դրոշմակնիքների զետեղում, թվային և այլ դրոշմավորման կատարում.

2) օտարերկրյա ապրանքների մանրամասն նկարագրում, լուսանկարում, մասշտաբային պատկերում.

3) օտարերկրյա ապրանքների և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների՝ նախապես վերցված փորձանմուշների և (կամ) նմուշների համադրում.

4) ապրանքների առկա դրոշմավորման օգտագործում՝ ներառյալ սերիական համարների ձևով դրոշմավորումը.

5) այլ եղանակներ, որոնք կարող են կիրառվել՝ ելնելով «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների բնույթից և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման գործողություններից, այդ թվում՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով, որոնք պարունակում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման գործողություններ իրականացնելու տեխնոլոգիական գործընթացում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործման, ինչպես նաև դրանց արտադրության տեխնոլոգիայի մասին ներկայացված մանրամասն տեղեկություններ, կամ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման գործողություններ կատարելու ժամանակ մաքսային հսկողության իրականացման միջոցով:

2. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները «ազատ մաքսային

գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում նույնականացնելու կարգը սահմանվում է մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 207. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը և դադարեցնելը

1. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը պետք է ավարտվի հետևյալ դեպքերում՝

1) ԱՏԳ գործունեության դադարեցման կամ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կիրառումը դադարեցնելու մասին որոշում ընդունելու դեպքում՝ ԱՏԳ գործողությունը դադարեցնելու կամ այդպիսի որոշում ընդունելու օրվանից 6 ամսվա ընթացքում.

2) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ապրանքները ձևակերպած անձի կողմից ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կարգավիճակը կորցնելու դեպքում՝ անձի կողմից այդպիսի կարգավիճակը կորցնելու օրվանից 6 ամսվա ընթացքում.

3) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներն ԱՏԳ տարածքից արտահանելու դեպքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի ապրանքներն արտահանվում են՝

սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 4-րդ կետում նշված նպատակներով.

սույն հոդվածի 8-րդ կետով նախատեսված դեպքում դրանց՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան մեկ ԱՏԳ տարածքից դեպի այլ ԱՏԳ տարածք փոխադրման համար.

թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ եղանակով ոչնչացնելու նպատակով՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, եթե այդպիսի ապրանքները կորցրել են իրենց սպառողական հատկությունները և դարձել են ոչ պիտանի այն նպատակով օգտագործվելու համար, որի համար նախատեսված են.

4) սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետին համապատասխան ապրանքների սպառման դեպքում.

5) ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքներն ԱՏԳ այլ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կամ ԱՏԳ ռեզիդենտ (մասնակից, սուբյեկտ) չհանդիսացող այլ անձի՝ սույն հոդվածի 8-րդ և 9-րդ կետերին համապատասխան փոխանցելու դեպքում՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 8-րդ, 10-րդ և 11-րդ կետերում նշված դեպքերում ապրանքների փոխանցման:

2. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելիս ապրանքների հայտարարատու կարող է հանդես գալ՝

1) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման ժամանակ որպես հայտարարատու հանդես եկող անձը.

2) ԱՏԳ ռեզիդենտը (մասնակիցը, սուբյեկտը), որին սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան փոխանցված են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքները.

3) այն անձը, որին սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան փոխանցված են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքները.

4) ԱՏԳ ռեզիդենտը (մասնակիցը, սուբյեկտը) կամ սույն Օրենսգրքի 202-րդ հոդվածի 3-րդ կետում նշված անձինք՝ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում գտնվող ապրանքների նկատմամբ.

5) ԱՏԳ ռեզիդենտ (մասնակից, սուբյեկտ) չհանդիսացող անձը, որին փոխանցված են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքները, եթե «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է սույն հոդվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետին կամ 6-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան:

3. ԱՏԳ գործունեության դադարեցման կամ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կիրառումը դադարեցնելու մասին որոշում ընդունելու դեպքում, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է դրա տարածքում գտնվող՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով ձևակերպելով՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի՝ հաշվի առնելով սույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ կետերը կամ ավարտվում է՝ առանց սույն հոդվածի 10-րդ և 12-րդ կետերին համապատասխան մաքսային

ընթացակարգերով ձևակերպելու:

Հանձնաժողովն իրավունք ունի է սահմանելու «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու այլ կարգ այն ԱՏԳ-ների գործունեության դադարեցման դեպքում, որոնց սահմաններն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են Միության մաքսային սահմանի հատվածների հետ, կամ այդ ԱՏԳ տարածքներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կիրառումը դադարեցնելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում:

Սույն կետի առաջին պարբերությանը համապատասխան «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը չավարտելու դեպքում այդ մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ժամկետը լրանալուն պես, իսկ ապրանքներն արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

4. Անձի կողմից ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կարգավիճակը կորցնելու դեպքում, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով ձևակերպելով՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի՝ հաշվի առնելով սույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ կետերը կամ ավարտվում է՝ առանց սույն հոդվածի 10-րդ և 13-րդ կետերին համապատասխան մաքսային ընթացակարգերով ձևակերպելու:

Սույն կետի առաջին պարբերությանը համապատասխան «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը չավարտելու դեպքում այդ մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված ժամկետը լրանալուն պես, իսկ ապրանքներն արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

5. ԱՏԳ տարածքից ապրանքները Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս արտահանելու համար «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝

1) «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով ներքոնշյալ ապրանքները՝

«ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված և անփոփոխ վիճակում արտահանվող օտարերկրյա ապրանքները, բացի բնական մաշվածության հետևանքով առաջացած փոփոխություններից, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով առաջացած փոփոխություններից.

«ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, այն դեպքում, երբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները չեն ճանաչվել Միության ապրանքներ՝ սույն Օրենսգրքի 210-րդ հոդվածին համապատասխան.

2) «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով ներքոնշյալ ապրանքները՝

Միության՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները.

Միության ապրանքներից պատրաստված (ստացված), այդ թվում՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով չձևակերպված ապրանքները.

«ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, այն դեպքում, երբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները ճանաչվել են Միության ապրանքներ՝ սույն Օրենսգրքի 210-րդ հոդվածին համապատասխան.

3) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված և նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքից անփոփոխ վիճակում արտահանվող օտարերկրյա ապրանքները սույն Օրենսգրքի 142-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերին համապատասխան «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով՝ բացի բնական մաշվածության հետևանքով առաջացած փոփոխություններից, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով առաջացած փոփոխություններից:

6. ԱՏԳ տարածքից ապրանքները Միության մաքսային տարածքի մնացած մաս արտահանելու համար «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝

1) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման գործողություններին չենթարկված օտարերկրյա ապրանքները և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 4, 5, 7, 10, 14-16-րդ ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով ձևակերպելով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 7-րդ կետը.

2) «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով ներքոնշյալ ապրանքները՝

«ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքները, որոնք մնացել են անփոփոխ վիճակում, բացի բնական մաշվածության հետևանքով առաջացած փոփոխություններից, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով առաջացած փոփոխություններից.

«ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ բացառապես Միության ապրանքներից, այդ

թվում՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով չձևակերպված Միության ապրանքների օգտագործմամբ պատրաստված (ստացված) ապրանքները.

3) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված և մեկ անդամ պետության նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքից այլ անդամ պետության տարածք անփոփոխ վիճակում արտահանվող օտարերկրյա ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով՝ բացի բնական մաշվածության հետևանքով առաջացած փոփոխություններից, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով առաջացած փոփոխություններից:

7. Եթե «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կազմի մեջ են մտնում օտարերկրյա ապրանքներ, որոնց նկատմամբ տարածվում են ներքին շուկայի պաշտպանության միջոցները, այդպիսի ապրանքները ԱՏԳ տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս արտահանելու համար կարող են ձևակերպվել սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2 կետի 1-ին և 7-րդ ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով՝ պայմանով, որ այդ ապրանքներում կնույնականացվեն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները:

8. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքները նշված ապրանքներն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպած ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից ԱՏԳ այլ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) փոխանցելիս «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է այն ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով այդ ապրանքների ձևակերպմամբ, որին փոխանցվել են այդպիսի ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքները:

Եթե նշված դեպքում անհրաժեշտ է փոխադրել ապրանքները ԱՏԳ մեկ տարածքից ԱՏԳ այլ տարածք, այդպիսի փոխադրումն իրականացվում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ սույն Օրենսգրքի 22-րդ գլխով նախատեսված կարգով և պայմաններով՝ բացառությամբ սույն կետի երրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի:

Միության ապրանքները փոխադրվում են ԱՏԳ մեկ տարածքից ԱՏԳ այլ տարածք՝ առանց այդ ապրանքները «մաքսային տարանցում» ընթացակարգով ձևակերպելու, եթե այդպիսի ԱՏԳ-ները գտնվում են մեկ անդամ պետության տարածքում՝ բացառությամբ Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով տեղափոխվող Միության ապրանքների:

9. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքները նշված ապրանքներն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպած ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից ԱՏԳ ռեզիդենտ չհանդիսացող անձին (մասնակցին, սուբյեկտին) ԱՏԳ տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս արտահանելու համար փոխանցելիս «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է այդպիսի ապրանքները սույն հոդվածի 6-րդ կետի 1-ին ենթակետում նշված ընթացակարգերով ձևակերպելով, բացառությամբ դեպքերի, երբ սույն հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետին համապատասխան ապրանքները կարող են արտահանվել ԱՏԳ տարածքից՝ առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու:

10. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝ առանց սույն հոդվածի 12-րդ և 13-րդ կետերով նախատեսված դեպքերում ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելու, ինչպես նաև հետևյալ դեպքերում.

1) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները կորցրել են իրենց սպառողական հատկությունները և դարձել են ոչ պիտանի են այն նպատակով օգտագործվելու համար, որի համար նախատեսված են, արտահանվում են ԱՏԳ տարածքից՝ թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ եղանակով ոչնչացնելու նպատակով՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների մի մասի նկատմամբ, որը համապատասխանում է թաղված, վնասազերծված, ուտիլիզացված և (կամ) այլ եղանակով ոչնչացված ապրանքների քանակին, և սահմանվում է մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

2) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ոչնչացվել և (կամ) անվերադարձ կորել են վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով կամ անվերադարձ կորել են փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով, և այդ ոչնչացման կամ անվերադարձ կորստի փաստը ճանաչվել է մաքսային մարմնի կողմից՝ մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

3) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները սպառվել են՝ սույն

Օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետին համապատասխան.

4) նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները, որոնք մնացել են անփոփոխ վիճակում, բացի բնական մաշվածության հետևանքով առաջացած փոփոխություններից, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով առաջացած փոփոխություններից, անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերում Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս արտահանվում են այն մեկնման վայրով, որին միանում է այդպիսի նավահանգստային ԱՏԳ-ն կամ լոգիստիկ ԱՏԳ-ն:

11. Սույն հոդվածի 10-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու կարգը սահմանվում է մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Սույն հոդվածի 10-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

12. ԱՏԳ գործունեությունը դադարեցնելու կամ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կիրառումը դադարեցնելու մասին որոշում ընդունելու դեպքում, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված, «ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին» համաձայնագրի (պայմանագրի) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրի, ներդրումային հայտարարագրի, ձեռնարկատիրական ծրագրի) իրականացման համար ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից շահագործման մեջ դրված և օգտագործվող՝ սարքավորում հանդիսացող ապրանքների կամ ԱՏԳ տարածքում անշարժ գույքի օբյեկտներ ստեղծելու համար օգտագործված և անշարժ գույքի այդպիսի օբյեկտների բաղկացուցիչ մաս կազմող ապրանքների համար «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է առանց նշված ապրանքները անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային ընթացակարգերով ձևակերպելու:

Հանձնաժողովն իրավասու է սահմանել նշված ապրանքների նկատմամբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողության ավարտելու կարգը:

Նշված ապրանքները Միության ապրանքների կարգավիճակ են ձեռք բերում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու օրվանից:

13. «ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին» համաձայնագրի (պայմանագրի) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրի, ներդրումային հայտարարագրի, ձեռնարկատիրական ծրագրի) գործողության ժամկետը լրանալու և այդ Համաձայնագրով սահմանված պայմանները կատարելու հետ կապված՝ անձի կողմից ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կարգավիճակը կորցնելու դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված, «ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին» համաձայնագրի (պայմանագրի) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրի, ներդրումային հայտարարագրի, ձեռնարկատիրական ծրագրի) իրականացման համար ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից շահագործման մեջ դրված և օգտագործվող՝ սարքավորում հանդիսացող ապրանքների կամ ԱՏԳ տարածքում անշարժ գույքի օբյեկտներ ստեղծելու համար օգտագործված և անշարժ գույքի այդպիսի օբյեկտների բաղկացուցիչ մաս կազմող ապրանքների համար «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է առանց նշված ապրանքները անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային ընթացակարգերով ձևակերպելու:

Հանձնաժողովն իրավասու է սահմանել նշված ապրանքների նկատմամբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու կարգը:

Նշված ապրանքները Միության ապրանքների կարգավիճակ են ձեռք բերում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու օրվանից:

14. ԱՏԳ ռեզիդենտ (մասնակից, սուբյեկտ) հանդիսացող անձի լուծարման (գործունեության դադարեցման) դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 208. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացումը և դադարեցումը, դրանց վճարման ժամկետն ու հաշվարկումը

1. Հայտարարատուի՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագիրը գրանցելու պահից՝ բացառությամբ սույն կետի երկրորդ և երրորդ պարբերություններով նախատեսված դեպքերի:

«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) այն օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը, որոնք բացթողման համար հայտագրվել են նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը, նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը ներկայացրած անձի

համար առաջանում է նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու պահից:

Հայտարարատուի՝ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է դրանք նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծելու պահից:

2. Միության անդամ չհանդիսացող պետության տարածքից նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծվող և սույն Օրենսգրքի 204-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն մաքսային հայտարարագրման չենթարկվող օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու՝ ծառայությունների մատուցման մասին պայմանագիր կնքած նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) պարտավորությունն առաջանում է այդ ապրանքները նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծելու պահից:

3. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է այն անձանց համար, որոնց սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետերին համապատասխան փոխանցվել են այդպիսի ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքները, և որոնց անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան վերապահված է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները պահպանելու և այդպիսի մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու հայտարարատուի պարտականությունները՝ այն պահից, որից հայտարարատուի նշված պարտականությունները վերապահվում են այդպիսի անձանց:

4. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու՝ սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված անձանց պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածին համապատասխան «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելը, այդ թվում՝ սույն հոդվածի 7-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալը՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերության մեջ նշված ապրանքները «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու.

2) սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերության մեջ նշված՝ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների՝ Միության մաքսային տարածքից արտահանումը.

3) այն ապրանքները, որոնց նկատմամբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվել է, և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան մաքսային ընթացակարգերով ձևակերպելը՝ այն մաքսային ընթացակարգի կիրառման շրջանակներում, որի գործողությունը դադարեցվել է.

4) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումը և (կամ) սույն հոդվածի 8-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձումը.

5) մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդ ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը, սույն Օրենսգրքին համապատասխան, այդ օտարերկրյա ապրանքների համար վրա է հասել ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը.

6) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը մերժելը՝ ապրանքների հայտարարագրի կամ նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

7) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան ապրանքների հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

8) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

9) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

10) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ մաքսային ընթացակարգերից որևէ մեկով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումը ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգի իրականացման) ընթացքում, և որոնց նկատմամբ ընդունվել է դրանք վերադարձնելու մասին որոշում, եթե նախկինում այդպիսի ապրանքների բացթողում չի իրականացվել:

5. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է սույն հոդվածի 1-ին և 3-րդ կետերում նշված անձանց համար՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքները փոխանցելիս՝ առանց սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետերին համապատասխան «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու, եթե այդպիսի ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքները փոխանցելիս «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները պահպանելու և այդպիսի մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու հայտարարատուի պարտականությունները վերապահված են այն անձանց, որոնց փոխանցվել են այդ իրավունքները:

6. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն հոդվածի 7-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

7. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները նախքան այդպիսի ապրանքների նկատմամբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը կամ սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 4-րդ կետում նշված դեպքերում առանց մաքսային մարմնի թույլտվության ԱՏԳ տարածքից արտահանելու դեպքում, բացառությամբ դեպքերի, երբ սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի երրորդ և չորրորդ պարբերություններով նախատեսված դեպքերում այդպիսի ապրանքները կարող են արտահանվել առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու՝ ԱՏԳ տարածքից արտահանման օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ, ապա այն օրը, երբ բացահայտվել է այն ԱՏԳ տարածքից այդպիսի արտահանման փաստը, որտեղ կիրառվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգը.

2) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու այլ անձի փոխանցելու դեպքում, բացառությամբ այդ ապրանքները սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 8-րդ, 10-րդ և 11-րդ կետերին համապատասխան փոխանցելու՝ ապրանքների փոխանցման օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ այդպիսի փոխանցման փաստի բացահայտման օրը.

3) սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված դեպքերում ԱՏԳ տարածքից արտահանված ապրանքները՝ մինչև սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 5-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետի լրանալը ԱՏԳ տարածք չվերադարձնելու դեպքում՝ այդ ժամկետը լրանալու օրը.

4) սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքում ԱՏԳ տարածքից արտահանված ապրանքների նկատմամբ՝ մինչև սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 5-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետի լրանալը «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը չավարտելու դեպքում՝ այդ ժամկետը լրանալու օրը.

5) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կորստի դեպքում՝ ապրանքների կորստի օրը՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով այդ ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով դրանց անվերադարձ կորստի, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ այդ կորստի փաստը բացահայտելու օրը.

6) սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 10-րդ կետի 1-ին ենթակետում նշված ապրանքները թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ եղանակով ոչնչացնելու փաստը հաստատող փաստաթղթերը մաքսային մարմին վերջինիս կողմից սահմանված ժամկետում չներկայացվելու դեպքում՝ այդ ապրանքներն ԱՏԳ տարածքի սահմաններից դուրս

արտահանելու օրը.

7) սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված ապրանքների նկատմամբ սույն Օրենսգրքի 139-րդ հոդվածի 5-րդ կետի երրորդ պարբերությանը համապատասխան «արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցնելու դեպքում՝ բացառությամբ «արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունը նշված այն ապրանքների համար դադարեցվելու դեպքի, որոնք այդ մաքսային ընթացակարգի գործողության դադարեցման պահի դրությամբ գտնվում են ԱՏԳ տարածքում՝ սույն Օրենսգրքի 139-րդ հոդվածի 5-րդ կետի առաջին պարբերությամբ սահմանված ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրը:

8. Եթե սույն հոդվածի 7-րդ կետում նշված հանգամանքներն ի հայտ են եկել «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների առնչությամբ, ապա ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե այդպիսի օտարերկրյա ապրանքները ձևակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման:

Եթե սույն հոդվածի 7-րդ կետում նշված հանգամանքներն ի հայտ են եկել «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների առնչությամբ, և այդպիսի ապրանքներում սույն Օրենսգրքի 206-րդ հոդվածի համաձայն նույնականացվել են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների պատրաստման համար օգտագործված օտարերկրյա ապրանքների առնչությամբ այնպես, ինչպես դա կարվեր, եթե օտարերկրյա ապրանքները ձևակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման:

Սույն կետի առաջին և երկրորդ պարբերություններում նշված դեպքերում ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերը, որոնք գործում են մաքսային մարմնի կողմից ապրանքների այն հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ, որը ներկայացվել է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով այդ ապրանքները ձևակերպելու համար՝ այն ապրանքների առնչությամբ, որոնց բացթողումը, դրանք «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս, իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը մաքսային մարմնի կողմից ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելու օրվա դրությամբ, իսկ եթե «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպումը սույն Օրենսգրքին համապատասխան իրականացվել է առանց մաքսային հայտարարագրման՝ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ապրանքների ներմուծման օրվա դրությամբ:

9. Եթե սույն հոդվածի 7-րդ կետում նշված հանգամանքներն ի հայտ են եկել «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների առնչությամբ, և այդպիսի ապրանքներում սույն Օրենսգրքի 206-րդ հոդվածի համաձայն չեն նույնականացվել «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման:

Նշված դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են սույն Օրենսգրքի 7-րդ և 12-րդ գլուխներին համապատասխան:

Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը, որոնք գործում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների առնչությամբ՝ սույն հոդվածի 7-րդ կետին համապատասխան ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ժամկետ հանդիսացող օրվա դրությամբ:

Եթե ապրանքների մաքսային արժեքը որոշելու, ինչպես նաև ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար պահանջվում է արտարժույթը վերահաշվարկել անդամ պետության արժույթով, այդպիսի վերահաշվարկն իրականացվում է սույն հոդվածի 7-րդ կետին համապատասխան ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ժամկետ հանդիսացող օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Այն դեպքում, երբ մաքսային մարմինն իր տրամադրության տակ չունի ապրանքների (դրանց բնույթի, անվանման, քանակի, ծագման և (կամ) մաքսային արժեքի) մասին ճշգրիտ տեղեկություններ, վճարման ենթակա ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման բազան որոշվում է

մաքսային մարմնում առկա տեղեկությունների հիման վրա, ապրանքների դասակարգումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ կետը:

Եթե ապրանքի ծածկագիրը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանվել է 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով, ապա՝

ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հարկերը հաշվարկելու համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող այն ապրանքներին համապատասխանող ավելացված արժեքի հարկի դրույքաչափերից ամենամեծը, ակցիզների (ակցիզային հարկի կամ ակցիզային վճարի) դրույքաչափերից ամենամեծը, որոնց համար սահմանվել է մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը՝ հաշվի առնելով սույն կետի տասներորդ պարբերությունը:

Հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով ապրանքների՝ սույն Օրենսգրքի 4-րդ գլխին համապատասխան հաստատված ծագումից և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններից: Եթե ապրանքների ծագումը և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ հաստատված չեն, ապա հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը, որոնք սահմանվել են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն ծածկագրին դասվող ապրանքների համար, եթե ապրանքի դասակարգումն իրականացվել է 10 նիշի մակարդակով, կամ խմբավորման մեջ մտնող ապրանքների համար, եթե ապրանքների ծածկագրերը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, սահմանվել են 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով:

Ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները հետագայում պարզվելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով այդ ճշգրիտ տեղեկություններից և կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի՝ ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված գումարների վերադարձ (հաշվանցում) կամ չվճարված գումարների բռնագանձում՝ սույն Օրենսգրքի 10-րդ և 11-րդ գլուխներին ու 76-րդ և 77-րդ հոդվածներին համապատասխան:

10. Սույն հոդվածի 8-րդ կետին համապատասխան վճարվող (բռնագանձվող) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի գումարներից պետք է տոկոսներ վճարվեն այնպես, ինչպես եթե նշված գումարների վճարման մասով տրամադրված լիներ հետաձգում՝ ապրանքներն «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից մինչև ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը լրանալու օրը: Նշված տոկոսները հաշվարկվում և վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

11. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու, կամ սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերության մեջ նշված՝ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները Միության մաքսային տարածքից արտահանելու, կամ օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ապրանքները սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան ձևակերպելու, կամ այդպիսի ապրանքները մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումից և (կամ) դրանց բռնագանձումից հետո (ամբողջությամբ կամ մասամբ) սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցնելու (արգելապահելու) դեպքում՝ սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին և 76-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 209. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ՝ առանձին մաքսային ընթացակարգերով դրանք ձևակերպելիս ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունները

1. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ ապրանքների վերամշակման գործողությունների չենթարկված օտարերկրյա ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը, որոնք գործում են՝ մաքսային մարմնի կողմից «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ապրանքները ձևակերպելու

համար ապրանքների հայտարարագիրը գրանցելու օրվա դրությամբ, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումը «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս իրականացվել է նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ ապրանքների բացթողնման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերության մեջ նշված դեպքի:

«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված, ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կողմից շահագործման մեջ դրված և օգտագործվող սարքավորումները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս «ԱՏԳ տարածքում գործունեության իրականացման (վարման) մասին» համաձայնագրի (պայմանագրի) («ԱՏԳ-ում գործունեության պայմանների մասին» պայմանագրի, ներդրումային հայտարարագրի, ձեռնարկատիրական ծրագրի) իրագործման, ինչպես նաև նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների իրացման համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը, որոնք գործում են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ապրանքները ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ:

2. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 5, 7, 10 և 14 ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս՝

1) նշված ապրանքներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների՝ սույն Օրենսգրքի 206-րդ հոդվածին համապատասխան իրականացվող նույնականացման պայմանի դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների պատրաստման համար օգտագործված օտարերկրյա ապրանքների նկատմամբ: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերը, որոնք գործում են մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագրի գրանցման օրը, որը ներկայացվել է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ապրանքները ձևակերպելու համար, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումը, դրանք «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս, իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ մաքսային մարմնի կողմից՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցվելու օրվա դրությամբ.

2) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների համար մաքսային մարմնի կողմից հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների՝ սույն Օրենսգրքի 206-րդ հոդվածին համապատասխան իրականացվող նույնականացման բացակայության դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը հաշվարկելու համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն դրույքաչափերը, որոնք գործում են մաքսային մարմնի կողմից՝ սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 4, 5, 7, 10 և 14-րդ ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով ձևակերպելու նպատակով ներկայացված ապրանքների հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ: Ադվալորային դրույքաչափով ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման բազան այս դեպքում հանդիսանում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների հաշվարկային արժեքը, որի որոշման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

3. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու դեպքում, սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ կետերին համապատասխան, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը հաշվարկելու համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն դրույքաչափերը, որոնք գործում են մաքսային մարմնի կողմից՝ սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 4, 5, 7, 10 և 14-րդ ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով ձևակերպելու նպատակով ներկայացված ապրանքների հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ:

4. Եթե ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար սույն հոդվածի 1-3 կետերում նշված դեպքերում պահանջվում է արտարժույթը վերահաշվարկել անդամ պետության արժույթով, յուրաքանչյուր դեպքի համար սահմանված այդ վերահաշվարկն իրականացվում է ներմուծման

մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերի կիրառման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Հոդված 210. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը որոշելը

1. Այն դեպքում, երբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքից, այդպիսի ապրանքների կարգավիճակը որոշվում է ապրանքների բավարար վերամշակման չափանիշներին համապատասխան, որոնք կարող են արտահայտվել՝

1) Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքների ծածկագրի փոփոխությամբ՝ առաջին 4 նիշերից ցանկացածի մակարդակով.

2) ապրանքի արժեքի փոփոխությամբ, երբ օգտագործված նյութերի արժեքի տոկոսային բաժինը կամ ավելացված արժեքը հասնում է վերջնական արտադրանքի գնում ներառված հաստատագրված բաժնին (ադվալորային բաժնի կանոն).

3) անհրաժեշտ պայմանների, արտադրական և տեխնոլոգիական այնպիսի գործողությունների իրականացմամբ, որոնք բավարար են ապրանքները որպես Միության ապրանքներ ճանաչելու համար:

2. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները Միության մաքսային տարածքից արտահանման նպատակներով ճանաչվում են որպես Միության ապրանքներ, եթե ապրանքների պատրաստման (ստացման) գործողությունների արդյունքում կատարվում է հետևյալ պայմաններից մեկը՝

1) տեղի է ունեցել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքների ծածկագրի փոփոխություն՝ առաջին չորս նիշերից ցանկացածի մակարդակով՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետում նշված դեպքերի.

2) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների արժեքի տոկոսային բաժինը չի գերազանցում վերջնական արտադրանքի գնի մեջ ներառված հաստատագրված բաժինը, կամ ավելացված արժեքը հասնում է վերջնական արտադրանքի գնի մեջ ներառված հաստատագրված բաժնին՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետում նշված դեպքերի.

3) ապրանքների մասով կատարվել են այնպիսի պայմաններ, արտադրական և տեխնոլոգիական գործողություններ, որոնք բավարար են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները որպես Միության ապրանքներ ճանաչելու համար՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերության մեջ նշված դեպքի:

3. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները չեն ճանաչվում որպես Միության ապրանքներ, եթե այդ ապրանքների մասով կատարվել են միայն այն գործողությունները, որոնք չեն համապատասխանում բավարար վերամշակման չափանիշներին՝ անկախ այլ պայմանների կատարումից:

Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքների ծածկագրի փոփոխությունը՝ առաջին չորս նիշերից ցանկացածի մակարդակով, և ադվալորային բաժնի կանոնը չեն կիրառվում որպես «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների բավարար վերամշակման չափանիշներ այն դեպքում, երբ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ սահմանվել է այն պայմանների, արտադրական և տեխնոլոգիական գործողությունների ցանկը, որոնք բավարար են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները որպես Միության ապրանքներ ճանաչելու համար:

4. Այն պայմանների, արտադրական և տեխնոլոգիական գործողությունների ցանկը, որոնք բավարար են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները որպես Միության ապրանքներ ճանաչելու համար, ինչպես նաև այն գործողությունների ցանկը, որոնց կատարումը «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը որոշելիս չի համապատասխանում բավարար վերամշակման չափանիշներին, սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

5. Ադվալորային բաժնի կանոնը որպես «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների բավարար վերամշակման չափանիշ օգտագործելու կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Ադվալորային բաժնի կանոնը Միության ապրանքների վերանորոգման հետ կապված գործողություններ կատարելիս չի կիրառվում որպես բավարար վերամշակման չափանիշ:

6. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը սահմանվում է անդամ պետության լիազորված պետական մարմնի կամ

լիազորված կազմակերպության կողմից:

7. Որպես «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը հաստատող փաստաթուղթ անդամ պետության լիազորված մարմինը կամ լիազորված կազմակերպությունը տրամադրում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները որպես Միության ապրանքներ ճանաչելու վերաբերյալ եզրակացություն կամ եզրակացություն այն մասին, որ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները Միության ապրանքներ չեն:

Նշված եզրակացությունների ձևերը, էլեկտրոնային փաստաթղթերի ձևով ներկայացվող այդ եզրակացությունների կառուցվածքը և ձևաչափը, դրանք լրացնելու, ինչպես նաև դրանց տրամադրման և կիրառման կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

8. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը հաստատող փաստաթղթի բացակայության, չեղյալ կամ անվավեր ճանաչվելու դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելիս այդպիսի ապրանքները, Միության մաքսային տարածքից արտահանելու նպատակով, դիտարկվում են որպես Միության ապրանքներ, իսկ այլ նպատակներով՝ որպես օտարերկրյա ապրանքներ:

Գլուխ 28

«Ազատ պահեստ»

մաքսային ընթացակարգը

Հոդված 211. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի էությունը և կիրառումը

1. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգն օտարերկրյա ապրանքների և Միության ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան այդպիսի ապրանքները տեղավորվում և օգտագործվում են ազատ պահեստում՝ առանց մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու՝ պահպանելով այդ մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և այդ մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանները:

2. Ազատ պահեստում կարող են տեղավորվել և օգտագործվել «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները, ինչպես նաև Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով չձևակերպված ապրանքները և այլ մաքսային ընթացակարգերով ձևակերպված օտարերկրյա ապրանքները:

3. Միության ապրանքները ձևակերպվում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով՝ հայտարարատուի ընտրությամբ:

Անդամ պետության օրենսդրությամբ կարող են սահմանվել Միության ապրանքների այն կատեգորիաները, որոնք այդ անդամ պետության տարածքում ստեղծված ազատ պահեստում տեղավորվելու համար պարտադիր կարգով ենթակա են ձևակերպման «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով:

4. Ազատ պահեստում գտնվող և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով չձևակերպված՝ Միության ապրանքների նկատմամբ թույլատրվում է ցանկացած՝ այդ թվում՝ սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործառնությունների իրականացում:

5. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը, իսկ Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը:

6. Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները ձեռք են բերում Միության ապրանքների կարգավիճակ:

Եթե անդամ պետությունների օրենսդրությամբ թույլատրվում է Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով չձևակերպված ապրանքները տեղավորել և օգտագործել ազատ պահեստում, ապա Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից և Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով չձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները ձեռք են բերում Միության ապրանքների կարգավիճակ:

7. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից և Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները (այսուհետ՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ) ստանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակ՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությունում նշված դեպքի:

Այն դեպքում, երբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից

պատրաստված (ստացված) ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքից, այդ ապրանքների կարգավիճակը որոշվում է սույն Օրենսգրքի 218-րդ հոդվածին համապատասխան:

8. Այն դեպքում, երբ ազատ պահեստում գտնվող ապրանքները մաքսային մարմնի կողմից չեն կարող նույնականացվել որպես այնպիսի ապրանքներ, որոնք գտնվել են ազատ պահեստի տարածքում մինչև դրա ստեղծումը, կամ որպես «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված կամ ազատ պահեստում պատրաստված (ստացված) ապրանքներ, ապա ազատ պահեստի տարածքից Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս արտահանման նպատակներով այդպիսի ապրանքները դիտարկվում են որպես Միության ապրանքներ, իսկ այլ նպատակներով՝ որպես Միության մաքսային տարածք ներմուծվող օտարերկրյա ապրանքներ:

9. Սույն հոդվածի 8-րդ կետում նշված՝ նախկինում Միության մաքսային տարածքից «արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելիս այդ ապրանքների նկատմամբ չի կարող կիրառվել «վերաներմուծում» մաքսային ընթացակարգը:

10. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները, որոնց վրա տարածվում են ներքին շուկայի պաշտպանության միջոցները, պետք է նույնականացվեն «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում՝ այդպիսի ապրանքները ազատ պահեստի տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս արտահանելու համար:

Եթե «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները, որոնց վրա տարածվում են ներքին շուկայի պաշտպանության միջոցները, օգտագործվել են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ պատրաստելու համար, սակայն չեն կարող նույնականացվել այդպիսի ապրանքներում, ապա «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված այդպիսի օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները պետք է արտահանվեն Միության մաքսային տարածքից:

11. Ազատ պահեստի տիրապետողը կարող է ազատ պահեստի տարածքում Միության ապրանքներ տեղավորել և (կամ) օգտագործել՝ առանց «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով դրանք ձևակերպելու՝ հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ կետը:

12. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու այն ապրանքների և (կամ) ապրանքների կատեգորիաների ցանկը, որոնց նկատմամբ չի կիրառվում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգը:

Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան կարող է սահմանվել այն օտարերկրյա ապրանքների և (կամ) օտարերկրյա ապրանքների կատեգորիաների ցանկը, որոնց նկատմամբ այդ անդամ պետության տարածքում չի կիրառվում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգը:

13. Այն մասերը, հանգույցները, ագրեգատները, որոնք մաքսային մարմնի կողմից կարող են նույնականացվել որպես այնպիսի ապրանքներ, որոնք մտնում են (մտել են) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների կազմի մեջ, ազատ պահեստի տարածքից արտահանման նպատակով դիտարկվում են որպես «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներ, և դրանց նկատմամբ կիրառվում են սույն Օրենսգրքի դրույթները:

Հոդված 212. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և այդ մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանները

1. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման պայմանն է օտարերկրյա ապրանքների նկատմամբ արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

2. Որպես «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների հայտարարատու՝ կարող է հանդես գալ ազատ պահեստի տիրապետող անձը, իսկ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձինք:

3. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմաններն են՝

1) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների տեղավորումը և գտնվելն ազատ պահեստի տարածքում այդ ազատ պահեստի գործունեության ժամկետի ընթացքում՝ հաշվի առնելով սույն հոդվածի 5-րդ կետը և սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 5-րդ կետը.

2) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների օգտագործումը դրանք այդ մաքսային ընթացակարգով ձևակերպած հայտարարատուի կողմից կամ սույն գլխին համապատասխան սահմանված այլ անձանց կողմից.

3) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածին համապատասխան գործողությունների կատարումը:

4. Ազատ պահեստի գործունեության դադարեցման դեպքում սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները պետք է պահպանվեն մինչև այդ մաքսային ընթացակարգի գործողության ավարտը կամ դադարեցումը՝ սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

5. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել դեպքեր, երբ «ազատ պահեստ» մաքսային

ընթացակարգով ձևակերպված ապրանքները կարող են տեղավորվել և գտնվել մի քանի ազատ պահեստների տարածքներում, որոնց տիրապետողն է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատու հանդիսացող իրավաբանական անձը, այդպիսի ապրանքները և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներն այդպիսի պահեստների միջև տեղափոխելու դեպքերը, ինչպես նաև այդպիսի դեպքերում մաքսային գործառնությունների կատարման և այդպիսի ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության իրականացման առանձնահատկությունները:

Հոդված 213. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ իրականացվող գործողությունները

1. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ ազատ պահեստի տարածքում թույլատրվում է հետևյալ գործողությունների իրականացումը՝

1) պահպանում.

2) ապրանքների բեռնման (բեռնաթափման) գործողություններ և պահպանման հետ կապված այլ բեռնային գործողություններ.

3) ապրանքների պահպանվածության ապահովման համար անհրաժեշտ գործողություններ, ինչպես նաև ապրանքները փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և վաճառքի համար նախապատրաստելու նպատակով սովորաբար իրականացվող գործողություններ՝ ներառյալ խմբաքանակի մասնատումը, առաքումների կազմավորումը, տեսակավորումը, փաթեթավորումը, վերափաթեթավորումը, դրոշմավորումը, ապրանքների որակի բարելավմանն ուղղված գործողությունները.

4) ապրանքների վերամշակման (մշակման), ապրանքների պատրաստման (ներառյալ հավաքումը, կազմազատումը, մոնտաժը, հարմարեցումը), ապրանքների վերանորոգման կամ տեխնիկական սպասարկման գործողություններ, այդ թվում՝ այնպիսիք, որոնք իրականացնելիս «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները մասնակցում կամ աջակցում են ապրանքների պատրաստմանը (ստացմանը), եթե նույնիսկ ապրանքների պատրաստման (ստացման) ընթացքում այդ օտարերկրյա ապրանքներն ամբողջությամբ կամ մասնակիորեն ծախսվում (սպառվում) են և (կամ) չեն պարունակվում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում (այսուհետ սույն գլխում՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման գործողություններ): Տեխնոլոգիական գործընթացում օժանդակ միջոցներ հանդիսացող ապրանքները (օրինակ՝ սարքավորումներ, հաստոցներ, հարմարանքներ) չեն դասվում օտարերկրյա այն ապրանքներին, որոնք մասնակցում կամ աջակցում են ապրանքների պատրաստմանը (ստացմանը) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման գործողություններ իրականացնելիս.

5) սարքավորումների, մեքենաների և ագրեգատների, դրանց պահեստամասերի օգտագործում (շահագործում)՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման գործողություններ, ինչպես նաև ազատ պահեստի շահագործման և գործունեության հետ կապված այլ գործողություններ իրականացնելու նպատակով.

6) ապրանքների օգտագործում՝ ազատ պահեստի տարածքում արտադրական նշանակության անշարժ գույքի օբյեկտների և օժանդակ ենթակառուցվածքի (այսուհետ սույն գլխում՝ անշարժ գույքի օբյեկտներ) կառուցման նպատակով.

7) ապրանքների փորձանմուշներ և (կամ) նմուշներ վերցնելը՝ սույն Օրենսգրքի 17-րդ հոդվածին համապատասխան.

8) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված այլ գործողություններ՝ ազատ պահեստներ ստեղծելու նպատակներին համապատասխան:

2. Ապրանքների՝ ամբողջությամբ կամ մասնակի սպառման փաստը՝ այդ թվում ապրանքի պատրաստման (ստացման), արտադրական գործընթացների ապահովման, ազատ պահեստի տարածքում օգտագործվող սարքավորումների, մեքենաների և ագրեգատների պահպանման և շահագործման ընթացքում ծախսման (սպառման) դեպքում, ինչպես նաև անշարժ գույքի օբյեկտների կառուցման նպատակով, պետք է արտացոլվի սույն Օրենսգրքի 424-րդ հոդվածի վեցերորդ պարբերությանը համապատասխան մաքսային մարմին ներկայացվող հաշվետվությունում:

3. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված գործողությունների ցանկը կարող է կրճատվել անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան, ազատ պահեստի ստեղծման ժամանակ՝ ելնելով դրա ստեղծման նպատակներից:

4. Սույն հոդվածի 1-ին կետի 1-3-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված գործողությունները կարող են իրականացվել միայն ազատ պահեստի տիրապետողի կողմից:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանված լինել սույն կետում նշված գործողությունների կատարման իրավունքն ունեցող այլ անձինք:

5. Մաքսային մարմնի թույլտվությամբ թույլատրվում է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված

ապրանքների և (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների արտահանում ազատ պահեստի տարածքից՝ առանց «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու՝ հետևյալ դեպքերում՝

1) սարքավորումներ կամ այլ հիմնական արտադրական միջոցներ հանդիսացող այն ապրանքները, որոնք շահագործման մեջ են դրվել և օգտագործվում են ազատ պահեստի տիրապետողի կողմից, կամ նշված հիմնական արտադրական միջոցների մասեր հանդիսացող ապրանքները արտահանվում են Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ դրանց վերանորոգման (բացառությամբ կապիտալ վերանորոգման, արդիականացման), տեխնիկական սպասարկման կամ այդպիսի ապրանքները բնականոն (աշխատանքային) վիճակում պահելու համար անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնելու նպատակով.

2) նշված ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ դրանց նկատմամբ տեխնիկական փորձարկման, հետազոտման, թեստավորման, ստուգման, այդ թվում՝ արտադրական գործընթացով նախատեսված գործողություններ իրականացնելու, ինչպես նաև որպես նմուշներ ցուցադրելու համար.

3) նշված ապրանքներն արտահանվում են այն անդամ պետության միության մնացած մաս, որի տարածքում ազատ պահեստի տիրապետողը ընդգրկված է ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում՝ անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան այդպիսի ապրանքների նկատմամբ մաքսային գործառնություններ իրականացնելու իրավասություն ունեցող մաքսային մարմնում ազատ պահեստի սահմաններից դուրս «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտելուն ուղղված մաքսային գործառնություններ իրականացնելու նպատակով:

4) նշված ապրանքներն արտահանվում են այլ ազատ պահեստի տարածքում տեղավորվելու և գտնվելու համար՝ սույն Օրենսգրքի 212-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

6. Սույն հոդվածի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված ապրանքները ենթակա են հետադարձ ներմուծման ազատ պահեստի տարածք մինչև մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալը՝ ելնելով այդ գործողությունների իրականացման նպատակներից և հանգամանքներից: Մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել այդ ապրանքների հայտարարատուի հիմնավորված դիմումի հիման վրա:

«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն հոդվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետում նշված ապրանքների նկատմամբ պետք է ավարտվի մինչև մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալը: Մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել այդ ապրանքների հայտարարատուի հիմնավորված դիմումի հիման վրա:

Սույն հոդվածի 5-րդ կետի 4-րդ ենթակետում նշված ապրանքները պետք է տեղավորվեն այլ ազատ պահեստի տարածքում նախքան մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալը: Մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել այդ ապրանքների հայտարարատուի հիմնավորված դիմումի հիման վրա:

7. Մաքսային մարմնի կողմից սույն հոդվածի 5-րդ կետում նշված թույլտվության տրամադրման կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

8. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված բոլոր ապրանքների կամ դրանց մի մասի և (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) բոլոր ապրանքների կամ դրանց մի մասի նկատմամբ կարող են իրականացվել գործարքներ, որոնք նախատեսում են այդ ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքի փոխանցում: Ընդ որում, «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը պետք է ավարտվի սույն Օրենսգրքով սահմանված կարգով՝ բացառությամբ դեպքերի, երբ սույն հոդվածի 9-րդ կետին համապատասխան թույլատրվում է նշված ապրանքների փոխանցումն առանց «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու:

9. Առանց «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու թույլատրվում է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների փոխանցումը՝ տիրապետման և (կամ) օգտագործման.

1) կապալառուի (ենթակապալառուի) կամ այլ անձի, որոնք իրականացնելու են շինարարական և (կամ) մոնտաժման կապալային աշխատանքներ ազատ պահեստի տարածքում.

2) փոխադրողի՝ դրանք փոխադրելու համար.

3) անձանց, որոնք իրականացնելու են վերանորոգում (բացառությամբ կապիտալ վերանորոգման, արդիականացման), տեխնիկական սպասարկում և այդպիսի ապրանքները բնականոն (աշխատանքային) վիճակում պահելու համար անհրաժեշտ այլ գործողություններ.

4) անձանց, որոնք իրականացնելու են արտադրական գործընթացով նախատեսված՝ այդպիսի ապրանքների տեխնիկական փորձարկման, հետազոտման, թեստավորման, ստուգման գործառնություններ, ինչպես նաև դրանց՝ որպես նմուշ ցուցադրությունը.

5) անձանց, որոնք իրականացնելու են ազատ պահեստի տարածքից արտահանվող ապրանքների նկատմամբ գործառնություններ՝ սույն հոդվածի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում:

10. Ապրանքների փոխանցելը սույն հոդվածի 9-րդ կետում նշված անձանց տիրապետմանը և (կամ) օգտագործմանը, չի ազատում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատուին սույն գլխով

նախատեսված՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները պահպանելուց:

Հոդված 214. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների նույնականացումը

1. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները նույնականացնելու նպատակով կարող են կիրառվել հետևյալ եղանակները՝

1) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների վրա ազատ պահեստի տիրապետողի կամ մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից կնիքներ, դրոշմներ դնելը, թվային կամ այլ դրոշմավորում զետեղելը.

2) օտարերկրյա ապրանքների մանրամասն նկարագրում, լուսանկարում, մասշտաբային պատկերում.

3) օտարերկրյա ապրանքների և օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների՝ նախապես վերցված փորձանմուշների և (կամ) նմուշների համադրում.

4) ապրանքների առկա դրոշմավորման օգտագործում՝ այդ թվում՝ սերիական համարների ձևով դրոշմավորումը.

5) այլ եղանակներ, որոնք կարող են կիրառվել՝ ելնելով «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ իրականացվող վերամշակման գործողությունների բնույթից, այդ թվում՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման գործողություններ իրականացնելու տեխնոլոգիական գործընթացում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործման մասին, ինչպես նաև դրանց արտադրության տեխնոլոգիայի մասին մանրամասն տեղեկություններ պարունակող՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով կամ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման գործողությունների իրականացման ժամանակ մաքսային հսկողության անցկացման միջոցով:

2. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների նույնականացման իրականացման կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 215. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը և դադարեցնելը

1. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը պետք է ավարտվի հետևյալ դեպքերում՝

1) ազատ պահեստի գործունեության դադարեցում՝ ազատ պահեստի գործունեության դադարեցման օրվանից 6 ամսվա ընթացքում.

2) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների, «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների արտահանում ազատ պահեստի տարածքից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի ապրանքներն արտահանվում են՝

սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 5-րդ կետում նշված նպատակներով.

դրանք թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ եղանակով ոչնչացվելու նպատակով՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, եթե այդպիսի ապրանքները կորցրել են իրենց սպառողական հատկությունները և դարձել են ոչ պիտանի այն նպատակով օգտագործվելու համար, որի համար դրանք նախատեսված են.

3) հայտարարատուի կողմից՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքների փոխանցումն այլ անձի՝ սույն հոդվածի 10-րդ կետին համապատասխան՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանված դեպքերում ապրանքների փոխանցման:

2. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելիս ապրանքների հայտարարատու կարող է լինել այն անձը, որը եղել է ապրանքների հայտարարատուն «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով դրանք ձևակերպելիս, իսկ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ այլ անձ:

3. Ազատ պահեստի գործունեության դադարեցման դեպքում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է ազատ պահեստի տարածքում գտնվող՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով

ձևակերպված ապրանքները, «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով ձևակերպելով՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի՝ հաշվի առնելով սույն հոդվածի 4-րդ և 5-րդ կետերը կամ ավարտվում է առանց մաքսային ընթացակարգերով ձևակերպելու՝ սույն հոդվածի 7-րդ և 9-րդ կետերին համապատասխան:

Սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ժամկետը լրանալու դեպքում՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն կետի առաջին պարբերությանը համապատասխան չավարտվելու դեպքում այդ մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվում է, իսկ ապրանքներն արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

4. Միության մաքսային տարածքից դուրս ազատ պահեստի տարածքից ապրանքները արտահանելու համար «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝

1) «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով ներքոնշյալ ապրանքները՝

«ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա այն ապրանքները, որոնք ազատ պահեստի տարածքից արտահանվում են անփոփոխ վիճակում՝ բացի բնական մաշվածության հետևանքով առաջացած փոփոխություններից, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով առաջացած փոփոխություններից.

«ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) և սույն Օրենսգրքի 218-րդ հոդվածին համապատասխան որպես Միության ապրանքներ չճանաչված ապրանքները.

2) «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով ներքոնշյալ ապրանքները՝

Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները.

Միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները.

«ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) և սույն Օրենսգրքի 218-րդ հոդվածին համապատասխան Միության ապրանքներ ճանաչված ապրանքները:

5. Ազատ պահեստի տարածքից ապրանքները Միության մաքսային տարածքի մնացած մաս արտահանելու համար «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝

1) սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ և 14-16-րդ կետերում նշված մաքսային ընթացակարգերով ձևակերպելով «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա այն ապրանքները, որոնք ազատ պահեստի տարածքից արտահանվում են անփոփոխ վիճակում՝ բացի բնական մաշվածության հետևանքով առաջացած փոփոխություններից, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով առաջացած փոփոխություններից, և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները՝ հաշվի առնելով սույն հոդվածի 6-րդ կետը.

2) «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով ներքոնշյալ ապրանքները՝

Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված այն ապրանքները, որոնք մնացել են անփոփոխ վիճակում՝ բացի բնական մաշվածության հետևանքով առաջացած փոփոխություններից, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով առաջացած փոփոխություններից.

Միության՝ բացառապես «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները՝ Միության ապրանքների նկատմամբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու դեպքում:

6. Եթե «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կազմի մեջ մտնում են օտարերկրյա ապրանքներ, որոնց վրա տարածվում են ներքին շուկայի պաշտպանության միջոցներ, այդպիսի ապրանքներն ազատ պահեստի տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս արտահանելու համար կարող են ձևակերպվել սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 7-րդ ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով՝ այդ ապրանքներում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները նույնականացնելու պայմանով:

7. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է առանց մաքսային ընթացակարգերով ձևակերպման սույն հոդվածի 9-րդ կետով նախատեսված դեպքում, ինչպես նաև հետևյալ դեպքերում.

1) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները կորցրել են իրենց սպառողական հատկությունները և դարձել օգտագործման համար ոչ պիտանի այն նպատակների համար, որոնց համար դրանք նախատեսված են, դուրս են բերվում ազատ պահեստի տարածքից՝ թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ եղանակով ոչնչացվելու նպատակով՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում, «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների այն մասի նկատմամբ, որը համապատասխանում է թաղված, վնասազերծված, ուտիլիզացված և (կամ) այլ կերպ ոչնչացված ապրանքների քանակին, և սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան.

2) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ոչնչացվել և (կամ) անվերադարձ կորսվել են վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով կամ անվերադարձ կորսվել են փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով, և այդ ոչնչացման կամ անվերադարձ կորստի փաստը ճանաչվել է մաքսային մարմնի կողմից՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան.

8. Սույն հոդվածի 7-րդ կետով նախատեսված դեպքերում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

9. Ազատ պահեստի գործունեության դադարեցման դեպքում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված այն ապրանքների նկատմամբ, որոնք ազատ պահեստի տիրապետողի կողմից շահագործման մեջ դրված և օգտագործվող սարքավորումներ են կամ ազատ պահեստի տիրապետողի կողմից ազատ պահեստի տարածքում անշարժ գույքի օբյեկտներ ստեղծելու համար օգտագործված ապրանքներ են և անշարժ գույքի այդպիսի օբյեկտների բաղկացուցիչ մաս են կազմում, «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտվում է առանց նշված ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելու՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նշված ապրանքները Միության ապրանքների կարգավիճակ են ձեռք բերում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտելու օրվանից:

10. Հայտարարատուի կողմից՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքներն այլ անձի փոխանցելիս «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է սույն հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան:

11. Ազատ պահեստի տիրապետողի լուծարման դեպքում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգն ավարտվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 216. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջանալը և դադարելը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը հայտարարատուի համար առաջանում է մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագիրը գրանցելու պահից, իսկ այն ապրանքների մասով, որոնք բացթողման համար հայտագրվել են մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմում ներկայացրած անձի համար՝ մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու պահից:

2. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների մասով ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը հայտարարատուի համար դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելը՝ սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածին համապատասխան, այդ թվում՝ սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելը՝ բացառությամբ այն դեպքի, երբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված ապրանքները «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով.

2) Միության մաքսային տարածքից սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված՝ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների արտահանումը.

3) այն ապրանքները, որոնց նկատմամբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվել է, և (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան մաքսային ընթացակարգերով ձևակերպելը այնպիսի մաքսային ընթացակարգի կիրառման շրջանակներում, որի գործողությունը դադարեցվել է.

4) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձում.

5) մաքսային մարմնի կողմից, մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների և (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի

փաստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի արդյունքում այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստի ճանաչում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան այդ օտարերկրյա ապրանքների առնչությամբ վրա է հասել ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ժամկետը.

6) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը մերժելը՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության մասով, որն առաջացել է ապրանքների հայտարարագիրը կամ մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումն ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելիս.

7) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան ապրանքների հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

8) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

9) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

10) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

4. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները և (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները նախքան այդ ապրանքների նկատմամբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը կամ սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 5-րդ կետում նշված դեպքերում առանց մաքսային մարմնի թույլտվության ազատ պահեստի տարածքից արտահանելու դեպքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ապրանքները կարող են արտահանվել ազատ պահեստի տարածքից առանց «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու՝ սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերում՝ ազատ պահեստի տարածքից արտահանելու օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ ազատ պահեստի տարածքից այդպիսի արտահանման փաստը բացահայտելու օրը.

2) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները և (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները նախքան այդպիսի ապրանքների նկատմամբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգն ավարտելը այլ անձին փոխանցելու դեպքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ապրանքները կարող են փոխանցվել սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված դեպքերում՝ ապրանքները փոխանցելու օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ այդ փոխանցման փաստը բացահայտելու օրը.

3) մինչև սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 6-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետի լրանալը՝ սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված դեպքերում ազատ պահեստի տարածքից արտահանված ապրանքները ազատ պահեստի տարածք չվերադարձվելու դեպքում՝ մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 6-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան սահմանված ժամկետը լրանալու օրը.

4) սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքում ազատ պահեստի տարածքից արտահանված ապրանքների մասով՝ մինչև սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 6-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալը «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը չավարտվելու դեպքում՝ այդ ժամկետը լրանալու օրը.

5) սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 6-րդ կետի երրորդ պարբերությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալը՝ սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 5-րդ կետի 4-րդ ենթակետում նշված դեպքում ազատ պահեստի տարածքից արտահանված ապրանքները այլ ազատ պահեստի տարածքում չտեղավորելու դեպքում՝ սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 6-րդ կետի երրորդ պարբերությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալու օրը.

6) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների և (կամ) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված)

ապրանքների կորստի դեպքում՝ ապրանքների կորստի օրը՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով ապրանքների անվերադարձ կորստի, իսկ եթե այդպիսի օրը պարզված չէ՝ այդպիսի կորստի փաստը բացահայտելու օրը.

7) սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի երրորդ պարբերության մեջ նշված ապրանքները թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ կերպ ոչնչացնելու փաստը հաստատող փաստաթղթերը մաքսային մարմին վերջինիս կողմից սահմանված ժամկետում չներկայացվելու դեպքում՝ այդ ապրանքներն ազատ պահեստի տարածքից դուրս արտահանելու օրը.

8) սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված ապրանքների նկատմամբ սույն Օրենսգրքի 139-րդ հոդվածի 5-րդ կետի երրորդ պարբերությանը համապատասխան «արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվելու դեպքում՝ բացառությամբ այն դեպքի, երբ «արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվում է դադարեցման պահին ազատ պահեստի տարածքում գտնվող այդպիսի ապրանքների նկատմամբ, սույն Օրենսգրքի 139-րդ հոդվածի 5-րդ կետի առաջին պարբերությամբ սահմանված ժամկետի լրանալու օրվան հաջորդող օրը:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների առնչությամբ ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե այդպիսի օտարերկրյա ապրանքները ձևակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումներ և ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու արտոնություններ կիրառելու:

Եթե սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքներն ի հայտ են եկել «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների առնչությամբ, և այդպիսի ապրանքներում սույն Օրենսգրքի 214-րդ հոդվածի համաձայն նույնականացվել են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներ, ապա ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների պատրաստման համար օգտագործված օտարերկրյա ապրանքների առնչությամբ այնպես, ինչպես եթե այդպիսի օտարերկրյա ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումներ և ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու արտոնություններ կիրառելու:

Սույն կետի առաջին և երկրորդ պարբերություններում նշված դեպքերում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար կիրառվում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ապրանքները ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ գործող ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափեր, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումը դրանք «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ:

6. Եթե սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքներն ի հայտ են եկել «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների առնչությամբ, և այդպիսի ապրանքներում սույն Օրենսգրքի 214-րդ հոդվածի համաձայն չեն նույնականացվել «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներ, ապա ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես եթե «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) այդպիսի ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումներ և ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու արտոնություններ կիրառելու:

Նշված դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են սույն Օրենսգրքի 7-րդ և 12-րդ գլուխներին համապատասխան:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերը, որոնք գործում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների առնչությամբ սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ հանդիսացող օրվա դրությամբ:

Եթե ապրանքների մաքսային արժեքը որոշելու, ինչպես նաև ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար պահանջվում է արտարժույթը վերահաշվարկել անդամ պետության արժույթով, այդ վերահաշվարկն իրականացվում է սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ

հանդիսացող օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Այն դեպքում, երբ մաքսային մարմինն իր տրամադրության տակ չունի ապրանքների (դրանց բնույթի, անվանման, քանակի, ծագման և (կամ) մաքսային արժեքի) մասին ճշգրիտ տեղեկություններ, վճարման ենթակա ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար բազան որոշվում է մաքսային մարմնի մոտ առկա տեղեկությունների հիման վրա, իսկ ապրանքների դասակարգումն իրականացվում է հաշվի առնելով սույն Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ կետը:

Եթե ապրանքի ծածկագիրը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանվել է 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով, ապա՝

ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հարկերը հաշվարկելու համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող այնպիսի ապրանքներին համապատասխանող ավելացված արժեքի հարկի դրույքաչափերից ամենամեծը, ակցիզների (ակցիզային հարկի կամ ակցիզային վճարի) դրույքաչափերից ամենամեծը, որոնց համար սահմանվել է մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար կիրառվում է այդպիսի խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը՝ հաշվի առնելով սույն կետի տասներորդ պարբերությունը:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով ապրանքների՝ սույն Օրենսգրքի 4-րդ գլխին համապատասխան հաստատված ծագումից և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններից: Եթե ապրանքների ծագումը և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ հաստատված չեն, ապա հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը, որոնք սահմանվել են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն ծածկագրին դասվող ապրանքների համար, եթե ապրանքի դասակարգումն իրականացվել է 10 նիշի մակարդակով, կամ խմբավորման մեջ մտնող ապրանքների համար, եթե ապրանքների ծածկագրերը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, սահմանվել են 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով:

Ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները հետագայում պարզվելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով այդ ճշգրիտ տեղեկություններից, կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի՝ ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված գումարների վերադարձ (հաշվանցում) կամ չվճարված գումարների բռնագանձում՝ սույն Օրենսգրքի 10-րդ և 11-րդ գլուխներին ու 76-րդ և 77-րդ հոդվածներին համապատասխան:

7. Սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան վճարվող (բռնագանձվող) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարներից տոկոսները ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների համար տրամադրված լիներ դրանց վճարումը հետաձգելու հնարավորություն՝ ապրանքներն «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից մինչև ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը լրանալու օրը: Նշված տոկոսները հաշվարկվում և վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

8. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու կամ սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված՝ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները Միության մաքսային տարածքից արտահանելու կամ օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ապրանքները սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան ձևակերպելու կամ այդ ապրանքները սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցվելու (արգելապահվելու) դեպքում մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը կատարելուց և (կամ) դրանք բռնագանձելուց հետո (ամբողջությամբ կամ մասնակի) սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին և 76-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 217. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունները՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներն առանձին մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս

1. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված և ազատ պահեստի տարածքում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման գործողությունների չենթարկված օտարերկրյա

ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերը, որոնք գործում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ապրանքները ձևակերպելու համար ներկայացրած ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումը «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերության մեջ նշված դեպքի:

«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված, ազատ պահեստի տիրապետողի կողմից շահագործման մեջ դրված և սույն Օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործողություններն իրականացնելու համար օգտագործվող սարքավորումները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերը, որոնք գործում են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով սարքավորումները ձևակերպելու համար ներկայացրած ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ:

2. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 5-րդ, 7-րդ, 10-րդ և 14-րդ կետերում նշված մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս՝

1) նշված ապրանքներում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների՝ սույն Օրենսգրքի 214-րդ հոդվածին համապատասխան իրականացվող նույնականացման պայմանի դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների պատրաստման ժամանակ օգտագործված օտարերկրյա ապրանքների նկատմամբ: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերը, որոնք գործում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ապրանքները ձևակերպելու համար ներկայացրած ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումը «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս իրականացվել է նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ նախքան ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ.

2) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների համար ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների՝ սույն Օրենսգրքի 214-րդ հոդվածին համապատասխան իրականացվող նույնականացման բացակայության դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն դրույքաչափերը, որոնք գործում են սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 5-րդ, 7-րդ, 10-րդ և 14-րդ ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով ձևակերպելու համար ներկայացրած ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ: Ադվալորային դրույքաչափով ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման բազան այս դեպքում հանդիսանում է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների հաշվարկային արժեքը, որի որոշման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

3. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելով ավարտվելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման համար կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն դրույքաչափերը, որոնք գործում են սույն Օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 5-րդ, 7-րդ, 10-րդ և 14-րդ ենթակետերում նշված մաքսային ընթացակարգերով ապրանքները ձևակերպելու համար ներկայացրած ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ:

4. Այն դեպքում, եթե ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված դեպքերում պահանջվում է կատարել արտարժույթի

վերահաշվարկ անդամ պետության արժույթի, այդ վերահաշվարկը կատարվում է յուրաքանչյուր դեպքի համար սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը կիրառելու օրվա դրությամբ գործող արժույթների փոխարժեքով:

Հոդված 218. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը որոշելը

1. Այն դեպքում, երբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները դուրս են բերվում Միության մաքսային տարածքից, այդ ապրանքների կարգավիճակը որոշվում է ապրանքների բավարար վերամշակման չափանիշներին համապատասխան, որոնք կարող են արտահայտվել՝

1) Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքի ծածկագրի փոփոխությամբ՝ առաջին 4 նիշերից ցանկացածի մակարդակով.

2) ապրանքների արժեքի փոփոխությամբ, երբ օգտագործված նյութերի արժեքի տոկոսային բաժինը կամ ավելացված արժեքը հասնում է վերջնական արտադրանքի գնում ներառված հաստատագրված բաժնին (ադվալորային բաժնի կանոն).

3) անհրաժեշտ պայմանների, արտադրական և տեխնոլոգիական այնպիսի գործողությունների իրականացմամբ, որոնք բավարար են ապրանքները որպես Միության ապրանքներ ճանաչելու համար:

2. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները Միության մաքսային տարածքից արտահանման նպատակներով ճանաչվում են որպես Միության ապրանքներ, եթե ապրանքների պատրաստման (ստացման) գործողությունների արդյունքում կատարվում է հետևյալ պայմաններից մեկը՝

1) տեղի է ունեցել Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքների ծածկագրի փոփոխություն՝ առաջին չորս նիշերից ցանկացածի մակարդակով՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետում նշված դեպքերի.

2) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների արժեքի տոկոսային բաժինը չի գերազանցում վերջնական արտադրանքի գնի մեջ ներառված հաստատագրված բաժինը, կամ ավելացված արժեքը հասնում է վերջնական արտադրանքի գնի մեջ հաստատագրված բաժնին՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետում նշված դեպքերի.

3) ապրանքների մասով իրականացվել են այնպիսի պայմաններ, արտադրական և տեխնոլոգիական գործողություններ, որոնք բավարար են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները Միության ապրանքներ ճանաչելու համար՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերության մեջ նշված դեպքի:

3. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները, անկախ այլ պայմաններ բավարարելու հանգամանքից, չեն ճանաչվում որպես Միության ապրանքներ, եթե այդ ապրանքների մասով իրականացվել են միայն այն գործողությունները, որոնք չեն համապատասխանում բավարար վերամշակման չափանիշներին:

Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքների ծածկագրի փոփոխությունը՝ առաջին չորս նիշերից ցանկացածի մակարդակով, և ադվալորային բաժնի կանոնը չեն կիրառվում որպես «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների բավարար վերամշակման չափանիշներ այն դեպքում, երբ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ սահմանվել է այն պայմանների, արտադրական և տեխնոլոգիական գործողությունների ցանկը, որոնք բավարար են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները Միության ապրանքներ ճանաչելու համար:

4. Այն պայմանների, արտադրական և տեխնոլոգիական գործողությունների ցանկը, որոնք բավարար են «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները որպես Միության ապրանքներ ճանաչելու համար, ինչպես նաև այն գործողությունների ցանկը, որոնց իրականացումը «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը որոշելիս չի համապատասխանում բավարար վերամշակման չափանիշներին, սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

5. Ադվալորային բաժնի կանոնը որպես «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների բավարար վերամշակման չափանիշ օգտագործելու կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Ադվալորային բաժնի կանոնը որպես բավարար վերամշակման չափանիշ չի կիրառվում Միության՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերանորոգման գործողություններ իրականացնելիս:

6. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված

(ստացված) ապրանքների կարգավիճակը սահմանվում է անդամ պետության լիազորված պետական մարմնի կամ լիազորված կազմակերպության կողմից:

7. Որպես «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը հաստատող փաստաթուղթ անդամ պետության լիազորված պետական մարմինը կամ լիազորված կազմակերպությունը տրամադրում է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները որպես Միության ապրանքներ ճանաչելու մասին եզրակացություն կամ եզրակացություն այն մասին, որ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները Միության ապրանքներ չեն:

Նշված եզրակացությունների ձևերը, էլեկտրոնային փաստաթղթերի ձևով ներկայացվող այդ եզրակացությունների կառուցվածքը և ձևաչափը, դրանք լրացնելու, ինչպես նաև դրանց տրամադրման և կիրառման կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

8. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակը հաստատող փաստաթղթի բացակայության, այն չեղյալ կամ անվավեր ճանաչելու դեպքում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելիս այդ ապրանքները դիտարկվում են որպես Միության ապրանքներ՝ դրանք Միության մաքսային տարածքից արտահանելու նպատակներով, և որպես օտարերկրյա ապրանքներ՝ այլ նպատակներով:

Գլուխ 29

«Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգը

Հոդված 219. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի էությունը և կիրառումը

1. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգն օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան այդ ապրանքները ժամանակավոր գտնվում և օգտագործվում են Միության մաքսային տարածքում, պահպանելով ապրանքներն այդ մաքսային ընթացակարգով ձևակերպելու և այդ մաքսային ընթացակարգին համապատասխան դրանք օգտագործելու պայմանները՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարմամբ և առանց հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման կամ առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման և առանց հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման:

2. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները (այսուհետ սույն գլխում՝ ժամանակավոր ներմուծված ապրանքներ) պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը:

3. Ապրանքների այն կատեգորիաները, որոնց ժամանակավոր գտնվելը և օգտագործումը Միության մաքսային տարածքում «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան թույլատրվում է առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման, այդ ժամանակավոր գտնվելու և օգտագործվելու պայմանները, ինչպես նաև այդ ժամանակավոր գտնվելու և օգտագործվելու վերջնաժամկետները սահմանվում են Հանձնաժողովի կողմից և (կամ) երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով:

4. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգը չի կիրառվում ապրանքների հետևյալ կատեգորիաների նկատմամբ՝

1) սննդամթերք, խմիչքներ՝ ներառյալ ալկոհոլային խմիչքները, ծխախոտ և ծխախոտային արտադրատեսակներ, հումք և կիսաֆաբրիկատներ, ծախսվելիք նյութեր և նմուշներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ներմուծվում են Միության մաքսային տարածք մեկ օրինակից՝ գովազդային և (կամ) ցուցադրության նպատակներով կամ որպես ցուցանմուշներ կամ արդյունաբերական նմուշներ.

2) թափոններ՝ ներառյալ արտադրական թափոնները.

3) Միության մաքսային տարածք ներմուծման համար արգելված ապրանքներ:

5. Թույլատրվում է «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի կիրառումը «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության կասեցման համար՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ավելի վաղ ձևակերպված ապրանքների վերամշակման արդյունքներն այդ մաքսային ընթացակարգով ձևակերպելու միջոցով:

Հոդված 220. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և այդ մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանները

1. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման պայմաններն են՝

1) «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նույնականացման հնարավորությունը՝ այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու նպատակով մաքսային ընթացակարգով դրանց հետագա ձևակերպման դեպքում:

Ապրանքների նույնականացում չի պահանջվում այն դեպքերում, երբ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան, թույլատրվում է ժամանակավոր ներմուծված ապրանքների փոխարինում.

2) սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարումը՝ բացառությամբ այն դեպքի, երբ սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Միության մաքսային տարածքում ապրանքների ժամանակավոր գտնվելը և օգտագործումը՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան, թույլատրվում է առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման.

3) ապրանքների ժամանակավոր գտնվելու և օգտագործման պայմանների պահպանումը՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման, եթե այդպիսի պայմաններ սահմանված են Հանձնաժողովի կողմից՝ սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան և (կամ) նախատեսված են երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով.

4) արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան.

2. Ապրանքների՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան օգտագործման պայմաններն են՝

1) «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետի պահպանումը.

2) ժամանակավոր ներմուծված ապրանքների տնօրինման և օգտագործման հետ կապված՝ սույն Օրենսգրքի 222-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների պահպանումը.

3) սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարումը՝ բացառությամբ այն դեպքի, երբ սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Միության մաքսային տարածքում ապրանքների ժամանակավոր գտնվելը և օգտագործումը՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան, թույլատրվում է առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման.

4) ապրանքների ժամանակավոր գտնվելու և օգտագործման պայմանների պահպանումը՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ առանց ներմուծման այն մաքսատուրքերի, հարկերի վճարման, որոնք սահմանված են Հանձնաժողովի կողմից՝ սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, և (կամ) նախատեսված են երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրով:

Հոդված 221. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը

1. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը չի կարող գերազանցել 2 տարին՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ապրանքները ձևակերպելու օրվանից սկսած, կամ Հանձնաժողովի կողմից սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան սահմանված ժամկետը:

2. Ապրանքների առանձին կատեգորիաների համար, կախված Միության մաքսային տարածք դրանց ներմուծման նպատակներից, Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավելի կարճ կամ ավելի երկարատև ժամկետ, քան 2 տարին է:

3. Ապրանքները «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս, ելնելով Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման նպատակներից և հանգամանքներից, մաքսային մարմինը հայտարարատուի դիմումի հիման վրա սահմանում է այդ մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը, որը, հաշվի առնելով սույն հոդվածի 4-րդ կետը, չի կարող գերազանցել սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված կամ Հանձնաժողովի կողմից սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան սահմանված ժամկետը:

4. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետն անձի դիմումի համաձայն կարող է երկարաձգվել՝ մինչև այդ ժամկետը լրանալը կամ լրանալուց հետո 1 ամսից ոչ ուշ՝ տվյալ մաքսային ընթացակարգի՝ սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված կամ Հանձնաժողովի կողմից սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան սահմանված տվյալ մաքսային ընթացակարգի գործողության ժամկետի սահմաններում:

Մաքսային մարմնի կողմից սահմանված՝ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի

գործողության ժամկետը երկարաձգելիս այն լրանալուց հետո այդ մաքսային ընթացակարգի գործողությունը վերսկսվում է այդ մաքսային ընթացակարգը դադարելու օրվանից:

5. Միության մաքսային տարածքում գտնվող օտարերկրյա ապրանքների նկատմամբ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգը բազմիցս կիրառելիս, այդ թվում՝ այն դեպքում, երբ որպես այդ ապրանքների հայտարարատու հանդես են գալիս տարբեր անձինք, «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված կամ սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետը:

Հոդված 222. Ժամանակավոր ներմուծված ապրանքների տիրապետման և օգտագործման հետ կապված սահմանափակումները

1. Ժամանակավոր ներմուծված ապրանքները պետք է մնան անփոփոխ վիճակում՝ բացառությամբ բնական մաշվածության, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով առաջացած փոփոխությունների:

Թույլատրվում է ժամանակավոր ներմուծված ապրանքների հետ կատարել դրանց պահպանվածության ապահովման համար անհրաժեշտ գործողություններ՝ ներառյալ վերանորոգումը (բացառությամբ կապիտալ վերանորոգման, արդիականացման), տեխնիկական սպասարկումը և ապրանքները բնականոն վիճակում պահպանելու համար անհրաժեշտ այլ գործողություններ՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան ավարտելիս մաքսային մարմնի կողմից ապրանքների նույնականացումն ապահովվելու պայմանով:

Թույլատրվում է ժամանակավոր ներմուծված ապրանքները ենթարկել փորձարկումների, հետազոտությունների, թեստավորման, ստուգման կամ դրանց հետ փորձեր կամ գիտափորձեր կատարել կամ դրանք օգտագործել փորձարկումների, հետազոտությունների, թեստավորման, ստուգման անցկացման, փորձերի և գիտափորձերի կատարման ընթացքում:

2. Ժամանակավոր ներմուծված ապրանքները պետք է գտնվեն հայտարարատուի փաստացի տիրապետման և օգտագործման տակ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ թույլատրվում է դրանց փոխանցումը այլ անձանց տիրապետմանը և օգտագործմանը՝ սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերին համապատասխան:

3. Թույլատրվում է հայտարարատուի կողմից առանց մաքսային մարմնի թույլտվության այլ անձանց տիրապետմանը և օգտագործմանը փոխանցել՝

1) ժամանակավոր ներմուծված բազմաշրջանառու (վերադարձվող) տարան, որը նախատեսված է Միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների փաթեթավորման և պաշտպանության համար.

2) ժամանակավոր ներմուծված ապրանքները՝ դրանց տեխնիկական սպասարկման, վերանորոգման (բացառությամբ կապիտալ վերանորոգման, արդիականացման), պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման) նպատակով.

3) ժամանակավոր ներմուծված ապրանքները՝ փորձարկումներ, հետազոտություններ, թեստավորում, ստուգում անցկացնելու, փորձեր կամ գիտափորձեր կատարելու նպատակով.

4) այլ նպատակներով ժամանակավոր ներմուծված ապրանքները՝ Հանձնաժողովի կողմից սահմանված և (կամ) երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում:

4. Սույն հոդվածի 3-րդ կետից տարբեր այլ դեպքերում հայտարարատուի կողմից ժամանակավոր ներմուծված ապրանքներն այլ անձանց տիրապետմանը և օգտագործմանը փոխանցել թույլատրվում է մաքսային մարմնի թույլտվությամբ կամ այն դեպքերում, կարգով և ժամկետներում, որոնք սահմանվում են Հանձնաժողովի կողմից՝ մաքսային մարմնի ծանուցումից հետո:

5. Ժամանակավոր ներմուծված ապրանքներն այլ անձանց տիրապետմանը և օգտագործմանը փոխանցելու համար մաքսային մարմնի թույլտվությունն ստանալու նպատակով այդ ապրանքների հայտարարատուն գրավոր դիմում է ներկայացնում այն մաքսային մարմին, որի կողմից դրանք ձևակերպվել են մաքսային ընթացակարգով՝ դիմումի մեջ նշելով ժամանակավոր ներմուծված ապրանքներն այլ անձի փոխանցելու պատճառները և տեղեկություններ այդ անձի մասին:

6. Ժամանակավոր ներմուծված ապրանքներն այլ անձանց տիրապետմանը և օգտագործմանը փոխանցելն այդ ապրանքների հայտարարատուին չի ազատում «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների օգտագործման՝ սույն գլխով սահմանված այլ պայմանների կատարումից, ինչպես նաև չի կասեցնում և չի երկարաձգում ժամանակավոր ներմուծման ժամկետը:

7. Հանձնաժողովի կողմից սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված և (կամ) երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված ապրանքները, որոնց նկատմամբ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգը կիրառվում է առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման, օգտագործվում են Միության մաքսային տարածքի սահմաններում, եթե Հանձնաժողովի կողմից այլ բան սահմանված չէ:

8. Թույլատրվում է տրանսպորտային միջոցներ հանդիսացող՝ ժամանակավոր ներմուծված ապրանքների

օգտագործումը Միության մաքսային տարածքից դուրս, եթե դրանք օգտագործվում են որպես միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ, և դրանց նկատմամբ կիրառվում են սույն Օրենսգրքի 38-րդ գլխի դրույթները:

Միության մաքսային տարածքից դուրս տրանսպորտային միջոցներ հանդիսացող՝ ժամանակավոր ներմուծված ապրանքներն օգտագործելիս այդ ապրանքների նկատմամբ թույլատրվում է սույն Օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված գործողությունների կատարումը:

Սույն Օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով չնախատեսված գործողությունների կատարումը թույլատրվում է սույն Օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

Միության մաքսային տարածքից դուրս տրանսպորտային միջոցներ հանդիսացող՝ ժամանակավոր ներմուծված ապրանքները որպես միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ օգտագործելը չի դադարեցնում և չի կասեցնում «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը:

Հոդված 223. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգը կիրառելիս ներմուծման մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունները

1. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարմամբ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման դրանք «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից մինչև վերջինիս գործողությունն ավարտվելու օրն ընկած ժամանակահատվածի համար:

2. Առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների մասով հայտարարատուի դիմումի մեջ նշված օրվանից մինչև «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտի օրն ընկած ժամանակահատվածի համար հայտարարատուի դիմումի հիման վրա կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարում: Հայտարարատուի նշված դիմումը ներկայացվում է այն մաքսային մարմին, որի կողմից իրականացվել է ապրանքների բացթողումը «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով դրանք ձևակերպելիս, մինչև սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված վերջնաժամկետը լրանալը:

Որպես հայտարարատուի դիմում օգտագործվում է «ապրանքների հայտարարագրի ճշգրտում» մաքսային փաստաթուղթը:

3. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման դեպքում սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան սահմանված՝ յուրաքանչյուր օրացուցային ամսվա (լրիվ և ոչ լրիվ) ժամանակահատվածի համար (այսուհետ սույն գլխում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման կիրառման ժամանակահատված) վճարման է ենթակա այդ ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումն իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումն ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելու օրվա դրությամբ հաշվարկված՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն գումարի 3 տոկոսը, որը ենթակա կլիներ վճարման, եթե «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

4. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան կասեցնելու դեպքում այդ կասեցման ժամանակահատվածի համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարում չի կատարվում: Սույն կետի կիրառման նպատակով՝ մաքսային գործընթացի գործողության կասեցման ժամանակահատվածը որոշվում է այն լրիվ օրացուցային ամիսների քանակով, որոնց ընթացքում «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը կասեցվել է:

5. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման դեպքում ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարը հայտարարատուի ընտրությամբ վճարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման ողջ ժամանակահատվածի համար (այսուհետ սույն գլխում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի միանվագ վճարում) կամ պարբերաբար (ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարում): Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարման դեպքում այդպիսի վճարումը կատարվում է սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան վճարման ենթակա չափով՝ ոչ պակաս, քան 1 օրացուցային ամսվա համար (լրիվ կամ ոչ լրիվ): Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման պարբերականությունը սահմանվում է հայտարարատուի կողմից՝ ապրանքների հայտարարագրում:

Սույն Օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ կետին և 7-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերին համապատասխան սահմանված ժամկետներում պարբերաբար վճարվող ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարները չվճարվելու կամ ամբողջությամբ չվճարվելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են միանվագ վճարման՝

ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման կիրառման ամբողջ մնացած ժամանակահատվածի համար:

6. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման կիրառման ժամանակահատվածի ընթացքում վճարված և (կամ) բռնագանձված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի ընդհանուր գումարը չպետք է գերազանցի այդ ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումն իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ հաշվարկված՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն գումարը, որը ենթակա կլիներ վճարման, եթե ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

7. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերին համապատասխան ավարտվելու կամ դադարեցվելու դեպքում ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարում կիրառելու ժամանակահատվածի ընթացքում վճարված և (կամ) բռնագանձված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարները ենթակա չեն վերադարձման (հաշվանցման), եթե սույն Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

Հոդված 224. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը, կասեցնելն ու դադարեցնելը

1. Մինչև «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալն այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է՝

1) ժամանակավոր ներմուծված ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով, այդ թվում՝ սույն Օրենսգրքի 276-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան.

2) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ժամանակավոր ներմուծված ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչվելով.

3) Հանձնաժողովի և (կամ) մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող հանգամանքների ի հայտ գալով, նախքան որոնց ի հայտ գալը ապրանքները գտնվում են մաքսային հսկողության տակ.

2. Մինչև «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալն այդ մաքսային ընթացակարգի գործողությունը կարող է ավարտվել՝

1) ժամանակավոր ներմուծված ապրանքներն այն մաքսային ընթացակարգերով ձևակերպելով, որոնք կիրառելի են օտարերկրյա ապրանքների նկատմամբ, սույն Օրենսգրքով նախատեսված պայմաններով՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի, եթե այլ բան սահմանված չէ սույն կետով.

2) վերսկսելով «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը, որի գործողությունը կասեցվել էր՝ սույն Օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան.

3) ժամանակավոր ներմուծված ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով, եթե այդ ապրանքները ձևակերպված են այդ մաքսային ընթացակարգով Միության մաքսային տարածքով այն անդամ պետության տարածքից, որի մաքսային մարմնի կողմից կատարվել է ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս դրանց բացթողումը, այլ անդամ պետության տարածք փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար:

3. Մինչև «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալն այդ մաքսային ընթացակարգի գործողությունը կարող է կասեցվել ժամանակավոր ներմուծված ապրանքները «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով, «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում կամ Հանձնաժողովի կողմից սահմանվող՝ հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքերում:

Ժամանակավոր ներմուծված ապրանքները հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպելու արդյունքում «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության կասեցման դեպքը սահմանելիս Հանձնաժողովն իրավունք ունի ժամանակավոր ներմուծված ապրանքերի նկատմամբ սահմանելու ներմուծման մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունները, ինչպես նաև ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը:

4. Ժամանակավոր ներմուծված ապրանքները մեկ կամ մի քանի խմբաքանակներով կարող են ձևակերպվել «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով կամ որևէ այլ մաքսային ընթացակարգով:

5. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալուն պես մաքսային ընթացակարգի գործողությունը դադարում է:

6. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտի դեպքերը,

պայմանները և կարգը մեկ այլ անդամ պետության տարածքում, որի չի հանդիսանում այն անդամ պետությունը, որի մաքսային մարմնի կողմից այդ ապրանքները ձևակերպվել են «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով, որոշվում են Հանձնաժողովի կողմից:

Հոդված 225. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացումը և դադարումը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. Հայտարարատուի՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագիրը գրանցվելու պահից, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնք բացթողման համար հայտագրվել են մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմում ներկայացրած անձի՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու պահից:

2. Մեկ առաքողի կողմից մեկ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթով մեկ ստացողի հասցեով ներմուծվող՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նկատմամբ և որոնց ընդհանուր մաքսային արժեքը չի գերազանցում 200 եվրոյին համարժեք գումարը, իսկ Հանձնաժողովի կողմից այդպիսի գումարի այլ չափ որոշված լինելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից սահմանված գումարի չափը՝ մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագիրը գրանցելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորություն չի առաջանում: Ընդ որում, սույն կետի նպատակներով մաքսային արժեքում չեն ներառվում Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների ժամանման վայր փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ծախսերը, այդպիսի ապրանքների բեռնման, բեռնաթափման կամ փոխաբեռնման ծախսերը և ապահովագրական ծախսերը՝ կապված այդպիսի ապրանքների այդպիսի փոխադրման (տրանսպորտային փոխադրման), բեռնման, բեռնաթափման կամ փոխաբեռնման հետ:

Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու գումարի այլ չափ, քան նախատեսված է սույն կետի երկրորդ պարբերությամբ, որի սահմաններում մեկ առաքողի կողմից մեկ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթով մեկ ստացողի հասցեով ներմուծվող՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորություն չի առաջանում:

3. Հայտարարատուի՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը՝ սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան՝ մինչև սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված վերջնաժամկետը լրանալը՝ բացառությամբ այն դեպքի, երբ մինչև այդ մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալը վրա է հասել ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը.

2) «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը՝ սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան, եթե «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ կիրառվել են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնություններ՝ բացառությամբ այն դեպքի, երբ մինչև այդ մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալը վրա է հասել ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը.

3) «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը՝ սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան, և ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) դրանց բռնագանձում՝ սույն հոդվածին համապատասխան վճարման ենթակա չափերով.

4) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումը և (կամ) դրանց բռնագանձումը՝ սույն հոդվածի 7-րդ կետի 6-8-րդ ենթակետերով և 13-րդ կետով նախատեսված հանգամանքների ի հայտ գալու դեպքում վճարման ենթակա չափերով.

5) մաքսային մարմնի կողմից անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան օտարերկրյա ապրանքների՝ մինչև «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչնչացման և

(կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստի ճանաչումը և ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարումը և (կամ) դրանց բռնագանձումը՝ սույն հոդվածին համապատասխան վճարման ենթակա չափերով՝ հանգամանքների ի հայտ գալու նախորդող ժամանակահատվածի համար.

6) «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողումը մերժելը՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության մասով, որն առաջացել է ապրանքների հայտարարագիրը կամ նախքան ապրանքների հայտարարագրի ներկայացումն ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելիս.

7) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան մաքսային հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ մաքսային հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

8) անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը և ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) դրանց բռնագանձում՝ սույն հոդվածին համապատասխան վճարման ենթակա չափերով՝ այդպիսի հանգամանքների ի հայտ գալու ժամանակահատվածի համար.

9) սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքների արգելանքի վերցնելը (արգելապահելը) և ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) դրանց բռնագանձում՝ սույն հոդվածին համապատասխան վճարման ենթակա չափերով՝ այդպիսի արգելանքի վերցնելուն (արգելապահելուն) նախորդող ժամանակահատվածի համար.

10) այն ապրանքների ժամանակավոր պահպանման հանձնելը կամ մաքսային ընթացակարգերից որևէ մեկով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգի իրականացման) ընթացքում և որոնց նկատմամբ ընդունվել է դրանք վերադարձնելու մասին որոշում, եթե նախկինում այդպիսի ապրանքների բացթողում չի իրականացվել, և ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) դրանց բռնագանձում՝ սույն հոդվածին համապատասխան վճարման ենթակա չափերով՝ հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգի իրականացման) ընթացքում այդպիսի ապրանքների առգրավմանը կամ դրանց վրա արգելանք դնելուն նախորդող ժամանակահատվածի համար:

4. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարմամբ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման (ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման)՝

1) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի միանվագ վճարման ժամանակ կամ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարման դեպքում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի առաջին մասի վճարման ժամանակ՝ մինչև ապրանքների բացթողումը՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան.

2) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարման դեպքում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի երկրորդ և հաջորդ մասերի վճարման ժամանակ՝ մինչև այն ժամանակահատվածի սկիզբը, որի համար կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի հերթական մասի վճարումը:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան սահմանված չափերով:

6. «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն հոդվածի 7-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

7. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) ապրանքների ժամանակավոր գտնվելու և օգտագործելու՝ սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված պայմանները չպահպանելու դեպքում՝ նշված ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը.

2) սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված վերջնաժամկետը լրանալու դեպքում՝

ներմուծման մաքսատուրքերի, հարկերի միանվագ վճարման ժամանակ կամ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարման դեպքում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի առաջին մասի վճարման ժամանակ՝ այդ վերջնաժամկետը լրանալու օրը.

ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարման դեպքում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի երկրորդ և հաջորդ մասերի վճարման ժամանակ՝ այն ժամանակահատվածի սկզբին նախորդող օրը, որի

համար կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի հերթական մասի վճարումը.

3) հայտարարատուի կողմից՝ սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան դիմում ներկայացվելու դեպքում՝

ներմուծման մաքսատուրքերի, հարկերի միանվագ վճարման ժամանակ կամ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարման դեպքում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի առաջին մասի վճարման ժամանակ՝ հայտարարատուի դիմումում նշված օրվան նախորդող օրը.

ներմուծման մաքսատուրքերի, հարկերի պարբերական վճարման դեպքում՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի երկրորդ և հաջորդ մասերի վճարման ժամանակ՝ այն ժամանակահատվածի սկզբին նախորդող օրը, որի համար կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարի հերթական մասի վճարումը.

4) հայտարարատուի կողմից ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ այդ ապրանքներն օգտագործելու և (կամ) դրանք տնօրինելու մասով սահմանափակումների հետ կապված արտոնություններից հրաժարվելու դեպքում՝ ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված հայտարարագրում ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնություններից հրաժարվելու մասով փոփոխություններ կատարելու օրը.

5) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման և (կամ) այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների հետ կապված արտոնությունների կիրառման ընթացքում այդ արտոնությունների տրամադրման նպատակներն ու պայմանները խախտող գործողությունների կատարման դեպքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործողությունները կատարելն առաջացնում է սույն կետի 6-րդ և 7-րդ ենթակետերով նախատեսված հանգամանքների ի հայտ գալը՝ նշված գործողությունների կատարման առաջին օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով նշված ապրանքների ձևակերպման օրը.

6) ժամանակավոր ներմուծված ապրանքները մինչև «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտելը առանց մաքսային մարմինների թույլտվության այլ անձանց փոխանցելու դեպքում՝ ապրանքների փոխանցման օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով նշված ապրանքների ձևակերպման օրը.

7) մինչև «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտելը ժամանակավոր ներմուծված ապրանքների կորստի դեպքում՝ ապրանքների կորստի օրը՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով կորստի, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով նշված ապրանքների ձևակերպման օրը.

8) մինչև «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալը «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգը սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան չավարտելու դեպքում՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալու օրը՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդ մաքսային ընթացակարգի գործողությունը երկարաձգվում է՝ սույն Օրենսգրքի 221-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

8. Սույն հոդվածի 7-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման՝

1) սույն հոդվածի 7-րդ կետի 1-ին ենթակետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝ այնպես, ինչպես դա կարվեր, եթե «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ կիրառվեր ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարում՝ սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան՝ ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից մինչև դրա գործողությունն ավարտվելու օրն ընկած ժամանակահատվածի համար.

2) սույն հոդվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝ այնպես, ինչպես դա կարվեր, եթե «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ կիրառվեր ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարում՝ սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան՝ սույն Օրենսգրքի 219-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից մինչև «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու օրն ընկած ժամանակահատվածի համար.

3) սույն հոդվածի 7-րդ կետի 3-րդ ենթակետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝ սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան սահմանված չափերով.

4) սույն հոդվածի 7-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝ սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան սահմանված չափերով և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնություններ կիրառելու հետ կապված՝ չվճարված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ սույն հոդվածի 7-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված ժամկետն սկսվելու օրվանից մինչև «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու օրն ընկած ժամանակահատվածի համար.

5) սույն հոդվածի 7-րդ կետի 6-8-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝ այնպես,

ինչպես դա կարվեր, եթե «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ նվազեցնելով ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարները, որոնք վճարվել են և (կամ) բռնագանձվել են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման դեպքում, եթե այլ չափ նախատեսված չէ սույն հոդվածի 10-րդ կետով: Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը հաշվարկելու համար՝ կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն դրույքաչափերը, որոնք գործում են մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագիրը գրանցվելու օրվա դրությամբ, որը ներկայացվել է ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումը կատարվել է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մաքսային մարմնի կողմից մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցելու օրվա դրությամբ գործող դրույքաչափերից:

9. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն գումարներից, որոնք վճարվում են (բռնագանձվում են) ապրանքների նկատմամբ՝ սույն հոդվածի 8-րդ կետի 5-րդ ենթակետին համապատասխան, ինչպես նաև ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն գումարներից, որոնք վճարվել են այդ ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման ժամանակ, ենթակա են վճարման տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների նկատմամբ տրամադրված լիներ դրանց վճարման հետաձգման (տարաժամկետ վճարման) հնարավորություն՝ ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից մինչև ներմուծման մաքսատուրքերի, հարկերի՝ սույն հոդվածի 7-րդ կետի 6-8-րդ ենթակետերին համապատասխան սահմանված ժամկետները լրանալու օրն ընկած ժամանակահատվածի համար: Նշված տոկոսները հաշվարկվում և վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

10. Եթե սույն հոդվածի 7-րդ կետի 6-րդ և 7-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ կիրառվեր ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարում սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ սույն հոդվածի 7-րդ կետի 6-րդ և 7-րդ կետերին համապատասխան սահմանված ժամկետը սկսվելու օրվանից մինչև «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու օրն ընկած ժամանակահատվածի համար: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն գումարները, որոնք վճարվել և (կամ) բռնագանձվել են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման ժամանակ՝ մինչև սույն հոդվածի 7-րդ կետի 6-րդ և 7-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալուն նախորդող ժամանակահատվածի համար, վերադարձման (հաշվանցման) ենթակա չեն:

11. Եթե սույն հոդվածի 7-րդ կետի 6-8-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո ապրանքները, որոնց նկատմամբ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվել է, հանձնվում են ժամանակավոր պահպանման՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան, կամ ձևակերպվում են մաքսային ընթացակարգով՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ կիրառվեր ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարում՝ սույն Օրենսգրքի 223-րդ հոդվածին համապատասխան:

Նշված դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման՝ սույն հոդվածի 7-րդ կետի 6-8-րդ ենթակետերով սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը սկսվելու օրվանից մինչև այդ ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնման կամ մաքսային ընթացակարգով ձևակերպման օրն ընկած ժամանակահատվածի համար: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման այնպիսի չափերով, որոնք չեն գերազանցում ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն գումարները, որոնք ենթակա էին վճարման, եթե «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով, և որոնք հաշվարկվել էին ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված մաքսային հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումն իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մաքսային մարմնի կողմից մինչև ապրանքների հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցվելու օրվա դրությամբ: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերի, հարկերի այն գումարները, որոնք վճարվել և (կամ) բռնագանձվել են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման ժամանակ՝ մինչև սույն հոդվածի 7-րդ կետի 6-8-րդ ենթակետերում նշված հանգամանքների ի հայտ գալու ժամանակահատվածի համար, ենթակա չեն վերադարձման (հաշվանցման):

12. «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն հոդվածի 13-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

13. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը

վճարելու ժամկետ է համարվում՝

1) ժամանակավոր ներմուծված ապրանքները մինչև «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտն առանց մաքսային մարմնի թույլտվության այլ անձանց փոխանցելու դեպքում՝ ապրանքների փոխանցման օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով նշված ապրանքների ձևակերպման օրը.

2) մինչև «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը ժամանակավոր ներմուծված ապրանքների կորստի (բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչնչացման և (կամ) փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով կորստի) դեպքում՝ ապրանքների կորստի օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով նշված ապրանքների ձևակերպման օրը.

3) մինչև «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալը «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգը սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան չավարտվելու դեպքում՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալու օրը՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդ մաքսային ընթացակարգի գործողությունը երկարաձգվում է՝ սույն Օրենսգրքի 221-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

14. Սույն հոդվածի 13-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այն չափերով, ինչպես դա կարվեր, եթե «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով: Հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար կիրառվում են հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերը, որոնք գործում են մաքսային մարմնի կողմից ապրանքների այն հայտարարագիրը գրանցվելու օրվա դրությամբ, որը ներկայացվել է ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումը կատարվել է մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ մաքսային մարմնի կողմից մինչև ապրանքների մասով հայտարարագրի ներկայացումը ապրանքների բացթողման մասին դիմումը գրանցվելու օրվա դրությամբ գործող դրույքաչափերից:

15. Սույն հոդվածի 14-րդ կետին համապատասխան վճարվող (բռնագանձվող) հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի գումարներից ենթակա են վճարման տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի նշված գումարների նկատմամբ տրամադրված լիներ դրանց վճարման հետաձգումը՝ ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից մինչև հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի՝ սույն հոդվածի 13 կետով սահմանված վճարման ժամկետները լրանալու օրը: Նշված տոկոսները հաշվարկվում և վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 226. Ժամանակավոր ներմուծված ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս դրանց նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունները

1. Ժամանակավոր ներմուծված ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար՝ կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի այն դրույքաչափերը, որոնք գործում են մաքսային մարմնի կողմից ապրանքների այն հայտարարագիրը գրանցվելու օրվա դրությամբ, որը ներկայացվել է ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար:

Եթե ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար պահանջվում է կատարել օտարերկրյա արժույթի վերահաշվարկ անդամ պետության արժույթի, ապա այդպիսի վերահաշվարկը իրականացվում է սույն կետի առաջին պարբերությունում նշված օրվա դրությամբ գործող արժույթի փոխարժեքով:

2. Ժամանակավոր ներմուծված ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման սույն Օրենսգրքի 136-րդ հոդվածին համապատասխան այդ ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարների և «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների հայտարարատուի կողմից ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման ժամանակ վճարված և (կամ) մաքսային մարմնի կողմից այդ հայտարարատուից բռնագանձված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարների տարբերության չափով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան վճարվող (բռնագանձվող) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի

գումարներից, ինչպես նաև ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարման ժամանակ վճարված (բռնագանձված) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարներից ենթակա են վճարման տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների նկատմամբ տրամադրված լիներ դրանց վճարման հետաձգման (տարաժամկետ վճարման) հնարավորություն՝ նշված ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից մինչև ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարելու օրը: Նշված տոկոսները հաշվարկվում և վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

«Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների նկատմամբ վճարվող (բռնագանձվող) հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերի գումարներից ենթակա են վճարման տոկոսներ, այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների նկատմամբ տրամադրվեր դրանց վճարման հետաձգում՝ ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից մինչև հատուկ, հակագնացման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարելու օրը: Նշված տոկոսները հաշվարկվում և վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

Մինչև ապրանքների՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգին համապատասխան բացթողումը վճարված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարներից սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված տոկոսները չեն հաշվեգրվում և չեն վճարվում:

Այն դեպքում, երբ սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը կասեցվել է, սույն կետով նախատեսված տոկոսները մաքսային ընթացակարգի գործողության կասեցման ժամանակահատվածում չեն հաշվեգրվում և չեն վճարվում:

Հանձնաժողովն իրավունք ունի ժամանակավոր ներմուծվող ապրանքների առանձին կատեգորիաների նկատմամբ սահմանելու դեպքեր, երբ սույն կետի առաջին և երկրորդ պարբերություններով նախատեսված տոկոսները չեն հաշվեգրվում և չեն վճարվում:

4. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են այն դեպքում, երբ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու դեպքում կամ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ սույն Օրենսգրքի 224-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան դադարելու դեպքում ժամանակավոր ներմուծված ապրանքները ժամանակավոր ներմուծված ապրանքների հայտարարատուի կողմից ձևակերպվում են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

Սույն հոդվածի դրույթները կիրառվում են նաև այն դեպքում, երբ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվել է՝ ժամանակավոր ներմուծված ապրանքները «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպելով:

Գլուխ 30

«Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգը

Հոդված 227. «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի բովանդակությունն ու կիրառումը

1. «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգը Միության ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան նման ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքից՝ դրա սահմաններից դուրս դրանց գտնվելու և օգտագործվելու համար՝ առանց արտահանման մաքսատուրքեր վճարելու՝ պահպանելով այդ մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և այդպիսի մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանները:

2. «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և Միության մաքսային տարածքից փաստացի արտահանված ապրանքները (սույն գլխում այսուհետ՝ ժամանակավոր արտահանված ապրանքներ) կորցնում են Միության ապրանքների կարգավիճակը:

3. «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի կիրառումը թույլատրվում է Միության մաքսային տարածքից արտահանված՝

1) «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ՝ սույն Օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտի նպատակով.

2) Միության՝ սույն Օրենսգրքի 303-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ապրանքների դեպքում:

4. «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգը չի կիրառվում հետևյալ ապրանքների նկատմամբ՝

1) սննդամթերք, խմիչքներ՝ ներառյալ ոգելից խմիչքները, ծխախոտ և ծխախոտային արտադրատեսակներ, հումք, կիսաֆաբրիկատներ, ծախսվելիք նյութեր և նմուշներ՝ բացառությամբ Միության մաքսային տարածքից դրանց արտահանման դեպքերի՝ եզակի օրինակներով, գովազդային և (կամ) ցուցադրության նպատակներով կամ որպես ցուցահանդեսային ցուցադրանմուշներ կամ արդյունաբերական նմուշներ.

2) թափոններ՝ ներառյալ արտադրական թափոնները:

5. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու ժամանակավոր արտահանված այն ապրանքների կատեգորիաները, որոնց նկատմամբ թույլատրվում է դրանց փոխարինումն օտարերկրյա ապրանքներով, ինչպես նաև այդպիսի փոխարինման դեպքերը:

6. «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի կիրառումը թույլատրվում է խողովակաշարային տրանսպորտով փոխադրվող բնական գազի նկատմամբ՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող դեպքերում:

Հոդված 228. «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և այդպիսի մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանները

1. Ապրանքները «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

1) «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նույնականացման հնարավորությունը՝ այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու նպատակով մաքսային ընթացակարգով դրանց հետագա ձևակերպման դեպքում:

Ապրանքների նույնականացում չի պահանջվում այն դեպքերում, երբ թույլատրվում է ժամանակավոր արտահանված ապրանքների փոխարինում՝ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան կամ սույն Օրենսգրքի 227-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված դեպքերում.

2) արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

2. Ապրանքները՝ «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգին համապատասխան օգտագործելու պայմաններն են՝

1) մաքսային մարմնի կողմից սահմանված՝ «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետի պահպանումը.

2) սույն Օրենսգրքի 230-րդ հոդվածով սահմանված՝ ժամանակավորապես արտահանված ապրանքների օգտագործման և տնօրինման սահմանափակումների պահպանումը:

Հոդված 229. «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը

1. «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը սահմանափակված չէ՝ եթե այլ բան սահմանված չէ սույն կետի երկրորդ պարբերությունով:

Կախված Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանման նպատակներից, ինչպես նաև այն ապրանքների համար, որոնց առնչությամբ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված է դրանք այդ պետության տարածք վերադարձնելու պարտադիր պայման, անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետ:

2. «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ապրանքները ձևակերպելու դեպքում մաքսային մարմինը հայտարարատուի դիմումի հիման վրա, ելնելով Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանման նպատակներից և հանգամանքներից, սահմանում է այդ մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը:

3. «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը անձի դիմումի հիման վրա կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետի լրանալը կամ դրա լրանալուց հետո 1 ամսից ոչ ուշ: Մաքսային մարմնի կողմից սահմանված՝ «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը երկարաձգելիս այն լրանալուց հետո այդ մաքսային ընթացակարգի գործողությունը վերսկսվում է այդ մաքսային ընթացակարգը դադարելու օրվանից:

4. Եթե ապրանքների նկատմամբ, սույն հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությանը համապատասխան, անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված է «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը, որը սահմանվում (երկարաձգվում) է մաքսային մարմնի կողմից, ապա այդ մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը չի կարող գերազանցել այդպիսի ժամկետը:

5. Օտարերկրյա անձին ժամանակավորապես արտահանված այն ապրանքների նկատմամբ իրավունքների փոխանցման դեպքում, որոնց նկատմամբ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված չէ դրանք այդ պետության տարածք վերադարձնելու պարտավորություն, այդ ապրանքների նկատմամբ «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը չի երկարաձգվում, իսկ նշված ապրանքները ենթակա են «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպման:

Հոդված 230. Ժամանակավորապես արտահանված ապրանքների օգտագործման և տնօրինման սահմանափակումները

1. Ժամանակավորապես արտահանված ապրանքները պետք է մնան անփոփոխ վիճակում, բացի բնական մաշվածության հետևանքով, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման կանոնավոր պայմաններում բնական կորստի հետևանքով առաջացած փոփոխություններից:

2. Թույլատրվում է ժամանակավորապես արտահանված ապրանքների հետ իրականացնել դրանց պահպանվածության ապահովման համար անհրաժեշտ գործողություններ՝ ներառյալ վերանորոգումը, բացառությամբ կապիտալ վերանորոգման, արդիականացման, տեխնիկական սպասարկումը և այլ գործողություններ, որոնք անհրաժեշտ են ապրանքները բնականոն վիճակում պահպանելու համար՝ պայմանով, որ ապրանքները «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ապահովվի դրանց նույնականացումը մաքսային մարմնի կողմից:

Հոդված 231. «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը և դադարեցումը

1. Մինչև «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետի լրանալը՝ այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է ժամանակավորապես արտահանված ապրանքները «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպելով՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքի:

2. Մինչև «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետի լրանալը, այդ մաքսային ընթացակարգի գործողությունը կարող է ավարտվել ժամանակավորապես արտահանված ապրանքներն «արտահանում», «մաքսային տարածքից դուրս վերամշակում», «ժամանակավոր արտահանում» ընթացակարգերով ձևակերպելով՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքի, ինչպես նաև եթե, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ժամանակավորապես արտահանված ապրանքները ենթակա են Միության մաքսային տարածք պարտադիր հետադարձ ներմուծման:

3. Ժամանակավորապես արտահանված ապրանքները կարող են ձևակերպվել սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված ընթացակարգերով՝ մեկ կամ մի քանի խմբաքանակներով:

4. Մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվում է՝

1) «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալուց հետո, եթե այդպիսի մաքսային ընթացակարգի գործողությունը չի երկարաձգվել.

2) մինչև մաքսային ընթացակարգի գործողության ավարտը ժամանակավորապես արտահանված ապրանքների նկատմամբ սույն Օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմամբ կապիտալ վերանորոգման, արդիականացման գործառնությունների իրականացման փաստի հայտնաբերման դեպքում:

5. Միության մաքսային տարածք ներմուծված ապրանքները, որոնց նկատմամբ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցված է սույն հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված հիմքով, Միության մաքսային տարածքում գտնվելու համար ենթակա են օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ձևակերպման՝ բացառությամբ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգի, իսկ Միության մաքսային տարածքից արտահանման համար՝ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպման:

Հոդված 232. Արտահանման մաքսատուրքերի վճարման պարտավորության առաջացումն ու դադարումը «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների համար, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. Հայտարարատուի՝ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների համար արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագիրը գրանցելու պահից:

2. Հայտարարատուի՝ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների համար արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը դադարեցվում է հետևյալ հանգամանքների առաջացման դեպքում՝

1) «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտ՝ սույն Օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան.

2) սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին կամ սույն Օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան մաքսային ընթացակարգերով այն ապրանքների ձևակերպումը, որոնց նկատմամբ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվել է.

3) ապրանքների բացթողման մերժում՝ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների հայտարարագիրը գրանցելիս առաջացած արտահանման մաքսատուրքերի վճարելու պարտավորության առնչությամբ.

4) ապրանքների հայտարարագրի հետկանչը սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան և (կամ) ապրանքների բացթողման չեղյալ ճանաչելը սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած արտահանման մաքսատուրքերի վճարման պարտավորության առնչությամբ.

5) ապրանքները բռնագրավելը կամ ապրանքներն անդամ պետության սեփականությունը (եկամուտը) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

6) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

7) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ մաքսային ընթացակարգերից որևէ մեկով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. Արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն Օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ մինչև «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետի լրանալը չավարտվելու դեպքում:

Նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում արտահանման մաքսատուրքերը վճարելու ժամկետ է համարվում «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի՝ մաքսային մարմնի կողմից սահմանված գործողության ժամկետը լրանալու օրը:

4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում արտահանման մաքսատուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպված լինեին «արտահանում» մաքսային ընթացակարգով՝ առանց արտահանման մաքսատուրքերի վճարման արտոնությունների կիրառման:

Արտահանման մաքսատուրքերը հաշվարկելու համար կիրառվում են ապրանքները «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագրի՝ մաքսային մարմնի կողմից գրանցման օրվա դրությամբ գործող արտահանման մաքսատուրքերի դրույքաչափերը:

5. Սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան վճարվող (գանձվող) արտահանման մաքսատուրքերի գումարներից վճարման են ենթակա տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների նկատմամբ տրամադրվեր դրանց վճարման հետաձգման հնարավորություն, եթե դա սահմանված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում ապրանքները ձևակերպվել են «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով: Նշված տոկոսները հաշվարկվում և վճարվում են անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Ապրանքները՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետի երրորդ պարբերությանը կամ 231-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան մաքսային ընթացակարգերով ձևակերպելու դեպքում, արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարումից և (կամ) դրանց բռնագանձումից (ամբողջական կամ մասնակի) հետո սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) գանձված արտահանման մաքսատուրքերի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին համապատասխան:

Հոդված 233. Ժամանակավորապես արտահանված ապրանքների համար արտահանման մաքսատուրքերի հաշվարկման և վճարման առանձնահատկություններն «արտահանում» մաքսային ընթացակարգով դրանք ձևակերպելու դեպքում

1. Ժամանակավորապես արտահանված ապրանքները «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս արտահանման մաքսատուրքերը հաշվարկելու համար կիրառվում են ապրանքները «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագրի՝ մաքսային մարմնի կողմից գրանցման օրվա դրությամբ գործող արտահանման մաքսատուրքերի դրույքաչափերը, եթե անդամ պետության օրենսդրությամբ այլ օր սահմանված չէ՝ սույն Օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությանը համապատասխան:

Այն դեպքում, երբ արտահանման մաքսատուրքերը հաշվարկելու համար պահանջվում է կատարել օտարերկրյա արժույթի վերահաշվարկ անդամ պետության արժույթի, այդպիսի վերահաշվարկը կատարվում է սույն կետի առաջին պարբերությունում նշված օրվա դրությամբ գործող արժույթների փոխարժեքով:

2. «Արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների համար վճարվող (գանձվող) արտահանման մաքսատուրքերի գումարներից վճարման են ենթակա տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր,

եթե նշված գումարների նկատմամբ տրամադրվեր դրանց վճարման հետաձգման հնարավորություն, եթե դա սահմանված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում ապրանքները ձևակերպվել են «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով: Նշված տոկոսները հաշվարկվում և վճարվում են անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 234. Արտահանման մաքսատուրքերի հաշվարկման և վճարման առանձնահատկություններն «արտահանում» մաքսային ընթացակարգով այն ապրանքները ձևակերպելիս, որոնց նկատմամբ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցված է

1. Այն ապրանքները «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս, որոնց առնչությամբ նկատմամբ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարել է, արտահանման մաքսատուրքերը հաշվարկելու համար կիրառվում են ապրանքները «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագրի՝ մաքսային մարմնի կողմից գրանցման օրվա դրությամբ գործող արտահանման մաքսատուրքերի դրույքաչափերը, եթե անդամ պետության օրենսդրությամբ այլ օր սահմանված չէ՝ սույն Օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությանը համապատասխան:

Այն դեպքում, երբ արտահանման մաքսատուրքերը հաշվարկելու համար պահանջվում է կատարել օտարերկրյա արժույթի վերահաշվարկ անդամ պետության արժույթի, այդպիսի վերահաշվարկը կատարվում է սույն կետի առաջին պարբերությունում նշված օրվա դրությամբ գործող արժույթների փոխարժեքով:

2. Արտահանման մաքսատուրքերի գումարներից, որոնք վճարվել (գանձվել) են «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) այն ապրանքների առնչությամբ, որոնց նկատմամբ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցված է, վճարման են ենթակա տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների նկատմամբ տրամադրվեր դրանց վճարման հետաձգման հնարավորություն, եթե դա սահմանված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում ապրանքները ձևակերպվել են «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով: Նշված տոկոսները հաշվարկվում և վճարվում են անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գլուխ 31

«Վերաներմուծում» մաքսային ընթացակարգը

Հոդված 235. «Վերաներմուծում» մաքսային ընթացակարգի բովանդակությունն ու կիրառումը

1. «Վերաներմուծում» մաքսային ընթացակարգն օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան՝ Միության մաքսային տարածքից ավելի վաղ արտահանված այդպիսի ապրանքները ներմուծվում են Միության մաքսային տարածք առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման՝ պահպանելով ապրանքներն այդ մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանները:

2. «Վերաներմուծում» մաքսային ընթացակարգը կիրառվում է Միության մաքսային տարածքից ավելի վաղ արտահանված ապրանքների նկատմամբ, որոնց նկատմամբ կիրառվել է՝

1) «արտահանում» մաքսային ընթացակարգը.

2) «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգը՝ այդ մաքսային ընթացակարգի գործողությունը սույն Օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան ավարտելու համար.

3) «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգը՝ այդ մաքսային ընթացակարգի գործողությունը սույն Օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան ավարտելու համար:

3. «Վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձեռք են բերում Միության ապրանքների կարգավիճակ՝ բացառությամբ Միության մաքսային տարածքից ավելի վաղ արտահանված ապրանքների, որոնց նկատմամբ կիրառվել է «ժամանակավոր արտահանում» կամ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգերը, և որոնք սույն Օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված ապրանքներն, կամ դրանց վերամշակման արդյունքներն են:

4. «Վերաներմուծում» մաքսային ընթացակարգի կիրառումը թույլատրվում է՝

1) Միության ապրանքների նկատմամբ՝ սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կամ սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողության ավարտի համար.

2) «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ անհատույց (երաշխիքային) վերանորոգման նպատակով Միության մաքսային տարածքից արտահանված ապրանքների վերամշակման արդյունքների նկատմամբ՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ պարբերությունում նշված վերամշակման արդյունքների:

5. «Վերաներմուծում» մաքսային ընթացակարգի կիրառումը չի թույլատրվում սույն Օրենսգրքի 201-րդ հոդվածի 11-րդ կետում և 211-րդ հոդվածի 9-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ:

Հոդված 236. Ապրանքները «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանները

1. Ապրանքները «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

1) արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան.

2) Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանման հանգամանքների, վերանորոգման գործողությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնելը մաքսային մարմին, եթե այդպիսի գործողություններն ապրանքների հետ իրականացվել են Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս և հաստատվում են մաքսային և (կամ) այլ փաստաթղթերի կամ այդպիսի փաստաթղթերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացնելով.

3) ապրանքների առանձին կատեգորիաների նկատմամբ սույն հոդվածի 2, 4-6-րդ կետերով սահմանված այլ պայմաններ:

2. Միության մաքսային տարածքից ավելի վաղ արտահանված ապրանքները, որոնց նկատմամբ կիրառվել է «արտահանում» մաքսային ընթացակարգը, «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

1) ապրանքների ձևակերպումը «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով՝ մինչև Միության մաքսային տարածքից դրանց փաստացի արտահանման օրվան հաջորդող 3 տարին լրանալը կամ Հանձնաժողովի կողմից սահմանված այլ ժամկետի լրանալը՝ սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան.

2) ապրանքների այն վիճակի անփոփոխ պահպանումը, որում դրանք արտահանվել են Միության մաքսային տարածքից՝ բացառությամբ բնական մաշվածության հետևանքով առաջացած փոփոխությունների, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման կանոնավոր պայմաններում բնական կորստի հետևանքով առաջացած փոփոխությունների.

3) հարկերի և (կամ) դրանցից տոկոսների փոխհատուցումը, երբ այդպիսի հարկերի գումարները և (կամ) տոկոսները, կապված Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանման հետ, չեն վճարվել կամ վերադարձվել են, ինչպես նաև Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանման հետ կապված՝ չվճարված կամ որպես վճարումներ, արտոնություններ կամ փոխհատուցումներ՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացված այլ հարկերի գումարների, լրավճարների և այլ գումարների փոխհատուցումը, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ, այն կարգով և պայմաններով, որոնք սահմանված են այդպիսի օրենսդրությամբ:

3. Ապրանքների առանձին կատեգորիաների նկատմամբ Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու սույն հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված ժամկետը գերազանցող ժամկետ:

4. Միության մաքսային տարածքից ավելի վաղ արտահանված ապրանքները, որոնց նկատմամբ կիրառվել է «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգը, «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

1) ապրանքների ներմուծումը Միության մաքսային տարածք «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետի ընթացքում.

2) ապրանքների այն վիճակի անփոփոխ պահպանումը, որում դրանք արտահանվել են Միության մաքսային տարածքից՝ բացառությամբ բնական մաշվածության հետևանքով առաջացած փոփոխությունների, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման կանոնավոր պայմաններում բնական կորստի հետևանքով առաջացած փոփոխությունների, ինչպես նաև այն փոփոխությունների, որոնք թույլատրվում են այդպիսի ապրանքների նկատմամբ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգին համապատասխան դրանք օգտագործելիս:

5. Միության մաքսային տարածքից ավելի վաղ արտահանված ապրանքները, որոնց նկատմամբ կիրառվել է «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգը, «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

1) ապրանքների ներմուծումը Միության մաքսային տարածք «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության՝ մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետի ընթացքում.

2) ապրանքների այն վիճակի անփոփոխ պահպանումը, որում դրանք արտահանվել են Միության մաքսային տարածքից՝ բացառությամբ բնական մաշվածության հետևանքով առաջացած փոփոխությունների, ինչպես նաև փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման կանոնավոր պայմաններում բնական կորստի հետևանքով առաջացած փոփոխությունների:

6. Ապրանքների վերամշակման արդյունքները, որոնց նկատմամբ կիրառվել է «մաքսային տարածքից դուրս

վերամշակում» մաքսային ընթացակարգը, «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

1) «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների արտահանումը Միության մաքսային տարածքից՝ դրանց անհատույց (երաշխիքային) վերանորոգման նպատակով.

2) վերամշակման արդյունքների ձևակերպումը «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողության՝ մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետի ընթացքում:

7. «Վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների հայտարարատու կարող է հանդես գալ սույն հոդվածի 2,4-6-րդ կետերում նշված այն մաքսային ընթացակարգերից որևէ մեկով ձևակերպված ապրանքների հայտարարատու հանդիսացած անձը, որին համապատասխան ապրանքներն արտահանվել են Միության մաքսային տարածքից:

Հոդված 237. Արտահանման մաքսատուրքերի գումարների վերադարձը (հաշվանցումը)

1. Սույն Օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ կետում նշված ապրանքների համար, որոնք ձևակերպվել են «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով, իրականացվում է արտահանման մաքսատուրքերի վճարված գումարների վերադարձ (հաշվանցում)՝ պայմանով, որ նշված ապրանքները «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպվել են այդպիսի ապրանքներն «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվան հաջորդող օրվանից 6 ամսից ոչ ուշ:

2. Եթե ապրանքներն «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվել է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման մասին օրենսդրությամբ սահմանված առանձնահատկություններով՝ սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան, կամ սույն Օրենսգրքի 115-րդ հոդվածով, 116-րդ հոդվածով կամ 117-րդ հոդվածով սահմանված առանձնահատկություններով, ապա «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպված այդպիսի ապրանքների համար իրականացվում է արտահանման մաքսատուրքերի վճարված գումարների վերադարձ (հաշվանցում)՝ պայմանով, որ նշված ապրանքները «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպվել են այն անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված ժամկետից ոչ ուշ, որի տարածքում ապրանքները ձևակերպվել են «արտահանում» մաքսային ընթացակարգով:

Գլուխ 32

«Վերաարտահանում» մաքսային ընթացակարգը

Հոդված 238. «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի բովանդակությունն ու կիրառումը

1. «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգն օտարերկրյա ապրանքների և Միության ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան՝ օտարերկրյա ապրանքները Միության մաքսային տարածքից արտահանվում են առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի և (կամ) այդպիսի տուրքերի և հարկերի գումարների վերադարձով (հաշվանցմամբ)՝ սույն Օրենսգրքի 242-րդ հոդվածին համապատասխան, իսկ Միության ապրանքները՝ առանց արտահանման մաքսատուրքերի վճարման՝ ապրանքներն այդ մաքսային ընթացակարգով ձևակերպման պայմանների պահպանման դեպքում:

2. «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգը կիրառվում է՝

1) Միության մաքսային տարածք ներմուծված և Միության մաքսային տարածքում գտնվող օտարերկրյա ապրանքների նկատմամբ, այդ թվում՝ մաքսային ընթացակարգերով ձևակերպված օտարերկրյա ապրանքների նկատմամբ.

2) Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) ապրանքների (վերամշակման արդյունքների, թափոնների, բացառությամբ սույն Օրենսգրքի 170-րդ հոդվածի 3-րդ կետում նշված և (կամ) մնացորդների) նկատմամբ՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ սույն Օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան ավարտելու համար.

3) թափոնների նկատմամբ՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 195-րդ հոդվածի 3-րդ կետում նշված թափոնների, և (կամ) ներքին սպառման համար վերամշակման գործողությունների արդյունքում գոյացած մնացորդների նկատմամբ՝ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ սույն Օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան ավարտելու համար.

4) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված, օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ սույն Օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան ավարտելու համար.

5) «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված, օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ սույն Օրենսգրքի 215-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան ավարտելու համար.

6) Միության ապրանքների նկատմամբ, որոնց նկատմամբ կիրառվել է «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգը, եթե ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքից այն գործարքի պայմանները չկատարելու պատճառով, որի հիման վրա ապրանքները տեղափոխվում էին Միության մաքսային սահմանով, այդ թվում՝ քանակի, որակի, նկարագրության կամ փաթեթվածքի՝ սույն Օրենսգրքի 239-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պայմանների պահպանման դեպքում.

7) «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված այն ապրանքների նկատմամբ, որոնց նկատմամբ Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին կամ Միությանն անդամակցելու վերաբերյալ միջազգային պայմանագրերին համապատասխան կիրառվել են ներմուծման մաքսատուրքերի ավելի ցածր դրույքաչափեր, քան Եվրասիական տնտեսական Միության միասնական մաքսային սակագնով սահմանված դրույքաչափերը, եթե նշված ապրանքներն արտահանվում են Միության մաքսային տարածքից այն գործարքի պայմանները չկատարելու պատճառով, որի հիման վրա ապրանքները տեղափոխվում էին Միության մաքսային սահմանով, այդ թվում՝ քանակի, որակի, նկարագրության կամ փաթեթվածքի մասով, սույն Օրենսգրքի 239-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պայմանների պահպանման դեպքում:

3. Միության՝ սույն հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետում նշված, «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և Միության մաքսային տարածքից փաստացի արտահանված ապրանքները կորցնում են Միության ապրանքների կարգավիճակը:

4. «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի կիրառումը թույլատրվում է Միության մաքսային տարածքից արտահանված՝

1) սույն Օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված, «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ՝ «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ սույն Օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան ավարտելու համար.

2) Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ.

3) միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ՝ սույն Օրենսգրքի 276-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան.

4) սույն Օրենսգրքի 303-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված օտարերկրյա ապրանքների դեպքում:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպվում են Միության մաքսային տարածք: առանց դրանց ներմուծման:

Հոդված 239. Ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանները

1. Սույն Օրենսգրքի 238-րդ հոդվածի 2-րդ կետի 1-5-րդ ենթակետերում նշված ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

1) արգելքների և սահմանափակումների պահպանում՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան.

2) Միության մաքսային տարածք ապրանքներ ներմուծելու, Միության տարածքից ապրանքներ արտահանելու հանգամանքների մասին՝ մաքսային մարմնին այն տեղեկությունները ներկայացնելը, որոնք հաստատվում են մաքսային և (կամ) այլ փաստաթղթերի կամ այդ փաստաթղթերի մասին տեղեկությունների ներկայացմամբ:

2. Սույն Օրենսգրքի 238-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ և 7-րդ ենթակետերում նշված ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

1) ապրանքների՝ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպումը՝ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպման օրվան հաջորդող օրվանից 1 տարվա ընթացքում.

2) մաքսային մարմնին տվյալները ներկայացնելը Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման հանգամանքների, այն գործարքի պայմանները չկատարելու վերաբերյալ, որի հիման վրա ապրանքները տեղափոխվել են Միության մաքսային սահմանով, այդ ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու, «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպումից հետո այդ ապրանքների օգտագործման վերաբերյալ, որոնք հաստատվում են մաքսային և (կամ) այլ փաստաթղթեր կամ այդպիսի փաստաթղթերի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելով. Այն գործարքի պայմանների չկատարման հաստատման նպատակով, որի հիման վրա ապրանքները տեղափոխվում էին Միության մաքսային սահմանով, մաքսային մարմին կարող են ներկայացվել փաստաթղթեր, որոնք տրվում են լիազորված կազմակերպությունների կողմից՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

3) Միության մաքսային տարածքում ապրանքների չօգտագործումը և դրանց վերանորոգումը չանցկացնելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքների օգտագործումն անհրաժեշտ է եղել այն թերությունների կամ այլ

հանգամանքների հայտնաբերման համար, որոնք հանգեցրել են Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանմանը.

4) մաքսային մարմնի կողմից ապրանքների նույնականացման հնարավորությունը.

5) արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 240. «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հետ կապված գործողությունները

1. Միության մաքսային տարածքով փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ բացառությամբ՝

1) սույն Օրենսգրքի 238-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետում նշված ապրանքների նկատմամբ.

2) այն ապրանքների, որոնք արտահանվում են նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքից և այդ ապրանքների մեկնման վայրը՝ Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման այն վայրն է, որին միանում է այդպիսի նավահանգստային ԱՏԳ-ն կամ լոգիստիկ ԱՏԳ-ն.

3) Հանձնաժողովի կողմից սահմանվող ապրանքների այլ կատեգորիաների:

2. «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները պետք է Միության մաքսային տարածքից արտահանվեն այդպիսի ապրանքներն այդպիսի մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվան հաջորդող օրվանից 4 ամիսը չգերազանցող ժամկետում՝ բացառությամբ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ներմուծված ապրանքների:

3. Այն դեպքում, երբ օտարերկրյա ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում այդպիսի ապրանքները չեն ձևակերպվել «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով կամ չեն մեկնել Միության մաքսային տարածքից, դրանք պետք է հանձնվեն ժամանակավոր պահպանման:

4. «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները Միության մաքսային տարածքից չարտահանելու դեպքում, բացառությամբ դրանց ոչնչացման և (կամ) վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով անվերադարձ կորստի, կամ տեղափոխման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման կանոնավոր պայմաններում բնական կորստի արդյունքում առաջացած դրանց անվերադարձ կորստի դեպքերի, մինչև սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետը լրանալը «վերաարտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարում է, ինչպես նաև օտարերկրյա ապրանքները արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմնի կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

Հոդված 241. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության առաջացումն ու դադարեցումը «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների համար

1. Հայտարարատուի՝ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագիրը գրանցելու պահից:

2. Հայտարարատուի՝ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) Միության մաքսային տարածքից օտարերկրյա ապրանքների փաստացի արտահանում, ինչը հաստատվում է մեկնման վայրի մաքսային մարմնի կողմից՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող կարգով՝ սույն Օրենսգրքի 93-րդ հոդվածին համապատասխան.

2) այն ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելը, որոնց նկատմամբ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցված է՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան.

3) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) սույն հոդվածի 4-6-րդ կետերին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձում.

4) վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը

սույն Օրենսգրքին համապատասխան վրա է հասել այդ օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու ժամկետը.

5) ապրանքների բացթողման մերժումը՝ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորության առնչությամբ.

6) ապրանքների հայտարարագրի հետկանչը սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան և (կամ) ապրանքների բացթողման չեղյալ ճանաչելը սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորության առնչությամբ.

7) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

8) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

9) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ մաքսային ընթացակարգերից որևէ մեկով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները՝ մինչ սույն Օրենսգրքի 240-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետի լրանալը Միության մաքսային տարածքից չարտահանելու դեպքում:

Նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը համարվում է ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը:

4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները ձևակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ և 6-րդ կետերում նշված դեպքերի:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար կիրառվում են ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագրի՝ մաքսային մարմնի կողմից գրանցման օրվա դրությամբ գործող ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը:

5. Եթե սույն հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքը ի հայտ է եկել սույն Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված պայմանականորեն բաց թողնված ապրանքների համար, ապա ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարներին համարժեք չափով, որոնք չեն վճարվել ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողնելիս՝ կապված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման հետ: Նշված ապրանքների համար հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարման ենթակա չեն:

6. Եթե սույն հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքը ի հայտ է եկել «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակումից ստացված ապրանքների համար, ապա ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի այն գումարների չափով, որոնք ենթակա կլինեին վճարման, եթե «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և վերամշակման արդյունքների ելքի չափաքանակներին համապատասխան՝ վերամշակման արդյունքների պատրաստման համար օգտագործված օտարերկրյա ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար կիրառվում են «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ապրանքները ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ գործող ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց բացթողումը դրանք «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը ապրանքների բացթողման մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ:

Այն դեպքում, երբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը

հաշվարկելու համար պահանջվում է կատարել օտարերկրյա արժույթի վերահաշվարկ անդամ պետության արժույթի, ապա այդպիսի վերահաշվարկը կատարվում է սույն կետի երկրորդ պարբերությունում նշված օրվա դրությամբ գործող արժույթների փոխարժեքով:

7. Սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան վճարվող (բռնագանձվող) ներմուծման մաքսատուրքերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարներից ենթակա են վճարման տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների համար ընձեռվեր դրանց վճարման հետաձգման հնարավորություն՝ ապրանքները «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից մինչև ապրանքները «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը: Նշված տոկոսները հաշվարկվում և վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

«Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն Օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան կասեցնելու դեպքում սույն կետով նախատեսված տոկոսները մաքսային ընթացակարգի գործողության կասեցման ժամանակահատվածում չեն հաշվեգրվում և չեն վճարվում:

8. Հանձնաժողովի կողմից սահմանվող կարգով Միության մաքսային տարածքից օտարերկրյա ապրանքների փաստացի արտահանման դեպքում, որը հաստատվում է մեկնման վայրի մաքսային մարմնի կողմից, կամ այդ ապրանքները՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ձևակերպելու դեպքում, կամ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան՝ մաքսային մարմինների կողմից այնպիսի ապրանքների արգելապահման, կամ արգելանքի վերցնելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումից և (կամ) դրանց բռնագանձումից (ամբողջությամբ կամ մասնակի) հետո սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարները ենթակա են վերադարձման՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին և 76-րդ հոդվածին համապատասխան:

9. Հայտարարատուի՝ արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորություն չի առաջանում այն ապրանքների համար, որոնք ձևակերպվում են «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով:

Հոդված 242. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների վերադարձը (հաշվանցումը)

1. Սույն Օրենսգրքի 238-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ և 7-րդ ենթակետերում նշված, «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և Միության մաքսային տարածքից փաստացի արտահանված ապրանքների համար իրականացվում է «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգի կիրառման առնչությամբ վճարված (գանձված) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների վերադարձ (հաշվանցում), բացառությամբ այն դեպքի, երբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարները վճարվել (գանձվել) են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների տրամադրման նպատակների և պայմանների խախտմամբ գործողությունների կատարման հետ կապված և (կամ) այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների խախտմամբ այդպիսի արտոնությունների կիրառման հետ կապված:

2. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների վերադարձը (հաշվանցումը) սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան իրականացվում է սույն Օրենսգրքի 10-րդ գլխին և 76-րդ հոդվածին համապատասխան:

Գլուխ 33

«Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգ

Հոդված 243. «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի բովանդակությունն ու կիրառումը

1. «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգը օտարերկրյա ապրանքների և Միության ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան այդպիսի ապրանքներն անմաքս առևտրի խանութներում գտնվում և իրացվում են մանրածախ առևտրի ձևով՝ առանց օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման, այդպիսի մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և այդպիսի մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանների պահպանման դեպքում:

2. «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները իրացվում են՝

1) Միության մաքսային տարածքից մեկնող ֆիզիկական անձանց.

2) Միության մաքսային տարածք ժամանող ֆիզիկական անձանց.

3) մեկ անդամ պետությունից մեկ այլ անդամ պետություն մեկնող ֆիզիկական անձանց և մեկ անդամ պետությունից մեկ այլ անդամ պետություն մուտք գործող ֆիզիկական անձանց.

4) Միության մաքսային տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչություններին, հյուպատոսական հիմնարկներին, միջազգային կազմակերպություններին կից պետությունների ներկայացուցչություններին, միջազգային կազմակերպություններին կամ դրանց ներկայացուցչություններին, ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցչության դիվանագիտական անձնակազմի անդամներին, հյուպատոսական պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքների անդամներին, որոնք ապրում են նրանց հետ, միջազգային կազմակերպություններին կից պետությունների ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների անձնակազմին (աշխատակիցներին, պաշտոնատար անձանց).

5) այլ կազմակերպություններին կամ դրանց ներկայացուցչություններին և անձնակազմին, եթե այդպիսի իրացումը նախատեսվում է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում տեղակայված են այդ կազմակերպությունները կամ դրանց ներկայացուցչությունները:

3. «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները իրացվում են սույն հոդվածի 2-րդ կետի 1-3-րդ ենթակետերում նշված անձանց, Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում գործող անմաքս առևտրի խանութներում:

4. Ապրանքների իրացումը՝ սույն հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված անձանց թույլատրվում է Միության մաքսային սահմանով ապրանքների՝ օդային և ջրային տրանսպորտով տեղափոխման վայրերում գործող անմաքս առևտրի խանութներում, իսկ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում՝ նաև Միության մաքսային սահմանով ապրանքների՝ այլ տեսակի տրանսպորտով տեղափոխման վայրերում: Մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման այն վայրերի ցանկը, որտեղ թույլատրվում է ապրանքների իրացումը՝ սույն հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված անձանց, սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

5. Ապրանքների իրացումը՝ սույն հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց թույլատրվում է Միության մաքսային սահմանով ապրանքների՝ օդային տրանսպորտով տեղափոխման վայրերում գործող անմաքս առևտրի խանութներում:

6. «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները իրացվում են սույն հոդվածի 2-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված անձանց, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված անմաքս առևտրի խանութներում:

7. Միության՝ «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված, սույն հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված ֆիզիկական անձանց իրացված ապրանքները կորցնում են Միության ապրանքների կարգավիճակը:

Միության՝ «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված, սույն հոդվածի 2-րդ կետի 2-5-րդ ենթակետերում նշված անձանց իրացված ապրանքները պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը:

«Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված, սույն հոդվածի 2-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված անձանց իրացված օտարերկրյա ապրանքներն այդպիսի իրացումից հետո ձեռք են բերում Միության ապրանքների կարգավիճակ:

8. «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգը չի կիրառվում այն ապրանքների նկատմամբ, որոնց շրջանառությունն արգելված է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում գտնվում է անմաքս առևտրի խանութը:

Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու այլ ապրանքների ցանկ, որոնց նկատմամբ չի կիրառվում «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգը:

9. Առանց «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպման՝ անմաքս առևտրի խանութներում կարող են տեղադրվել և օգտագործվել այն ապրանքները, որոնք անհրաժեշտ են անմաքս առևտրի այդ խանութների գործառումն ապահովելու համար:

Հոդված 244. «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և այդպիսի մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանները

1. «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման պայման է արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

2. «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների հայտարարատու կարող է հանդես գալ միայն անմաքս առևտրի խանութի տիրապետող հանդիսացող անձը, որտեղ գտնվելու և իրացվելու են այդ ապրանքները:

3. Ապրանքներն «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգին համապատասխան օգտագործելու պայմաններն են՝

1) անմաքս առևտրի խանութներում ապրանքների գտնվելը.

2) անմաքս առևտրի խանութներում ապրանքների իրացումը՝ սույն օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետում նշված անձանց.

3) «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների առանձին

կատեգորիաների իրացման պայմանի պահպանումը՝ նախատեսված սույն Օրենսգրքի 245-րդ հոդվածով:

Հոդված 245. Անմաքս առևտրի խանութներում «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների առանձին կատեգորիաների իրացման պայմանը

Այնպիսի ապրանքները, ինչպիսիք են «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված ոգելից խմիչքները և գարեջուրը, ծխախոտը և ծխախոտային արտադրատեսակները, անմաքս առևտրի խանութներում սույն Օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված անձանց իրացվում են այն քանակական նորմերով, որոնց սահմաններում անձնական օգտագործման ապրանքները ներմուծվում են Միության մաքսային տարածք առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման:

Հոդված 246. «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողության ավարտը և դադարեցումը

1. «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է անմաքս առևտրի խանութներում՝ սույն Օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետում նշված անձանց՝ այդ ընթացակարգով ձևակերպված ապրանքների իրացմամբ՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց օտարերկրյա ապրանքների իրացման:

2. Անմաքս առևտրի խանութներում՝ սույն Օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց՝ «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների իրացման դեպքում «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով այդ օտարերկրյա ապրանքների ձևակերպմամբ:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքների համար ապրանքների հայտարարագիրը պետք է դրանց՝ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպման համար ներկայացվի անմաքս առևտրի խանութի տիրապետողի կողմից ոչ ուշ, քան այդ ապրանքների իրացման ամսվան հաջորդող ամսվա 10-րդ օրը:

Ապրանքների բացթողումը մերժելու դեպքում նշված ապրանքների՝ դրանք «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ապրանքների հայտարարագիրը պետք է ներկայացվի անմաքս առևտրի խանութի տիրապետողի կողմից ոչ ուշ, քան ապրանքների բացթողումը մերժելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների նկատմամբ «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունը կարող է ավարտվել՝

1) օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով ձևակերպմամբ՝ սույն Օրենսգրքով նախատեսված պայմաններով.

2) նավերի վրա կամ օդանավերի մեջ՝ որպես պաշարներ օգտագործելու նպատակով՝ Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների բացթողմամբ՝ սույն Օրենսգրքի 39-րդ գլխին համապատասխան:

5. «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքների նկատմամբ «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունը կարող է ավարտվել՝

1) ապրանքների՝ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպմամբ.

2) անմաքս առևտրի խանութից՝ Միության մաքսային տարածք ապրանքների արտահանմամբ՝ այդպիսի ապրանքների հայտարարատուի դիմումի հիման վրա:

6. Անմաքս առևտրի խանութի՝ նշված անմաքս առևտրի խանութի գործունեության դադարեցման օրվան հաջորդող օրվանից 3 ամսվա ընթացքում գործունեության դադարեցման դեպքում «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները ենթակա են օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառվող ընթացակարգերով ձևակերպման, իսկ Միության ապրանքները՝ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպման կամ անմաքս առևտրի խանութից՝ Միության մաքսային տարածք արտահանման:

Եթե այդպիսի գործողությունները նշված ժամկետում չեն կատարվել, ապա այդ ժամկետը լրանալուն պես «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարում է, իսկ ապրանքներն արգելանքի են վերցվում (արգելապահվում) մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

Հոդված 247. Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության առաջացումն ու դադարեցումն «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների համար, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. Հայտարարատուի՝ «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպվող օտարերկրյա ապրանքների

համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագիրը գրանցելու պահից:

2. Հայտարարատուի՝ «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) այդ ապրանքների իրացումը՝ սույն Օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերում նշված անձանց.

2) սույն Օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց իրացված այդ ապրանքների ձևակերպումը «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով.

3) այդ ապրանքների ձևակերպումը՝ սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով, այդ թվում՝ այդ ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպումը սույն հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո, և (կամ) նավերի վրա կամ օդանավերի մեջ որպես պաշարներ օգտագործելու նպատակով՝ Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների բացթողումը՝ սույն Օրենսգրքի 39-րդ գլխին համապատասխան.

4) այն ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելը, որոնց նկատմամբ «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվել է՝ սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան.

5) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձում.

6) վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան վրա է հասել այդ օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու ժամկետը.

7) «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողման մերժումը՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորության առնչությամբ.

8) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան ապրանքների հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ ապրանքների հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորության առնչությամբ.

9) ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետությաւն օրենսդրությանը համապատասխան.

10) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահել).

11) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

4. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) ապրանքներն «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգին համապատասխան օգտագործելու պայմանների խախտման դեպքում՝ ապրանքների օգտագործման սահմանված պայմանները խախտող գործողությունների կատարման օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ՝ ապրանքներն «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը.

2) օտարերկրյա ապրանքների կորստի դեպքում՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով դրանց ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով անվերադարձ կորստի՝ այդ ապրանքների կորստի օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ՝ ապրանքները «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը.

3) այն դեպքում, եթե սույն Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերությունում նշված ժամկետի ընթացքում սույն Օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց իրացված օտարերկրյա ապրանքների համար ապրանքների հայտարարագիր չի ներկայացվել՝ սույն Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ կետի

առաջին պարբերությունում նշված ժամկետի վերջին օրը.

4) այն դեպքում, եթե սույն Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված ժամկետի ընթացքում սույն Օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց իրացված օտարերկրյա ապրանքների համար ապրանքների հայտարարագիր չի ներկայացվել՝ սույն Օրենսգրքի 246-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված ժամկետի վերջին օրը:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները ձևակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար կիրառվում են ապրանքները «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագրի՝ մաքսային մարմնի կողմից գրանցման օրվա դրությամբ գործող ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը:

6. Սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան վճարվող (բռնագանձվող) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարներից ենթակա են վճարման տոկոսներ այնպես, ինչպես դա կարվեր, եթե նշված գումարների համար ընձեռվեր դրանց վճարման հետաձգման հնարավորություն՝ ապրանքներն «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից մինչև ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը լրանալու օրը: Նշված տոկոսները հաշվարկվում և վճարվում են սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան:

7. Սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով ապրանքների ձևակերպման և (կամ) նավերի վրա կամ օդանավերի մեջ՝ որպես պաշարներ օգտագործելու նպատակով՝ Միության մաքսային տարածքից դրանց արտահանման դեպքում սույն Օրենսգրքի 39-րդ գլխին համապատասխան՝ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը կատարելուց և (կամ) դրան բռնագանձումից (ամբողջությամբ կամ մասնակիորեն) հետո սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին և 76-րդ հոդվածին համապատասխան:

Գլուխ 34

«Ոչնչացում» մաքսային ընթացակարգը

Հոդված 248. «Ոչնչացում» մաքսային ընթացակարգի բովանդակությունն ու կիրառումը

1. «Ոչնչացում» մաքսային ընթացակարգն օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան այդպիսի ապրանքները ոչնչացվում են առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման՝ պահպանելով այդպիսի մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման պայմանները:

«Ապրանքների ոչնչացում» ասելով ենթադրվում է ապրանքներն այնպիսի վիճակի բերելը, որի դեպքում դրանք մասամբ կամ ամբողջությամբ ոչնչացվում են կամ կորցնում իրենց սպառողական և (կամ) այլ հատկություններ և չեն կարող տնտեսապես շահավետ եղանակով վերականգնվել իրենց սկզբնական վիճակին:

2. «Ոչնչացում» մաքսային ընթացակարգը չի կիրառվում հետևյալ ապրանքների նկատմամբ՝

1) մշակութային, հնագիտական, պատմական արժեքներ.

2) կենդանիներ և բույսեր, որոնք դասվում են անդամ պետությունների օրենսդրությանը և (կամ) միջազգային պայմանագրերին համապատասխան պահպանվող տեսակներին, դրանց մասերը և ածանցյալները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց ոչնչացումը պահանջվում է համաճարակի, կենդանահամաճարակի և կարանտինային օբյեկտների տարածումը կանխարգելելու նպատակով.

3) մաքսային մարմինների կողմից՝ որպես գրավի առարկա ընդունված ապրանքներ՝ մինչև գրավի հետ կապված հարաբերությունների դադարեցումը.

4) առգրավված ապրանքներ կամ ապրանքներ, որոնց վրա արգելանք է դրված, այդ թվում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան իրեղեն ապացույցներ հանդիսացող ապրանքներ:

3. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված ապրանքներից տարբեր այլ ապրանքների ցանկ, որոնց նկատմամբ չի կիրառվում «ոչնչացում» մաքսային ընթացակարգը:

4. «Ոչնչացում» մաքսային ընթացակարգը չի կիրառվում, եթե ապրանքների ոչնչացումը՝

1) կարող է վնաս հասցնել շրջակա միջավայրին կամ վտանգ է ներկայացնում մարդկանց կյանքին և առողջությանը.

2) իրականացվում է ապրանքների սպառման եղանակով՝ դրանց սովորական նշանակությանը համապատասխան.

3) կարող է ծախսեր առաջացնել անդամ պետությունների պետական մարմինների համար:

Հոդված 249. Ապրանքները «ոչնչացում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանները

Ապրանքները «ոչնչացում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ անդամ պետության լիազորված պետական մարմնի կողմից տրվող՝ ապրանքները ոչնչացնելու հնարավորության մասին եզրակացության առկայությունը, որտեղ նշվում է դրանց ոչնչացման եղանակը և վայրը.

արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 250. «Ոչնչացում» մաքսային ընթացակարգի կիրառման առանձնահատկությունները

1. «Ոչնչացում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների ոչնչացումը կատարվում է մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետներում՝ ելնելով այդ ապրանքների փաստացի ոչնչացման համար անհրաժեշտ ժամանակից, դրանց ոչնչացման եղանակից և վայրից, ինչպես նաև հաշվի առնելով անդամ պետության լիազորված պետական մարմնի եզրակացության մեջ նշված ժամկետները՝ դրանում այդպիսի ժամկետների առկայության դեպքում:

2. Ապրանքների ոչնչացումը կատարվում է «ոչնչացում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատուի հաշվին՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Ապրանքների ոչնչացման հետևանքով գոյացած թափոնները՝ բացառությամբ սույն հոդվածի 5-րդ կետում նշված թափոնների, ձեռք են բերում օտարերկրյա ապրանքների կարգավիճակ:

4. Ապրանքների ոչնչացման արդյունքում գոյացած թափոնները ենթակա են ձևակերպման օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառելի մաքսային ընթացակարգերով՝ սույն Օրենսգրքով նախատեսված պայմաններով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գոյացած թափոնները պիտանի չեն հետագա առևտրային նպատակներով դրանց օգտագործման համար կամ ենթակա են թաղման, վնասազերծման, ուտիլիզացման կամ այլ եղանակով ոչնչացման՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Ոչնչացման արդյունքում գոյացած թափոնները՝ հայտարարատուի կողմից ընտրված մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում դիտարկվում են որպես Միության մաքսային տարածք այդ վիճակում ներմուծված:

5. Ոչնչացման արդյունքում գոյացած թափոնները, որոնք ենթակա չեն մաքսային ընթացակարգերով ձևակերպման, ձեռք են բերում Միության ապրանքների կարգավիճակ և համարվում են մաքսային հսկողության տակ չգտնվող՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ գոյացած թափոնները՝ հետագա առևտրային նպատակներով դրանց օգտագործման համար ոչ պիտանի ճանաչելու օրվանից կամ մաքսային մարմնին՝ գոյացած թափոնները թաղելու, վնասազերծելու, ուտիլիզացնելու կամ այլ եղանակով ոչնչացնելու փաստը կամ այդպիսի գործողությունների կատարման համար դրանց փոխանցման փաստը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու օրվանից:

Գլուխ 35

«Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգ

Հոդված 251. «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգի բովանդակությունն ու կիրառումը

1. «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգն օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան՝ այդպիսի ապրանքներն անհատույց հանձնվում են անդամ պետության սեփականությանը (եկամտին)՝ առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման՝ պահպանելով այդպիսի մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման պայմանները:

2. «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձեռք են բերում Միության ապրանքի կարգավիճակ:

3. «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգը չի կիրառվում հետևյալ ապրանքների նկատմամբ՝

1) ապրանքներ, որոնց շրջանառությունն արգելված է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի սեփականությանը (եկամտին) պլանավորվում է փոխանցել այդպիսի ապրանքները.

2) պիտանիության (սպառման, իրացման) ժամկետը լրացած ապրանքներ:

4. «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգի կիրառման կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

Հոդված 252. Ապրանքները «հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանները

Ապրանքները «հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմաններն են՝

արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան.

նշված մաքսային ընթացակարգի կիրառման արդյունքում անդամ պետությունների պետական մարմինների այն ծախսերի բացակայությունը, որոնք չեն կարող փոխհատուցվել ապրանքների իրացումից ստացված միջոցների հաշվին, եթե այլ բան սահմանված չէ անդամ պետությունների օրենսդրությամբ.

անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ՝ սույն Օրենսգրքի 251-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

Գլուխ 36

Հատուկ մաքսային ընթացակարգ

Հոդված 253. Հատուկ մաքսային ընթացակարգի բովանդակությունն ու կիրառումը

1. Հատուկ մաքսային ընթացակարգն օտարերկրյա ապրանքների և Միության ապրանքների առանձին կատեգորիաների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգ է, որին համապատասխան, այդպիսի ապրանքները տեղափոխվում են Միության մաքսային սահմանով, գտնվում են և (կամ) օգտագործվում են Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս՝ առանց մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման՝ այդ մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման և (կամ) այդպիսի մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց օգտագործման պայմանների պահպանմամբ:

2. Հատուկ մաքսային ընթացակարգը կիրառվում է ապրանքների հետևյալ կատեգորիաների նկատմամբ՝

1) Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքներ, որոնք նախատեսված են Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպություններին կից անդամ պետությունների ներկայացուցչությունների գործունեությունն ապահովելու համար.

2) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներ, որոնք նախատեսված են Միության մաքսային տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների կողմից պաշտոնական օգտագործման համար՝ բացառությամբ պատվավոր հյուպատոսական պաշտոնատար անձանց գլխավորած հյուպատոսական հիմնարկների.

3) Միության մաքսային տարածք ներմուծվող պետական զինանշաններ, դրոշներ, նշաններ, կնիքներ և դրոշմակնիքներ, գրքեր, պաշտոնական տպագիր նյութեր, գրասենյակային կահույք, գրասենյակային սարքավորումներ և նմանատիպ այլ ապրանքներ, որոնք ստացվում են հյուպատոսական հիմնարկների կողմից՝ հավատարմագրող պետությունից կամ ըստ հավատարմագրող պետության պահանջի, որոնք նախատեսված են Միության մաքսային տարածքում տեղակայված՝ պատվավոր հյուպատոսական պաշտոնատար անձանց գլխավորած հյուպատոսական հիմնարկների կողմից պաշտոնական օգտագործման համար.

4) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներ, որոնք նախատեսված են Միության մաքսային տարածքում տեղակայված՝ միջազգային կազմակերպություններին կից պետությունների ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների կողմից պաշտոնական օգտագործման համար, որոնց համար նախատեսված է մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատում՝ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին և անդամ պետությունների միջև միջազգային պայմանագրերին համապատասխան.

5) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներ, որոնք նախատեսված են անդամ պետության տարածքում տեղակայված այլ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների կողմից օգտագործման համար, որոնց համար նախատեսված է մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատում՝ այդ անդամ պետության միջազգային պայմանագրերին համապատասխան: Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու այն ապրանքները, որոնք չեն դասվում ապրանքների այս կատեգորիային.

6) սպառազինություն, ռազմական տեխնիկա, զինամթերք և Միության ապրանքներ հանդիսացող այլ նյութական միջոցներ, որոնք տեղափոխվում են Միության մաքսային սահմանով՝ անդամ պետությունների՝ Միության մաքսային տարածքում և (կամ) դրա սահմաններից դուրս տեղաբաշխված զինվորական ստորաբաժանումների (հաստատությունների, կազմավորումների) մարտական պատրաստականությունը պահպանելու, դրված առաջադրանքները կատարելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով.

7) համատեղ (միջազգային) զորավարժություններին, մրցումներին, ինչպես նաև շքերթներին և այլ հանդիսավոր

միջոցառումներին՝ անդամ պետությունների և Միության անդամ չհանդիսացող պետությունների զինված ուժերի (լիազորված կազմակերպությունների այլ զորքերի և զինվորական կազմավորումների) մասնակցության նպատակով՝ Միության մաքսային սահմանով տեղափոխվող սպառազինություն, ռազմական տեխնիկա, զինամթերք և այլ նյութական միջոցներ.

8) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներ և տրանսպորտային միջոցներ, որոնք նախատեսված են տարերային աղետների և այլ արտակարգ իրավիճակների կանխարգելման ու դրանց հետևանքների վերացման համար, այդ թվում՝ անդամ պետությունների պետական մարմինների, դրանց կառուցվածքային ստորաբաժանումների կամ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան լիազորված կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած անձանց անվճար բաժանման համար, ինչպես նաև այն ապրանքները և տրանսպորտային միջոցները, որոնք անհրաժեշտ են վթարային-փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման ու վթարային-փրկարարական կազմավորումների, բժշկական ծառայությունների և այն կազմակերպությունների կենսագործունեության ապահովման համար, որոնց լիազորությունների մեջ մտնում է արտակարգ իրավիճակների բժշկասանիտարական հետևանքների վերացման, բժշկական օգնության կազմակերպման և ցուցաբերման ոլորտի հարցերի լուծումը՝ ներառյալ բժշկական տարհանումը՝ բացառությամբ ալկոհոլային արտադրանքի (բացի էթիլային սպիրտից), գարեջրի, ծխախոտային արտադրանքի, թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի, ինչպես նաև դրանցից պատրաստված արտադրատեսակների.

9) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներ, որոնք նախատեսված են անդամ պետությունների անձանց կողմից՝ Արկտիկայում և Անտարկտիկայում, անդամ պետությունների շահերից ելնելով, ոչ առևտրային հիմունքներով գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու, ինչպես նաև անդամ պետությունների՝ նշված աշխատանքներն անցկացնելու նպատակով կազմակերպված գիտահետազոտական արշավախմբերի գործունեության ապահովման համար.

10) Միության մաքսային սահմանով տեղափոխվող, դոպինգ հսկողության նպատակների համար նախատեսված ապրանքներ: Այս կատեգորիայի ապրանքներին դասվող ապրանքները սահմանվում են Հանձնաժողովի կողմից.

11) Միության մաքսային սահմանով տեղափոխվող օտարերկրյա ապրանքներ (դեղապատրաստուկներ (դեղամիջոցներ), հատուկ մարզական սնունդ, կենսաբանական ակտիվ սննդային հավելումներ), որոնք նախատեսված են ըստ սպորտաձևերի ազգային և հավաքական թիմերի թեկնածուների և այդպիսի թիմերի անդամների նկատմամբ, անդամ պետությունների շահերից ելնելով, ոչ առևտրային հիմունքներով բուժական և վերականգնողական միջոցառումների անցկացման, ինչպես նաև անդամ պետությունների՝ ընդգրկված նախարարությունների՝ բարձրագույն նվաճումների սպորտի ոլորտում գիտահետազոտական խմբերի գործունեության ապահովման համար.

12) Միության մաքսային սահմանով տեղափոխվող (տեղափոխված) սպորտային հանդերձանք և սարքավորումներ, բացառապես միջազգային մարզական պաշտոնական միջոցառումների կազմակերպման և անցկացման կամ դրանց նախապատրաստվելու համար մարզական միջոցառումների անցկացման դեպքում օգտագործման համար նախատեսված այլ ապրանքներ: Այս կատեգորիայի ապրանքներին դասվող ապրանքները սահմանվում են Հանձնաժողովի կողմից.

13) անդամ պետության սահմաններից դուրս գտնվող արհեստական կղզիների, կայանքների, կառույցների և այլ օբյեկտների շինարարության (ստեղծման, կառուցման), գործունեության (շահագործման, օգտագործման) ապահովման համար նախատեսված օտարերկրյա ապրանքները, որոնց նկատմամբ տվյալ անդամ պետությունն ունի բացառիկ իրավազորություն: Այս կատեգորիայի ապրանքներին չդասվող ապրանքները սահմանվում են Հանձնաժողովի կողմից.

14) տիեզերական տարածքի հետազոտման և օգտագործման, այդ թվում՝ տիեզերական ապարատները տիեզերք բաց թողնելու հետ կապված ծառայությունների մատուցման բնագավառում միջազգային համագործակցության շրջանակներում օգտագործման համար նախատեսված ապրանքներ: Այս կատեգորիայի ապրանքներին դասվող ապրանքները սահմանվում են Հանձնաժողովի կողմից.

15) Միության մաքսային սահմանով տեղափոխվող՝ միջազգային պաշտոնական ցուցահանդեսների կազմակերպման և անցկացման համար նախատեսված ապրանքներ, որոնց բնութագրերը սահմանվում են Հանձնաժողովի կողմից: Այս կատեգորիայի ապրանքներին չդասվող ապրանքները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

3. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու ապրանքների այլ կատեգորիաներ, որոնց նկատմամբ կիրառվում է հատուկ մաքսային ընթացակարգը՝ ներառյալ այս կատեգորիաներին դասվող կամ չդասվող ապրանքները:

Հոդված 254. Հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպման պայմանները և հատուկ մաքսային ընթացակարգի կիրառման կարգը՝ կախված ապրանքների այն կատեգորիաներից, որոնց նկատմամբ այն կիրառվում է

Կախված ապրանքների այն կատեգորիաներից, որոնց նկատմամբ կիրառվում է հատուկ մաքսային ընթացակարգը, Հանձնաժողովի կողմից և Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում անդամ պետությունների օրենսդրությամբ, սահմանվում են ապրանքները հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանները, այդ թվում՝ ոչ սակագնային կարգավորման, տեխնիկական կարգավորման, սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցների կիրառումը, և հատուկ մաքսային ընթացակարգի կիրառման կարգը

ներառյալ՝

Միության մաքսային տարածք ներմուծվող և (կամ) Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների կարգավիճակի սահմանումը.

ապրանքների օգտագործման ժամկետը և այլ պայմաններ՝ հատուկ մաքսային ընթացակարգին համապատասխան.

հատուկ մաքսային ընթացակարգի գործողության ավարտի կարգը.

հատուկ մաքսային ընթացակարգի գործողության կասեցման և վերսկսման դեպքերն ու կարգը.

մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացման և դադարեցման հանգամանքները, այն հանգամանքները, որոնց դեպքում մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման, և դրանց վճարման ժամկետը՝ հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների համար.

այն մաքսային ընթացակարգերը, որոնցով կարող են ձևակերպվել ապրանքները՝ հատուկ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու և կասեցնելու համար, ապրանքներն այդ մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման և վճարման առանձնահատկություններն ու դրանց վճարման ժամկետը:

ԲԱԺԻՆ V

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գլուխ 37

Անձնական օգտագործման ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելու կարգի և պայմանների առանձնահատկությունները

Հոդված 255. Սահմանումները

Սույն գլխի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

«մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ ներմուծում»՝ անձնական օգտագործման ապրանքների ներմուծում Միության մաքսային տարածք մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ՝ այն դեպքերում և այն պայմանների պահպանման պարագայում, որոնք սահմանվում են Հանձնաժողովի կողմից.

«չուղեկցվող ուղեբեռ»՝ ֆիզիկական անձին պատկանող անձնական օգտագործման ապրանքներ, որոնք Միության մաքսային սահմանով փաստացի տեղափոխման համար տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերով հաստատվող միջազգային փոխադրման (տրանսպորտային առաքման) պայմանագրով փոխանցվել կամ փոխանցվում են փոխադրողին՝ կապված Միության մաքսային տարածք այդ ֆիզիկական անձի մուտքի կամ Միության մաքսային տարածքից նրա մեկնման հետ.

«երկուղի համակարգ»՝ մաքսային հսկողության իրականացման պարզեցված համակարգ, որը թույլ է տալիս Միության մաքսային սահմանով ուղևորվող ֆիզիկական անձանց իրականացնել «կարմիր» և «կանաչ» ուղիների միջև ինքնուրույն ընտրություն.

«ուղեկցվող ուղեբեռ»՝ անձնական օգտագործման ապրանքներ՝ ներառյալ ձեռքի ծանրոցը, որոնք տեղափոխվում են Միության մաքսային սահմանով Միության մաքսային տարածք ֆիզիկական անձի փաստացի մուտքի կամ Միության մաքսային տարածքից նրա մեկնման ժամանակ.

«անձնական օգտագործման ապրանքներ, որոնք առաքվում են փոխադրողի կողմից»՝ անձնական օգտագործման ապրանքներ, որոնք տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերով հաստատվող միջազգային փոխադրման (տրանսպորտային առաքման) պայմանագրով փոխադրողի կողմից Միության մաքսային սահմանով տեղափոխվում են Միության մաքսային սահմանը չհատած ֆիզիկական անձի հասցեով կամ Միության մաքսային սահմանը չհատած ֆիզիկական անձի անունից:

Հոդված 256. Անձնական օգտագործման ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելու կարգի և պայմանների վերաբերյալ ընդհանուր դրույթները

1. Սույն գլխով սահմանվում են Միության մաքսային սահմանով անձնական օգտագործման ապրանքները տեղափոխելու, Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս դրանց գտնվելու և դրանք օգտագործելու կարգի ու պայմանների առանձնահատկությունները, ժամանակավոր պահպանման, մաքսային հայտարարագրման և անձնական օգտագործման ապրանքների բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգի առանձնահատկությունները, անձնական օգտագործման ապրանքների

մասով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև անձնական օգտագործման ապրանքների արժեքի սահմանման և այդ ապրանքների հետ կապված մաքսային վճարների կիրառման կարգը:

2. Սույն գլխի դրույթները կիրառվում են ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային սահմանով տեղափոխվող դրամական գործիքների և կանխիկ դրամական միջոցների նկատմամբ, ինչպես նաև Միության մաքսային սահմանով տեղափոխման վայրերում տեղակայված անմաքս առևտրի խանութներում՝ Միության մաքսային տարածք ժամանած ֆիզիկական անձանց կողմից ձեռք բերված ապրանքների նկատմամբ՝ սույն Օրենսգրքի 33-րդ գլխին համապատասխան:

3. Անձնական օգտագործման ապրանքները կարող են Միության մաքսային սահմանով տեղափոխվել հետևյալ եղանակներով՝

1) ֆիզիկական անձի՝ Միության մաքսային սահմանով անցնելու ժամանակ՝ ուղեկցվող կամ չուղեկցվող ուղեբեռով.

2) միջազգային փոստային առաքանիներով.

3) փոխադրողի կողմից՝ Միության մաքսային սահմանը չհատած ֆիզիկական անձի հասցեով կամ Միության մաքսային սահմանը չհատած ֆիզիկական անձի անունից:

4. Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելն իրականացվում է մաքսային մարմնի կողմից, ելնելով՝

1) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մասին ֆիզիկական անձի բանավոր կամ գրավոր դիմումից՝ ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ.

2) ապրանքների բնույթից և քանակից.

3) ֆիզիկական անձի՝ Միության մաքսային սահմանը հատելու և (կամ) այդ ֆիզիկական անձի կողմից կամ նրա հասցեով ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելու հաճախականությունից:

5. Սույն հոդվածի 4-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված չափանիշների քանակական բնութագրերը և (կամ) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելու լրացուցիչ չափանիշները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

6. Անկախ սույն հոդվածի 4-րդ կետում նշված չափանիշներից՝ անձնական օգտագործման ապրանքների շարքին չեն դասվում՝

1) այն ապրանքները, որոնց նկատմամբ ֆիզիկական անձանց կողմից իրականացվում է մաքսային հայտարարագրում՝ սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով ձևակերպելու համար՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքերում հայտագրված «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի.

2) Հանձնաժողովի կողմից սահմանվող ապրանքների կատեգորիաները:

7. Սույն գլխի դրույթները չեն կիրառվում ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային սահմանով տեղափոխվող այն ապրանքների նկատմամբ, որոնք, սույն գլխին համապատասխան, չեն դասվել անձնական օգտագործման ապրանքների շարքին: Այդ ապրանքները ենթակա են Միության մաքսային սահմանով տեղափոխման՝ սույն Օրենսգրքի մյուս գլուխներով սահմանված կարգով և պայմաններով:

8. Միության մաքսային սահմանով տեղափոխման վայրերում տեղակայված անմաքս առևտրի խանութներից՝ Միության մաքսային տարածք ժամանած ֆիզիկական անձանց կողմից ձեռք բերված ապրանքները սույն գլխի կիրառման նպատակներով դիտարկվում են որպես ֆիզիկական անձի՝ Միության մաքսային սահմանով ուղևորվելու ժամանակ ուղեկցվող ուղեբեռով Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքներ:

9. Արգելքները և սահմանափակումները սահմանող՝ Միության իրավունքի մաս կազմող ակտերի հիման վրա Հանձնաժողովը կազմում է անձնական օգտագործման այն ապրանքների համահավաք ցանկը, որոնց նկատմամբ Միության մաքսային սահմանով տեղափոխման ժամանակ պահպանվում են արգելքներն ու սահմանափակումները, և ապահովում է դրանց տեղադրումը «Ինտերնետ» ցանցում՝ Միության պաշտոնական կայքում:

Հոդված 257. Անձնական օգտագործման ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելու ժամանակ երկուղի համակարգի կիրառումը

1. Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում կարող է կիրառվել երկուղի համակարգը:

«Կանաչ» ուղին Միության մաքսային սահմանով տեղափոխման վայրերում հատուկ նշված վայր է, որը նախատեսված է Միության մաքսային սահմանով ուղեկցվող ուղեբեռում անձնական օգտագործման այնպիսի ապրանքների տեղափոխման համար, որոնք ենթակա չեն մաքսային հայտարարագրման:

«Կարմիր» ուղին Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում հատուկ նշված վայր է, որը նախատեսված է Միության մաքսային սահմանով ուղեկցվող ուղեբեռում անձնական օգտագործման այնպիսի ապրանքներ տեղափոխելու համար, որոնք ենթակա են մաքսային հայտարարագրման, ինչպես նաև այնպիսի ապրանքներ, որոնց նկատմամբ իրականացվում է մաքսային հայտարարագրում՝ ֆիզիկական անձի ցանկությամբ:

2. Երկուղի համակարգի կիրառմամբ նախատեսվում է Միության մաքսային սահմանով ուղևորվող ֆիզիկական

անձի կողմից անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրի հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու (չիրականացնելու) համար համապատասխան ուղու («Կանաչ» կամ «Կարմիր») ինքնուրույն ընտրության կատարում:

3. «Կանաչ» ուղու մուտքի (ելքի) գիծը ֆիզիկական անձի կողմից հատելը մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքների բացակայության մասին ֆիզիկական անձի կողմից արված հայտարարություն է:

4. Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում երկուղի համակարգը հարմարություններով ապահովելուն ներկայացվող պահանջները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

5. Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման այն վայրերի ցանկը, որտեղ կիրառվում է երկուղի համակարգը, ինչպես նաև այդպիսի ցանկ կազմելու կարգը սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

6. Երկուղի համակարգը կարող է չկիրառվել Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում կազմակերպված՝ պաշտոնատար անձանց և պատվիրակությունների սրահներում:

7. «Կանաչ» ուղում մաքսային հսկողության առանձին ձևերը չկիրառելը չի նշանակում, որ ֆիզիկական անձն ազատվում է մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերին ու ակտերին և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը հետևելու պարտավորությունից:

8. Հաշվի առնելով Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում առաջացած օպերատիվ իրավիճակը, բացառիկ դեպքերում՝ մաքսային մարմնի որոշմամբ երկուղի համակարգը կարող է ժամանակավորապես չկիրառվել:

9. Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում երկուղի համակարգը չկիրառելը ֆիզիկական անձի համար չի առաջացնում սույն գլխին համապատասխան մաքսային հայտարարագրման ոչ ենթակա ապրանքների մաքսային հայտարարագրում իրականացնելու պարտավորություն, ինչպես նաև չի ազատում ֆիզիկական անձին մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքները հայտարարագրելու անհրաժեշտությունից:

Հոդված 258. Անձնական օգտագործման ապրանքների մասով իրականացվող մաքսային գործառնությունները

1. Անձնական օգտագործման ապրանքների մասով մաքսային գործառնությունները, կախված Միության մաքսային սահմանով դրանք տեղափոխելու եղանակներից, իրականացվում են Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում կամ այն անդամ պետության մաքսային մարմնում, որի տարածքում մշտական կամ ժամանակավորապես բնակվում կամ ժամանակավոր գտնվում է այն ֆիզիկական անձը, որը կարող է հանդես գալ որպես այդ ապրանքների հայտարարատու:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան սահմանված դեպքերում անձնական օգտագործման ապրանքները երկաթուղային տրանսպորտով փոխադրելիս՝ դրանց հետ կապված մաքսային գործառնությունները կարող են իրականացվել ուղևորատար գնացքների ընթացուղում:

2. Ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային սահմանով անձնական օգտագործման ապրանքները տրանսպորտային միջոցներով, բացառությամբ նավերի և օդանավերի, տեղափոխելու դեպքում մաքսային մարմիններն այդ անձանց հնարավորություն են տալիս իրականացնելու մաքսային գործառնություններ՝ առանց այդ տրանսպորտային միջոցներից հեռանալու, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերն ու ակտերը պահպանելու համար:

3. Միության մաքսային սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքները Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս դրանց գտնվելու և օգտագործվելու համար պետք է բաց թողնվեն մաքսային մարմինների կողմից, բացառությամբ այն դեպքերի, երբ անձնական օգտագործման այդ ապրանքները համարվում են սույն Օրենսգրքի 262-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված իրադարձությունների վրա հասնելու ժամանակ բաց թողնված՝ սույն գլխով նախատեսված կարգով և պայմաններով, առանց այդ ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելու՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի:

4. Մաքսային հայտարարագրման ենթակա անձնական օգտագործման այն ապրանքների մասով, որոնք Միության մաքսային սահմանով տեղափոխվում են ուղեկցվող կամ չուղեկցվող ուղեբեռում կամ առաքվում են փոխադրողի կողմից, Միության մաքսային տարածք դրանց ներմուծումից հետո կամ այն ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային տարածքից արտահանման համար, որոնք, սույն Օրենսգրքին համապատասխան կարող են հանդես գալ որպես անձնական օգտագործման այդ ապրանքների հայտարարատուներ, պետք է իրականացվեն ազատ շրջանառության համար բացթողման, ժամանակավոր ներմուծման, արտահանման, ժամանակավոր արտահանման կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման համար դրանց մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնություններ, եթե անձնական օգտագործման ապրանքները կարող են ձևակերպվել «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ սույն Օրենսգրքի 263-րդ հոդվածին համապատասխան:

«Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված անձնական օգտագործման ապրանքների մասով՝ ազատ շրջանառության համար բացթողման կամ ժամանակավոր ներմուծման համար մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնությունները պետք է իրականացվեն այն ֆիզիկական անձանց

կողմից, որոնք, սույն Օրենսգրքին համապատասխան, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտից հետո կարող են հանդես գալ որպես անձնական օգտագործման այդ ապրանքների հայտարարատուներ:

Մինչև մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնություններն իրականացնելը կամ մաքսային մարմնի կողմից անձնական օգտագործման ապրանքները բաց թողնելը մերժելու դեպքում նշված անձնական օգտագործման ապրանքները կարող են հանձնվել ժամանակավոր պահպանման, իսկ անձնական օգտագործման այն ապրանքները, որոնք գտնվում են Միության մաքսային սահմանով տեղափոխման վայրերում, նույնպես կարող են արտահանվել Միության մաքսային տարածքից, եթե այդ ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծումից հետո դուրս չեն եկել ժամանման վայրից կամ մեկնման վայրից հետ են ներմուծվել Միության մաքսային տարածք:

Սույն կետի առաջին և երկրորդ պարբերություններում նշված մաքսային գործառնությունները նաև իրականացվում են այլ անձանց կողմից՝ սույն Օրենսգրքի 260-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում:

5. Բացթողման պայմանները չպահպանելու և անձնական օգտագործման ապրանքների համար սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված մաքսային գործառնությունները չիրականացնելու պատճառով մաքսային մարմնի կողմից անձնական օգտագործման ապրանքները բաց թողնելու անհնարինության դեպքում այդ ապրանքներն արգելապահվում են մաքսային մարմնի կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

6. Միության մաքսային սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների կամ Միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծված (սույն գլխում այսուհետ՝ ժամանակավոր ներմուծում) անձնական օգտագործման ապրանքների մասով մաքսային գործառնությունների իրականացման, այդ ապրանքների բացթողման և դրանք մաքսային հսկողության տակ չգտնվող ճանաչելու մասին փաստն արտացոլելու կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից և անդամ պետությունների օրենսդրությամբ՝ Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում կամ Հանձնաժողովի կողմից չկարգավորվող մասով:

Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների մասով մաքսային գործառնություններն իրականացվում են՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 40-րդ գլխով սահմանված առանձնահատկությունները, իսկ սույն Օրենսգրքի 40-րդ գլխով չկարգավորվող մասով՝ հաշվի առնելով անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված առանձնահատկությունները:

7. Այն ապրանքների նկատմամբ մաքսային հսկողություն իրականացնելու ժամանակ, որոնց տեղափոխումը Միության մաքսային սահմանով իրականացվում է ֆիզիկական անձի կողմից առանց մաքսային հայտարարագրման, մաքսային մարմնի պաշտոնատար անձն իրավունք ունի պահանջելու, որ ֆիզիկական անձը ներկայացնի այդպիսի ապրանքները, ինչպես նաև ֆիզիկական անձի կողմից ներկայացված, այդ թվում՝ նրա բանավոր հարցման արդյունքներով ստացված, տեղեկությունների հավաստիությունը հաստատող՝ նրա մոտ առկա փաստաթղթերը:

8. Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման այն վայրերում, որտեղ չի կիրառվում երկուղի համակարգը, մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման վայրերը երթևեկության գոտիներում նշվում են մաքսային գործառնությունների մեկնարկի և ավարտի գծերով:

Առանց ուղևորային մաքսային հայտարարագիր ներկայացնելու մաքսային գործառնությունների ելքի գիծը ֆիզիկական անձի կողմից հատելը համարվում է մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքների բացակայության մասին ֆիզիկական անձի կողմից արված հայտարարություն, եթե այլ բան սահմանված չէ անդամ պետությունների օրենսդրությամբ:

Այն դեպքում, երբ ֆիզիկական անձն ուղևորվում է տրանսպորտային միջոցով, և եթե անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան հնարավորություն է տրվում տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների մասով իրականացնելու մաքսային գործառնություններ՝ առանց տրանսպորտային միջոցներից հեռանալու, մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքների բացակայության մասին ֆիզիկական անձի կողմից արված հայտարարություն է համարվում պաշտոնատար անձին բանավոր հարցման արդյունքներով ուղևորային մաքսային հայտարարագիր չներկայացնելը:

9. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու անձնական օգտագործման այն ապրանքների մասով մաքսային գործառնություններ կատարելու և մաքսային վերահսկողություն իրականացնելու առանձնահատկությունները, որոնք ավիափոխադրողի կողմից ընդունվել են փոխադրման ուղեկցվող ուղեթեռով, որն ուղարկվում է Միության մաքսային տարածքից Միության մաքսային տարածքից դուրս գտնվող նշանակման վայր՝ մեկնման վայրում միջանկյալ վայրէջքի կատարմամբ, կամ ուղարկվում է Միության մաքսային տարածքից դուրս գտնվող վայրից Միության մաքսային տարածքում գտնվող նշանակման վայր՝ ժամանման վայրում միջանկյալ վայրէջքի կատարմամբ, այդպիսի ապրանքների մասով մաքսային գործառնություններ իրականացնելու համար մեկնման վայրերի (ժամանման վայրերի) սարքավորումներին և տեխնիկական հագեցվածությանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև մաքսային մարմինների, ավիափոխադրողների և ֆիզիկական անձանց միջև փոխգործակցության պայմանները, որոնք անհրաժեշտ են այդպիսի առանձնահատկություններով մաքսային գործառնություններ կատարելու և մաքսային հսկողություն իրականացնելու համար:

Հոդված 259. Անձնական օգտագործման ապրանքների ժամանակավոր պահպանումը

1. Անձնական օգտագործման ապրանքների ժամանակավոր պահպանումն իրականացվում է սույն Օրենսգրքի 16-րդ գլխով սահմանված կարգով և պայմաններով՝ հաշվի առնելով սույն հոդվածը:

2. Անդամ պետությունում մշտական բնակություն հաստատելու, այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան փախստականի, հարկադիր տեղահանված անձի կարգավիճակ ստանալու մտադրություն ունեցող օտարերկրյա ֆիզիկական անձի անձնական օգտագործման ապրանքների ժամանակավոր պահպանումը կարող է իրականացվել այդ անձի մշտական կամ ժամանակավոր բնակության (գտնվելու) վայրում և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված այլ վայրերում:

3. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել սույն հոդվածի 2-րդ կետում նշված օտարերկրյա ֆիզիկական անձի՝ անձնական օգտագործման ապրանքները դրանց ժամանակավոր պահպանման վայրում տեղավորելը հաստատելու պարտավորությունը, ինչպես նաև այդ հաստատման կարգը:

4. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված օտարերկրյա ֆիզիկական անձի անձնական օգտագործման ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար այդ անձը մաքսային մարմին է ներկայացնում ազատ ձևով շարադրված դիմում՝ նշելով Հանձնաժողովի կողմից սահմանվող տեղեկությունները, կից ներկայացնելով ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթեր, ինչպես նաև օտարերկրյա ֆիզիկական անձի՝ անդամ պետությունում մշտական բնակություն հաստատելու, այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան փախստականի, հարկադիր տեղահանված անձի կարգավիճակ ստանալու մտադրությունը հաստատող փաստաթղթեր:

Հանձնաժողովը կազմում է օտարերկրյա ֆիզիկական անձի՝ անդամ պետությունում մշտական բնակություն հաստատելու, այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան փախստականի, հարկադիր տեղահանված անձի կարգավիճակ ստանալու մտադրությունը հաստատող փաստաթղթերի ցանկը և ապահովում է դրա տեղադրումը «Ինտերնետ» ցանցում՝ Միության պաշտոնական կայքում:

5. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված ֆիզիկական անձի անձնական օգտագործման ապրանքները ժամանակավոր պահպանման են հանձնվում այն ժամկետով, որը հաշվարկվում է այդ ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվան հաջորդող օրվանից՝

1) մինչև սույն հոդվածի 6-րդ կետում նշված ժամկետը լրանալու օրը, եթե մինչ այդ ժամկետը լրանալը օտարերկրյա ֆիզիկական անձը սույն հոդվածի 4-րդ կետի առաջին պարբերության մեջ նշված դիմումը գրանցած մաքսային մարմնին չի ծանուցել այն գործողությունների իրականացման մասին, որոնք ուղղված են այդ անձի՝ անդամ պետությունում մշտական բնակության տեղափոխված ճանաչվելու փաստը հաստատող փաստաթուղթը, կամ այդ անձի՝ տվյալ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, փախստականի, հարկադիր տեղահանված անձի կարգավիճակ ստանալը հաստատող փաստաթուղթն ստանալուն.

2) մինչև ֆիզիկական անձի՝ անդամ պետությունում մշտական բնակության տեղափոխված ճանաչվելու փաստը հաստատող փաստաթուղթը, կամ այդպիսի անձի՝ տվյալ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան փախստականի, հարկադիր տեղահանված անձի կարգավիճակ ստանալը հաստատող փաստաթուղթն ստանալու օրվան հաջորդող օրվանից 5 աշխատանքային օրը լրանալը.

3) մինչև սույն կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթղթերի տրամադրումը մերժելու օրվան հաջորդող օրվանից 10 աշխատանքային օրը լրանալը:

6. Մինչև սույն հոդվածի 4-րդ կետի առաջին պարբերությունում նշված դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվան հաջորդող օրվանից 2 ամիսը լրանալը սույն հոդվածի 2-րդ կետում նշված օտարերկրյա ֆիզիկական անձը պարտավոր է, անդամ պետության լիազորված մարմնի կողմից տրված փաստաթուղթը ներկայացնելու միջոցով, սույն հոդվածի 4-րդ կետի առաջին պարբերության մեջ նշված դիմումը գրանցած մաքսային մարմնին ծանուցելու այն գործողությունների իրականացման մասին, որոնք ուղղված են այդ անձի՝ անդամ պետությունում մշտական բնակության տեղափոխված ճանաչվելու փաստը հաստատող փաստաթուղթը, կամ այդ անձի՝ տվյալ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան փախստականի, հարկադիր տեղահանված անձի կարգավիճակ ստանալը հաստատող փաստաթուղթն ստանալուն:

7. Մինչև անձնական օգտագործման ապրանքների ժամանակավոր պահպանման ժամկետը լրանալը սույն հոդածի 2-րդ կետում նշված օտարերկրյա ֆիզիկական անձը պարտավոր է իրականացնելու ժամանակավոր պահպանման տակ գտնվող անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրումը՝ դրանք ազատ շրջանառության մեջ բաց թողնելու, Միության մաքսային տարածքից արտահանելու կամ սույն Օրենսգրքով սահմանված «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար: Անձնական օգտագործման այն ապրանքները, որոնց նկատմամբ չի իրականացվել մաքսային հայտարարագրում, ժամանակավոր պահպանության ժամկետը լրանալուց հետո արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

8. Մինչև ժամանակավոր պահպանման տակ գտնվող անձնական օգտագործման ապրանքներն ազատ շրջանառության մեջ բաց թողնելը՝ անձնական օգտագործման այդ ապրանքները պետք է գտնվեն սույն հոդվածի 2-րդ կետում նշված օտարերկրյա ֆիզիկական անձի փաստացի տիրապետման տակ և չեն կարող փոխանցվել այլ անձանց տիրապետմանը, օգտագործմանը և (կամ) տնօրինմանը՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությանը համապատասխան դրանց փոխանցմանը:

Թույլատրվում է ժամանակավոր պահպանման տակ գտնվող անձնական օգտագործման ապրանքներն առանց

մաքսային մարմնի թույլտվության հանձնել վերանորոգման, տեխնիկական սպասարկման և անձնական օգտագործման ապրանքները բնականոն վիճակում պահպանելու նպատակով այլ անհրաժեշտ գործողություններ իրականացնելու համար:

9. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված օտարերկրյա ֆիզիկական անձն իրավունք ունի օգտագործելու ժամանակավոր պահպանման տակ գտնվող, ինչպես նաև դրանց ժամանակավոր պահպանման վայրերի սահմաններից դուրս գտնվող անձնական օգտագործման ապրանքները՝ հաշվի առնելով սույն կետի երկրորդ պարբերությունը:

Ժամանակավոր պահպանման տակ գտնվող՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ հանդիսացող ավտոտրանսպորտային ու մոտոտրանսպորտային միջոցների և (կամ) ավտոտրանսպորտային ու մոտոտրանսպորտային միջոցների կցանքների օգտագործումը թույլատրվում է մաքսային մարմնի գրավոր թույլտվությամբ՝ սույն Օրենսգրքի 271-րդ հոդվածին համապատասխան մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու պայմանով:

Հոդված 260. Անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրումը

1. Մաքսային հայտարարագրման ենթակա են՝

1) չուղեկցվող ուղեբեռում Միության մաքսային սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքները՝ բացառությամբ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների, կամ փոխադրողի կողմից առաքվող անձնական օգտագործման ապրանքները.

2) ցանկացած եղանակով Միության մաքսային սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման այն ապրանքները, բացառությամբ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների, որոնց հետ կապված, պահպանվում են արգելքներն ու սահմանափակումները՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան, և պահանջվում է ներկայացնել այդ արգելքների և սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ.

3) անձնական օգտագործման ապրանքները, բացառությամբ ուղեկցվող ուղեբեռում Միության մաքսային սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցների, որոնց հետ կապված մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման.

4) անձնական օգտագործման այն ապրանքները, բացառությամբ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների, որոնք ներմուծվում են ուղեկցվող ուղեբեռում՝ առանց մաքսատուրքերը, հարկերը վճարելու.

5) ցանկացած եղանակով Միության մաքսային սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները՝ բացառությամբ անդամ պետություններում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների.

6) Միության մաքսային տարածքում գտնվող ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները՝ սույն Օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ, 7-րդ և 12-րդ կետերով նախատեսված դեպքերում.

7) կանխիկ դրամական միջոցները և (կամ) ճանապարհային չեկերը, եթե Միության մաքսային տարածք միանվագ ներմուծման կամ Միության մաքսային տարածքից միանվագ արտահանման ժամանակ այդ կանխիկ դրամական միջոցների և (կամ) ճանապարհային չեկերի ընդհանուր գումարը գերազանցում է ուղևորային մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին ներկայացնելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով 10 հազար ԱՄՆ դոլարին համարժեք գումարը.

8) դրամական գործիքները՝ բացառությամբ ճանապարհային չեկերի.

9) մշակութային արժեքները, որոնց մասով պահպանման են ենթակա արգելքներ և սահմանափակումներ՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

10) միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքները.

11) սույն Օրենսգրքի 265-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ պարբերության մեջ նշված՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների մասերը.

12) սույն հոդվածի 18-րդ կետում նշված ապրանքները:

2. Մաքսային հայտարարագրման ենթակա չեն սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ Միության մաքսային տարածքով օդային տրանսպորտով ուղևորվող ֆիզիկական անձի ուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքները, եթե այդպիսի անձը, Միության մաքսային տարածք ժամանելուց հետո, առանց միջազգային օդանավակայանի տարանցիկ գոտուց դուրս գալու հեռանում է Միության մաքսային տարածքից:

3. Անձնական օգտագործման, այդ թվում՝ սույն Օրենսգրքի 263-րդ հոդվածին համապատասխան «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ:

Ուղևորային մաքսային հայտարարագրում նշման ենթակա տեղեկությունները սահմանվում են Հանձնաժողովի կողմից՝ այդ մաքսային հայտարարագրի լրացման կարգը սահմանելու ժամանակ՝ հաշվի առնելով սույն հոդվածի 9-րդ կետը:

Ուղևորային մաքսային հայտարարագիրը լրացվում է ռուսերենով կամ անգլերենով, կամ այն անդամ պետության պետական լեզվով, որի մաքսային մարմին է ներկայացվել այդ ուղևորային մաքսային հայտարարագիրը, իսկ մաքսային

մարմնի թույլտվությամբ՝ այլ օտար լեզվով, որին տիրապետում են այն մաքսային մարմնի պաշտոնատար անձինք, ուր պետք է ներկայացվի այդ մաքսային հայտարարագիրը:

Այն դեպքում, երբ որպես ուղևորային մաքսային հայտարարագիր օգտագործվում են Համաշխարհային փոստային Միության ակտերով նախատեսված և միջազգային փոստային առաքանիներին ուղեկցող փաստաթղթերը, այդ փաստաթղթերը լրացվում են այդ ակտերով սահմանված լեզուներով:

Որպես ուղևորային մաքսային հայտարարագիր կարող են օգտագործվել այն փաստաթղթերը, որոնք պարունակում են անձնական օգտագործման ապրանքների բացթողման համար անհրաժեշտ տեղեկություններ՝ սույն Օրենսգրքով, Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով և (կամ) Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում և կարգով:

4. Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 286-րդ հոդվածը:

5. Կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն հոդվածի 16-րդ և 17-րդ կետերը:

6. Ուղեկցվող ուղեբեռում՝ Միության մաքսային սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է ֆիզիկական անձանց կողմից՝ Միության մաքսային սահմանով նրանց ուղևորվելու ժամանակ՝ այդ ապրանքները մաքսային մարմին ներկայացնելու հետ միաժամանակ:

Ուղեկցվող ուղեբեռում՝ Միության մաքսային սահմանով՝ օդային տրանսպորտով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է ֆիզիկական անձանց կողմից այն անդամ պետության տարածքում, որտեղ տեղակայված է այն միջազգային օդանավակայանը, որտեղ այդ անձանց հանձնվել է ուղեկցվող ուղեբեռը, և այդ անձինք հեռանում են այդ միջազգային օդանավակայանի մաքսային հսկողության գոտուց:

7. Չուղեկցվող ուղեբեռում՝ Միության մաքսային սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է ֆիզիկական անձանց կողմից այն անդամ պետությունում, որտեղ մշտապես կամ ժամանակավորապես բնակվում կամ ժամանակավոր գտնվում են այդ ֆիզիկական անձինք:

8. Փոխադրողի կողմից առաքվող կամ միջազգային փոստային առաքանիներով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է այն անդամ պետությունում, որտեղ մշտապես կամ ժամանակավորապես բնակվում կամ ժամանակավորապես գտնվում է այն ֆիզիկական անձը, որն անձնական օգտագործման այդ ապրանքներն ուղարկողը կամ ստացողն է:

9. Անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ, բացառությամբ միջազգային փոստային առաքանիներով տեղափոխվող կամ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող անձնական օգտագործման ապրանքների, հայտագրվում է Միության մաքսային տարածք դրանք ներմուծելու և (կամ) Միության մաքսային տարածքում դրանց գտնվելու կամ Միության մաքսային տարածքից դրանք արտահանելու հետևյալ նպատակներից մեկը՝

1) ազատ շրջանառություն.

2) ժամանակավոր ներմուծում:

Ժամանակավոր ներմուծումը կարող է հայտագրվել միայն սույն Օրենսգրքի 264-րդ հոդվածում նշված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների համար.

3) արտահանում

4) ժամանակավոր արտահանում

10. Ցանկության դեպքում՝ ֆիզիկական անձն իրավունք ունի հայտարարագրելու անձնական օգտագործման ապրանքները, որոնք ենթակա չեն մաքսային հայտարարագրման:

Ֆիզիկական անձի կողմից Միության մաքսային սահմանով ուղեկցվող կամ չուղեկցվող ուղեբեռում անձնական օգտագործման ապրանքներ տեղափոխելու դեպքում այդպիսի անձն իրավունք ունի իրականացնելու ուղեկցվող ուղեբեռում ներմուծվող՝ անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրում՝ արժեքային, քաշային և (կամ) քանակական այնպիսի նորմերի հաշվառման նպատակներով, որոնց սահմաններում անձնական օգտագործման ապրանքները ներմուծվում են Միության մաքսային տարածք առանց մաքսատուրքերը, հարկերը վճարելու:

11. Անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է հայտարարատուի կամ մաքսային ներկայացուցչի կողմից, իսկ Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում՝ հայտարարատուի անունից կամ հանձնարարականով գործող այլ անձանց կողմից:

12. Միության մաքսային սահմանով ուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների համար, այդ թվում՝ ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ուղևորային մաքսային հայտարարագիրը ներկայացվում է Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրում տեղակայված մաքսային մարմին:

Եթե Միության մաքսային սահմանով ուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքները ձևակերպված են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով, ապա այդ ապրանքներն ազատ շրջանառության մեջ բաց թողնելու կամ ժամանակավոր ներմուծելու համար ուղևորային մաքսային հայտարարագիրը ներկայացվում է առաքման վայրի մաքսային մարմին՝ բացառությամբ սույն կետի երրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի:

Սույն Օրենսգրքի 259-րդ հոդվածին համապատասխան ժամանակավոր պահպանման հանձնված անձնական օգտագործման ապրանքների համար, այդ ապրանքներն ազատ շրջանառության մեջ բաց թողնելու համար, ուղևորային

մաքսային հայտարարագիրը ներկայացվում է սույն Օրենսգրքի 259-րդ հոդվածի 4-րդ կետի առաջին պարբերությունում նշված դիմումը գրանցող մաքսային մարմին:

Միության մաքսային սահմանով չուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող կամ փոխադրողի կողմից առաքվող անձնական օգտագործման ապրանքների համար ուղևորային մաքսային հայտարարագիրն անդամ պետությունների Օրենսգրքին համապատասխան, ներկայացվում է ուղևորային մաքսային հայտարարագիրը գրանցելու համար իրավասու մաքսային մարմին:

13. Այն դեպքում, երբ անձնական օգտագործման ապրանքները հանձնված են ժամանակավոր պահպանման, ուղևորային մաքսային հայտարարագիրը ներկայացվում է սույն Օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան:

14. Որպես անձնական օգտագործման ապրանքների հայտարարատուներ կարող են հանդես գալ 16 տարին լրացած՝ անդամ պետությունների ֆիզիկական անձինք կամ օտարերկրյա ֆիզիկական անձինք՝

1) որոնք Միության մաքսային սահմանը հատելու պահին Միության մաքսային սահմանով ուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ ունեն տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունք.

2) որոնք Միության մաքսային սահմանով չուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքները, այդ թվում՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները փոխանցել են (փոխանցում են) փոխադրողին.

3) որոնք անձնական օգտագործման ապրանքներն ուղարկողներն են, իսկ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող դեպքերում՝ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքներն ստացողներն են.

4) որոնց հասցեով կամ որոնց անունից փոխադրողի կողմից առաքվում են անձնական օգտագործման ապրանքները, այդ թվում՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները.

5) որոնք սեփականության իրավունք ունեն անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցի նկատմամբ, որի մաքսային հայտարարագրումն իրականացվում է ազատ շրջանառության մեջ բաց թողնելու համար.

6) որոնք Միության մաքսային սահմանով ուղևորվում են անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցով, որը տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքով պատկանում է իրենց, եթե այլ բան սահմանված չէ սույն գլխով.

7) որոնք դատարանի որոշմամբ կամ ժառանգության իրավունքով ձեռք են բերել Միության մաքսային տարածքում մաքսային հսկողության տակ գտնվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը տիրապետելու, օգտագործելու և (կամ) տնօրինելու իրավունք.

8) որոնք Միության մաքսային տարածքում մաքսային հսկողության տակ գտնվող, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի նկատմամբ ունեն տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունք.

9) որոնք իրականացնում են ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցի արտահանումը Միության մաքսային տարածքից, որն իրենց փոխանցվել է սույն Օրենսգրքի 264-րդ հոդվածի 8-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերին և 9-րդ կետին համապատասխան.

10) որոնք ուղեկցում են 16 տարին չլրացած ֆիզիկական անձանց (այդ անձանց ծնողներից մեկը, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, ուղեկցող այլ անձ կամ, ուղեկցող անձանց բացակայության դեպքում, փոխադրողի ներկայացուցիչը, իսկ առանց ծնողների, որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների ուղեկցության անչափահաս տարիքի անձանց խմբի կազմակերպված մեկնման (ժամանման) դեպքում՝ այլ անձինք՝ խմբի ղեկավարը կամ փոխադրողի ներկայացուցիչը)՝ 16 տարին չլրացած ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների համար.

11) որոնք նշված են սույն հոդվածի 18-րդ կետում:

15. Միջազգային փոստային առաքանիներով անձնական օգտագործման ապրանքները՝ Միության մաքսային տարածքում գտնվող ֆիզիկական անձի հասցեով առաքելու դեպքում որպես այդ ապրանքների հայտարարատուներ կարող են հանդես գալ այդ ապրանքներն ուղարկող իրավաբանական անձինք:

16. Դրամական գործիքների, բացառությամբ ճանապարհային չեկերի, մաքսային հայտարարագրման ժամանակ ուղևորային մաքսային հայտարարագրում նշվում է անվանական արժեքը կամ համապատասխան գումարը՝ անդամ պետության արժույթով կամ արտարժույթով, որի ստացման իրավունքը հաստատվում է դրամական գործիքով: Այն դեպքում, երբ անվանական արժեքը բացակայում է, և անհնար է որոշել գումարն անդամ պետության արժույթով կամ արտարժույթով, որի ստացման իրավունքը հաստատվում է դրամական գործիքով, ուղևորային մաքսային հայտարարագրում նշվում է Միության մաքսային սահմանով տեղափոխվող դրամական գործիքների քանակը:

17. Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու նպատակով ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային սահմանով մաքսային հայտարարագրման ենթակա կանխիկ դրամական միջոցներ և (կամ) դրամական գործիքներ տեղափոխելու դեպքում ուղևորային մաքսային հայտարարագրում պետք է նշվեն հետևյալ տվյալները՝

1) օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ անդամ պետության տարածքում գտնվելու (բնակվելու) իրավունքը հաստատող փաստաթղթի վավերապայմանները, անդամ պետության տարածքում բնակության

(գրանցման) վայրի կամ գտնվելու վայրի հասցեն.

2) դրամական գործիքների՝ բացառությամբ ճանապարհային չեկերի մասին տեղեկությունները (դրամական գործիքի տեսակը, թողարկողի անվանումը, թողարկման ամսաթիվը և նույնականացման համարը (առկայության դեպքում)).

3) կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների ծագման աղբյուրի, դրանց սեփականատերերի (եթե տեղափոխվող կանխիկ դրամական միջոցները և (կամ) դրամական գործիքները հայտատուի սեփականությունը չեն), ինչպես նաև այդ կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների ենթադրյալ օգտագործման մասին տեղեկությունները.

4) կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների փոխադրման երթուղու ու միջոցի (այն տրանսպորտի տեսակի, որի միջոցով իրականացվում է փոխադրումը) մասին տեղեկությունները:

18. Միության մաքսային սահմանով մահացածների մարմիններով (մասունքներով) դագաղների և աճյունով (մոխրով) աճյունասափորների տեղափոխման դեպքում որպես ուղևորային մաքսային հայտարարագիր կարող է օգտագործվել մահացած անձի մարմնով (մասունքներով) դագաղը կամ աճյունով (մոխրով) աճյունասափորն ուղեկցող անձի կողմից ազատ ձևով շարադրված դիմումը:

19. Միության մաքսային տարածքից արտահանվող՝ մարմիններով (մասունքներով) դագաղների և աճյունով (մոխրով) աճյունասափորների մաքսային հայտարարագրման դեպքում ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) անդամ պետություններում քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար սահմանված կարգով քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժինների կողմից տրվող մահվան վկայականը կամ մահվան փաստը հավաստող բժշկական վկայականը կամ նշված փաստաթղթերի նոտարական կարգով վավերացված պատճենները, իսկ թաղման վաղեմության հետ կապված այդ փաստաթղթերի բացակայության դեպքում՝ այլ փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս նույնականացնելու արտահանվող մասունքները.

2) ազատ ձևով շարադրված՝ տվյալ վայրի պետական սանիտարական հսկողություն իրականացնող մարմինների եզրակացությունը՝ վերահուղարկավորման դեպքում արտաշիրիմում անցկացնելու հնարավորության մասին.

3) ցինկապատ դագաղների զոդակցման արարողակարգային ծառայություններ իրականացնող մասնագիտացված կազմակերպությունների կողմից ազատ ձևով շարադրված ակտը (տեղեկանքը)՝ նշելով, որ դրանցում բացակայում են կողմնակի իրերը և կցելով մահացածի իրերի ու թանկարժեք իրերի ցանկը, եթե դրանք ուղարկվում են մահացածի մարմնի (աճյունի) հետ:

20. Միության մաքսային տարածք ներմուծվող՝ մարմիններով (մասունքներով) դագաղների և աճյունով (մոխրով) աճյունասափորների մաքսային հայտարարագրման դեպքում ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) ուղարկող երկրի լիազորված հիմնարկի կողմից տրված մահվան վկայականը կամ մահվան մասին բժշկական վկայականը կամ այդ փաստաթղթերի պատճենները, իսկ թաղման վաղեմության հետ կապված այդ փաստաթղթերի բացակայության դեպքում՝ այլ փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս նույնականացնելու ներմուծվող մասունքները.

2) ցինկապատ դագաղների զոդակցման արարողակարգային ծառայություններ իրականացնող մասնագիտացված կազմակերպությունների կողմից ազատ ձևով շարադրված ակտը (տեղեկանքը)՝ նշելով, որ դրանցում բացակայում են կողմնակի իրերը և կցելով մահացածի իրերի ու թանկարժեք իրերի ցանկը, եթե դրանք ուղարկվում են մահացածի մարմնի (աճյունի) հետ:

Հոդված 261. Անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ փաստաթղթեր ներկայացնելը

1. Ուղևորային մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթեր են համարվում՝

1) անձը հաստատող փաստաթղթերը, այդ թվում՝ անչափահաս անձի.

2) ֆիզիկական անձի մոտ եղած՝ անձնական օգտագործման այն ապրանքների արժեքը հաստատող փաստաթղթերը, որոնց նկատմամբ իրականացվում է մաքսային հայտարարագրում.

3) սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան, ֆիզիկական անձանց կողմից պահպանման ենթակա արգելքների և սահմանափակումների պահպանումը հաստատող փաստաթղթերը, եթե արգելքների ու սահմանափակումների պահպանումը հաստատվում է այդ փաստաթղթերը ներկայացնելով.

4) տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը.

5) մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ ներմուծման պայմանների պահպանումը հաստատող, այդ թվում՝ օտարերկրյա ֆիզիկական անձի՝ անդամ պետությունում մշտական բնակության տեղափոխված ճանաչվելու փաստը հաստատող կամ օտարերկրյա ֆիզիկական անձի՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան փախստականի, հարկադիր տեղահանված անձի կարգավիճակ ստանալը հաստատող փաստաթղթերը.

6) ուղևորային մաքսային հայտարարագիրը, որը ձևակերպվել է անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը Միության մաքսային տարածք ներմուծելու ժամանակ և որով հաստատվում է Միության մաքսային տարածքում ժամանակավոր գտնվելու համար այդ տրանսպորտային միջոցի բացթողումը.

7) այնպիսի տեղեկություններ պարունակող փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս նույնականացնելու

անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցը կամ անձնական օգտագործման այդ տրանսպորտային միջոցի այն մասերը, որոնք ենթակա են մաքսային հայտարարագրման՝ սույն Օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետին համապատասխան.

8) անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքը հաստատող փաստաթղթերը.

9) կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների ծագումը հավաստող փաստաթղթերը՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում.

10) սույն Օրենսգրքի 260-րդ հոդվածի 19-րդ և 20-րդ կետերում նշված փաստաթղթերը.

11) հայտարարատուի անունից կամ հանձնարարականով գործող անձի լիազորությունները հաստատող լիազորագիրը կամ այլ փաստաթուղթ՝ սույն Օրենսգրքի 260-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերում:

2. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին կետում նշված փաստաթղթերը չեն պարունակում ուղևորային մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող տեղեկություններ, այդ տեղեկությունները կարող են հաստատվել այլ փաստաթղթերով:

3. Այն փաստաթղթերի ցանկը, որոնցով մաքսային մարմիններն անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելիս չեն պահանջում տեղեկությունների՝ օտար լեզվից թարգմանությունը, սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

4. Ֆիզիկական անձի կողմից ուղեկցվող ուղեբեռում և չուղեկցվող ուղեբեռում կամ միայն չուղեկցվող ուղեբեռում անձնական օգտագործման ապրանքները Միության մաքսային տարածքով տեղափոխելու դեպքում Միության մաքսային տարածք չուղեկցվող ուղեբեռում ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ, ի լրումն սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված փաստաթղթերի, ներկայացվում է սույն Օրենսգրքի 260-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան տրված ուղևորային մաքսային հայտարարագրի օրինակը:

Նշված ուղևորային մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին չներկայացնելու դեպքում Միության մաքսային տարածք չուղեկցվող ուղեբեռում ներմուծվող անձնական օգտագործման ապրանքները դիտարկվում են որպես այն արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերի գերազանցմամբ Միության մաքսային տարածք ներմուծված, որոնց սահմաններում անձնական օգտագործման ապրանքներն առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման ներմուծվում են Միության մաքսային տարածք, եթե ֆիզիկական անձը չապացուցի հակառակը:

Հոդված 262. Անձնական օգտագործման ապրանքների բացթողումը

1. Ելնելով անձնական օգտագործման ապրանքների, բացառությամբ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների, մաքսային հայտարարագրման ժամանակ Միության մաքսային տարածք դրանց ներմուծման և (կամ) Միության մաքսային տարածքում դրանց գտնվելու կամ Միության մաքսային տարածքից դրանց արտահանման հայտագրված նպատակից՝ այդ ապրանքները ենթակա են բացթողման՝

1) ազատ շրջանառության համար.

2) արտահանման համար.

3) Միության մաքսային տարածքում ժամանակավոր գտնվելու համար.

4) Միության մաքսային տարածքից դուրս ժամանակավոր գտնվելու համար:

2. Մաքսային հայտարարագրման ենթակա անձնական օգտագործման ապրանքների՝ ազատ շրջանառության կամ արտահանման համար բացթողումը մաքսային մարմնի կողմից իրականացվում է՝ պայմանով, որ՝

1) վճարվել են մաքսատուրքերը, հարկերը՝ սույն գլխին համապատասխան՝ հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ կետը.

2) պահպանվել են արգելքներն ու սահմանափակումները՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան.

3) մաքսային մարմինների կողմից ապրանքների բացթողման հետ կապված գործողությունների իրականացման դիմաց մաքսավճարները վճարվել են, եթե այդ վճարները սահմանվել են անդամ պետությունների օրենսդրությամբ, և դրանց վճարման ժամկետը սահմանվել է մինչև ապրանքների բացթողումը, այդ թվում՝ մինչև ուղևորային մաքսային հայտարարագրի գրանցումը:

3. Միության մաքսային տարածքով ուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների բացթողումն իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ մինչև անձնական օգտագործման ապրանքների մասով վճարված մաքսատուրքերի, հարկերի գումարների հաշվեգրումը համապատասխան հաշիվներին:

Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների բացթողումն իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ մինչև մաքսատուրքերը, հարկերը վճարելը:

4. Միության մաքսային տարածքում ժամանակավոր գտնվելու կամ Միության մաքսային տարածքից դուրս ժամանակավոր գտնվելու համար՝ մաքսային հայտարարագրման ենթակա անձնական օգտագործման ապրանքների բացթողումն իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ պայմանով, որ՝

1) անձնական օգտագործման ապրանքները կարող են ժամանակավոր ներմուծվել կամ ժամանակավոր արտահանվել՝ սույն Օրենսգրքի 264-րդ և 265-րդ հոդվածներին համապատասխան.

2) ապահովվել է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումը՝ սույն Օրենսգրքի 271-րդ հոդվածին համապատասխան.

3) պահպանվել են արգելքներն ու սահմանափակումները՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

5. Մաքսային հայտարարագրման ոչ ենթակա՝ Միության մաքսային սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքները «կանաչ» ուղու ելքի գիծը, կամ ժամանման կամ մեկնման վայրերում մաքսային գործառնությունների եզրափակման գիծը հատելու պահից համարվում են ազատ շրջանառության համար բաց թողնված կամ արտահանման համար բաց թողնված:

Միության մաքսային սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման այն ապրանքները, որոնք ենթակա չեն մաքսային հայտարարագրման, և որոնց համար տրվում է առանց տրանսպորտային միջոցներից հեռանալու մաքսային գործառնություններ իրականացնելու հնարավորություն, ժամանման կամ մեկնման վայրերում այդ ապրանքների նկատմամբ մաքսային հսկողություն իրականացնելու ավարտի պահից համարվում են ազատ շրջանառության համար բաց թողնված կամ արտահանման համար բաց թողնված:

6. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող անձնական օգտագործման ապրանքների բացթողումն իրականացվում է այն պայմանների և կարգի պահպանմամբ, որոնք սահմանված են սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածին համապատասխան:

7. Անձնական օգտագործման ապրանքների բացթողումը պետք է ավարտվի սույն Օրենսգրքի 119-րդ հոդվածում նշված ժամկետներում՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերության մեջ նշված դեպքերի:

Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում Միության մաքսային սահմանով ուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների, բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող անձնական օգտագործման ապրանքների, բացթողումը պետք է ավարտվի անձնական օգտագործման ապրանքների բացթողման պայմանների պահպանման՝ հայտարարատուի կողմից հաստատվելուց և մաքսային հսկողության իրականացումից անմիջապես հետո:

8. Սանիտարակարանտինային, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական և պետական հսկողության (վերահսկողության) այլ տեսակների ենթակա անձնական օգտագործման ապրանքների բացթողումն իրականացվում է պետական հսկողության (վերահսկողության) համապատասխան տեսակն իրականացնելուց հետո:

9. Միության մաքսային տարածք ներմուծված անձնական օգտագործման ապրանքները Միության ապրանքների կարգավիճակ են ձեռք բերում դրանց ազատ շրջանառության համար բաց թողնելու պահից՝ բացառությամբ հետևյալ կատեգորիաների ապրանքների՝

1) սույն Օրենսգրքի 298-րդ և 299-րդ հոդվածներին համապատասխան ներմուծվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ.

2) այն ապրանքները, որոնց համար սահմանված են օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումներ՝ սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան:

10. Անձնական օգտագործման այն ապրանքները, որոնք ձեռք են բերել Միության ապրանքների կարգավիճակ, գտնվում և օգտագործվում են Միության մաքսային տարածքում՝ առանց օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների:

Հոդված 263. Ուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառման առանձնահատկությունները

1. Միության մաքսային տարածքով փոխադրման համար «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով կարող են ձևակերպվել Միության մաքսային սահմանով ուղեկցվող ուղեբեռում տեղափոխվող՝

1) անդամ պետություններում կամ Միության անդամ չհանդիսացող պետություններում չգրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները.

2) մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ ներմուծվող անձնական օգտագործման միջոցները, բացառությամբ սույն կետի 3-րդ ենթակետում նշված ապրանքների, դրանց ժամանման վայրից դեպի այն մաքսային մարմին դրանց փոխադրման համար, որի գործունեության տարածքում մշտապես կամ ժամանակավորապես բնակվում կամ բնակվելու է այն ֆիզիկական անձը, որն իրականացնում է Միության մաքսային տարածք այդ ապրանքների ներմուծումը.

3) անձնական օգտագործման ապրանքները, որոնք ներմուծվում են մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ, դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների, անդամ պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների դիվանագիտական և վարչատեխնիկական անձնակազմի անդամների, անդամ պետությունների հյուպատոսական հիմնարկների ղեկավարների և այլ հյուպատոսական պաշտոնատար անձանց, հյուպատոսական ծառայողների, Միության մաքսային տարածքից դուրս տեղակայված միջազգային կազմակերպություններին կից՝ անդամ պետությունների ներկայացուցչությունների աշխատակիցների, նրանց հետ բնակվող՝ իրենց ընտանիքի անդամների կամ այդ անձանց անունից և հանձնարարականով գործող այլ անձանց կողմից,

ժամանման վայրից դեպի այն մաքսային մարմին դրանց փոխադրման համար, որը որոշվում է Միության մաքսային տարածք այդ ապրանքների ներմուծումն իրականացնող անձանց դիմումի հիման վրա.

4) Միության մաքսային տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցների, հյուպատոսական հիմնարկների աշխատողների, միջազգային կազմակերպություններին կից՝ պետությունների ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների, այլ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների անձնակազմի (աշխատակիցների, պաշտոնատար անձանց), նրանց հետ ապրող՝ իրենց ընտանիքի անդամների կողմից Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքները, ներառյալ առաջնահերթ ձեռքբերման ապրանքները, ժամանման վայրից դեպի այն մաքսային մարմին դրանց փոխադրման համար, որի գործունեության տարածքում են գտնվում այն դիվանագիտական ներկայացուցչությունները, հյուպատոսական հիմնարկները, միջազգային կազմակերպություններին կից՝ պետությունների ներկայացուցչությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց ներկայացուցչությունները, այլ կազմակերպություններ կամ դրանց ներկայացուցչություններ, որոնց աշխատակիցներ, աշխատողներ, անձնակազմ (աշխատակիցներ, պաշտոնատար անձինք) նրանք համարվում են.

5) դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների ղեկավարների, դիվանագիտական ներկայացուցչությունների դիվանագիտական անձնակազմի անդամների և հյուպատոսական հիմնարկների հյուպատոսական պաշտոնատար անձանց, նրանց հետ բնակվող՝ իրենց ընտանիքի անդամների կողմից Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքները՝ ժամանման վայրից Միության մաքսային տարածքով դեպի մեկնման վայր դրանց փոխադրման համար:

2. Անձնական օգտագործման ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ուղևորային մաքսային հայտարարագրում նշման ենթակա տեղեկությունները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված անձնական օգտագործման ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում դրանց առաքման վայրը որոշում է ուղարկող մաքսային մարմինը՝

1) անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցների համար, որոնք ներմուծվում են այդ տրանսպորտային միջոցների սեփականատիրոջ հանձնարարությամբ՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական անձի մշտական կամ ժամանակավոր բնակության վայրի մասին տեղեկությունների հիման վրա, իսկ անձնական օգտագործման այլ տրանսպորտային միջոցների համար՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները ներմուծող ֆիզիկական անձի դիմումի հիման վրա.

2) մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների համար, բացառությամբ սույն հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված ապրանքների, այդ ապրանքների հայտարարատուի մշտական կամ ժամանակավոր բնակության վայրի կամ ենթադրյալ վայրի մասին տեղեկությունների հիման վրա.

3) սույն հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված անձնական օգտագործման ապրանքների համար՝ Միության մաքսային տարածք այդ ապրանքների ներմուծումն իրականացնող անձի կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա.

4) սույն հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետում նշված անձնական օգտագործման ապրանքների համար՝ դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական հիմնարկի, միջազգային կազմակերպությանը կից՝ պետության ներկայացուցչության, միջազգային կազմակերպության կամ դրա ներկայացուցչության, այնպիսի այլ կազմակերպության կամ դրա ներկայացուցչության գտնվելու վայրի մասին տեղեկությունների հիման վրա, որի աշխատակիցը, աշխատողը, աշխատակազմը (աշխատակիցը, պաշտոնատար անձը) այն անձն է, որի անձնական օգտագործման ապրանքները ներմուծվում են Միության մաքսային տարածք.

5) սույն հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետում նշված անձնական օգտագործման ապրանքների համար՝ մեկնման վայրի մասին տեղեկությունների հիման վրա.

4. Սույն հոդվածի 1-ին կետում նշված անձնական օգտագործման ապրանքների փոխադրման ժամանակ որպես հայտարարատու հանդես եկող ֆիզիկական անձը, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, կատարում է սույն Օրենսգրքի 150-րդ հոդվածով փոխադրողի համար նախատեսված պարտավորությունները:

5. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրվում է սույն Օրենսգրքի 146-րդ հոդվածին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 271-րդ հոդվածը:

Հոդված 264. Անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումը

1. Օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից՝ Միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումը Միության մաքսային տարածք թույլատրվում է ոչ ավելի, քան 1 տարի ժամկետով:

Սույն Օրենսգրքի 259-րդ հոդվածի 2-րդ կետում նշված օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից՝ անդամ պետություններում և Միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումը Միության մաքսային տարածք թույլատրվում է ոչ ավելի, քան

1 տարի ժամկետով:

Անդամ պետությունների ֆիզիկական անձանց կողմից՝ Միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումը Միության մաքսային տարածք թույլատրվում է ոչ ավելի, քան 1 տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին և 4-րդ կետերի դրույթները չեն կիրառվում Միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված և անդամ պետություններում ու Միության անդամ չհանդիսացող պետությունում չգրանցված՝ այն ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծվող տրանսպորտային միջոցների նկատմամբ, որոնք, սույն Օրենսգրքի 298-րդ և 299-րդ հոդվածներին համապատասխան, իրավունք ունեն առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման, Միության մաքսային տարածք ներմուծելու անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ:

Նշված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումը Միության մաքսային տարածք թույլատրվում է ժամանման պետության օրենսդրությանը համապատասխան հաստատվող՝ այդ պետությունում նշված ֆիզիկական անձանց արտոնություններ տրամադրելու ժամկետում:

Նշված ժամկետը երկարաձգելու դեպքում անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների՝ Միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծման ժամկետը երկարաձգվում է մաքսային մարմնի կողմից՝ սույն կետի առաջին պարբերության մեջ նշված անձանց դիմումների հիման վրա՝ այդ երկարաձգման համար սահմանված ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կետի երկրորդ և երրորդ պարբերություններում նշված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների, բացառությամբ անդամ պետությունների այն ֆիզիկական անձանց կողմից ժամանակավոր ներմուծվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների, որոնք Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս տեղակայված՝ անդամ պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցներ, անդամ պետությունների հյուպատոսական հիմնարկների աշխատողներ, միջազգային կազմակերպություններին կից՝ անդամ պետությունների ներկայացուցիչներ են, ժամանակավոր ներմուծումը Միության մաքսային տարածք թույլատրվում է սույն Օրենսգրքի 271-րդ հոդվածին համապատասխան մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունների կատարման ապահովումը տրամադրելու պայմանով:

4. Միության մաքսային տարածքից չարտահանված՝ օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից նախկինում ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների առկայության դեպքում այդպիսի անձանց կողմից Միության անդամ չհանդիսացող պետություններում գրանցված երկրորդ և հաջորդ տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծումը Միության մաքսային տարածք թույլատրվում է սույն Օրենսգրքի 271-րդ հոդվածին համապատասխան մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունների կատարումն ապահովելու պայմանով:

Սույն կետի կիրառման նպատակներով անձնական օգտագործման տրանսպորտային երկրորդ և հաջորդող տրանսպորտային միջոցներ ասելով ենթադրվում է նույն տեսակի անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ (ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոց, ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցի կցանք, նավ կամ օդանավ), ինչ և նախկինում Միության մաքսային տարածք ժամանակավորապես ներմուծված և Միության մաքսային տարածքից չարտահանված անձնական օգտագործման տրանսպորտային միջոց:

5. Ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները, մինչև այն ժամկետի լրանալը, որի ընթացքում այդ տրանսպորտային միջոցները կարող են ժամանակավոր գտնվել Միության մաքսային տարածքում, Միության մաքսային տարածքից արտահանման, ազատ շրջանառության համար բացթողման կամ սույն հոդվածին համապատասխան այլ նպատակներով ենթակա են մաքսային հայտարարագրման, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները դատարանի որոշմամբ բռնագրավվել կամ դարձվել են անդամ պետության սեփականություն (եկամուտ) կամ, սույն Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ կետին կամ 382-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան, ձեռք են բերել Միության ապրանքների կարգավիճակ կամ, նշված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների հետ կապված, ի հայտ են եկել սույն Օրենսգրքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսված հանգամանքներ:

Մինչև այն ժամկետի լրանալը, որի ընթացքում ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները կարող են ժամանակավոր գտնվել Միության մաքսային տարածքում, հայտարարատուն իրավունք ունի այդ տրանսպորտային միջոցները սույն Օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպելու «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով:

Այն ժամկետը լրանալու դեպքում, որի ընթացքում ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները կարող են ժամանակավոր գտնվել Միության մաքսային տարածքում, այդ տրանսպորտային միջոցները սույն Օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով, կամ այդ տրանսպորտային միջոցների համար իրականացվում է մաքսային հայտարարագրում՝ արտահանման, ազատ շրջանառության համար բացթողման կամ սույն հոդվածին համապատասխան այլ նպատակներով:

Ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, առգրավելու կամ դրանց վրա արգելանք դնելու դեպքում անձնական օգտագործման այդ տրանսպորտային միջոցների համար ժամանակավոր ներմուծման ժամկետի ընթացքը կասեցվում է:

Ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների առգրավումը կամ դրանց վրա արգելանք դնելը վերացնելու մասին որոշում ընդունելու դեպքում անձնական օգտագործման այդ ապրանքների համար սահմանված ժամկետի ընթացքը վերսկսվում է այդ որոշումն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ անձնական օգտագործման այդ տրանսպորտային միջոցների առգրավումը կամ դրանց վրա արգելանք դնելը կապված է եղել ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածքում փոխանցելու՝ սույն հոդվածի 9-րդ կետով նախատեսված պայմանը հայտարարատուի կողմից խախտելու հետ:

Ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցները, որոնց հետ կապված, մինչև սույն հոդվածի 1-ին կետում կամ 2-րդ կետում նշված ժամկետը լրանալը չեն իրականացվել սույն կետով նախատեսված գործողություններ, արգելանքի են վերցվում (արգելապահվում են) այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որի տարածքում գտնվում են այդ տրանսպորտային միջոցները՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան, բացառությամբ այն դեպքի, երբ մինչև այդպիսի արգելանքի տակ վերցնելն ի հայտ են եկել սույն Օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետում նշված հանգամանքները:

6. Ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածքում պետք է գտնվեն հայտարարատուի փաստացի տիրապետման և օգտագործման տակ, եթե այլ բան սահմանված չէ սույն հոդվածով:

Ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները կարող են հայտարարատուի կողմից փոխանցվել այլ անձի, այդ թվում՝ այն անձին, որին սեփականության իրավունքով պատկանում է այդ տրանսպորտային միջոցը՝ սույն հոդվածով սահմանված դեպքերում և պայմաններով:

7. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների փոխանցումը թույլատրվում է, եթե անձնական օգտագործման այդ տրանսպորտային միջոցները փոխանցվում են՝

1) այն ֆիզիկական անձանց, որոնք, սույն Օրենսգրքի 298-րդ և 299-րդ հոդվածներին համապատասխան, իրավունք ունեն առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման Միության մաքսային տարածք ներմուծելու անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ՝ այդ փոխանցումն իրականացնող ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման այդ տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծելու նպատակով մաքսային հայտարարագրում իրականացնելուց հետո:

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված անձանց՝ այդ փոխանցումն իրականացնող ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման այդ տրանսպորտային միջոցներն ազատ շրջանառության համար բաց թողնելու նպատակով մաքսային հայտարարագրում իրականացնելուց հետո:

8. Առանց մաքսային մարմնի թույլտվության և առանց մաքսային հայտարարագրի թույլատրվում է հայտարարատուի կողմից անձնական օգտագործման հետևյալ տրանսպորտային միջոցների փոխանցումը՝

1) ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը՝ այլ անձանց տիրապետմանը՝ տեխնիկական սպասարկում, վերանորոգում (բացառությամբ կապիտալ վերանորոգման, արդիականացման) իրականացնելու և (կամ) դրանք պահպանելու համար.

2) անդամ պետության ֆիզիկական անձի կողմից ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը՝ նրա ծնողներին, երեխաներին, գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսնուն (կնոջը).

3) օտարերկրյա ֆիզիկական անձի կողմից ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը՝ օտարերկրյա այլ ֆիզիկական անձանց.

4) ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման նավը կամ օդանավը՝ նավի նավապետին, օդանավի հրամանատարին, տվյալ տրանսպորտային միջոցի շահագործման նպատակով կառավարման անձնակազմի անդամներին այն դեպքերում, երբ նավի տեխնիկական սարքվածքը չի ենթադրում առանց նշված անձանց մասնակցության դրա շահագործումը.

5) անդամ պետության դիվանագիտական ներկայացուցչության և (կամ) հյուպատոսական հիմնարկի, Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս տեղակայված միջազգային կազմակերպությանը կից՝ անդամ պետության ներկայացուցչության անունով գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը, որը ժամանակավոր ներմուծվել է անդամ պետության՝ այդ դիվանագիտական ներկայացուցչությունում և (կամ) հյուպատոսական հիմնարկում, միջազգային կազմակերպությանը կից՝ անդամ պետության ներկայացուցչությունում աշխատող ֆիզիկական անձի կողմից՝ անդամ պետության այդ դիվանագիտական ներկայացուցչության և (կամ) անդամ պետության հյուպատոսական հիմնարկի, Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս տեղակայված միջազգային կազմակերպությանը կից՝ անդամ պետության ներկայացուցչության այլ աշխատակիցների համար:

9. Մաքսային մարմնի թույլտվությամբ և առանց մաքսային հայտարարագրի թույլատրվում է հայտարարատուի կողմից հետևյալ տրանսպորտային միջոցների փոխանցումը՝

1) օտարերկրյա ֆիզիկական անձի կողմից ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը՝ անդամ պետության ֆիզիկական անձին՝ սույն Օրենսգրքի 271-րդ հոդվածին համապատասխան մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու պայմանով.

2) ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը՝ այլ անձի՝ անձնական օգտագործման այդ տրանսպորտային միջոցը Միության մաքսային տարածքից արտահանելու համար, եթե այդ

արտահանումը չի կարող իրականացվել հայտարարատուի կողմից՝ նրա մահվան, ծանր հիվանդության կամ օբյեկտիվ այլ պատճառով:

10. Սույն հոդվածի 9-րդ կետի առաջին պարբերությունում նշված՝ մաքսային մարմնի թույլտվության ձևը և մաքսային մարմնի կողմից դրա տրման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

11. Այն ֆիզիկական անձինք, որոնց կողմից ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը փոխանցվել է սույն հոդվածի 8-րդ և 9-րդ կետերով սահմանված պայմաններով, իրավունք չունեն այդ տրանսպորտային միջոցը Միության մաքսային տարածքում փոխանցելու այլ անձանց՝ բացառությամբ հայտարարատուի:

12. Սույն հոդվածի 7-9-րդ կետերով սահմանված դեպքերից տարբեր այլ դեպքերում հայտարարատուի կողմից՝ Միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների փոխանցումը թույլատրվում է ազատ շրջանառության նպատակով դրանց մաքսային հայտարարագրումն իրականացնելուց հետո:

Սույն հոդվածի 7-9-րդ հոդվածներով սահմանված դեպքերից տարբեր այլ դեպքերում՝ ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներն ազատ շրջանառության համար բաց թողնելու նպատակով մինչև դրանց մաքսային հայտարարագրումը փոխանցելու փաստեր հայտնաբերելու դեպքում այդ տրանսպորտային միջոցներն արգելանքի են վերցվում (արգելապահվում են) այն անդամ պետության մաքսային մարմինների կողմից, որի տարածքում հայտնաբերվել են նշված խախտումները, և որտեղ գտնվում են այդ տրանսպորտային միջոցները՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

13. Սույն հոդվածի 8-9-րդ կետերով սահմանված դեպքերում Միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների՝ հայտարարատուի կողմից այլ անձանց փոխանցմամբ հայտարարատուն չի ազատվում սույն հոդվածով սահմանված պահանջները պահպանելու պարտավորությունից, ինչպես նաև չի կասեցվում կամ չի երկարաձգվում անձնական օգտագործման այդ տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման ժամկետը:

Հոդված 265. Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների ժամանակավոր արտահանումը

1. Ֆիզիկական անձանց կողմից Միության ապրանքներ հանդիսացող անձնական օգտագործման ապրանքների՝ Միության մաքսային տարածքից ժամանակավոր արտահանումը թույլատրվում է Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս իրենց ժամանակավոր գտնվելու ընթացքում:

2. Ֆիզիկական անձի կողմից ներկայացված դիմումի հիման վրա մաքսային մարմինն իրականացնում է ժամանակավոր արտահանված անձնական օգտագործման ապրանքների նույնականացում, եթե այդ նույնականացումը կարող է նպաստել Միության մաքսային տարածք դրանց հետադարձ ներմուծմանը՝ առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման: Անձնական օգտագործման ապրանքների նույնականացման մասին նշվում է ուղևորային մաքսային հայտարարագրում, որի մեկ օրինակը փոխանցվում է Միության մաքսային տարածքից այդ ապրանքների ժամանակավոր արտահանումն իրականացնող ֆիզիկական անձին:

Այդ նույնականացման չիրականացումը չի խոչընդոտում ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների հետադարձ ներմուծումը՝ առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ պայմանով, որ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող կարգով մաքսային մարմնին հավաստիացվի, որ այդ ապրանքները Միության մաքսային տարածք հետ են ներմուծվում Միության մաքսային տարածքից դրանց արտահանումից հետո:

3. Ժամանակավոր արտահանված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների նկատմամբ թույլատրվում է իրականացնել տեխնիկական սպասարկման կամ վերանորոգման գործողություններ, որոնց անհրաժեշտությունը կարող է առաջանալ Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս այդ տրանսպորտային միջոցների գտնվելու ժամանակ:

Անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի՝ սույն կետի առաջին պարբերությանը համապատասխան վերանորոգում իրականացնելու դեպքում՝ կապված դրա այն մասերի փոխարինման հետ, որոնք անդամ պետությունների համապատասխան պետական լիազորված մարմիններում ենթակա են հաշվառման (գրանցման), անձնական օգտագործման այդ տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածք հետադարձ ներմուծման դեպքում փոխարինված մասը ենթակա է մաքսային հայտարարագրման՝ ազատ շրջանառության համար բաց թողնելու նպատակով:

Հոդված 266. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսային վճարների կիրառումը

1. Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների հետ կապված՝ միասնական

դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերը, հարկերը կամ միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման, բացառությամբ այն դեպքերի, երբ անձնական օգտագործման այդ ապրանքների համար սույն հոդվածով սահմանված է մաքսատուրքերի, հարկերի կիրառման այլ կարգ:

2. Ելնելով անձնական օգտագործման ապրանքների կատեգորիայից, արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերից և անձնական օգտագործման ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելու եղանակից, ինչպես նաև անձնական օգտագործման այն ապրանքների կատեգորիայից, որոնց հետ կապված միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման՝ մաքսատուրքերի, հարկերի միասնական դրույքաչափերը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

3. Անձնական օգտագործման ապրանքներն առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ Միության մաքսային տարածք ներմուծվում են Հանձնաժողովի կողմից սահմանվող արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերի սահմաններում, իսկ Հանձնաժողովի կողմից սահմանված դեպքերում՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված համապատասխան նորմերի սահմաններում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների հետ կապված սույն հոդվածով սահմանված է մաքսատուրքերի, հարկերի կիրառման այլ կարգ:

Անձնական օգտագործման ապրանքներն առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման Միության մաքսային տարածք ներմուծելու արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերը սահմանվում են Հանձնաժողովի կողմից՝ ելնելով անձնական օգտագործման այդ ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելու եղանակներից: Ուղեկցվող և (կամ) չուղեկցվող ուղերեռով անձնական օգտագործման ապրանքների՝ Միության մաքսային տարածք ներմուծելու այդպիսի նորմերը սահմանվում են առանց օգտագործման մեջ եղած և ընթացուղում ու նշանակման վայրում անհրաժեշտ՝ անձնական օգտագործման ապրանքների հաշվառման, որոնց շարքին դասելու չափանիշները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու այն ապրանքների կատեգորիաները, որոնց համար, ելնելով Միության մաքսային տարածք դրանք ներմուծելու եղանակից, անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման Միության մաքսային տարածք ներմուծելու՝ Հանձնաժողովի կողմից սահմանված նորմերից ավելի խիստ արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմեր:

Այն արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերը սահմանելիս, որոնց սահմաններում անձնական օգտագործման ապրանքներն առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման ներմուծվում են Միության մաքսային տարածք, Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու այդ նորմերի կիրառման կարգը, այդ թվում՝ ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելու ամսաթվերը որոշելու կարգը՝ նշված նորմերի սահմաններում ներմուծվող այդ ապրանքները հաշվառելու նպատակով:

4. Անկախ իրենց արժեքից, քաշից և (կամ) քանակից՝ Միության մաքսային տարածքից անձնական օգտագործման ապրանքներն արտահանվում են առանց մաքսատուրքերի վճարման:

5. Միության մաքսային տարածքից ժամանակավոր արտահանումից հետո Միության մաքսային տարածք ներմուծվող՝ անդամ պետություններում գրանցված անձնական օգտագործման ապրանքները, բացառությամբ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների, Միության մաքսային տարածք ներմուծվում են առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ անկախ դրանց արժեքից, քաշից և (կամ) քանակից՝ պայմանով, որ դրանք մնան անփոփոխ, բացի փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական մաշվածության հետևանքով տեղի ունեցած փոփոխություններից, ինչպես նաև բնական կորստի հետևանքով տեղի ունեցած փոփոխություններից, և սույն Օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան սահմանված կարգով մաքսային մարմնին հավաստիացվի, որ այդ ապրանքները Միության մաքսային տարածքից դրանց ժամանակավոր արտահանումից հետո հետ են ներմուծվում Միության մաքսային տարածք:

Այն դեպքում, երբ մաքսային մարմնին չի հավաստիացվում, որ անդամ պետություններում գրանցված անձնական օգտագործման ապրանքները, բացառությամբ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների, Միության մաքսային տարածք ներմուծվում են Միության մաքսային տարածքից դրանց ժամանակավոր արտահանումից հետո, այդ ապրանքների վրա տարածվում է սույն հոդվածի 1-ին, 3-րդ և 8-րդ կետերով սահմանված՝ մաքսատուրքերի, հարկերի կիրառման կարգը:

Անդամ պետություններում գրանցված անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցները, որոնք Միության մաքսային տարածքից ժամանակավոր արտահանումից հետո ներմուծվում են Միության մաքսային տարածք, Միության մաքսային տարածք են ներմուծվում առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման:

6. Անձնական օգտագործման այն օգտագործված ապրանքները, որոնց ցանկը և քանակը սահմանվում են Հանձնաժողովի կողմից, օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից կարող են առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման ներմուծվել Միության մաքսային տարածքում իրենց գտնվելու ընթացքում՝ անկախ այդ ապրանքների արժեքից և (կամ) քաշից:

Սույն կետի առաջին պարբերության մեջ չնշված՝ օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային տարածքում իրենց գտնվելու ընթացքում ներմուծված ապրանքների վրա տարածվում է սույն հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, 7-րդ կետի առաջին պարբերությամբ, ինչպես նաև 8-րդ կետով սահմանված մաքսատուրքերի, հարկերի կիրառման կարգը:

7. Միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային

միջոցները կարող են օտարերկրյա ֆիզիկական անձանց և անդամ պետությունների ֆիզիկական անձանց կողմից առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման ներմուծվել ոչ ավելի, քան 1 տարի ժամկետով:

Սույն Օրենսգրքի 264-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով և 12-րդ կետով սահմանված դեպքերում անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարվում են սույն գլխին համապատասխան:

8. Ելնելով անձնական օգտագործման ապրանքների կատեգորիայից, Միության մաքսային տարածք այդ ապրանքները ներմուծող անձից և (կամ) Միության մաքսային տարածք անձնական օգտագործման այդ ապրանքները ներմուծելու եղանակներից՝ Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու անձնական օգտագործման ապրանքները մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ Միության մաքսային տարածք ներմուծելու դեպքերը և պայմանները, ինչպես նաև անձնական օգտագործման այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման մասով սահմանափակումները:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ անձնական օգտագործման ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելու՝ լրացուցիչ կամ Հանձնաժողովի կողմից սահմանված պայմաններից ավելի խիստ պայմաններ և (կամ) մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ ներմուծված անձնական օգտագործման ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման մասով՝ Հանձնաժողովի կողմից սահմանված սահմանափակումներից տարբեր այլ սահմանափակումներ:

Սույն Օրենսգրքի 298-րդ և 299-րդ հոդվածներում նշված անձանց կողմից մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ անձնական օգտագործման ապրանքների, այդ թվում՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ներմուծման դեպքերը և պայմանները սահմանվում են սույն Օրենսգրքի տվյալ հոդվածներով, իսկ սույն Օրենսգրքի 296-րդ հոդվածի 2-րդ կետում նշված անձանց կողմից ներմուծման դեպքում՝ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով և անդամ պետությունների միջև միջազգային պայմանագրերով:

9. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսավճարները կիրառվում են սույն Օրենսգրքի 47-րդ հոդվածին համապատասխան:

10. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերի, հարկերի կիրառման կարգը, այդ ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության առաջացումն ու դադարումը, ինչպես նաև դրանց վճարման ժամկետները սահմանվում են սույն Օրենսգրքի 22-րդ գլխին համապատասխան:

11. Միասնական մաքսային դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերով, հարկերով կամ միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերով, հարկերով հարկվող օբյեկտ են համարվում անձնական օգտագործման ապրանքները:

12. Միասնական դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման նպատակով դրանց հաշվարկման բազա է համարվում, կախված անձնական օգտագործման ապրանքների կատեգորիաներից և կիրառվող դրույքաչափերի տեսակներից, անձնական օգտագործման ապրանքների արժեքը և (կամ) դրանց ֆիզիկական բնութագիրը՝ բնաիրային արտահայտությամբ (քանակը, զանգվածը, այդ թվում՝ հաշվի առնելով ապրանքի առաջնային փաթեթվածքը, որն անբաժանելի է ապրանքից մինչև դրա սպառումը, և (կամ) որով ապրանքը ներկայացվում է մանրածախ առևտրի համար, ծավալը կամ ապրանքի այլ բնութագրեր):

Միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման նպատակով, կախված անձնական օգտագործման ապրանքների կատեգորիաներից և կիրառվող դրույքաչափերի տեսակներից, միագումար մաքսային վճարի մեջ մտնող մաքսատուրքերի հաշվարկման բազա են համարվում անձնական օգտագործման ապրանքների արժեքը և (կամ) դրանց ֆիզիկական բնութագիրը՝ բնաիրային արտահայտությամբ (քանակը, զանգվածը, այդ թվում՝ հաշվի առնելով ապրանքի առաջնային փաթեթվածքը, որն անբաժանելի է ապրանքից մինչև դրա սպառումը, և (կամ) որով ապրանքը ներկայացվում է մանրածախ առևտրի համար, ծավալը կամ ապրանքի այլ բնութագրեր): Միագումար մաքսային վճարի կազմի մեջ մտնող հարկերի հաշվարկման բազան սահմանվում է սույն Օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

Մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման նպատակով անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ հանդիսացող ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների բացթողման պահը և շարժիչի աշխատանքային ծավալը սահմանելու կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

13. Միասնական դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերի, հարկերի կամ միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերի, հարկերի հաշվարկումն իրականացվում է այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմին է ներկայացվել ուղևորային մաքսային հայտարարագիրը:

14. Միասնական դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերի, հարկերի կամ միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման նպատակով կիրառվում են մաքսային մարմնի կողմից ուղևորային մաքսային հայտարարագիրը գրանցելու օրը գործող դրույքաչափեր, եթե այլ բան սահմանված չէ սույն Օրենսգրքով:

15. Մաքսատուրքերի, հարկերի միասնական դրույքաչափերի կիրառմամբ վճարման և (կամ) գանձման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարը որոշվում է մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման բազայի և մաքսատուրքերի, հարկերի համապատասխան միասնական դրույքաչափի կիրառման եղանակով:

16. Միագումար մաքսային վճարի ձևով վճարման և (կամ) գանձման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարը որոշվում է մաքսատուրքերի հաշվարկված գումարը և հարկերի հաշվարկված գումարները գումարելու եղանակով:

Միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերի, հարկերի գումարի հաշվարկումը կատարվում է հետևյալ եղանակներով՝

1) մաքսատուրքերի գումարի հաշվարկումը կատարվում է մաքսատուրքերի հաշվարկման բազայի և մաքսատուրքերի դրույքաչափի համապատասխան տեսակի կիրառման միջոցով.

2) հարկերի գումարի հաշվարկումը կատարվում է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի մաքսային մարմին է ներկայացվել ուղևորային մաքսային հայտարարագիրը:

17. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարողներ են համարվում հայտարարատուն կամ այլ անձինք, որոնց վրա դրվում է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորություն:

18. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման նպատակով արտարժույթի վերահաշվարկի կարգը, դրանց վճարման պարտավորության կատարման պահը (վճարման ամսաթիվը), մաքսատուրքերի, հարկերի և այլ դրամական միջոցների (փողի) վերադարձի (հաշվանցման) կարգը սահմանվում են սույն Օրենսգրքի 7-10-րդ գլուխներին համապատասխան:

Եթե միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների առնչությամբ պահանջվում է կատարել արտարժույթի վերահաշվարկ անդամ պետության արժույթի, այդ վերահաշվարկը կատարվում է այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված օրվա դրությամբ գործող փոխարժեքով, որի մաքսային մարմնի կողմից հաշվարկվում են անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը:

19. Միասնական դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերը, հարկերը կամ միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման սույն Օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-3-րդ կետերին համապատասխան՝ հաշվի առնելով սույն կետի երկրորդ պարբերությունը:

Օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների հետ կապված՝ միասնական դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերը, հարկերը կամ միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման այն անդամ պետությունում, որտեղ բացահայտվել են սույն Օրենսգրքի 268-րդ հոդվածի 6-րդ կետում նշված հանգամանքները:

20. Միասնական դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերը, հարկերը կամ միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերը, հարկերը վճարվում են այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված հաշիվներին, որտեղ, սույն հոդվածի 19-րդ կետին համապատասխան, այդ մաքսային վճարները ենթակա են վճարման:

21. Միասնական դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերը, հարկեր կամ միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերը, հարկերը վճարվում են այն անդամ պետության արժույթով, որտեղ, սույն հոդվածի 19-րդ կետին համապատասխան, մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքի:

Ապրանքների ժամանման վայրերում միասնական դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերի, հարկերի կամ միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերի, հարկերի վճարումը, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, իրականացվում է այն անդամ պետության արժույթից տարբեր այլ արժույթով, որտեղ մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման:

22. Միասնական դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերի, հարկերի կամ միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերի, հարկերի վճարումն իրականացվում է անկանխիկ կարգով կամ կանխիկ դրամական միջոցներով (փողով)՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

23. Միասնական դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերի, հարկերի կամ միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերի, հարկերի վճարման դեպքում սույն Օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին կետի 1-ից 4-րդ ենթակետերում նշված մաքսատուրքերը չեն վճարվում:

24. Այն ապրանքների հետ կապված՝ միասնական դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերը, հարկերը կամ միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերը, հարկերը, որոնց մաքսային հայտարարագրումն իրականացվում է սույն գլխին համապատասխան, վճարվում են ֆիզիկական անձանց կողմից՝ մաքսային մուտքի օրդերի հիման վրա կամ Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ մաքսային փաստաթղթի հիման վրա:

25. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսային վճարները հաշվարկվում են այդ ապրանքների բացթողումն իրականացնող մաքսային մարմնի կողմից՝ մաքսային հայտարարագրման ժամանակ հայտարարատուի կողմից ներկայացված տեղեկությունների, ինչպես նաև մաքսային հսկողության անցկացման արդյունքների հիման վրա: Մաքսային վճարների գումարը որոշելու համար անհրաժեշտ՝ անձնական օգտագործման ապրանքների մասին լիարժեք և հավաստի տեղեկությունների վերաբերյալ մաքսային մարմնին հայտնելու պարտավորությունը դրվում է հայտարարատուի վրա:

26. Սույն Օրենսգրքի 268-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ և 15-րդ կետերում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում միասնական դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերը, հարկերը կամ միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերը, հարկերը մաքսային մարմնի կողմից հաշվարկվում են՝ հաշվելով դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերը, հարկերը կամ միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերը, հարկերը:

Նշված հաշվարկի ձևը, դրա լրացման և այդ հաշվարկի մեջ փոփոխություններ (լրացումներ) կատարելու կարգը սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 267. Անձնական օգտագործման ապրանքների արժեքը

1. Անձնական օգտագործման ապրանքների արժեքը հայտագրվում է անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ ուղևորային մաքսային հայտարարագրում՝ չեկերի, հաշիվների մեջ, հաշվեպիտակների և պիտակների վրա կամ անձնական օգտագործման ապրանքների արժեքի մասին տեղեկություններ պարունակող՝ այդ ապրանքների ձեռքբերման վերաբերյալ այլ փաստաթղթերում նշված արժեքի հիման վրա՝ բացառությամբ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների, որոնց առնչությամբ որպես ուղևորային մաքսային հայտարարագիր օգտագործվում են Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված և միջազգային փոստային առաքանիներն ուղեկցող փաստաթղթերը:

Անձնական օգտագործման ապրանքների արժեքը հաստատելու համար ֆիզիկական անձի կողմից ներկայացվում են փաստաթղթերի բնօրինակները, որոնց հիման վրա հայտագրվել է անձնական օգտագործման ապրանքների արժեքը, իսկ փոխադրողի կողմից առաքվող անձնական օգտագործման ապրանքների առնչությամբ՝ փաստաթղթերի բնօրինակները կամ պատճենները:

Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների արժեքը հայտագրվում է Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված և այդպիսի միջազգային փոստային առաքանիներն ուղեկցող փաստաթղթերում: Ընդ որում, որպես անձնական օգտագործման ապրանքների արժեք, դիտարկվում է միջազգային փոստային առաքանիների հայտարարագրված արժեքը միայն այն դեպքում, երբ այն գերազանցում է Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված փաստաթղթերում նշված՝ անձնական օգտագործման ապրանքների արժեքը:

Անձնական օգտագործման ապրանքների արժեքի մեջ չեն մտնում փոխադրման և ապահովագրության հետ կապված ծախսերը:

2. Ֆիզիկական անձն իրավունք ունի ապացուցելու անձնական օգտագործման ապրանքների արժեքի հաստատման համար ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների հավաստիությունը:

Ֆիզիկական անձի կողմից լրացուցիչ կարող են ներկայացվել նույնանման ապրանքների մանրածախ վաճառք իրականացնող օտարերկրյա կազմակերպությունների գնացուցակները, կատալոգները, գովազդային գնացուցակները և բուկլետները:

3. Մաքսային մարմինն իր տրամադրության տակ գտնվող՝ նույնանման ապրանքների գնի մասին տեղեկատվության հիման վրա անձնական օգտագործման ապրանքների արժեքը որոշում է հետևյալ դեպքերում՝

1) ֆիզիկական անձի մոտ սույն հոդվածի 1-ին կետում նշված անձնական օգտագործման ապրանքների արժեքի մասին տեղեկություններ պարունակող անհրաժեշտ փաստաթղթերի բացակայություն.

2) Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված՝ միջազգային փոստային առաքանիներին ուղեկցող փաստաթղթերում անձնական օգտագործման ապրանքների արժեքի մասին տեղեկությունների բացակայություն և միջազգային փոստային առաքանիով այդ ապրանքներն ուղեկցող և անձնական օգտագործման ապրանքների արժեքի մասին տեղեկություններ պարունակող փաստաթղթերի բացակայություն.

3) անձնական օգտագործման այն ապրանքները հայտարարագրվող անձնական օգտագործման ապրանքների հետ նույնականացնելու անհնարինություն, որոնց մասին տեղեկությունները պարունակվում են անձնական օգտագործման ապրանքների արժեքի հաստատման համար ֆիզիկական անձի կողմից ներկայացված փաստաթղթերում.

4) հիմնավոր պատճառների առկայություն՝ ենթադրելու, որ սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ ֆիզիկական անձի կողմից ներկայացված փաստաթղթերը կամ Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված՝ միջազգային փոստային առաքանիներին ուղեկցող փաստաթղթերը պարունակում են ոչ հավաստի տեղեկություններ, եթե ֆիզիկական անձը, սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան, չապացուցի անձնական օգտագործման ապրանքների արժեքի հաստատման համար ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների հավաստիությունը.

5) ձեռքբերման երկրում նույնանման ապրանքների այն շուկայական արժեքի հետ անձնական օգտագործման ապրանքների հայտագրված արժեքի անհամապատասխանություն, ըստ որի այդ նույնանման ապրանքները վաճառվում կամ առևտրի սովորական (շուկայական) պայմաններում ներկայացվում են վաճառքի համար:

4. Որպես անձնական օգտագործման ապրանքների արժեքի մասին տեղեկատվություն՝ մաքսային մարմինը կարող է օգտագործել նաև նույնանման ապրանքների մանրածախ վաճառք իրականացնող օտարերկրյա կազմակերպությունների կատալոգներում և կայքերում նշված տեղեկությունները՝ հաշվի առնելով ֆիզիկական անձի կողմից ներկայացված տեղեկությունները:

5. Սույն հոդվածի կիրառման նպատակներով «նույնանման ապրանք» ասելով ենթադրվում է այն ապրանքը, որն ունի ներմուծված անձնական օգտագործման ապրանքի բնութագրերին նման բնութագրեր, այսինքն՝ համադրելի է հայտարարագրված անձնական օգտագործման ապրանքի հետ իր նշանակությամբ, կիրառությամբ, որակական, տեխնիկական և այլ բնութագրերով:

Հոդված 268. Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) անձնական օգտագործման ապրանքների, բացառությամբ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների, հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության առաջացումը և դադարումը, դրանց վճարման ժամկետներն ու հաշվարկումը

1. Ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառմամբ մաքսային հայտարարագրման ենթակա՝ Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) անձնական օգտագործման ապրանքների, բացառությամբ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների, հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունն հայտարարատուի համար ծագում է ուղևորային մաքսային հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու պահից:

2. Ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառմամբ մաքսային հայտարարագրման ենթակա՝ Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) անձնական օգտագործման ապրանքների, բացառությամբ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների, հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը հայտարարատուի համար դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում.

1) մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարելը և (կամ) մաքսատուրքերը, հարկերը բռնագանձելը՝ սույն Օրենսգրքին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով.

2) Միության մաքսային տարածքով առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման տեղափոխվող կամ մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ ներմուծվող անձնական օգտագործման ապրանքներն ազատ շրջանառության համար բաց թողնելը, եթե այդ ապրանքների համար սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան սահմանված չեն այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումներ.

3) անձնական օգտագործման ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների՝ սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան սահմանված գործողության ժամկետը լրանալը՝ պայմանով, որ այդ ժամանակահատվածում մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված ժամկետը վրա չի հասել.

4) ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների՝ Միության մաքսային տարածքից մինչև այն ժամկետի լրանալն արտահանելը, որի ընթացքում այդպիսի տրանսպորտային միջոցները կարող են ժամանակավորապես գտնվել Միության մաքսային տարածքում.

5) ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածքից արտահանելն այն ժամկետը լրանալուն պես, որի ընթացքում այդ տրանսպորտային միջոցները կարող են ժամանակավորապես գտնվել Միության մաքսային տարածքում՝ հետևյալ պայմանների միաժամանակյա պահպանման դեպքում՝

այդպիսի տրանսպորտային միջոցների հայտարարագրումը՝ Միության մաքսային տարածքից արտահանելու նպատակով, իրականացվել է այն ժամկետը լրանալուց 6 ամսից ոչ ուշ, որի ընթացքում ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները կարող են ժամանակավորապես գտնվել Միության մաքսային տարածքում, կամ Հանձնաժողովի կողմից սահմանված ավելի երկար ժամկետից ոչ ուշ.

այդ տրանսպորտային միջոցների հետ կապված՝ վրա չի հասել մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը՝ սույն հոդվածի 6-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան.

6) սույն Օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները մաքսային ընթացակարգերով ձևակերպելը՝ պայմանով, որ մինչև այդ ձևակերպումը, սույն հոդվածի 5-րդ կետով սահմանված մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը վրա չի հասել.

7) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով անձնական օգտագործման ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը ճանաչելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մինչև այդ ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը, սույն հոդվածին համապատասխան, վրա է հասել այդ ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը.

8) անձնական օգտագործման ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականությունը (եկամուտը) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

9) մաքսային մարմնի կողմից անձնական օգտագործման ապրանքների բացթողումը մերժելը՝ կապված մաքսային մարմնի կողմից ուղևորային մաքսային հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության հետ.

10) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան ուղևորային մաքսային հայտարարագիրը հետ կանչելը՝ այդ ուղևորային մաքսային հայտարարագիրը գրանցելիս առաջացած մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության հետ կապված.

11) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան անձնական օգտագործման

ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը)՝ մինչև այդ արգելապահումն առաջացած մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության հետ կապված:

12) անձնական օգտագործման այն ապրանքները Միության մաքսային տարածքից արտահանելը, ժամանակավոր պահպանման հանձնելը կամ սույն Օրենսգրքին համապատասխան բաց թողնելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգի իրականացման) ընթացքում, որոնց առնչությամբ կայացվել է դրանք վերադարձնելու մասին որոշում, եթե նախկինում այդ ապրանքների՝ ազատ շրջանառության համար բացթողում չի իրականացվել՝ մինչև այդ որոշումը կայացնելն առաջացած մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության հետ կապված.

13) սույն Օրենսգրքի 270-րդ հոդվածի 5-րդ կետում նշված դեպքերում.

14) սույն Օրենսգրքի 270-րդ հոդվածի 10-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված դեպքում.

15) անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման միջոցները չեն կիրառվում սույն Օրենսգրքի 270-րդ հոդվածի 11-րդ կետի 4-րդ ենթակետին համապատասխան՝ մաքսատուրքերի, հարկերի այն գումարի առնչությամբ, որն անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ճանաչվել է բռնագանձման համար անհուսալի.

16) անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման միջոցները չեն կիրառվում սույն Օրենսգրքի 270-րդ հոդվածի 11-րդ կետի 5-րդ ենթակետին համապատասխան:

3. Հանձնաժողովն իրավունք ունի որոշելու այն հանգամանքները, որոնց ի հայտ գալու դեպքում դադարում է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունն այն դեպքերում, երբ անձնական օգտագործման միևնույն ապրանքների հետ կապված մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորությունը տարբեր անձանց համար առաջացել է տարբեր հանգամանքներում և (կամ) բազմիցս, այդ թվում, երբ մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորությունն առաջացել է մեկ անդամ պետությունում, իսկ այն հանգամանքները, որոնց ժամանակ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունը դադարում է, ի հայտ են եկել այլ անդամ պետությունում, ինչպես նաև այդ հանգամանքների ի հայտ գալու հաստատման գործում մաքսային մարմինների փոխգործակցության կարգը:

4. Ազատ շրջանառության նպատակով հայտարարագրվող անձնական օգտագործման ապրանքների առնչությամբ, բացառությամբ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների առնչությամբ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման (մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման)՝ մինչև անձնական օգտագործման այդ ապրանքներն ազատ շրջանառության համար բաց թողնելը:

5. Ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն Օրենսգրքի 6-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

6. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում սույն հոդվածի 5-րդ կետում նշված ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) սույն Օրենսգրքի 264-րդ հոդվածի պահանջների խախտմամբ անձնական օգտագործման այդ տրանսպորտային միջոցներն այլ անձանց փոխանցելու դեպքում՝ փոխանցման օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ, ապա Միության մաքսային տարածքում ժամանակավոր գտնվելու համար անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների բացթողման օրը.

2) այն ժամկետում անձնական օգտագործման այդ տրանսպորտային միջոցների կորստի դեպքում, որի ընթացքում այդ տրանսպորտային միջոցները կարող են ժամանակավորապես գտնվել Միության մաքսային տարածքում՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով դրանց ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի կորստի օրը, իսկ եթե այդ օրը չի սահմանվել, ապա Միության մաքսային տարածքում ժամանակավորապես գտնվելու համար անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների բացթողման օրը.

3) Միության մաքսային տարածքից չարտահանելու հետ կապված՝ անձնական օգտագործման այդ տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածքում գտնվելու դեպքում՝ այն ժամկետը լրանալու օրը, որի ընթացքում այդ տրանսպորտային միջոցները կարող են ժամանակավորապես գտնվել Միության մաքսային տարածքում՝ սույն Օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան.

7. Մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ ներմուծված անձնական օգտագործման ապրանքների առնչությամբ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան սահմանված՝ մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ ներմուծման պայմանների և (կամ) այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման մասով սահմանափակումների խախտմամբ գործողություններ կատարելու դեպքում:

Նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում մաքսատուրքերի, հարկերի վճարման ժամկետ է համարվում նշված գործողությունների իրականացման առաջին օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ, ապա անձնական օգտագործման ապրանքներն ազատ շրջանառության համար բացթողման օրը:

8. Սույն Օրենսգրքի 264-րդ հոդվածի 9-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածքից դրա արտահանման համար փոխանցման դեպքում, այն անձը, որին փոխանցվել է ժամանակավոր ներմուծված տրանսպորտային միջոցը, հայտարարագրողի հետ միասին

մաքսատուրքերը, հարկերը վճարելու համապարտ պարտավորություն է կրում:

9. Ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները սույն Օրենսգրքի 264-րդ հոդվածի պահանջների խախտմամբ այլ անձանց փոխանցելու դեպքում այդ անձինք անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների հայտարարատուի հետ կրում են մաքսատուրքերը, հարկերը վճարելու համապարտ պարտավորություն:

10. Ազատ շրջանառության համար բաց թողնելու նպատակով ժամանակավորապես ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրման դեպքում, ինչպես նաև սույն հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման, ինչպես դա կարվեր, եթե իրականացվեր անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների՝ ազատ շրջանառության համար բացթողում:

Այդ տրանսպորտային միջոցների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը հաշվարկելու համար կիրառվում են ուղևորային մաքսային այն հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ գործող մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերը, որի համաձայն անձնական օգտագործման նշված տրանսպորտային միջոցները բաց են թողնվել Միության մաքսային տարածք ժամանակավորապես ներմուծելու համար:

11. Սույն հոդվածի 7-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ ներմուծված անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման՝ մաքսային մարմնի կողմից ուղևորային մաքսային այն հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ հաշվարկված մաքսատուրքերի, հարկերի գումարների չափով, որին համապատասխան նշված անձնական օգտագործման ապրանքները բաց էին թողնվել ազատ շրջանառության համար, և մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատման հետ կապված չվճարված գումարների չափով:

12. Սույն Օրենսգրքի 259-րդ հոդվածի 2-րդ կետում նշված՝ ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունն այն անձի համար, որն իր ժամանակավոր կամ մշտական բնակության վայրում իրականացնում է անձնական օգտագործման այդ ապրանքների ժամանակավոր պահպանում, առաջանում է անձնական օգտագործման ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու պահից:

13. Սույն Օրենսգրքի 259-րդ հոդվածի 2-րդ կետում նշված՝ ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունն այն անձի համար, որն իր ժամանակավոր կամ մշտական բնակության վայրում իրականացնում է անձնական օգտագործման այդ ապրանքների ժամանակավոր պահպանում, դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարելը և (կամ) մաքսատուրքերը, հարկերը բռնագանձելը՝ սույն Օրենսգրքին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով.

2) անձնական օգտագործման այն ապրանքներն ազատ շրջանառության համար բաց թողնելը, որոնք ներմուծվում են մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ, եթե սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան՝ անձնական օգտագործման այդ ապրանքների առնչությամբ սահմանված չեն այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումներ.

3) անձնական օգտագործման այդպիսի ապրանքները Միության մաքսային տարածքից արտահանելը մինչև ժամանակավոր պահպանման ժամկետը լրանալը.

4) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով անձնական օգտագործման ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը ճանաչելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մինչև այդ ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը, սույն հոդվածին համապատասխան, վրա է հասել այդ ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը.

5) անձնական օգտագործման ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականությունը (եկամուտը) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

6) ապրանքները «ոչնչացում» մաքսային ընթացակարգով կամ «հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով ձևակերպելը.

7) մաքսային մարմինների կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան անձնական օգտագործման ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը)՝ մինչև այդ արգելապահումն առաջացած մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության հետ կապված.

8) սույն Օրենսգրքի 270-րդ հոդվածի 5-րդ կետում նշված դեպքերում.

9) սույն Օրենսգրքի 270-րդ հոդվածի 10-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված դեպքում.

10) անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման միջոցները չեն կիրառվում սույն Օրենսգրքի 270-րդ հոդվածի 11-րդ կետի 4-րդ ենթակետին համապատասխան՝ մաքսատուրքերի, հարկերի այն գումարի առնչությամբ, որն անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ճանաչվել է բռնագանձման համար անհուսալի.

11) անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման միջոցները չեն կիրառվում սույն Օրենսգրքի 270-րդ հոդվածի 11-րդ կետի 5-րդ ենթակետին համապատասխան.

14. Սույն Օրենսգրքի 259-րդ հոդվածի 2-րդ կետում նշված՝ ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների հետ կապված ժամանակավոր պահպանման դեպքում մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման՝ սույն հոդվածի 15-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

15. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում սույն հոդվածի 14-րդ կետում նշված ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) անձնական օգտագործման այդ ապրանքների կորստի դեպքում՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով անվերադարձ կորստի դեպքերի՝ այդ կորստի օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ, ապա անձնական օգտագործման ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրը.

2) անձնական օգտագործման այդ ապրանքներն այլ անձանց փոխանցելու դեպքում՝ այդ փոխանցման օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ, ապա անձնական օգտագործման ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելու համար ներկայացված դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրը:

16. Սույն հոդվածի 15-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման, ինչպես դա կարվեր, եթե իրականացվեր անձնական օգտագործման ապրանքների՝ ազատ շրջանառության համար բացթողում:

Այդպիսի տրանսպորտային միջոցների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը հաշվարկելու համար կիրառվում են մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետ հանդիսացող օրվա դրությամբ գործող մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերը:

17. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել անձնական օգտագործման այն ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության առաջացման, դադարեցման և մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետի վրա հասնելու հետ կապված այլ հանգամանքներ, որոնք տեղափոխվում են այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան այդ անդամ պետությունում մշտական բնակության տեղափոխվելու, փախստականի, հարկադիր տեղահանված անձի կարգավիճակ ստանալու մտադրություն ունեցող օտարերկրյա ֆիզիկական անձի կողմից:

18. Այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, այդ անդամ պետությունում մշտական բնակության տեղափոխվելու, փախստականի, հարկադիր տեղահանված անձի կարգավիճակ ստանալու մտադրություն ունեցող օտարերկրյա ֆիզիկական անձի կողմից տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների նկատմամբ սույն Օրենսգրքի 103-րդ հոդվածի դրույթները չեն կիրառվում:

19. Ոչ հավաստի հայտարարագրմամբ անձնական օգտագործման ապրանքները Միության մաքսային տարածքով անօրինականորեն տեղափոխելու դեպքում մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են սույն գլխին համապատասխան, բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքի: Ընդ որում, անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ փաստացի վճարված մաքսատուրքերի, հարկերի գումարները երկրորդ անգամ չեն վճարվում (բռնագանձվում), իսկ մաքսատուրքերի, հարկերի՝ ավել վճարված և (կամ) բռնագանձված գումարները ենթակա են վերադարձման՝ սույն Օրենսգրքին համապատասխան:

Միության մաքսային տարածքով այն ապրանքների ներմուծման փաստերի հայտնաբերման դեպքում, որոնք ներմուծելիս ֆիզիկական անձի կողմից հայտագրվել են որպես անձնական օգտագործման ապրանքներ և բաց են թողնվել ազատ շրջանառության համար, սակայն այդ ներմուծման պահին դրանք, սույն գլխի դրույթներին համապատասխան, չեն դասվել անձնական օգտագործման ապրանքների շարքին, մաքսատուրքերը, հարկերը հաշվարկվում են սույն Օրենսգրքի II բաժնին համապատասխան:

Հոդված 269. Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող՝ Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության առաջացումը և դադարումը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող՝ Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունն առաջանում է՝

1) փոստային կապի նշանակված օպերատորի համար՝ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների համար ուղևորային մաքսային հայտարարագիրը գրանցելու պահից, իսկ եթե անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան նախատեսված չէ ուղևորային մաքսային հայտարարագրի գրանցում, ապա ժամանակավոր պահպանման հանձնելու պահից.

2) միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքներն ստացողի համար՝ փոստային կապի նշանակված օպերատորի կողմից նշված անձի հասցեին անձնական օգտագործման ապրանքների՝ նրա հասցեով ստացման մասին ծանուցում ուղարկելու պահից:

2. Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող՝ Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարում է փոստային կապի նշանակված օպերատորի համար հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարելը և (կամ) մաքսատուրքերը, հարկերը բռնագանձելը սույն գլխին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով՝ սույն հոդվածի 6-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում.

2) Միության մաքսային տարածքով առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման տեղափոխվող կամ մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ ներմուծվող ապրանքների տրամադրում ստացողին ազատ շրջանառության համար բացթողումից հետո.

3) անձնական օգտագործման ապրանքներն ստացողի կողմից վճարված մաքսատուրքերը, հարկերն անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված հաշվին հաշվեգրելը.

4) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով անձնական օգտագործման ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը ճանաչելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ, մինչև այդ ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը, սույն հոդվածին համապատասխան, վրա է հասել այդ ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը.

5) անձնական օգտագործման ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականությունը (եկամուտը) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

6) անձնական օգտագործման ապրանքների վերադարձը դրանք ուղարկողին՝ սույն Օրենսգրքի 286-րդ հոդվածի 14-րդ կամ 17-րդ կետին համապատասխան:

3. Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարում է միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքներն ստացողի համար հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարելը և (կամ) մաքսատուրքերը, հարկերը բռնագանձելը՝ սույն գլխին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով.

2) առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման Միության մաքսային սահմանով տեղափոխվող կամ մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ ներմուծվող ապրանքների տրամադրում ստացողին դրանց ազատ շրջանառության համար բացթողումից հետո, եթե այդ ապրանքների նկատմամբ սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան չեն սահմանվել այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման մասով սահմանափակումներ.

3) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով անձնական օգտագործման ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը ճանաչելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մինչև այդ ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը, սույն հոդվածին համապատասխան, վրա է հասել այդ ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը.

4) անձնական օգտագործման ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականությունը (եկամուտը) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

5) անձնական օգտագործման ապրանքների վերադարձը դրանք ուղարկողին՝ սույն Օրենսգրքի 286-րդ հոդվածի 14-րդ կամ 17-րդ կետին համապատասխան:

4. Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող՝ Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է անձնական օգտագործման այդ ապրանքներն ստացողի կողմից կատարման (մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման)՝ մինչև անձնական օգտագործման այդ ապրանքներն ստացողին հանձնելը:

5. Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող՝ Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է փոստային կապի նշանակված օպերատորի կողմից կատարման սույն հոդվածի 6-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

6. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում սույն հոդվածի 5-րդ կետում նշված ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) ապրանքների կորստի օրը՝ անձնական օգտագործման ապրանքների կորստի դեպքում՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի դեպքերի, իսկ եթե այդ օրը որոշված չէ, ապա մաքսային մարմնի կողմից այդ կորուստը հայտնաբերելու օրը.

2) առանց մաքսատուրքերը, հարկերը վճարելու անձնական օգտագործման ապրանքները տրամադրելու դեպքում՝ այդ ապրանքները տրամադրելու օրը, իսկ եթե այդպիսի օր սահմանված չէ, ապա մաքսային մարմնի կողմից այդ

տրամադրումը հայտնաբերելու օրը:

7. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման, ինչպես դա կարվեր, եթե իրականացվեր անձնական օգտագործման ապրանքների՝ ազատ շրջանառության համար բացթողում:

Մաքսատուրքերը, հարկերը հաշվարկելու համար կիրառվում են միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների համար ուղևորային մաքսային հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ գործող մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերը:

Հոդված 270. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումը և այդ մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման կարգը

1. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորությունը կատարվում է մաքսատուրքերը, հարկերը վճարողի կողմից, այն անձանց կողմից, որոնք, սույն Օրենսգրքին համապատասխան, մաքսատուրքերը, հարկերը վճարող անձի հետ միասին կրում են մաքսատուրքերը, հարկերը վճարելու համապարտ պարտավորություն, եթե անդամ պետությունների օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ, կամ, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ, մաքսատուրքերը, հարկերը վճարելու սուբսիդիար պարտավորություն:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել նաև այլ անձանց կողմից մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարելու հնարավորություն:

2. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարվում է դրանք սույն Օրենսգրքի 266-րդ, 268-րդ և 269-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում, սույն Օրենսգրքին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա գումարների չափով վճարելու միջոցով:

Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ֆիզիկական անձին անհայտ կորած կամ անաշխատունակ ճանաչելու դեպքում անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

3. Վճարողի կողմից մաքսատուրքերը, հարկերը սույն Օրենսգրքով սահմանված ժամկետում վճարելու պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վճարվում են տույժեր:

Տույժերի հաշվեգրումը, վճարումը, բռնագանձումն ու վերադարձն իրականացվում են այն անդամ պետությունում, որտեղ սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 19-րդ կետին համապատասխան ենթակա են վճարման մաքսատուրքերը, հարկերը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Տույժերը չեն վճարվում այն դեպքում, երբ սույն Օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով մաքսատուրքերի, հարկերի բռնագանձում իրականացնող մաքսային մարմնի կողմից ստացվել է այն հանգամանքների ի հայտ գալու հաստատում, որոնց ժամանակ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունը դադարում է:

4. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում մաքսային մարմինն անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում մաքսատուրքերը, հարկերը վճարողին, ինչպես նաև այն անձանց, որոնք սույն Օրենսգրքին համապատասխան մաքսատուրքերը, հարկերը վճարողի հետ կրում են մաքսատուրքերը, հարկերը վճարելու համապարտ պարտավորություն կամ, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ, մաքսատուրքերը, հարկերը վճարելու սուբսիդիար պարտավորություն, ծանուցում է ուղարկում մաքսատուրքերի, հարկերի՝ սահմանված ժամկետում չվճարված գումարների մասին՝ բացառությամբ սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված դեպքերի և սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Նշված ծանուցման ձևը, դրանում նշված պահանջների կատարման կարգն ու ժամկետը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Այն դեպքերում, երբ անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 19-րդ կետին համապատասխան ենթակա են վճարման մեկ անդամ պետությունում, իսկ մաքսատուրքերի, հարկերի բռնագանձումը, սույն հոդվածի 12-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան, իրականացվում է մեկ այլ անդամ պետության մաքսային մարմնի կողմից, նշված ծանուցումն ուղարկվում է մաքսատուրքերի, հարկերի գանձումն իրականացնող մաքսային մարմնի կողմից՝ մաքսատուրքերի, հարկերի գանձման համար անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝ սույն Օրենսգրքի 1-ին հավելվածով նախատեսված կարգի համաձայն:

5. Մաքսային մարմինը չի ուղարկում սույն հոդվածի 4-րդ կետում նշված ծանուցումը հետևյալ դեպքերում՝

1) անձնական օգտագործման ապրանքները բաց թողնելուց հետո հայտնաբերվում է մաքսային մուտքի մեկ օրդերում կամ սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 24-րդ կետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանված այլ մաքսային փաստաթղթում հաշվարկված մաքսատուրքերը, հարկերը չվճարելու փաստը, որոնց հանրագումարը չի

գերազանցում սույն Օրենսգրքին համապատասխան մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման համար փոխարժեքի կիրառման օրը գործող փոխարժեքով՝ 2 եվրոյին համարժեք գումարը:

2) հայտնաբերվում է սույն Օրենսգրքի 266-րդ հոդվածի 20-րդ կետում նշված՝ մաքսատուրքերի, հարկերի մեկ հաշվարկում հաշվարկված մաքսատուրքերը, հարկերը չվճարելու փաստը, որոնց հանրագումարը չի գերազանցում սույն Օրենսգրքին համապատասխան մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման համար փոխարժեքի կիրառման օրը գործող փոխարժեքով՝ 2 եվրոյին համարժեք գումարը:

6. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել սույն հոդվածի 5-րդ կետում նշված դեպքերից տարբերվող դեպքեր, որոնց պարագայում սույն հոդվածի 4-րդ կետում նշված ծանուցումը չի ուղարկվում:

7. Սույն հոդվածի 5-րդ կետում նշված դեպքերում անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարում է:

8. Սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետում անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, ինչպես նաև սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այն դեպքերում, երբ այդ ծանուցումը չի ուղարկվում՝ անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերի, հարկերի բռնագանձումն իրականացնող մաքսային մարմինը սույն Օրենսգրքի 11-րդ գլխին համապատասխան միջոցներ է ձեռնարկում մաքսատուրքերը, հարկերը բռնագանձելու համար՝ հաշվի առնելով սույն հոդվածը:

9. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման միջոցներին են դասվում սույն Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ կետում նշված միջոցները:

10. Սույն Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ կետում նշված միջոցներից բացի անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման այնպիսի միջոց, ինչպիսին է այն ապրանքների վրա բռնագանձում տարածելը, որոնց հետ կապված մաքսատուրքեր, հարկեր չեն վճարվել, և անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման այլ միջոցներ:

Բռնագանձման տարածումն անձնական օգտագործման այնպիսի ապրանքների վրա, որոնց հետ կապված մաքսատուրքերը, հարկերը չեն վճարվել, դադարեցնում է այդպիսի ապրանքների հետ կապված մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորությունը:

11. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման միջոցներ չեն կիրառվում հետևյալ դեպքերում՝

1) անձնական օգտագործման հետ կապված չվճարված մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման ժամկետը, որը սահմանված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի մաքսային մարմնի կողմից իրականացվում է մաքսատուրքերի, հարկերի բռնագանձումը, լրացել է.

2) անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարել է մաքսատուրքերը, հարկերը վճարելու արդյունքում կամ սույն Օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ և 13-րդ կետերով և 269-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված այլ հանգամանքների արդյունքում.

3) անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարել է սույն հոդվածի 10-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան սահմանված՝ մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման միջոցների կիրառման արդյունքում.

4) մաքսատուրքերի, հարկերի գումարները, որոնց բռնագանձումը հնարավոր չի եղել այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի մաքսային մարմինն իրականացրել է այդպիսի գումարների բռնագանձումը, ճանաչվել են բռնագանձման համար անհուսալի.

5) վրա է հասել այն ֆիզիկական անձի մահը, որի մոտ սույն Օրենսգրքին համապատասխան առաջացել է անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորություն, կամ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան նրան մահացած ճանաչելը.

6) այլ դեպքերը, որոնք սահմանված են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի մաքսային մարմնի կողմից կատարվում է բռնագանձումը:

12. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը բռնագանձվում են այն մաքսային մարմինների կողմից, որոնք նշված են սույն Օրենսգրքի 69-րդ հոդվածում՝ հաշվի առնելով սույն կետի երկրորդ պարբերության դրույթները:

Սույն Օրենսգրքի 268-րդ հոդվածի 6-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում մաքսատուրքերը, հարկերը բռնագանձվում են այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որի տարածքում բացահայտվել են այդ հանգամանքները, իսկ այն դեպքում, երբ օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների հետ կապված տրամադրվել է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում՝ այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որի մաքսային մարմնին տրամադրվել է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում՝ այդ ապահովման հաշվին:

Մաքսային մարմինների փոխգործակցությունը մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու և մաքսատուրքերի, հարկերի բռնագանձված գումարներն այն անդամ պետությանը փոխանցելու հաշվին մաքսատուրքերը, հարկերը բռնագանձելիս, որտեղ մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման, իրականացվում է

սույն Օրենսգրքի 1-ին հավելվածով նախատեսված կարգով, իսկ սույն հավելվածով չկարգավորվող մասով՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

13. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերի, հարկերի, մաքսավճարների, տույժերի գումարները, որոնց բռնագանձումը հնարավոր չի եղել, ճանաչվում են բռնագանձման համար անհուսալի և դուրս են գրվում այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու հիմքերով, որի մաքսային մարմինն իրականացրել է այդպիսի գումարների բռնագանձումը:

14. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու ինչպես մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման առանձնահատկություններն այն դեպքերում, երբ անձնական օգտագործման միևնույն ապրանքի հետ կապված մաքսատուրքերի, հարկերի պարտավորությունն առաջացել է տարբեր հանգամանքներում և (կամ) բազմիցս, այնպես էլ մաքսային մարմինների փոխգործակցության կարգն այն դեպքերում, երբ սույն Օրենսգրքին համապատասխան, տարբեր անդամ պետություններում մաքսատուրքերը, հարկերը տարբեր հանգամանքներում ենթակա են վճարման:

Հոդված 271. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը

1. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է այդ ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս, սույն Օրենսգրքի 259-րդ հոդվածի 9-րդ կետի երկրորդ պարբերությամբ, 264-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում, ինչպես նաև անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

2. Սույն Օրենսգրքի 263-րդ հոդվածին համապատասխան անձնական օգտագործման ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում չի տրամադրվում սույն Օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքերում, ինչպես նաև հետևյալ դեպքերում՝

1) անձնական օգտագործման ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծվում են անդամ պետությունում մշտական բնակության տեղափոխված կամ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան փախստականի, հարկադիր տեղահանված անձի կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից՝ այդ ճանաչումը կամ այդ կարգավիճակը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու պայմանով.

2) անձնական օգտագործման ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծվում են անդամ պետությունում մշտական բնակության տեղափոխվելու, այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան փախստականի, հարկադիր տեղահանված անձի կարգավիճակ ստանալու մտադրություն ունեցող օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից՝ այդ մտադրությունը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու պայմանով.

3) սույն Օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված անձնական օգտագործման ապրանքները ներմուծվում են Միության մաքսային տարածք անդամ պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների, դիվանագիտական և վարչատեխնիկական անձնակազմի անդամների, անդամ պետությունների հյուպատոսական հիմնարկների ղեկավարների և հյուպատոսական այլ պաշտոնատար անձանց, հյուպատոսական ծառայողների, Միության մաքսային տարածքից դուրս տեղակայված միջազգային կազմակերպություններին կից՝ անդամ պետությունների ներկայացուցչությունների աշխատակիցների, իրենց հետ բնակվող իրենց ընտանիքի անդամների կամ այդ անձանց անունից կամ հանձնարարականով գործող այլ անձանց կողմից՝ մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ ներմուծման պայմանների պահպանումը հաստատող՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան տրամադրվող փաստաթղթերը ներկայացնելու պայմանով:

Հանձնաժողովը կազմում և ապահովում է նշված անձանց կողմից մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ ներմուծման պայմանների կատարումը հաստատող այն փաստաթղթերի ցանկի՝ Ինտերնետ ցանցում՝ Միության պաշտոնական կայքում տեղադրումը, որոնք տրվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

4) Միության մաքսային տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցների, հյուպատոսական հիմնարկների աշխատողների, միջազգային կազմակերպություններին կից՝ պետությունների ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների, այլ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների անձնակազմի (աշխատակիցների, պաշտոնատար անձանց), իրենց հետ բնակվող իրենց ընտանիքի անդամների կողմից Միության մաքսային տարածք ներմուծվող՝ սույն Օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետում նշված անձնական օգտագործման ապրանքները՝ այդպիսի աշխատակից, աշխատող, անձնակազմ կամ իրենց ընտանիքի անդամներ լինելու հանգամանքը հաստատելու պայմանով.

5) սույն Օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետում նշված անձնական օգտագործման ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծվում են դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների ղեկավարների, դիվանագիտական ներկայացուցչությունների դիվանագիտական անձնակազմի անդամների ու հյուպատոսական հիմնարկների հյուպատոսական պաշտոնատար անձանց, իրենց ընտանիքի անդամների կողմից՝

այդպիսի անձինք կամ իրենց հետ բնակվող իրենց ընտանիքի անդամներ լինելու հանգամանքը հաստատելու պայմանով.

6) այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում, որտեղ անձնական օգտագործման ապրանքները ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով:

3. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է մաքսատուրքերի, հարկերի վճարողի կողմից: Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել այլ անձինք, որոնք իրավունք ունեն մաքսատուրքեր, հարկեր վճարողի փոխարեն ապահովելու մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումը:

Եթե անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովում են մաքսատուրքեր, հարկեր վճարող չհամարվող անձինք, ապա այդ անձինք մաքսատուրքեր, հարկեր վճարողի հետ կրում են մաքսատուրքերը, հարկերը վճարելու համապարտ պարտավորություն:

4. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրվում է ապրանքների բացթողումն իրականացնող մաքսային մարմնին՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 146-րդ հոդվածի 7-րդ կետում նշված դեպքերի, ինչպես նաև սույն կետի երկրորդ և երրորդ պարբերություններով նախատեսված դեպքերի:

Սույն Օրենսգրքի 259-րդ հոդվածի 9-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրվում է այն մաքսային մարմնին, որին տրամադրվել է ժամանակավոր պահպանման տակ գտնվող՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ հանդիսացող ավտոտրանսպորտային ու մոտոտրանսպորտային միջոցների և (կամ) ավտոտրանսպորտային ու մոտոտրանսպորտային միջոցների կցանքների օգտագործման թույլտվություն:

Սույն Օրենսգրքի 264-րդ հոդվածի 9-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրվում է այն մաքսային մարմնին, որին տրամադրվել է անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների փոխանցման թույլտվություն:

5. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովվում է սույն Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետում նշված կամ սույն Օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված եղանակներով և մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունների կատարումն ապահովելու համար սույն Օրենսգրքին համապատասխան սահմանված կարգով:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են նախատեսվել այնպիսի դեպքեր, երբ անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը տրամադրվում է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու որոշակի միջոցներով՝ բացառությամբ անձնական օգտագործման ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման:

6. Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումն ապահովելու չափը սահմանվում է որպես մաքսատուրքերի, հարկերի գումար, որը ենթակա կլիներ վճարման այդ ապրանքներն ազատ շրջանառության համար բաց թողնելիս:

Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ անձնական օգտագործման ապրանքների առանձին կատեգորիաների համար կարող են սահմանվել մաքսատուրքերի, հարկերի կատարումն ապահովելու ֆիքսված չափեր՝ հաշվի առնելով սույն կետի առաջին պարբերությունը:

7. Որպես անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում մուտք արված դրամական միջոցների (փողի) վերադարձը (հաշվանցումը) իրականացվում է սույն Օրենսգրքի 10-րդ գլխին համապատասխան սահմանված դեպքերում և կարգով:

Գլուխ 38

Միության մաքսային սահմանով միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների տեղաշարժման կարգի և պայմանների առանձնահատկությունները

Հոդված 272. Միության մաքսային սահմանով միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների տեղաշարժման կարգի և պայմանների մասին ընդհանուր դրույթները

1. Միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները տեղաշարժվում են Միության մաքսային սահմանով և օգտագործվում են Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս սույն գլխով

սահմանված կարգով, իսկ սույն գլխով չկարգավորված մասով՝ սույն Օրենսգրքի այլ գլուխներով սահմանված կարգով:

2. Սույն գլխի դրույթները կիրառվում են հետևյալի նկատմամբ՝

1) Միության անդամ չհանդիսացող պետություններում օտարերկրյա անձանց անունով գրանցված՝ Միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծվող միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները (այդ թվում՝ դատարկ) այդ տարածքում և (կամ) դրա սահմաններից դուրս միջազգային փոխադրումն ավարտելու և (կամ) սկսելու համար.

2) Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս միջազգային փոխադրումն ավարտելու և (կամ) սկսելու համար Միության մաքսային տարածքից ժամանակավոր արտահանվող միջազգային փոխադրումներ իրականացնող այն տրանսպորտային միջոցները, այդ թվում՝ դատարկ, որոնք՝

գրանցվել են անդամ պետություններում անդամ պետությունների անձանց անունով և հանդես են գալիս որպես Միության ապրանքներ կամ, սույն Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին համապատասխան, համարվում են պայմանականորեն բաց թողնված ապրանքներ՝ բացառությամբ օդանավերի.

անդամ պետությունների անձանց կողմից միջազգային փոխադրում իրականացնելու նպատակով օգտագործվող օդանավերը, որոնք հանդես են գալիս որպես Միության ապրանքներ կամ, սույն Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին համապատասխան, համարվում են պայմանականորեն բաց թողնված ապրանքներ.

հանդես են գալիս որպես ապրանքներ, որոնք ձևակերպված են «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով:

3. Սույն գլխում՝ ժամանակավոր ներմուծվող (ժամանակավոր ներմուծված) միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներ ասելով ենթադրվում է սույն հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները, ժամանակավոր արտահանվող (ժամանակավոր արտահանված) միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներ ասելով՝ սույն հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները:

4. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված՝ Միության մաքսային տարածքում ժամանակավորապես գտնվելու և օգտագործվելու, Միության մաքսային տարածքից ժամանակավորապես արտահանելու, Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս գտնվելու և օգտագործվելու համար նախատեսված միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները ենթակա են մաքսային հայտարարագրման և բացթողման՝ առանց մաքսային ընթացակարգերով ձևակերպելու, եթե այլ բան սահմանված չէ սույն գլխով:

5. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրման և բացթողման հետ կապված մաքսային գործառնություններն իրականացվում են Միության մաքսային տարածքով ապրանքների տեղափոխման վայրերում:

6. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների՝ Միության մաքսային տարածքից արտահանումը և ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների՝ Միության մաքսային տարածք ներմուծումը կարող են իրականացվել Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման ցանկացած վայրում:

7. Սույն գլխի դրույթները կարող են կիրառվել հետևյալի նկատմամբ՝

1) Միության մաքսային տարածքից ժամանակավոր արտահանվող և Միության մաքսային տարածք հետ ներմուծվող՝

նավեր, որոնք օգտագործվում են ձկնորսության, ծովի հատակի ու դրա ընդերքի հանքային և այլ՝ ոչ կենդանի ռեսուրսների հետախուզման ու վերամշակման, նավատարի և սառցահատի միջոցով անցկացման, որոնողական, փրկարարական և քարշակման գործողությունների, ջրերում խորտակված գույքի դուրսբերման, ջրատեխնիկական, ստորջրյա-տեխնիկական, վերանորոգման-վերականգնման ու նման այլ աշխատանքների, ծովային միջավայրի սանիտարական, կարանտինային և այլ տեսակի հսկողության, պաշտպանության ու պահպանման համար, ուսուցողական, սպորտային և մշակութային, ինչպես նաև առևտրային ծովագնացության հետ կապված այլ նպատակներով ծովային գիտահետազոտական աշխատանքների անցկացման համար.

քաղաքացիական և պետական ոչ կոմերցիոն օդանավեր, օդանավեր, որոնք չեն օգտագործվում ապրանքների և ուղևորների միջազգային փոխադրումների համար, օգտագործվում են փորձարարական ավիացիայում (որն իրականացնում է փորձարարական թռիչքներ).

երկաթուղային տրանսպորտային միջոցներ (երկաթուղային շարժակազմ, երկաթուղային շարժակազմի միավորներ) (այսուհետ սույն գլխում՝ երկաթուղային տրանսպորտային միջոցներ), որոնք օգտագործվում են վերանորոգման-վերականգնման և ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ չառնչվող այլ աշխատանքների համար.

2) Միության մաքսային սահմանով տեղափոխվող՝

ցիստեռններ, վանդակներ, տակդիրներ, որոնք հանդես են գալիս որպես բազմաշրջանառու տարաներ և ենթակա են վերադարձման՝ գործարքի պայմաններին համապատասխան.

պահեստամասեր և սարքավորումներ, որոնք գտնվում են Միության մաքսային սահմանով տեղափոխվող միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցի վրա ու նախատեսված են Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս գտնվող միջազգային փոխադրումներ իրականացնող այլ տրանսպորտային միջոցի վերանորոգման և (կամ) շահագործման համար.

3) նավերով և օդանավերով Միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծվող բեռնարկղեր, որոնք օգտագործվում են դրանցում գտնվող ապրանքները տրանսպորտի այլ տեսակներով Միության մաքսային տարածքում կամ Միության մաքսային տարածքից դուրս ստացողին՝ փոխադրման պայմանագրին համապատասխան առաքելու համար:

8. Սույն հոդվածի 7-րդ կետում նշված տրանսպորտային միջոցների և այլ ապրանքների նկատմամբ կիրառվում են սույն գլխի՝ ժամանակավոր ներմուծվող (ժամանակավոր ներմուծված) և ժամանակավոր արտահանվող (ժամանակավոր արտահանված) միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցներին առնչվող դրույթները՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

9. Միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների՝ Միության մաքսային տարածքից արտահանվող կամ Միության մաքսային տարածք ներմուծվող, սույն հոդվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի երրորդ պարբերության մեջ նշված պահեստամասերով և սարքավորումներով փոխարինված մասերի ու սարքավորումների նկատմամբ կիրառվում են սույն գլխի՝ ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների՝ Միության մաքսային տարածքից հետադարձ արտահանումը կամ ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների՝ Միության մաքսային տարածք հետադարձ ներմուծումը կարգավորող դրույթները:

Սույն կետի առաջին պարբերության մեջ նշված միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների մասերը և սարքավորումները, որոնք Միության մաքսային տարածքից չեն արտահանվել սահմանված ժամկետում, ենթակա են օտարերկրյա ապրանքների համար կիրառվող մաքսային ընթացակարգերով ձևակերպման, բացառությամբ՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի:

Հոդված 273. Ժամանակավոր ներմուծվող (ժամանակավոր ներմուծված) միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածք ներմուծելու պայմանները

1. Ժամանակավոր ներմուծվող միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները ներմուծվում են Միության մաքսային տարածք՝ առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման:

2. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները, որոնք ներմուծվել են Միության մաքսային տարածք, պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը:

3. Մինչև սույն Օրենսգրքի 274-րդ հոդվածին համապատասխան սահմանված (երկարաձգված) ժամկետը լրանալը, ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները ենթակա են Միության մաքսային տարածքից հետադարձ արտահանման կամ օտարերկրյա ապրանքների համար կիրառվող մաքսային ընթացակարգերով ձևակերպման, բացառությամբ՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի:

Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները մաքսային ընթացակարգերով ձևակերպելուց հետո այդ տրանսպորտային միջոցներն օգտագործվում են Միության մաքսային տարածքում՝ հայտագրված մաքսային ընթացակարգին համապատասխան, և սույն գլխի դրույթները դրանց նկատմամբ չեն կիրառվում:

Հոդված 274. Ժամանակավոր ներմուծվող (ժամանակավոր ներմուծված) միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածքում գտնվելու ժամկետը

1. Ժամանակավոր ներմուծվող միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի՝ Միության մաքսային տարածքում գտնվելու ժամկետը սահմանվում է մաքսային մարմնի կողմից փոխադրողի դիմումի հիման վրա՝ ելնելով այն ժամանակից, որն անհրաժեշտ է միջազգային փոխադրում իրականացնող այդ տրանսպորտային միջոցը Միության մաքսային տարածքից արտահանելու համար՝ փոխադրման այն գործողությունների ավարտից հետո, որոնց կատարման համար այն ներմուծվել էր Միության մաքսային տարածք՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 144-րդ հոդվածը և սույն հոդվածի 2-րդ կետը:

2. Միության մաքսային տարածքում ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող այն տրանսպորտային միջոցի գտնվելու ժամկետը, որը սույն Օրենսգրքի 275-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան կարող է օգտագործվել բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռի այն փոխադրման համար, որն սկսվում և ավարտվում է Միության մաքսային տարածքում (սույն գլխում այսուհետ՝ ներքին փոխադրում), սահմանվում է այդ ներքին փոխադրումն իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակով, բայց ոչ ավելի, քան ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի՝ անդամ պետություններից մեկի տարածքում գտնվելու օրվանից 90 օրացուցային օր:

3. Միության մաքսային տարածքում սույն Օրենսգրքի 272-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետում նշված

ապրանքների գտնվելու ժամկետը սահմանվում է մաքսային մարմնի կողմից փոխադրողի դիմումի հիման վրա՝ ելնելով այն գործողությունների համար անհրաժեշտ ժամանակից, որոնց կատարման նպատակով դրանք ներմուծվում են Միության մաքսային տարածք:

4. Մաքսային մարմնի կողմից սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան սահմանված ժամկետում ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը Միության մաքսային տարածքից հետադարձ արտահանման անհնարինության դեպքում փոխադրողի, այն անձանց, որոնց տիրապետմանն են փոխանցվել այդ տրանսպորտային միջոցները՝ սույն Օրենսգրքի 275-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի երկրորդից չորրորդ պարբերություններին համապատասխան, այլ շահագրգիռ անձանց պատճառաբանված պահանջով այդ ժամկետը մաքսային մարմնի կողմից երկարաձգվում է Միության մաքսային տարածքից տրանսպորտային միջոցի հետադարձ արտահանման անհնարինության պատճառները վերացնելու համար անհրաժեշտ ժամանակով:

5. Սույն Օրենսգրքի 272-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ապրանքների՝ մաքսային մարմինների կողմից սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան սահմանված ժամկետում Միության մաքսային տարածքից հետադարձ արտահանման անհնարինության դեպքում փոխադրողի, այլ շահագրգիռ անձանց պատճառաբանված պահանջով այդ ժամկետը մաքսային մարմնի կողմից երկարաձգվում է Միության մաքսային տարածքից դրանց հետադարձ արտահանման անհնարինության պատճառները վերացնելու համար անհրաժեշտ ժամանակով:

6. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների՝ Միության մաքսային տարածքում գտնվելու ժամկետի երկարաձգման հետ կապված մաքսային գործառնությունների կատարման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Հոդված 275. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների՝ Միության մաքսային տարածքում գտնվելու և օգտագործման պայմանները

1. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները գտնվում և օգտագործվում են Միության մաքսային տարածքում՝ առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման՝ սույն հոդվածով սահմանված պայմանները պահպանելու դեպքում:

2. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները պետք է գտնվեն Միության մաքսային տարածք դրանց ներմուծումն իրականացնող անձանց փաստացի տիրապետման և օգտագործման ներքո՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն հոդվածին համապատասխան թույլատրվում է այդ տրանսպորտային միջոցները փոխանցել այլ անձանց:

3. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետ թույլատրվում է կատարել դրանց տեխնիկական սպասարկման և (կամ) վերանորոգման այնպիսի գործողություններ, որոնց անհրաժեշտությունն առաջացել է Միության մաքսային տարածքում դրանց ընթանալու կամ այդ տարածքում գտնվելու ժամանակ:

4. Միության մաքսային տարածքում չի թույլատրվում՝

1) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների օգտագործումը ներքին փոխադրման համար՝ բացառությամբ այդպիսի փոխադրման՝ սույն հոդվածի 5-րդ, 7-րդ և 8-րդ կետերում նշված դեպքերի.

2) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների փոխանցումն այլ անձանց, այդ թվում՝ վարձակալության (ենթավարձակալության)՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

դրանք փոխանցվել են տեխնիկական սպասարկման, վերանորոգման և (կամ) պահպանման համար.

դրանք փոխանցվել են Միության մաքսային տարածքից միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցն արտահանելու միջոցով փոխադրման գործողությունն ավարտելու նպատակով.

փոխանցվել են ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցը և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը՝ սույն հոդվածի 9-րդ կետով նախատեսված դեպքերում:

5. Ժամանակավոր ներմուծված երկաթուղային տրանսպորտային միջոցները և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը կարող են օգտագործվել ներքին փոխադրման համար, եթե այդ փոխադրումն իրականացվում է՝

1) այն միջազգային փոխադրումն ավարտվելուց հետո, որի կատարման համար միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցը և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը ներմուծվել են Միության մաքսային տարածք.

2) Միության մաքսային տարածքով միջազգային փոխադրում իրականացնող դատարկ երկաթուղային տրանսպորտային միջոցի և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերի ընթանալու ժամանակ՝ որպես այն միջազգային փոխադրման սկիզբ, որի կատարման համար միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցը և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով

փոխադրվող բեռնարկղերը ներմուծվել են Միության մաքսային տարածք.

3) Միության մաքսային տարածքով միջազգային փոխադրում իրականացնող դատարկ երկաթուղային տրանսպորտային միջոցի (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերի ընթանալու ժամանակ:

6. Անդամ պետության օրենսդրությամբ կարող են սահմանվել սահմանափակումներ այն մասով, թե քանի անգամ կարող են օգտագործվել սույն հոդվածի 5-րդ կետում նշված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցները և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը՝ այդ անդամ պետության տարածքով ներքին փոխադրումներ կատարելու համար:

7. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ հանդիսացող ժամանակավոր ներմուծված ավտոմոբիլային տրանսպորտային միջոցները, կցանքները, կիսակցանքները և (կամ) դրանցով փոխադրվող բեռնարկղերը կարող են օգտագործվել բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռի՝ մեկ անդամ պետության տարածքից սկսվող և մյուս անդամ պետության տարածքում ավարտվող ներքին փոխադրման համար հետևյալ դեպքերում՝

1) այդպիսի փոխադրումը թույլատրվում է ավտոմոբիլային տրանսպորտի ոլորտում անդամ պետությունների և երրորդ կողմի միջև կնքված միջազգային պայմանագրերով.

2) այդ փոխադրումն իրականացվում է Տրանսպորտի նախարարների եվրոպական համաժողովի բազմակողմանի քվոտաների շրջանակներում, և այն անդամ պետությունները, որոնց տարածքներում սկսվում և ավարտվում է այդ փոխադրումը, նշված համաժողովի մասնակիցներ են:

8. Ժամանակավոր ներմուծվող միջազգային փոխադրում իրականացնող ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտային միջոցները, որոնք ուղևորների և ուղեբեռի փոխադրումն իրականացնում են սահմանված երթուղու շրջանակներում, կարող են կանգ առնել Միության մաքսային տարածքում միջազգային փոխադրումների երթուղու ուղեգծով սահմանված կանգառներում ուղևորների նստեցման (իջեցման) և ուղեբեռի բեռնման (դատարկման) համար, եթե անդամ պետությունների և երրորդ կողմի միջև կնքված միջազգային պայմանագրերով, անդամ պետությունների միջև կնքված միջազգային պայմանագրերով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

9. Բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռի փոխադրում իրականացնող՝ ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցը, ինչպես նաև երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը կարող են Միության մաքսային տարածքում փոխանցվել՝

1) անդամ պետությունների երկաթուղային փոխադրողների, այդ թվում՝ մեկ անդամ պետության երկաթուղային փոխադրողների միջև.

2) անդամ պետությունների երկաթուղային փոխադրողների և այլ փոխադրողների միջև՝ տրանսպորտի տարբեր տեսակներով փոխադրման միասնական պայմանագրի շրջանակներում.

3) անդամ պետության երկաթուղային փոխադրողի կողմից փոխադրման պայմանագրին համապատասխան ապրանքներ ստացող անձանց (սույն գլխում այսուհետ՝ ստացողներ) կամ այդպիսի ստացողներից անդամ պետության երկաթուղային փոխադրողին կամ այլ փոխադրողի՝ ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերի՝ Միության մաքսային տարածքից հետադարձ արտահանման համար:

10. Բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռի փոխադրում իրականացնող՝ ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցի, ինչպես նաև երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերի փոխանցումը մեկ անդամ պետության երկաթուղային փոխադրողի կողմից մյուս անդամ պետության երկաթուղային փոխադրողին, մեկ անդամ պետության երկաթուղային փոխադրողների միջև, անդամ պետությունների երկաթուղային փոխադրողների և այլ փոխադրողների միջև՝ տրանսպորտի տարբեր տեսակներով փոխադրումների միասնական պայմանագրի շրջանակներում, անդամ պետության երկաթուղային փոխադրողներից ստացողներին՝ փոխադրման պայմանագրին համապատասխան, և այդպիսի ստացողներից երկաթուղային փոխադրողին՝ Միության մաքսային տարածքից արտահանման համար, իրականացվում է երկաթուղային տրանսպորտի ոլորտում անդամ պետությունների և երրորդ կողմի միջև կնքված միջազգային պայմանագրերին և Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ երկաթուղային տրանսպորտի գծով Միության ակտերին համապատասխան:

11. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցները և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը սույն հոդվածի 9-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքերում փոխանցելիս երկաթուղային փոխադրողը (նշված երկաթուղային տրանսպորտային միջոցները և (կամ) բեռնարկղերն ստացողին փոխանցելու դեպքում) և ստացողը (նշված երկաթուղային տրանսպորտային միջոցները և (կամ) բեռնարկղերը հետադարձ արտահանման համար անդամ պետության երկաթուղային փոխադրողին կամ այլ փոխադրողի փոխանցելու դեպքում) պարտավոր են այդ փոխանցման մասին ծանուցել այն մաքսային մարմնին, որի գործունեության տարածքում գտնվում է ստացողը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

12. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցները և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը սույն հոդվածի 9-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքերում փոխանցելիս ստացողը և այն փոխադրողը, որին այդ ստացողը փոխանցել է ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները և (կամ)

երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը Միության մաքսային տարածքից դրանց հետադարձ արտահանման համար, պարտավոր են պահպանել սույն Օրենսգրքի 273-րդ հոդվածի 3-րդ կետի և 274-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթները, ինչպես նաև ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների՝ Միության մաքսային տարածքում գտնվելու և օգտագործվելու՝ սույն հոդվածով նախատեսված պայմանները:

13. Անդամ պետությունների երկաթուղային փոխադրողները մաքսային մարմինների պահանջով ներկայացնում են սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան՝ ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցի և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող, այդ թվում՝ ներքին փոխադրումների համար օգտագործվող բեռնարկղերի գտնվելու վայրի մասին տեղեկատվություն:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել երկաթուղային փոխադրողների կողմից նշված տեղեկատվությունը մաքսային մարմիններ ներկայացնելու կարգը:

Հոդված 276. Ժամանակավոր արտահանվող (ժամանակավոր արտահանված) միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների՝ Միության մաքսային տարածքից արտահանվելու և Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս գտնվելու պայմանները

1. Ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները ժամանակավոր արտահանվում են Միության մաքսային տարածքից՝ առանց արտահանման մաքսատուրքերի վճարման:

2. Միության մաքսային տարածքից արտահանված և այդպիսի տարածք հետ ներմուծվող՝ ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը, իսկ սույն Օրենսգրքի 272-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի երկրորդ և երրորդ պարբերություններում նշված և սույն Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին համապատասխան պայմանականորեն բաց թողնված ապրանքներ համարվող միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները, ինչպես նաև սույն Օրենսգրքի 272-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները՝ օտարերկրյա ապրանքների կարգավիճակը:

3. Ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածք են ներմուծվում, առանց ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու, ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների՝ Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս գտնվելու և օգտագործման պայմանները պահպանելու դեպքում:

4. Ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների՝ Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս գտնվելու ժամկետը չի սահմանափակվում:

5. Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս գտնվող՝ Միության ապրանքներ հանդիսացող՝ ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները կարող են ձևակերպվել «արտահանում» մաքսային ընթացակարգով:

6. Սույն Օրենսգրքի 272-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի երկրորդ և երրորդ պարբերություններում նշված և սույն Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին համապատասխան պայմանականորեն բաց թողնված ապրանքներ համարվող՝ Միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները, որոնք գտնվում են Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս, կարող են ձևակերպվել «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով:

7. Սույն Օրենսգրքի 272-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված՝ ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները, որոնք գտնվում են Միության մաքսային տարածքից դուրս, կարող են ձևակերպվել «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով:

8. Ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ սեփականության իրավունքներն օտարերկրյա անձին փոխանցելու դեպքում անդամ պետության անձը, որն այդպիսի գործարքի կողմերից մեկն է, սեփականության իրավունքի փոխանցման օրվանից սկսած՝ 30 օրացուցային օրվա ընթացքում, ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող այդ տրանսպորտային միջոցը ձևակերպում է «արտահանում» մաքսային ընթացակարգով, իսկ 272-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի երկրորդ և երրորդ պարբերություններում նշված և սույն Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին համապատասխան պայմանականորեն բաց թողնված ապրանք համարվող կամ սույն Օրենսգրքի 272-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքն օտարերկրյա անձին փոխանցելու դեպքում՝ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով:

Հոդված 277. Ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս օգտագործելու պայմանները

1. Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետ թույլատրվում է կատարել հետևյալ գործողությունները՝

1) տեխնիկական սպասարկման և (կամ) վերանորոգման գործողություններ (բացառությամբ հիմնանորոգման, արդիականացման), որոնք անհրաժեշտ են դրանց պահպանվածությունն ապահովելու, դրանք շահագործելու և այն վիճակում պահպանելու համար, որում դրանք գտնվել են Միության մաքսային տարածքից արտահանելու օրը, եթե այդ գործողությունների անհրաժեշտությունն առաջացել է միջազգային փոխադրում իրականացնող այդ տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս օգտագործելու ժամանակ.

2) անհատույց (երաշխիքային) վերանորոգման գործողություններ.

3) վերանորոգման գործողություններ՝ ներառյալ հիմնանորոգումը, որոնք իրականացվում են ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս տեղի ունեցած վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով վնասվելուց հետո վերականգնելու համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի դրույթները չեն տարածվում անդամ պետությունների նավերի միջազգային ռեեստրներում գրանցված՝ որպես միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ ժամանակավոր արտահանված նավերի վրա: Թույլատրվում է այդ նավերի հետ տեխնիկական սպասարկման և (կամ) վերանորոգման գործողությունների կատարումը:

3. Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս գտնվող՝ ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետ սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով չնախատեսված գործողությունների կատարումը, բացառությամբ սույն Օրենսգրքի 272-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների, թույլատրվում է՝ այդ տրանսպորտային միջոցները «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանով:

Ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներն առանց «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով չնախատեսված գործողություններ կատարելու դեպքում Միության մաքսային տարածք ներմուծելիս միջազգային փոխադրում իրականացնող այդպիսի տրանսպորտային միջոցները ենթակա են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպման՝ սույն Օրենսգրքի 186-րդ հոդվածին համապատասխան ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարմամբ: Ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով չձևակերպելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման՝ սույն Օրենսգրքի 56-րդ հոդվածին և 72-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

4. Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս գտնվող՝ սույն Օրենսգրքի 272-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետ սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով չնախատեսված գործողությունների կատարումը թույլատրվում է առանց դրանք «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու:

Եթե միջազգային փոխադրում իրականացնող այդպիսի տրանսպորտային միջոցների հետ կատարվում են սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով չնախատեսված գործողություններ, «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված և որպես միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ օգտագործվող ապրանքների հայտարարատուն ոչ ուշ, քան այդ գործողությունների կատարման օրվան հաջորդող օրվանից 30 օրացուցային օր հետո, ներկայացնում է սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով չնախատեսված գործողություններ կատարելու մասին դիմում և կատարված գործողությունների արժեքը հաստատող փաստաթղթեր:

Նշված դիմումը ներկայացվում է ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպած մաքսային մարմին կամ այն անդամ պետության որևէ այլ մաքսային մարմին, որտեղ այդ ապրանքները ձևակերպվել են այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով:

Մաքսային մարմնի կողմից նշված դիմումի արձանագրման պահից այդ դիմումը դառնում է իրավական նշանակություն ունեցող փաստերի մասին վկայող փաստաթուղթ:

Այդպիսի դիմումի ձևը, էլեկտրոնային փաստաթղթի տեսքով այդպիսի դիմումի կառուցվածքը և ձևաչափը, դրանց լրացման, այդպիսի դիմումում փոփոխությունների (լրացումների) կատարման կարգը, ինչպես նաև այդպիսի դիմում ներկայացնելու, գրանցելու և գրանցումը մերժելու հետ կապված մաքսային գործառնություններ կատարելու կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից, իսկ Հանձնաժողովի կողմից չկարգավորվող մասում՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան սահմանվող կարգով:

Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս գտնվող՝ սույն Օրենսգրքի 272-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերությունում նշված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետ սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով չնախատեսված գործողություններ կատարելու դեպքում «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված և որպես միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ օգտագործվող ապրանքների հայտարարատուի համար առաջանում է

ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորություն:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման նախքան մաքսային մարմնի կողմից սույն կետի երկրորդ պարբերությունում նշված մաքսային փաստաթուղթը գրանցելը:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման սույն Օրենսգրքի 186-րդ հոդվածին համապատասխան հաշվարկված չափով:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարում է ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը կատարելու և (կամ) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը սույն կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով բռնագանձելու դեպքում:

Հոդված 278. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրումը և բացթողումը

1. Միության մաքսային սահմանով տեղափոխվող միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները ենթակա են մաքսային հայտարարագրման և բացթողման՝

1) ժամանակավոր ներմուծվող միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածք ներմուծելու և միջազգային փոխադրում իրականացնող այդ տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածքից հետ արտահանելու դեպքում.

2) ժամանակավոր արտահանվող միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածքից արտահանելու և միջազգային փոխադրում իրականացնող այդ տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածք հետ ներմուծելու դեպքում:

2. Որպես միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հայտարարատու հանդես է գալիս փոխադրողը:

Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնությունները փոխադրողի անունից կարող են կատարվել փոխադրողի հանձնարարությամբ գործող այլ անձանց կողմից, եթե դա թույլատրվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

3. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրումն իրականացվում է տրանսպորտային միջոցի հայտարարագրի օգտագործմամբ:

Տրանսպորտային միջոցի հայտարարագրում նշման ենթակա տեղեկությունները սահմանվում են Հանձնաժողովի կողմից՝ ապրանքների փոխադրումն իրականացնող տրանսպորտի տեսակից, Միության մաքսային սահմանով միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի տեղափոխման ուղղությունից, ինչպես նաև սույն Օրենսգրքի 272-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ապրանքների կատեգորիայից կախված՝ այդպիսի մաքսային հայտարարագիր լրացնելու կարգը սահմանելու ժամանակ:

4. Որպես տրանսպորտային միջոցի հայտարարագիր կարող են օգտագործվել տրանսպորտի ոլորտում անդամ պետությունների և երրորդ կողմի միջև կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված՝ փոխադրողի ստանդարտ փաստաթղթերը:

Եթե որպես տրանսպորտային միջոցի հայտարարագիր ներկայացված՝ տրանսպորտի ոլորտում անդամ պետությունների և երրորդ կողմի միջև կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված՝ փոխադրողի ստանդարտ փաստաթղթերում բացակայում են տրանսպորտային միջոցի հայտարարագրում նշման ենթակա տեղեկությունները, ապա միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրումն իրականացվում է տրանսպորտային միջոցի մասին սահմանված ձևի հայտարարագիր ներկայացնելու միջոցով: Ընդ որում, ներկայացված՝ փոխադրողի ստանդարտ փաստաթղթերը դիտարկվում են որպես տրանսպորտային միջոցի հայտարարագրի անբաժանելի մաս:

Նշված փաստաթղթերի ցանկը սահմանվում է Հանձնաժողովի կողմից՝ կախված տրանսպորտի այն տեսակից, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը, և Միության մաքսային տարածքով միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի տեղափոխման ուղղությունից:

Որպես տրանսպորտային միջոցի հայտարարագիր թույլատրվում է օգտագործել էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ներկայացված նախնական տեղեկատվությունը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

5. Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով տրանսպորտային միջոցի հայտարարագրի հետ մաքսային մարմին չեն ներկայացվում տրանսպորտային միջոցի հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթեր:

Թղթային կրիչով տրանսպորտային միջոցի հայտարարագրի հետ մաքսային մարմին չեն ներկայացվում տրանսպորտային միջոցի հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթեր:

6. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող այն տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածքից հետ արտահանելու և այդ տարածք ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող այն տրանսպորտային միջոցները հետ ներմուծելու դեպքում, որոնց մաքսային հայտարարագրումն իրականացվել է գրավոր ձևով, որպես տրանսպորտային միջոցի հայտարարագիր թույլատրվում է օգտագործել տրանսպորտային միջոցի մասին այն հայտարարագիրը, որը ներկայացվել է մաքսային մարմին,

համապատասխանաբար՝ ժամանակավոր ներմուծված կամ ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրման ժամանակ:

Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու այլ դեպքեր, երբ Միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծված և Միության մաքսային տարածքից ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրման համար մաքսային մարմին ներկայացված տրանսպորտային միջոցի հայտարարագիրը կարող է օգտագործվել միջազգային փոխադրում իրականացնող այդ տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրման ժամանակ՝ ապրանքների միջազգային փոխադրում իրականացնելու ընթացքում Միության մաքսային տարածքով դրանց բազմակի տեղափոխման դեպքում:

Հոդված 279. Ժամանակավոր ներմուծվող (ժամանակավոր ներմուծված) միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետ կապված ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացումն ու դադարումը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. Ժամանակավոր ներմուծվող (ժամանակավոր ներմուծված) միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետ կապված ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է՝

1) ժամանակավոր ներմուծվող միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի հայտարարատուի համար՝ մաքսային մարմնի կողմից տրանսպորտային միջոցի հայտարարագիրը գրանցելու պահից.

2) անդամ պետության այն երկաթուղային փոխադրողի համար, որն անդամ պետության մեկ այլ երկաթուղային փոխադրողից ընդունել է ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցը և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը դրանք՝ Միության մաքսային տարածքի սահմաններում փոխադրելու համար՝ նշված երկաթուղային տրանսպորտային միջոցը և (կամ) բեռնարկղերը սույն Օրենսգրքի 275-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան փոխադրման համար ընդունելու պահից.

3) այն փոխադրողի համար, որը ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցը և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերն ընդունել է տրանսպորտի տարբեր տեսակներով փոխադրման միասնական պայմանագրի շրջանակներում Միության մաքսային տարածքի սահմաններում փոխադրելու համար՝ նշված երկաթուղային տրանսպորտային միջոցը և (կամ) բեռնարկղերը սույն Օրենսգրքի 275-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան փոխադրման համար ընդունելու պահից.

4) այն ստացողի համար, որն անդամ պետության փոխադրողից փոխադրման պայմանագրին համապատասխան ընդունել է ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցը և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը՝ նշված երկաթուղային տրանսպորտային միջոցը և (կամ) բեռնարկղերը սույն Օրենսգրքի 275-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան ընդունելու պահից.

5) անդամ պետության այն երկաթուղային փոխադրողի համար, որը փոխադրման պայմանագրին համապատասխան ընդունել է ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցը և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը՝ Միության մաքսային տարածքից դրանց հետադարձ արտահանման համար՝ նշված երկաթուղային տրանսպորտային միջոցը և (կամ) բեռնարկղերը սույն Օրենսգրքի 275-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան փոխադրման համար ընդունելու պահից.

6) փոխադրողի համար՝ բացառությամբ անդամ պետության այն երկաթուղային փոխադրողի, որը փոխադրման պայմանագրին համապատասխան ստացողից ընդունել է երկաթուղային տրանսպորտային միջոցով ժամանակավոր ներմուծված բեռնարկղը՝ Միության մաքսային տարածքից դրա հետադարձ արտահանման համար՝ փոխադրման պայմանագրին համապատասխան նշված բեռնարկղը փոխադրման համար ընդունելու պահից:

2. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետ կապված ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը սույն հոդվածի 1-ին կետի 1-4-րդ ենթակետերում նշված անձանց համար դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի հետադարձ արտահանում՝ պայմանով, որ նախքան այդ արտահանումը ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը վրա չի հասել.

2) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի հետադարձ արտահանում սույն հոդվածի 8-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո, և մաքսատուրքերի, հարկերի վճարում և (կամ) բռնագանձում՝ սույն հոդվածի 11-րդ կետին համապատասխան.

3) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի ձևակերպում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով.

4) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի ձևակերպում սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով՝ բացառությամբ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգի՝ պայմանով, որ նախքան մաքսային ընթացակարգերով այդպիսի ձևակերպումը ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը վրա չի հասել.

5) սույն հոդվածի 8-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի ձևակերպում սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով՝ բացառությամբ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգի, և մաքսատուրքերի, հարկերի վճարում՝ սույն հոդվածի 12-րդ կետին համապատասխան սահմանված չափով.

6) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) սույն հոդվածի 10-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձում.

7) վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող այդ տրանսպորտային միջոցի անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան վրա է հասել ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող այդ տրանսպորտային միջոցի հետ կապված ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը.

8) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

9) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

10) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող այն տրանսպորտային միջոցը ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որն առգրավվել կամ արգելանքի տակ է դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որի վերաբերյալ այն վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող այդ տրանսպորտային միջոցի բացթողում չի իրականացվել:

3. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետ կապված ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն անդամ պետության երկաթուղային այն փոխադրողի համար, որը հանդես է եկել որպես ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցի և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերի հայտարարատու, դադարում է երբ նշված երկաթուղային տրանսպորտային միջոցը և (կամ) բեռնարկղերը սահմանված կարգով փոխանցվում են անդամ պետության մեկ այլ երկաթուղային փոխադրողին, այլ փոխադրողի՝ տրանսպորտի տարբեր տեսակներով փոխադրման միասնական պայմանագրի շրջանակներում փոխադրման դեպքում, կամ ստացողին՝ փոխադրման պայմանագրին համապատասխան՝ պայմանով, որ նախքան այդ փոխանցումը ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը վրա չի հասել.

4. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետ կապված ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված անձի համար դադարում է երբ ժամանակավոր ներմուծված երկաթուղային տրանսպորտային միջոցը կամ երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը սահմանված կարգով փոխանցվում են անդամ պետության մեկ այլ երկաթուղային փոխադրողին, այլ փոխադրողի՝ տրանսպորտի տարբեր տեսակներով փոխադրման միասնական պայմանագրի շրջանակներում փոխադրման դեպքում, կամ ստացողին՝ փոխադրման պայմանագրին համապատասխան՝ պայմանով, որ նախքան այդ փոխանցումը ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը վրա չի հասել.

5. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետ կապված ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը սույն հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետում նշված անձանց համար դադարում է երբ ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցը կամ երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերը սահմանված կարգով փոխանցվում են անդամ պետության երկաթուղային փոխադրողին կամ այլ փոխադրողի Միության մաքսային տարածքից հետադարձ

արտահանման համար՝ պայմանով, որ նախքան այդ փոխանցումը ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը վրա չի հասել.

6. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետ կապված ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը սույն հոդվածի 1-ին կետի 5-րդ և 6-րդ ենթակետերում նշված անձանց համար դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցի և (կամ) երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերի հետադարձ արտահանում՝ պայմանով, որ նախքան այդ արտահանումը ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը վրա չի հասել.

2) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի հետադարձ արտահանում սույն հոդվածի 8-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո, և մաքսատուրքերի, հարկերի վճարում՝ սույն հոդվածի 11-րդ կետին համապատասխան.

3) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցի կամ երկաթուղային տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերի փոխանցում անդամ պետության երկաթուղային փոխադրողին կամ այլ փոխադրողի՝ Միության մաքսային տարածքից հետադարձ արտահանման համար՝ պայմանով, որ նախքան այդ փոխանցումը ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը վրա չի հասել.

4) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող երկաթուղային տրանսպորտային միջոցի ձևակերպում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով.

5) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի ձևակերպում սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով՝ բացառությամբ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգի՝ պայմանով, որ նախքան մաքսային ընթացակարգերով այդպիսի ձևակերպումը ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը վրա չի հասել.

6) սույն հոդվածի 8-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի ձևակերպում սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով՝ բացառությամբ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգի, և մաքսատուրքերի, հարկերի վճարում՝ սույն հոդվածի 12-րդ կետին համապատասխան սահմանված չափով.

7) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) սույն հոդվածի 10-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձում.

8) վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող այդ տրանսպորտային միջոցի անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան վրա է հասել ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող այդ տրանսպորտային միջոցի հետ կապված ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը.

9) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

10) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

11) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող այն տրանսպորտային միջոցը ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որն առգրավվել կամ արգելանքի տակ է դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որի վերաբերյալ այն վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող այդ տրանսպորտային միջոցի բացթողում չի իրականացվել:

7. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն հոդվածի 8-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

8. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) սույն Օրենսգրքի 275-րդ հոդվածի 4-րդ կետում նշված գործողությունները կատարելու դեպքում՝ նշված գործողությունները կատարելու առաջին օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ, ապա այդ ապրանքները որպես

ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ բաց թողնելու օրը.

2) ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների կորստի դեպքում՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով դրանց ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի արդյունքում անվերադարձ կորստի՝ միջազգային փոխադրումներ իրականացնող այդպիսի տրանսպորտային միջոցների կորստի օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ, ապա այդպիսի ապրանքները որպես ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ բաց թողնելու օրը:

9. Սույն հոդվածի 8-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն Օրենսգրքի 275-րդ հոդվածի 4-րդ կետում նշված գործողությունները կատարած կամ ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները կորցրած անձի կողմից:

10. Սույն հոդվածի 8-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը ձևակերպվեր «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման, եթե սույն հոդվածի 11-րդ և 12-րդ կետերով այլ չափ նախատեսված չէ:

Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում են մաքսային մարմնի կողմից տրանսպորտային միջոցի հայտարարագիրը գրանցվելու օրվա դրությամբ գործող ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը:

Եթե մաքսային մարմինը չունի ճշգրիտ տեղեկություններ ապրանքների (դրանց բնույթի, անվանման, քանակի, ծագման և (կամ) մաքսային արժեքի) մասին, վճարման ենթակա ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման բազան որոշվում է մաքսային մարմնի ունեցած տեղեկությունների հիման վրա, իսկ ապրանքների դասակարգումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները:

Եթե ապրանքի ծածկագիրն Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանվել է 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով, ապա՝

ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հարկերի հաշվարկման համար կիրառվում են այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող ավելացված արժեքի հարկի դրույքաչափերից ամենամեծը և ակցիզների (ակցիզային հարկի կամ ակցիզային տուրքի) դրույքաչափերից ամենամեծը, որոնց համար սահմանվել է մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը՝ հաշվի առնելով սույն կետի ութերորդ պարբերությունը:

Հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար սույն Օրենսգրքի 4-րդ գլխին համապատասխան հաստատված ապրանքների ծագումից: Եթե հնարավոր չէ որոշել ապրանքների ծագումը՝ այդ ապրանքների ծագման մասին փաստաթղթերի բացակայության պատճառով, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը, որոնք սահմանվել են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն ծածկագրին դասվող ապրանքների համար, եթե ապրանքի դասակարգումն իրականացվել է 10 նիշի մակարդակով, կամ խմբավորման մեջ մտնող ապրանքների համար, եթե ապրանքների ծածկագրերն Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, սահմանվել են 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով:

Ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները հետագայում պարզվելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով այդ ճշգրիտ տեղեկություններից, և իրականացվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի՝ ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված գումարների վերադարձ (հաշվանցում) կամ չվճարված գումարների բռնագանձում՝ սույն Օրենսգրքի 10-րդ և 11-րդ գլուխներին ու 76-րդ և 77-րդ հոդվածներին համապատասխան:

11. Սույն հոդվածի 8-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետադարձ արտահանման դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման այն ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարներին համապատասխանող չափերով, որոնք ենթակա կլինեին վճարման, եթե այդ ապրանքները ձևակերպվեին «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով այդ ապրանքները որպես ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ բաց թողնելու օրվան հաջորդող

օրվանից մինչև դրանց փաստացի արտահանման օրն ընկած ժամանակահատվածի համար:

12. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով ձևակերպելու դեպքում, բացառությամբ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգի, սույն հոդվածի 8-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման այն ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարներին համապատասխանող չափերով, որոնք ենթակա կլինեին վճարման, եթե այդ ապրանքները ձևակերպվեին «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով՝ այդ ապրանքները որպես ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ բաց թողնելու օրվան հաջորդող օրվանից մինչև դրանք մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրն ընկած ժամանակահատվածի համար ներմուծման մաքսատուրքերի, հարկերի մասնակի վճարմամբ:

13. Ժամանակավոր ներմուծված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումից և (կամ) դրանց (ամբողջական կամ մասնակի) բռնագանձումից հետո սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին համապատասխան:

Հոդված 280. Ժամանակավոր արտահանվող (ժամանակավոր արտահանված) միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետ կապված արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության առաջացումն ու դադարումը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. Միության ապրանքներ հանդիսացող՝ ժամանակավոր արտահանվող միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետ կապված արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը միջազգային փոխադրում իրականացնող այդպիսի տրանսպորտային միջոցների հայտարարատուի համար առաջանում է մաքսային մարմնի կողմից տրանսպորտային միջոցի հայտարարագիրը գրանցելու պահից:

2. Միության ապրանքներ հանդիսացող՝ ժամանակավոր արտահանվող (ժամանակավոր արտահանված) միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետ կապված արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը միջազգային փոխադրում իրականացնող այդ տրանսպորտային միջոցների հայտարարատուի համար դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետադարձ ներմուծում Միության մաքսային տարածք.

2) ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների ձևակերպում «արտահանում» մաքսային ընթացակարգով.

3) արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) դրանց բռնագանձում՝ սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով.

4) ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

5) մաքսային մարմինների կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներն արգելանքի վերցնելը (արգելապահելը)՝ նախքան այդ արգելանքի վերցնելը (արգելապահելը) առաջացած արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

6) ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող այն տրանսպորտային միջոցները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող այդ տրանսպորտային միջոցների բացթողում չի իրականացվել:

3. Միության ապրանքներ հանդիսացող՝ ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մասով արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

4. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում արտահանման մաքսատուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) Միության ապրանքներ հանդիսացող՝ ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների կորստի դեպքում՝ կորստի օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ, ապա այդ ապրանքները որպես ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ բաց թողնելու օրը.

2) Միության ապրանքներ հանդիսացող՝ ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների նկատմամբ սեփականության իրավունքը՝ առանց սույն Օրենսգրքի 276-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան այդ տրանսպորտային միջոցները «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու, օտարերկրյա անձին փոխանցելու դեպքում՝ փոխանցման օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ, ապա այդ ապրանքները որպես ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ բաց թողնելու օրը:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո արտահանման մաքսատուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կարվեր, եթե ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները ձևակերպվեին «արտահանում» մաքսային ընթացակարգով՝ առանց արտահանման մաքսատուրքերի վճարման արտոնությունների կիրառման:

Արտահանման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում են մաքսային մարմնի կողմից տրանսպորտային միջոցի հայտարարագիրը գրանցելու օրվա դրությամբ գործող արտահանման մաքսատուրքերի դրույքաչափերը:

Այն դեպքում, երբ մաքսային մարմինը չունի ապրանքների (դրանց բնույթի, անվանման, քանակի, ծագման և (կամ) մաքսային արժեքի) մասին ճշգրիտ տեղեկություններ, վճարման ենթակա արտահանման մաքսատուրքերի հաշվարկման համար բազան որոշվում է մաքսային մարմնի մոտ առկա տեղեկությունների հիման վրա, իսկ ապրանքների դասակարգումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները:

Եթե ապրանքի ծածկագիրն Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանված է 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով, ապա արտահանման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող արտահանման մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը:

Ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները հետագայում որոշելու դեպքում արտահանման մաքսատուրքերը հաշվարկվում են՝ ելնելով այդ ճշգրիտ տեղեկություններից, և իրականացվում է արտահանման մաքսատուրքերի՝ ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված գումարների վերադարձ (հաշվանցում) կամ չվճարված գումարների բռնագանձում՝ սույն Օրենսգրքի 10-րդ և 11-րդ գլուխներին համապատասխան:

6. Ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածք հետադարձ ներմուծելու կամ ժամանակավոր արտահանված միջազգային փոխադրում իրականացնող այդպիսի տրանսպորտային միջոցները «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարումից և (կամ) դրանց (ամբողջական կամ մասնակի) բռնագանձումից հետո սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված արտահանման մաքսատուրքերը ենթակա են վերադարձման՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին համապատասխան:

Գլուխ 39

Միության մաքսային սահմանով պաշարների տեղափոխման կարգի և պայմանների առանձնահատկությունները

Հոդված 281. Ընդհանուր դրույթներ Միության մաքսային սահմանով պաշարների տեղափոխման կարգի և պայմանների մասին

1. Պաշարները Միության մաքսային սահմանով տեղափոխվում են և Միության մաքսային տարածքում կամ Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս օգտագործվում են սույն գլխով սահմանված կարգով, իսկ սույն գլխով չկարգավորված մասով՝ սույն Օրենսգրքի այլ գլուխներով սահմանված կարգով:

2. Միության մաքսային տարածքում գտնվելու և օգտագործվելու կամ Միության մաքսային տարածքից արտահանվելու և Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս օգտագործվելու համար Միության մաքսային սահմանով տեղափոխվող պաշարները ենթակա են մաքսային հայտարարագրման և բացթողման այն կարգով և պայմաններով, որոնք նախատեսված են սույն գլխով՝ առանց մաքսային ընթացակարգերով ձևակերպելու:

3. Միության մաքսային տարածք ներմուծված՝ որպես պաշար օգտագործվող օտարերկրյա ապրանքները պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը:

4. Միության՝ Միության մաքսային տարածքից արտահանված և Միության մաքսային տարածք հետ ներմուծվող՝ որպես պաշար օգտագործվող ապրանքները պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը՝ մաքսային մարմնի կողմից դրանք նույնականացնելու պայմանով:

Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքները մաքսային մարմնի կողմից որպես Միության՝ որպես պաշար օգտագործվող ապրանքներ նույնականացնելու անհնարինության դեպքում այդ ապրանքները դիտարկվում են որպես օտարերկրյա ապրանքներ:

5. «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները կարող են հայտարարագրվել և բաց թողնվել որպես Միության մաքսային տարածքից արտահանվող պաշարներ, եթե այդ ապրանքները բեռնվում են նավերի վրա կամ օդանավերի մեջ, իսկ եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ՝ գնացքների մեջ՝

Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման այն վայրերում գտնվող անմաքս առևտրի խանութներից, որտեղից այդ տրանսպորտային միջոցները մեկնում են Միության մաքսային տարածքից: Այդ ապրանքները դրանց մաքսային հայտարարագրումից և որպես պաշարներ բացթողումից հետո պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը:

6. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները կարող են հայտարարագրվել և բաց թողնվել որպես նավերի բնականոն շահագործումը և տեխնիկական սպասարկումն ապահովելու համար անհրաժեշտ և Միության մաքսային տարածքից արտահանվող պաշարներ: Այդ ապրանքները դրանց մաքսային հայտարարագրումից և որպես պաշարներ բացթողումից հետո պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը:

Եթե մաքսային պահեստը տեղակայված է ոչ Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրում, որտեղ գտնվում է նավը, որպես պաշար բաց թողնված ապրանքները ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ դրանք այդ մաքսային պահեստից մինչև Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման այն վայր փոխադրելու համար, որտեղ գտնվում են նավերը, որոնց վրա բեռնվելու են այդ ապրանքները:

7. Պաշարները Միության մաքսային սահմանով տեղափոխվում են առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման և ներքին շուկայի պաշտպանության միջոցների պահպանման՝ սույն Օրենսգրքի 283-րդ հոդվածին համապատասխան օգտագործվելու պայմանով՝ սույն Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան արգելքները և սահմանափակումները պահպանելով:

8. Որպես պաշարների հայտարարատու կարող են հանդես գալ փոխադրողը, ինչպես նաև սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի երկրորդ-հինգերորդ պարբերություններում նշված անձինք՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությունում նշված դեպքի:

Որպես Միության մաքսային տարածքից արտահանվող պաշարներ օգտագործելու համար անմաքս առևտրի խանութներից նավերի վրա կամ օդանավերի մեջ բեռնվող պաշարների հայտարարատու հանդես է գալիս այն անմաքս առևտրի խանութը տիրապետող անձը, որտեղ ապրանքները գտնվում են դրանց մաքսային հայտարարագրման պահին:

9. Հանձնաժողովն իրավունք ունի որոշելու որպես պաշար օգտագործվող ապրանքների առանձին կատեգորիաների քանակական նորմերը, ինչպես նաև ապրանքների առանձին կատեգորիաները որպես պաշար օգտագործվող ապրանքներին շարքին դասելու չափանիշները՝ կախված այն տրանսպորտի տեսակից, որով տեղափոխվում են ապրանքները:

Հանձնաժողովի կողմից սահմանված քանակական նորմերից ավելի Միության մաքսային սահմանով տեղափոխվող՝ որպես պաշար օգտագործվող ապրանքների նկատմամբ սույն գլխի դրույթները չեն կիրառվում, և այդ ապրանքները ենթակա են մաքսային ընթացակարգերով ձևակերպման՝ սույն Օրենսգրքին համապատասխան:

10. Սույն գլխի դրույթները չեն կիրառվում անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներում գտնվող ապրանքների նկատմամբ:

Հոդված 282. Պաշարների նկատմամբ մաքսային գործառնություններ կատարելու առանձնահատկությունները

1. Միության մաքսային տարածք պաշարների ներմուծման ժամանակ դրանց մաքսային հայտարարագրման և բացթողման հետ կապված մաքսային գործառնությունները կատարվում են ժամանման վայրերում կամ միջազգային փոխադրումն ավարտելու վայրերում:

2. Միության մաքսային տարածքից պաշարների արտահանման ժամանակ դրանց մաքսային հայտարարագրման և բացթողման հետ կապված մաքսային գործառնությունները կատարվում են միջազգային փոխադրման սկզբնակետային վայրերում կամ մեկնման վայրերում:

«Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները՝ որպես պաշարներ մաքսային հայտարարագրման և բացթողման հետ կապված մաքսային գործառնություններն իրականացվում են այն մաքսային մարմնում, որի գործունեության տարածքում գտնվում է մաքսային պահեստը:

3. Միության մաքսային տարածք ժամանած և Միության այդ մաքսային տարածքից մեկնող՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցում (նավի վրա կամ օդանավի կամ գնացքի մեջ) գտնվող պաշարների մաքսային հայտարարագրումը կարող է իրականացվել միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի մաքսային հայտարարագրման հետ միաժամանակ՝ տրանսպորտային միջոցի հայտարարագրի օգտագործմամբ:

Պաշարների մաքսային հայտարարագրում չի իրականացվում, եթե այդ պաշարները գտնվում են Միության մաքսային տարածք ժամանած օդանավերի մեջ և նույն օդանավերով մեկնում են այդ տարածքից՝ առանց այդ պաշարները օդանավերից դատարկելու (փոխաբեռնելու) գործառնություններ իրականացնելու:

4. Միության մաքսային տարածք ժամանած կամ Միության այդ մաքսային տարածքից մեկնող նավերի վրա և օդանավերի կամ գնացքների մեջ դատարկվող, փոխաբեռնվող, բեռնվող պաշարների մաքսային հայտարարագրումն իրականացվում է ապրանքների հայտարարագրի օգտագործմամբ:

Ապրանքների հայտարարագրի օգտագործմամբ պաշարների մաքսային հայտարարագրման ժամանակ որպես ապրանքների այդպիսի հայտարարագրեր կարող են օգտագործվել տրանսպորտային (փոխադրման), առևտրային և

(կամ) ապրանքների բացթողման համար անհրաժեշտ տեղեկություններ պարունակող այլ փաստաթղթեր:

Նշված պաշարների մաքսային հայտարարագրման ժամանակ ապրանքների հայտարարագրում նշման ենթակա տեղեկությունները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

5. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով և «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների՝ որպես պաշարներ մաքսային հայտարարագրումն իրականացվում է ապրանքների հայտարարագրի օգտագործմամբ:

6. Պաշարների նկատմամբ մաքսային գործառնությունները կատարվում են նույն կերպ՝ անկախ նավերի, օդանավերի կամ գնացքների գրանցման երկրից կամ ազգային պատկանելիությունից:

7. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու մաքսային հայտարարագրման և պաշարների նկատմամբ այլ մաքսային գործառնությունների կատարման առանձնահատկությունները:

Հոդված 283. Պաշարների օգտագործումը Միության մաքսային տարածքում

1. Նավերի ուղևորների և անձնակազմերի անդամների կողմից սպառման և օգտագործման համար նախատեսված պաշարները և (կամ) այդ նավերի բնականոն շահագործումն ու տեխնիկական սպասարկումն ապահովելու համար անհրաժեշտ պաշարները կարող են սպառվել և օգտագործվել այդ նավերի վրա՝ Միության մաքսային տարածքում դրանց գտնվելու ժամանակ, այդ թվում՝ նավակայանում, նավանորոգարանում կամ նավանորոգման գործարանում նավերի վերանորոգման ժամանակ՝ ուղևորների, անձնակազմերի անդամների թվին և (կամ) կայանման տևողությանը համապատասխան քանակով:

2. Եթե կատարվում է օդանավերի վայրէջք Միության մաքսային տարածքում գտնվող մեկ կամ մի քանի օդանավակայաններում, այդ օդանավերի բնականոն շահագործումը և տեխնիկական սպասարկումն ապահովելու համար նախատեսված պաշարները և օդանավերի՝ վայրէջքի կետերում գտնվելու ընթացքում և դրանց միջև թռիչքի ժամանակ ուղևորների և անձնակազմերի անդամների կողմից սպառման և օգտագործման համար նախատեսված պաշարները կարող են օգտագործվել օդանավերի՝ վայրէջքի կետերում գտնվելու ընթացքում և դրանց միջև թռիչքի ժամանակ:

Միության մաքսային տարածքում օդանավերի գտնվելու ժամանակ օդանավերի ուղևորներին ու անձնակազմերի անդամներին բաժանելու և իրացնելու համար նախատեսված պաշարները կարող են բաժանվել կամ վաճառվել այն պայմանով, որ այդ օդանավերի մեջ դրանք բաժանվում և վաճառվում են ուղևորներին կամ անձնակազմի անդամներին:

3. Գնացքների ուղևորների և գնացքի բրիգադների աշխատողների կողմից սպառման և օգտագործման համար նախատեսված պաշարներն ու այդ գնացքների բնականոն շահագործումն ու տեխնիկական սպասարկումն ապահովելու համար անհրաժեշտ պաշարները կարող են սպառվել և օգտագործվել այդ գնացքներում՝ դրանց ընթացուղիներում կամ Միության մաքսային տարածքում միջանկյալ կանգառի կամ կայանման կետերում՝ գնացքների ուղևորների և գնացքի բրիգադների աշխատողների թվին, ինչպես նաև կայանման տևողությանը և ճանապարհին գտնվելու ժամանակին համապատասխան քանակով:

Գնացքների ուղևորներին և գնացքի բրիգադների աշխատողներին բաժանելու և իրացնելու համար նախատեսված պաշարները կարող են բաժանվել ու վաճառվել գնացքների՝ Միության մաքսային տարածքում գտնվելու ժամանակ այն պայմանով, որ դրանց բաժանումն ու վաճառքն իրականացվում են այդ գնացքների մեջ:

4. Փոխադրողը պարտավոր է ձեռնարկել Միության մաքսային տարածքում նավերի, օդանավերի կամ գնացքների գտնվելու ժամանակ սույն հոդվածին համապատասխան պաշարների օգտագործման համար անհրաժեշտ միջոցներ: Մաքսային մարմնի որոշմամբ՝ պաշարների պահպանման վայրը կարող է կնքվել՝ մաքսային կապարակնիքներ և կնիքներ դնելու միջոցով:

5. Նավերի վրա և օդանավերի կամ գնացքների մեջ գտնվող պաշարները մաքսային մարմնի թույլտվությամբ կարող են ժամանակավոր դատարկվել, փոխանցվել բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռի միջազգային փոխադրումներ իրականացնող այլ նավերի վրա և օդանավերի կամ այլ գնացքների մեջ՝ սույն գլխով նախատեսված պայմանների պահպանմամբ:

6. Նավերից և օդանավերից կամ գնացքներից Միության մաքսային տարածքում դատարկված պաշարները մինչ դրանք բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռի միջազգային փոխադրումներ իրականացնող այլ նավերի վրա և օդանավերի կամ գնացքների մեջ բեռնելը ենթակա են տեղավորման մաքսային հսկողության գոտում, որը գտնվում է դրանք դատարկելու, բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռի միջազգային փոխադրումներ իրականացնող այլ նավեր և օդանավեր կամ այլ գնացքներ փոխանցելու թույլտվություն տրամադրած մաքսային մարմնի գործունեության տարածքում:

Նավերից և օդանավերից կամ գնացքներից Միության մաքսային տարածք բեռնաթափված պաշարների հետ թույլատրվում է կատարել դրանք բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռի միջազգային փոխադրումներ իրականացնող այլ նավերի վրա և այլ օդանավերի կամ գնացքների մեջ բեռնելու նպատակով փոխանցելուն նախապատրաստելու համար անհրաժեշտ գործառնություններ:

7. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ որպես պաշարներ բաց թողնված և Միության մաքսային տարածքից գնացքներով արտահանվող օտարերկրյա ապրանքների օգտագործման կարգն ու պայմանները:

8. Սույն Օրենսգրքի 281-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերում նշված, Միության մաքսային տարածքից արտահանվող՝ որպես պաշար բաց թողնված ապրանքների հայտարարատուն պարտավոր է ապահովել այդ ապրանքների բեռնումը օդանավերի և (կամ) նավերի վրա նույն այն քանակով և վիճակով, որում դրանք որպես պաշարներ են գտնվել դրանք բաց թողնելու պահին՝ բացառությամբ բնական մաշվածության կամ կորստի հետևանքով կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և պահպանման բնականոն պայմաններում ապրանքների բնական հատկությունների փոփոխության հետևանքով այդ ապրանքների քանակի և (կամ) վիճակի փոփոխության:

9. Որպես պաշար բաց թողնված օտարերկրյա ապրանքները կարող են օգտագործվել Միության մաքսային տարածքում սույն գլխով չնախատեսված նպատակներով՝ դրանք սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով ձևակերպելու պայմանով:

Հոդված 284. Որպես պաշար հայտարարագրվող (բաց թողնված) օտարերկրյա ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առաջացումը և դադարումը, դրանց վճարման ժամկետն ու հաշվարկումը

1. Որպես պաշար հայտարարագրվող օտարերկրյա ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է հայտարարատուի մոտ մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագիրը գրանցելու պահից:

2. Որպես պաշար հայտարարագրվող (բաց թողնված) օտարերկրյա ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը հայտարարտուի մոտ դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) որպես պաշար բաց թողնված օտարերկրյա ապրանքների փաստացի արտահանում Միության մաքսային տարածքից.

2) որպես պաշար բաց թողնված օտարերկրյա ապրանքների օգտագործում՝ սույն Օրենսգրքի 283-րդ հոդվածին համապատասխան.

3) այդ ապրանքների ձևակերպում մաքսային ընթացակարգերով՝ սույն Օրենսգրքին համապատասխան.

4) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձում.

5) վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով այդպիսի օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան վրա է հասել այդ օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը.

6) որպես պաշարներ հայտարարագրվող օտարերկրյա ապրանքների բացթողման մերժումը՝ մաքսային հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորության առնչությամբ.

7) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան ապրանքների հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ մաքսային հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

8) այդպիսի ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

9) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան այդպիսի ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

10) այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

4. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում որպես պաշար հայտարարագրվող (բաց թողնված) օտարերկրյա ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման,

փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) որպես պաշար հայտարարագրվող (բաց թողնված) օտարերկրյա ապրանքների կորստի դեպքում՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով դրանց ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով անվերադարձ կորստի՝ այդ կորստի օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ որպես պաշար ապրանքների բացթողման օրը.

2) սույն գլխով չնախատեսված նպատակներով Միության մաքսային տարածքում այդպիսի օտարերկրյա ապրանքների օգտագործման դեպքում՝ այդ օգտագործման առաջին օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ որպես պաշար ապրանքների բացթողման օրը:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման, ինչպես դա կարվեր, եթե որպես պաշար բաց թողնված օտարերկրյա ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկելու համար կիրառվում են ապրանքները որպես պաշար բաց թողնելու համար տրված մաքսային հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ գործող ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը:

Այն դեպքում, երբ մաքսային մարմինն իր տրամադրության տակ չունի ապրանքների (դրանց բնույթի, անվանման, քանակի, ծագման և (կամ) մաքսային արժեքի) մասին ճշգրիտ տեղեկություններ, վճարման ենթակա ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար բազան որոշվում է մաքսային մարմնի մոտ առկա տեղեկությունների հիման վրա, իսկ ապրանքների դասակարգումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները:

Այն դեպքում, երբ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան ապրանքների ծածկագրերը սահմանված են 10 նիշից պակաս քանակով խմբավորման մակարդակով՝

ներմուծման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հարկերի հաշվարկման համար կիրառվում են ավելացված արժեքի հարկի դրույքաչափերից ամենամեծը և այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող ակցիզների (ակցիզային հարկի կամ ակցիզային վճարի) դրույքաչափերից ամենամեծը, որոնց նկատմամբ սահմանվել է ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը՝ հաշվի առնելով սույն կետի ութերորդ պարբերությունը:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով ապրանքների՝ սույն Օրենսգրքի 4-րդ գլխին համապատասխան հաստատված ծագումից և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններից: Եթե ապրանքների ծագումը և (կամ) նշված տուրքերը սահմանելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ հաստատված չեն, ապա հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի ամենամեծ դրույքաչափերը, որոնք սահմանվել են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն ծածկագրին դասվող ապրանքների համար, եթե ապրանքի դասակարգումն իրականացվել է 10 նիշի մակարդակով, կամ խմբավորման մեջ մտնող ապրանքների համար, եթե ապրանքների ծածկագրերը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, սահմանվել են 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով:

Ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները հետագայում պարզվելու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով այդ ճշգրիտ տեղեկություններից, կատարվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի՝ ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված գումարների վերադարձ (հաշվանցում) կամ չվճարված գումարների բռնագանձում՝ սույն Օրենսգրքի 10-րդ և 11-րդ գլուխներին ու 76-րդ և 77-րդ հոդվածներին համապատասխան:

6. Մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը կատարելուց և (կամ) դրանք բռնագանձելուց (ամբողջությամբ կամ մասնակի) հետո Միության մաքսային տարածքից որպես պաշար բաց թողնված օտարերկրյա ապրանքների փաստացի արտահանման, մաքսային մարմինների կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան այդ ապրանքներն արգելանքի վերցնելու (արգելապահելու) կամ սույն Օրենսգրքին համապատասխան այդ ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելու դեպքում մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին և 76-րդ հոդվածին համապատասխան:

Գլուխ 40

Միջազգային փոստային առաքանիները և դրանցով ուղարկվող ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելու կարգի և պայմանների առանձնահատկությունները

Հոդված 285. Միջազգային փոստային առաքանիներով ապրանքների ուղարկման առանձնահատկությունները

1. Միջազգային փոստային առաքանիներով չի թույլատրվում հետևյալ ապրանքների ուղարկումը՝

1) ապրանքներ, որոնց ուղարկումն արգելված է Համաշխարհային փոստային Միության ակտերին համապատասխան.

2) ապրանքներ, որոնք ենթակա չեն ուղարկման միջազգային փոստային առաքանիներով, որոնց ցանկը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

2. Միջազգային փոստային առաքանիները փոստային կապի նշանակված օպերատորի կողմից հանձնվում են դրանք ստացողներին՝ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների բացթողման և այդ ապրանքների նկատմամբ մաքսային վճարների, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման պայմանով՝ սույն Օրենսգրքին համապատասխան:

3. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ փոստային կապի նշանակված օպերատորը, այդպիսի օրենսդրությանը համապատասխան սահմանված կարգով, մաքսային մարմին է ներկայացնում տեղեկատվություն ֆիզիկական անձի՝ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքներն ստացողի անձը հաստատող փաստաթղթերի վերաբերյալ:

Հոդված 286. Միջազգային փոստային առաքանիների և միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների մասով մաքսային գործառնություններ կատարելու առանձնահատկությունները

1. Միության մաքսային տարածք միջազգային փոստային առաքանիների ժամանման կամ Միության մաքսային տարածքից դրանց մեկնման դեպքում տեղափոխվող միջազգային փոստային առաքանիների մասին փոխադրողի կողմից մաքսային մարմին ներկայացվող տեղեկությունները սահմանափակվում են միջազգային փոստային առաքանիները փոխադրելիս դրանց ուղեկցող՝ Համաշխարհային փոստային Միության ակտերով սահմանված փաստաթղթերում պարունակվող հետևյալ տեղեկություններով՝

1) միջազգային փոստային առաքանիները ուղարկող և ստացող հանդիսացող միջազգային փոստափոխանակման վայրերի (հաստատությունների) անվանումներ.

2) միջազգային փոստային առաքանիների համաքաշ (կիլոգրամներով).

3) բեռնատեղիների քանակ:

2. Միջազգային փոստային առաքանիներում այն ապրանքների առկայության մասին տեղեկությունները, որոնց նկատմամբ սահմանվել են արգելքներ և սահմանափակումներ, փոխադրողի կողմից ներկայացվում են մաքսային մարմին, եթե փոխադրողը տիրապետում է նման տեղեկատվության:

3. Կույրերի համար նախատեսված աերոգրամները, նամակները, փոստային բացիկները և առաքանիները տեղափոխվում են Միության մաքսային սահմանով մաքսային մարմնի թույլտվությամբ՝ առանց մաքսային հայտարարագրման և մաքսային ընթացակարգերով ձևակերպման:

4. Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների նկատմամբ մաքսային գործառնությունները մաքսային մարմինների կողմից կատարվում են միջազգային փոստափոխանակման վայրերում (հաստատություններում) կամ մաքսային մարմնի կողմից սահմանված այլ վայրերում:

Միջազգային փոստափոխանակման վայրերը (հաստատությունները) սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Միջազգային փոստափոխանակման վայրերի (հաստատությունների) մասին տեղեկությունները մաքսային մարմինների կողմից ուղարկվում են Հանձնաժողով՝ միջազգային փոստափոխանակման վայրերի (հաստատությունների) ընդհանուր ցանկ ձևավորելու և այն Ինտերնետ ցանցում՝ Միության պաշտոնական կայքում տեղադրելու համար:

5. Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքները, որոնք սահմանված արգելքներին և սահմանափակումներին համապատասխան ենթակա չեն Միության մաքսային տարածք ներմուծման, պետք է անհապաղ արտահանվեն Միության մաքսային տարածքից, եթե այլ բան նախատեսված չէ սույն Օրենսգրքով, երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ:

Նշված ապրանքները Միության մաքսային տարածքից արտահանելու միջոցները ձեռնարկվում են այն անդամ պետության փոստային կապի նշանակված օպերատորի կողմից, որի տարածքում գտնվում է միջազգային փոստափոխանակման վայրը (հաստատությունը), եթե երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային

պայմանագրերով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ այլ անձինք սահմանված չեն:

6. Եթե հայտնաբերվում է, որ միջազգային փոստափոխանակման վայրում (հաստատությունում) արգելքները և սահմանափակումները չեն պահպանվում, ապա մաքսային մարմինը որոշում է կայացնում Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծման արգելքի մասին և դրա մասին տեղեկացնում է փոստային կապի նշանակված օպերատորին:

7. Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծումն արգելելու մասին մաքսային մարմնի որոշումն ստանալուց հետո այդ տարածքից սույն հոդվածի 5-րդ կետի առաջին պարբերությունում նշված ապրանքներն անհապաղ արտահանելու անհնարինության դեպքում, այդ ապրանքներն արգելանքի են վերցվում (արգելապահվում) մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

8. Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ Համաշխարհային փոստային Միության ակտերով նախատեսված և միջազգային փոստային առաքանիներն ուղեկցող փաստաթղթերը կարող են օգտագործվել որպես ուղևորային մաքսային հայտարարագիր, իսկ սույն հոդվածի 9-րդ կետով նախատեսված և (կամ) սույն հոդվածի 10-րդ կետին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ որպես ապրանքների հայտարարագիր:

9. Համաշխարհային փոստային Միության ակտերով նախատեսված և միջազգային փոստային առաքանիներն ուղեկցող փաստաթղթերը կարող են օգտագործվել որպես ապրանքների հայտարարագիր միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ՝ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ հետևյալ դեպքերում՝

1) այդ ապրանքների նկատմամբ մաքսատուրքերը, հարկերը ենթակա չեն վճարման.

2) այդ ապրանքների նկատմամբ սահմանված չեն արգելքներ և սահմանափակումներ, չեն կիրառվում ներքին շուկայի պաշտպանության միջոցներ:

10. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել դեպքեր և պայմաններ, երբ Համաշխարհային փոստային Միության ակտերով նախատեսված և միջազգային փոստային առաքանիներն ուղեկցող փաստաթղթերը կարող են օգտագործվել որպես ապրանքների հայտարարագիր՝ «արտահանում» մաքսային ընթացակարգին համապատասխան միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների, ինչպես նաև «վերաներմուծում» մաքսային ընթացակարգին համապատասխան միջազգային փոստային առաքանիներով Միության մաքսային տարածքից արտահանված և ստացողներին չհանձնված ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ:

11. Համաշխարհային փոստային Միության ակտերով նախատեսված և միջազգային փոստային առաքանիներն ուղեկցող փաստաթղթերը որպես ապրանքների հայտարարագիր կամ ուղևորային մաքսային հայտարարագիր օգտագործելիս այդ մաքսային հայտարարագիրը ներկայացնելը չի ուղեկցվում դրա էլեկտրոնային տարբերակի ներկայացմամբ, եթե այլ բան սահմանված չէ անդամ պետության օրենսդրությամբ:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ Համաշխարհային փոստային Միության ակտերով նախատեսված և միջազգային փոստային առաքանիներն ուղեկցող փաստաթղթերը որպես ապրանքների հայտարարագիր կամ ուղևորային մաքսային հայտարարագիր օգտագործելիս՝ ապրանքների հայտարարագրում կամ ուղևորային մաքսային հայտարարագրում նշման ենթակա տեղեկություններ պարունակող՝ փոստային կապի նշանակված օպերատորի կողմից ուղարկվող ապրանքների վերաբերյալ էլեկտրոնային ձևով ներկայացված տեղեկատվությունը կարող է օգտագործվել որպես այդպիսի ապրանքների հայտարարագրի կամ ուղևորային մաքսային հայտարարագրի էլեկտրոնային տարբերակ:

12. Միջազգային փոստային առաքանիները փոստային կապի նշանակված օպերատորի կողմից ենթակա են հանձնման ժամանակավոր պահպանման միջազգային փոստափոխանակման վայր (հաստատություն) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտից հետո 2 օրացուցային օրվանից ոչ ուշ այն դեպքում, երբ այդ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների նկատմամբ չեն կատարվել դրանց մաքսային հայտարարագրման մաքսային գործառնություններ կամ այդ ապրանքների բացթողումը մերժվել է:

13. Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող, Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների մաքսային հայտարարագրումը և բացթողումը՝ բացառությամբ անձնական օգտագործման ապրանքների, իրականացվում է մինչև դրանք ուղարկելու համար փոստային կապի նշանակված օպերատորներին փոխանցելը:

14. Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող, Միության մաքսային տարածք ներմուծված, ուղարկողին վերադարձնելու ենթակա ապրանքները արտահանվում են այդ տարածքից մաքսային մարմնի թույլտվությամբ՝ առանց մաքսային հայտարարագրման և մաքսային ընթացակարգերով ձևակերպման:

Սույն կետի առաջին պարբերությունում նշված ապրանքները Միության մաքսային տարածքից արտահանելու՝ մաքսային մարմնի թույլտվությունն ստանալու համար փոստային կապի նշանակված օպերատորը մաքսային մարմին է ներկայացնում վերադարձվող միջազգային փոստային առաքանին, որի թաղանթի վրա նշված է վերադարձի պատճառը, և Համաշխարհային փոստային Միության ակտերով նախատեսված և այդ միջազգային փոստային առաքանին ուղեկցող փաստաթղթերը:

15. Միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող, Միության մաքսային տարածքից արտահանված և ստացողին չհանձնված անձնական օգտագործման ապրանքները ներմուծվում են Միության մաքսային տարածք մաքսային մարմնի թույլտվությամբ՝ առանց մաքսային հայտարարագրման այն փաթեթվածքի ամբողջականության պահպանման պայմանով, որում այդ ապրանքներն արտահանվել են Միության մաքսային տարածքից:

Սույն կետի առաջին պարբերությունում նշված ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելու՝ մաքսային մարմնի թույլտվությունն ստանալու համար փոստային կապի նշանակված օպերատորը մաքսային մարմին է ներկայացնում վերադարձվող միջազգային փոստային առաքանին, որի թաղանթի վրա նշված է վերադարձի պատճառը, և Համաշխարհային փոստային Միության ակտերով նախատեսված և այդ միջազգային փոստային առաքանին ուղեկցող փաստաթղթերը:

16. Դատարկ փոստային տարան տեղափոխվում է Միության մաքսային սահմանով մաքսային մարմնի թույլտվությամբ՝ առանց մաքսային հայտարարագրման և մաքսային ընթացակարգերով ձևակերպման:

Դատարկ փոստային տարան Միության մաքսային սահմանով տեղափոխելու՝ մաքսային մարմնի թույլտվությունն ստանալու համար փոստային կապի նշանակված օպերատորը մաքսային մարմին է ներկայացնում Համաշխարհային փոստային Միության ակտերով նախատեսված և դատարկ փոստային տարան ուղեկցող փաստաթղթերը:

17. Համաշխարհային փոստային Միության ակտերով նախատեսված, միջազգային փոստային առաքանիներն ուղեկցող և որպես ուղևորային մաքսային հայտարարագիր օգտագործվող փաստաթղթերում նշված ապրանքների մասին տեղեկությունների և փաստացի ուղարկվող ապրանքների միջև տարբերության փաստերի բացահայտման հետ կապված՝ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների բացթողման մերժման դեպքում, եթե այդպիսի տարբերությունները չեն հանգեցրել փաստացի ուղարկվող ապրանքների նկատմամբ արգելքների և սահմանափակումների չկիրառմանը, ապա այդպիսի միջազգային փոստային առաքանիները ենթակա են վերադարձման ուղարկողին՝ սույն հոդվածի 14-րդ կետով նախատեսված կարգով, եթե այդ ապրանքների մասով չի ներկայացվել ապրանքների հայտարարագիր կամ ուղևորային մաքսային հայտարարագիր:

18. Սույն հոդվածի 14-17-րդ կետերում նշված ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելու՝ մաքսային մարմնի թույլտվությունը ձևակերպվում է սույն հոդվածի 14-16-րդ կետերում նշված փաստաթղթերի վրա մաքսային մարմնի կողմից համապատասխան նշումներ անելու միջոցով:

Հոդված 287. Միջազգային փոստային առաքանիների նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառելու առանձնահատկությունները

1. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառվում է՝

1) Միության մաքսային տարածք ներմուծված միջազգային փոստային առաքանիների նկատմամբ՝

դրանք ժամանման վայրից մինչև միջազգային փոստափոխանակման վայր (հաստատություն) կամ մինչև մեկնման վայր փոխադրելիս.

դրանք միջազգային փոստափոխանակման վայրերի (հաստատությունների) միջև փոխադրելու համար.

2) Միության մաքսային տարածքից արտահանվող փոստային առաքանիների նկատմամբ, որոնք պարունակում են «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներ կամ սույն Օրենսգրքի 286-րդ հոդվածի 5-րդ կետում նշված ապրանքներ՝ դրանք միջազգային փոստափոխանակման վայրից (հաստատությունից) մինչև մեկնման վայր փոխադրելիս:

2. Միջազգային փոստային առաքանիները ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ սույն Օրենսգրքի 22-րդ գլխին համապատասխան՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

3. Միջազգային փոստային առաքանիները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս փաստաթղթերի, այդ թվում՝ Համաշխարհային փոստային Միության ակտերով նախատեսված և միջազգային փոստային առաքանիներն ուղեկցող, որպես տարանցման հայտարարագիր օգտագործվող փաստաթղթերի ցանկը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Համաշխարհային փոստային Միության ակտերով նախատեսված և միջազգային փոստային առաքանիներն ուղեկցող փաստաթղթերը որպես տարանցման հայտարարագիր օգտագործելիս այդ տարանցման հայտարարագիրը ներկայացնելը չի ուղեկցվում դրա էլեկտրոնային տարբերակի ներկայացմամբ:

4. Միջազգային փոստային առաքանիները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չափը սահմանվում է որպես միջազգային փոստային առաքանիների 1 կիլոգրամ համաքաշի համար 4 եվրո ֆիքսված չափով հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումար: Ընդ որում, այդ միջազգային փոստային առաքանիների համաքաշի մեջ չի ներառվում նամակագրական թղթակցության առանձին տեսակների (կույրերի համար նախատեսված աերոգամների, փոստային բացիկների, նամակների և առաքանիների) քաշը:

5. Միջազգային փոստային առաքանիները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարումը չի ապահովվում հետևյալ դեպքերում՝

1) որպես հայտարարատու հանդես է գալիս փոստային կապի նշանակված օպերատորը.

2) միջազգային փոստային առաքանիները ենթակա են առաքման միջազգային փոստափոխանակման վայր (հաստատություն):

6. Սույն հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում այն անդամ պետության փոստային կապի նշանակված օպերատորը, որի տարածքում գտնվում է առաքման վայր հանդիսացող միջազգային փոստափոխանակման

վայրը (հաստատությունը), «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված միջազգային փոստային առաքանիների հայտարարատուի հետ միջազգային փոստային առաքանիների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման մասով համապարտ պարտավորություն է կրում:

7. Սույն Օրենսգրքի 153-րդ հոդվածի 5-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը հաշվարկելու համար սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված չափով: Ընդ որում, այդ միջազգային փոստային առաքանիների համաքաշի մեջ չի ներառվում նամակագրական թղթակցության առանձին տեսակների (կույրերի համար նախատեսված աերոգամների, փոստային բացիկների, նամակների և առաքանիների) քաշը:

Հոդված 288. Փոստային կապի նշանակված օպերատորի՝ միջազգային փոստային առաքանիների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության առաջացումը և դադարումը դրանք միջազգային փոստափոխանակման վայրի (հաստատության) մաքսային հսկողության գոտում տեղավորելու դեպքում, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. Միջազգային փոստային առաքանիների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ փոստային կապի նշանակված օպերատորի պարտավորությունն առաջանում է միջազգային փոստային առաքանիները միջազգային փոստափոխանակման վայրի (հաստատության) մաքսային հսկողության գոտում տեղավորելու պահից:

2. Միջազգային փոստային առաքանիների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ փոստային կապի նշանակված օպերատորի պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների հանձնում դրանք ստացողին՝ կապված միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների բացթողման հետ.

2) միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների վերադարձ դրանք ուղարկողին՝ սույն Օրենսգրքի 286-րդ հոդվածի 14-րդ կետին կամ 17-րդ կետին համապատասխան.

3) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձում.

4) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան մաքսային մարմնի կողմից վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով միջազգային փոստային առաքանիների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ տեղափոխման (փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ միջազգային փոստային առաքանիների անվերադարձ կորստի փաստը ճանաչելը, բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան նման ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան այդ միջազգային փոստային առաքանիների նկատմամբ վրա է հասել ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը.

5) միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

6) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

7) միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

4. Հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում միջազգային փոստային առաքանիների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) միջազգային փոստային առաքանիների կորստի դեպքում՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով դրանց ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով անվերադարձ կորստի՝ միջազգային փոստային առաքանիների կորստի օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ այդ կորուստը հայտնաբերելու օրը.

2) միջազգային փոստային առաքանիները ստացողին մինչև միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների՝ մաքսային մարմնի կողմից բացթողումը հանձնելու դեպքում՝ դրանք ստացողին հանձնելու օրը, իսկ եթե այդ օրը պարզված չէ՝ այդ հանձնումը հայտնաբերելու օրը:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման

ապահովումը հաշվարկելու համար սույն Օրենսգրքի 287-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված չափով: Ընդ որում, այդ միջազգային փոստային առաքանիների համաքաշի մեջ չի ներառվում նամակագրական թղթակցության առանձին տեսակների (կույրերի համար նախատեսված աերոգամների, փոստային բացիկների, նամակների և առաքանիների) քաշը:

Գլուխ 41

Միության մաքսային սահմանով խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների տեղափոխման կարգի և պայմանների առանձնահատկությունները

Հոդված 289. Ընդհանուր դրույթներ Միության մաքսային սահմանով խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների տեղափոխման կարգի և պայմանների մասին

Սույն գլխով սահմանվում են Միության մաքսային սահմանով խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների տեղափոխման կարգի և պայմանների առանձնահատկությունները, այդ ապրանքների մաքսային հայտարարագրման ու բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգի առանձնահատկությունները, խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառման առանձնահատկությունները:

Հոդված 290. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների՝ Միության մաքսային տարածք ներմուծման, Միության մաքսային տարածքից արտահանման և մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները

1. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների ներմուծումը Միության մաքսային տարածք թույլատրվում է դրանք սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով ձևակերպելուց հետո կամ, եթե դա նախատեսված է անդամ պետությունների մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ՝ դրանց մաքսային հայտարարագրումից հետո՝ մաքսային ընթացակարգին համապատասխան:
2. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների արտահանումը Միության մաքսային տարածքից թույլատրվում է դրանք սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով ձևակերպելուց հետո:
3. Մաքսային հայտարարագիր ներկայացնելու ժամանակ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքները մաքսային մարմին ներկայացնել չի պահանջվում:
4. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների՝ Միության մաքսային տարածք ներմուծման կամ Միության մաքսային տարածքից արտահանման ժամանակ թույլատրվում է ապրանքների խառնումը, ինչպես նաև փոխադրման տեխնոլոգիական առանձնահատկություններից և ապրանքների բնորոշ հատկանիշներից ելնելով՝ ապրանքների քանակի և վիճակի (որակի) փոփոխումը՝ անդամ պետություններում գործող տեխնիկական կանոնակարգերին և ստանդարտներին համապատասխան:
5. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների քանակը և (կամ) որակը սահմանվում է սույն Օրենսգրքի 292-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված՝ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների հաշվառքի սարքերի ցուցմունքների հիման վրա, իսկ դրանց բացակայության դեպքում՝ այդ ապրանքների քանակը չափելու այլ միջոցների ցուցմունքների և մեթոդների հիման վրա, եթե չափման այդ միջոցների և մեթոդների օգտագործումը նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով փաստացի մատակարարված ապրանքների վերաբերյալ փաստաթղթերի, խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների հանձնման-ընդունման (ընդունման-հանձնման) ակտերի, այդ ապրանքների որակի հավաստագրերի և այլ փաստաթղթերի հիման վրա, որոնք հաստատում են խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող՝ արտադրված, մատակարարված և սպառված ապրանքների ծավալների հասցեական բաշխումը անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանվող հաշվարկային ժամանակահատվածի ընթացքում:
6. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները սահմանվում են սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան:
7. Միության մաքսային տարածքում խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող օտարերկրյա ապրանքների, ինչպես նաև եթե դա սահմանված է անդամ պետությունների օրենսդրությամբ՝ Միության մաքսային հսկողության ներքո գտնվող՝ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող Միության ապրանքների փոխաբեռնումը (վերաբեռնումը) խողովակաշարային տրանսպորտից տրանսպորտի այլ տեսակներ կամ տրանսպորտի այլ տեսակներից խողովակաշարային տրանսպորտ իրականացվում է այն մաքսային մարմնի թույլտվությամբ, որի գործունեության

տարածքում կատարվում է այդ բեռնային գործողությունը:

8. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների մասին տեղեկությունների փոխանակման գծով անդամ պետությունների մաքսային մարմինների փոխգործակցության կարգը, այդ թվում՝ այդ ապրանքները մի քանի անդամ պետության տարածքներով տեղափոխելու դեպքում խողովակաշարային տրանսպորտի օգտագործմամբ խառը փոխադրումներ իրականացնելու ժամանակ, սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

9. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների նկատմամբ մաքսային գործառնություններ կատարելու և մաքսային հսկողություն անցկացնելու, ինչպես նաև սույն հոդվածի 4-րդ կետում նշված փաստաթղթերի վրա մաքսային մարմինների կողմից նշումներ անելու առանձնահատկություններ:

Հոդված 291. Էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների՝ Միության մաքսային տարածք ներմուծման, Միության մաքսային տարածքից արտահանման և մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները

1. Էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների (այսուհետ սույն հոդվածում՝ էլեկտրական էներգիա)՝ Միության մաքսային տարածք ներմուծումը և Միության մաքսային տարածքից արտահանումը թույլատրվում է մինչև մաքսային հայտարարագիրը մաքսային մարմին ներկայացնելը:

2. Էլեկտրական էներգիան «ներքին սպառման համար բացթողում» կամ «արտահանում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելու համար մաքսային հայտարարագիրը ներկայացվում է ոչ ուշ, քան դրա փաստացի մատակարարման յուրաքանչյուր օրացուցային ամսվան հաջորդող օրացուցային ամսվա վերջին օրը, եթե այլ ժամկետ սահմանված չէ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

3. Մաքսային հայտարարագիր ներկայացնելու ժամանակ էլեկտրական էներգիան մաքսային մարմին ներկայացնել չի պահանջվում:

4. Մաքսային հայտարարագրման ենթակա է Միության մաքսային տարածք ներմուծված կամ Միության մաքսային տարածքից արտահանված էլեկտրական էներգիայի փաստացի քանակը: Էլեկտրական էներգիայի քանակը որոշվում է էլեկտրական էներգիայի հաշվառքի սարքերի ցուցմունքների հիման վրա, որոնք տեղադրված են տեխնոլոգիական գործընթացին հարմարեցված վայրերում և արձանագրում են էլեկտրական էներգիայի տեղափոխումը, համապատասխան պայմանագրերով էլեկտրական էներգիայի փաստացի մատակարարման մասին ակտերի, հանձնման-ընդունման (ընդունման-հանձնման) ակտերի և այլ փաստաթղթերի հիման վրա, որոնք հաստատում են էլեկտրական էներգիայի փաստացի տեղափոխումը որպես էլեկտրական էներգիայի սալդո-փոխհոսք (լարման բոլոր դասերի աշխատող էլեկտրահաղորդման բոլոր միջպետական գծերով էլեկտրական էներգիայի՝ հակառակ ուղղություններով փոխհոսքերի հանրահաշվական գումար) յուրաքանչյուր օրացուցային ամսվա համար, եթե անդամ պետությունների օրենսդրությամբ էլեկտրական էներգիայի քանակը որոշելու այլ կարգ սահմանված չէ:

Եթե դա նախատեսված է միջպետական էլեկտրահաղորդման գծերի շահագործման և (կամ) միջպետական էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառման համար պատասխանատու կազմակերպությունների միջև կնքված էլեկտրական էներգիայի փոխհոսքերի հաշվառումը կազմակերպելու մասին համաձայնագրերով՝ էլեկտրական էներգիայի սալդո-փոխհոսքի հաշվարկված արժեքը ճշգրտվում է այդպիսի համաձայնագրերին համապատասխան որոշվող՝ էլեկտրական էներգիայի տեղափոխման ժամանակ ցանցերում տեղի ունեցող՝ էլեկտրական էներգիայի կորուստների մեծությամբ:

5. Էլեկտրական էներգիայի՝ էներգահամակարգերի զուգահեռ աշխատանքով պայմանավորված արտապլանային (տեխնոլոգիական) սալդո-փոխհոսքերի մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները սահմանվում են անդամ պետությունների մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

6. Միության ապրանքի կարգավիճակ ունեցող էլեկտրական էներգիան՝ Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս՝ Միության անդամ չհանդիսացող պետության տարածքով տեղափոխելու համար, չի ձևակերպվում «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով:

7. Միության անդամ չհանդիսացող պետության տարածքով Միության ապրանքի կարգավիճակ ունեցող էլեկտրական էներգիայի տեղափոխման ժամանակ այն անդամ պետության ուղարկողը (ուղարկողները) կամ փոխադրողը (փոխադրողները), որի տարածքից սկսվում է այդ ապրանքների տեղափոխումը, և այն անդամ պետության ստացողը (ստացողները) կամ փոխադրողը (փոխադրողները), որի տարածքում ավարտվում է այդ ապրանքների տեղափոխումը, մինչև ապրանքների տեղափոխման օրացուցային ամսվան հաջորդող օրացուցային ամսվա վերջին օրը, կամ մինչև անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված ժամկետի լրանալը դիմում են ներկայացնում այն պետության լիազորված մաքսային մարմին (մաքսային մարմիններ), որի տարածքում գրանցված է ուղարկողը (ուղարկողները), ստացողը (ստացողները) կամ փոխադրողը (փոխադրողները)՝ նշելով հետևյալ տեղեկությունները՝

1) էլեկտրահաղորդման գծերով տեղափոխված էլեկտրական էներգիայի ուղարկողի և ստացողի անվանումները.

2) այն պայմանագրի համարը և կնքման ամսաթիվը, որի հիման վրա իրականացվում է էլեկտրական էներգիայի տեղափոխումը (առկայության դեպքում).

3) էլեկտրական էներգիայի տեղափոխման ժամանակահատվածը.

4) տեղափոխված էլեկտրական էներգիայի քանակը.

5) էլեկտրական էներգիայի հաշվառքի սարքերի տեղադրման վայրերի անվանումները և (կամ) այն էլեկտրահաղորդման միջպետական գծերի անվանումները, որոնցով իրականացվել է էլեկտրական էներգիայի տեղափոխումը:

8. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է նախատեսվել, որ սույն հոդվածի 7-րդ կետում նշված դիմումը չի ներկայացվում՝ Միության անդամ չհանդիսացող պետության տարածքով Միության ապրանքի կարգավիճակ ունեցող էլեկտրական էներգիան տեղափոխելիս:

9. Միության անդամ չհանդիսացող պետության տարածքով Միության ապրանքի կարգավիճակ ունեցող էլեկտրական էներգիայի՝ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխման ժամանակ էլեկտրական էներգիան պահպանում է Միության ապրանքի կարգավիճակը:

10. Միության մաքսային տարածքով էլեկտրական էներգիայի տեղափոխման ժամանակ այն անդամ պետության փոխադրողը (փոխադրողները), որի տարածքով իրականացվում է այդ ապրանքների տեղափոխումը, մինչև էլեկտրական էներգիայի տեղափոխման օրացուցային ամսվան հաջորդող օրացուցային ամսվա վերջին օրը կամ մինչև անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված ժամկետի լրանալը պարտավոր է ներկայացնել դիմում այն անդամ պետության մաքսային մարմին (մաքսային մարմիններ), որի տարածքում գրանցված է փոխադրողը (փոխադրողները)՝ նշելով հաշվարկային ժամանակահատվածի ընթացքում էլեկտրական էներգիայի տեղափոխման ծավալների մասին տեղեկություններ և անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող այլ տեղեկություններ:

11. Էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների մասին տեղեկությունների փոխանակման գծով անդամ պետությունների մաքսային մարմինների փոխգործակցության կարգը՝ այդ ապրանքները մի քանի անդամ պետության տարածքներով տեղափոխելու դեպքում, սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

12. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների նկատմամբ մաքսային գործառնություններ կատարելու առանձնահատկություններ և մաքսային հսկողություն անցկացնելու, ինչպես նաև սույն հոդվածի 4-րդ կետում նշված փաստաթղթերի վրա մաքսային մարմինների կողմից նշումներ անելու առանձնահատկություններ:

Հոդված 292. Խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառքի սարքերի ցուցմունքների օգտագործումը

1. Միության մաքսային տարածքից արտահանվող՝ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվում են հաշվառքի այն սարքերի ցուցմունքները, որոնք տեղակայված են՝

1) այդ ապրանքներն ուղարկող երկիր հանդիսացող անդամ պետության տարածքում.

2) սահմանակից պետության տարածքում՝ սահմանակից պետություն հանդիսացող երրորդ կողմի հետ անդամ պետության այն միջազգային պայմանագրերի առկայության պայմանով, որոնցով սահմանվում են մաքսային մարմինների պաշտոնատար անձանց համար հաշվառքի այդ սարքերին հասանելիության կարգը.

3) սահմանակից և (կամ) այլ պետությունների տարածքում՝ այն գործարքի պայմաններին համապատասխան սահմանված վայրերում, որի հիման վրա այդ ապրանքները արտահանվում են Միության մաքսային տարածքից, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ:

2. Միության մաքսային տարածք ներմուծվող՝ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվում են հաշվառքի այն սարքերի ցուցմունքները, որոնք տեղակայված են՝

1) այդ ապրանքների նշանակման երկիր հանդիսացող անդամ պետության տարածքում.

2) սահմանակից պետության տարածքում՝ սահմանակից պետություն հանդիսացող երրորդ կողմի հետ անդամ պետության այն միջազգային պայմանագրերի առկայության պայմանով, որոնցով սահմանվում են մաքսային մարմինների պաշտոնատար անձանց համար հաշվառքի այդ սարքերին հասանելիության կարգը.

3) սահմանակից և (կամ) այլ պետությունների տարածքում՝ այն գործարքի պայմաններին համապատասխան սահմանված վայրերում, որի հիման վրա այդ ապրանքները ներմուծվում են Միության մաքսային տարածք, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ:

3. Միության մաքսային տարածքից արտահանվող էլեկտրական էներգիայի մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվում են հաշվառքի այն սարքերի ցուցմունքները, որոնք տեղակայված են՝

1) այդ էլեկտրական էներգիան ուղարկող երկիր հանդիսացող անդամ պետության տարածքում.

2) սահմանակից պետության տարածքում՝ սահմանակից պետություն հանդիսացող երրորդ կողմի հետ անդամ պետության այն միջազգային պայմանագրերի առկայության պայմանով, որոնցով սահմանվում են մաքսային մարմինների պաշտոնատար անձանց համար հաշվառքի այդ սարքերին հասանելիության կարգը.

3) սահմանակից և (կամ) այլ պետությունների տարածքում՝ էլեկտրական էներգիայի փոխհոսքերի հաշվառումը

կազմակերպելու մասին միջպետական էլեկտրահաղորդման գծերի շահագործման և (կամ) միջպետական էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառման համար պատասխանատու կազմակերպությունների միջև կնքված համաձայնագրերի պայմաններին համապատասխան սահմանված վայրերում, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ:

4. Միության մաքսային տարածք ներմուծվող էլեկտրական էներգիայի մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվում են հաշվառքի այն սարքերի ցուցմունքները, որոնք տեղակայված են՝

1) այդ էլեկտրական էներգիայի նշանակման երկիր հանդիսացող անդամ պետության տարածքում.

2) սահմանակից պետության տարածքում՝ սահմանակից պետություն հանդիսացող երրորդ կողմի հետ անդամ պետության միջազգային պայմանագրերի առկայության պայմանով, որոնցով սահմանվում է մաքսային մարմինների պաշտոնատար անձանց համար հաշվառքի այդ սարքերին հասանելիության կարգը.

3) սահմանակից և (կամ) այլ պետությունների տարածքում՝ էլեկտրական էներգիայի փոխհոսքերի հաշվառումը կազմակերպելու մասին միջպետական էլեկտրահաղորդման գծերի շահագործման և (կամ) միջպետական էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառման համար պատասխանատու կազմակերպությունների միջև կնքված համաձայնագրերի պայմաններին համապատասխան սահմանված վայրերում, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ:

5. Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան կարող է սահմանվել սույն հոդվածի 1-4-րդ կետերում նշված խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառքի այն սարքերի գտնվելու վայրերի ցանկը, որոնց ցուցմունքներն օգտագործվում են ապրանքների մաքսային հայտարարագրման ժամանակ:

6. Խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառքի սարքերի անսարքության դեպքում մաքսային հայտարարագրման և մաքսային հսկողություն անցկացնելու նպատակով օգտագործվում են տեղափոխված ապրանքների փաստացի քանակի մասին փոխադրողի տեղեկությունները:

7. Միության մաքսային տարածքում գտնվող՝ խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառքի սարքերի ցուցմունքների տվյալներին չթույլատրված մուտքը և փոփոխումը կանխարգելելու նպատակով այդ սարքերի վրա մաքսային մարմինների կողմից դրվում են նույնականացման միջոցներ:

Այն օբյեկտը տիրապետողը, որում տեղադրված են խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառքի սարքերը, կամ նրա կողմից լիազորված անձը պարտավոր են ապահովել հաշվառքի այդ սարքերին հասանելիությունն այն անդամ պետության մաքսային մարմինների լիազորված պաշտոնատար անձանց համար, որի տարածքում գտնվում են հաշվառքի այդ սարքերը՝ մաքսային հսկողություն անցկացնելու և նույնականացման միջոցներ դնելու (հեռացնելու) համար:

8. Այն օբյեկտը տիրապետողը, որում տեղակայված են խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառքի սարքերը, կամ նրա կողմից լիազորված անձը մաքսային մարմին են ներկայացնում տեղեկություններ խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառման (չափման) կիրառվող եղանակի և (կամ) կարգի մասին՝ հետևյալ դեպքերում՝

1) այն մաքսային մարմնի հարցմամբ, որի գործունեության տարածքում գտնվում է այդ ապրանքների հաշվառքի սարքերի տեղադրման վայրը.

2) խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառման (չափման) կիրառվող եղանակը և (կամ) կարգը փոխվելու դեպքում:

9. Սույն հոդվածի 8-րդ կետում նշված տեղեկությունները պետք է ներկայացվեն մաքսային մարմնի հարցումն ստանալու կամ խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառման (չափման) կիրառվող եղանակի և (կամ) կարգի փոփոխության օրվան հաջորդող օրվանից 15 աշխատանքային օրվանից ոչ ուշ:

10. Նույնականացման միջոցներ դնելը (հեռացնելը) իրականացվում է այն անդամ պետության մաքսային մարմինների կողմից, որի տարածքում տեղակայված են խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառքի սարքերը՝ օբյեկտը տիրապետողի կամ նրա կողմից լիազորված անձանց ներկայությամբ:

Նույնականացման միջոցներ դնելու (հեռացնելու) արդյունքներով կազմվում է ակտ՝ այն անդամ պետության մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված ձևով, որի տարածքում տեղակայված են հաշվառքի այդ սարքերը:

11. Սարքավորումների ընթացիկ նորոգման կամ հիմնանորոգման այնպիսի պլանային աշխատանքներ անցկացնելու դեպքում, որոնք կապված են զետեղված նույնականացման միջոցների ապամոնտաժման և (կամ) ամբողջականության խախտման հետ, այն օբյեկտը տիրապետողը, որում տեղադրված են խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառքի սարքերը, կամ նրա կողմից լիազորված անձը դրա մասին ծանուցում են այն մաքսային մարմնին, որի գործունեության տարածքում գտնվում է այդ ապրանքների հաշվառքի սարքերի տեղադրման վայրը, նշված աշխատանքները կատարելը սկսելու օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ՝ նշելով դրանք կատարելու ամսաթիվն ու տևողությունը:

Ապրանքների քանակի և որակի չափման համակարգի աշխատանքի խախտման կամ վթարային և հրդեհավտանգ

իրավիճակների սպառնալիք առաջանալու դեպքում այն օբյեկտը տիրապետողը, որում տեղադրված են խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառքի սարքերը, կամ նրա կողմից լիազորված անձն այդ սպառնալիքի կանխման կամ վերացման աշխատանքներ կատարելու մասին տեղեկացնում է այն մաքսային մարմնին, որի գործունեության տարածքում գտնվում է այդ ապրանքների հաշվառքի սարքերի տեղադրման վայրը՝ հետագայում դրված նույնականացման միջոցների խախտմանը հանգեցրած պատճառների մասին ծանուցելով:

Հոդված 293. Խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների նույնականացումը

Խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների նույնականացում չի իրականացվում, ինչը մաքսային մարմիններին չի խոչընդոտում մաքսային նպատակների համար որոշել ապրանքների քանակը, որակը և մյուս հատկանիշները՝ օգտագործելով փաստաթղթերում պարունակվող տեղեկությունները, հաշվիչների և այլ չափիչ սարքերի ցուցմունքները:

Հոդված 294. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառելու առանձնահատկությունները

1. Սույն հոդվածը կիրառելու նպատակով դրա մեջ օգտագործվող հասկացությունները ունեն հետևյալ իմաստը՝

«ներմուծման վայր»՝ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների հաշվառքի այն սարքերի տեղադրման վայրը, որոնց ցուցմունքներն օգտագործվում են խողովակաշարային տրանսպորտով Միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների քանակը որոշելու համար.

«արտահանման վայր»՝ Միության մաքսային սահմանով խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների հաշվառքի այն սարքերի տեղադրման վայրը, որոնց ցուցմունքներն օգտագործվում են խողովակաշարային տրանսպորտով Միության մաքսային տարածքից արտահանված ապրանքների քանակը որոշելու համար.

«նշանակման վայր»՝ այն վայրը, որտեղ տեղադրված են խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների հաշվառքի այն սարքերը, որոնց ցուցմունքներն օգտագործվում են ապրանքների քանակը (ընդհանուր քանակը) որոշելու համար, և որը տեղակայված է այն անդամ պետությունում, որի տարածքում ավարտվում է այդ ապրանքների տեղափոխումը, իսկ մինչ այն անդամ պետության տարածքում այդ սարքերը տեղադրելը, որի տարածքում ավարտվում է ապրանքների տեղափոխումը՝ ապրանքների հաշվառքի սարքերի տեղադրման վայրը, որը տեղակայված է այլ անդամ պետության տարածքում և վերջինն է այդ ապրանքների ընթացուղում.

«ուղարկման վայր»՝ այն վայրը, որտեղ տեղադրված են խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների հաշվառքի այն սարքերը, որոնց ցուցմունքներն օգտագործվում են ապրանքների քանակը (ընդհանուր քանակը) որոշելու համար, և որը տեղակայված է այն անդամ պետությունում, որի տարածքից սկսվում է այդ ապրանքների ուղարկումը, իսկ մինչ այն անդամ պետության տարածքում այդ սարքերը տեղադրելը, որի տարածքից սկսվում է ապրանքների տեղափոխումը՝ ապրանքների հաշվառքի սարքերի տեղադրման վայրը, որը տեղակայված է այլ անդամ պետության տարածքում և առաջինն է այդ ապրանքների ընթացուղում:

2. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքները, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետում նշված ապրանքների, ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝

1) դրանց՝ Միության մաքսային տարածքով փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար հետևյալ դեպքերում՝

խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող օտարերկրյա ապրանքները փոխադրվում (տրանսպորտով փոխադրվում) են ներմուծման վայրից մինչև արտահանման վայր.

խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող օտարերկրյա ապրանքները փոխադրվում (տրանսպորտով փոխադրվում) են ներմուծման վայրից մինչև նշանակման վայր.

խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող օտարերկրյա ապրանքները և Միության՝ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող՝ Հանձնաժողովի կողմից սույն Օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի երկրորդ պարբերությանը համապատասխան սահմանված դեպքերում «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները փոխադրվում (տրանսպորտով փոխադրվում) են ուղարկման վայրից մինչև արտահանման վայր.

խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող օտարերկրյա ապրանքները փոխադրվում (տրանսպորտով փոխադրվում) են ուղարկման վայրից մինչև նշանակման վայր.

2) Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքով դրանց փոխադրման (տրանսպորտով փոխադրման) համար այն դեպքում, երբ Միության՝ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքները փոխադրվում (տրանսպորտով փոխադրվում) են արտահանման վայրից մինչև ներմուծման վայր:

3. Միության մաքսային տարածքով փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքները չեն ձևակերպվում «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով այն դեպքում, երբ մինչ այդ փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) սկսելն այդ ապրանքները ձևակերպվել են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով, «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով, «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով, «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով կամ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով:

«Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը չի կիրառվում «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ Միության մաքսային տարածքից «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգին համապատասխան ավելի վաղ արտահանված բնական գազի՝ Միության մաքսային տարածքով փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար, եթե այդ փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) պայմանավորված է խողովակաշարային տրանսպորտով բնական գազի փոխադրման (տրանսպորտային փոխադրման) տեխնոլոգիական առանձնահատկություններով:

4. Հայտարարատուն պարտավոր է ներկայացնել ճշգրիտ տեղեկություններ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փաստացի փոխադրված (տրանսպորտով փոխադրված) ապրանքների մասին մատակարարման յուրաքանչյուր օրացուցային ամսվա համար՝ մաքսային կարգավորման վերաբերյալ այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում, որի տարածքում ապրանքները ձևակերպվել են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով:

5. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտվում է՝

1) ներմուծման վայրից կամ ուղարկման վայրից մինչև արտահանման վայր փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) օտարերկրյա ապրանքների, ինչպես նաև Միության՝ ուղարկման վայրից մինչև արտահանման վայր փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող)՝ Հանձնաժողովի կողմից սույն Օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի երկրորդ պարբերությանը համապատասխան սահմանված դեպքերում «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ՝ սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան անդամ պետությունների մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված մաքսային հայտարարագրման առանձնահատկություններին համապատասխան ներկայացվող մաքսային հայտարարագրի վրա մաքսային մարմնի կողմից «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու մասին նշումներ անելու միջոցով Միության մաքսային տարածքից ապրանքներն արտահանելուց հետո.

2) ուղարկման վայրից կամ ներմուծման վայրից մինչև նշանակման վայր փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) օտարերկրյա ապրանքների նկատմամբ՝ նշանակման վայրում ապրանքները ձևակերպելով օտարերկրյա ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային ընթացակարգերով՝ սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան փաստացի փոխադրված (տրանսպորտով փոխադրված) ապրանքների մասին մաքսային մարմին ճշգրիտ տեղեկություններ ներկայացնելու համար սահմանված ժամկետի սահմաններում կամ սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան՝ անդամ պետությունների մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված մաքսային հայտարարագրման առանձնահատկություններին համապատասխան ներկայացվող մաքսային հայտարարագրի վրա մաքսային մարմնի կողմից «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու մասին նշումներ անելու միջոցով.

3) Միության՝ արտահանման վայրից մինչև ներմուծման վայր փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) ապրանքների նկատմամբ՝ Միության մաքսային տարածք ապրանքները ներմուծելուց և սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան՝ անդամ պետությունների մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված մաքսային հայտարարագրման առանձնահատկություններին համապատասխան ներկայացվող մաքսային հայտարարագրի վրա մաքսային մարմնի կողմից «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու մասին նշումներ անելուց հետո:

6. Թույլատրվում է խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված, Միության մաքսային տարածքով փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) ապրանքների բնորոշ հատկանիշների փոփոխություն՝ անդամ պետություններում գործող տեխնիկական կանոնակարգերին և ստանդարտներին համապատասխան փոխադրման (տրանսպորտային փոխադրման) տեխնոլոգիական առանձնահատկությունների հետևանքով:

7. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան չեն կիրառվում սույն Օրենսգրքի 144-րդ, 145-րդ, 147-րդ հոդվածների, 148-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 151-153-րդ, 304-306-րդ, 309-րդ, 343-րդ, 344-րդ և 364-րդ հոդվածների դրույթները:

8. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող՝ մի քանի անդամ պետությունների տարածքներով փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) օտարերկրյա ապրանքների նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառումը սահմանվում է Միության շրջանակներում միջազգային պայմանագրին համապատասխան, իսկ մինչև այդպիսի միջազգային պայմանագիր ընդունելը՝ անդամ պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 295. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) ապրանքների նկատմամբ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունների առաջացումը և դադարումը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների նկատմամբ հայտարարատուի՝ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունն առաջանում է մաքսային մարմնի կողմից տարանցման հայտարարագիրը գրանցելու պահից:

2. Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) օտարերկրյա ապրանքների նկատմամբ հայտարարատուի՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) սույն Օրենսգրքի 294-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերին համապատասխան «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտ.

2) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով դրանց բռնագանձում.

3) վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով օտարերկրյա ապրանքների ոչնչացման և (կամ) անվերադարձ կորստի փաստը կամ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) և (կամ) պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով այդ ապրանքների անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմնի կողմից ճանաչելը՝ անդամ պետությունների մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան այդպիսի ոչնչացումը կամ անվերադարձ կորուստը սույն Օրենսգրքին համապատասխան վրա է հասել այդ օտարերկրյա ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետը.

4) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողման մերժում՝ տարանցման հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ ներմուծման մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարելու պարտավորության առնչությամբ.

5) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան տարանցման հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ տարանցման հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

3. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն Օրենսգրքի 294-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերին համապատասխան օտարերկրյա ապրանքների նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը չավարտվելու դեպքում:

Նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում օտարերկրյա ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը:

4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես կլիներ, եթե խողովակաշարային տրանսպորտով տեղափոխող՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման սակագնային առանձնաշնորհումների և արտոնությունների կիրառման:

Ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում են տարանցման հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ գործող ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերը:

5. Մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը կատարելուց և (կամ) դրանք բռնագանձելուց (ամբողջությամբ կամ մասնակի) հետո «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան մաքսային ընթացակարգերով ձևակերպելու կամ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան մաքսային մարմինների կողմից այդ ապրանքներն արգելանքի վերցնելու (արգելապահելու) դեպքում մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի՝ սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին և 76-րդ հոդվածին համապատասխան:

6. Միության՝ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված), Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքով փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) ապրանքների նկատմամբ արտահանման մաքսատուրքերը վճարելու հայտարարատուի պարտավորությունն առաջանում է մաքսային մարմնի կողմից տարանցման հայտարարագիրը գրանցելու պահից:

7. Միության՝ սույն հոդվածի 6-րդ կետում նշված ապրանքների նկատմամբ արտահանման մաքսատուրքերը վճարելու հայտարարատուի պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) սույն Օրենսգրքի 294-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերին համապատասխան «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության ավարտ.

2) արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարում և (կամ) դրանց բռնագանձում՝ սույն հոդվածի 9-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով.

3) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողման մերժում՝ տարանցման հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ արտահանման մաքսատուրքեր վճարելու պարտավորության առնչությամբ.

4) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան տարանցման հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ տարանցման հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ:

8. Արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման՝ Միության ապրանքների նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը սույն Օրենսգրքի 294-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերին համապատասխան չավարտվելու դեպքում:

Նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում արտահանման մաքսատուրքերը վճարելու ժամկետ է համարվում Միության ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը:

9. Սույն հոդվածի 8-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում արտահանման մաքսատուրքերը ենթակա են վճարման այնպես, ինչպես դա կլիներ, եթե Միության՝ խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված, Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքով փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) ապրանքները ձևակերպվեին «արտահանում» մաքսային ընթացակարգով՝ առանց արտահանման մաքսատուրքերի վճարման արտոնությունների կիրառման:

Արտահանման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում են արտահանման մաքսատուրքերի այն դրույքաչափերը, որոնք գործում են տարանցման հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ:

Գլուխ 42

Միության մաքսային սահմանով անձանց առանձին կատեգորիաների կողմից ապրանքների, դիվանագիտական փոստի և հյուպատոսական ճամպրուկի (վալիզայի) տեղափոխման կարգի և պայմանների առանձնահատկությունները

Հոդված 296. Ընդհանուր դրույթներ անձանց առանձին կատեգորիաների կողմից Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման կարգի և պայմանների առանձնահատկությունների մասին

1. Դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, պետությունների՝ միջազգային կազմակերպություններին կից ներկայացուցչությունների, երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին և անդամ պետությունների միջև միջազգային պայմանագրերին համապատասխան արտոնություններից և (կամ) անձեռնմխելիություններից օգտվող միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների, Միության մաքսային տարածքում տեղակայված այլ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների պաշտոնական օգտագործման համար նախատեսված ապրանքների, ինչպես նաև երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին և անդամ պետությունների միջև միջազգային պայմանագրերին համապատասխան արտոնություններից և (կամ) անձեռնմխելիություններից օգտվող ֆիզիկական անձանց առանձին կատեգորիաների կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխումը Միության մաքսային սահմանով իրականացվում է սույն Օրենսգրքով սահմանված կարգով և պայմաններով՝ հաշվի առնելով սույն գլխի դրույթները:

2. Միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների անձնակազմի (աշխատակիցների, պաշտոնատար անձանց), պետությունների՝ միջազգային կազմակերպություններին կից ներկայացուցչությունների աշխատակիցների, Միության մաքսային տարածքում տեղակայված այլ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կողմից անձնական օգտագործման

ապրանքները տեղափոխվում են Միության մաքսային սահմանով սույն Օրենսգրքին համապատասխան՝ հաշվի առնելով երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով և անդամ պետությունների միջև միջազգային պայմանագրերով այդ անձանց տրամադրված արտոնությունների և (կամ) անձեռնմխելիությունների ծավալը:

Հոդված 297. Միության մաքսային տարածքում տեղակայված Դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների, պետությունների՝ միջազգային կազմակերպություններին կից ներկայացուցչությունների, այլ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների պաշտոնական օգտագործման համար նախատեսված ապրանքների ձևակերպումը մաքսային ընթացակարգերով

1. Միության մաքսային տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների պաշտոնական օգտագործման համար նախատեսված՝ Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները ձևակերպվում են հատուկ մաքսային ընթացակարգով՝ սույն Օրենսգրքի 36-րդ գլխին համապատասխան կամ սույն Օրենսգրքով նախատեսված այլ մաքսային ընթացակարգերով՝ հաշվի առնելով սույն հոդվածի դրույթները:

2. Միության մաքսային տարածքում տեղակայված՝ պետությունների՝ միջազգային կազմակերպություններին կից ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների պաշտոնական օգտագործման համար նախատեսված ապրանքները, որոնց նկատմամբ, երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին և անդամ պետությունների միջև միջազգային պայմանագրերին համապատասխան, նախատեսված է ազատում մաքսատուրքերի, հարկերի վճարումից, անդամ պետության տարածքում տեղակայված այլ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների պաշտոնական օգտագործման համար նախատեսված ապրանքները, որոնց նկատմամբ այդ անդամ պետության միջազգային պայմանագրերին համապատասխան նախատեսված է ազատում մաքսատուրքերի, հարկերի վճարումից, սույն Օրենսգրքի 36-րդ գլխին համապատասխան ձևակերպվում են հատուկ մաքսային ընթացակարգով կամ սույն Օրենսգրքով նախատեսված այլ մաքսային ընթացակարգերով՝ հաշվի առնելով սույն հոդվածի դրույթները:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված ապրանքները հատուկ մաքսային ընթացակարգից տարբեր այլ մաքսային ընթացակարգերով ձևակերպելու ժամանակ Միության մաքսային տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները, միջազգային կազմակերպությունները կամ դրանց ներկայացուցչությունները, պետությունների՝ միջազգային կազմակերպություններին կից ներկայացուցչությունները, այլ կազմակերպությունները կամ դրանց ներկայացուցչություններն իրավունք ունեն օգտագործելու «Միության մասին» պայմանագրին համապատասխան նախատեսված մաքսատուրքերի վճարման արտոնությունները և (կամ) հարկերի վճարման՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված արտոնությունները:

4. Որպես սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված՝ սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերով, բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի, ձևակերպվող ապրանքների հայտարարատու հանդես են գալիս սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված անձինք:

Հոդված 298. Դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների ղեկավարների, դիվանագիտական ներկայացուցչությունների դիվանագիտական անձնակազմի անդամների, հյուպատոսական հիմնարկների հյուպատոսական պաշտոնատար անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների կողմից ապրանքները Միության մաքսային սահմանով տեղափոխելու պայմանները

1. Դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները, դիվանագիտական ներկայացուցչությունների դիվանագիտական անձնակազմի անդամները, եթե նրանք մշտական հիմունքներով չեն բնակվում գտնվելու պետություն հանդիսացող անդամ պետությունում և այդ անդամ պետության քաղաքացի չեն, ինչպես նաև նրանց հետ ապրող իրենց ընտանիքների անդամները, եթե նրանք գտնվելու պետություն հանդիսացող անդամ պետության քաղաքացիներ չեն, իրավունք ունեն՝

1) մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ՝ Միության մաքսային տարածք ներմուծելու՝

անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ՝ գտնվելու պետությունում այդ անձանց արտոնություններ տրամադրելու՝ այդ պետության օրենսդրությանը համապատասխան հաստատվող ժամկետով.

անձնական օգտագործման այլ ապրանքներ՝ ներառյալ առաջնահերթ ձեռքբերման ապրանքները.

2) Միության մաքսային տարածքից արտահանել անձնական օգտագործման ապրանքներ՝ առանց մաքսատուրքերի վճարման:

2. Հյուպատոսական հիմնարկների ղեկավարները և հյուպատոսական հիմնարկների այլ հյուպատոսական

պաշտոնատար անձինք, նրանց հետ ապրող իրենց ընտանիքների անդամները, եթե նշված անձինք մշտական հիմունքներով չեն բնակվում գտնվելու պետություն հանդիսացող անդամ պետությունում և այդ անդամ պետության քաղաքացիներ չեն, իրավունք ունեն՝

1) մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ՝ Միության մաքսային տարածք ներմուծելու՝

անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ՝ գտնվելու պետությունում այդ անձանց արտոնություններ տրամադրելու՝ այդ պետության օրենսդրությանը համապատասխան հաստատվող ժամկետով.

անձնական օգտագործման այլ ապրանքներ՝ ներառյալ առաջնահերթ ձեռքբերման ապրանքները.

2) Միության մաքսային տարածքից արտահանել անձնական օգտագործման ապրանքներ՝ առանց մաքսատուրքերի վճարման:

3. Սույն հոդվածի 2-րդ կետի դրույթները չեն կիրառվում Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման ժամանակ՝

1) հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձանց կողմից.

2) հյուպատոսական պատվավոր ծառայողների կողմից ղեկավարվող հյուպատոսական հիմնարկներում աշխատող հյուպատոսական պաշտոնատար անձանց կողմից.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված անձանց ընտանիքների անդամների կողմից:

4. Դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների, դիվանագիտական ներկայացուցչությունների դիվանագիտական անձնակազմի անդամների կողմից, եթե նրանք մշտական հիմունքներով չեն բնակվում գտնվելու պետություն հանդիսացող անդամ պետությունում և այդ անդամ պետության քաղաքացիներ չեն, ինչպես նաև նրանց հետ ապրող իրենց ընտանիքների անդամների կողմից, եթե նրանք գտնվելու պետություն հանդիսացող անդամ պետության քաղաքացիներ չեն, Միության մաքսային սահմանով ուղեկցվող և (կամ) չուղեկցվող ուղեբեռով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքներն ազատվում են մաքսային զննումից, եթե լուրջ հիմքեր չկան ենթադրելու, որ այդ ուղեբեռը պարունակում է ապրանքներ, որոնց նկատմամբ սահմանվել են ներմուծման և (կամ) արտահանման արգելքներ կամ կիրառվում է այդ ապրանքների ներմուծման և (կամ) արտահանման թույլատրման կարգ, ինչպես նաև որոնց նկատմամբ կիրառվում են սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ և ճառագայթային անվտանգության պահանջներ: Այդ ապրանքների մաքսային զննումը պետք է անցկացվի միայն նշված անձանց կամ նրանց ներկայացուցիչների ներկայությամբ:

5. Հյուպատոսական հիմնարկների ղեկավարների և հյուպատոսական հիմնարկների այլ հյուպատոսական պաշտոնատար անձանց կողմից, եթե նրանք մշտական հիմունքներով չեն բնակվում գտնվելու պետություն հանդիսացող անդամ պետությունում և այդ անդամ պետության քաղաքացիներ չեն, Միության մաքսային սահմանով ուղեկցվող և (կամ) չուղեկցվող ուղեբեռով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքները, ինչպես նաև նշված անձանց հետ ապրող իրենց ընտանիքների անդամների կողմից, եթե նրանք նույնպես մշտական հիմունքներով չեն բնակվում գտնվելու պետություն հանդիսացող անդամ պետությունում և այդ անդամ պետության քաղաքացիներ չեն, Միության մաքսային սահմանով ուղեկցվող և (կամ) չուղեկցվող ուղեբեռով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքներն ազատվում են մաքսային զննումից, եթե լուրջ հիմքեր չկան ենթադրելու, որ այդ ուղեբեռը պարունակում է ապրանքներ, որոնց նկատմամբ սահմանվել են ներմուծման և (կամ) արտահանման արգելքներ կամ կիրառվում է այդ ապրանքների ներմուծման և (կամ) արտահանման թույլատրման կարգ, ինչպես նաև որոնց նկատմամբ կիրառվում են սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ և ճառագայթային անվտանգության պահանջներ: Այդ ապրանքների մաքսային զննումը պետք է անցկացվի միայն նշված անձանց կամ նրանց ներկայացուցիչների ներկայությամբ:

6. Եթե երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով և անդամ պետությունների միջև միջազգային պայմանագրերով սույն հոդվածում նշված, այդ թվում՝ գտնվելու պետության քաղաքացի հանդիսացող և (կամ) մշտական հիմունքներով դրանում բնակվող ֆիզիկական անձանց համար նախատեսված է սույն հոդվածով նախատեսված արտոնությունների և անձեռնմխելիությունների ծավալից ավելի մեծ ծավալ, ապա Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների հետ կապված՝ այդ անձանց տրամադրվում է արտոնությունների և անձեռնմխելիությունների այն ծավալը, որը նախատեսված է երրորդ կողմի հետ անդամ պետությունների այդ միջազգային պայմանագրերով և անդամ պետությունների միջև միջազգային պայմանագրերով:

Հոդված 299. Դիվանագիտական ներկայացուցչությունների վարչատեխնիկական անձնակազմի անդամների, հյուպատոսական հիմնարկների հյուպատոսական ծառայողների, հյուպատոսական հիմնարկների սպասարկող անձնակազմի աշխատողների, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների կողմից Միության մաքսային սահմանով ապրանքները տեղափոխելու պայմանները

1. Դիվանագիտական ներկայացուցչությունների վարչատեխնիկական անձնակազմի անդամները և նրանց հետ ապրող իրենց ընտանիքների անդամները, հյուպատոսական հիմնարկների հյուպատոսական ծառայողները, եթե նրանք գտնվելու պետություն հանդիսացող անդամ պետությունում մշտական հիմունքներով չեն բնակվում և այդ անդամ պետության քաղաքացիներ չեն, իրավունք ունեն՝

1) մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ՝ առաջնահերթ ձեռքբերման համար Միության մաքսային տարածք ներմուծելու՝

անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ՝ գտնվելու պետությունում այդ անձանց արտոնություններ տրամադրելու՝ այդ պետության օրենսդրությանը համապատասխան հաստատվող ժամկետով.

անձնական օգտագործման այլ ապրանքներ.

2) Միության մաքսային տարածքից արտահանել անձնական օգտագործման ապրանքներ՝ առանց մաքսատուրքերի վճարման:

2. Գտնվելու պետություն հանդիսացող անդամ պետությունում մշտական հիմունքներով չբնակվող և այդ անդամ պետության քաղաքացիներ չհանդիսացող՝ հյուպատոսական հիմնարկների հյուպատոսական ծառայողների հետ ապրող՝ նրանց ընտանիքների՝ անդամները, եթե նրանք նույնպես մշտական հիմունքներով չեն բնակվում գտնվելու պետություն հանդիսացող անդամ պետությունում, և այդ անդամ պետության քաղաքացիներ չեն, իրավունք ունեն՝

1) մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ՝ առաջնահերթ ձեռքբերման համար Միության մաքսային տարածք ներմուծելու՝

անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ՝ գտնվելու պետությունում այդ անձանց արտոնություններ տրամադրելու՝ այդ պետության օրենսդրությանը համապատասխան հաստատվող ժամկետով.

անձնական օգտագործման այլ ապրանքներ.

2) Միության մաքսային տարածքից արտահանել անձնական օգտագործման ապրանքներ՝ առանց մաքսատուրքերի վճարման:

3. Հյուպատոսական հիմնարկների սպասարկող անձնակազմի աշխատողները, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները, եթե նրանք մշտական հիմունքներով չեն բնակվում գտնվելու պետություն հանդիսացող անդամ պետությունում, իրավունք ունեն Միության մաքսային տարածք ներմուծելու անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ՝ գտնվելու պետությունում այդ անձանց արտոնություններ տրամադրելու՝ այդ պետության օրենսդրությանը համապատասխան հաստատվող ժամկետով, և անձնական օգտագործման այլ ապրանքներ՝ մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ, եթե դա նախատեսված է երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով կամ անդամ պետությունների միջև միջազգային պայմանագրերով:

4. Եթե երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով և անդամ պետությունների միջև միջազգային պայմանագրերով սույն հոդվածում նշված, այդ թվում՝ գտնվելու պետության քաղաքացի հանդիսացող և (կամ) մշտական հիմունքներով դրանում բնակվող ֆիզիկական անձանց համար նախատեսված է սույն հոդվածով նախատեսված արտոնությունների և անձեռնմխելիությունների ծավալից ավելի մեծ ծավալ, ապա Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների հետ կապված՝ այդ անձանց տրամադրվում է արտոնությունների և անձեռնմխելիությունների այն ծավալը, որը նախատեսված է երրորդ կողմի հետ անդամ պետությունների այդ միջազգային պայմանագրերով և անդամ պետությունների միջև միջազգային պայմանագրերով:

Հոդված 300. Միության անդամ չհանդիսացող պետությունների ներկայացուցիչների և պատվիրակությունների անդամների կողմից ապրանքների ներմուծումը Միության մաքսային տարածք

Միության անդամ չհանդիսացող պետությունների ներկայացուցիչների, այդ պետությունների խորհրդարանական և կառավարական պատվիրակությունների անդամների, իսկ փոխադարձության սկզբունքից ելնելով՝ յուրաքանչյուր առանձին անդամ պետության հետ կապված՝ Միության անդամ չհանդիսացող պետությունների պատվիրակությունների՝ միջազգային բանակցություններին, միջազգային կոնֆերանսներին և խորհրդակցություններին մասնակցելու համար կամ պաշտոնական այլ հանձնարարություններով անդամ պետությունների տարածքներ ժամանող ներկայացուցիչների, ինչպես նաև նշված անձանց ուղեկցող նրանց ընտանիքների անդամների կողմից՝ ուղեկցվող և (կամ) չուղեկցվող ուղերեռով Միության մաքսային սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքներն ազատվում են մաքսային զննումից, եթե լուրջ հիմքեր չկան ենթադրելու, որ այդ ուղերեռը պարունակում է ապրանքներ, որոնց նկատմամբ սահմանվել են ներմուծման և (կամ) արտահանման արգելքներ կամ կիրառվում է այդ ապրանքների ներմուծման և (կամ) արտահանման թույլատրման կարգ, ինչպես նաև որոնց նկատմամբ կիրառվում են սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ և ճառագայթային անվտանգության պահանջներ: Այդ ապրանքների մաքսային զննումը պետք է անցկացվի միայն նշված անձանց կամ նրանց ներկայացուցիչների ներկայությամբ:

Հոդված 301. Դիվանագիտական փոստի և հյուպատոսական ճամպրուկի (վալիզայի) տեղափոխումը Միության մաքսային սահմանով

1. Միության մաքսային սահմանով տեղափոխվող դիվանագիտական փոստը ենթակա չէ բացման և արգելանքի վերցման (արգելապահման):

2. Միության մաքսային սահմանով տեղափոխվող հյուպատոսական ճամպրուկը (վալիզան) ենթակա չէ բացման և արգելանքի վերցման (արգելապահման):

Եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ հյուպատոսական ճամպրուկում (վալիզայում) կան թղթակցություններ, փաստաթղթեր և (կամ) ապրանքներ, որոնք նախատեսված չեն բացառապես պաշտոնական օգտագործման համար, ապա մաքսային մարմինն իրավունք ունի պահանջելու, որ հյուպատոսական ճամպրուկը (վալիզան) բացվի ներկայացվող պետության լիազորված անձանց կողմից՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձի ներկայությամբ: Հյուպատոսական ճամպրուկը (վալիզան) բացելուց հրաժարվելու դեպքում այն վերադարձվում է ուղարկման վայր:

3. Դիվանագիտական փոստը և հյուպատոսական ճամպրուկը (վալիզան) կազմող բոլոր կապոցները պետք է ունենան դրանց բնույթը մատնանշող տեսանելի արտաքին նշաններ:

4. Դիվանագիտական փոստը կարող է պարունակել միայն դիվանագիտական փաստաթղթեր և բացառապես պաշտոնական օգտագործման համար նախատեսված ապրանքներ, իսկ հյուպատոսական ճամպրուկը (վալիզան)՝ միայն պաշտոնական թղթակցություններ, փաստաթղթեր և բացառապես պաշտոնական օգտագործման համար նախատեսված ապրանքներ:

5. Դիվանագիտական փոստը և հյուպատոսական ճամպրուկը (վալիզան) Միության մաքսային սահմանով տեղափոխվում են դիվանագիտական և հյուպատոսական սուրհանդակների կողմից: Դիվանագիտական փոստը և հյուպատոսական ճամպրուկը (վալիզան) նաև կարող են վստահվել միայն տվյալ դիվանագիտական փոստի կամ հյուպատոսական ճամպրուկի (վալիզայի) փոխադրման համար նշանակված դիվանագիտական կամ հյուպատոսական սուրհանդակներին կամ քաղաքացիական օդանավի անձնակազմի հրամանատարին:

Նշված դիվանագիտական և հյուպատոսական սուրհանդակներին պետք է տրվի սուրհանդակային փաստաթուղթ կամ դրան փոխարինող այլ պաշտոնական փաստաթուղթ, որի մեջ նշվում է նրանց կարգավիճակը և դիվանագիտական փոստն ու հյուպատոսական ճամպրուկը (վալիզան) կազմող կապոցների քանակը: Սուրհանդակային փաստաթուղթը կամ դրան փոխարինող այլ պաշտոնական փաստաթուղթ ստորագրվում և վավերացվում է դիվանագիտական փոստը և հյուպատոսական ճամպրուկը (վալիզան) ուղարկող հիմնարկի կնիքով:

Քաղաքացիական օդանավի անձնակազմի հրամանատարին վստահված դիվանագիտական փոստը և հյուպատոսական ճամպրուկը (վալիզան) պետք է ուղեկցվեն պաշտոնական փաստաթղթով, որի մեջ նշվում է դիվանագիտական փոստը և հյուպատոսական ճամպրուկը (վալիզան) կազմող կապոցների քանակը:

6. Դիվանագիտական և հյուպատոսական սուրհանդակները Միության մաքսային սահմանով կարող են տեղափոխել անձնական օգտագործման ապրանքներ՝ ելնելով յուրաքանչյուր առանձին պետության նկատմամբ փոխադարձության սկզբունքից՝ մաքսային զննումից ազատմամբ և առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

7. Դիվանագիտական փոստը և հյուպատոսական ճամպրուկը (վալիզան) Միության մաքսային սահմանով տեղափոխվում են մաքսային մարմնի թույլտվությամբ՝ առանց մաքսային հայտարարագրման և մաքսային ընթացակարգերով ձևակերպման:

Մաքսային մարմնի՝ Միության մաքսային սահմանով դիվանագիտական փոստի և հյուպատոսական ճամպրուկի (վալիզայի) տեղափոխման թույլտվությունն ստանալու համար մաքսային մարմին են ներկայացվում սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված փաստաթղթեր:

Մաքսային մարմնի՝ Միության մաքսային սահմանով դիվանագիտական փոստի և հյուպատոսական ճամպրուկի (վալիզայի) տեղափոխման թույլտվությունը ձևակերպվում է մաքսային մարմնի կողմից սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված փաստաթղթերի վրա համապատասխան նշումներ անելու միջոցով:

Գլուխ 43

Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող ապրանքների՝ Միության մաքսային սահմանով տեղափոխման կարգի և պայմանների առանձնահատկությունները

Հոդված 302. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող ապրանքների՝ Միության մաքսային սահմանով տեղափոխման մասին ընդհանուր դրույթները

1. Սույն գլխով սահմանված են Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող Միության ապրանքների, այդ թվում՝ փոստային առաքանիներով ուղարկվող և սույն հոդվածի 4-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքների՝ Միության մաքսային սահմանով տեղափոխման կարգի և պայմանների առանձնահատկությունները՝ բացառությամբ Միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքների, ինչպես նաև խողովակաշարային տրանսպորտով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող

ապրանքների:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ապրանքների ժամանումը Միության մաքսային տարածք և այդ ապրանքների մեկնումը Միության մաքսային տարածքից իրականացվում են սույն Օրենսգրքի 14-րդ և 15-րդ գլուխներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն գլխով նախատեսված առանձնահատկությունները:

3. Միության ապրանքները Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար ենթակա են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման՝ բացառությամբ Միության այդպիսի ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման)՝ սույն հոդվածի 5-րդ կետով նախատեսված դեպքերում:

4. «Մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով, «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով, «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները, ինչպես նաև Միության մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում կամ ներքին սպառման համար վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) օտարերկրյա ապրանքները (վերամշակման արդյունքները, թափոնները և մնացորդները) Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս դրանց փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար ենթակա են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման՝ բացառությամբ սույն հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքերում այդ օտարերկրյա ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման):

Սույն կետի դրույթները չեն տարածվում «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված տրանսպորտային միջոցների վրա, որոնք օգտագործվում են որպես միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ:

5. Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման ենթակա չեն՝

1) Միության ապրանքները և սույն հոդվածի 4-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքները, որոնք օդային կամ ջրային տրանսպորտով փոխադրվում են՝ համապատասխանաբար առանց Միության անդամ չհանդիսացող պետության տարածքում օդանավի վայրէջք կատարելու կամ առանց Միության անդամներ չհանդիսացող պետությունների նավահանգիստներ նավի մուտք գործելու (այսուհետ սույն գլխում՝ առանց Միության անդամ չհանդիսացող պետության տարածքում օդանավի վայրէջք կատարելու կամ այդ պետության նավահանգիստ նավի մուտք գործելու՝ օդային կամ ջրային տրանսպորտով փոխադրվող Միության ապրանքներ և օտարերկրյա ապրանքներ).

2) «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ տրանսպորտի ցանկացած տեսակով փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) Միության ապրանքները, որոնք մեկնման վայր հասցնելու համար ենթակա են փոխադրման (տրանսպորտային փոխադրման)՝ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս.

3) Միության ապրանքները, որոնք օդային կամ ջրային տրանսպորտով փոխադրվում են անդամ պետությունների տարածքներից դուրս գտնվող այն արհեստական կղզիներում, կայանքներում, կառույցներում (այսուհետ սույն գլխում՝ օբյեկտներ) շինարարության (ստեղծման, կառուցման), գործունեության (շահագործման, օգտագործման) և կենսագործունեության ապահովման համար, որոնց նկատմամբ անդամ պետություններն ունեն բացառիկ իրավազորություն.

4) Միության մաքսային տարածքի մնացած մասից օբյեկտներ նախկինում ներմուծված՝ Միության ապրանքները, ինչպես նաև անդամ պետությունների մայրցամաքային շելֆում տեղակայված օբյեկտներում արդյունահանված՝ Միության ապրանքները, ներառյալ՝ ածխաջրածնային հումքը և (կամ) դրանց վերամշակման արդյունքները:

6. Միության մաքսային տարածքի մի մասից այն տարածք փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար, որի նկատմամբ անդամ պետությունն ունի սուվերեն իրավունքներ և բացառիկ իրավազորություն, ներառյալ անդամ պետությունների մայրցամաքային շելֆը, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման ենթակա չեն օդային կամ ջրային տրանսպորտով փոխադրվող Միության ապրանքները՝ օբյեկտներում շինարարության (ստեղծման, կառուցման), գործունեության (շահագործման, օգտագործման) և կենսագործունեության ապահովման համար, ինչպես նաև անդամ պետությունների տարածքի և օբյեկտների միջև ֆիզիկական անձանց և ապրանքների փոխադրումն իրականացնող օդանավերի և նավերի բնականոն շահագործումը և տեխնիկական սպասարկումն ապահովելու նպատակով:

7. Սույն հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված՝ սույն հոդվածի 5-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան փոխադրվող Միության ապրանքների առնչությամբ կիրառվում են սույն գլխի դրույթները, որոնցով կարգավորվում են առանց Միության անդամ չհանդիսացող պետության տարածքում օդանավի վայրէջք կատարելու կամ այդ պետության նավահանգիստ նավի մուտք գործելու՝ օդային կամ ջրային տրանսպորտով փոխադրվող Միության ապրանքների և օտարերկրյա ապրանքների՝ Միության մաքսային սահմանով տեղափոխման կարգն ու պայմանները:

8. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորություն չի ծագում սույն հոդվածի 4-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում:

9. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող անձնական օգտագործման ապրանքների՝ Միության մաքսային սահմանով տեղափոխման առանձնահատկությունները որոշվում են Հանձնաժողովի կողմից:

Հոդված 303. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով փոխադրվող ապրանքների առնչությամբ մաքսային գործառնությունների իրականացման առանձնահատկությունները՝ առանց «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման, և այդպիսի ապրանքների կարգավիճակը

1. Սույն Օրենսգրքի 14-րդ գլխի դրույթները չեն կիրառվում առանց Միության անդամ չհանդիսացող պետության տարածքում օդանավի վայրէջք կատարելու կամ այդ պետության նավահանգիստ նավի մուտք գործելու՝ օդային կամ ջրային տրանսպորտով փոխադրվող Միության ապրանքների և օտարերկրյա ապրանքների առնչությամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ապրանքները Միության մաքսային տարածք են ժամանել Միության անդամ չհանդիսացող պետության տարածքում օդանավի հարկադրված վայրէջքից հետո, այդ թվում՝ այն վայրէջքից հետո, որի ժամանակ կատարվել են բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և փոխադրվող ապրանքների հետ կատարվող բեռնային այլ գործողություններ, կամ վթարի, անհաղթահարելի ուժի ազդեցության կամ այլ հանգամանքների հետևանքով Միության անդամ չհանդիսացող պետության նավահանգիստ նավի մուտք գործելուց հետո, այդ թվում՝ այն մուտքից հետո, որի ժամանակ կատարվել են բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և փոխադրվող ապրանքների հետ կատարվող բեռնային այլ գործողություններ:

2. Սույն Օրենսգրքի 15-րդ գլխի դրույթները չեն կիրառվում Միության այն ապրանքների և օտարերկրյա ապրանքների նկատմամբ, որոնք փոխադրվում են օդային կամ ջրային տրանսպորտով՝ առանց Միության անդամ չհանդիսացող պետության տարածքում օդանավի վայրէջք կատարելու կամ այդ պետության նավահանգիստ նավի մուտք գործելու:

3. Մաքսային գործառնությունները, որոնք փոխադրողը կամ սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածում նշված այլ անձինք պարտավոր են իրականացնել, Միության մաքսային տարածք Միության ապրանքների և սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 4-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքների ժամանման մասին մաքսային մարմնին ծանուցելուց հետո, որոնց փոխադրման ժամանակ Միության անդամ չհանդիսացող պետության տարածքում համապատասխանաբար օդանավը կատարել է հարկադրված վայրէջք, այդ թվում՝ այն վայրէջքը, որի ժամանակ կատարվել են բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և փոխադրվող ապրանքների հետ կատարվող բեռնային այլ գործողություններ, կամ վթարի, անհաղթահարելի ուժի ազդեցության կամ այլ հանգամանքների հետևանքով նավը մուտք է գործել Միության անդամ չհանդիսացող պետության նավահանգիստ, այդ թվում՝ այն մուտքը, որի ժամանակ կատարվել են բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և փոխադրվող ապրանքների հետ կատարվող բեռնային այլ գործողություններ, ինչպես նաև ժամկետը, որի ընթացքում այդ գործառնությունները պետք է կատարվեն, որոշվում են Հանձնաժողովի կողմից:

4. Առանց Միության անդամ չհանդիսացող պետության տարածքում օդանավի վայրէջք կատարելու կամ այդ պետության նավահանգիստ նավի մուտք գործելու՝ օդային կամ ջրային տրանսպորտով փոխադրվող Միության ապրանքները և օտարերկրյա ապրանքներն այդ փոխադրումից հետո պահպանում են համապատասխանաբար Միության ապրանքների և օտարերկրյա ապրանքների կարգավիճակը:

5. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 4-րդ կետում նշված ապրանքների փոխադրման ժամանակ Միության անդամ չհանդիսացող պետության տարածքում համապատասխանաբար օդանավը կատարել է հարկադրված վայրէջք, այդ թվում՝ այն վայրէջքը, որի ժամանակ կատարվել են բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և փոխադրվող ապրանքների հետ կատարվող բեռնային այլ գործողություններ, կամ վթարի, անհաղթահարելի ուժի ազդեցության կամ այլ հանգամանքների հետևանքով նավը մուտք է գործել Միության անդամ չհանդիսացող պետության նավահանգիստ, այդ թվում՝ այն մուտքը, որի ժամանակ կատարվել են բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և փոխադրվող ապրանքների հետ կատարվող բեռնային այլ գործողություններ՝

1) Միության մաքսային տարածք ապրանքների ժամանումից հետո այդ ապրանքների կարգավիճակը՝ որպես Միության ապրանքների կամ սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 4-րդ կետում նշված օտարերկրյա ապրանքների, հաստատվում է Հանձնաժողովի կողմից սահմանվող կարգով.

2) Միության մաքսային սահմաններից դուրս ապրանքները թողնելու դեպքում Միության ապրանքները ենթակա են «արտահանում» մաքսային ընթացակարգով կամ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպման, իսկ օտարերկրյա ապրանքները՝ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպման:

6. Սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված Միության ապրանքների՝ Միության մաքսային տարածքից մեկնման և Միության մաքսային տարածք ժամանման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգը որոշվում է Հանձնաժողովի կողմից:

7. Անկախ սույն Օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներից՝ սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված Միության ապրանքները, որոնք Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային

տարածքի մեկ այլ մաս են ներմուծվել սույն կետի երկրորդ պարբերության դրույթների պահպանմամբ, պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը և կորցնում են այդ կարգավիճակը՝ Միության մաքսային տարածքից փաստացի կերպով արտահանվելուց հետո:

Նշված ապրանքները դիտարկվում են որպես Միության ապրանքներ՝ պայմանով, որ ժամանման վայրում մաքսային մարմին է ներկայացվում այն մաքսային հայտարարագիրը, որին համապատասխան այդ ապրանքները ձևակերպվել են «արտահանում» մաքսային ընթացակարգով, և որի մեջ տեղեկություններ են պարունակվում մեկնման վայրի այն մաքսային մարմնի մասին, որը գտնվում է Միության մաքսային տարածքի այն մասում, որտեղ ներմուծվել են ապրանքները:

8. Սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետում և 6-րդ կետում նշված Միության ապրանքների՝ Միության մաքսային տարածքից մեկնման և սույն Օրենսգրքի 302-րդ հոդվածի 5-րդ կետի 4-րդ ենթակետում նշված Միության ապրանքների՝ Միության մաքսային տարածք ժամանման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգը սահմանվում է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի բացառիկ իրավազորության շրջանակներում գտնվում է օբյեկտը:

Հոդված 304. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող Միության ապրանքների առնչությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառելու, ավարտելու և գործողությունը դադարեցնելու առանձնահատկությունները

1. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող Միության ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանները հետևյալն են՝

1) արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը կատարելու ապահովումը սույն Օրենսգրքի 146-րդ հոդվածին համապատասխան այն դեպքում, երբ այն անդամ պետությունում, որի տարածքում Միության ապրանքները ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով, այդպիսի ապրանքների նկատմամբ սահմանված են արտահանման մաքսատուրքերի դրույքաչափեր՝ բացառությամբ՝

այն դեպքերի, երբ որպես «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող Միության ապրանքների հայտարարատու հանդես է գալիս անդամ պետության այն անձը, որը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով Միության ապրանքների ձևակերպման անդամ պետությունում տարանցման հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ չունի մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը, տոկոսները, տույժերը վճարելու սահմանված ժամկետում չվճարված պարտավորություն, ինչպես նաև, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում Միության ապրանքները ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով, բացակայում են սահմանված ժամկետում չվճարված վարչական տուգանքները, որոնք նշանակվել են դատարանի կամ լիազորված մարմնի (պաշտոնատար անձի)՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումների հիման վրա.

Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերի.

2) սույն Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված պայմանների պահպանումը.

3) այն փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ներկայացումը, որոնցով հաստատվում է Միության ապրանքների կարգավիճակը՝ բացառությամբ Հանձնաժողովի կողմից սահմանվող դեպքերի:

2. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով, երկաթուղային տրանսպորտով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրման համար որպես «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող՝ Միության ապրանքների հայտարարատու, ինչպես նաև որպես սույն Օրենսգրքի 307-րդ հոդվածի 5-րդ կետում նշված մաքսային գործառնություններն իրականացնող անձ կարող են հանդես գալ միայն սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված անձինք, իսկ փոստային առաքանիների փոխադրման դեպքում՝ փոստային կապի նշանակված օպերատորը:

3. Սույն հոդվածի կիրառման նպատակով Միության ապրանքների կարգավիճակը հաստատող փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները որոշվում են Հանձնաժողովի կողմից:

4. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող Միության ապրանքների՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման հետ կապված մաքսային գործառնություններն իրականացվում են Միության մաքսային տարածքից մեկնման վայրում կամ այն մաքսային մարմնում, որի գործունեության տարածքում գտնվում է Միության ապրանքներն ուղարկողը՝ հաշվի առնելով սույն հոդվածի 5-7-րդ կետերի դրույթները:

5. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող Միության ապրանքների՝ «մաքսային

տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման հետ կապված մաքսային գործառնություններն իրականացվում են բացառապես այն մաքսային մարմնում, որի գործունեության տարածքում գտնվում է Միության ապրանքներն ուղարկողը, հետևյալ դեպքերում՝

1) Միության ապրանքները փոխադրվում են երկաթուղային տրանսպորտով՝ բացառությամբ ուղևորատար գնացքների կազմում ուղևորվող փոստային, ուղեբեռային (փոստային-ուղեբեռային) վագոններում փոխադրվող Միության ապրանքների.

2) այն անդամ պետությունում, որի տարածքում Միության ապրանքները ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով, այդ ապրանքների նկատմամբ սահմանված են արտահանման մաքսատուրքերի դրույքաչափեր.

3) փոխադրման պայմաններով նախատեսված է Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներում բեռնային գործողությունների իրականացում:

6. Անկախ սույն հոդվածի 5-րդ կետի դրույթներից՝ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով, օդային տրանսպորտով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող Միության ապրանքների՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման հետ կապված մաքսային գործառնություններն իրականացվում են բացառապես մեկնման վայրի մաքսային մարմնում:

7. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս երկաթուղային տրանսպորտով՝ ուղևորատար գնացքների կազմում ուղևորվող փոստային, ուղեբեռային (փոստային-ուղեբեռային) վագոններում փոխադրվող Միության ապրանքների՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման հետ կապված մաքսային գործառնություններն իրականացվում են բացառապես մաքսային կարգավորման վերաբերյալ այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված այն մաքսային մարմնում, որի տարածքում Միության ապրանքները ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով:

8. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող Միության ապրանքների առաքման վայր է այն մաքսային մարմնի մաքսային հսկողության գոտին, որի գործունեության տարածքում գտնվում է ժամանման վայրը՝ բացառությամբ սույն հոդվածի 9-րդ կետում նշված դեպքի:

9. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս երկաթուղային տրանսպորտով՝ ուղևորատար գնացքների կազմում ուղևորվող փոստային, ուղեբեռային (փոստային-ուղեբեռային) վագոններում փոխադրվող Միության ապրանքների առաքման վայր է այն մաքսային մարմնի մաքսային հսկողության գոտին, որի գործունեության տարածքում իրականացվելու է Միության այդ ապրանքների դատարկումը:

10. Միության մաքսային տարածք սույն հոդվածի 9-րդ կետում նշված Միության ապրանքների ժամանման դեպքում այն մաքսային մարմնի կողմից, որի գործունեության տարածքում գտնվում է ժամանման վայրը, իրականացվում է այն նույնականացման միջոցների հեռացումը, որոնք ուղարկող մաքսային մարմնի կողմից զետեղվել են երկաթուղային տրանսպորտային միջոցների բեռնասրահների (հատվածամասերի) վրա:

11. Սույն հոդվածի 10-րդ կետին համապատասխան նույնականացման միջոցների հեռացման դեպքում կազմվում է սույն Օրենսգրքի 341-րդ հոդվածի 5-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված ակտ՝ անհրաժեշտ քանակով օրինակներից՝ ստորև նշվածների համար մեկական օրինակի հաշվարկով՝

1) նույնականացման միջոցների հեռացումն իրականացնող մաքսային մարմնի.

2) Միության ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձի.

3) նշանակման՝ հաջորդող բոլոր մաքսային մարմինների համար:

12. Հանձնաժողովն իրավունք ունի որոշելու այն դեպքերը, երբ սույն հոդվածի 10-րդ և 11-րդ կետերը չեն կիրառվում:

13. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող Միության ապրանքների առնչությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է ապրանքների առաքման վայրում՝ սույն Օրենսգրքի 151-րդ հոդվածին համապատասխան:

14. Եթե Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և Միության մաքսային տարածքից արտահանված Միության ապրանքները չեն հասցվել ապրանքների առաքման վայր, այլ վերադարձվել են Միության մաքսային տարածք և հասցվել ուղարկող մաքսային մարմին, ապա այդ մաքսային մարմինն ավարտում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ սույն Օրենսգրքի 151-րդ հոդվածին համապատասխան, և նշանակման մաքսային մարմնին տեղեկացնում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու մասին:

15. Եթե Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելիս հասցվել են մաքսային մարմին, որը տարբեր է նշանակման մաքսային մարմնից և ուղարկող մաքսային մարմնից, ապա այդ մաքսային մարմինն ավարտում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ սույն Օրենսգրքի

151-րդ հոդվածին համապատասխան, ու նշանակման մաքսային մարմնին և ուղարկող մաքսային մարմնին տեղեկացնում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու մասին:

16. Այն դեպքում, երբ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և Միության մաքսային տարածքից արտահանված Միության ապրանքները չեն ներմուծվել Միության մաքսային տարածք, ուղարկող մաքսային մարմինը Հանձնաժողովի կողմից որոշվող կարգով դադարեցնում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը:

17. Հանձնաժողովը իրավունք ունի սահմանելու սույն Օրենսգրքի 307-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվածից տարբեր այլ դեպքեր, երբ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) Միության ապրանքները կորցնում են Միության ապրանքների կարգավիճակը և Միության մաքսային տարածք ներմուծելիս դիտարկվում որպես օտարերկրյա ապրանքներ:

Հոդված 305. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող օտարերկրյա ապրանքների առանձին կատեգորիաների առնչությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառելու, գործողությունն ավարտելու և դադարեցնելու առանձնահատկությունները

1. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող)՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով կամ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների, մաքսային տարածքում վերամշակման գործողությունների արդյունքում կամ ներքին սպառման համար վերամշակման գործողությունների արդյունքում ստացված (գոյացած) օտարերկրյա ապրանքների (վերամշակման արդյունքների, թափոնների և մնացորդների) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման պայմաններն են՝

1) սույն Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված պայմանների պահպանումը.

2) Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով օտարերկրյա ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) այն անձի հասցեով, որն իրականացնելու է Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման գործողությունները կամ ներքին սպառման համար վերամշակման գործողությունները, կամ նման գործողություններ իրականացրած անձանցից՝ «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով կամ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների հայտարարատուի հասցեով, ինչը հաստատվում է մաքսային տարածքում ապրանքների վերամշակման պայմանների մասին փաստաթուղթը կամ ապրանքների ներքին սպառման համար վերամշակման պայմանների մասին փաստաթուղթը մաքսային մարմին ներկայացնելով:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված օտարերկրյա ապրանքների մաքսային հայտարարագրման դեպքում «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան որպես տարանցման հայտարարագիր չեն կարող օգտագործվել տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթեր, այդ թվում՝ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված փաստաթղթերը:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված օտարերկրյա ապրանքների՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման հետ կապված մաքսային գործառնություններն իրականացվում են այն մաքսային մարմնում՝

1) որում օտարերկրյա ապրանքները ձևակերպվել են «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով կամ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգով, կամ մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան որոշված այլ մաքսային մարմնում.

2) որի գործունեության տարածքում սույն հոդվածի 1-ին կետում նշված օտարերկրյա ապրանքների առնչությամբ իրականացվել են (պետք է իրականացված լինեին) Միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակման համապատասխան գործողություններ կամ ներքին սպառման համար ապրանքների վերամշակման համապատասխան գործողություններ:

4. Սույն հոդվածի 1-ին կետում նշված օտարերկրյա ապրանքների առնչությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է ապրանքների առաքման վայրում՝ սույն Օրենսգրքի 151-րդ հոդվածին համապատասխան:

5. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելիս հասցվել են մաքսային մարմին, որը տարբեր է նշանակման մաքսային մարմնից և ուղարկող մաքսային մարմնից, ապա այդ մաքսային մարմինն

ավարտում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ սույն Օրենսգրքի 151-րդ հոդվածին համապատասխան, ու նշանակման մաքսային մարմնին և ուղարկող մաքսային մարմնին տեղեկացնում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու մասին:

6. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված, Միության մաքսային տարածքից արտահանված օտարերկրյա ապրանքները չեն ներմուծվել Միության մաքսային տարածք, ուղարկող մաքսային մարմինը դադարեցնում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը՝ Հանձնաժողովի կողմից որոշվող կարգով:

Հոդված 306. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող)՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների առնչությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը կիրառելու, գործողությունն ավարտելու և դադարեցնելու առանձնահատկությունները

1. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող)՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանները հետևյալն են՝

1) սույն Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված պայմանների պահպանումը.

2) մաքսային մարմնին տեղեկություններ ներկայացնելը՝ օտարերկրյա ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու, ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) նպատակի և դրանց օգտագործման վայրի մասին, այն անձի մասին, որի օգտագործմանը օտարերկրյա ապրանքները փոխանցվում են, եթե այդ փոխանցումը տեղի է ունեցել, ժամանակավոր ներմուծված ապրանքներն այլ անձանց տիրապետմանն ու օգտագործմանը փոխանցելու մաքսային մարմնի թույլտվության մասին, եթե այդ փոխանցումը տեղի է ունեցել, որոնք հաստատվում են մաքսային մարմնին մաքսային և (կամ) այլ փաստաթղթերի և (կամ) այդ փաստաթղթերի մասին տեղեկությունների ներկայացմամբ: Նշված փաստաթղթերի բացակայության դեպքում հայտարարատուի կողմից մաքսային մարմին ներկայացվում է ազատ ձևով շարադրված դիմում՝ անհրաժեշտ տեղեկությունների մասին նշումով:

2. «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները կարող են ձևակերպվել «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ սույն հոդվածին համապատասխան՝ մեկ կամ մի քանի խմբաքանակներով:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված օտարերկրյա ապրանքների մաքսային հայտարարագրման դեպքում «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան որպես տարանցման հայտարարագիր չեն կարող օգտագործվել տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթեր, այդ թվում՝ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված փաստաթղթերը:

4. Սույն հոդվածի 1-ին կետում նշված օտարերկրյա ապրանքների՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման հետ կապված մաքսային գործառնություններն իրականացվում են այն մաքսային մարմնում՝

1) որտեղ օտարերկրյա ապրանքները ձևակերպվել են «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով, կամ մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան որոշված այլ մաքսային մարմնում.

2) որտեղ ավարտվել է «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված և Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) օտարերկրյա ապրանքների առնչությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը, կամ մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան որոշված այլ մաքսային մարմնում:

5. Սույն հոդվածի 1-ին կետում նշված օտարերկրյա ապրանքների առնչությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է ապրանքների առաքման վայրում՝ սույն Օրենսգրքի 151-րդ հոդվածին համապատասխան:

6. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելիս հասցվել են մաքսային մարմին, որը տարբեր է նշանակման մաքսային մարմնից և ուղարկող մաքսային մարմնից, ապա այդ մաքսային մարմինն ավարտում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ սույն Օրենսգրքի 151-րդ հոդվածին համապատասխան, ու նշանակման մաքսային մարմնին և ուղարկող մաքսային մարմնին տեղեկացնում է «մաքսային

տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու մասին:

7. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և Միության մաքսային տարածքից արտահանված օտարերկրյա ապրանքները չեն ներմուծվել Միության մաքսային տարածք, ուղարկող մաքսային մարմինը դադարեցնում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը՝ Հանձնաժողովի կողմից որոշվող կարգով:

Հոդված 307. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս Միության ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) դեպքում բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և Միության ապրանքների հետ կատարվող բեռնային այլ գործողություններ, ինչպես նաև տրանսպորտային միջոցների փոխարինումը

1. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) Միության ապրանքների՝ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներում բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և դրանց հետ կատարվող բեռնային այլ գործողությունները, Միության այդ ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների փոխարինումն իրականացվում են ուղարկող մաքսային մարմնի թույլտվությամբ՝ տրանսպորտի մի տեսակի տրանսպորտային միջոցից տրանսպորտի մեկ այլ տեսակի տրանսպորտային միջոցի վրա Միության ապրանքների փոխաբեռնում (վերաբեռնում) իրականացնելու, տրանսպորտային միջոցների բեռնասրահների (հատվածամասերի) վրա զետեղված մաքսային կապարակնիքներն ու կնիքները հեռացնելու կամ տրանսպորտային (փոխադրման) և առևտրային փաստաթղթերը փոխարինելու դեպքերում:

Նշված թույլտվությունը պետք է ստացվի նախքան տարանցման հայտարարագիրը ներկայացնելը:

2. Այն դեպքում, երբ Միության ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված գործողությունները կարող են կատարվել՝ առանց զետեղված մաքսային կապարակնիքները և կնիքները հեռացնելու, կամ եթե Միության այդ ապրանքների վրա մաքսային կապարակնիքներ և կնիքներ չեն զետեղվել, այդ գործողությունների իրականացումը թույլատրվում է՝ ուղարկող մաքսային մարմնին և նշանակման մաքսային մարմնին էլեկտրոնային կամ գրավոր ձևով ծանուցելով՝ նախքան Միության մաքսային տարածք Միության այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների ժամանումը:

3. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին կետում նշված գործողությունները կատարվել են առանց ուղարկող մաքսային մարմնի թույլտվության, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները կորցնում են Միության ապրանքների կարգավիճակը և Միության մաքսային տարածք ներմուծելիս դիտարկվում են որպես օտարերկրյա ապրանքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այս գործողություններն իրականացվում են վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, ինչը հաստատվում է Միության անդամ չհանդիսացող պետության համապատասխան իրավասու մարմինների փաստաթղթերով:

4. Սույն հոդվածի 1-3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե սույն հոդվածի 1-ին կետում նշված գործողություններն իրականացվում են Միության անդամներ չհանդիսացող պետությունների պետական մարմինների պահանջով, ինչը հաստատվում է փաստաթղթերով կամ այդ պետական մարմինների կողմից կիրառված նույնականացման միջոցներով:

5. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) Միության ապրանքների՝ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներում բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և դրանց հետ կատարվող բեռնային այլ գործողություններ իրականացնելու, ինչպես նաև Միության այդ ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցները փոխարինելու համար մաքսային մարմնի թույլտվությունն ստանալու կամ այդ գործողություններն իրականացնելու մասին մաքսային մարմնին ծանուցելու հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգը որոշվում է Հանձնաժողովի կողմից:

Հոդված 308. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) դեպքում փոխադրողի և առաքողի (էքսպեդիտորի) պարտականությունները

1. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս Միության ապրանքների փոխադրման

(տրանսպորտային փոխադրման) դեպքում փոխադրողը, անկախ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքների հայտարարատուն լինելու հանգամանքից, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետում նշված դեպքի, պարտավոր է՝

1) ապահովել սույն Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պարտականությունների կատարումը.

2) թույլ չտալ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) Միության ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և դրանց հետ կատարվող բեռնային այլ գործողությունների իրականացումը, ինչպես նաև Միության այդ ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների փոխարինումը Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներում՝ առանց ուղարկող մաքսային մարմնի՝ սույն Օրենսգրքի 307-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված թույլտվության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործողություններն իրականացվել են վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, ինչը հաստատվում է պետական մարմինների կամ կազմակերպությունների կողմից տրված փաստաթղթերով՝ անդամ պետությունների օրենսդրությանը կամ երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան:

2. Այն դեպքում, երբ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս Միության ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) դեպքում որպես «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող Միության ապրանքների հայտարարատու են հանդես գալիս սույն Օրենսգրքի 304-րդ հոդվածի 2-րդ կետում նշված անձինք, սույն հոդվածի 1-ին կետում նշված գործողությունների իրականացման պարտականությունը վերապահվում է այդ անձանց:

Հոդված 309. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) Միության ապրանքների նկատմամբ արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության ծագումն ու դադարումը, դրանց վճարման ժամկետը և հաշվարկումը

1. Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող)՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող Միության ապրանքների նկատմամբ արտահանման մաքսատուրքերը վճարելու հայտարարատուի պարտավորությունը ծագում է տարանցման հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու պահից:

2. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող (ձևակերպված) Միության ապրանքների նկատմամբ արտահանման մաքսատուրքերը վճարելու հայտարարատուի պարտավորությունը դադարում է հետևյալ հանգամանքների ի հայտ գալու դեպքում՝

1) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը՝ սույն Օրենսգրքի 151-րդ հոդվածին համապատասխան.

2) Միության ապրանքները, որոնց նկատմամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը դադարեցվել է, սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան մաքսային ընթացակարգերով ձևակերպելը.

3) արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարումը և (կամ) դրանց բռնագանձումը՝ սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան հաշվարկված և վճարման ենթակա չափերով.

4) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան Միության ապրանքների բացթողման մերժումը՝ տարանցման հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած՝ արտահանման մաքսատուրքեր վճարելու պարտավորության առնչությամբ.

5) սույն Օրենսգրքի 113-րդ հոդվածին համապատասխան տարանցման հայտարարագիրը հետ կանչելը և (կամ) սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան Միության ապրանքների բացթողումը չեղյալ ճանաչելը՝ տարանցման հայտարարագրի գրանցման ժամանակ առաջացած արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության առնչությամբ.

6) Միության ապրանքները բռնագրավելը կամ անդամ պետության սեփականություն (եկամուտ) դարձնելը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

7) մաքսային մարմնի կողմից սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան Միության ապրանքներն արգելանքի վերցնելը (արգելապահելը).

8) Միության այն ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը կամ որևէ մաքսային ընթացակարգով ձևակերպելը, որոնք առգրավվել կամ արգելանքի տակ են դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով վարույթի կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգ իրականացնելու) ընթացքում և որոնց վերաբերյալ դրանք վերադարձնելու մասին որոշում է ընդունվել, եթե նախկինում Միության այդ ապրանքների բացթողում չի իրականացվել:

3. Արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման այն դեպքում, երբ Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներով և (կամ) ծովով Միության մաքսային տարածքի մի մասից Միության մաքսային տարածքի մեկ այլ մաս փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող)՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված և Միության մաքսային տարածքից արտահանված Միության ապրանքները չեն ներմուծվել Միության մաքսային տարածք:

Նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում արտահանման մաքսատուրքերը վճարելու ժամկետ է համարվում Միության ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրը:

4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված հանգամանքի ի հայտ գալու դեպքում արտահանման մաքսատուրքերը ենթակա են վճարման նույն կերպ, եթե «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված Միության ապրանքները ձևակերպված լինեին «արտահանում» մաքսային ընթացակարգով՝ առանց արտահանման մաքսատուրքերի վճարման արտոնությունների կիրառման:

Արտահանման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում են արտահանման մաքսատուրքերի այն դրույքաչափերը, որոնք գործում են տարանցման հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ:

Այն դեպքում, երբ մաքսային մարմինը չունի Միության ապրանքների (դրանց բնույթի, անվանման, քանակի, ծագման և (կամ) մաքսային արժեքի) մասին ճշգրիտ տեղեկություններ, վճարման ենթակա արտահանման մաքսատուրքերի հաշվարկման համար բազան որոշվում է մաքսային մարմնի մոտ առկա տեղեկությունների հիման վրա, իսկ Միության ապրանքների դասակարգումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները:

Այն դեպքում, երբ ապրանքների ծածկագրերն Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանված են 10 նիշից պակաս քանակով խմբավորման մակարդակով, արտահանման մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող արտահանման մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը:

Միության ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները հետագայում պարզվելու դեպքում արտահանման մաքսատուրքերը հաշվարկվում են՝ ելնելով այդ ճշգրիտ տեղեկություններից, և իրականացվում է արտահանման մաքսատուրքերի՝ ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված գումարների վերադարձ (հաշվանցում) կամ չվճարված գումարների բռնագանձում՝ սույն Օրենսգրքի 10-րդ և 11-րդ գլուխներին համապատասխան:

5. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ Միության մաքսային տարածքից արտահանված ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելու, սույն Օրենսգրքի 129-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան մաքսային ընթացակարգերով այդ ապրանքները ձևակերպելու դեպքում, արտահանման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարումից և (կամ) դրանց (ամբողջական կամ մասնակի) բռնագանձումից հետո, սույն հոդվածին համապատասխան վճարված և (կամ) բռնագանձված արտահանման մաքսատուրքերի գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին համապատասխան:

6. Այն դեպքում, երբ արտահանման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը սույն Օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան տրամադրել է անձը, որը «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատուն չէ, այդ այլ անձը հայտարարատուի հետ միասին՝ կրում է արտահանման մաքսատուրքերը վճարելու համար համապարտ պարտավորություն:

ԲԱԺԻՆ VI

ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Գլուխ 44

Մաքսային հսկողություն անցկացնելու վերաբերյալ ընդհանուր դրույթները

Հոդված 310. Մաքսային հսկողության անցկացումը

1. Մաքսային հսկողությունն անցկացվում է մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքին համապատասխան:

2. Մաքսային հսկողությունն անցկացվում է մաքսային հսկողության օբյեկտների առնչությամբ՝ նրանց նկատմամբ կիրառելով սույն Օրենսգրքով որոշված մաքսային հսկողության ձևերը և (կամ) մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցները:

Մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի խախտմամբ Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների հայտնաբերման նպատակով մաքսային հսկողությունը կարող է անցկացվել Միության մաքսային սահմանը հատող ֆիզիկական անձանց նկատմամբ:

3. Մաքսային հսկողության ձևերի և (կամ) մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցների կիրառմամբ մաքսային հսկողության անցկացման կարգը որոշվում է սույն Օրենսգրքով, իսկ սույն Օրենսգրքով չկարգավորված մասով կամ դրանով նախատեսված դեպքերում՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

Մաքսային հսկողության ձևերի և մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցների կիրառման տեխնոլոգիաները (հրահանգները) սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

4. Մաքսային հսկողություն անցկացնելիս մաքսային մարմինները ելնում են մաքսային հսկողության օբյեկտների, մաքսային հսկողության ձևերի և (կամ) մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցների ընտրողականության սկզբունքից:

Մաքսային հսկողության օբյեկտները, մաքսային հսկողության ձևերը և (կամ) մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցներն ընտրելիս կիրառվում է ռիսկերի կառավարման համակարգ՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

5. Մաքսային հսկողության ձևերը և (կամ) մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցները մաքսային մարմինների կողմից կարող են կիրառվել անդամ պետության օրենսդրության պահպանումն ապահովելու համար, որը պահպանելու նկատմամբ հսկողությունը վերապահված է այդ անդամ պետության մաքսային մարմիններին, եթե դա սահմանված է անդամ պետությունների օրենսդրությամբ:

6. Մաքսային մարմինների անունից մաքսային հսկողությունն անցկացվում է մաքսային մարմինների՝ մաքսային հսկողություն անցկացնելու համար լիազորված պաշտոնատար անձանց կողմից՝ վերջիններիս պաշտոնեական (գործառութային) պարտականություններին համապատասխան:

Մաքսային հսկողությունը՝ մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգման ձևով, իսկ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում՝ մաքսային հսկողությունը՝ նաև այլ ձևերով կամ մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցների կիրառմամբ, կարող է անցկացվել մաքսային մարմինների կողմից մաքսային մարմինների տեղեկատվական համակարգի միջոցով՝ առանց մաքսային մարմինների պաշտոնատար անձանց մասնակցության:

7. Մաքսային հսկողությունն անցկացվում է ապրանքների՝ մաքսային հսկողության ներքո գտնվելու ժամանակահատվածում, որը որոշվում է սույն Օրենսգրքի 14-րդ հոդվածին համապատասխան:

Նախնական մաքսային հայտարարագրման և պարբերական մաքսային հայտարարագրման դեպքում մաքսային հսկողությունը սույն Օրենսգրքի 311-րդ հոդվածի հինգերորդ պարբերության մեջ նշված մաքսային հսկողության օբյեկտների նկատմամբ անցկացվում է մաքսային հայտարարագրի գրանցման պահից:

Սույն Օրենսգրքի 14-րդ հոդվածի 7-15-րդ կետերում նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո մաքսային հսկողությունը կարող է անցկացվել՝ այդ հանգամանքների ի հայտ գալու օրվանից մինչև 3 տարին լրանալը:

Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո մաքսային հսկողությունը կարող է անցկացվել մինչև այդ հանգամանքների ի հայտ գալու օրվանից 5 տարին լրանալը:

Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներում կամ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկված անձանց գործունեության նկատմամբ մաքսային հսկողությունը կարող է իրականացվել այդպիսի ռեեստրներում նրանց ընդգրկված լինելու ժամանակահատվածում, իսկ եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ, նաև նրանց այդպիսի ռեեստրներից հանելուց հետո՝ այդպիսի օրենսդրությամբ նախատեսված ժամկետով:

8. Ապրանքների բացթողման փաստը հաստատող տեղեկությունների ստուգման նպատակով մաքսային մարմինների կողմից կարող է անցկացվել մաքսային հսկողություն՝ Միության մաքսային տարածքում գտնվող ապրանքների նկատմամբ, եթե մաքսային մարմիններն ունեն տեղեկատվություն այն մասին, որ ապրանքները Միության մաքսային տարածք են ներմուծվել և (կամ) Միության մաքսային տարածքում են գտնվում մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի խախտմամբ:

9. Մաքսային հսկողություն անցկացնելիս դրա անցկացման համար անդամ պետությունների այլ պետական մարմինների որևէ թույլտվություն, կարգադրագիր կամ որոշում մաքսային մարմիններից չի պահանջվում:

10. Մաքսային հսկողություն անցկացնելիս մաքսային մարմինները և նրանց պաշտոնատար անձինք իրավունք չունեն սահմանելու այնպիսի պահանջներ և սահմանափակումներ, որոնք նախատեսված չեն մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով ու ակտերով և անդամ պետությունների օրենսդրությամբ:

11. Մաքսային հսկողություն անցկացնելիս չի թույլատրվում ոչ իրավաչափ վնաս հասցնել փոխադրողին, հայտարարատուին, մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց և այլ անձանց, որոնց շահերին առնչվում են մաքսային մարմինների կամ նրանց պաշտոնատար անձանց որոշումները, գործողությունները (անգործությունը)՝ մաքսային հսկողություն անցկացնելիս, ինչպես նաև ապրանքներին և տրանսպորտային միջոցներին:

12. Մաքսային հսկողությունն անցկացվում է մաքսային հսկողության գոտիներում և այլ վայրերում, որտեղ գտնվում են (պետք է գտնվեն կամ կարող են գտնվել) ապրանքները, այդ թվում՝ մաքսային հսկողության ենթակա միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները և անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները, այդ ապրանքների մասին տեղեկություններ պարունակող փաստաթղթերը և (կամ) տեղեկատվական համակարգերը:

13. Սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում մաքսային հսկողության ձևերի կիրառմամբ մաքսային հսկողության անցկացման արդյունքները ձևակերպվում են սահմանված ձևի մաքսային փաստաթղթեր կազմելու միջոցով կամ սույն Օրենսգրքով նախատեսված այլ եղանակով:

Հոդված 311. Մաքսային հսկողության օբյեկտները

Մաքսային հսկողության օբյեկտներն են՝

սույն Օրենսգրքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքները.

«ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները, որոնք ձեռք են բերել Միության ապրանքների կարգավիճակ, «վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները, ազատ շրջանառության մեջ բաց թողնված անձնական օգտագործման ապրանքները, ինչպես նաև ապրանքները, որոնք պահպանել են Միության ապրանքների կարգավիճակը Միության մաքսային տարածք դրանք հետադարձ ներմուծելիս, սույն Օրենսգրքի 310-րդ հոդվածի 7-րդ կետի երրորդ պարբերության մեջ նշված ժամկետի ընթացքում.

Միության մաքսային տարածքում գտնվող ապրանքները, եթե մաքսային մարմիններն ունեն տեղեկատվություն այն մասին, որ այդ ապրանքները Միության մաքսային տարածք են ներմուծվել և (կամ) Միության մաքսային տարածքում են գտնվում մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի խախտմամբ.

մաքսային և այլ փաստաթղթեր, որոնք մաքսային մարմիններ ներկայացնելը նախատեսված է մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերին և ակտերին, երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև այդ փաստաթղթերում պարունակվող տեղեկությունները.

անձանց, այդ թվում՝ լիազորված տնտեսական օպերատորների գործունեությունը, որը կապված է Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման, մաքսային գործի բնագավառում ծառայությունների մատուցման հետ կամ իրականացվում է առանձին մաքսային ընթացակարգերի շրջանակներում.

կառույցները, շինությունները (շինությունների մասերը) և (կամ) բաց հրապարակները (բաց հրապարակների մասերը), որոնք նախատեսված են որպես ժամանակավոր պահպանման պահեստներ, մաքսային պահեստներ, ազատ պահեստներ, անմաքս առևտրի խանութներ օգտագործելու համար կամ օգտագործվում են որպես այդպիսին, լիազորված տնտեսական օպերատորների կողմից ապրանքների օգտագործման համար նախատեսված կամ ապրանքների ժամանակավոր պահպանման համար օգտագործվող, ինչպես նաև որպես մաքսային հսկողության գոտիներ օգտագործելու համար նախատեսված կամ որպես այդպիսին օգտագործվող:

Հոդված 312. Ապրանքների օգտագործման պայմանների պահպանման նկատմամբ մաքսային հսկողությունը՝ մաքսային ընթացակարգին համապատասխան

1. Մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանների պահպանման նկատմամբ մաքսային հսկողությունը անցկացվում է այն անդամ պետության մաքսային մարմինների կողմից, որի տարածքում ապրանքները ձևակերպվել են մաքսային ընթացակարգով:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ապրանքների նկատմամբ մաքսային հսկողությունը, որոնք գտնվում են անդամ պետությունից տարբեր՝ այլ անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմնի կողմից ապրանքները ձևակերպվել են մաքսային ընթացակարգով, անցկացվում է սույն Օրենսգրքի 373-րդ հոդվածին համապատասխան՝ հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից որոշվող առանձնահատկությունները:

3. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ սույն Օրենսգրքի 22-րդ գլխի պահանջների կատարման նկատմամբ մաքսային հսկողություն են անցկացնում այն անդամ պետության մաքսային մարմինները, որի տարածքում ապրանքները ձևակերպվել են մաքսային ընթացակարգով, որոնց տարածքներով իրականացվում է այդ ապրանքների փոխադրումը և (կամ) որի տարածքում ավարտվում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունը:

Հոդված 313. Ապրանքների մաքսային արժեքի մաքսային հսկողություն անցկացնելու առանձնահատկությունները

1. Ապրանքների՝ մաքսային հայտարարագրման ժամանակ հայտագրված մաքսային արժեքի մաքսային հսկողություն անցկացնելիս (այսուհետ սույն հոդվածում՝ ապրանքների մաքսային արժեքի հսկողություն) մաքսային մարմնի կողմից իրականացվում է ապրանքների մաքսային արժեքը որոշելու և հայտագրելու ճշտության (ապրանքների մաքսային արժեքը որոշելու մեթոդի ընտրության և կիրառության, ապրանքների մաքսային արժեքի կառուցվածքի և մեծության, ապրանքների մաքսային արժեքի մասին տեղեկությունների փաստաթղթային հաստատման) ստուգում:

2. Ապրանքների մաքսային արժեքի հսկողություն անցկացնելիս մաքսային մարմինն իրավունք ունի

հայտարարատուից պահանջելու գրավոր պարզաբանումներ՝ ապրանքների գնի ձևավորման վրա ազդող գործոնների, ինչպես նաև Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների հետ առնչություն ունեցող այլ հանգամանքների մասին:

3. Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի հսկողության այլ առանձնահատկություններ, այդ թվում՝ ապրանքների մաքսային արժեքը ոչ հավաստի կերպով որոշելու հատկանիշները, ապրանքների մաքսային արժեքի մասին տեղեկությունները ոչ հավաստի ճանաչելու հիմքերը որոշվում են Հանձնաժողովի կողմից:

4. Հանձնաժողովն իրավունք ունի որոշելու այն ապրանքների մաքսային արժեքի հսկողության առանձնահատկությունները, որոնց առնչությամբ, սույն Օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերությանը և 225-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան, ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորություն չի ծագում:

5. Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների մաքսային արժեքի հսկողությունն անցկացվում է՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 314. Ապրանքների ծագման մաքսային հսկողության առանձնահատկությունները

1. Ապրանքների ծագման մաքսային հսկողություն անցկացնելիս ստուգվում են ապրանքների ծագման մասին փաստաթղթերը, մաքսային հայտարարագրում հայտագրված և (կամ) մաքսային մարմիններին ներկայացված փաստաթղթերում պարունակվող՝ ապրանքների ծագման մասին տեղեկությունները, այդ թվում՝ ապրանքների ծագման մասին փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների հավաստիությունը, ինչպես նաև ապրանքների ծագման հավաստագրերի իսկությունը, դրանք կազմելու և (կամ) լրացնելու ճշտությունը:

2. Մաքսային մարմինն իրավունք ունի ուղարկելու հարցում (հարցումներ)՝ ապրանքի ծագման հավաստագիրը տրամադրած և (կամ) դրա ստուգման համար լիազորված պետական մարմին կամ լիազորված կազմակերպություն՝ ապրանքի ծագման հավաստագրում պարունակվող տեղեկությունների հավաստիության, ինչպես նաև ապրանքի ծագման հավաստագրի իսկության ստուգում անցկացնելու և (կամ) լրացուցիչ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ ստանալու նպատակով՝ ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոններին համապատասխան:

3. Մաքսային հսկողության ձևի կիրառմամբ մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների՝ նախքան ապրանքների բացթողումն սկսված ստուգումն ավարտվում է սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան ուղարկված հարցումների պատասխանները մաքսային մարմնի կողմից ստանալու օրվանից կամ այդ պատասխաններն ստանալու՝ ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոններով սահմանված ժամկետը լրանալու օրվանից ոչ ուշ, քան 30 օրացուցային օրվա ընթացքում:

4. Այն դեպքում, երբ մաքսային հայտարարագրում հայտագրված է այն մասին, որ ապրանքների ծագումն անհայտ է, և մաքսային հսկողություն անցկացնելիս պարզվել է, որ հայտարարագրվող ապրանքների նկատմամբ կարող են կիրառվել ապրանքների ծագումից կախված մաքսասակագնային կարգավորման միջոցներ, արգելքներ և սահմանափակումներ, ներքին շուկայի պաշտպանության միջոցներ, մաքսային մարմինն իրավունք ունի պահանջելու ապրանքների ծագման մասին փաստաթղթերը:

5. Ապրանքի ծագումը համարվում է չհաստատված հետևյալ դեպքերում՝

1) չեն ներկայացվել, այդ թվում՝ մաքսային հսկողության ձևի կիրառմամբ մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգման դեպքում ապրանքների ծագման մասին փաստաթղթերը, եթե այդ փաստաթղթերը պետք է ներկայացվեն՝ սույն Օրենսգրքի 29-րդ հոդվածին համապատասխան.

2) ապրանքների ծագման անցկացված մաքսային հսկողության արդյունքներով բացահայտվել է ապրանքների ծագման մասին փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների ոչ հավաստի լինելը.

3) ապրանքների ծագման անցկացված մաքսային հսկողության արդյունքներով բացահայտվել է, որ ապրանքի ծագման հավաստագիրը կեղծ է, կամ ապրանքի ծագման այդ հավաստագիրը ձևակերպվել և (կամ) լրացվել է դրա ձևակերպման և (կամ) լրացման կարգին ներկայացվող պահանջների խախտմամբ.

4) ապրանքի ծագման հավաստագիրը տրամադրած և (կամ) դրա ստուգման համար լիազորված պետական մարմնի կամ լիազորված կազմակերպության կողմից ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոններով սահմանված ժամկետում չեն ներկայացվել հարցման պատասխանը և (կամ) լրացուցիչ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները, եթե այդ հարցումն ուղարկվել է սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

5) Հանձնաժողովի կողմից սահմանվող այլ դեպքեր:

6. Եթե մաքսային հայտարարագրում հայտագրված է այն մասին, որ ապրանքների ծագումն անհայտ է կամ ապրանքների ծագումը համարվում է չհաստատված՝

1) ներմուծման մաքսատուրքերը հաշվարկվում են՝ ելնելով Եվրասիական տնտեսական Միության միասնական մաքսային սակագնով սահմանված դրույքաչափերից, եթե «Միության մասին» պայմանագրին համապատասխան այլ բան սահմանված չէ.

2) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով միևնույն ծածկագրով ապրանքի նկատմամբ սահմանված հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի ամենամեծ դրույքաչափերից՝ Արտաքին

տնտեսական գործունեության և (կամ) անվանման ապրանքային անվանացանկին համապատասխան, եթե «Միության մասին» պայմանագրով այլ բան սահմանված չէ.

3) ապրանքի նկատմամբ կիրառվում են մաքսասակագնային կարգավորման այլ միջոցներ, արգելքներ և սահմանափակումներ, ներքին շուկայի պաշտպանության միջոցներ այն դեպքերում, երբ այդպիսի միջոցների կիրառումը կախված է ապրանքների ծագումից, եթե «Միության մասին» պայմանագրով այլ բան սահմանված չէ:

7. Ապրանքների ծագումը հետագայում պարզվելու դեպքում մաքսասակագնային կարգավորման միջոցները, արգելքները և սահմանափակումները, ներքին շուկայի պաշտպանության միջոցները այն դեպքերում, երբ այդպիսի միջոցների կիրառումը կախված է ապրանքների ծագումից, կիրառվում են ելնելով ապրանքների հաստատված ծագումից:

Հոդված 315. Մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման առանձնահատկություններն այն դեպքում, եթե ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողություն իրականացնելիս մաքսային մարմին չեն ներկայացվել մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը

1. Ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողությունը սույն Օրենսգրքի 326-րդ հոդվածով կամ 331-րդ հոդվածով նախատեսված ձևով իրականացնելու արդյունքներով մաքսային մարմինը հաշվարկում է մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը՝ սույն հոդվածին համապատասխան, եթե մաքսային մարմին՝

1) չի ներկայացվել և ոչ մեկը այն փաստաթղթերից, որոնց մասին տեղեկությունները նշված են մաքսային մարմնի կողմից հարցված (պահանջված) մաքսային հայտարարագրում՝ մաքսային հայտարարագրում հայտագրված՝ վճարված մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի չափի վրա ազդող տեղեկություններն ստուգելու համար.

2) ներկայացվել են այն փաստաթղթերը, որոնց մասին տեղեկությունները նշված են մաքսային մարմնի կողմից հարցված (պահանջված) մաքսային հայտարարագրում՝ մաքսային հայտարարագրում հայտագրված՝ վճարված մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի չափի վրա ազդող տեղեկություններն ստուգելու համար, սակայն այդ փաստաթղթերով չեն հաստատվում ստուգվող տեղեկությունները:

2. Վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման բազան սահմանվում է մաքսային մարմնի ունեցած տեղեկությունների հիման վրա, իսկ ապրանքների դասակարգումն իրականացվում է հաշվի առնելով սույն Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ կետը:

Եթե ապրանքի ծածկագիրը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան սահմանվել է 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով, ապա՝

մաքսատուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հարկերի հաշվարկման համար կիրառվում է այն խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող ավելացված արժեքի հարկի, ակցիզների (ակցիզային հարկ կամ ակցիզային վճար) դրույքաչափերից ամենամեծը, որոնց նկատմամբ սահմանվել է ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերից ամենամեծը.

հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվարկման համար կիրառվում է այդ խմբավորման մեջ մտնող ապրանքներին համապատասխանող հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը:

Հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով սույն Օրենսգրքի 4-րդ գլխին համապատասխան հաստատված ապրանքների ծագումից՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 314-րդ հոդվածի դրույթները:

Այն դեպքում, երբ հնարավոր չէ որոշել ապրանքների ծագումը՝ ապրանքների ծագման մասին փաստաթղթերի բացակայության պատճառով, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի դրույքաչափերից ամենամեծը, որոնք սահմանվել են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն ծածկագրին դասվող ապրանքների համար (եթե ապրանքի դասակարգումն իրականացվել է 10 նիշի մակարդակով) կամ խմբավորման մեջ մտնող ապրանքների համար (եթե ապրանքների ծածկագրերը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, սահմանվել են 10-ից պակաս նիշերի քանակով խմբավորման մակարդակով):

Ապրանքների մասին ճշգրիտ տեղեկությունները հետագայում պարզվելու դեպքում մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են՝ ելնելով այդ ճշգրիտ տեղեկություններից, իրականացվում է մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի՝ ավել վճարված և (կամ) ավել բռնագանձված գումարների վերադարձ (հաշվանցում) կամ չվճարված գումարների բռնագանձում՝ սույն Օրենսգրքի 10-րդ և 11-րդ գլուխներին և 76-րդ և 77-րդ հոդվածներին համապատասխան:

Հոդված 316. Ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողության առանձնահատկությունները՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների նկատմամբ

1. Սույն Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների տրամադրման նպատակների և պայմանների և (կամ) ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման հետ կապված այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների պահպանումը համարվում է չհաստատված, եթե այդպիսի ապրանքների նկատմամբ մաքսային հսկողություն անցկացնելիս մաքսային մարմին ամբողջությամբ չեն ներկայացվել.

1) նշված ապրանքների՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների տրամադրման նպատակներով և դրանց տրամադրման պայմանների, ինչպես նաև այդպիսի ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների պահպանմամբ օգտագործումը հաստատող փաստաթղթեր.

2) նշված ապրանքները կամ դրանց գտնվելու վայրը հաստատված չէ:

2. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել սույն Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների նկատմամբ ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողություն անցկացնելու պարբերականությունը և դրա անցկացմանը ներկայացվող այլ պահանջներ:

Հոդված 317. Միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության առանձնահատկությունները

1. Միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների նկատմամբ մաքսային հսկողություն անցկացնելու համար միջազգային փոստային առաքանիները մաքսային մարմին են ներկայացվում փոստային կապի նշանակված օպերատորի կողմից:

Նամակագրական թղթակցության առանձին տեսակներ (աերոգամներ, փոստային բացիկներ, նամակներ և կույրերի համար նախատեսված առաքանիներ) մաքսային մարմին են ներկայացվում վերջինիս պահանջով, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նշված փոստային առաքանիներում պարունակվում են ապրանքներ, որոնց նկատմամբ սահմանված են արգելքներ և սահմանափակումներ:

2. Միջազգային փոստային առաքանիները, որոնք միջազգային փոստափոխանակման վայր (հաստատություն) են հասել վնասված վիճակում, քաշի փոփոխությամբ, վնասված ներդրվածքով, առանց ներդրվածքի և (կամ) առանց անհրաժեշտ ուղեկցող փաստաթղթերի, մաքսային մարմիններ են ներկայացվում՝ կից ներկայացնելով Համաշխարհային փոստային միության ակտերով սահմանված՝ փոստային կապի նշանակված օպերատորի կողմից ձևակերպված փաստաթուղթը:

3. Միջազգային փոստային առաքանիների առնչությամբ մաքսային զննման ակտի ձևակերպումը կատարվում է այն դեպքում, երբ վերջինս մաքսային մարմինների կողմից օգտագործվելու է մաքսային գործառնություններ իրականացնելիս և (կամ) մաքսային հսկողություն անցկացնելիս: Եթե մաքսային զննման ակտ չի կազմվում, մաքսային զննման արդյունքների մասին տեղեկությունները մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից նշվում են Համաշխարհային փոստային միության ակտերով նախատեսված՝ միջազգային փոստային առաքանիներն ուղեկցող փաստաթղթերում:

Հոդված 318. Միության մաքսային սահմանի վրա պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնող անդամ պետությունների մաքսային մարմինների և պետական մարմինների փոխգործակցությունը

1. Միության մաքսային սահմանով տեղափոխվող և Միության մաքսային սահմանի վրա պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնող՝ անդամ պետությունների այլ պետական մարմինների կողմից հսկողության ենթակա ապրանքների մաքսային հսկողություն անցկացնելիս մաքսային մարմիններն ապահովում են հսկողության անցկացման ընդհանուր համակարգումը՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող կարգով:

2. Միության մաքսային սահմանի վրա պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնող անդամ պետությունների մաքսային մարմինները և պետական մարմինները փոխանակում են փաստաթղթեր և (կամ) տեղեկատվություն (տեղեկություններ), որոնք անհրաժեշտ են տեղեկատվական համակարգերի կիրառմամբ մաքսային և պետական հսկողության (վերահսկողության) այլ տեսակների անցկացման համար:

3. Միության մաքսային սահմանով ապրանքները տեղափոխելիս պետական հսկողության (վերահսկողության) անցկացումն արագացնելու նպատակով մաքսային զննումը կարող է անցկացվել Միության մաքսային սահմանի վրա պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնող՝ անդամ պետությունների պետական մարմինների

մասնակցությամբ:

Հոդված 319. Մաքսային հսկողության գոտիները

1. Մաքսային հսկողության գոտիներն են Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերը, ժամանակավոր պահպանման պահեստների, մաքսային պահեստների, ազատ պահեստների տարածքները, անմաքս առևտրի խանութների տարածքները և սույն Օրենսգրքով սահմանված և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող այլ վայրեր:

Այլ վայրերում մաքսային հսկողության գոտիներ ստեղծվում են ապրանքների ժամանակավոր պահպանման, ապրանքների և տրանսպորտային միջոցների առնչությամբ բեռնային և այլ գործողությունների կատարման, մաքսային տեսազննման և (կամ) մաքսային զննման ձևով մաքսային հսկողության անցկացման համար՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի:

2. Առանց մաքսային հսկողության գոտիների ստեղծման կարող է անցկացվել՝

1) մաքսային տեսազննում, որն իրականացվում է արտագնա մաքսային ստուգման ընթացքում կամ մաքսային հսկողության գոտիներից դուրս տրանսպորտային միջոցի կանգառի ժամանակ՝ սույն Օրենսգրքի 355-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, ինչպես նաև Միության մաքսային սահմանով անօրինական կերպով տեղափոխված ապրանքների հայտնաբերման դեպքում.

2) մաքսային զննում, որն իրականացվում է շինությունների և տարածքների մաքսային տեսազննման և (կամ) արտագնա մաքսային ստուգման ընթացքում կամ մաքսային հսկողության գոտիներից դուրս տրանսպորտային միջոցի կանգառի ժամանակ՝ սույն Օրենսգրքի 355-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, ինչպես նաև Միության մաքսային սահմանով անօրինական կերպով տեղափոխված ապրանքների հայտնաբերման դեպքում:

3. Մաքսային հսկողության գոտիները կարող են լինել մշտական, եթե դրանք նախատեսված են մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքները դրանցում կանոնավոր կերպով տեղավորելու համար, կամ ժամանակավոր՝ այն դեպքում, երբ դրանք ստեղծվում են մաքսային հսկողության անցկացման, ապրանքների և տրանսպորտային միջոցների առնչությամբ բեռնային և այլ գործողությունների իրականացման ժամանակով:

4. Մաքսային հսկողության գոտիների ստեղծման, գործունեության դադարեցման (լուծարման) և տարբերանշման կարգը, դրանց ներկայացվող պահանջները, ինչպես նաև մաքսային հսկողության գոտու իրավական ռեժիմը սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

Հոդված 320. Մաքսային հսկողություն անցկացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պահպանումը

1. Մաքսային հսկողություն անցկացնելու համար անհրաժեշտ, պահպանման ենթակա փաստաթղթերն են՝

1) մաքսային փաստաթղթերը.

2) սույն Օրենսգրքի 108-րդ հոդվածում նշված փաստաթղթերը.

3) փաստաթղթերը, որոնցով հաստատվում է մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման հետ կապված՝ ապրանքների օգտագործման և (կամ) դրանց տնօրինման սահմանափակումների պահպանումը.

4) մաքսային գործառնություններ իրականացնելիս կազմված փաստաթղթերը.

5) փաստաթղթերը, որոնցով հաստատվում են ապրանքների օգտագործման պայմանները՝ հայտագրված մաքսային ընթացակարգերին համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված փաստաթղթերը պետք է պահվեն անձանց և մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 14-րդ հոդվածի 7-15-րդ կետերում նշված հանգամանքների ի հայտ գալու օրվանից մինչև 5 տարին լրանալը՝ անկախ այն բանից՝ արդյոք մաքսային հայտարարագիրը ներկայացնելիս դրանք ներկայացվել են, թե ոչ:

3. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձինք պետք է պահեն այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են մաքսային գործի բնագավառում ծառայությունների մատուցման հետ կապված իրենց գործունեության նկատմամբ մաքսային հսկողությունն անցկացնելու համար այն տարին լրանալուց հետո 5 տարվա ընթացքում, որում իրականացվել են մաքսային գործառնությունները:

Հոդված 321. Մաքսային մարմինների կողմից մաքսային հսկողության որոշակի ձևերի կիրառումից ազատումը

1. Մաքսային մարմինների կողմից մաքսային հսկողության որոշակի ձևերի կիրառումից ազատումը սահմանվում է սույն Օրենսգրքով և երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով:

2. Մաքսային զննման ենթակա չէ հետևյալ անձանց անձնական ուղեբեռը՝

1) անդամ պետությունների ղեկավարների և նրանց ուղեկցող ընտանիքի անդամների.

2) անդամ պետությունների կառավարությունների ղեկավարների, կառավարությունների անդամների, եթե նշված անձինք ծառայողական պարտականությունները կատարելու համար անցնում են Միության մաքսային սահմանով.

3) օտարերկրյա պետությունների ղեկավարների, օտարերկրյա պետությունների կառավարությունների ղեկավարների, օտարերկրյա պետությունների արտաքին գործերի նախարարների, որոնք պաշտոնական այցով այցելում են անդամ պետություններ.

4) անդամ պետությունների նախագահների, ում լիազորություններն ավարտվել են, և նրանց ուղեկցող ընտանիքի անդամների.

5) Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների, Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի նախագահի, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նախագահի, Հայաստանի Հանրապետության Նախագահի անվտանգության ծառայության պետի, եթե նշված անձինք ծառայողական պարտականությունները կատարելու համար անցնում են Միության մաքսային սահմանով.

6) Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահի, Բելառուսի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահի, Բելառուսի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Բելառուսի Հանրապետության Անվտանգության խորհրդի պետական քարտուղարի, Բելառուսի Հանրապետության պետական հսկողության կոմիտեի նախագահի, Բելառուսի Հանրապետության գլխավոր դատախազի, Բելառուսի Հանրապետության ազգային բանկի վարչության նախագահի, Բելառուսի Հանրապետության Նախագահի գործերի կառավարչի, Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովի Հանրապետության խորհրդի անդամների, Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովի ներկայացուցիչների պալատի պատգամավորների, եթե նշված անձինք ծառայողական պարտականությունները կամ պատգամավորական լիազորությունները կատարելու համար անցնում են Միության մաքսային սահմանով.

7) Ղազախստանի Հանրապետության պետական քարտուղարի, Ղազախստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Ղազախստանի Հանրապետության Սահմանադրական խորհրդի նախագահի, Ղազախստանի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահի, Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազի, Ղազախստանի Հանրապետության Ազգային բանկի նախագահի, Ղազախստանի Հանրապետության Ազգային անվտանգության կոմիտեի նախագահի, Ղազախստանի Հանրապետության Նախագահի գործերի կառավարչի, Ղազախստանի Հանրապետության Պետական պահպանության ծառայության ղեկավարի և Ղազախստանի Հանրապետության Պառլամենտի պատգամավորների, եթե նշված անձինք ծառայողական պարտականությունները կամ պատգամավորական լիազորությունները կատարելու համար անցնում են Միության մաքսային սահմանով.

8) Ղրղզստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Ղրղզստանի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահի, Ղրղզստանի Հանրապետության Գերագույն դատարանի սահմանադրական պալատի նախագահի, Ղրղզստանի Հանրապետության Ժոգորկու Կենեշի պատգամավորների, Ղրղզստանի Հանրապետության Պաշտպանության խորհրդի քարտուղարի, Ղրղզստանի Հանրապետության Գլխավոր դատախազի, Ղրղզստանի Հանրապետության Ազգային բանկի նախագահի, Ղրղզստանի Հանրապետության Նախագահի և Կառավարության գործերի կառավարչի, Ղրղզստանի Հանրապետության ազգային անվտանգության պետական կոմիտեի նախագահի, նախագահի տեղակալի՝ Ղրղզստանի Հանրապետության ազգային անվտանգության պետական կոմիտեի 9-րդ ծառայության ղեկավարի, եթե նշված անձինք ծառայողական պարտականությունները կատարելու համար անցնում են Միության մաքսային սահմանով.

9) Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի նախագահի, Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի նախագահի, Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Դաշնային խորհրդի անդամների, Ռուսաստանի Դաշնության Անվտանգության դաշնային ծառայության տնօրենի, Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների, եթե նշված անձինք ծառայողական պարտականությունները կամ պատգամավորական լիազորությունները կատարելու համար անցնում են Միության մաքսային սահմանով:

3. Մաքսային զննումից ազատվում են՝

1) իրենց երթուղով շարժվող օտարերկրյա ռազմանավերը (նավերը), մարտական օդանավերը և ռազմական տեխնիկան.

2) ռազմական գույքը, որը, անդամ պետությունների համապատասխան պետական մարմինների հատուկ հայտարարագրումների համաձայն, տեղափոխվում է Միության մաքսային սահմանով:

Գլուխ 45

Մաքսային հսկողության ձևերը և դրանց կիրառումը

Հոդված 322. Մաքսային հսկողության ձևերը

Մաքսային հսկողություն անցկացնելիս մաքսային մարմինները կիրառում են մաքսային հսկողության հետևյալ

ձևերը՝

բացատրությունների ստացումը.

մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումը.

մաքսային տեսազննումը.

մաքսային զննումը.

անձի մաքսային զննումը.

շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը.

մաքսային ստուգումը:

Հոդված 323. Բացատրությունների ստացումը

1. Բացատրությունների ստացումը մաքսային հսկողության ձև է, որը մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից մաքսային հսկողության անցկացման համար նշանակություն ունեցող տեղեկությունների ստացումն է՝ փոխադրողներից, հայտարարատուներից և այդպիսի տեղեկություններ տիրապետող այլ անձանցից:

2. Բացատրությունները ձևակերպվում են Հանձնաժողովի կողմից որոշվող ձևի մաքսային փաստաթուղթ կազմելու միջոցով:

3. Բացատրությունների ստացման համար անձին կանչելու անհրաժեշտության դեպքում մաքսային մարմնի կողմից ձևակերպվում է ծանուցում, որը հանձնվում կամ ուղարկվում է կանչվող անձին:

Հոդված 324. Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումը

1. Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումը մաքսային հսկողության ձև է, որը ստորև նշվածների ստուգումն է՝

1) մաքսային հայտարարագրի.

2) այլ մաքսային փաստաթղթերի՝ բացառությամբ մաքսային մարմինների կողմից կազմվող փաստաթղթերի.

3) փաստաթղթերի, որոնցով հաստատվում են մաքսային հայտարարագրում հայտագրված տեղեկությունները.

4) այլ փաստաթղթերի, որոնք մաքսային մարմին են ներկայացվել սույն Օրենսգրքին համապատասխան.

5) մաքսային հայտարարագրում հայտագրված և (կամ) մաքսային մարմին ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների.

6) այլ տեղեկությունների, որոնք մաքսային մարմին ներկայացվել կամ նրա կողմից ստացվել են՝ սույն Օրենսգրքին կամ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

2. Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումն անցկացվում է տեղեկությունների հավաստիությունը, փաստաթղթերի լրացման և (կամ) ձևակերպման ճշտությունն ստուգելու, մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները պահպանելու, մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման հետ կապված՝ ապրանքների օգտագործման և (կամ) դրանց տնօրինման սահմանափակումները պահպանելու, ապրանքների օգտագործման կարգն ու պայմանները պահպանելու նպատակով, որոնք սահմանված են սույն Օրենսգրքին համապատասխան մաքսային ընթացակարգերով ձևակերպման ոչ ենթակա ապրանքների առանձին կատեգորիաների համար, ինչպես նաև մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության պահպանումն ապահովելու այլ նպատակներով:

3. Մաքսային հայտարարագրի, մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի, մաքսային հայտարարագրում հայտագրված և (կամ) մաքսային մարմիններ ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների առնչությամբ մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումը կարող է անցկացվել ինչպես նախքան ապրանքների բացթողումը, այնպես էլ ապրանքների բացթողումից հետո:

4. Այն դեպքում, երբ հայտարարատուն պահպանել է սույն Օրենսգրքի 121-րդ հոդվածով նախատեսված պայմանները, որոնց դեպքում մաքսային մարմնի կողմից իրականացվում է ապրանքների բացթողում, նախքան ապրանքների բացթողումն սկսված մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումն ավարտվում է ապրանքների բացթողումից հետո:

5. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել մաքսային հայտարարագրի, մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի, մաքսային հայտարարագրում հայտագրված և (կամ) մաքսային մարմիններ ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների առնչությամբ մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների՝ ապրանքների բացթողումից հետո սկսված ստուգման անցկացման դեպքերը և մաքսային հսկողության այդ ձևի անցկացման մասին անձին ծանուցելու կարգը:

6. Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումն անցկացվում է սույն հոդվածի 1-ին կետում

նշված փաստաթղթերի և տեղեկությունների վերլուծության միջոցով, այդ թվում՝ մեկ փաստաթղթում պարունակվող տեղեկությունները միմյանց հետ, ինչպես նաև այլ փաստաթղթերում, այդ թվում՝ մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների հետ, մաքսային մարմինների կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգերից և (կամ) տեղեկատվական փոխգործակցության շրջանակներում անդամ պետությունների պետական մարմինների (կազմակերպությունների) տեղեկատվական համակարգերից ստացված տեղեկությունների հետ, ստուգումն անցկացնելու պահի դրությամբ մաքսային մարմնի մոտ առկա՝ այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հետ համադրելու միջոցով, ինչպես նաև այլ եղանակներով՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերին և ակտերին և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

7. Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգման շրջանակներում մաքսային մարմինն իրավունք ունի իրականացնելու լրացուցիչ տեղեկատվության հավաքում և վերլուծություն, այդ թվում՝ հարցումներ ուղարկելու պետական մարմիններ և այլ կազմակերպություններ:

8. Մաքսային հայտարարագրի, մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի, մաքսային հայտարարագրում հայտագրված և (կամ) մաքսային մարմիններ ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների առնչությամբ մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների՝ նախքան ապրանքների բացթողումն սկսված ստուգումն անցկացվում է սույն Օրենսգրքի 325-րդ հոդվածին համապատասխան:

9. Մաքսային հայտարարագրի, մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի, մաքսային հայտարարագրում հայտագրված և (կամ) մաքսային մարմիններ ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների առնչությամբ մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների՝ ապրանքների բացթողումից հետո կամ մաքսային հսկողության տվյալ ձևի կիրառման այլ դեպքերում սկսված ստուգումն անցկացվում է սույն Օրենսգրքի 326-րդ հոդվածին համապատասխան՝ բացառությամբ սույն հոդվածի 10-րդ կետով նախատեսված դեպքում մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգման:

10. Այն ապրանքների նկատմամբ ներկայացված ապրանքների հայտարարագրի, որոնց բացթողումը կատարվել է սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածին համապատասխան, այդ հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի և ապրանքների նշված հայտարարագրում հայտագրված և (կամ) մաքսային մարմիններ ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների առնչությամբ մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումն անցկացվում է Հանձնաժողովի կողմից որոշվող կարգով:

11. Նախքան ապրանքների հայտարարագիր ներկայացնելը՝ ապրանքների բացթողման մասին դիմումի, սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ այդ դիմումի հետ միասին ներկայացված փաստաթղթերի և նշված դիմումում և (կամ) ներկայացված փաստաթղթերում ներկայացված տեղեկությունների առնչությամբ մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգում կիրառելիս նախքան ապրանքների բացթողումը փաստաթղթերի հարցում չի իրականացվում:

12. Ապրանքների մաքսային արժեքի ստուգման դեպքում մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումն անցկացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 313-րդ հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

13. Ապրանքների ծագման ստուգման դեպքում մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումն անցկացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 314-րդ հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

Հոդված 325. Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների՝ նախքան ապրանքների բացթողումն սկսված ստուգումը

1. Եթե մաքսային հայտարարագիրը ներկայացնելուն զուգահեռ չեն ներկայացվել մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը, մաքսային մարմինն իրավունք ունի ստուգվող տեղեկությունների առնչությամբ հայտարարատուից պահանջելու այն փաստաթղթերը, որոնց մասին տեղեկությունները նշված են մաքսային հայտարարագրում:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան հարցված փաստաթղթերը հայտարարատուի կողմից պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան սույն Օրենսգրքի 119-րդ հոդվածի 3-րդ կետում նշված ժամկետը լրանալուց 4 ժամ առաջ:

3. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան հարցված փաստաթղթերը հայտարարատուի կողմից չեն ներկայացվել, մաքսային մարմինը մերժում է ապրանքների բացթողումը՝ սույն Օրենսգրքի 125-րդ հոդվածին համապատասխան:

4. Մաքսային մարմինն իրավունք ունի պահանջելու առևտրային, հաշվապահական փաստաթղթերը, ապրանքի ծագման հավաստագիրը և (կամ) այլ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ, այդ թվում՝ գրավոր պարզաբանումներ, որոնք անհրաժեշտ են մաքսային հայտարարագրում հայտագրված ստուգվող տեղեկությունների և (կամ) այլ փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների հավաստիությունն ու լիարժեքությունը որոշելու համար հետևյալ դեպքերում՝

1) մաքսային հայտարարագիրը ներկայացնելիս ներկայացված կամ սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան ներկայացված փաստաթղթերը չեն պարունակում անհրաժեշտ տեղեկությունները կամ պատշաճ կերպով չեն հաստատում ներկայացված տեղեկությունները.

2) մաքսային մարմնի կողմից հայտնաբերվել են սույն Օրենսգրքի և մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերի և ակտերի և (կամ) անդամ պետությունների օրենսդրության դրույթները չպահպանելու, այդ թվում՝ այդ փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների ոչ հավաստի լինելու հատկանիշներ:

5. Սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ հայտարարատուից փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հարցումը պետք է լինի հիմնավորված և պետք է պարունակի այն հատկանիշների ցանկը, որոնք վկայում են այն մասին, որ մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները և (կամ) այլ փաստաթղթերում պարունակվող տեղեկությունները պատշաճ կերպով չեն հաստատվել կամ կարող են լինել ոչ հավաստի, լրացուցիչ հարցվող փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ցանկը, ինչպես նաև այդ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները ներկայացնելու ժամկետները:

Հարցվող փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ցանկը որոշվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ ելնելով ստուգվող տեղեկություններից, հաշվի առնելով ապրանքների վերաբերյալ գործարքի պայմանները, ապրանքի բնութագրերը, դրա նշանակությունը, ինչպես նաև այլ հանգամանքներ:

6. Սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի չափի վրա ազդող տեղեկությունների հաստատման նպատակով փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հարցման դեպքում մաքսային մարմինը հայտարարատուին տեղեկացնում է սույն Օրենսգրքի 121-րդ հոդվածին համապատասխան ապրանքների բացթողում իրականացնելու հնարավորության մասին: Ընդ որում, մաքսային մարմինը հայտարարատուին է ուղարկում մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության կատարման ապահովման չափի հաշվարկը՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 121-րդ հոդվածին համապատասխան սահմանված դեպքերի, երբ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ապահովման տրամադրում չի պահանջվում: Մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության կատարման ապահովման չափի հաշվարկի ձևը, այդ հաշվարկի կառուցվածքը և ձևաչափը՝ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով, և դրանք լրացնելու կարգը որոշվում են Հանձնաժողովի կողմից:

7. Սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան հարցված փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները կամ այն պատճառների բացատրությունները, որոնց հիման վրա այդ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները չեն կարող ներկայացվել և (կամ) բացակայում են, հայտարարատուի կողմից պետք է ներկայացվեն՝

1) ոչ ուշ, քան սույն Օրենսգրքի 119-րդ հոդվածի 3-րդ կետում նշված ժամկետը լրանալուց 4 ժամ առաջ, եթե փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հարցումը կապված է մաքսային հայտարարագրում և մաքսային հայտարարագիրը ներկայացնելիս ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների ստուգման հետ.

2) ոչ ուշ, քան սույն Օրենսգրքի 119-րդ հոդվածի 3-րդ կետում նշված ժամկետը լրանալուց 2 ժամ առաջ, եթե փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հարցումը կապված է մաքսային հայտարարագրում և սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների ստուգման հետ, և ստուգվող տեղեկությունները չեն ազդում մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի չափի վրա.

3) ոչ ուշ, քան ապրանքների բացթողման ժամկետը երկարաձգելու դեպքում մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալուց 1 աշխատանքային օր առաջ՝ սույն Օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-6-րդ կետերին համապատասխան, եթե փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հարցումը կապված է մաքսային հայտարարագրում և սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների ստուգման հետ, և ստուգվող տեղեկություններն ազդում են մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի չափի վրա:

8. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան հարցված փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները, այդ թվում՝ գրավոր պարզաբանումները կամ այն պատճառների բացատրությունները, որոնց հիման վրա այդ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները չեն կարող ներկայացվել և (կամ) բացակայում են, չեն ներկայացվել սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված ժամկետներում, և չի պահպանվել սույն Օրենսգրքի 121-րդ հոդվածով նախատեսված պայմանը, մաքսային մարմինը մերժում է ապրանքների բացթողումը՝ սույն Օրենսգրքի 125-րդ հոդվածին համապատասխան:

9. Սույն հոդվածի 1-ին և 4-րդ կետերին համապատասխան հարցված փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները պետք է ներկայացվեն այն անձանց կողմից, որոնցից դրանք պահանջվել են, մեկ լրակազմով (միաժամանակ)՝ ըստ յուրաքանչյուր հարցման:

Մաքսային մարմնի կողմից հարցված փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների հետ միաժամանակ այն անձանց կողմից, որոնցից դրանք պահանջվել են, կարող են ներկայացվել այլ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ՝ մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունների և (կամ) այլ փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների հավաստիությունն ու լիարժեքությունը հաստատելու նպատակով:

10. Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումը մինչև ապրանքների բացթողումն ավարտելու ժամանակ՝ այն դեպքում, երբ սույն հոդվածին համապատասխան ներկայացված փաստաթղթերով և (կամ)

տեղեկություններով կամ այն պատճառների բացատրություններով, որոնց հիման վրա այդ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները չեն կարող ներկայացվել և (կամ) բացակայում են, կամ ապրանքների և (կամ) փաստաթղթերի՝ այդ ստուգման շրջանակներում անցկացված այլ ձևերով մաքսային հսկողության և (կամ) մաքսային փորձաքննության արդյունքներով հաստատվում են ստուգվող տեղեկությունների հավաստիությունը և (կամ) լիարժեքությունը, մաքսային մարմինն իրականացնում է ապրանքների բացթողումը՝ սույն Օրենսգրքի 118-րդ հոդվածին համապատասխան:

11. Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումը մինչև ապրանքների բացթողումն ավարտելու ժամանակ՝ այն դեպքում, երբ սույն հոդվածին համապատասխան ներկայացված փաստաթղթերով և (կամ) տեղեկություններով կամ այն պատճառների բացատրություններով, որոնց հիման վրա այդ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները չեն կարող ներկայացվել և (կամ) բացակայում են, կամ ապրանքների և (կամ) փաստաթղթերի՝ այդ ստուգման շրջանակներում անցկացված այլ ձևերով մաքսային հսկողության և (կամ) մաքսային փորձաքննության արդյունքներով չեն հաստատվում ստուգվող տեղեկությունների հավաստիությունը և (կամ) լիարժեքությունը, և (կամ) չեն վերացվում մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգում անցկացնելու հիմքերը, մաքսային մարմինն իր մոտ առկա տեղեկատվության հիման վրա ուղարկում է մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները նախքան ապրանքների բացթողումը փոփոխելու (լրացնելու) պահանջ՝ սույն Օրենսգրքի 112-րդ հոդվածին համապատասխան:

12. Այն դեպքում, երբ մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումը չի կարող ավարտվել սույն Օրենսգրքի 119-րդ հոդվածով սահմանված՝ ապրանքների բացթողման ժամկետներում, այդ թվում՝ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված ժամկետներում չներկայացնելու հետ կապված, մաքսային մարմինը հայտարարատուին տեղեկացնում է ապրանքների բացթողում իրականացնելու հնարավորության մասին՝ սույն Օրենսգրքի 121-րդ հոդվածին համապատասխան:

13. Սույն Օրենսգրքի 121-րդ հոդվածին համապատասխան ապրանքների բացթողման դեպքում մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումն ավարտվում է ապրանքների բացթողումից հետո՝ սույն հոդվածի 14-18-րդ կետերին համապատասխան:

14. Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումն ավարտելու համար մաքսային մարմնի կողմից հարցված և սույն հոդվածի 7-րդ կետում նշված ժամկետում չներկայացված փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները հայտարարատուի կողմից կարող են ներկայացվել ապրանքների բացթողումից հետո՝ մաքսային հայտարարագրի գրանցման օրվանից 60 օրացուցային օրը չգերազանցող ժամկետում՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 314-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքի:

Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումը մաքսային մարմնի կողմից ավարտվում է հարցված փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան 30 օրացուցային օր, իսկ եթե այդ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները չեն ներկայացվել սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված ժամկետում՝ այդ ժամկետի լրանալու օրվանից:

15. Եթե սույն հոդվածին համապատասխան ներկայացված փաստաթղթերով և (կամ) տեղեկություններով կամ այն պատճառների բացատրություններով, որոնց հիման վրա այդ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները չեն կարող ներկայացվել և (կամ) բացակայում են, չեն վերացվում մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգում անցկացնելու հիմքերը, մաքսային մարմինը նախքան սույն հոդվածի 14-րդ կետի երկրորդ պարբերությամբ սահմանված ժամկետը լրանալն իրավունք ունի պահանջելու լրացուցիչ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ, այդ թվում՝ գրավոր պարզաբանումներ, որոնք անհրաժեշտ են մաքսային հայտարարագրում հայտագրված ստուգվող տեղեկությունների և (կամ) այլ փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների հավաստիությունն ու լիարժեքությունը որոշելու համար:

Այդ լրացուցիչ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները, այդ թվում՝ գրավոր պարզաբանումները պետք է ներկայացվեն հարցումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրացուցային օր:

16. Լրացուցիչ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները, այդ թվում՝ գրավոր պարզաբանումները ներկայացնելու մասին հարցումն ուղարկելիս սույն հոդվածի 14-րդ կետի երկրորդ պարբերության մեջ նշված ժամկետի տևողությունը կասեցվում է այդ հարցումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվանից և վերականգնվում է մաքսային մարմնի կողմից լրացուցիչ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները, այդ թվում՝ գրավոր պարզաբանումները ստանալու օրվանից, իսկ դրանք չներկայացնելու դեպքում՝ դրանք ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից:

17. Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումն ավարտելիս՝ այն դեպքում, երբ սույն հոդվածին համապատասխան ներկայացված փաստաթղթերով և (կամ) տեղեկություններով կամ այն պատճառների բացատրություններով, որոնց հիման վրա այդ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները չեն կարող ներկայացվել և (կամ) բացակայում են, կամ ապրանքների և (կամ) փաստաթղթերի՝ այդ ստուգման շրջանակներում անցկացված այլ ձևերով մաքսային հսկողության և (կամ) մաքսային փորձաքննության արդյունքներով չեն հաստատվում սույն Օրենսգրքի, մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերի և ակտերի և անդամ պետությունների օրենսդրության դրույթների պահպանումը, այդ թվում՝ ստուգվող տեղեկությունների հավաստիությունը և (կամ) լիարժեքությունը, և (կամ) չեն վերացվում մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգում անցկացնելու հիմքերը, մաքսային մարմինն իր մոտ առկա տեղեկատվության հիման վրա ընդունում է մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկություններում փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին որոշում՝ սույն Օրենսգրքի 112-րդ հոդվածին համապատասխան:

18. Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումն ավարտելիս՝ այն դեպքում, երբ մաքսային մարմնի կողմից սույն հոդվածի 4-րդ և 15-րդ կետերին համապատասխան հարցված փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները, կամ այն պատճառների բացատրությունները, որոնց հիման վրա այդ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները չեն կարող ներկայացվել և (կամ) բացակայում են, չեն ներկայացվել սույն հոդվածով սահմանված ժամկետներում, մաքսային մարմինն իր մոտ առկա տեղեկատվության հիման վրա ընդունում է մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկություններում փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին որոշում՝ սույն Օրենսգրքի 112-րդ հոդվածին համապատասխան:

19. Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումն ավարտելիս՝ այն դեպքում, երբ սույն հոդվածին համապատասխան ներկայացված փաստաթղթերով և (կամ) տեղեկություններով, ապրանքների և (կամ) փաստաթղթերի՝ այդ ստուգման շրջանակներում անցկացված այլ ձևերով մաքսային հսկողության և (կամ) մաքսային փորձաքննության արդյունքներով հաստատվում են ստուգվող տեղեկությունների հավաստիությունը և (կամ) լիարժեքությունը, մաքսային մարմինը հայտարարատուին տեղեկացնում է մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգման ավարտի և մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի՝ սույն Օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան տրամադրված վճարման պարտավորության կատարման ապահովման վերադարձի (հաշվանցման) հնարավորության մասին:

20. Մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության կատարման ապահովման վերադարձը (հաշվանցումը) իրականացվում է սույն Օրենսգրքի 63-րդ հոդվածի 7-րդ կետին, 10-րդ գլխին և 76-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 326. Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգումը՝ ապրանքների բացթողումից հետո սկսված, և այլ դեպքերում

1. Մաքսային հայտարարագրի, մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի, մաքսային հայտարարագրում հայտագրված և (կամ) մաքսային մարմիններ ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների առնչությամբ մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների՝ ապրանքների բացթողումից հետո սկսված ստուգում անցկացնելիս կամ մաքսային հսկողության տվյալ ձևի կիրառման այլ դեպքերում մաքսային մարմինն իրավունք ունի պահանջելու և ստանալու մաքսային հսկողության անցկացման համար անհրաժեշտ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները՝ սույն Օրենսգրքի 340-րդ հոդվածին համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված դեպքերում մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգում անցկացնելու արդյունքները ձևակերպվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

3. Մաքսային հայտարարագրի, մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի, մաքսային հայտարարագրում հայտագրված և (կամ) մաքսային մարմիններ ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների առնչությամբ մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների՝ ապրանքների բացթողումից հետո սկսված ստուգում անցկացնելու արդյունքներով մաքսային մարմնի կողմից ընդունվում են որոշումներ՝ սույն Օրենսգրքին համապատասխան, իսկ այլ դեպքերում մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգում անցկացնելու արդյունքներով՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 327. Մաքսային տեսազննումը

1. Մաքսային տեսազննումը մաքսային հսկողության ձև է, որն ապրանքների, այդ թվում՝ ֆիզիկական անձանց տրանսպորտային միջոցների և ուղեբեռի, բեռնային տարողությունների, մաքսային կապարակնիքների, կնիքների և նույնականացման այլ միջոցների տեսողական զննման անցկացումն է՝ առանց տրանսպորտային միջոցների բեռնասրահները (հատվածամասերը) և ապրանքների փաթեթվածքը բացելու, առանց զննվող օբյեկտները (ներառյալ ֆիզիկական անձանց ուղեբեռը) և դրանց մասերը կազմատելու, ապամոնտաժելու, ամբողջականությունն այլ կերպ խախտելու՝ բացառությամբ այն տեսազննման, որը շինությունների և տարածքների մաքսային տեսազննման ձևով անցկացվում է մաքսային հսկողության ընթացքում:

2. Մաքսային տեսազննումն անցկացվում է այն ապրանքների մասին տեղեկություններն ստուգելու և (կամ) ստանալու նպատակով, որոնց նկատմամբ անցկացվում է մաքսային հսկողությունը, ինչպես նաև ապրանքների, տրանսպորտային միջոցների և դրանց բեռնասրահների (հատվածամասերի) վրա մաքսային կապարակնիքների, կնիքների և նույնականացման այլ միջոցների առկայությունն ստուգելու նպատակով:

3. Մաքսային տեսազննումը կարող է անցկացվել հայտարարատուի, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձանց և նրանց ներկայացուցիչների բացակայությամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձինք ցանկություն են հայտնում ներկա գտնվելու մաքսային տեսազննման ժամանակ:

4. Մաքսային տեսազննում անցկացնելու արդյունքները ձևակերպվում են մաքսային տեսազննման՝ Հանձնաժողովի կողմից որոշվող ձևի ակտ կազմելու կամ մաքսային մարմին ներկայացված տրանսպորտային (փոխադրման), առևտրային կամ մաքսային փաստաթղթերի վրա մաքսային տեսազննում անցկացնելու փաստի մասին նշումներ կատարելու միջոցով:

Ֆիզիկական անձանց ուղեբեռի և (կամ) անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների մաքսային տեսազննում անցկացնելիս մաքսային տեսազննման ակտ կազմվում է միայն այն դեպքում, երբ վերջինս մաքսային մարմինների կողմից օգտագործվելու է մաքսային գործառնություններ իրականացնելիս և (կամ) մաքսային հսկողություն անցկացնելիս:

5. Այն դեպքում, երբ մաքսային տեսազննում անցկացնելու արդյունքները ձևակերպվել են մաքսային մարմին ներկայացված տրանսպորտային (փոխադրման), առևտրային կամ մաքսային փաստաթղթերի վրա մաքսային տեսազննում անցկացնելու փաստի մասին նշումներ կատարելու միջոցով, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձի պահանջով մաքսային մարմնի պաշտոնատար անձինք պարտավոր են կազմել մաքսային տեսազննման ակտ՝

1) Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում մաքսային տեսազննում անցկացնելու դեպքում՝ մաքսային տեսազննում անցկացնելուց հետո 2 աշխատանքային ժամից ոչ ուշ.

2) այլ վայրերում մաքսային տեսազննում անցկացնելու դեպքում՝ մաքսային տեսազննում անցկացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը սկսելու պահից 2 ժամից ոչ ուշ:

6. Մաքսային տեսազննման ակտը կազմվում է 2 օրինակից, որոնցից մեկը հանձնվում է (ուղարկվում է) ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձին կամ նրա ներկայացուցչին, եթե այդ անձինք որոշված են:

Հոդված 328. Մաքսային զննումը

1. Մաքսային զննումը մաքսային հսկողության ձև է, որն ապրանքների, այդ թվում՝ ֆիզիկական անձանց տրանսպորտային միջոցների և ուղեբեռի, տեսազննման անցկացումը և դրանց նկատմամբ այլ գործողությունների իրականացումն է՝ բացելով ապրանքների փաթեթվածքը, տրանսպորտային միջոցների բեռնասրահները (հատվածամասերը), տարողությունները, կոնտեյներները կամ այլ տեղեր, որտեղ գտնվում են կամ կարող են գտնվել ապրանքները, և (կամ) հեռացնելով դրանց նկատմամբ կիրառված մաքսային կապարակնիքները, կնիքները կամ նույնականացման այլ միջոցներ, կազմատելով, ապամոնտաժելով զննվող օբյեկտները և դրանց մասերը, կամ այլ կերպ խախտելով դրանց ամբողջականությունը:

2. Մաքսային զննումն անցկացվում է այն ապրանքների մասին տեղեկություններն ստուգելու և (կամ) ստանալու նպատակով, որոնց նկատմամբ անցկացվում է մաքսային հսկողությունը:

3. Մաքսային մարմինը ծանուցումն ստանալու փաստը հաստատելու հնարավորություն տվող ցանկացած եղանակով մաքսային զննում անցկացնելու ժամի և վայրի մասին ծանուցում է հայտարարատուին կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի, եթե այդ անձինք որոշված են: Մաքսային զննումն անցկացնելու ժամ նշանակելիս հաշվի են առնվում այդ անձանց ժամանման ողջամիտ ժամկետները:

4. Հայտարարատուն, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձինք և նրանց ներկայացուցիչներն իրավունք ունեն սեփական նախաձեռնությամբ ներկա գտնվելու մաքսային զննում անցկացնելու ժամանակ՝ բացառությամբ սույն հոդվածի 6-րդ կետով սահմանված դեպքերի:

5. Մաքսային մարմնի պահանջով հայտարարատուն կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձինք և նրանց ներկայացուցիչները պարտավոր են ներկա գտնվել մաքսային զննում անցկացնելու ժամանակ և անհրաժեշտ օժանդակություն տրամադրել մաքսային մարմնի պաշտոնատար անձանց: Փոխադրողի կողմից հատուկ լիազորված ներկայացուցչի բացակայության դեպքում այդպիսին համարվում է տրանսպորտային միջոցը վարող ֆիզիկական անձը:

6. Մաքսային մարմինն իրավունք ունի անցկացնելու մաքսային զննում հայտարարատուի, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձանց և նրանց ներկայացուցիչների բացակայությամբ հետևյալ դեպքերում՝

1) նշված անձանց չներկայանալը կամ այդ անձանց որոշված չլինելու դեպքերը.

2) ազգային (պետական) անվտանգության, մարդու կյանքի և առողջության, կենդանիների և բույսերի, շրջակա միջավայրի, անդամ պետությունների ազգային մշակութային ժառանգության օբյեկտների պահպանման համար սպառնալիքի առկայությունը և հետաձգում չհանդուրժող այլ հանգամանքների ի հայտ գալը, այդ թվում՝ այն մասին վկայող հատկանիշների առկայությունը, որ ապրանքները դյուրաբոցավառ նյութեր, պայթյունավտանգ առարկաներ, պայթուցիկ, թունավորող, քիմիական և կենսաբանական վտանգավոր նյութեր, թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), ուժեղ ազդեցություն ունեցող, թունավոր, տոքսիկ, ռադիոակտիվ նյութեր, միջուկային նյութեր և նման այլ ապրանքներ են, ինչպես նաև դեպքերը, երբ ապրանքներից տհաճ հոտ է տարածվում.

3) միջազգային փոստային առաքանիներով ապրանքների առաքումը.

4) Միության մաքսային տարածքում ապրանքները թողնելը՝ խախտելով այն մաքսային ընթացակարգը, որով նախատեսվում է դրանց արտահանումը Միության մաքսային տարածքից կամ այն պայմանները, որոնք սահմանված են սույն Օրենսգրքին համապատասխան մաքսային ընթացակարգերով ձևակերպման ոչ ենթակա ապրանքների առանձին

կատեգորիաների օգտագործման համար:

7. Սույն հոդվածի 6-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերում նշված դեպքերում մաքսային զննումն անցկացվում է 2 ընթերակաների ներկայությամբ, իսկ սույն հոդվածի 6-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքում՝ փոստային կապի նշանակված օպերատորի ներկայացուցչի ներկայությամբ, իսկ նրա բացակայության դեպքում՝ 2 ընթերակաների ներկայությամբ:

8. Մաքսային զննում անցկացնելու արդյունքները ձևակերպվում են մաքսային զննման՝ Հանձնաժողովի կողմից որոշվող ձևի ակտ կազմելու միջոցով՝ բացառությամբ սույն Օրենսգրքի 317-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի, կամ ձևակերպվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան նախատեսված այլ եղանակով:

9. Մաքսային զննման ակտում նշվում են հետևյալ տեղեկությունները՝

1) մաքսային մարմնի՝ մաքսային զննումն անցկացրած պաշտոնատար անձանց և դրա անցկացման ժամանակ ներկա գտնված անձանց մասին տեղեկությունները.

2) մաքսային զննումը հայտարարատուի կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի բացակայությամբ անցկացնելու պատճառները.

3) մաքսային զննման արդյունքները.

4) ակտի ձևով նախատեսված այլ տեղեկություններ:

10. Մաքսային զննման ակտը կազմվում է 2 օրինակից, որոնցից մեկը հանձնվում է (ուղարկվում է) հայտարարատուին կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի կամ նրանց ներկայացուցիչներին, եթե այդ անձինք որոշված են:

Հոդված 329. Անձի մաքսային զննումը

1. Անձի մաքսային զննումը մաքսային հսկողության ձև է, որը ֆիզիկական անձանց զննում անցկացնելն է:

2. Անձի մաքսային զննումը կարող է անցկացվել միայն Միության մաքսային սահմանով ուղևորվող և մաքսային հսկողության գոտում կամ միջազգային օդանավակայանի տարանցիկ գոտում գտնվող ֆիզիկական անձանց նկատմամբ, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ այդ անձինք իրենց մոտ թաքցնում են և կամավոր կերպով չեն հանձնում մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի, անդամ պետությունների օրենսդրության խախտմամբ Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներ:

3. Անձի մաքսային զննումն անցկացվում է սույն հոդվածի 2-րդ կետում նշված ֆիզիկական անձանց մոտ թաքցվող՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի, անդամ պետությունների օրենսդրության խախտմամբ Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները հայտնաբերելու նպատակով և մաքսային հսկողության բացառիկ ձև է:

4. Անձի մաքսային զննումն իրականացվում է մաքսային մարմնի ղեկավարի (պետի), նրա կողմից լիազորված՝ մաքսային մարմնի ղեկավարի (պետի) տեղակալի կամ նրանց փոխարինող անձանց որոշմամբ, իսկ եթե դա նախատեսված է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ, ապա մաքսային հսկողություն իրականացնելու լիազորություն ունեցող մաքսային մարմնի ստորաբաժանման ղեկավարի (պետի), նրա կողմից լիազորված՝ մաքսային մարմնի ստորաբաժանման ղեկավարի տեղակալի (պետի տեղակալի) կամ նրանց փոխարինող անձանց որոշմամբ:

Նշված որոշումը ձևակերպվում է գրավոր կերպով:

5. Անձի մաքսային զննումն անցկացվում է մաքսային մարմնի այն պաշտոնատար անձանց կողմից, ովքեր մաքսային զննման ենթարկվող անձի հետ նույն սեռի են, նույն սեռի 2 ընթերակաների ներկայությամբ, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխանող մեկուսացված սենյակում: Բացի սույն հոդվածում նշված ֆիզիկական անձանցից՝ ֆիզիկական անձանց մուտքը շինություններ և անձի մաքսային զննման անցկացմանը այլ ֆիզիկական անձանց կողմից հետևելու հնարավորությունը պետք է բացառվեն:

Այն ֆիզիկական անձի մարմնի զննությունը, որի նկատմամբ անձի մաքսային զննում է անցկացվում, իրականացվում է միայն բուժաշխատողի կողմից՝ անհրաժեշտության դեպքում հատուկ բժշկական տեխնիկայի կիրառմամբ:

Անչափահաս կամ անգործունակ ֆիզիկական անձի մաքսային զննում անցկացնելիս պարտավոր են ներկա գտնվել նրա օրինական ներկայացուցիչները (ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները) կամ նրան ուղեկցող անձինք:

6. Նախքան անձի մաքսային զննման անցկացումն սկսելը մաքսային մարմնի պաշտոնատար անձը պարտավոր է ֆիզիկական անձին ծանոթացնել անձի մաքսային զննում անցկացնելու մասին որոշմանը և անձի մաքսային զննում անցկացնելու դեպքում իր իրավունքներին, ինչպես նաև նրան առաջարկել կամավոր հանձնել մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի, անդամ պետությունների օրենսդրության խախտմամբ Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները:

Անձի մաքսային զննում անցկացնելու մասին որոշմանը ֆիզիկական անձի ծանոթանալու փաստը հավաստվում է այդ ֆիզիկական անձի կողմից՝ անձի մաքսային զննում անցկացնելու մասին որոշման մեջ համապատասխան գրառում կատարելու միջոցով: Այն դեպքում, երբ ֆիզիկական անձը հրաժարվում է այդ գրառումը կատարելուց, անձի մաքսային

զննում անցկացնելու մասին որոշման վրա կատարվում է համապատասխան նշում, որը հավաստվում է մաքսային մարմնի՝ անձի մաքսային զննումն անցկացնելու մասին որոշման վերաբերյալ հայտարարություն արած լիազորված պաշտոնատար անձի և անձի մաքսային զննումն անցկացնելուն ներկա եղած ընթերակաների ստորագրություններով:

7. Անձի մաքսային զննում անցկացնելիս մաքսային մարմնի պաշտոնատար անձի գործողություններով չպետք է ոտնահարվեն անձի մաքսային զննման ենթարկվող ֆիզիկական անձի պատիվն ու արժանապատվությունը, և չպետք է վնաս հասցվի այդ ֆիզիկական անձի առողջությանը և գույքին:

8. Ֆիզիկական անձը, որի նկատմամբ անձի մաքսային զննում է անցկացվում, իրավունք ունի՝

1) ծանոթանալու անձի մաքսային զննում անցկացնելու մասին որոշմանը և դրա անցկացման կարգին՝ նախքան անձի մաքսային զննման անցկացումն սկսելը.

2) ծանոթանալու իր իրավունքներին և պարտականություններին.

3) բացատրություններ տալու և միջնորդություններ ներկայացնելու.

4) կամավոր հանձնելու իր մոտ թաքցրած՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի, անդամ պետությունների օրենսդրության խախտմամբ Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները.

5) հայտարարություն անելու, որը պետք է մաքսային մարմնի՝ անձի մաքսային զննում անցկացնող պաշտոնատար անձի կողմից պարտադիր կերպով ներառվի անձի մաքսային զննման ակտում.

6) օգտագործելու մայրենի լեզուն և օգտվելու թարգմանչի ծառայություններից.

7) ծանոթանալու անձի մաքսային զննման ակտին՝ վերջինիս կազմումն ավարտվելուց հետո, և դրա մեջ գրավոր ձևով հայտարարություններ անելու.

8) բողոքարկելու մաքսային մարմնի՝ անձի մաքսային զննում անցկացնող պաշտոնատար անձանց գործողությունները՝ սույն Օրենսգրքին համապատասխան:

9. Անձի մաքսային զննում անցկացնելու ընթացքում ֆիզիկական անձը, որի նկատմամբ դա անցկացվում է, և նրա օրինական ներկայացուցիչը պարտավոր են կատարել մաքսային մարմնի՝ անձի մաքսային զննում անցկացնող պաշտոնատար անձի օրինական պահանջները:

10. Անձի մաքսային զննում անցկացնելու արդյունքները ձևակերպվում են անձի մաքսային զննման՝ Հանձնաժողովի կողմից որոշվող ձևի ակտ կազմելու միջոցով:

Նշված ակտը պետք է կազմվի անձի մաքսային զննում անցկացնելու ընթացքում կամ դրա ավարտից հետո՝ 1 ժամվա ընթացքում:

11. Անձի մաքսային զննման ակտն ստորագրվում է մաքսային մարմնի՝ անձի մաքսային զննում անցկացրած պաշտոնատար անձի, այն ֆիզիկական անձի կողմից, որի նկատմամբ անցկացվել է անձի մաքսային զննումը, կամ նրա օրինական ներկայացուցչի կամ նրան ուղեկցող անձի, ընթերակաների կողմից, իսկ այն ֆիզիկական անձի մարմնի զննությունն անցկացնելու դեպքում, որի նկատմամբ անցկացվել է անձի մաքսային զննումը՝ նաև բուժաշխատողի կողմից:

12. Անձի մաքսային զննման ակտը կազմվում է 2 օրինակից, որոնցից մեկը հանձնվում է ֆիզիկական անձին, որի նկատմամբ անցկացվել է անձի մաքսային զննումը, նրա օրինական ներկայացուցչին կամ նրան ուղեկցող անձին՝ դա կազմելուց անմիջապես հետո:

Հոդված 330. Շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը

1. Շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը մաքսային հսկողության ձև է, որը շինությունների և տարածքների, ինչպես նաև նշված տեղերում գտնվող ապրանքների և (կամ) փաստաթղթերի տեսազննում անցկացնելն է:

2. Շինությունների և տարածքների մաքսային տեսազննումն անցկացվում է զննվող շինություններում կամ տարածքներում մաքսային հսկողության օբյեկտ հանդիսացող ապրանքների և (կամ) փաստաթղթերի առկայությունը կամ բացակայությունն ստուգելու նպատակներով, ինչպես նաև այդպիսի ապրանքների և (կամ) փաստաթղթերի վերաբերյալ տեղեկությունները ստուգելու և (կամ) ստանալու և ապրանքների, տրանսպորտային միջոցների և դրանց բեռնասրահներում (հատվածամասերում) մաքսային կապարակնիքների, կնիքների և նույնականացման այլ միջոցների առկայությունն ստուգելու նպատակներով:

3. Շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը մաքսային մարմինների կողմից կարող է անցկացվել որպես ժամանակավոր պահպանման պահեստներ, մաքսային պահեստներ, ազատ պահեստներ, անմաքս առևտրի խանութներ օգտագործվելու համար նախատեսված կամ օգտագործվող, ինչպես նաև լիազորված տնտեսական օպերատորների կողմից ապրանքների ժամանակավոր պահպանման համար նախատեսված կամ օգտագործվող կառույցների, շինությունների (շինությունների մասերի) և (կամ) բաց հրապարակների (բաց հրապարակների հատվածների)՝ սույն Օրենսգրքի 411-րդ հոդվածի 4-րդ կետին, 416-րդ հոդվածի 5-րդ կետին, 421-րդ հոդվածի 4-րդ կետին, 426-րդ հոդվածի 4-րդ կետին և 433-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետին համապատասխան սահմանված պահանջներին և պայմաններին համապատասխանությունը պարզելու նպատակներով:

4. Շինությունների և բնակելի շինություններում տարածքների մաքսային տեսազննման անցկացումը թույլատրվում է,

եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ:

5. Շինությունների և տարածքների մաքսային տեսազննումն անցկացվում է շինությունների և տարածքների մաքսային տեսազննում անցկացնելու կարգադրագիրը և մաքսային մարմնի պաշտոնատար անձի ծառայողական վկայականը ներկայացնելու դեպքում:

Շինությունների և տարածքների մաքսային տեսազննում անցկացնելու կարգադրագրի ձևը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

Սույն կետի առաջին պարբերությունում նշված փաստաթղթերի ներկայացումը չի պահանջվում այն անձանց մոտ շինությունների և տարածքների մաքսային տեսազննում անցկացնելու դեպքում, որոնց նկատմամբ (մոտ) անցկացվում է արտագնա մաքսային ստուգում:

6. Շինություններ և տարածքներ մուտք գործելը մերժելու դեպքում մաքսային մարմինների պաշտոնատար անձինք իրավունք ունեն մուտք գործելու շինություններ և տարածքներ՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ ճնշելով դիմադրությունը և (կամ) բացելով փակ շինությունները և տարածքները:

7. Այն դեպքում, երբ անդամ պետության օրենսդրությամբ առանձին օբյեկտներ մուտք գործելու համար նախատեսված է հատուկ կարգ, այդպիսի մուտք գործելն իրականացվում է այդ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Շինությունների և տարածքների մաքսային տեսազննումը պետք է անցկացվի դրա անցկացման համար անհրաժեշտ՝ հնարավորինս սեղմ ժամկետում և չի կարող շարունակվել 1 աշխատանքային օրվանից ավելի, եթե անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ այլ ժամկետ սահմանված չէ:

9. Շինությունների և տարածքների մաքսային տեսազննման անցկացման արդյունքները ձևակերպվում են շինությունների և տարածքների մաքսային տեսազննման՝ Հանձնաժողովի կողմից որոշվող ձևի ակտը կազմելու միջոցով:

10. Շինությունների և տարածքների մաքսային տեսազննման վերաբերյալ ակտը կազմվում է 2 օրինակից, որոնցից մեկը ենթակա է տրման (ուղարկման) այն անձին, որի շինությունները և (կամ) տարածքները տեսազննման են ենթարկվել, եթե այդ անձը որոշված է:

Հոդված 331. Մաքսային ստուգումը

1. Մաքսային ստուգումը մաքսային հսկողության ձև է, որն անցկացվում է մաքսային մարմնի կողմից ապրանքների բացթողումից հետո սույն Օրենսգրքով սահմանված՝ մաքսային հսկողության այլ ձևերի և սույն Օրենսգրքով նախատեսված՝ մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցների կիրառմամբ՝ անձանց կողմից անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության պահանջների պահպանումն ստուգելու նպատակներով:

2. Մաքսային ստուգումը կայանում է մաքսային հայտարարագրում հայտագրված և (կամ) մաքսային մարմիններին ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունները և (կամ) մաքսային մարմնին ներկայացված կամ սույն Օրենսգրքին կամ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան իր կողմից ստացված այլ տեղեկությունները հաշվապահական հաշվառման և հաշվետվության փաստաթղթերի և (կամ) տվյալների, հաշիվների և սույն Օրենսգրքով կամ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ստացած այլ տեղեկատվության հետ համադրելու մեջ:

3. Մաքսային ստուգումը կարող է կիրառվել մաքսային հսկողության անցկացման ժամանակ՝ սույն Օրենսգրքի 310-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան, ինչպես նաև սույն Օրենսգրքի 397-րդ հոդվածի 5-րդ կետով և 430-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերում:

4. Մաքսային ստուգումն անցկացվում է այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որի տարածքում ստուգման ենթարկվող անձն ստեղծվել, գրանցվել և (կամ) մշտական բնակության վայր ունի:

5. Ստուգման ենթարկվող անձինք ասելով ենթադրվում են հետևյալ անձինք՝

1) հայտարարատուն.

2) փոխադրողը.

3) ժամանակավոր պահպանման պահեստ չհանդիսացող վայրերում ապրանքների ժամանակավոր պահպանում իրականացնող անձը.

4) մաքսային գործի ոլորտում գործունեություն իրականացնող անձը.

5) ապրանքների բացթողումից հետո դրանց նկատմամբ լիազորություններ ունեցող անձը.

6) լիազորված տնտեսական օպերատորը.

7) մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հետ կապված գործարքներում ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցություն ունեցած անձը.

8) այն անձը, որի վերաբերյալ կա այն մասին վկայող տեղեկատվություն, որ նրա տիրապետման և (կամ) օգտագործման ներքո՝ միջազգային պայմանագրերի և մաքսային կարգավորման ոլորտի ակտերի, անդամ պետությունների օրենսդրության խախտմամբ գտնվում (գտնվել) են ապրանքներ, այդ թվում՝ Միության մաքսային սահմանով անօրինականորեն տեղափոխված ապրանքներ:

6. Մաքսային ստուգման անցկացման ժամանակ մաքսային մարմինների կողմից կարող են ստուգվել՝

1) ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելու փաստը.

2) մաքսային հայտարարագրում հայտագրված և (կամ) մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հավաստող փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների հավաստիությունը.

3) պայմանականորեն բաց թողնված ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումների պահպանումը.

4) մաքսային գործի ոլորտում գործունեություն իրականացնող անձանց կողմից սույն Օրենսգրքով մաքսային գործի բնագավառում բոլոր գործունեության տեսակների համար նախատեսված պարտականությունների կատարումը.

5) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի կողմից այդպիսի ռեեստրում ընդգրկման պայմանների կատարումը, ինչպես նաև լիազորված տնտեսական օպերատորի կողմից լիազորված տնտեսական օպերատորներին ռեեստրում ընդգրկելու պայմանների կատարում և սույն Օրենսգրքով նախատեսված այլ պարտականությունների կատարումը.

6) ապրանքների օգտագործման պայմանների կատարումը՝ սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային ընթացակարգերին համապատասխան.

7) մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով ու ակտերով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այլ պահանջների կատարումը:

7. Մաքսային ստուգումը կարող է լինել կամերալ կամ արտագնա:

8. Մաքսային ստուգման անցկացմանը մասնակցելու համար կարող են ներգրավվել անդամ պետությունների այլ պետական մարմինների պաշտոնատար անձինք՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

9. Մաքսային ստուգում անցկացնելու ընթացքում վարչական իրավախախտման կամ հանցագործության մասին վկայող փաստերի հայտնաբերման դեպքում մաքսային մարմինների կողմից ձեռնարկվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան միջոցներ:

10. Մաքսային ստուգում անցկացնելու արդյունքների մասով մաքսային մարմնի որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

Հոդված 332. Կամերալ մաքսային ստուգումը

1. Կամերալ մաքսային ստուգումն անցկացվում է ստուգման ենթարկվող անձի կողմից մաքսային գործառնություններ իրականացնելիս և (կամ) մաքսային մարմինների պահանջով ներկայացված մաքսային հայտարարագրերում և (կամ) առևտրային, տրանսպորտային (փոխադրման) և այլ փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների, անդամ պետությունների պետական մարմինների փաստաթղթերի և տեղեկությունների, ինչպես նաև մաքսային մարմինների մոտ գտնվող և ստուգման ենթարկվող անձին առնչվող այլ փաստաթղթերի և տեղեկությունների ուսումնասիրության և վերլուծության միջոցով:

2. Կամերալ մաքսային ստուգումը մաքսային մարմինների կողմից անցկացվում է մաքսային մարմնի գտնվելու վայրում՝ առանց ստուգման ենթարկվող անձին այցելության, ինչպես նաև առանց կամերալ մաքսային ստուգում անցկացնելու մասին մաքսային մարմնի որոշումը (կարգադրագիրը) ձևակերպելու:

3. Կամերալ մաքսային ստուգումներն անցկացվում են առանց դրանք անցկացնելու պարբերականության սահմանափակումների:

4. Կամերալ մաքսային ստուգում անցկացնելու արդյունքները ձևակերպվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

5. Կամերալ մաքսային ստուգում անցկացնելու արդյունքների հիման վրա, այդ թվում՝ մաքսային մարմնի պահանջով սահմանված ժամկետում փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները չներկայացնելու դեպքում, կարող է արտագնա մաքսային ստուգում նշանակվել:

Հոդված 333. Արտագնա մաքսային ստուգում

1. Արտագնա մաքսային ստուգումը մաքսային մարմնի կողմից անցկացվում է իրավաբանական անձի գտնվելու վայր (վայրեր), անհատ ձեռնարկատիրոջ գործունեության իրականացման վայր (վայրեր) և (կամ) նման անձանց կողմից գործունեության փաստացի իրականացման վայր (վայրեր) (այսուհետ սույն գլխում՝ ստուգման ենթարկվող անձի օբյեկտներ) այցելության ձևով:

2. Արտագնա մաքսային ստուգումները ստորաբաժանվում են հետևյալ տեսակների՝

1) պլանային արտագնա մաքսային ստուգում.

2) արտապլանային արտագնա մաքսային ստուգում.

3) արտապլանային արտագնա մաքսային հանդիպական ստուգում:

3. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել արտագնա մաքսային ստուգումների լրացուցիչ տեսակներ, այդպիսի ստուգումներ անցկացնելու հիմքերը, ժամկետները և կարգի առանձնահատկությունները:

4. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ պլանային արտագնա մաքսային ստուգման տեսքով արտագնա մաքսային ստուգումը չի կիրառվում:

35. Արտագնա մաքսային ստուգում նշանակվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող մաքսային մարմնի ղեկավարի (պետի) կողմից, նրա կողմից լիազորված մաքսային մարմնի տեղակալի (պետի տեղակալի) կամ նրանց փոխարինող անձանց կողմից՝ արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշում (կարգադրագիր տալու) կայացնելու միջոցով:

6. Արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշումը (կարգադրագիրը) պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) այդ որոշման (կարգադրագրի) ամսաթիվը և գրանցման համարը.

2) արտագնա մաքսային ստուգման տեսակը.

3) արտագնա մաքսային ստուգում անցկացնող մաքսային մարմնի անվանումը.

4) արտագնա մաքսային ստուգում նշանակելու համար հիմքերը՝ սույն հոդվածի 16-րդ կետով նախատեսված հիմքին կամ ստուգումների պլանին (ժամանակացույցին) արված հղումը.

5) ստուգման ենթարկվող անձի անվանումը (ազգանունը, անունը և հայրանունը (առկայության դեպքում)), նրա գտնվելու վայրը (վայրերը) (բնակության վայրը) և (կամ) գործունեության փաստացի իրականացման վայրը (վայրերը), նրա նույնականացման և (կամ) գրանցման համարները.

6) արտագնա մաքսային ստուգում անցկացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձանց ազգանունները, անունները, հայրանունները (առկայության դեպքում) և պաշտոնները.

7) արտագնա մաքսային ստուգման անցկացմանը մասնակցելու համար ներգրավվող պաշտոնատար անձանց ազգանունները, անունները, հայրանունները (առկայության դեպքում) և պաշտոնները.

8) արտագնա մաքսային ստուգման առարկան՝ սույն Օրենսգրքի 331-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան.

9) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկություններ:

7. Արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշման (կարգադրագրի) ձևը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

8. Սույն հոդվածի 6-րդ կետի 5-9-րդ ենթակետերում նշված տեղեկությունները փոփոխելու (լրացնելու) անհրաժեշտության դեպքում, մինչև արտագնա մաքսային ստուգման անցկացման ավարտն՝ արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշման (կարգադրագրի) մեջ կարող են կատարվել փոփոխություններ (լրացումներ)՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Արտագնա մաքսային ստուգում կարող է նշանակվել մաքսային հսկողության այլ ձևերով անցկացման արդյունքների հիման վրա, ինչպես նաև կամերալ մաքսային ստուգում անցկացնելու արդյունքների հիման վրա:

10. Պլանային արտագնա մաքսային ստուգումն անցկացվում է մաքսային մարմինների կողմից մշակվող ստուգումների ծրագրի հիման վրա:

Միևնույն ստուգման ենթարկվող անձի նկատմամբ պլանային արտագնա մաքսային ստուգումներն անցկացվում են մաքսային մարմինների կողմից՝ ոչ հաճախ, քան տարին 1 անգամ:

Լիազորված տնտեսական օպերատորների նկատմամբ պլանային արտագնա մաքսային ստուգումներն անցկացվում են մաքսային մարմինների կողմից ոչ հաճախ, քան 3 տարին 1 անգամ:

11. Անձանց ընտրությունը, որոնց նկատմամբ անցկացվում է պլանային արտագնա մաքսային ստուգում, իրականացվում է հետևյալ աղբյուրներից ստացված տեղեկության օգտագործմամբ՝

1) մաքսային հսկողության անցկացման արդյունքները՝ նախքան ապրանքների բացթողումը և դրանից հետո.

2) մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսները.

3) նախորդ մաքսային ստուգումների արդյունքները.

4) անդամ պետությունների բանկերը, ոչ բանկային վարկային (ֆինանսավարկային) կազմակերպությունները և բանկային գործառնությունների առանձին տեսակներ իրականացնող կազմակերպությունները.

5) անդամ պետությունների մաքսային և (կամ) այլ պետական մարմինները.

6) զանգվածային լրատվամիջոցները.

7) տեղեկատվության այլ աղբյուրներ:

12. Նախքան պլանային արտագնա մաքսային ստուգում սկսելը մաքսային մարմինները ստուգման ենթարկվող անձին, հանձնման մասին ծանուցմամբ պատվիրված փոստային առաքմամբ, ուղարկում են պլանային արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին ծանուցում կամ փոխանցում են այդ ծանուցումն այլ եղանակով, որը դրա ստանալու փաստը հաստատելու հնարավորություն է տալիս:

13. Գտնվելու վայրից ստուգման ենթարկվող անձի բացակայության պատճառով նամակը հասցեատիրոջը չհանձնելու մասին վկայող նշումով փոստային առաքանու վերադարձը հիմք չէ պլանային արտագնա մաքսային ստուգումը չեղյալ ճանաչելու համար:

14. Պլանային արտագնա մաքսային ստուգումը կարող է սկսվել ստուգման ենթարկվող անձի կողմից պլանային արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին ծանուցումը ստանալու օրվանից կամ հասցեատիրոջը նամակը չհանձնելու մասին նշումով փոստային առաքանին մաքսային մարմնի կողմից ստացվելու օրվանից ոչ շուտ, քան 15 օրացուցային օր հետո:

15. Արտապլանային արտագնա մաքսային ստուգումներն անցկացվում են առանց այդպիսի ստուգումներ անցկացնելու պարբերականության սահմանափակումների:

16. Արտապլանային արտագնա մաքսային ստուգումներ նշանակելու համար հիմքեր կարող են լինել՝

1) անդամ պետությունների մաքսային մարմինների և պետական այլ մարմինների տեղեկատվական ռեսուրսներում պարունակվող տեղեկատվության վերլուծության արդյունքում ստացված և անդամ պետությունների մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության հնարավոր խախտման մասին վկայող տվյալները.

2) անդամ պետությունների մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի և (կամ) անդամ պետությունների օրենսդրության հնարավոր խախտման մասին վկայող տեղեկատվությունը.

3) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում գրանցման վերաբերյալ անձի դիմումը.

4) մաքսային մարմնին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման ժամանակ լիազորված տնտեսական օպերատորի կողմից ապրանքների ժամանակավոր պահպանման համար նախատեսված սեփականության, տնտեսավարման, օպերատիվ կառավարման կամ վարձակալության իրավունքով պատկանող կառույցների, շինությունների (շինությունների մասերի) և (կամ) բաց հրապարակների (բաց հրապարակների մասերի) մասին ներկայացված տեղեկությունների փոփոխության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը.

5) արտապլանային արտագնա մաքսային հանդիպական ստուգում անցկացնելու անհրաժեշտությունը՝ սույն հոդվածի 17-րդ կետին համապատասխան.

6) Միության անդամ չհանդիսացող պետության իրավասու մարմնի դիմումը (հարցումը)՝ օտարերկրյա անձի հետ Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված գործարքներ կատարած անձին ստուգելու մասին.

7) անդամ պետությունների նախաքննության մարմինների (քրեական հետապնդման մարմինների) հանձնարարականը (հարցումը) հանցագործության մասին հաղորդման ստուգման նյութերով կամ հարուցված քրեական գործով.

8) մեկ անդամ պետության մաքսային մարմնի՝ մյուս անդամ պետության մաքսային մարմնին տրված հանձնարարականը՝ այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ստեղծված և (կամ) գրանցված անձի մոտ արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին, որի մաքսային մարմնին է ուղարկվել սույն Օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին և (կամ) 3-րդ ենթակետերով նախատեսված հիմքերով հանձնարարականը.

9) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքեր:

17. Ստուգման ենթարկվող անձի կողմից ներկայացված տվյալների հավաստիությունը հաստատելու անհրաժեշտության դեպքում մաքսային մարմինը կարող է անցկացնել հանդիպական արտապլանային արտագնա մաքսային ստուգում այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ստեղծված և (կամ) գրանցված, ինչպես նաև ապրանքների հետ կապված գործարքների (գործողությունների) մասով ստուգման ենթարկվող անձի հետ կապված անձանց մոտ, որի մաքսային մարմինն անցկացնում է արտագնա մաքսային ստուգում:

18. Արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մեկնարկի ամսաթիվ է համարվում արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշումը (կարգադրագիրը) ստուգման ենթարկվող անձին հանձնելու ամսաթիվը, իսկ եթե ստուգման ենթարկվող անձին նման արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշումը (կարգադրագիրը) հասցվում է այլ եղանակով՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանվող ամսաթիվը:

19. Ստուգման ենթարկվող անձի կողմից արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշումն (կարգադրագիրն) ստանալուց հրաժարվելը հիմք չէ արտագնա մաքսային ստուգումը չեղյալ ճանաչելու համար:

Այդ դեպքում արտագնա մաքսային ստուգում անցկացնելու ամսաթիվ է համարվում արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշման (կարգադրագրի) մեջ այդ որոշումն (կարգադրագիրն) ստանալուց հրաժարվելու մասին գրառում կատարելու ամսաթիվը:

20. Նախքան ստուգման ենթարկվող անձի օբյեկտում արտագնա մաքսային ստուգում սկսելը, մաքսային մարմնի պաշտոնատար անձինք պարտավոր են ստուգման ենթարկվող անձի ղեկավարին, ղեկավարին փոխարինող անձին կամ ստուգման ենթարկվող անձի ներկայացուցչին ներկայացնել իրենց ծառայողական վկայականները:

21. Արտագնա մաքսային ստուգման անցկացման ժամանակահատվածում ստուգման ենթարկվող անձն իրավունք չունի փոփոխություններ (լրացումներ) կատարելու իր գործունեությանն առնչվող՝ ստուգվող փաստաթղթերում:

22. Արտագնա մաքսային ստուգման ժամկետը չպետք է գերազանցի 2 ամիսը: Նշված ժամկետը չի ներառում ստուգման ենթարկվող անձին փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ ներկայացնելու մասին պահանջը հանձնելու ամսաթվի ու այդ փաստաթղթերը և (կամ) տեղեկություններն ստանալու ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածը:

23. Արտագնա մաքսային ստուգում անցկացնելու ժամկետը կարող է երկարաձգվել 1 ամսով այն մաքսային մարմնի որոշմամբ, որը նման ստուգում է անցկացնում:

24. Հանդիպական արտապլանային արտագնա մաքսային ստուգում անցկացնելու, մաքսային փորձաքննություն անցկացնելու, անդամ պետությունների կամ Միության անդամ չհանդիսացող պետությունների իրավասու մարմիններ հարցումներ ուղարկելու, արտագնա մաքսային ստուգում անցկացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը ստուգման ենթարկվող անձի կողմից վերականգնելու, արտագնա մաքսային ստուգումների արդյունքներով եզրակացությունների վրա ազդող՝ ստուգվող ժամանակահատվածին վերաբերող լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության դեպքում, ինչպես նաև անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող այլ դեպքերում արտագնա մաքսային

ստուգման անցկացումը կարող է կասեցվել մաքսային ստուգում իրականացնող մաքսային մարմնի ղեկավարի (պետի), նրա կողմից լիազորված՝ մաքսային մարմնի ղեկավարի տեղակալի (պետի տեղակալի) կամ նրանց փոխարինող անձանց որոշմամբ: Արտագնա մաքսային ստուգում անցկացնելու կասեցման ժամկետը չի կարող գերազանցել 9 ամիսը, եթե անդամ պետությունների օրենսդրությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

Արտագնա մաքսային ստուգում անցկացնելու կասեցման կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

Սույն կետով սահմանված, ինչպես նաև անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող հիմքերով արտագնա մաքսային ստուգումը կասեցնելու ժամկետը չի ներառվում արտագնա մաքսային ստուգում անցկացնելու ժամկետի մեջ:

25. Արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշման (կարգադրագրի) մեջ կատարվում են արտագնա մաքսային ստուգման ժամկետի երկարաձգման, ինչպես նաև դրա անցկացումը կասեցնելու մասին համապատասխան գրառումներ, որի մասին ստուգման ենթարկվող անձը տեղեկացվում է:

26. Արտագնա մաքսային ստուգման անցկացման արդյունքները ձևակերպվում են մաքսային փաստաթուղթ կազմելու միջոցով, որի ձևը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան՝ այդպիսի օրենսդրությամբ սահմանված կարգով:

27. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել ստուգման ենթարկվող անձանց կողմից արտագնա մաքսային ստուգման նախնական արդյունքներին ծանոթանալու և առկայության դեպքում՝ առարկություններ ներկայացնելու կարգը:

28. Արտագնա մաքսային ստուգման անցկացման արդյունքները ձևակերպելու ժամանակ կազմվող մաքսային փաստաթղթում նշվում են հետևյալ տվյալները՝

1) այդ փաստաթուղթը կազմելու վայրն ու ամսաթիվը.

2) այդ փաստաթղթի գրանցման համարը.

3) արտագնա մաքսային ստուգում անցկացրած մաքսային մարմնի անվանումը.

4) արտագնա մաքսային ստուգում նշանակելու համար հիմքը՝ ստուգումների պլանին (ժամանակացույցին) կամ սույն հոդվածի 16-րդ կետով նախատեսված հիմքերին արված հղումը.

5) արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշման (կարգադրագրի) ամսաթիվը և համարը.

6) արտագնա մաքսային ստուգման տեսակը.

7) ստուգման ենթարկվող անձի անվանումը (ազգանունը, անունը և հայրանունը (առկայության դեպքում)), նրա գտնվելու վայրը (վայրերը) (բնակության վայրը) և (կամ) գործունեություն փաստացի իրականացման վայրը (վայրերը), նրա նույնականացման և (կամ) գրանցման համարները.

8) արտագնա մաքսային ստուգում անցկացրած՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձանց ազգանունները, անունները, հայրանունները (առկայության դեպքում) և պաշտոնները.

9) արտագնա մաքսային ստուգման անցկացմանը մասնակցելու համար ներգրավված պաշտոնատար անձանց ազգանունները, անունները, հայրանունները (առկայության դեպքում) և պաշտոնները.

10) արտագնա մաքսային ստուգման անցկացման մեկնարկի և ավարտի ամսաթվերը, իսկ արտագնա մաքսային ստուգում անցկացնելու կասեցման և (կամ) ժամկետի երկարաձգման դեպքում նաև նշվում են այդպիսի կասեցման և (կամ) երկարաձգման ժամանակահատվածները.

11) ստուգված փաստաթղթերի տեսակները.

12) մաքսային հսկողության ձևերի, արտագնա մաքսային ստուգման ընթացքում կատարված այլ գործողությունների վերաբերյալ տվյալները.

13) մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի և (կամ) անդամ պետությունների օրենսդրության խախտումների մասին վկայող՝ հայտնաբերված փաստերի նկարագրությունը՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի և (կամ) անդամ պետությունների օրենսդրության այն դրույթների նշմամբ, որոնց պահանջները խախտվել են, կամ դրանց բացակայության մասին տվյալները.

14) եզրակացություններն արտագնա մաքսային ստուգում անցկացնելու արդյունքներով.

15) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկություններ:

29. Արտագնա մաքսային ստուգում անցկացնելու ավարտի ամսաթիվ է համարվում արտագնա մաքսային ստուգում անցկացնելու արդյունքները ձևակերպելիս կազմվող մաքսային փաստաթղթի կազմման ամսաթիվը:

30. Ֆիզիկական անձանց նկատմամբ արտագնա մաքսային ստուգում չի անցկացվում, բացառությամբ՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան գրանցված անհատ ձեռնարկատերերի:

Հոդված 334. Արտագնա մաքսային ստուգում անցկացնելու համար մաքսային և պետական այլ մարմինների պաշտոնատար անձանց՝ ստուգման ենթարկվող անձի օբյեկտ մուտք գործելու հնարավորության ընձեռումը

1. Մաքսային մարմնի պաշտոնատար անձի արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշումը (կարգադրագիրը) և ծառայողական վկայականները ներկայացնելու դեպքում, ստուգման ենթարկվող անձը պարտավոր է

ապահովել այդ պաշտոնատար անձանց և արտագնա մաքսային ստուգման անցկացմանը մասնակցելու համար ներգրավված՝ այլ պետական մարմինների պաշտոնատար անձանց մուտքը ստուգման ենթարկվող անձի օբյեկտ՝ արտագնա մաքսային ստուգում անցկացնելու համար:

Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց և արտագնա մաքսային ստուգման անցկացմանը մասնակցելու համար ներգրավված՝ այլ պետական մարմինների պաշտոնատար անձանց մուտքը ստուգման ենթարկվող անձի բնակելի շինություններ թուլատրվում է, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ:

2. Եթե անդամ պետությունների օրենսդրությամբ առանձին օբյեկտներ մուտքի համար նախատեսված է հատուկ կարգ, ապա այսպիսի մուտքն իրականացվում է այդ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Ստուգման ենթարկվող անձն իրավունք ունի մերժելու մաքսային մարմնի պաշտոնատար անձանց և արտագնա մաքսային ստուգման անցկացմանը մասնակցելու համար ներգրավված՝ այլ պետական մարմինների պաշտոնատար անձանց՝ ստուգման ենթարկվող անձի օբյեկտ մուտքը, հետևյալ դեպքերում՝

1) այդ պաշտոնատար անձանց կողմից արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշումը (կարգադրագիրը) և (կամ) ծառայողական վկայականները չեն ներկայացվել.

2) այդ պաշտոնատար անձինք արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշման (կարգադրագրի) մեջ նշված չեն.

3) այդ պաշտոնատար անձինք չունեն ստուգման ենթարկվող անձի օբյեկտ մուտք գործելու հատուկ թույլտվություն, եթե այդպիսի թույլտվությունն անհրաժեշտ է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

4. Եթե ստուգման ենթարկվող անձն առանց հիմնավորման մերժում է արտագնա մաքսային ստուգում անցկացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձանց և արտագնա մաքսային ստուգման անցկացմանը մասնակցելու համար ներգրավված անդամ պետությունների այլ պետական մարմինների պաշտոնատար անձանց մուտքը ստուգման ենթարկվող անձի օբյեկտ, ապա կազմվում է համապատասխան ակտ (արձանագրություն)՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Եթե ստուգման ենթարկվող անձն առանց հիմնավորման մերժում է արտագնա մաքսային ստուգում անցկացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձանց և արտագնա մաքսային ստուգման անցկացմանը մասնակցելու համար ներգրավված անդամ պետությունների այլ պետական մարմինների պաշտոնատար անձանց մուտքը ստուգման ենթարկվող անձի օբյեկտ, ապա նրանք իրավունք ունեն դիմադրությունը ճնշելու և (կամ) փակ շինությունները բացելու միջոցով մուտք գործել այդ օբյեկտ՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 335. Մաքսային մարմնի պաշտոնատար անձանց իրավունքներն ու պարտականությունները մաքսային ստուգում անցկացնելիս

1. Մաքսային ստուգում անցկացնելիս մաքսային մարմնի պաշտոնատար անձինք իրավունք ունեն՝

1) ստուգման ենթարկվող անձից պահանջելու ու նրանից ստանալու առևտրային, տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման և հաշվետվության փաստաթղթերը, ինչպես նաև այլ տեղեկատվություն, այդ թվում՝ էլեկտրոնային կրիչներով, որը վերաբերում է ստուգվող ապրանքներին, ներառյալ՝ այդ ապրանքների նկատմամբ ստուգման ենթարկվող անձի հետագա գործարքներին վերաբերող տեղեկությունները.

2) ստուգման ենթարկվող անձից պահանջելու ներկայացնել հաշվետվություն՝ սույն Օրենսգրքի 18-րդ հոդվածին համապատասխան.

3) պահանջելու մաքսային ստուգման ենթարկվող ապրանքներին առնչվող գործարքների (գործողությունների) մասով՝ ստուգման ենթարկվող անձի հետ կապված անձանցից ներկայացնել այդպիսի ապրանքների վերաբերյալ գործարքներին (գործողություններին) առնչություն ունեցող՝ ստուգման ենթարկվող անձի կամ երրորդ անձանց հետ անցկացվող գործողությունների և հաշվարկների մասով փաստաթղթերի պատճենները և այլ տեղեկատվություն.

4) պահանջելու անդամ պետությունների բանկերից, ոչ բանկային վարկային կազմակերպություններից (ֆինանսավարկային) և բանկային գործառնությունների առանձին տեսակներ իրականացնող կազմակերպություններից և ստանալու նրանցից անդամ պետությունների կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների առկայության և համարների մասին փաստաթղթերը և տեղեկությունները, ինչպես նաև մաքսային ստուգում անցկացնելու համար անհրաժեշտ՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի հաշիվներում դրամական միջոցների շարժի վերաբերյալ փաստաթղթերը և տեղեկությունները, այդ թվում՝ բանկային գաղտնիք պարունակող՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

5) հարցում կատարել անդամ պետությունների պետական մարմիններից և դրանցից ստանալ մաքսային ստուգում անցկացնելու համար անհրաժեշտ, այդ թվում՝ առևտրային, բանկային, հարկային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք հանդիսացող փաստաթղթեր և տեղեկություններ.

6) մաքսային ստուգում անցկացնելու կապակցությամբ հարցումներ ուղարկելու Միության անդամ չհանդիսացող պետությունների և անդամ պետությունների կազմակերպություններին, պետական և այլ մարմիններին (կազմակերպություններին).

7) մաքսային փորձաքննություն նշանակելու.

8) իրականացնելու անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ գործողություններ:

2. Արտագնա մաքսային ստուգում անցկացնելիս մաքսային մարմնի պաշտոնատար անձինք նաև իրավունք ունեն՝

1) ստուգման ենթարկվող անձից պահանջելու ներկայացնել այն ապրանքները, որոնց նկատմամբ անցկացվում է արտագնա մաքսային ստուգում.

2) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացնելու ապրանքների գույքագրում կամ պահանջելու ապրանքների գույքագրում անցկացնել.

3) մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշումը (կարգադրագիրը) և ծառայողական վկայականները ներկայացվելու դեպքում ստուգման ենթարկվող անձի օբյեկտներ մուտք գործելու հնարավորություն ստանալու.

4) վերցնելու ապրանքների փորձանմուշներ և (կամ) նմուշներ.

5) ստուգման ենթարկվող անձից առգրավելու փաստաթղթերը կամ դրանց պատճենները՝ կազմելով առգրավման մասին ակտ.

6) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքներն արգելանքի տակ դնելու կամ առգրավելու դրանք արտագնա մաքսային ստուգում անցկացնելու ժամկետի ընթացքում՝ այնպիսի ապրանքների օտարմանն ուղղված գործողությունների կանխարգելման համար, որոնց նկատմամբ անցկացվում է արտագնա մաքսային ստուգում, կամ այլ միջոցով այդ ապրանքները տնօրինելու համար.

7) կապարակնքելու շինությունները, պահեստները, արխիվները և այն փաստաթղթերի և ապրանքների գտնվելու (պահպանվելու) այլ վայրեր, որոնց նկատմամբ արտագնա մաքսային ստուգում է անցկացվում.

8) ստուգման ենթարկվող անձի ներկայացուցչից պահանջելու ներկայացնել անձը հաստատող փաստաթղթերը և (կամ) լիազորությունները հաստատող փաստաթղթերը.

9) իրենց իրավասության շրջանակներում ստուգման ենթարկվող անձի տեղեկատվական համակարգերի տվյալների բազաներ և բանկեր մուտք գործելու հնարավորություն ստանալու.

10) ստուգման ենթակա հարցերի շրջանակներում ստուգման ենթարկվող անձից պահանջելու և ստանալու անհրաժեշտ փաստաթղթերը (դրանց պատճենները), դրա գործունեությանը և գույքին վերաբերող այլ տեղեկություններ, այդ թվում՝ էլեկտրոնային տեսքով: Եթե այդպիսի փաստաթղթերը (դրանց պատճենները) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան չպետք է գտնվեն արտագնա մաքսային ստուգում անցկացնելու վայրում, ապա մաքսային մարմնի պաշտոնատար անձը դրանք ներկայացնելու համար բավարար, սակայն 3 աշխատանքային օրվանից ոչ պակաս ժամկետ է սահմանում.

11) կիրառելու տեխնիկական միջոցներ (այդ թվում՝ ձայնա- և տեսագրություն, տեսանկարահանում իրականացնող ապարատուրա), ինչպես նաև ստուգման ենթարկվող անձի կողմից էլեկտրոնային տեսքով ներկայացրած տեղեկատվության մշակման համար նախատեսված ծրագրային արտադրանք.

12) իրականացնելու անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ գործողություններ:

3. Մաքսային ստուգում անցկացնելիս մաքսային մարմնի պաշտոնատար անձինք պարտավոր են՝

1) պահպանել ստուգման ենթարկվող անձի իրավունքները և օրինական շահերը, թույլ չտալ, որպեսզի ստուգման ենթարկվող անձին անօրինական որոշումների և գործողությունների (անգործության) հետևանքով վնաս հասցվի.

2) օգտագործել մաքսային ստուգում անցկացնելիս ստացված տեղեկատվությունը՝ սույն Օրենսգրքի 356-րդ հոդվածին համապատասխան.

3) ապահովել մաքսային ստուգում անցկացնելիս ստացված և կազմված փաստաթղթերի պահպանվածությունը, չհրապարակել դրանց բովանդակությունը առանց ստուգման ենթարկվող անձի համաձայնության՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

4) պահպանել ծառայողական էթիկան.

5) տեղեկացնել ստուգման ենթարկվող անձին մաքսային ստուգում անցկացնելու, մաքսային փորձաքննություն նշանակելու, ապրանքների փորձանմուշներ և (կամ) նմուշներ վերցնելու ժամանակ նրա իրավունքների և պարտականությունների մասին, ինչպես նաև մաքսային ստուգում անցկացնելու ժամանակ մաքսային մարմնի պաշտոնատար անձանց իրավունքների և պարտականությունների մասին.

6) արտագնա մաքսային ստուգումներ անցկացնելու ժամանակահատվածում չխախտել ստուգման ենթարկվող անձի աշխատանքի սահմանված ռեժիմը.

7) ստուգման ենթարկվող անձի պահանջով ներկայացնել սույն Օրենսգրքի և անդամ պետությունների օրենսդրության այն դրույթների մասին անհրաժեշտ տեղեկատվություն, որը վերաբերում է մաքսային ստուգման անցկացման կարգին.

8) արտագնա մաքսային ստուգման անցկացման ժամանակ ստուգման ենթարկվող անձի ներկայացուցիչներին ներկայացնել արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշումը (կարգադրագիրը) և իրենց ծառայողական վկայականները.

9) կատարել անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

Հոդված 336. Ստուգման ենթարկվող անձի իրավունքներն ու պարտականությունները մաքսային ստուգում անցկացնելիս

1. Մաքսային ստուգում անցկացնելիս ստուգման ենթարկվող անձն իրավունք ունի՝

1) մաքսային մարմիններից պահանջելու և նրանցից ստանալու սույն Օրենսգրքի և անդամ պետությունների օրենսդրության այն դրույթների մասին տեղեկատվություն, որը վերաբերում է մաքսային ստուգման անցկացման կարգին.

2) ներկայացնելու իր տրամադրության տակ եղած բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները, որոնք հաստատում են մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի և (կամ) անդամ պետությունների օրենսդրության պահպանումը.

3) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու մաքսային մարմինների որոշումներն ու գործողությունները (անգործությունը).

4) պահանջելու արտագնա մաքսային ստուգում անցկացնող մաքսային մարմինների պաշտոնատար անձանցից ներկայացնել արտագնա մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշումը (կարգադրագիրը) և ծառայողական վկայականները.

5) ներկա գտնվելու արտագնա մաքսային ստուգում անցկացնելու ժամանակ և պարզաբանումներ տալու արտագնա մաքսային ստուգման առարկային առնչվող հարցերի վերաբերյալ.

6) օգտվելու անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

2. Մաքսային ստուգում անցկացնելիս ստուգման ենթարկվող անձը պարտավոր է՝

1) ներկայացնել այն ապրանքները, որոնց նկատմամբ իրականացվում է արտագնա մաքսային ստուգում, այդպիսի ապրանքները ներկայացնելու հնարավորության առկայության դեպքում.

2) մաքսային մարմնի պահանջով սահմանված ժամկետներում ներկայացնել փաստաթղթերը և տեղեկությունները թղթային կրիչով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ կրիչով.

3) ապահովել արտագնա մաքսային ստուգում անցկացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձանց և նման ստուգմանը մասնակցելու համար ներգրավվող պաշտոնատար անձանց անարգել մուտքը ստուգման ենթարկվող անձի օբյեկտներ և նրանց աշխատանքային տեղ տրամադրել.

4) այն դեպքում, երբ մաքսային ստուգման նպատակների համար անհրաժեշտ փաստաթղթերը կազմված են այն անդամ պետության պետական լեզվից տարբերվող մեկ այլ լեզվով, որի մաքսային մարմինն է անցկացնում մաքսային ստուգումը՝ մաքսային ստուգում անցկացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձանց ներկայացնել նշված փաստաթղթերի թարգմանությունը.

5) մաքսային ստուգում անցկացնելու մասին որոշումը (կարգադրագիրը) ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան 2 օրացուցային օրվա ընթացքում որոշել այն անձանց շրջանակը, որոնք պատասխանատու են մաքսային մարմնի՝ մաքսային ստուգում անցկացնող պաշտոնատար անձանց փաստաթղթեր և տեղեկություններ տրամադրելու համար.

6) ապահովել արտագնա մաքսային ստուգումներ անցկացնելիս գույքագրման կատարումը.

7) արտագնա մաքսային ստուգում անցկացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձանց կողմից մաքսային փորձաքննություն նշանակելու մասին որոշում ընդունելու դեպքում ապահովել ապրանքների փորձանմուշներ և (կամ) նմուշներ վերցնելու հնարավորությունը.

8) արտագնա մաքսային ստուգում անցկացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձանց պահանջով տալ գրավոր և բանավոր պարզաբանումներ ստուգման ենթարկվող անձի գործունեությանն առնչվող հարցերի շուրջ, ինչպես նաև ներկայացնել տեղեկանքներ և հաշվարկներ.

9) կատարել անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

Հոդված 337. Մաքսային ստուգման իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների տրամադրումը

1. Մաքսային մարմնի հարցմամբ անդամ պետությունների պետական մարմինները ներկայացնում են իրենց մոտ առկա փաստաթղթերը և տեղեկությունները, որոնք վերաբերում են կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի գրանցմանը, հարկերի վճարմանը և հաշվարկմանը, հաշվապահական հաշվառման և հաշվետվության փաստաթղթերը և տվյալները, ինչպես նաև մաքսային ստուգման անցկացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր և տեղեկություններ, այդ թվում՝ առևտրային, բանկային, հարկային և օրենքով պաշտպանվող այլ գաղտնիք կազմող փաստաթղթերն ու տեղեկությունները պահպանելով պետական, առևտրային, բանկային, հարկային և օրենքով պահպանվող այլ գաղտնիքի պաշտպանության մասին անդամ պետությունների օրենսդրության պահանջները:

2. Անդամ պետությունների բանկերը, ոչ բանկային վարկային (ֆինանսավարկային) կազմակերպությունները և բանկային գործառնությունների առանձին տեսակներ իրականացնող կազմակերպությունները մաքսային մարմնի պահանջով ներկայացնում են անդամ պետությունների կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի բանկային հաշիվների առկայության և համարների վերաբերյալ փաստաթղթեր և տեղեկություններ, ինչպես նաև մաքսային ստուգում անցկացնելու համար անհրաժեշտ՝ այդպիսի կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի հաշիվներում դրամական միջոցների շարժի վերաբերյալ փաստաթղթեր և տեղեկություններ, այդ թվում՝ բանկային գաղտնիք պարունակող՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

3. Մաքսային ստուգման ենթարկվող ապրանքներով գործարքների (գործողությունների) մասով՝ ստուգման ենթարկվող անձի հետ կապված անձինք պարտավոր են մաքսային մարմնի պահանջով ներկայացնել այդպիսի

ապրանքներով գործարքների (գործողությունների) հետ առնչություն ունեցող՝ ստուգման ենթարկվող անձի կամ երրորդ անձանց հետ անցկացվող գործողությունների և հաշվարկների մասով փաստաթղթերի պատճենները և այլ տեղեկատվություն, որը անհրաժեշտ է մաքսային ստուգումն անցկացնելու համար:

Գլուխ 46

Մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցները և դրանց կիրառումը

Հոդված 338. Մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցները

1. Մաքսային հսկողություն անցկացնելիս՝ կախված մաքսային հսկողության օբյեկտներից, մաքսային մարմիններն իրավունք ունեն սույն Օրենսգրքին համապատասխան կիրառելու մաքսային հսկողության անցկացումն ապահովող հետևյալ միջոցները՝

1) բանավոր հարցման անցկացում.

2) հարցման կատարում, մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների պահանջ և ստացում.

3) մաքսային փորձաքննության անցկացման նշանակում, ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների վերցնում.

4) ապրանքների, փաստաթղթերի, տրանսպորտային միջոցների, շինությունների և մյուս վայրերի նույնականացման իրականացում.

5) մաքսային հսկողության տեխնիկական միջոցների, մաքսային մարմինների մյուս տեխնիկական միջոցների, նավերի և օդանավերի օգտագործում.

6) մաքսային ուղեկցման կիրառում.

7) ապրանքների փոխադրման երթուղու սահմանում.

8) մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների, դրանց հետ կատարվող մաքսային գործառնությունների հաշվառման վարում.

9) մասնագետի ներգրավում.

10) անդամ պետությունների այլ պետական մարմինների մասնագետների և փորձագետների ներգրավում.

11) ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ բեռնային և այլ գործողությունների կատարման պահանջ.

12) մաքսային դիտարկման իրականացում.

13) ապրանքների հաշվառման համակարգի առկայության և ապրանքների հաշվառում վարելու ստուգում.

14) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող մաքսային հսկողության անցկացումն ապահովող այլ միջոցներ:

2. Մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցները կիրառվում են ինքնուրույնաբար կամ մաքսային հսկողության ձևերի կիրառումն ապահովելու համար:

3. Մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցները կիրառվում են սույն գլխին համապատասխան, իսկ մաքսային փորձաքննություն անցկացնելու նշանակումը՝ սույն Օրենսգրքի 53-րդ գլխին համապատասխան:

Հոդված 339. Բանավոր հարցումը

Մաքսային մարմինների պաշտոնատար անձինք մաքսային հսկողության անցկացման համար նշանակություն ունեցող տեղեկությունները ստանալու նպատակներով՝ առանց հարցման արդյունքները ձևակերպելու, իրավունք ունեն անցկացնելու ֆիզիկական անձանց, նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև կազմակերպությունների ներկայացուցիչներ հանդիսացող անձանց բանավոր հարցում:

Հոդված 340. Մաքսային հսկողություն անցկացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների, մաքսային մարմինների կողմից հարցումը, պահանջելը և ստանալը

1. Մաքսային հսկողություն անցկացնելիս՝ մաքսային մարմիններն ունեն հարցում անելու իրավունք, իսկ սույն Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ իրավունք ունեն պահանջելու հայտարարատուից, փոխադրողից, մաքսային գործի ոլորտում գործունեություն իրականացնող անձանցից և այլ անձանցից մաքսային հսկողություն անցկացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ ներկայացնել, ինչպես նաև սահմանելու դրանց ներկայացման ժամկետը, որը պետք է բավարար լինի հարցվող (պահանջվող) փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները

ներկայացնելու համար:

2. Հարցվող (պահանջվող) փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ցանկը որոշվում է մաքսային մարմնի կողմից՝ ելնելով ստուգվող փաստաթղթերից և (կամ) տեղեկություններից, հաշվի առնելով գործարքի պայմանները, ապրանքի բնութագրերը, դրա նշանակությունը, ինչպես նաև այլ հանգամանքներ:

3. Մաքսային մարմնի կողմից սահմանված փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները ներկայացնելու մասին հարցման (պահանջի) մեջ նման փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ ներկայացնելու ժամկետը կարող է երկարաձգվել այն անձի պատճառաբանված դիմումի հիման վրա, ում հարցում է (պահանջ է) ուղարկված, այդ թվում՝ կորցրած փաստաթղթերը վերականգնելու համար: Ժամկետը, որով երկարաձգվում է փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ներկայացումը, որոշվում է՝ ելնելով այն անձի դիմումից, որին ուղարկվել է հարցումը, սակայն այն չպետք է գերազանցի փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները ներկայացնելու՝ մաքսային մարմնի կողմից սահմանված ժամկետը լրանալու օրվանից 2 ամիսը:

4. Մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգման ձևով մաքսային հսկողություն անցկացնելու ժամանակ մաքսային մարմինը պահանջում է փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները սույն Օրենսգրքի 325-րդ հոդվածին համապատասխան, բացառությամբ՝ սույն Օրենսգրքի 326-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, երբ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները պահանջվում են սույն հոդվածին համապատասխան:

5. Մաքսային մարմինների կողմից պահանջված փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակների կամ դրանց պատճենների, այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթերի թղթային պատճենների տեսքով, եթե մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով ու ակտերով սահմանված չէ փաստաթղթերի բնօրինակների պարտադիր ներկայացումը:

Փաստաթղթերի ներկայացված պատճենները պետք է վավերացված լինեն դրանք ներկայացրած անձի կողմից:

Մաքսային մարմիններն իրավունք ունեն ստուգելու ներկայացված փաստաթղթերի պատճենների համապատասխանությունը դրանց բնօրինակներին:

Այն դեպքում, երբ ներկայացված փաստաթղթերը կազմված են այն անդամ պետության պետական լեզվից տարբեր՝ մեկ այլ լեզվով, որի մաքսային մարմինն է հարցում արել փաստաթղթերը, դրանք ներկայացրած անձինք պարտավոր են մաքսային մարմնի պաշտոնատար անձի պահանջով ապահովելու նշված փաստաթղթերի թարգմանությունը:

6. Հայտարարատուն, փոխադրողը, մաքսային գործի ոլորտում գործունեություն իրականացնող անձինք և այլ անձինք պարտավոր են մաքսային մարմիններ ներկայացնել մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները՝ բանավոր, գրավոր և (կամ) էլեկտրոնային տարբերակներով:

7. Մաքսային մարմիններն իրավունք ունեն անդամ պետությունների պետական մարմիններից, ինչպես նաև անդամ պետությունների այլ կազմակերպություններից պահանջելու և ստանալու մաքսային հսկողություն անցկացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

8. Մաքսային հսկողության անցկացման համար մաքսային մարմինները, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, իրավունք ունեն ստանալու բանկերից և ոչ բանկային վարկային (ֆինանսավարկային) կազմակերպություններից և բանկային գործառնությունների առանձին տեսակներ իրականացնող կազմակերպություններից փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ իրականացվող գործարքների դրամական գործառնությունների վերաբերյալ:

Հոդված 341. Ապրանքների, փաստաթղթերի, տրանսպորտային միջոցների, ինչպես նաև շինությունների և այլ վայրերի նույնականացումը

1. Մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքները և դրանց փաստաթղթերը, տրանսպորտային միջոցների բեռնասրահները (հատվածամասերը), շինությունները, տարողությունները և այլ վայրեր, որտեղ գտնվում են կամ կարող են գտնվել մաքսային հսկողության ենթակա ապրանքները, կարող են մաքսային մարմինների կողմից նույնականացվել նույնականացման միջոցների կիրառմամբ, ինչպես նաև ապրանքների փորձանմուշներ և (կամ) նմուշներ վերցնելու, ապրանքների մանրամասն նկարագրության, գծագրեր կազմելու, մասշտաբային պատկերների, լուսանկարների, իլյուստրացիաների պատրաստման, ապրանքներն ուղեկցող և այլ փաստաթղթերի օգտագործման, ինչպես նաև այլ միջոցներով:

2. Նույնականացման միջոցների շարքին են դասվում կապարակնիքները, կնիքները, թվային, տառային և այլ տեսակի դրոշմավորումը, նույնականացման նշանները, դրոշմակնիքները, սեյֆ-փաթեթները և ապրանքների նույնականացումն ապահովող այլ միջոցները:

Մաքսային մարմինների կողմից օգտագործվող նույնականացման միջոցների կիրառման կարգը և դրանց նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

3. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել մաքսային մարմինների կողմից օգտագործվող նույնականացման միջոցների կիրառման կարգը, այդ թվում՝ սույն Օրենսգրքի 167-րդ, 180-րդ, 192-րդ, 206-րդ և 214-րդ հոդվածներով նախատեսված նույնականացման միջոցների կիրառման կարգը:

4. Որպես նույնականացման միջոցներ մաքսային մարմինների կողմից կարող են ճանաչվել այն կապարակնիքները,

կնիքները կամ նույնականացման մյուս միջոցները, որոնք կիրառվում են Միության անդամ չհանդիսացող պետությունների մաքսային մարմինների, ինչպես նաև ապրանքներն ուղարկողների կամ փոխադրողների կողմից:

5. Նույնականացման միջոցները կարող են փոփոխվել, հեռացվել, ոչնչացվել կամ փոխարինվել միայն մաքսային մարմինների կողմից կամ նրանց թույլտվությամբ, բացառությամբ դեպքերի, երբ ապրանքների ոչնչացման, անվերադարձ կորստի կամ շոշափելի փչացման իրական վտանգ գոյություն ունի: Նշված դեպքերում մաքսային մարմինն անհապաղ տեղեկացվում է նույնականացման միջոցների փոփոխման, հեռացման, ոչնչացման կամ փոխարինման մասին և ներկայացվում են նշված վտանգի գոյության ապացույցները:

Մաքսային մարմնի կողմից նույնականացման միջոցների փոփոխումը, հեռացումը, ոչնչացումը կամ փոխարինումը ձևակերպվում է նույնականացման միջոցների փոփոխման, հեռացման, ոչնչացման կամ փոխարինման վերաբերյալ ակտ կազմելու միջոցով, որի ձևը սահմանվում է Հանձնաժողովի կողմից, կամ մաքսային մարմնին ներկայացված տրանսպորտային (փոխադրման), առևտրային կամ մաքսային փաստաթղթերի վրա նույնականացման միջոցների փոփոխման, հեռացման, ոչնչացման կամ փոխարինման վերաբերյալ նշումներ կատարելու միջոցով:

Հոդված 342. Մաքսային հսկողության տեխնիկական միջոցների, մաքսային մարմինների այլ տեխնիկական միջոցների, նավերի և օդանավերի օգտագործումը

1. Մաքսային մարմինները՝ մաքսային հսկողության անցկացման ժամանակ կարող են մաքսային հսկողության տեխնիկական միջոցներ (սարքավորումներ, սարքեր, չափման միջոցներ, սարքվածքներ և գործիքներ) և այլ տեխնիկական միջոցներ օգտագործել:

Մաքսային հսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելու ցանկը և կարգը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

2. Մաքսային հսկողության տեխնիկական միջոցները պետք է անվտանգ լինեն մարդու կյանքի և առողջության, կենդանիների և բույսերի համար, և չպետք է վնաս հասցնեն անձանց, ապրանքներին և տրանսպորտային միջոցներին:

3. Հանձնաժողովն իրավունք ունի ընդունելու մաքսային մարմինների կողմից օգտագործվող՝ մաքսային հսկողության առանձին տեխնիկական միջոցներին ներկայացվող տիպային տեխնիկական պահանջների մասով առաջարկություններ:

4. Մաքսային հսկողության տեխնիկական միջոցները կարող են մաքսային մարմինների կողմից օգտագործվել մաքսային մարմինների կողմից իրականացվող պետական հսկողության (վերահսկողության) այլ տեսակներ անցկացնելիս՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

5. Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ մաքսային հսկողությունը կարող է անցկացվել մաքսային մարմինների նավերի և օդանավերի օգտագործմամբ:

Մաքսային հսկողություն անցկացնելու նպատակներով՝ մաքսային մարմինների նավերի և օդանավերի օգտագործման կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 343. Մաքսային ուղեկցումը

1. Մաքսային մարմինները մաքսային ուղեկցումը կիրառում են Միության մաքսային տարածքով՝ մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների փոխադրումներն ապահովելու նպատակներով:

2. Մաքսային ուղեկցումը ենթադրում է մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքները փոխադրող տրանսպորտային միջոցների կամ մաքսային հսկողության տակ գտնվող տրանսպորտային միջոցների ուղեկցումը:

3. Մաքսային ուղեկցումն իրականացվում է մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կամ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված կազմակերպությունների կողմից:

4. Մաքսային մարմիններն իրավունք ունեն կիրառելու մաքսային ուղեկցումը՝

1) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքները փոխադրելիս, հետևյալ դեպքերում՝

սույն Օրենսգրքի 146-րդ հոդվածին համապատասխան ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը չներկայացնելը կամ սույն Օրենսգրքի 146-րդ հոդվածին համապատասխան սահմանված չափից ավելի փոքր չափով այդպիսի պարտավորության կատարման ապահովումը ներկայացնելը.

«մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքները փոխադրելիս փոխադրողի կողմից պարտականությունների բազմակի չկատարումը, ինչը հաստատվել է ուժի մեջ մտած՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումներով, եթե նշված որոշումներից թեկուզ մեկը չի կատարվել.

սահմանված ժամկետում փոխադրողի կողմից ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարելու պարտավորությունների չկատարումը՝ սույն Օրենսգրքի 153-րդ հոդվածին համապատասխան. Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերի և ակտերի և (կամ) անդամ պետությունների օրենսդրության չկատարման հատկանիշները հայտնաբերելիս՝ այլ դեպքեր.

2) մաքսային հսկողության տակ գտնվող օտարերկրյա ապրանքների փոխադրման դեպքում, երբ սույն Օրենսգրքին

համապատասխան նման ապրանքները Միության մաքսային տարածքով կարող են փոխադրվել առանց «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման:

5. Սույն հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի հինգերորդ պարբերության դրույթները չեն կիրառվում, եթե որպես «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների հայտարարատու է հանդես գալիս լիազորված տնտեսական օպերատորը, որն ունի առաջին կամ երրորդ տեսակի վկայական:

6. Մաքսային մարմնի կողմից մաքսային ուղեկցում կիրառելու մասին որոշում կայացնելու դեպքում մաքսային մարմինը տեղեկացնում է նման որոշում ընդունելու մասին փոխադրողին և կազմակերպում է մաքսային ուղեկցում այդպիսի որոշում ընդունելու պահից ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում:

7. Միայն մեկ անդամ պետության տարածքով տրանսպորտային միջոցների մաքսային ուղեկցման դեպքում մաքսային ուղեկցում կազմակերպելու կարգը սահմանվում է այդ անդամ պետության օրենսդրությամբ:

8. Երկու և ավելի անդամ պետությունների տարածքով տրանսպորտային միջոցների մաքսային ուղեկցման դեպքում մաքսային ուղեկցում կազմակերպելու կարգը սահմանվում է Միության շրջանակներում միջազգային պայմանագրով:

9. Սույն հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի երրորդ պարբերության կիրառման նպատակներով փոխադրողի կողմից ապրանքները «մաքսային տարանցում» ընթացակարգին համապատասխան փոխադրելիս իր պարտավորությունները չկատարելու համար վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած որոշումների և դրանց կատարման մասին տեղեկատվության փոխանակումն իրականացվում է Միության շրջանակներում միջազգային պայմանագրին համապատասխան:

Հոդված 344. Ապրանքների փոխադրման երթուղին

1. Ապրանքների փոխադրման երթուղին սահմանվում է մաքսային մարմինների կողմից Միության մաքսային տարածքով մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների փոխադրման հսկողությունն ապահովելու նպատակներով:

2. Ապրանքների փոխադրման երթուղին սահմանվում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ կամ մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների նկատմամբ, երբ սույն Օրենսգրքին համապատասխան, այդպիսի ապրանքները կարող են Միության մաքսային տարածքով փոխադրվել առանց «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպվելու:

3. Ապրանքների փոխադրման երթուղին սահմանվում է ապրանքներն ավտոմոբիլային և ջրային տրանսպորտի միջոցով փոխադրելիս, բացառությամբ՝ օտարերկրյա ապրանքները նավերով, այդ թվում՝ խառը (գետ-ծով) նավարկության նավերով փոխադրելիս, անդամ պետության և (կամ) անդամ պետությունների ծովային նավահանգիստների միջև առանց անդամ պետության և (կամ) անդամ պետությունների ներքին ջրային ուղիներ մտնելու:

4. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ սահմանված ապրանքների փոխադրման երթուղին սահմանվում է ուղարկող մաքսային մարմնի կողմից՝ ելնելով տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում նշված տեղեկություններից:

5. Փոխադրողի կողմից «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ սահմանված ապրանքների փոխադրման երթուղու փոփոխությունը թույլատրվում է ուղարկող մաքսային մարմնի կամ դրա ընթացուղում գտնվող ցանկացած մաքսային մարմնի թույլտվությամբ, ինչի մասին փոխադրողը տեղեկացվում է գրավոր կամ էլեկտրոնային եղանակով:

6. Միայն մեկ անդամ պետության տարածքով փոխադրվող ապրանքների նկատմամբ ապրանքների փոխադրման երթուղի սահմանելու դեպքում, մաքսային մարմինների կողմից կարող են օգտագործվել մաքսային հսկողության այն տեղեկատվական համակարգերը և տեխնիկական միջոցները, որոնք տրանսպորտային միջոցների տեղափոխման և ապրանքների փոխադրման սահմանված երթուղու նկատմամբ հեռակառավարվող հսկողություն են ապահովում:

7. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ սահմանված ապրանքների փոխադրման երթուղին սահմանելու, փոփոխելու և պահպանելու հետ կապված մաքսային գործառնությունների կատարման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից, իսկ մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների նկատմամբ, երբ սույն Օրենսգրքին համապատասխան նման ապրանքները կարող են Միության մաքսային տարածքով փոխադրվել առանց «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպման՝ անդամ պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 345. Մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների և դրանց հետ կատարվող մաքսային գործառնությունների հաշվառումը

1. Մաքսային մարմինները վարում են մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների և դրանց հետ կատարվող մաքսային գործառնությունների հաշվառումը:

2. Մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների և դրանց հետ կատարվող մաքսային գործառնությունների հաշվառում վարելու կարգը և ձևերը սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ

օրենսդրությամբ:

3. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ մաքսային մարմինները վարեն հայտարարատուների հաշվառում, ինչպես նաև նման հաշվառում վարելու կարգը և դեպքերը:

Հոդված 346. Մաքսային հսկողություն իրականացնելիս մասնագետի մասնակցությունը

1. Մաքսային հսկողություն անցկացնելիս մաքսային մարմինները, անհրաժեշտության դեպքում, կարող են առանձին գործողություններ կատարելու համար այդպիսի գործողությունների արդյունքներում չշահագրգռված մաքսային մարմիններին աջակցելու համար անհրաժեշտ հատուկ գիտելիքների և հմտությունների տիրապետող մասնագետի ներգրավել, այդ թվում՝ մաքսային հսկողության տեխնիկական միջոցներ կիրառելիս:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ այդպիսի մասնագետները ներգրավվեն մաքսային մարմնի որոշմամբ, որը ձևակերպվում է այդ օրենսդրությանը համապատասխան:

2. Մաքսային հսկողություն անցկացնելիս, անձի՝ որպես մասնագետ ներգրավումն, իրականացվում է պայմանագրային հիմունքով:

3. Մասնագետն իրավունք ունի՝

1) ծանոթանալու իր մասնակցությամբ գործողությունների իրականացման հետ կապված նյութերին.

2) ծանոթանալու այն գործողությունների կատարման արդյունքներով ձևակերպվող փաստաթղթերին, որոնցում նա մասնակցություն է ունեցել, և այդպիսի փաստաթղթերում գրառման ենթակա հայտարարություններ կամ դիտողություններ անելու իր կողմից իրականացվող գործողությունների վերաբերյալ:

4. Մասնագետը պարտավոր է՝

1) մասնակցել հատուկ գիտելիքներ և հմտություններ պահանջող գործողությունների իրականացմանը կամ կատարել այդպիսի գործողություններ, պարզաբանումներ տալ իր կողմից իրականացվող գործողությունների վերաբերյալ.

2) իր ստորագրությամբ հավաստել սույն կետի 1-ին ենթակետում նշված գործողություններն իրականացնելու փաստը, դրանց բովանդակությունը և արդյունքները:

5. Մասնագետը չպետք է հրապարակի, այլ նպատակներով օգտագործի, երրորդ անձանց փոխանցի իր ստացած առևտրային, բանկային, հարկային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք կազմող տեղեկատվությունը, ինչպես նաև այլ գաղտնի տեղեկատվություն, բացառությամբ՝ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

6. Մասնագետի ներգրավման հետ կապված՝ մաքսային մարմինների մոտ առաջացած ծախսերը փոխհատուցվում են այն անձի միջոցներից, որի գործունեության և (կամ) ապրանքների նկատմամբ անցկացվում է մաքսային հսկողությունը, եթե մաքսային հսկողության իրականացման ընթացքում հայտնաբերվել են մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության խախտումներ: Մյուս դեպքերում այդպիսի ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է այն անդամ պետության բյուջեի միջոցների հաշվին, որի մաքսային մարմնի կողմից անցկացվել է մաքսային հսկողությունը:

Հոդված 347. Մաքսային հսկողության անցկացման հարցում օժանդակություն ցուցաբերելու համար անդամ պետությունների այլ պետական մարմիններից մասնագետների և փորձագետների ներգրավումը

1. Մաքսային հսկողության անցկացման հարցում օժանդակություն ցուցաբերելու համար մաքսային մարմիններն իրավունք ունեն մասնագետներ և փորձագետներ ներգրավելու անդամ պետությունների այլ պետական մարմիններից:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ այդպիսի մասնագետները կամ փորձագետները ներգրավվեն մաքսային մարմնի որոշմամբ, որը ձևակերպվում է այդպիսի օրենսդրությանը համապատասխան:

2. Անդամ պետությունների այլ պետական մարմիններից ներգրավվող մասնագետները և փորձագետները չպետք է հրապարակեն պետական, առևտրային, հարկային, բանկային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք (գաղտնիքներ) կազմող տեղեկությունները, ինչպես նաև մաքսային գործի ոլորտում արտաքին տնտեսական և այլ գործունեության մասնակիցներին վերաբերող գաղտնի տեղեկատվությունը:

3. Անդամ պետությունների այլ պետական մարմիններից մասնագետների և փորձագետների ներգրավման հետ կապված ծախսերը, եթե մաքսային մարմինների հանձնարարությամբ նրանց կատարած աշխատանքը չի մտնում նրանց ծառայողական պարտականությունների շրջանակների մեջ, փոխհատուցվում են սույն Օրենսգրքի 346-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված կարգով:

Հոդված 348. Ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ՝ մաքսային հսկողության անցկացման համար անհրաժեշտ բեռնային և այլ գործողությունները

1. Մաքսային մարմնի պահանջով, մաքսային հսկողություն անցկացնելիս, հայտարարատուն, ժամանակավոր պահպանման պահեստի կամ մաքսային պահեստի տիրապետողը, մաքսային ներկայացուցիչը և (կամ) ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձ պարտավոր են կատարել ապրանքների փոխադրում (տրանսպորտային փոխադրում), կշռում կամ այլ կերպով ապահովել ապրանքների քանակի որոշումը, իրականացնել մաքսային հսկողության ենթակա ապրանքների բեռնում, բեռնաթափում, փոխաբեռնում, վնասված փաթեթվածքի վերացում, փաթեթվածքի բացում, փաթեթավորում կամ վերափաթեթավորում, ինչպես նաև շինությունների, տարողությունների և այլ վայրերի բացում, որտեղ գտնվում են (կարող են գտնվել) այդպիսի ապրանքները:

2. Փոխադրողը պարտավոր է նպաստել բեռնային և այլ գործողությունների իրականացմանն իր կողմից փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) ապրանքների և այն տրանսպորտային միջոցների նկատմամբ, որոնցով իրականացվում է այդպիսի ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը):

3. Ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ բեռնային և մյուս գործողությունները չպետք է մաքսային մարմնի համար որևէ ծախս առաջացնեն:

Հոդված 349. Մաքսային դիտարկումը

Մաքսային մարմինների պաշտոնատար անձինք իրավունք ունեն իրականացնելու ապրանքների, այդ թվում՝ մաքսային հսկողության օբյեկտ հանդիսացող տրանսպորտային միջոցների և դրանց նկատմամբ բեռնային ու մյուս գործողությունների իրականացման, ինչպես նաև Միության մաքսային տարածքով ընթացող և մաքսային հսկողության գոտում կամ միջազգային օդանավակայանի տարանցիկ գոտում գտնվող ֆիզիկական անձանց նկատմամբ ուղղակի կամ անուղղակի դիտարկում, այդ թվում՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ:

Հոդված 350. Ապրանքների հաշվառման համակարգի առկայության և ապրանքների հաշվառումը վարելու ստուգում

1. Սույն Օրենսգրքով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումն ապահովելու նպատակներով, մաքսային մարմիններն անց են կացնում հետևյալի ստուգում՝

1) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում, մաքսային գործի ոլորտում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներում ընդգրկվելու համար հավակնող անձանց մոտ և այդպիսի ռեեստրներում ընդգրկված անձանց մոտ սահմանված պահանջներին համապատասխանող՝ ապրանքների հաշվառման համակարգի առկայություն.

2) մաքսային գործի ոլորտում գործունեություն իրականացնող անձանց, լիազորված տնտեսական օպերատորների և ապրանքների հաշվառման վարում նախատեսող՝ մաքսային ընթացակարգերով ձևակերպված ապրանքները տիրապետող և (կամ) օգտագործող անձանց կողմից ապրանքների հաշվառման վարում:

2. Սահմանված պահանջներին համապատասխանող՝ ապրանքների հաշվառման և ապրանքների հաշվառում վարելու համակարգի առկայության ստուգումն իրականացնելու կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

ԲԱԺԻՆ VII

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Գլուխ 47

Ընդհանուր դրույթներ մաքսային մարմինների վերաբերյալ

Հոդված 351. Մաքսային մարմինները, նրանց խնդիրներն ու գործառույթները

1. Մաքսային մարմիններն իրենց իրավասության սահմաններում Միության մաքսային տարածքում ապահովում են հետևյալ խնդիրների իրականացումը՝

1) անդամ պետությունների ազգային անվտանգության, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի, շրջակա միջավայրի պաշտպանություն.

2) Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման արագացման և պարզեցման համար պայմանների ստեղծում.

3) մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի, Միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի և ակտերի, անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության, ինչպես նաև անդամ պետությունների այն օրենսդրության կատարման ապահովում, որի կատարման

նկատմամբ հսկողությունը վերապահված է մաքսային մարմիններին:

2. Մաքսային մարմիններին վերապահված խնդիրների իրականացումն ապահովելու նպատակով մաքսային մարմիններն իրենց իրավասության սահմաններում կատարում են հետևյալ գործառույթները՝

1) մաքսային գործառնությունների կատարում և մաքսային հսկողության իրականացում, այդ թվում՝ վարչական փոխօգնության տրամադրման շրջանակներում.

2) մաքսային վճարների, ինչպես նաև հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գանձում, դրանց հաշվարկման ճշտության և ժամանակին վճարման նկատմամբ հսկողություն, վերադարձ (հաշվանցում) և դրանց հարկադիր բռնագանձման համար միջոցների ձեռնարկում.

3) Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ մաքսասակագնային կարգավորման միջոցների, արգելքների ու սահմանափակումների, ներքին շուկայի պաշտպանության միջոցների կիրառման ապահովում.

4) Միության մաքսային սահմանով կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման նկատմամբ մաքսային հսկողության իրականացման ժամանակ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդում.

5) հանցագործությունների և վարչական իրավախախտումների կանխարգելում, բացահայտում և կանխում.

6) Միության մաքսային տարածքում մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանություն.

7) մաքսային վիճակագրության վարում.

8) արտահանման, ճառագայթային և այլ տեսակների պետական հսկողության (վերահսկողության) իրականացում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

3. Մաքսային մարմիններին կարող են վերապահվել անդամ պետությունների օրենսդրությամբ և (կամ) Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով սահմանվող այլ խնդիրներ և գործառույթներ:

4. Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ մաքսային մարմինների առանձին գործառույթներ՝ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու և սույն Օրենսգրքի 322-րդ հոդվածի երկրորդից չորրորդ պարբերություններում նշված ձևերով մաքսային հսկողություն իրականացնելու և սույն Օրենսգրքի 339-րդ հոդվածով նախատեսված՝ մաքսային հսկողության իրականացումն ապահովող միջոց կիրառելու հետ, Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման այն վայրերում, որտեղ իրականացվում է միայն անձնական օգտագործման ապրանքների՝ Միության մաքսային տարածք ժամանում և (կամ) Միության մաքսային տարածքից մեկնում և չկան մաքսային մարմիններ, կարող են վերապահվել անդամ պետությունների այլ պետական մարմիններին, որոնք հսկողության գործառույթներ են իրականացնում այդպիսի վայրերում:

5. Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ մաքսային հսկողության իրականացումը սույն Օրենսգրքի 310-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան կարող է վերապահվել անդամ պետությունների այլ պետական մարմիններին:

6. Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ մաքսային մարմինների առանձին գործառույթներ՝ կապված մաքսային վճարների, ինչպես նաև հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գանձման, դրանց հաշվարկման ճշտության և ժամանակին վճարման նկատմամբ հսկողության, վերադարձի (հաշվանցման) և դրանց հարկադիր բռնագանձման համար միջոցների ձեռնարկման հետ, կարող են վերապահվել անդամ պետությունների այլ պետական մարմիններին:

7. Մաքսային մարմինների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն Օրենսգրքով և անդամ պետությունների օրենսդրությամբ:

8. Մաքսային մարմինների համակարգը և մաքսային մարմիններում ծառայության կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 352. Մաքսային մարմինների և դրանց պաշտոնատար անձանց պատասխանատվությունը

1. Մաքսային մարմինները, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, պատասխանատվություն են կրում ոչ իրավաչափ որոշումներով, գործողություններով (անգործությամբ) հասցված վնասի համար:

2. Մաքսային մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ որոշումներով, գործողություններով (անգործությամբ) անձանց պատճառված վնասները ենթակա են փոխհատուցման՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

3. Մաքսային մարմինների պաշտոնատար անձանց իրավաչափ որոշումներով, գործողություններով անձանց պատճառված վնասները փոխհատուցման ենթակա չեն՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

4. Ոչ իրավաչափ որոշումների, գործողությունների (անգործության) համար մաքսային մարմինների պաշտոնատար անձինք կարգապահական, վարչական, քրեական և այլ պատասխանատվություն են կրում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 353. Մաքսային ենթակառուցվածքը

1. Մաքսային ենթակառուցվածքին են դասվում մաքսային հսկողության տեխնիկական միջոցներով, ինժեներական, տեղեկատվական, հեռահաղորդակցման համակարգերով և դրանց ապահովման միջոցներով սարքավորված շենքերը, կառույցները, շինությունները, բաց հրապարակները (այսուհետ սույն հոդվածում՝ մաքսային ենթակառուցվածքի տարրեր) և մաքսային մարմինների գործունեությունն ապահովող սոցիալական նշանակության օբյեկտները:

2. Մաքսային ենթակառուցվածքի տարրերը կարող են տեղակայվել հետևյալ վայրերում՝

1) Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում.

2) անդամ պետությունների մաքսային մարմինների և մաքսային մարմինների համակարգի մեջ մտնող հաստատությունների տեղաբաշխման վայրերում.

3) այլ վայրերում, որոնց տարածքում կարող են իրականացվել մաքսային գործառնություններ և կարող է անցկացվել մաքսային հսկողություն:

3. Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում տեղակայված մաքսային ենթակառուցվածքի տարրերի՝ հարմարություններով ապահովվածությանը և տեխնիկական հագեցվածությանը ներկայացվող տիպային պահանջները սահմանվում են Հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով մաքսային մարմինների գործունեության ապահովման հետ կապված դրանց ֆունկցիոնալ նշանակության առանձնահատկությունները:

4. Անդամ պետությունների մաքսային մարմինների և մաքսային մարմինների համակարգի մեջ մտնող հաստատությունների տեղաբաշխման վայրերում և այլ վայրերում, որոնց տարածքում կարող են մաքսային գործառնություններ իրականացվել և կարող է մաքսային հսկողություն անցկացվել, տեղակայված մաքսային ենթակառուցվածքի տարրերի՝ հարմարություններով ապահովվածությանը և տեխնիկական հագեցվածությանը ներկայացվող պահանջները սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

5. Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերում մաքսային ենթակառուցվածքի վիճակի, զարգացման դինամիկայի և միտումների վերլուծությունն անցկացվում է Հանձնաժողովի կողմից՝ Միության մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման մասին մաքսային մարմինների կողմից ներկայացվող՝ որոշակի ժամանակահատվածի համար ներկայացվող ընդհանրացված տեղեկությունների հիման վրա, որոնք չեն պարունակում անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան պետական գաղտնիքի (պետական գաղտնիքների) կամ սահմանափակ տարածման տեղեկությունների շարքին դասվող տեղեկություններ:

Նշված տեղեկությունների կազմը, դրանց կառուցվածքը և ձևաչափը, ինչպես նաև դրանց ներկայացման պարբերականությունը և կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Մաքսային ենթակառուցվածքի վիճակի, զարգացման դինամիկայի և միտումների մասին տեղեկությունները տեղադրվում են Ինտերնետ ցանցում՝ Միության պաշտոնական կայքում:

Հոդված 354. Մաքսային մարմինների իրավապահ գործունեությունը

1. Մաքսային մարմինները համարվում են հետաքննության և (կամ) քննության մարմիններ՝ հանցագործությունների կամ քրեական իրավախախտումների գործերով, որոնց վարույթի իրականացումը վերապահված է մաքսային մարմիններին՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

2. Մաքսային մարմիններն իրականացնում են օպերատիվ-հետախուզական գործունեություն՝ անդամ պետությունների օրենսդրությամբ որպես հանցագործություն որակվող անօրինական արարք նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերման, երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան միջազգային կազմակերպությունների, Միության անդամ չհանդիսացող պետությունների մաքսային և այլ իրավասու մարմինների հարցումների կատարման նպատակով:

Մաքսային մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

3. Վարչական իրավախախտումների գործերով մաքսային մարմինները վարչական ընթացակարգ են իրականացնում (վարույթ են իրականացնում) և անձանց վարչական պատասխանատվության ենթարկում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

4. Հանցագործությունների և վարչական իրավախախտումների տեսակները (հանցակազմերը), ինչպես նաև անձանց քրեական և (կամ) վարչական պատասխանատվության ենթարկելու կարգն ու սկզբունքները սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ՝ հաշվի առնելով Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով նախատեսված առանձնահատկությունները:

5. Քրեական գործերով և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով մաքսային մարմինների իրավական օգնությունը և փոխգործակցությունն իրականացվում են Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին և (կամ) երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան:

Հոդված 355. Տրանսպորտային միջոցները կանգնեցնելու և Միության մաքսային տարածքից դուրս եկած նավերը և օդանավերը արգելանքի վերցնելու (վերադարձնելու)՝ մաքսային մարմինների իրավունքները

1. Մաքսային մարմիններն իրավունք ունեն կանգնեցնելու տրանսպորտային միջոցները, ինչպես նաև հարկադիր կերպով վերադարձնելու առանց մաքսային մարմնի թույլտվության Միության մաքսային տարածքից դուրս եկած նավերը և օդանավերը:

Մաքսային հսկողության գոտիներից դուրս ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների կանգնեցման դեպքում մաքսային հսկողության անցկացման ժամանակն այդ կանգնեցման պահից չպետք է գերազանցի 2 ժամը:

2. Միության մաքսային տարածքից դուրս գտնվող նավերը և օդանավերը արգելանքի վերցնելու (վերադարձնելու)՝ մաքսային մարմինների գործողություններն իրականացվում են երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան:

Հոդված 356. Մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկատվությանն առնչվելը

1. Ցանկացած տեղեկատվություն, որը մաքսային մարմինների կողմից ստացվել է սույն Օրենսգրքին, մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերին և ակտերին, երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, մաքսային մարմինների կողմից օգտագործվում է բացառապես իրենց վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման համար:

2. Մաքսային մարմինները, դրանց պաշտոնատար անձինք, ինչպես նաև սույն Օրենսգրքին, մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերին և ակտերին, երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկատվությանը ծանոթանալու իրավունք ստացած անձինք իրավունք չունեն հրապարակելու, անձնական նպատակներով օգտագործելու կամ այլ անձանց, այդ թվում՝ անդամ պետությունների պետական մարմիններին փոխանցելու պետական, առևտրային, հարկային, բանկային և անդամ պետությունների օրենսդրությամբ պահպանվող այլ գաղտնիք (գաղտնիքներ) պարունակող տեղեկատվությունը, ինչպես նաև այլ գաղտնի տեղեկատվություն՝ բացառությամբ սույն Օրենսգրքով, երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

3. Մեկ անդամ պետության մաքսային մարմիններն իրենց կողմից ստացված տեղեկատվությունը, այդ թվում՝ նախնական տեղեկատվությունը, փոխանցում են իրենց պետության պետական մարմիններին, եթե այդ տեղեկատվությունը նշված մարմիններին անհրաժեշտ է այդ անդամ պետության օրենսդրությամբ իրենց վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման համար՝ պետական, առևտրային, հարկային, բանկային և այդ անդամ պետության օրենսդրությամբ պահպանվող գաղտնիքի (գաղտնիքների) կամ այլ գաղտնի տեղեկատվության պաշտպանության վերաբերյալ այդ անդամ պետության օրենսդրության կարգով և պահանջների պահպանմամբ, իսկ սույն Օրենսգրքի 49-րդ գլխին համապատասխան ստացված տեղեկատվության նկատմամբ՝ նաև սույն Օրենսգրքի 375-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ:

Հոդված 357. Մաքսային մարմինների կողմից ընդունված որոշումների և մաքսային հսկողության անցկացման արդյունքների փոխադարձ ճանաչումը

Մաքսային գործառնությունների իրականացման ժամանակ ընդունված՝ մաքսային մարմինների որոշումները և սահմանված կարգով ձևակերպված՝ մաքսային հսկողության անցկացման արդյունքները փոխադարձաբար ճանաչվում են անդամ պետություններում և Միության մաքսային տարածքում հավասար իրավաբանական ուժն ունեն՝ բացառությամբ սույն Օրենսգրքով սահմանված դեպքերի:

Հոդված 358. Մաքսային մարմինների և դրանց պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկումը

Ցանկացած անձ իրավունք ունի բողոքարկելու մաքսային մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց որոշումները, գործողությունները (անգործությունը) այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, որի մաքսային մարմնի կամ որի մաքսային մարմնի պաշտոնատար անձանց որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են:

Հոդված 359. Մաքսային մարմինների կողմից խորհրդատվության տրամադրումը և նախնական որոշումների ընդունումը

1. Մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի և մաքսային մարմինների իրավասությանը վերապահված այլ հարցերի վերաբերյալ մաքսային մարմինների կողմից խորհրդատվության տրամադրումն իրականացվում է անհատույց հիմունքներով:

2. Խորհրդատվություն տրամադրելիս մաքսային մարմինների պաշտոնատար անձինք մաքսային մարմնի անունից չեն իրականացնում այն մաքսային հայտարարագրերի և այլ փաստաթղթերի ստուգում, որոնք սույն Օրենսգրքին և մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան ենթակա են ներկայացման մաքսային մարմիններ, ինչպես նաև չեն կազմում այդպիսի մաքսային հայտարարագրեր և փաստաթղթեր:

Նշված փաստաթղթերի լրացման հարցերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրումն իրականացվում է առանց անձի կողմից ներկայացված այդ փաստաթղթերի և տեղեկատվության ստուգման:

3. Խորհրդատվության տրամադրման ժամանակ անձանց տրամադրված տեղեկատվությունը ապրանքների նկատմամբ մաքսային գործառնությունների իրականացման ժամանակ հիմք չի հանդիսանում մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից որոշման ընդունման կամ գործողությունների կատարման (անգործության) համար:

4. Մաքսային մարմինների կողմից խորհրդատվության տրամադրման կարգը և ժամկետները սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

5. Մաքսային մարմիններն ապրանքների դասակարգման, ապրանքների ծագման, սույն Օրենսգրքին համապատասխան ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդների կիրառման, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից որոշվող այլ հարցերով նախնական որոշումներ ընդունում են անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե Հանձնաժողովի կողմից այդպիսի կարգ սահմանված չէ:

Հոդված 360. Մաքսային վիճակագրության վարումը, մաքսային վիճակագրության տվյալների օգտագործումը և տրամադրումը

1. Մաքսային մարմինները վարում են մաքսային վիճակագրություն, որն իր մեջ ներառում է Միության անդամ չհանդիսացող պետությունների հետ անդամ պետությունների՝ ապրանքների արտաքին առևտրի մաքսային վիճակագրությունը (այսուհետ սույն հոդվածում՝ ապրանքների արտաքին առևտրի մաքսային վիճակագրություն), և հատուկ մաքսային վիճակագրություն:

Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ ապրանքների արտաքին առևտրի մաքսային վիճակագրության վարումը կարող է վերապահվել այդ պետության այլ պետական մարմիններին:

2. Մաքսային վիճակագրության վարման համար օգտագործվում են մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսները:

3. Ապրանքների արտաքին առևտրի մաքսային վիճակագրության տվյալները ձևավորվում են Միության անդամ չհանդիսացող պետությունների հետ անդամ պետությունների՝ ապրանքների արտաքին առևտրի վիճակի, զարգացման դինամիկայի և միտումների վերլուծության նպատակներով:

Ապրանքների արտաքին առևտրի մաքսային վիճակագրության վարումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից հաստատվող մեթոդաբանությանը համապատասխան:

Ապրանքների արտաքին առևտրի մաքսային վիճակագրության վարման կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

4. Ապրանքների արտաքին առևտրի մաքսային վիճակագրության տվյալները, այդ թվում՝ ներքին շուկայի պաշտպանության միջոցների կիրառման կամ վերանայման մասին դիմումի ներկայացման համար, մաքսային մարմինների կողմից անձանց և միջազգային կազմակերպություններին տրամադրվում են Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով, երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Հատուկ մաքսային վիճակագրության տվյալները ձևավորվում և օգտագործվում են մաքսային մարմիններին վերապահված խնդիրների իրականացման նպատակներով:

Հատուկ մաքսային վիճակագրության վարման կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 361. Մաքսային մարմինների կողմից անձանց մասին տեղեկությունների հավաքումը

1. Մաքսային մարմիններն իրավունք ունեն Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող կամ մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների հետ կապված այլ գործունեություն իրականացնող անձանց վերաբերյալ հավաքելու տեղեկություններ՝

ներառյալ տեղեկություններ՝

1) կազմակերպության հիմնադիրների, բաժնետերերի, ղեկավարների և գլխավոր հաշվապահների վերաբերյալ.

2) իրավաբանական անձի պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր անձի պետական գրանցման վերաբերյալ.

3) ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար օգտագործվող գույքի կազմի վերաբերյալ.

4) բաց բանկային հաշիվների վերաբերյալ.

5) անձի արտաքին տնտեսական գործունեության վերաբերյալ.

6) կազմակերպության և դրա մասնաճյուղերի գտնվելու վայրի վերաբերյալ.

7) հարկային մարմնում որպես հարկ վճարող հաշվառվելու և հարկ վճարողի նույնականացման (գրանցման, հաշվառման) համարի վերաբերյալ.

8) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկված կամ այդպիսի ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձանց ֆինանսական կայունության վերաբերյալ.

9) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկված կամ այդպիսի ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձանց պարտքերի (ապառքների) վերաբերյալ՝ անդամ պետությունների՝ հարկերի և վճարների մասին օրենսդրությանը (հարկային օրենսդրությանը) համապատասխան.

10) ֆիզիկական անձանց վերաբերյալ՝ անձնական տվյալները (ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), ծննդյան ամսաթիվը և վայրը, սեռը, բնակության վայրի հասցեն, անձը հաստատող փաստաթղթի վավերապայմանները՝ ներառյալ ֆիզիկական անձի անձնական (անհատական նույնականացման) համարը (առկայության դեպքում), հարկ վճարողի նույնականացման (գրանցման, հաշվառման) համարը (առկայության դեպքում)) և Միության մաքսային սահմանով այդ անձանց կողմից ապրանքների տեղափոխման հաճախականությունը:

11) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող կամ այդ ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի բաժնետերը, նրա հիմնադիրը (մասնակիցը), ղեկավարը, գլխավոր հաշվապահը հանդիսացող՝ անդամ պետությունների ֆիզիկական անձանց այն հանցագործությունների կամ քրեական իրավախախտումների համար քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, որոնց մասով վարույթի իրականացումը վերապահված է մաքսային և այլ պետական մարմիններին:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված անձանց վերաբերյալ տեղեկությունների հավաքումը մաքսային մարմինների կողմից իրականացվում է մաքսային գործառնությունների կատարման ժամանակ և անդամ պետությունների այլ պետական մարմիններից այն ստանալու միջոցով:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված անձինք իրավունք ունեն ծանոթանալու մաքսային մարմիններում առկա՝ իրենց վերաբերյալ փաստաթղթավորված տեղեկություններին և հստակեցնելու այդ տեղեկությունները՝ դրանց լիարժեքության և հավաստիության ապահովման նպատակով:

Հոդված 362. Փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների փոխանակումը

1. Սույն Օրենսգրքով, մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերով ու ակտերով նախատեսված դեպքերում փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների փոխանակումը մաքսային մարմինների և հայտարարատուների, փոխադրողների, մաքսային գործի ոլորտում գործունեություն իրականացնող անձանց, լիազորված տնտեսական օպերատորների ու մաքսային գործառնություններ կատարող այլ անձանց միջև իրականացվում է էլեկտրոնային եղանակով կամ թղթային կրիչով փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ներկայացման (ուղարկման) միջոցով:

2. Էլեկտրոնային փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների էլեկտրոնային եղանակով փոխանակումն իրականացվում է մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի և սույն հոդվածի 1-ին կետում նշված անձանց տեղեկատվական համակարգերի փոխգործակցության միջոցով կամ Ինտերնետ ցանցի ռեսուրսների օգտագործմամբ:

3. Թղթային կրիչով փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ներկայացման (ուղարկման) միջոցով փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների փոխանակումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների փոխանակման տեխնիկական հնարավորության բացակայության դեպքում, ինչպես նաև սույն Օրենսգրքով, մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերով ու ակտերով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

Հոդված 363. Մաքսային մարմինների փոխգործակցությունը արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձանց (արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների), լիազորված տնտեսական օպերատորների, մաքսային գործի ոլորտում գործունեություն իրականացնող անձանց, դրանց ասոցիացիաների և միավորումների հետ

1. Մաքսային կարգավորման կատարելագործման և մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի

ու ակտերի նախագծերի հանրային քննարկման նպատակներով մաքսային մարմինները խորհրդատվական բնույթի պաշտոնական հարաբերություններ են հաստատում և պահպանում արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձանց (արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների), լիազորված տնտեսական օպերատորների, մաքսային գործի ոլորտում գործունեություն իրականացնող անձանց, դրանց ասոցիացիաների և միավորումների հետ:

2. Մաքսային հսկողության արդյունավետության բարձրացման համար մաքսային մարմինները փոխգործակցում են արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձանց (արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների), լիազորված տնտեսական օպերատորների, մաքսային գործի ոլորտում գործունեություն իրականացնող անձանց, դրանց ասոցիացիաների և միավորումների հետ:

3. Խորհրդատվական բնույթի պաշտոնական հարաբերությունների հաստատման ու պահպանման և մաքսային հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով մաքսային մարմինների ու արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձանց (արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների), լիազորված տնտեսական օպերատորների, մաքսային գործի ոլորտում գործունեություն իրականացնող անձանց, դրանց ասոցիացիաների և միավորումների միջև փոխգործակցության համար մաքսային մարմիններին կից կարող են ստեղծվել խորհրդատվական մարմիններ և ընդունվել այդ փոխգործակցությունը կարգավորող փաստաթղթեր:

Հոդված 364. Մաքսային մարմինների կողմից միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների՝ մաքսային կապարակնիքների և կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրում իրականացնելու թույլատրումը

1. Մաքսային կապարակնիքների և կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները պետք է նախագծված և սարքավորված լինեն հետևյալ պահանջների պահպանմամբ՝

1) մաքսային կապարակնիքները կարող են դրվել պարզ ու հուսալի եղանակով.

2) ապրանքները հնարավոր չէ հեռացնել միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի բեռնասրահների (հատվածամասերի) կապարակնքված մասերից կամ տեղավորել դրանց մեջ՝ առանց դրանց բացման մասին վկայող տեսանելի նշաններ թողնելու կամ մաքսային կապարակնիքներն ու կնիքները վնասելու.

3) չկան գաղտնարաններ, որոնցում կարող են ապրանքներ թաքցվել.

4) վայրերը, որտեղ կարող են ապրանքներ լինել, պետք է հեշտ հասանելի լինեն ապրանքների մաքսային տեսազննման համար:

2. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներին ներկայացվող՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված պահանջները համարվում են կատարված, եթե այդպիսի տրանսպորտային միջոցները համապատասխանում են երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով սահմանված՝ դրանց նախագծմանը ու սարքավորվածությանը ներկայացվող պահանջներին:

3. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի համապատասխանությունը սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված պահանջներին կարող է հաստատվել նախօրոք՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագիր ստանալու միջոցով:

4. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագիր կարող է տրվել՝

1) անհատական կարգով.

2) ըստ տրանսպորտային միջոցների կառուցվածքի տեսակի (սերիաների):

5. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագիրը տրվում է մաքսային մարմնի կողմից՝ շահագրգիռ անձի դիմումի հիման վրա՝ նշված դիմումը գրանցելու օրվան հաջորդող 1 աշխատանքային օրվանից ոչ ուշ՝ տրանսպորտային միջոցը ներկայացնելու ժամանակ:

Այդպիսի հավաստագիրը գործում է Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետի սահմաններում՝ բացառությամբ այն դեպքի, երբ տրանսպորտային միջոցի կառուցվածքում փոփոխություններ են արվել:

Տրանսպորտային միջոցի տիրապետման իրավունքն այլ անձի փոխանցելու դեպքում միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագիրը մնում է ուժի մեջ:

Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցը մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար թույլատրելու մասին հավաստագրի ձևը, դրա տրման և օգտագործման կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

6. Մաքսային մարմինները չեն պահանջում միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի՝ մաքսային կապարակնիքների ու կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար նախօրոք թույլատրում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) ապրանքների փոխադրումն իրականացվում է մաքսային փոխադրողի կողմից.

2) նախօրոք թույլատրումը նախատեսված է երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով:

Գլուխ 48

Մաքսային մարմինների կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգերը և տեղեկատվական տեխնոլոգիաները

Հոդված 365. Մաքսային մարմինների կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգերը և տեղեկատվական տեխնոլոգիաները

1. Մաքսային գործառնությունները կարող են կատարվել մաքսային մարմինների, հայտարարատուների և այլ շահագրգիռ անձանց տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև տեղեկատվական փոխգործակցության շրջանակներում՝ անդամ պետությունների պետական մարմինների (կազմակերպությունների) տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ:

2. Մաքսային գործառնությունների կատարման ժամանակ օգտագործվող տեղեկատվական համակարգերի, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության պաշտպանության միջոցների մշակումը, ստեղծումը, ներդրումը, շահագործումը, պահպանումը, արդիականացումն իրականացվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

3. Մաքսային մարմինների կողմից կիրառվում են մաքսային մարմինների կողմից մշակվող, արտադրվող և (կամ) ձեռք բերվող տեղեկատվական համակարգեր և տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 366. Մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսները

1. Մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսների ձևավորման նպատակներով մաքսային մարմիններն իրականացնում են Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և դրանք տեղափոխող անձանց վերաբերյալ տեղեկությունների հավաքում և մշակում:

2. Մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսները ձևավորվում են մաքսային գործառնությունների կատարման ժամանակ ներկայացվող փաստաթղթերի և տեղեկությունների բազայի հիման վրա և սահմանափակ հասանելիություն ունեն:

Մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսների ձևավորման և դրանց հասանելիության կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

3. Մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի մասին տեղեկատվություն պարունակող՝ մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսները բաց են և հանրությանը մատչելի:

Մաքսային մարմինների՝ հանրությանը մատչելի տեղեկատվական ռեսուրսները տեղադրվում են մաքսային մարմինների և (կամ) Միության պաշտոնական կայքերում՝ Ինտերնետ ցանցում:

4. Սահմանափակ մատչելիություն ունեցող և մաքսային մարմինների տնօրինության տակ գտնվող՝ մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսներում պարունակվող տեղեկություններն անձանց կողմից ստանալու և օգտագործելու կարգը, ինչպես նաև այդպիսի տեղեկությունների կազմը և տրամադրման կարգը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 367. Տեղեկատվության և տեղեկատվական գործընթացներում ու տեղեկատվայնացմանը մասնակցող անձանց իրավունքների պաշտպանությունը

1. Տեղեկատվության պաշտպանությունը, մաքսային մարմինների կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգերում տեղեկատվության պաշտպանության միջոցների կիրառումը և մաքսային մարմինների կողմից օգտագործվող տեղեկատվական ռեսուրսներում ու տեղեկատվական համակարգերում տեղեկատվության պաշտպանվածության մակարդակի գնահատումն իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

2. Մաքսային մարմինների կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգեր սույն Օրենսգրքին համապատասխան տեղեկատվություն ներկայացնող անձանց իրավունքների պաշտպանությունն իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Գլուխ 49

Մաքսային մարմինների տեղեկատվական և այլ փոխգործակցությունը

Հոդված 368. Միության շրջանակներում մաքսային մարմինների փոխգործակցությունը

1. Մաքսային մարմիններն իրենց վերապահված խնդիրների իրականացման և գործառույթների կատարման նպատակներով փոխգործակցում են միմյանց, ինչպես նաև անդամ պետությունների պետական մարմինների, այլ մարմինների ու կազմակերպությունների և Հանձնաժողովի հետ՝ սույն Օրենսգրքին, «Միության մասին» պայմանագրին, Միության շրջանակներում միջազգային պայմանագրերին և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

2. Մաքսային մարմինների փոխգործակցությունն իրականացվում է՝

1) տեղեկատվության փոխանակման միջոցով, որն իրականացվում է Միության ընդհանուր գործընթացների շրջանակներում՝ «Միության մասին» պայմանագրին համապատասխան.

2) կանոնավոր կերպով տեղեկատվության՝ էլեկտրոնային ձևով փոխանակման միջոցով՝ սույն Օրենսգրքի 370-րդ հոդվածին համապատասխան, ինչպես նաև սույն Օրենսգրքով և (կամ) Միության շրջանակներում միջազգային պայմանագրերով սահմանված այլ դեպքերում.

3) փաստաթղթերի պատճեններ և (կամ) տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ հարցումների կատարման միջոցով.

4) մեկ անդամ պետության մաքսային մարմնի կողմից մյուս անդամ պետության մաքսային մարմնին տեղեկատվություն ուղարկելու միջոցով.

5) փոխադարձ վարչական օգնություն տրամադրելու միջոցով.

6) հաշվառքի սարքերի տեղադրման վայրերում խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության իրականացման ժամանակ ներկայության միջոցով.

7) այլ եղանակով փոխգործակցության միջոցով:

3. Միության շրջանակներում մաքսային կարգավորման ոլորտի ընդհանուր գործընթացները սահմանվում են սույն Օրենսգրքի դրույթների պահպանումն ապահովելու, այդ թվում՝ Միության մաքսային տարածքով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան տեղափոխվող ապրանքների, ժամանակավոր ներմուծված՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների, ժամանակավոր ներմուծված՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային հսկողություն ապահովելու, ինչպես նաև Միության մաքսային տարածքից ապրանքների փաստացի արտահանումը հաստատելու նպատակով:

4. Իր լիազորությունների իրականացման համար Հանձնաժողովն իրավունք ունի էլեկտրոնային եղանակով մաքսային մարմիններից պահանջելու և նրանցից ստանալու տեղեկատվություն, որը չի պարունակում անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան պետական գաղտնիքի (պետական գաղտնիքների) կամ սահմանափակ տարածման տեղեկությունների շարքին դասվող տեղեկություններ:

Հոդված 369. Մաքսային մարմինների փոխգործակցությունը և համագործակցությունը Միության անդամ չհանդիսացող պետությունների մաքսային ու այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ

Մաքսային մարմինները փոխգործակցում և համագործակցում են Միության անդամ չհանդիսացող պետությունների մաքսային ու այլ մարմինների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ՝ երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրերին և (կամ) երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան:

Հոդված 370. Մաքսային մարմինների միջև տեղեկատվության կանոնավոր կերպով փոխանակումը

1. Մաքսային մարմինները կանոնավոր կերպով փոխանակում են սույն Օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ կետում և 277-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված՝ ապրանքների հայտարարագրերից, մաքսային փաստաթղթերից, ապրանքների դասակարգման վերաբերյալ նախնական որոշումներից վերցված տեղեկություններ, այդ թվում՝ այդպիսի մաքսային փաստաթղթերի տեղեկությունները փոփոխող (լրացնող)՝ մաքսային մարմինների տեղեկատվական ռեսուրսներում պարունակվող և պետական գաղտնիք (պետական գաղտնիքներ) կազմող տվյալների շարքին չդասվող տեղեկություններ:

Կանոնավոր կերպով տեղեկատվության փոխանակման համար տեղեկությունները սահմանվում են սույն Օրենսգրքի

թիվ 2 հավելվածի ցանկի համաձայն:

2. Կանոնավոր կերպով տեղեկատվության փոխանակումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով՝ տեխնիկական այն պայմաններին համապատասխան, որոնցով սահմանվում են այդպիսի տեղեկատվության փոխանակումն իրականացնող մաքսային մարմինները, փոխանակման համար տեղեկությունների կառուցվածքն ու ձևաչափը, այդպիսի փոխանակման կանոնակարգը, ժամկետները և եղանակները:

Կանոնավոր կերպով էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակման տեխնիկական պայմանները սահմանվում են մաքսային մարմինների կողմից:

Մաքսային մարմինները պաշտոնապես միմյանց տեղեկացնում են մաքսային մարմինների՝ կանոնավոր կերպով տեղեկատվության պատրաստման, փոխանցման և ստացման համար պատասխանատու պաշտոնատար անձանց մասին:

Հոդված 371. Մաքսային մարմինների կողմից փաստաթղթերի պատճենների և (կամ) տեղեկությունների տրամադրման վերաբերյալ հարցումների ուղարկման և կատարման կարգը

1. Մաքսային մարմիններին վերապահված խնդիրների իրականացման նպատակով մեկ անդամ պետության մաքսային մարմինը մյուս անդամ պետությունների մաքսային մարմինների հարցումների հիման վրա նրանց տրամադրում է իր տրամադրության տակ եղած կամ սույն հոդվածի 7-րդ կետին համապատասխան ստացված փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների պատճենները:

2. Փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների պատճենների տրամադրման վերաբերյալ հարցումն ուղարկելու (այսուհետ սույն հոդվածում՝ հարցում) հիմքերն են՝

1) տեղեկատվության փոխանակման արդյունքում ստացված՝ ապրանքների, միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների և (կամ) ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց մասին տեղեկատվության վերլուծության ժամանակ տվյալների անհամապատասխանության հայտնաբերումը.

2) մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի և (կամ) այն անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության հնարավոր խախտման մասին վկայող տեղեկատվության առկայությունը, որի մաքսային մարմինն ուղարկում է հարցումը.

3) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի կողմից այդ ռեեստրում ընդգրկվելու՝ սույն Օրենսգրքի 433-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ, 5-րդ, և 6-րդ ենթակետերով նախատեսված պայմանների պահպանման ստուգումը:

3. Հարցումը ձևակերպվում է էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչով փաստաթղթի տեսքով նամակով, որը ստորագրվում է հարցումն ուղարկող մաքսային մարմնի ղեկավարի (պետի), նրա կողմից լիազորված՝ մաքսային մարմնի ղեկավարի տեղակալի (պետի տեղակալի) կամ նրանց փոխարինող անձանց կողմից:

4. Հարցումը պետք է պարունակի՝

1) հարցումն ուղարկող մաքսային մարմնի անվանումը և այն մաքսային մարմնի անվանումը, որին ուղարկվում է հարցումը.

2) սույն հոդվածին հղումը.

3) հանգամանքների շարադրումը, որոնց առնչությամբ ուղարկվում է հարցումը՝ նշելով մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի և (կամ) անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության դրույթները, որոնց պահպանումը ստուգվում է.

4) հարցում ուղարկելու հիմքերը՝ սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան.

5) այն փաստաթղթերի ցանկը, որոնց պատճենները պահանջվում են, և (կամ) պահանջվող տեղեկությունների ցանկը.

6) այլ տեղեկատվություն, որը, հարցումն ուղարկող մաքսային մարմնի կարծիքով, պահանջվում է հարցումը կատարելու համար:

5. Հարցմանը կարող են կցվել այն փաստաթղթերի պատճենները, որոնց հղում է արվում հարցման տեքստում, և այն հանգամանքներին առնչվող այլ փաստաթղթերի պատճենները, որոնց առնչությամբ ուղարկվում է հարցումը:

6. Հարցումը կատարվում է հարցումն ստացած մաքսային մարմնի կողմից այն գրանցելու օրվանից 1 ամսվա ընթացքում՝ բացառությամբ սույն հոդվածի 8-րդ և 9-րդ կետերում նշված դեպքերի:

7. Եթե մաքսային մարմինն իր տրամադրության տակ չունի հարցվող փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները, ապա վերջինս, անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, հարցումը կատարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և (կամ) տեղեկությունները ստանալու հարցմամբ դիմում է անդամ պետության այլ պետական մարմիններին և կազմակերպություններին:

8. Հարցումը կատարելու ժամանակ մաքսային մարմինն իրավունք ունի՝

1) դիմելու հարցումն ուղարկած մաքսային մարմնին՝ հարցումը կատարելու համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու հարցմամբ.

2) հարցումը կատարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և (կամ) տեղեկությունները անդամ

պետության այլ պետական մարմիններից և կազմակերպություններից ստանալու անհրաժեշտության դեպքում 1 ամսով երկարաձգելու սույն հոդվածի 6-րդ կետում նշված՝ հարցման կատարման ժամկետը՝ հարցումն ուղարկած մաքսային մարմնին գրավոր ծանուցելով այդ երկարաձգման պատճառների մասին:

9. Սույն հոդվածի 8-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան հարցումն ուղարկելու դեպքում հարցման կատարման ժամկետը կասեցվում է հարցումն ուղարկելու օրվանից և վերսկսվում հարցմամբ պահանջված լրացուցիչ տեղեկատվությունը ստանալու օրվանից:

10. Մաքսային մարմինը հարցման կատարումը մերժում է հետևյալ դեպքերում՝

1) հարցումը չի համապատասխանում սույն հոդվածի 4-րդ կետում նշված պահանջներին.

2) սույն հոդվածի 8-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան հարցված լրացուցիչ տեղեկատվությունը չի ստացվել այդ հարցումն ուղարկելու օրվանից 2 ամսվա ընթացքում.

3) հարցման կատարումը կարող է վնաս հասցնել անդամ պետության ազգային անվտանգությանը, հակասում է այն անդամ պետության օրենսդրությանը, որի մաքսային մարմնին է ուղարկվել հարցումը, կամ երրորդ կողմի հետ այդ անդամ պետության միջազգային պայմանագրերին.

4) հարցումը չի կարող կատարվել հարցումն ստացած մաքսային մարմնից անկախ պատճառներով:

11. Մաքսային մարմինը հարցումն ուղարկած մաքսային մարմնին ծանուցում է հարցման կատարումը մերժելու պատճառների մասին:

12. Սույն հոդվածին համապատասխան հարցումների ուղարկումը և կատարումն իրականացվում են Հանձնաժողովի կողմից սահմանվող մաքսային մարմինների կողմից:

Հոդված 372. Մեկ անդամ պետության մաքսային մարմնի կողմից մյուս անդամ պետության մաքսային մարմնին տեղեկատվություն ուղարկելը

1. Մեկ անդամ պետության մաքսային մարմինը մյուս անդամ պետության մաքսային մարմնին տեղեկատվություն է ուղարկում հետևյալ դեպքերում՝

1) հայտնաբերվել են լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելու մասին վկայականի գործողության կասեցման՝ սույն Օրենսգրքի 435-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ, 11-րդ և 12-րդ ենթակետերով նախատեսված հիմքերը.

2) հայտնաբերվել են միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների՝ սույն Օրենսգրքի 275-րդ հոդվածի պահանջների խախտմամբ օգտագործման փաստեր.

3) այլ դեպքերում, երբ սույն Օրենսգրքին համապատասխան նախատեսված է մաքսային մարմինների փոխգործակցություն:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան տեղեկատվություն ուղարկելու կարգը և ժամկետը, ինչպես նաև ուղարկվող տեղեկությունների կազմը և (կամ) ուղարկվող փաստաթղթերը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

3. Մեկ անդամ պետության մաքսային մարմինն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ մյուս անդամ պետության մաքսային մարմնին տեղեկատվություն ուղարկելու հետևյալ դեպքերում՝

1) տեղեկատվությունը կարող է վկայել մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի և (կամ) այն անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության խախտումների կամ խախտման հնարավոր ռիսկերի մասին, որի մաքսային մարմնին այն ուղարկվում է.

2) հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ տեղեկատվությունը հետաքրքրություն է ներկայացնում այն մաքսային մարմնի համար, որին ուղարկվում է:

Հոդված 373. Վարչական փոխօգնությունը

1. Վարչական փոխօգնություն ասելով ենթադրվում են մեկ անդամ պետության մաքսային մարմնի գործողությունները, որոնք իրականացվում են մեկ այլ անդամ պետության մաքսային մարմնի հանձնարարությամբ կամ նրա հետ համատեղ՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի պահպանումն ապահովելու, մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի խախտումների կանխարգելման և կանխման նպատակով:

2. Մեկ անդամ պետության մաքսային մարմինն իրավունք ունի այլ անդամ պետության մաքսային մարմնին մաքսային հսկողության իրականացման մասին հանձնարարական ուղարկելու (այսուհետ սույն հոդվածում՝ հանձնարարական):

3. Հանձնարարական ուղարկելու համար հիմք են հանդիսանում՝

1) արտազնա մաքսային ստուգում անցկացնող մաքսային մարմնին ստուգման ենթարկվող անձի կողմից ներկայացված՝ այն անձանց մոտ առկա տեղեկությունների հավաստիությունը ստուգելու անհրաժեշտությունը, որոնք ապրանքների վերաբերյալ գործարքներով (գործառնություններով) կապված են ստուգման ենթարկվող անձի հետ, եթե այդպիսի անձինք ստեղծվել կամ գրանցվել են այլ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

2) սույն Օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան մաքսային հսկողության անցկացման անհրաժեշտությունը այն պետությունից բացի այլ անդամ պետության տարածքում գտնվող ապրանքների նկատմամբ, որի մաքսային մարմնի կողմից կատարվել է ապրանքների բացթողումը.

3) մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի պահանջների հնարավոր խախտման մասին վկայող տեղեկատվության առկայությունը:

4. Հանձնարարականը ձևակերպվում է նամակի տեսքով, որը ստորագրվում է հանձնարարականն ուղարկող մաքսային մարմնի ղեկավարի (պետի), նրա կողմից լիազորված՝ մաքսային մարմնի ղեկավարի տեղակալի (պետի տեղակալի) կամ նրանց փոխարինող անձանց կողմից:

5. Հանձնարարականը պետք է պարունակի՝

1) հանձնարարականն ուղարկող մաքսային մարմնի անվանումը և այն մաքսային մարմնի անվանումը, որին ուղարկվում է հանձնարարականը.

2) սույն հոդվածին հղումը.

3) հանգամանքների շարադրումը, որոնց առնչությամբ ուղարկվում է հանձնարարականը՝ նշելով մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի դրույթները.

4) հանձնարարականն ուղարկելու հիմքերը՝ սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան.

5) նշում մաքսային հսկողության անցկացումն ապահովող մաքսային հսկողության ձևերի և (կամ) միջոցների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ է կիրառել, մաքսային հսկողության անցկացման նպատակների վերաբերյալ, իսկ մաքսային ստուգում անցկացնելու մասին հանձնարարական ուղարկելիս՝ նաև նշում դրա առարկայի վերաբերյալ՝ սույն Օրենսգրքի 331-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան, և այն հարցերի ցանկի վերաբերյալ, որոնք անհրաժեշտ է քննարկել դրա անցկացման ընթացքում.

6) այն ապրանքների, անձանց, փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների մասին տեղեկատվությունը, որոնց նկատմամբ պահանջվում է մաքսային հսկողություն անցկացնել, ինչպես նաև հանձնարարականի կատարման համար անհրաժեշտ այլ տեղեկատվություն:

6. Հանձնարարականին կցվում են այն հանգամանքներին առնչվող նյութերը, որոնց առնչությամբ ուղարկվում է հանձնարարականը, այդ թվում՝ այն փաստաթղթերի պատճենները, որոնց հղում է արվում հանձնարարականի տեքստում, և նշված հանգամանքներին առնչվող այլ փաստաթղթերի պատճենները:

7. Հանձնարարականը ենթակա է կատարման հանձնարարականը ստացած մաքսային մարմնի կողմից այն գրանցելու օրվանից 2 ամսվա ընթացքում՝ բացառությամբ սույն հոդվածում նշված դեպքերի:

8. Հանձնարարականը կատարելու ժամանակ մաքսային մարմինն իրավունք ունի՝

1) դիմելու հանձնարարականն ուղարկած մաքսային մարմին՝ հանձնարարականը կատարելու համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու հարցմամբ.

2) անցկացնելու այլ ձևերով մաքսային հսկողություն կամ կիրառելու մաքսային հսկողության անցկացումն ապահովող այլ միջոցներ՝ ի հավելումն հանձնարարականի մեջ նշված մաքսային հսկողության անցկացումն ապահովող մաքսային հսկողության ձևերի և (կամ) միջոցների.

3) կիրառելու մաքսային հսկողության անցկացումն ապահովող մաքսային հսկողության այլ ձևեր և (կամ) միջոցներ, քան հանձնարարականի մեջ նշվածները, եթե հանձնարարականի մեջ նշված՝ մաքսային հսկողության անցկացումն ապահովող մաքսային հսկողության ձևերը և (կամ) միջոցները հնարավոր չէ կիրառել հանձնարարականը ստացած մաքսային մարմնից անկախ պատճառներով.

4) երկարաձգելու հանձնարարականի կատարման ժամկետը՝ սույն Օրենսգրքով նախատեսված մաքսային հսկողության առանձին ձևերի անցկացման ժամկետի սահմաններում՝ հանձնարարականն ուղարկած մաքսային մարմնին գրավոր ծանուցելով այդպիսի երկարաձգման պատճառների մասին:

9. Սույն հոդվածի 8-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան հարցումն ուղարկելու դեպքում հանձնարարականի կատարման ժամկետը կասեցվում է հարցումն ուղարկելու օրվանից և վերսկսվում է պահանջված տեղեկատվությունը ստանալու օրվանից:

10. Հանձնարարականի կատարման արդյունքներով մաքսային մարմինը տեղեկատվությունն է ուղարկում անցկացված մաքսային հսկողության արդյունքների մասին՝ կցելով մաքսային հսկողության արդյունքներով ձևակերպված մաքսային փաստաթղթերի իր կողմից հաստատված պատճենները և հանձնարարականը կատարելու ընթացքում ստացված այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների պատճենները:

11. Մաքսային մարմինը հանձնարարականի կատարումը մերժում է հետևյալ դեպքերում՝

1) հանձնարարականը չի համապատասխանում սույն հոդվածի 5-րդ կետում նշված պահանջներին.

2) սույն հոդվածի 8-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան հարցված տեղեկատվությունը չի ստացվել այդ հարցումն ուղարկելու օրվանից 2 ամսվա ընթացքում.

3) հանձնարարականի կատարումը կարող է վնաս հասցնել անդամ պետության ազգային անվտանգությանը, հակասում է այն անդամ պետության օրենսդրությանը, որի մաքսային մարմին ուղարկվել է հանձնարարականը, կամ երրորդ կողմի հետ այդ անդամ պետության միջազգային պայմանագրերին.

4) հանձնարարականը չի կարող կատարվել այն մաքսային մարմնից անկախ պատճառներով, որին ուղարկվել է հանձնարարականը:

12. Մաքսային մարմինը հանձնարարականն ուղարկած մաքսային մարմնին ծանուցում է հանձնարարականի

կատարումը մերժելու պատճառների մասին:

13. Սույն հոդվածին համապատասխան հանձնարարականների ուղարկումը և կատարման ապահովումն իրականացվում են Հանձնաժողովի կողմից սահմանվող մաքսային մարմինների կողմից:

Հոդված 374. Խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառքի սարքերի տեղադրման վայրեր մուտք գործելու հնարավորությունը

1. Մեկ անդամ պետության մաքսային մարմինների լիազորված պաշտոնատար անձինք իրավունք ունեն ներկա գտնվելու այլ անդամ պետությունների սահմանակից տարածքներում գտնվող՝ խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների հաշվառքի սարքերի տեղադրման վայրերում մաքսային հսկողության անցկացման ժամանակ այն անդամ պետության մաքսային մարմինների լիազորված պաշտոնատար անձանց հետ միասին, որի տարածքում գտնվում են այդպիսի հաշվառքի սարքերը, եթե այդ հաշվառքի սարքերի ցուցմունքներն օգտագործվում են այդպիսի մաքսային մարմինների կողմից մաքսային հսկողության շրջանակներում:

2. Հաշվառքի սարքերի տեղադրման վայրեր մուտք գործելու կարգը, մաքսային մարմինների փոխգործակցության կարգը, մաքսային հսկողություն ձևերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ հաշվառքի սարքերի տեղադրման վայրերի ցանկը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Հոդված 375. Մաքսային մարմինների փոխգործակցության շրջանակներում ստացված տեղեկատվության օգտագործումը

1. Սույն գլխին համապատասխան մեկ անդամ պետության մաքսային մարմնի կողմից այլ անդամ պետության մաքսային մարմնից ստացված տեղեկատվությունը մաքսային մարմինների կողմից օգտագործվում է բացառապես մաքսային մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման համար և ենթակա չէ փոխանցման այլ անձանց և այլ նպատակներով օգտագործման՝ առանց այդպիսի տեղեկատվությունը տրամադրած մաքսային մարմնի գրավոր համաձայնության:

2. Մաքսային մարմիններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում սույն գլխին համապատասխան ստացված տեղեկատվության ոչ իրավաչափ տարածումը կանխելու համար և ապահովում են ստացված տեղեկատվությանը հասանելիություն ունեցող անձանց շրջանակի սահմանափակումը, ինչպես նաև՝ դրա պաշտպանությունը՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Գլուխ 50

Մաքսային մարմինների կողմից կիրառվող ռիսկերի կառավարման համակարգը

Հոդված 376. Սահմանումները

Սույն գլխի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

«ռիսկի վերլուծություն»՝ մաքսային մարմինների մոտ առկա տեղեկատվության օգտագործում՝ ռիսկի ոլորտը և ցուցիչները որոշելու համար.

«ռիսկի նույնականացում»՝ գործողություններ, որոնք ուղղված են ռիսկի հայտնաբերմանը, ճանաչմանը և նկարագրմանը.

«ռիսկի ցուցիչ»՝ հատկանիշ կամ հատկանիշների ամբողջություն, որը թույլ է տալիս ընտրել մաքսային հսկողության օբյեկտը.

«ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցներ»՝ սույն Օրենսգրքով նախատեսված՝ մաքսային հսկողության ձևեր, մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցներ, ինչպես նաև սույն Օրենսգրքով և անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներ, որոնք կիրառվում են ռիսկերի գնահատման հիման վրա.

«ռիսկի ոլորտ»՝ ռիսկի և պայմանների նկարագրությունը, որոնց դեպքում այն առաջանում է.

«ռիսկի գնահատում»՝ գործողություններ, որոնք ուղղված են ռիսկի նույնականացմանը, վերլուծությանը և ռիսկի մակարդակի որոշմանը.

«ռիսկի պրոֆիլ»՝ ռիսկի ոլորտի, ռիսկի ցուցիչների և ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունը.

«մաքսային ռիսկ (ռիսկ)»՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի և անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության չպահպանման հավանականությունը.

«ռիսկերի կառավարում»՝ մաքսային մարմինների համակարգված գործունեություն՝ ուղղված մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի և անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության չպահպանման հետ կապված իրադարձությունների տեղի ունենալու հավանականության և դրանց տեղի ունենալու արդյունքում հնարավոր վնասի նվազեցմանը.

«ռիսկի մակարդակ»՝ մեծություն, որը բնորոշում է մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի և անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրության չպահպանման հետ կապված իրադարձության տեղի ունենալու հաճախականության և նշված իրադարձության տեղի ունենալու արդյունքում հնարավոր հետևանքների (վնասի) հարաբերակցությունը:

Հոդված 377. Մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման գործընթացի կազմակերպումը

1. Մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման գործընթացը ներառում է՝

1) մաքսային հսկողության օբյեկտների, իրականացված մաքսային գործառնությունների և ինչպես ապրանքների բացթողումից առաջ, այնպես էլ հետո անցկացված մաքսային հսկողության արդյունքների մասին տեղեկատվության հավաքումը և մշակումը.

2) ռիսկի գնահատումը.

3) ռիսկի ցուցիչի նկարագրումը.

4) ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների և այդ միջոցների կիրառման կարգի սահմանումը.

5) ռիսկերի պրոֆիլների մշակումը և հաստատումը.

6) մաքսային հսկողության օբյեկտների ընտրությունը.

7) ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների կիրառումը.

8) ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների կիրառման արդյունքների վերլուծությունը և հսկողությունը:

2. Ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների տարբերակված կիրառման նպատակներով մաքսային մարմինները կարող են իրականացնել մաքսային գործառնություններ կատարող անձանց դասակարգում ըստ կատեգորիաների՝ դրանք ռիսկի մակարդակի ցածր, միջին կամ բարձր կատեգորիաների թվին դասելու միջոցով:

3. Ռիսկերի կառավարման գործընթացի իրականացման ժամանակ մաքսային մարմիններն առավելապես օգտագործում են տեղեկատվական համակարգերը և տեղեկատվական տեխնոլոգիաները:

4. Մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման գործընթացն իրականացվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

5. Ռիսկերի պրոֆիլներում ու ցուցիչներում պարունակվող տեղեկատվությունը գաղտնի է և ենթակա չէ հրապարակման՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող դեպքերի:

6. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու ռիսկերի այն ոլորտները, որոնց նկատմամբ մաքսային մարմիններին հանձնարարվում է հաստատել ռիսկերի պրոֆիլը և ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցներ կիրառել:

Հոդված 378. Մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման համակարգի օգտագործումը

1. Մաքսային մարմինները ռիսկերի կառավարման համակարգն օգտագործում են մաքսային հսկողության օբյեկտների և ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների ընտրության համար:

2. Մաքսային մարմինները ռիսկերի կառավարման համակարգն օգտագործում են մաքսային հսկողության անցկացման համար՝ ապրանքները մաքսային հսկողության տակ գտնվելու ժամանակահատվածում և սույն Օրենսգրքի 310-րդ հոդվածի 7-րդ կետի երրորդ և չորրորդ պարբերություններով սահմանված ժամկետներում, ինչպես նաև սույն Օրենսգրքի 310-րդ հոդվածի 8-րդ կետին համապատասխան մաքսային հսկողության անցկացման համար:

3. Մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման համակարգի օգտագործման հիմնական նպատակներն են՝

1) մաքսային հսկողության արդյունավետության ապահովումը.

2) բարձր մակարդակի ռիսկի ոլորտների վրա ուշադրության կենտրոնացումը և մաքսային մարմինների ռեսուրսների արդյունավետ օգտագործման ապահովումը.

3) Միության մաքսային սահմանով այն ապրանքների տեղափոխման արագացման և պարզեցման համար պայմանների ստեղծումը, որոնց նկատմամբ ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների կիրառման անհրաժեշտություն չի հայտնաբերվել:

4. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման համակարգի կիրառման լրացուցիչ նպատակներ սահմանվել, այդ թվում՝ ելնելով մաքսային մարմիններին վերապահված խնդիրներից և գործառույթներից:

5. Մաքսային մարմինները ռիսկերի կառավարման համակարգը կարող են օգտագործել Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերով ու ակտերով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ իրենց վերապահված պետական հսկողության (վերահսկողության) այլ տեսակների իրականացման ժամանակ:

6. Մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման համակարգի կիրառման ռազմավարությունը և մարտավարությունը, ինչպես նաև դրա գործունեության կարգը սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

Գլուխ 51

Մաքսային մարմինների կողմից ապրանքները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը արգելանքի վերցնելը (արգելապահելը)

Հոդված 379. Մաքսային մարմինների կողմից ապրանքները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը արգելանքի վերցնելը (արգելապահելը) և պահպանելը

1. Այն ապրանքները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը, որոնք վարչական իրավախախտումների կամ հանցագործությունների առարկա չեն կամ վարչական իրավախախտումների կամ հանցագործությունների առարկա են, սակայն չեն առգրավվել կամ արգելանքի տակ չեն դրվել հանցագործության մասին հաղորդումն ստուգելու, քրեական գործով կամ վարչական իրավախախտման գործով վարույթի (վարչական ընթացակարգի իրականացման) ընթացքում, սույն Օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, 88-րդ հոդվածի 10-րդ կետով, 98-րդ հոդվածի 5-րդ կետով, 101-րդ հոդվածի 3-րդ կետով, 113-րդ հոդվածի 3-րդ կետով, 133-րդ հոդվածի 5-րդ կետով, 139-րդ հոդվածի 5-րդ կետով, 152-րդ հոդվածի 6-րդ կետով, 161-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերով, 205-րդ հոդվածի 12-րդ կետով, 207-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով, 215-րդ հոդվածի 3-րդ կետով, 240-րդ հոդվածի 4-րդ կետով, 246-րդ հոդվածի 6-րդ կետով, 258-րդ հոդվածի 5-րդ կետով, 259-րդ հոդվածի 7-րդ կետով, 264-րդ հոդվածի 5-րդ և 12-րդ կետերով, 286-րդ հոդվածի 7-րդ կետով և 393-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված դեպքերում արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմինների կողմից:

2. Ապրանքները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը արգելանքի վերցնելը (արգելապահելը) ձևակերպվում է ապրանքների և դրանց վերաբերյալ փաստաթղթերի արգելանքի վերցման (արգելապահման) մասին արձանագրություն կազմելու միջոցով, որի ձևը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

3. Արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքներն ու դրանց վերաբերյալ փաստաթղթերը առգրավվում և պահպանվում են մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքով սահմանված ժամկետում:

4. Արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքները պահպանման համար տեղավորվում են ժամանակավոր պահպանման պահեստներում կամ այլ վայրերում, որոնք սահմանվում են մաքսային մարմնի կողմից և սարքավորված են այդպիսի ապրանքների պահպանման համար:

Հոդված 380. Արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքների և դրանց վերաբերյալ փաստաթղթերի պահպանման ժամկետը

1. Արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետում նշված ապրանքների, մաքսային մարմինների կողմից պահվում են 30 օրացուցային օր, իսկ արագ փչացող ապրանքները՝ 24 ժամ:

2. Սույն Օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերին համապատասխան մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը մաքսային մարմինների կողմից պահվում են 3 օրացուցային օր:

3. Արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքների և դրանց վերաբերյալ փաստաթղթերի պահպանման ժամկետը հաշվարկվում է դրանք արգելանքի վերցնելու (արգելապահելու) օրվանից:

4. Սույն հոդվածի կիրառման նպատակներով անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել արագ փչացող ապրանքների ցանկը:

Հոդված 381. Արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը վերադարձնելը

1. Արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը վերադարձվում են հայտարարատուներին, իսկ եթե ապրանքների մաքսային հայտարարագրում չի կատարվել, ապա՝ ապրանքների սեփականատերերին, իսկ այն դեպքում, երբ սեփականատերը օտարերկրյա անձ է, կամ մաքսային մարմինը ապրանքների սեփականատիրոջ մասին տեղեկություններ չունի, ապա՝ այն անձանց, որոնց տիրապետման տակ ապրանքները գտնվել են արգելանքի վերցման (արգելապահման) պահին (այսուհետ սույն գլխում՝ հայտարարատու կամ այլ անձինք)՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

2. Միության մաքսային տարածք ժամանման ժամանակ արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքները, որոնց մասով սույն Օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան մաքսային մարմնի կողմից որոշում է կայացվել Միության մաքսային տարածք դրանց ներմուծման արգելքի վերաբերյալ, և դրանց վերաբերյալ փաստաթղթերը հայտարարատուին կամ այլ անձանց վերադարձվում են Միության մաքսային տարածքից հետադարձ արտահանման համար կամ ապրանքների բացթողումից հետո՝ սույն Օրենսգրքին համապատասխան:

3. Միության մաքսային տարածքից մեկնման ժամանակ արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքները, որոնց մասով սույն Օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան մաքսային մարմնի կողմից որոշում է կայացվել Միության մաքսային տարածքից դրանց արտահանման արգելքի վերաբերյալ, և դրանց վերաբերյալ փաստաթղթերը հայտարարատուին կամ այլ անձանց վերադարձվում են Միության մաքսային տարածքում օգտագործման համար, եթե այդ ապրանքների տիրապետումը թույլատրվում է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի մաքսային մարմնի կողմից արգելանքի են վերցվել (արգելապահվել են) ապրանքները:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում չնշված դեպքերում արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքները մաքսային մարմնի կողմից հայտարարատուին են վերադարձվում դրանց բացթողումից հետո:

5. Ապրանքների մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնությունների կատարման անհրաժեշտության դեպքում այդպիսի մաքսային գործառնություններ կատարելու իրավասություն ունեցող անձի հարցման հիման վրա ապրանքի հետ միասին արգելանքի վերցված (արգելապահված) փաստաթղթերը մաքսային մարմնի կողմից վերադարձվում են այդ անձին մինչև ապրանքների բացթողումը:

6. Արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման), փոխաբեռնման (բեռնման, դատարկման) և պահպանման հետ կապված ծախսերը փոխհատուցվում են սույն հոդվածում նշված այն անձանց կողմից, ում ապրանքները փաստացի վերադարձվում են այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան, որի մաքսային մարմնի կողմից արգելանքի են վերցվել (արգելապահվել են) այդ ապրանքները:

Հոդված 382. Արգելանքի վերցված (արգելապահված) այն ապրանքների հետ կապված գործողությունները, որոնց պահպանման ժամկետը լրացել է

1. Մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցված (արգելապահված) և սույն Օրենսգրքի 381-րդ հոդվածում նշված անձանց կողմից սույն Օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ժամկետում չպահանջված ապրանքները ենթակա են իրացման, եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ:

2. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին կետում նշված արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման), փոխաբեռնման (բեռնման, դատարկման), պահպանման հետ կապված ծախսերը, դրանց իրացման նախապատրաստման և իրացման հետ կապված այլ ծախսերը գերազանցում են դրանց արժեքը, ինչպես նաև այն անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, որի մաքսային մարմնի կողմից արգելանքի են վերցվել (արգելապահվել են) ապրանքները, այդպիսի ապրանքները ենթակա են օգտագործման կամ ոչնչացման՝ այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի մաքսային մարմնի կողմից արգելանքի են վերցվել (արգելապահվել են) այդ ապրանքները:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ապրանքների իրացումը, օգտագործումը կամ ոչնչացումը, ինչպես նաև այդպիսի ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման), փոխաբեռնման (բեռնման, դատարկման), պահպանման հետ կապված ծախսերի, դրանց իրացման նախապատրաստման, իրացման կամ ոչնչացման հետ կապված այլ ծախսերի հաշվարկը իրականացվում են այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի մաքսային մարմնի կողմից արգելանքի են վերցվել (արգելապահվել են) այդ ապրանքները՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքով սահմանված առանձնահատկությունները:

4. Սույն Օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ժամկետում հայտարարատուների կամ այլ անձանց կողմից չպահանջված՝ արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման), փոխաբեռնման (բեռնման, դատարկման) և պահպանման հետ կապված ծախսերը, դրանց իրացման նախապատրաստման և իրացման հետ կապված այլ ծախսերը փոխհատուցվում են նշված ապրանքների իրացումից ստացված գումարների հաշվին՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 383-րդ հոդվածի 1-ին կետը՝ այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի մաքսային մարմնի կողմից արգելքի են վերցվել (արգելապահվել են) այդ ապրանքները:

5. Ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման), փոխաբեռնման (բեռնման, դատարկման) և պահպանման հետ կապված ծախսերը, դրանց օգտագործման կամ ոչնչացման հետ կապված այլ ծախսերը սույն հոդվածի 2-րդ կետում նշված դեպքերում փոխհատուցվում են հայտարարատուի կամ այլ անձանց կողմից: Նշված անձանց բացակայության դեպքում և այլ դեպքերում, եթե դա սահմանված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի մաքսային մարմնի կողմից արգելանքի են վերցվել (արգելապահվել են) այդ ապրանքները), նշված ծախսերը փոխհատուցվում են այդ անդամ պետության բյուջեի միջոցների հաշվին:

6. Արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքները՝ դրանց իրացումից կամ այլ օգտագործման համար փոխանցումից հետո, ինչպես նաև այդ ապրանքների ոչնչացման արդյունքում առաջացած թափոնները ձեռք են բերում

Միության ապրանքների կարգավիճակ:

Հոդված 383. Արգելանքի վերցված (արգելապահված) այն ապրանքների իրացումից ստացված գումարների տնօրինումը, որոնց պահպանման ժամկետը լրացել է

1. Սույն Օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետում նշված ապրանքների իրացումից ստացված գումարներից պահվում են առաջին հերթին՝ այդ ապրանքները արգելանքի վերցնելու (արգելապահելու) օրվա դրությամբ հաշվարկված չափով ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարները, որոնք վճարման ենթակա կլինեին արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում, երկրորդ հերթին՝ արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման), փոխաբեռնման (բեռնման, դատարկման), պահպանման և իրացման հետ կապված ծախսերը:

2. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման), փոխաբեռնման (բեռնման, դատարկման), պահպանման հետ կապված ծախսերի, դրանց իրացման նախապատրաստման և իրացման հետ կապված այլ ծախսերի մարման կարգը՝ սույն Օրենսգրքի 382-րդ հոդվածի 1-ին կետում նշված ապրանքների իրացումից ստացված գումարներից:

3. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պահումները հաշվի առնելով հաշվարկված՝ արգելանքի վերցված (արգելապահված) ապրանքների իրացումից ստացված գումարները վերադարձվում են հայտարարատուներին, իսկ եթե ապրանքների հայտարարագրում չի իրականացվել, ապա՝ ապրանքների սեփականատերերին՝ մաքսային մարմնում նրանց մասին տեղեկությունների առկայության դեպքում և պայմանով, որ այդ անձինք դիմեն մաքսային մարմիններ այդպիսի ապրանքների իրացումից ստացված դրամական միջոցների ստացման օրվան հաջորդող օրվանից 3 տարվա ընթացքում՝ այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի մաքսային մարմնի կողմից արգելանքի են վերցվել (արգելապահվել են) ապրանքները:

4. Մաքսային մարմինները նշված անձանց ծանուցում են ապրանքների իրացումից ստացված՝ վերադարձման ենթակա գումարների առկայության մասին:

Գլուխ 52

Մաքսային մարմինների կողմից ձեռնարկվող՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցները

Հոդված 384. Ընդհանուր դրույթներ մաքսային մարմինների կողմից ձեռնարկվող՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցների մասին

1. Ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս մաքսային մարմինները ձեռնարկում են մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությանն ուղղված՝ սույն Օրենսգրքի 124-րդ հոդվածով նախատեսված միջոցներ՝ բացառությամբ ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով, «ոչնչացում» մաքսային ընթացակարգով, ինչպես նաև հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպելը՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ կետը:

2. Անդամ պետությունների դիմումների հիման վրա Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցների դեպքերն ու կարգը ապրանքների այն առանձին կատեգորիաների առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է հատուկ մաքսային ընթացակարգ:

3. Մաքսային մարմինները մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցներ չեն ձեռնարկում Միության մաքսային տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների, պետությունների՝ միջազգային կազմակերպություններին կից ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների, այլ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների պաշտոնական օգտագործման համար նախատեսված ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելիս:

4. Մաքսային մարմինների կողմից ձեռնարկվող՝ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցներով չի բացառվում իրավատիրոջ՝ պաշտպանության ցանկացած այլ միջոց կիրառելու իրավունքը՝ անդամ պետությունների օրենսդրությանը և երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան:

5. Անդամ պետության մաքսային մարմինները միջոցներ են ձեռնարկում՝ ուղղված մտավոր սեփականության այն օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությանը, որոնք ընդգրկված են անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում և (կամ) մտավոր սեփականության օբյեկտների

մաքսային ազգային ռեեստրում, որը վարում են այդ անդամ պետության մաքսային մարմինները:

6. Այն ապրանքների մասով մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցները, որոնք պարունակում են մտավոր սեփականության այնպիսի օբյեկտներ, ինչպիսիք են անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում ընդգրկված ապրանքների ծագման տեղանունները, ձեռնարկվում են Հանձնաժողովի կողմից սահմանվող կարգով:

7. Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան կարող է սահմանվել, որ մաքսային մարմինները մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցներ են ձեռնարկում այն ապրանքների մասով, որոնք պարունակում են նշված մաքսային ռեեստրներում չընդգրկված մտավոր սեփականության օբյեկտներ:

Հոդված 385. Անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրը

1. Անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրը վարում է Հանձնաժողովը:

2. Իրավատիրոջ կամ նրա կամ մի քանի իրավատերերի շահերը ներկայացնող այլ անձի դիմումի հիման վրա անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում ընդգրկվում են յուրաքանչյուր անդամ պետությունում պահպանվող մտավոր սեփականության օբյեկտները:

Որպես մի քանի իրավատերերի շահերը ներկայացնող անձ կարող է հանդես գալ մտավոր սեփականության նույնական օբյեկտների իրավատերերից մեկը՝ մյուս իրավատերերի հետ պայմանավորվածությամբ:

3. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օբյեկտները, ապրանքային նշանները, սպասարկման նշանները և ապրանքների ծագման տեղանունները դասվում են մտավոր սեփականության այն օբյեկտների շարքին, որոնք կարող են ընդգրկվել անդամ պետությունների մտավոր սեփականության միասնական մաքսային ռեեստրում:

4. Այն իրավատերը, որը բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված կամ մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների հետ այլ գործողություններ կատարելիս կարող է տեղի ունենալ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով և ակտերով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իր իրավունքների խախտում, իրավունք ունի դիմում ներկայացնելու մտավոր սեփականության օբյեկտը անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում ընդգրկելու մասին (այսուհետ սույն գլխում՝ դիմում):

5. Դիմումը Հանձնաժողով է ներկայացվում մտավոր սեփականության օբյեկտների մեկ տեսակի վերաբերյալ:

Միության մաքսային տարածքում մշտական ներկայացուցչություն չունեցող իրավատիրոջ անունից դիմումը կարող է ներկայացվել անդամ պետություններից որևէ մեկի տարածքում մշտական գտնվելու վայր ունեցող (գրանցված) անձանց միջոցով:

6. Դիմումին կցվում են փաստաթղթեր, որոնք հաստատում են յուրաքանչյուր անդամ պետությունում մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների առկայությունը (վկայականներ, պայմանագրեր, այդ թվում՝ իրավունքների փոխանցման և լիցենզային, այլ փաստաթղթեր, որոնք իրավատերը կամ իրավատիրոջ (մի քանի իրավատերերի) շահերը ներկայացնող անձը կարող է յուրաքանչյուր անդամ պետությունում, դրա օրենսդրությանը համապատասխան, ներկայացնել որպես մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իր իրավունքների հավաստում), ինչպես նաև դիմումի մեջ նշելու ենթակա տեղեկությունները հաստատող փաստաթղթեր:

Դիմումին կարող են կցվել ապրանքների նմուշներ, որոնք, ըստ իրավատիրոջ կամ իրավատիրոջ (մի քանի իրավատերերի) շահերը ներկայացնող անձի, կարող են ծառայել որպես մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ նրա իրավունքների խախտման փաստի հաստատում:

7. Եթե դիմումը ներկայացվում է իրավատիրոջ (մի քանի իրավատերերի) շահերը ներկայացնող անձի կողմից, ապա դիմումին կցվում է նաև իրավատիրոջ (մի քանի իրավատերերի) կողմից այդ անձին տրված լիազորագիրը (լիազորագրերը): Լիազորագիրը (լիազորագրերը) պետք է գործի Միության ամբողջ տարածքում:

Եթե անդամ պետությունների տարածքներում մտավոր սեփականության նույնական օբյեկտների նկատմամբ իրավունքները պատկանում են տարբեր իրավատերերի, դիմումին պետք է կցվեն իրավատերերից յուրաքանչյուրի կողմից տրված լիազորագրերը:

8. Դիմումը և դրան կցվող փաստաթղթերը ներկայացվում են ռուսերենով կամ այլ լեզվով: Փաստաթղթերն այլ լեզվով ներկայացնելու դեպքում դիմումին կից ներկայացվում է դրանց ռուսերեն թարգմանությունը:

9. Դիմումի հետ միաժամանակ ներկայացվում է իրավատիրոջ (մի քանի իրավատերերի)՝ այն գույքային վնասը հատուցելու պարտավորությունը, որը կարող է պատճառվել ապրանքների հայտարարատուին, սեփականատիրոջը, ստացողին կամ այլ անձանց՝ պայմանավորված ապրանքների բացթողման կասեցմամբ:

Եթե անդամ պետությունների տարածքներում մտավոր սեփականության նույնական օբյեկտների նկատմամբ իրավունքները պատկանում են տարբեր իրավատերերի, պետք է ներկայացվեն յուրաքանչյուր իրավատիրոջ՝ գույքային վնասը հատուցելու պարտավորությունները:

10. Հանձնաժողովի կողմից սահմանվում է անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրի վարման կանոնակարգը, որն իր մեջ ներառում է դիմումի ձևակերպմանը և ուսումնասիրմանը, ներկայացվող տեղեկությունների և փաստաթղթերի կազմին ներկայացվող պահանջները, դիմումի ուսումնասիրման ժամկետը և կարգը, ինչպես նաև մտավոր սեփականության օբյեկտներն այդպիսի ռեեստրում ընդգրկման, այդ օբյեկտները դրանից հանելու, դրանում փոփոխություններ (լրացումներ) կատարելու, մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավատերերի իրավունքների պաշտպանության սահմանված ժամկետի երկարաձգման կարգը, մտավոր սեփականության օբյեկտները անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում ընդգրկելու ժամանակ մաքսային մարմինների և Հանձնաժողովի փոխգործակցության և այդ ռեեստրի վարման կարգը (այսուհետ՝ սույն հոդվածում՝ կանոնակարգ):

11. Որպես սույն հոդվածի 9-րդ կետով նախատեսված պարտավորության կատարման երաշխիք՝ իրավատերը պարտավոր է անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում մտավոր սեփականության օբյեկտների ընդգրկման հնարավորության մասին ծանուցումն իրեն ուղարկվելու օրվանից 1 ամսվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել ապրանքների բացթողման կասեցմամբ պայմանավորված՝ անձանց գույքային վնաս պատճառելու համար պատասխանատվության ապահովագրման պայմանագիր (պայմանագրեր) կամ նշված պարտավորության կատարման ապահովումը հաստատող այլ պայմանագիր (պայմանագրեր), որոնք իրավաբանական ուժ ունեն բոլոր անդամ պետություններում:

Ընդ որում, ապահովագրական գումարը կամ պարտավորության կատարման ապահովման գումարը պետք է կազմի ոչ պակաս, քան 10 հազար եվրոյին համարժեք գումար՝ պատասխանատվության ապահովագրման պայմանագիրը (պայմանագրերը) կամ այլ պայմանագիր (պայմանագրեր) կնքելու կամ այդպիսի պայմանագրերում փոփոխություններ կատարելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Իրավատիրոջ (մի քանի իրավատերերի) շահերը մաքսային մարմիններում ներկայացնելու համար պատշաճ կերպով ձևակերպված լիազորագրի (լիազորագրերի) կամ այդպիսի լիազորությունները հաստատող այլ փաստաթղթի առկայության դեպքում սույն հոդվածի 9-րդ կետում նշված պարտավորությունը և սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված պայմանագրերը կարող են ձևակերպվել և ներկայացվել իրավատիրոջ (մի քանի իրավատերերի) շահերը ներկայացնող անձի կողմից:

12. Սույն հոդվածի 11-րդ կետի առաջին պարբերությամբ նախատեսված պայմանագիրը (պայմանագրերը) չներկայացնելու դեպքում մտավոր սեփականության օբյեկտները ենթակա չեն անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում ընդգրկման, ինչի մասին դիմումատուն ծանուցվում է կանոնակարգով նախատեսված կարգով և ժամկետներում:

13. Մտավոր սեփականության օբյեկտները անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում ընդգրկելու համար վճար չի գանձվում:

14. Անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում պարունակվող տեղեկությունները տեղադրվում են Ինտերնետ ցանցում՝ Միության և մաքսային մարմինների պաշտոնական կայքերում:

Հոդված 386. Մտավոր սեփականության օբյեկտների ազգային մաքսային ռեեստրները

1. Անդամ պետությունների մաքսային մարմինները վարում են մտավոր սեփականության այն օբյեկտների ազգային մաքսային ռեեստրներ, որոնք այդ անդամ պետությունների տարածքներում ենթակա են մաքսային մարմինների կողմից պաշտպանության:

2. Իրավատիրոջ կամ իրավատիրոջ (մի քանի իրավատերերի) շահերը ներկայացնող անձի դիմումի հիման վրա մտավոր սեփականության օբյեկտների ազգային մաքսային ռեեստրներում ընդգրկվում են մտավոր սեփականության այն օբյեկտները, որոնց նկատմամբ իրավունքները պահպանվում են այն անդամ պետությունում, որի մաքսային մարմինը վարում է այդ մաքսային ռեեստրը:

3. Մտավոր սեփականության օբյեկտների ազգային մաքսային ռեեստրներում մտավոր սեփականության օբյեկտների ընդգրկման պայմանները և կարգը, ինչպես նաև այդ ռեեստրների վարման կարգը սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

Հոդված 387. Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների՝ մաքսային մարմինների կողմից պաշտպանության ժամկետը

1. Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների՝ մաքսային մարմինների կողմից պաշտպանության ժամկետը սահմանվում է մտավոր սեփականության օբյեկտները անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում ընդգրկելու ժամանակ՝ հաշվի առնելով դիմումի մեջ իրավատիրոջ կողմից նշված ժամկետը, ինչպես նաև դիմումին կցվող փաստաթղթերի գործողության ժամկետները, բայց չի կարող լինել այդպիսի ռեեստրում ընդգրկվելու օրվանից 2 տարուց ավելի:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ժամկետը երկարաձգվում է իրավատիրոջ կամ իրավատիրոջ (մի քանի իրավատերերի) շահերը ներկայացնող անձի դիմումի հիման վրա՝ բազմակի անգամ առանց սահմանափակման, բայց ամեն անգամ 2 տարվանից ոչ ավելի ժամկետով՝ պայմանով, որ պահպանվեն սույն գլխով նախատեսված պահանջները:

3. Մտավոր սեփականության օբյեկտները անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների ազգային մաքսային ռեեստրներում ընդգրկելու ժամանակ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների՝ մաքսային մարմինների կողմից պաշտպանության ժամկետը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

4. Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների՝ մաքսային մարմինների կողմից պաշտպանության ժամկետը չի կարող գերազանցել մտավոր սեփականության համապատասխան օբյեկտի նկատմամբ իրավատիրոջ բացառիկ իրավունքի գործողության ժամկետը:

Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների՝ մաքսային մարմինների կողմից պաշտպանելու ժամկետը, որը սահմանվում է անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում ընդգրկելու ժամանակ, չի կարող գերազանցել այն անդամ պետությունում մտավոր սեփականության օբյեկտի իրավական պահպանման ժամկետը, որտեղ այդ ժամկետը լրանում է ավելի վաղ:

Գլուխ 53

Մաքսային մարմինների կողմից նշանակվող մաքսային փորձաքննություն

Հոդված 388. Սահմանումները

Սույն գլխի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

«մաքսային փորձագետի (փորձագետի) եզրակացություն»՝ մաքսային փաստաթուղթ, որը պարունակում է անցկացված հետազոտությունների և (կամ) փորձարկումների արդյունքներ և մաքսային փորձաքննության եզրահանգումներ՝ առաջադրված հարցերին պատասխանների ձևով.

«նմուշ»՝ ապրանքի միավոր, որը համապատասխանում է ապրանքի ամբողջ խմբաքանակի կառուցվածքին, կազմին և հատկանիշներին, կամ եզակի օբյեկտ (ապրանք՝ ապրանքի խմբաքանակի բացակայության դեպքում), որի ընտրությունը, հետագա ուսումնասիրության նպատակներով, արձանագրվում է սահմանված կարգով.

«փորձանմուշ»՝ ապրանքի մաս, որը բնութագրում է ներկայացվող և ուսումնասիրվող ապրանքի ողջ ծավալի կազմը և հատկանիշները և որի ընտրությունն անցկացվում է սահմանված կարգով.

«մաքսային փորձաքննություն»՝ հետազոտություններ և փորձարկումներ, որոնք անցկացվում են մաքսային փորձագետների (փորձագետների) կողմից՝ մաքսային մարմիններին վերապահված խնդիրների լուծման համար մասնագիտական և (կամ) գիտական գիտելիքների օգտագործմամբ.

«մաքսային փորձագետ»՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձ, որը լիազորված է անցկացնելու մաքսային փորձաքննություն և ունի անհրաժեշտ մասնագիտական և (կամ) գիտական գիտելիքներ.

«լիազորված մաքսային մարմին»՝ մաքսային մարմին, որը, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, լիազորված է մաքսային փորձաքննություն անցկացնելու համար:

Հոդված 389. Մաքսային փորձաքննություն նշանակելը և անցկացնելը

1. Մաքսային փորձաքննություն նշանակվում է մաքսային մարմնի կողմից այն դեպքում, երբ մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների կատարման և (կամ) մաքսային հսկողության իրականացման ժամանակ առաջացող հարցերը պարզաբանելու համար պահանջվում են մասնագիտական և (կամ) գիտական գիտելիքներ:

2. Մաքսային փորձաքննությունն անցկացվում է լիազորված մաքսային մարմնի կողմից:

Լիազորված մաքսային մարմնի կողմից մաքսային փորձաքննություն անցկացնելու անհնարինության դեպքում, իսկ եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ, ապա նաև այլ դեպքերում մաքսային փորձաքննությունը կարող է նշանակվել անդամ պետության փորձագիտական կազմակերպության (փորձագետի) կողմից անցկացնելու նպատակով՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

3. Մաքսային փորձաքննությունը նշանակվում է ապրանքների, մաքսային, տրանսպորտային (փոխադրման), առևտրային և այլ փաստաթղթերի, ինչպես նաև այդպիսի ապրանքների և փաստաթղթերի նույնականացման միջոցների մասով:

4. Լիազորված մաքսային մարմնի կողմից անցկացվում են ապրանքագիտական, նյութագիտական, տեխնոլոգիական, քրեագիտական, քիմիական և այլ տեսակի փորձաքննություններ, որոնց անցկացման անհրաժեշտություն է առաջանում:

5. Մաքսային փորձաքննություն նշանակելու մասին մաքսային մարմնի որոշումն ընդունվում է մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձի կողմից և ձևակերպվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

Մաքսային փորձաքննություն նշանակելու մասին մաքսային մարմնի որոշմանը կցվում են ապրանքների փորձանմուշները և (կամ) նմուշները, առգրավված փաստաթղթերը և (կամ) նույնականացման միջոցները, մաքսային փորձաքննության անցկացման համար անհրաժեշտ այլ նյութեր և փաստաթղթեր:

6. Մաքսային փորձաքննության կատարումը կարող է մերժվել հետևյալ հիմքերով՝

1) մաքսային փորձաքննություն նշանակելու մասին որոշման, մաքսային փորձաքննության անցկացման համար ներկայացված ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրության ակտի, փաստաթղթերի, նույնականացման միջոցների առգրավման մասին ակտի ոչ պատշաճ ձևակերպումը.

2) ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների, դրանց քանակի անհամապատասխանությունը ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրության ակտում նշված տեղեկություններին.

3) փաթեթվածքի խախտումը, փաթեթվածքի անհամապատասխանությունը ապրանքերի փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրության ակտում նշված նկարագրությանը.

4) լիազորված մաքսային մարմնում անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի, մաքսային փորձաքննության անցկացման համար հատուկ պայմանների կամ պահանջվող որակավորմամբ մաքսային փորձագետի բացակայությունը.

5) այն տեղեկատվության, փաստաթղթերի բացակայությունը, որոնք թույլ են տալիս անցկացնել մաքսային փորձաքննություն առաջադրված հարցերի մասով.

6) մաքսային փորձաքննության անցկացման համար ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ոչ բավարար լինելը.

7) մաքսային փորձաքննություն նշանակած մաքսային մարմնի՝ մաքսային փորձաքննության անցկացման ընթացքում ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների, փաստաթղթերի, նույնականացման միջոցների մասնակի կամ լրիվ ոչնչացման, վնասման արգելքի առկայությունը, իսկ հետազոտության և (կամ) փորձարկման իրականացումը հնարավոր է միայն վնասող մեթոդների օգտագործմամբ:

7. Լիազորված մաքսային մարմինը՝ մաքսային փորձաքննություն նշանակելու մասին մաքսային մարմնի որոշումը գրանցելուց հետո 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ որոշում է ընդունում մաքսային փորձաքննություն անցկացնելու կամ դրա անցկացումը մերժելու մասին՝ սույն հոդվածի 6-րդ կետում նշված հիմքերով:

Մաքսային փորձաքննության անցկացումը մերժելու մասին որոշման մեջ նշվում են այդ մերժման պատճառները:

Մաքսային փորձաքննության անցկացումը մերժելու մասին որոշումը՝ ներկայացված նյութերի, փաստաթղթերի, ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների կցմամբ, ուղարկվում է մաքսային փորձաքննություն նշանակած մաքսային մարմին:

8. Մաքսային փորձաքննություն նշանակած մաքսային մարմինը մաքսային փորձաքննություն նշանակելու մասին որոշումն ընդունելու օրվան հաջորդող օրվանից ոչ ուշ հայտարարատուին կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի ծանուցում է մաքսային փորձաքննություն նշանակելու մասին՝ մաքսային փորձաքննություն նշանակելու մասին որոշման պատճենը նրան հանձնելու (ուղարկելու) միջոցով:

9. Մաքսային փորձաքննության անցկացման ծախսերը փոխհատուցվում են այն անդամ պետության բյուջեի հաշվին, որի մաքսային մարմնի կողմից նշանակվել է մաքսային փորձաքննությունը՝ բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերության:

Սույն հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան մաքսային փորձաքննություն նշանակելու դեպքում այդ մաքսային փորձաքննության անցկացման առնչությամբ առաջացած ծախսերը փոխհատուցվում են այն անձի միջոցների հաշվին, որի ապրանքների և (կամ) փաստաթղթերի մասով մաքսային փորձաքննությունն է անցկացվում, եթե մաքսային փորձաքննության անցկացման արդյունքներով հայտնաբերվել են մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի խախտումներ:

10. Եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ, ապա լիազորված մաքսային մարմնի կողմից կարող են անցկացվել այլ փորձաքննություններ (հետազոտություններ)՝ այդ օրենսդրությանը համապատասխան սահմանված կարգով:

Հոդված 390. Մաքսային փորձաքննության անցկացման ժամկետը և կարգը

1. Մաքսային փորձաքննությունն անցկացվում է մաքսային փորձագետի (փորձագետի) կողմից մաքսային փորձաքննության անցկացման համար անհրաժեշտ նյութերը և փաստաթղթերն ընդունելու օրվանից 20 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ սույն հոդվածով:

Մաքսային փորձաքննությունը նշված ժամկետում ավարտելն անհնարին լինելու դեպքում մաքսային փորձաքննության անցկացման ժամկետը կարող է երկարաձգվել՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

2. Մաքսային փորձաքննության անցկացման ժամկետը կասեցվում է լիազորված մաքսային մարմնի՝ իրեն լրացուցիչ նյութեր, փաստաթղթեր, ապրանքների փորձանմուշներ և (կամ) նմուշներ տրամադրելու վերաբերյալ մաքսային փորձաքննությունը նշանակած մաքսային մարմնին ներկայացվող միջնորդության առկայության դեպքում, ինչպես նաև անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող այլ դեպքերում:

Ժամկետը, որով կասեցվում է մաքսային փորձաքննության իրականացումը, ինչպես նաև այդ կասեցման կարգը

սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

3. Լիազորված մաքսային մարմինների կողմից մաքսային փորձաքննության անցկացման կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 391. Մաքսային փորձագետի (փորձագետի) եզրակացությունը

1. Մաքսային փորձաքննության անցկացման արդյունքները ձևակերպվում են ըստ մաքսային փորձագետի (փորձագետի) եզրակացության:

2. Մաքսային փորձագետի (փորձագետի) եզրակացության մեջ նշվում են՝

1) մաքսային փորձաքննության անցկացման վայրը, դրա մեկնարկի ու ավարտի ամսաթվերը.

2) մաքսային փորձաքննություն անցկացնելու հիմքը.

3) մաքսային փորձաքննություն անցկացրած մաքսային փորձագետի (փորձագետի) ազգանունը, անունը և հայրանունը (առկայության դեպքում) և նրա որակավորումը.

4) մաքսային փորձագետի (փորձագետի) ստորագրությամբ հաստատված տեղեկություններն այն մասին, որ նա նախազգուշացվել է մաքսային փորձաքննություն անցկացնելիս մաքսային փորձագետի (փորձագետի) ի սկզբանե կեղծ եզրակացություն տալու համար անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության մասին.

5) մաքսային փորձագետին (փորձագետին) առաջադրված հարցերը.

6) մաքսային փորձաքննություն կատարելու համար մաքսային փորձագետին (փորձագետին) տրամադրված փաստաթղթերի, նյութերի, ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների, առգրավված փաստաթղթերի կամ նույնականացման միջոցների ցանկը.

7) հետազոտությունների բովանդակությունն ու արդյունքները՝ նշելով կիրառված մեթոդները, օգտագործված սարքերն ու սարքավորումները, հետազոտությունների արդյունքների գնահատականը, առաջադրված հարցերի վերաբերյալ եզրահանգումներն ու դրանց հիմնավորումը:

3. Մաքսային փորձագետի (փորձագետի) եզրակացությունը ստորագրվում է մաքսային փորձագետի (փորձագետի) կողմից: Եթե մաքսային փորձաքննությունն անցկացվել է մի քանի մաքսային փորձագետների (փորձագետների) մասնակցությամբ, ապա մաքսային փորձագետի (փորձագետի) եզրակացությունը ստորագրվում է բոլոր մաքսային փորձագետների (փորձագետների) կողմից: Մաքսային փորձագետի (փորձագետի)՝ թղթային կրիչով ձևակերպված եզրակացությունը հաստատվում է նաև լիազորված մաքսային մարմնի կնիքի դրոշմվածքով:

Մաքսային փորձագետի (փորձագետի) եզրակացությունը մեկնաբանող նյութերն ու փաստաթղթերը կցվում են այդ եզրակացությանը, հաստատվում մաքսային փորձագետի (փորձագետի) ստորագրությամբ, իսկ եթե մաքսային փորձաքննությունն անցկացվել է մի քանի մաքսային փորձագետների (փորձագետների) մասնակցությամբ, ապա այդ նյութերն ու փաստաթղթերը հաստատվում են մի քանի մաքսային փորձագետների (փորձագետների) ստորագրություններով: Թղթային կրիչով ձևակերպված նյութերն ու փաստաթղթերը նաև հաստատվում են լիազորված մաքսային մարմնի կնիքի դրոշմվածքով և այդ եզրակացության բաղկացուցիչ մասն են կազմում:

4. Մաքսային փորձագետի (փորձագետի) եզրակացությունն ուղարկվում է մաքսային փորձաքննությունը նշանակած մաքսային մարմին:

Մաքսային փորձագետի (փորձագետի) եզրակացությունը թղթային կրիչով փաստաթղթի ձևով ձևակերպելու դեպքում այդ եզրակացությունը ձևակերպվում է 3 օրինակից, որոնցից մեկը մնում է լիազորված մաքսային մարմնի մոտ, իսկ մյուսները ուղարկվում են մաքսային փորձաքննությունը նշանակած մաքսային մարմին:

5. Մեկ անդամ պետությունում անցկացված մաքսային փորձաքննության արդյունքները մեկ այլ անդամ պետության մաքսային մարմինների կողմից ճանաչելու դեպքերը և կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Հոդված 392. Լրացուցիչ և կրկնակի մաքսային փորձաքննություններ

1. Նախկինում հետազոտված ապրանքների, մաքսային, տրանսպորտային (փոխադրման), առևտրային և այլ փաստաթղթերի, նույնականացման միջոցների առնչությամբ նոր հարցեր առաջանալու դեպքում մաքսային մարմնի կողմից կարող է նշանակվել լրացուցիչ մաքսային փորձաքննություն:

Լրացուցիչ մաքսային փորձաքննությունը նշանակվում է անդամ պետության այն լիազորված մաքսային մարմնին կամ փորձագիտական կազմակերպությանը (փորձագետին), որի կողմից իրականացվել է մաքսային փորձաքննությունը:

2. Եթե հայտարարատուն համաձայն չէ մաքսային, այդ թվում՝ լրացուցիչ փորձաքննության արդյունքների հետ, ապա մաքսային մարմնի կողմից կարող է նշանակվել կրկնակի մաքսային փորձաքննություն:

Կրկնակի մաքսային փորձաքննությունը նշանակվում է այն նույն ապրանքները, մաքսային, տրանսպորտային (փոխադրման), առևտրային և այլ փաստաթղթերը, նույնականացման միջոցներն ուսումնասիրելու և այն նույն հարցերը լուծելու համար, որոնք ուսումնասիրվել են նախկինում անցկացված մաքսային փորձաքննության ընթացքում:

Կրկնակի մաքսային փորձաքննություն կարող է նշանակվել ինչպես անդամ պետության այն լիազորված մաքսային մարմնին կամ փորձագիտական կազմակերպությանը, որի կողմից անցկացվել է մաքսային փորձաքննությունը, այնպես

էլ անդամ պետության այլ լիազորված մաքսային մարմնին կամ այլ փորձագիտական կազմակերպությանը:

Կրկնակի մաքսային փորձաքննության կատարումը հանձնարարվում է 2 և ավելի մաքսային փորձագետներից (փորձագետներից) կազմված Հանձնաժողովին՝ բացառությամբ մաքսային, այդ թվում՝ լրացուցիչ փորձաքննություն անցկացրած մաքսային փորձագետի (փորձագետի): Մաքսային, այդ թվում՝ լրացուցիչ փորձաքննություն անցկացրած մաքսային փորձագետները (փորձագետները) կարող են ներկա գտնվել կրկնակի մաքսային փորձաքննության անցկացման ժամանակ և Հանձնաժողովին անհրաժեշտ պարզաբանումներ տալ:

3. Լրացուցիչ և կրկնակի մաքսային փորձաքննություններ անցկացնելու դեպքում մաքսային փորձագետին (փորձագետին) պարտադիր կերպով տրամադրվում են նախկինում կատարված մաքսային փորձաքննության արդյունքները:

Հոդված 393. Ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրությունը, մաքսային, տրանսպորտային (փոխադրման), առևտրային և այլ փաստաթղթերի, նույնականացման միջոցների առգրավումը՝ մաքսային փորձաքննության անցկացման նպատակով

1. Մաքսային փորձաքննության անցկացման համար ապրանքների փորձանմուշները և (կամ) նմուշներն ընտրվում են մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից:

2. Մասնագիտական գիտելիքների օգտագործման և տեխնիկական միջոցների կիրառման անհրաժեշտության դեպքում ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրությունը կարող է կատարվել մաքսային փորձագետի մասնակցությամբ:

3. Ապրանքների փորձանմուշները և (կամ) նմուշներն ընտրվում են նվազագույն քանակությամբ, որն ապահովում է դրանց հետազոտության հնարավորությունը՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրություն կատարելու արդյունքներով կազմվում է ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրության ակտ, որի ձևը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրության ակտը կազմվում է 3 օրինակից, որոնցից մեկը ենթակա է հայտարարատուին հանձնման (ուղարկման), նրա բացակայության դեպքում՝ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի, եթե այդպիսին սահմանվել է, իսկ միջազգային փոստային առաքանիներով տեղափոխվող ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրության դեպքում՝ փոստային կապի նշանակված օպերատորին:

5. Մաքսային մարմինների պաշտոնատար անձինք ընտրում են ապրանքների փորձանմուշները և (կամ) նմուշները հայտարարատուի ներկայությամբ, նրա բացակայության դեպքում՝ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի ներկայությամբ, եթե այդպիսին սահմանվել է, իսկ միջազգային փոստային առաքանիներով տեղափոխվող ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրության դեպքում՝ փոստային կապի նշանակված օպերատորի ներկայացուցչի ներկայությամբ:

Ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրության ժամանակ մաքսային մարմնի պահանջով նշված անձինք պարտավոր են աջակցություն ցուցաբերել մաքսային մարմինների պաշտոնատար անձանց, այդ թվում՝ իրենց հաշվին իրականացնել անհրաժեշտ բեռնային և այլ գործողություններ:

6. Ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրությունը կարող է իրականացվել մաքսային մարմինների պաշտոնատար անձանց կողմից հայտարարատուի կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի բացակայությամբ՝ սույն Օրենսգրքի 328-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում՝ 2 ընթերակաների ներկայությամբ, իսկ սույն Օրենսգրքի 328-րդ հոդվածի 6-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքում՝ փոստային կապի նշանակված օպերատորի ներկայացուցչի ներկայությամբ, իսկ նրա բացակայության դեպքում՝ 2 ընթերակաների ներկայությամբ:

7. Մաքսային մարմինը չի փոխհատուցում ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրության արդյունքում հայտարարատուի կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի մոտ առաջացած ծախսերը:

8. Մաքսային փորձաքննության ավարտին դրա իրականացման ընթացքում ապրանքների չօգտագործված փորձանմուշները և (կամ) նմուշները մաքսային փորձաքննություն նշանակած մաքսային մարմնի կողմից վերադարձվում են հայտարարատուին կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի, իսկ միջազգային փոստային առաքանիներով տեղափոխվող ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրության դեպքում՝ փոստային կապի նշանակված օպերատորին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ապրանքների փորձանմուշները և (կամ) նմուշները ենթակա են թաղման, ոչնչացման կամ ուտիլիզացման՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Մաքսային փորձաքննությունը նշանակած մաքսային մարմինը մաքսային փորձաքննությունն իրականացրած լիազորված մաքսային մարմնից ապրանքների փորձանմուշները և (կամ) նմուշները ստանալու օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է հայտարարատուին կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի այդ ապրանքների փորձանմուշները և (կամ) նմուշները վերադարձնելու մասին:

9. Հայտարարատուի կամ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի կողմից նշված տեղեկատվությունը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում նրանց կողմից չստացված ապրանքների փորձանմուշները և (կամ) նմուշները արգելանքի են վերցվում (արգելապահվում են) մաքսային մարմինների կողմից՝ սույն Օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան:

10. Մաքսային, տրանսպորտային (փոխադրման), առևտրային և այլ փաստաթղթերի, նույնականացման միջոցների մասով մաքսային փորձաքննության անցկացման համար այդ փաստաթղթերը և նույնականացման միջոցներն առգրավվում են մաքսային մարմինների կողմից՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով: Մաքսային, տրանսպորտային (փոխադրման), առևտրային և այլ փաստաթղթերի, նույնականացման միջոցների առգրավման վերաբերյալ կազմվում է փաստաթղթերի, նույնականացման միջոցների առգրավման մասին ակտ, որի ձևը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

11. Մաքսային փորձաքննության ավարտին մաքսային, տրանսպորտային (փոխադրման), առևտրային և այլ փաստաթղթերը մաքսային փորձաքննությունը նշանակած մաքսային մարմնի կողմից վերադարձվում են այն անձին, որից առգրավվել են այդ փաստաթղթերը:

Մաքսային փորձաքննությունը նշանակած մաքսային մարմինը մաքսային փորձաքննությունն անցկացրած լիազորված մաքսային մարմնից առգրավված փաստաթղթերը ստանալու օրվանից սկսած 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ տեղեկացնում է դրանք վերադարձնելու մասին այն անձին, որից առգրավվել են այդ փաստաթղթերը:

Հոդված 394. Մաքսային փորձագետի (փորձագետի) իրավունքներն ու պարտականությունները մաքսային փորձաքննություն անցկացնելիս

1. Մաքսային փորձաքննություն անցկացնելիս մաքսային փորձագետը (փորձագետը) իրավունք ունի՝

1) ծանոթանալու մաքսային փորձաքննության անցկացմանն առնչվող նյութերին.

2) ներգրավելու այլ մաքսային փորձագետների մաքսային փորձաքննության գործում՝ լիազորված մաքսային մարմնի ղեկավարի (պետի) համաձայնությամբ.

3) հրաժարվելու մաքսային փորձաքննություն կատարելուց նյութերը և փաստաթղթերը, ապրանքների փորձանմուշները և (կամ) նմուշները ստանալու օրվանից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում, եթե առաջադրված հարցերը դուրս են իր իրավասությունների շրջանակից, կամ պատասխաններ տալուց այն հարցերին, որոնք չեն մտնում իր իրավասությունների մեջ.

4) գրավոր պահանջելու մաքսային փորձաքննությունն անցկացնելու համար անհրաժեշտ լրացուցիչ նյութեր և փաստաթղթեր, այդ թվում՝ ապրանքների փորձանմուշներ և (կամ) նմուշներ մաքսային փորձաքննությունն անցկացնելու համար նյութերը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում.

5) հստակեցնելու իր առջև դրված հարցերը՝ իր մասնագիտական և (կամ) գիտական գիտելիքներին և հմտություններին համապատասխան.

6) ներառելու եզրահանգումներ մաքսային փորձագետի (փորձագետի) եզրակացության մեջ մաքսային մարմինների համար նշանակություն ունեցող այն հանգամանքների մասին, որոնց առնչությամբ հարցեր չեն առաջադրվել.

7) օգտվելու մասնագիտական և այլ աղբյուրներում հրապարակված գիտատեխնիկական տեղեկատվությունից.

8) օգտագործելու ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների սեփական փորձարկումների ու հետազոտությունների արդյունքները և (կամ) հետազոտական կամ փորձագիտական այլ կազմակերպությունների կողմից անցկացված՝ ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների հետազոտությունների արդյունքները:

2. Մաքսային փորձաքննություն անցկացնելիս մաքսային փորձագետը (փորձագետը) պարտավոր է՝

1) ծանոթանալ մաքսային փորձաքննությանն առնչվող նյութերին.

2) նյութերը, փաստաթղթերը, ապրանքների փորձանմուշները և (կամ) նմուշները ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում հրաժարվել մաքսային փորձաքննություն անցկացնելուց, եթե ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների քանակը բավարար չէ դրա կատարման համար.

3) նախապատրաստել մաքսային փորձագետի եզրակացությունը՝ հետազոտությունների արդյունքների ամբողջական, համակողմանի և օբյեկտիվ գնահատման հիման վրա.

4) չհրապարակել մաքսային փորձաքննության անցկացման արդյունքում ստացված տեղեկությունները և չփոխանցել դրանք երրորդ անձանց՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

5) պահպանել մաքսային փորձաքննություն անցկացնելու համար սահմանված ժամկետները:

3. Պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում մաքսային փորձագետը պատասխանատվություն է կրում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 395. Հայտարարատուի, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի իրավունքները մաքսային փորձաքննություն նշանակելիս և անցկացնելիս

1. Մաքսային փորձաքննություն նշանակելիս և անցկացնելիս հայտարարատուն, ապրանքների նկատմամբ

լիազորություններ ունեցող այլ անձն իրավունք ունեն՝

1) հիմնավորված միջնորդություն ներկայացնելու մաքսային փորձագետին լրացուցիչ հարցեր առաջադրելու մասին՝ դրանց վերաբերյալ մաքսային փորձագետի եզրակացությունն ստանալու նպատակով.

2) ստանալու մաքսային փորձագետի եզրակացությունը մաքսային փորձաքննությունը նշանակած մաքսային մարմնում.

3) ներկա գտնվելու մաքսային փորձաքննություն անցկացնելու համար մաքսային մարմինների կողմից ապրանքների փորձանմուշների և (կամ) նմուշների ընտրությանը.

4) ներկայացնելու հիմնավորված միջնորդություն կրկնակի մաքսային փորձաքննություն անցկացնելու մասին.

5) ներկայացնելու մաքսային փորձաքննություն անցկացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը և (կամ) փաստաթղթերը:

2. Հայտարարատուի, ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի միջնորդությունը բավարարելու դեպքում մաքսային փորձաքննություն նշանակած մաքսային մարմինը կայացնում է համապատասխան որոշում:

Միջնորդության բավարարումը մերժելու դեպքում մաքսային փորձաքննություն նշանակած մաքսային մարմինը տեղեկացնում է այդ մասին միջնորդությունը ներկայացրած անձին՝ նշելով մերժման պատճառները:

Հոդված 396. Համագործակցությունը փորձագիտական գործունեության բնագավառում

Մաքսային փորձաքննություններ անցկացնող լիազորված մաքսային մարմիններն իրավունք ունեն համագործակցելու փորձագիտական գործունեություն իրականացնող կազմակերպությունների և հիմնարկների հետ՝ համատեղ հետազոտությունների անցկացման, գիտական և մեթոդական տեղեկատվության փոխանակման, մաքսային փորձագետների մասնագիտական պատրաստման և որակավորման բարձրացման նպատակներով:

ԲԱԺԻՆ VIII

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ: ԼԻԱԶՈՐՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՊԵՐԱՏՈՐԸ

Գլուխ 54

Ընդհանուր դրույթներ մաքսային գործի բնագավառում գործունեության մասին

Հոդված 397. Գործունեությունը մաքսային գործի բնագավառում

1. Մաքսային գործի բնագավառում գործունեությունն անդամ պետությունների անձանց՝ որպես մաքսային ներկայացուցիչներ, մաքսային փոխադրողներ, ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողներ, մաքսային պահեստների տիրապետողներ, ազատ պահեստների տիրապետողներ և անմաքս առևտրի խանութների տիրապետողներ ծառայություններ տրամադրելու հետ կապված գործունեություն է, որը հսկվում է մաքսային մարմինների կողմից և կարգավորվում է սույն Օրենսգրքով, իսկ սույն Օրենսգրքով չկարգավորվող մասով կարգավորվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

2. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնելու իրավունք ունեն անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ստեղծված իրավաբանական անձինք, որոնք մաքսային մարմնի կողմից ընդգրկվել են համապատասխանաբար մաքսային ներկայացուցիչների ռեեստրում, մաքսային փոխադրողների ռեեստրում, ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում, մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում, ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում, անմաքս առևտրի խանութների տիրապետողների ռեեստրում (այսուհետ սույն գլխում՝ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներ):

3. Մաքսային մարմնի կողմից մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներում մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնելուն հավակնող իրավաբանական անձանց ընդգրկելու պայմանները և այդ ռեեստրներից դրանցում ընդգրկված իրավաբանական անձանց հանելու հիմքերը սահմանվում են սույն բաժնով՝ մաքսային գործի բնագավառում գործունեության յուրաքանչյուր տեսակի առնչությամբ:

4. Մաքսային մարմնի կողմից մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներում մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնելուն հավակնող իրավաբանական անձանց ընդգրկելու կարգը, այդ ռեեստրներում փոփոխություններ կատարելու կարգը, այդ ռեեստրներից դրանցում ընդգրկված իրավաբանական անձանց հանելու կարգը, ինչպես նաև այդ անձանց գործունեության կասեցման և վերսկսման հիմքերն ու կարգը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են նախատեսվել այնպիսի դեպքեր, երբ մաքսային գործի

բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներից հանելու հիմքերը, որոնք նախատեսված են սույն Օրենսգրքի 403-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-ին ենթակետերով, 408-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, 413-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, 418-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, 423-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 428-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, կարող են հիմք հանդիսանալ այդ անձանց գործունեության կասեցման համար: Այդպիսի դեպքերում անձինք ենթակա են մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներից հանման՝ սույն Օրենսգրքի 403-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-ին ենթակետերով, 408-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, 413-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, 418-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, 423-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 428-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքերով, անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված հանգամանքների ի հայտ գալուց հետո:

5. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձանց նկատմամբ դրանցում ընդգրկվելու պայմանների պահպանումը ստուգելու ժամանակ, ինչպես նաև մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներում ընդգրկված իրավաբանական անձանց գործունեության հսկողության ժամանակ կարող են կիրառվել մաքսային հսկողության ձևերը և մաքսային հսկողության իրականացումն ապահովող միջոցները, որոնք նախատեսված են սույն Օրենսգրքի VI բաժնով:

Հոդված 398. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրները

1. Մաքսային մարմինները անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող կարգով վարում են մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրները և ապահովում են դրանց տեղադրումն Ինտերնետ ցանցում՝ մաքսային մարմինների պաշտոնական կայքերում՝ առնվազն ամիսը 1 անգամ:

2. Հանձնաժողովը մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրների հիման վրա, որոնք վարում են մաքսային մարմինները, ձևավորում է մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ընդհանուր ռեեստրները և ապահովում է դրանց տեղադրումն Ինտերնետ ցանցում՝ Միության պաշտոնական կայքում՝ առնվազն ամիսը 1 անգամ:

Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ընդհանուր ռեեստրների ձևերը, դրանք ձևավորելու և վարելու կարգը, ինչպես նաև մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց՝ մաքսային մարմինների վարած ռեեստրներում պարունակվող տվյալները ներկայացնելու տեխնիկական պայմանները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Հոդված 399. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովումը

1. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովումը տրամադրվում է այն դեպքերում, երբ այդ ապահովումը մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրներում ներառվելու պայման է:

2. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովմամբ երաշխավորվում է մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի՝ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը, տույժերը, տոկոսները վճարելու պարտավորության կատարումը այն դեպքերում, երբ, սույն Օրենսգրքին համապատասխան, այդ անձի մոտ առաջանում է այդ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը կամ նա մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարողի հետ համապարտ պարտավորություն է կրում մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման մասով:

3. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովումը մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնելուն հավակնող իրավաբանական անձի կողմից տրամադրվում է այն մաքսային մարմնին, որին դիմում է ներկայացվել մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրում ընդգրկվելու վերաբերյալ, կամ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանվող այլ մաքսային մարմնի:

4. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորության կատարումն ապահովվում է սույն Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետում նշված կամ սույն Օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված եղանակներով՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարումն ապահովելու նպատակով:

5. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարումն ապահովելու համար այդ անձն իրավունք ունի ընտրելու սույն Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետում

նշված կամ անդամ պետությունների օրենսդրությամբ՝ սույն Օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան սահմանված եղանակներից ցանկացածը՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարումն ապահովելու նպատակով:

6. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարումն ապահովվում է որոշակի եղանակով (եղանակներով):

7. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել մի քանի եղանակներով՝ այդ ապահովումը տրամադրող իրավաբանական անձի ընտրությամբ՝ հաշվի առնելով սույն հոդվածի 6-րդ կետը:

8. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձի պարտավորությունների կատարման ապահովում տրամադրած իրավաբանական անձն իրավունք ունի փոխարինելու մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձի պարտավորությունների կատարման ապահովման մի եղանակը այլ եղանակով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 6-րդ կետը, եթե մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովման փոխարինվող եղանակի վրա բռնագանձում չի տարածվում՝ սույն Օրենսգրքի 11-րդ գլխին, 77-րդ և 270-րդ հոդվածներին համապատասխան:

9. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարումը պետք է անընդմեջ ապահովվի մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնելու ժամանակահատվածում, իսկ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության, այդ թվում՝ համապարտ, կատարումը սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ մինչև մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության դադարելը:

10. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարումն ապահովելու եղանակների կիրառման կարգը, ապահովման մի եղանակը մյուսով փոխարինելու կարգը, ինչպես նաև արժույթը, որով տրամադրվում է այդ ապահովումը, սահմանվում են այն անդամ պետության օրենսդրությամբ, որի մաքսային մարմնին տրամադրվում է մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովումը:

11. Եթե մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովում տրամադրելու համար պահանջվում է կատարել այդ ապահովման չափով սահմանված արտարժույթի վերահաշվարկ այն արժույթով, որը սահմանվել է անդամ պետության օրենսդրությամբ՝ սույն հոդվածի 10-րդ կետին համապատասխան, ապա այդ վերահաշվարկը կատարվում է երաշխավորության պայմանագրի կամ գույքի գրավի մասին պայմանագրի կնքման օրվա դրությամբ (այդ պայմանագրերում փոփոխություններ կատարելու ժամանակ՝ երաշխավորության պայմանագրում կամ գույքի գրավի մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ պայմանագրի կնքման օրվա դրությամբ) գործող փոխարժեքով, իսկ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման՝ այլ եղանակներով ապահովում տրամադրելու ժամանակ՝

1) մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնելուն հավակնող իրավաբանական անձին ուղարկվող՝ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրում ընդգրկվելու այլ պայմանների պահպանման մասին ծանուցումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ՝ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովում տրամադրելու ժամանակ՝ նրան համապատասխան ռեեստրում ընդգրկելու նպատակով, եթե այլ օր սահմանված չէ անդամ պետությունների օրենսդրությամբ.

2) մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի՝ ապահովման մի եղանակը մյուսով փոխարինելու մասին դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ կամ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովելու այլ եղանակ տրամադրելու ժամանակ՝ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրում իրավաբանական անձի ընդգրկման պայմանը պահպանելու նպատակով, եթե այլ օր սահմանված չէ անդամ պետությունների օրենսդրությամբ:

12. Այն դեպքում, երբ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարումն ապահովվում է անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված եղանակներով, արտարժույթի վերահաշվարկն անդամ պետության արժույթի կատարվում է այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված օրվա դրությամբ գործող փոխարժեքով, որի մաքսային մարմնին տրամադրվում է մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովումը:

13. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովումը վերադարձվում է այդ անձի մոտ մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսների վճարման՝ սահմանված ժամկետում չկատարված պարտավորության բացակայության ժամանակ հետևյալ դեպքերում՝

1) մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնելուն հավակնող իրավաբանական անձին մաքսային

գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրում ընդգրկումը մերժելը.

2) ապահովման մի եղանակը մյուսով փոխարինելը՝ սույն հոդվածի 8-րդ կետին համապատասխան.

3) մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրից իրավաբանական անձին հանելը:

14. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովումը վերադարձվում է այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որտեղ տրամադրվել է այդ ապահովումը՝ այդ պետության օրենսդրությամբ սահմանվող կարգով:

15. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորության կատարման ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը վերադարձնելու կարգն ու դեպքերը սույն Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի 2-4-րդ ենթակետերում նշված կամ սույն Օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված եղանակներից մեկով՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարումն ապահովելու նպատակով:

16. Այն դեպքում, երբ որպես մաքսային ներկայացուցիչ և (կամ) մաքսային փոխադրող գործունեություն իրականացնող (գործունեության իրականացնելուն հավակնող) իրավաբանական անձը միաժամանակ լիազորված տնտեսական օպերատոր է (հավակնում է լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն), մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովումը և (կամ) լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումը տրամադրվում են սույն Օրենսգրքի 402-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետին, 407-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետին և 436-րդ հոդվածի 12-21-րդ կետերին համապատասխան սահմանված ապահովումներից մեկի առավելագույն գումարի չափով՝ իրավաբանական անձին հետևյալ ռեեստրներում ընդգրկելու ժամանակ՝

1) մաքսային ներկայացուցիչների ռեեստր և մաքսային փոխադրողների ռեեստր.

2) մաքսային ներկայացուցիչների ռեեստր և լիազորված տնտեսական օպերատորների ռեեստր.

3) մաքսային փոխադրողների ռեեստր և լիազորված տնտեսական օպերատորների ռեեստր.

4) մաքսային ներկայացուցիչների ռեեստր, մաքսային փոխադրողների ռեեստր և լիազորված տնտեսական օպերատորների ռեեստր:

17. Որպես մաքսային ներկայացուցիչ և (կամ) մաքսային փոխադրող գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման՝ սույն հոդվածի 16-րդ կետին համապատասխան տրամադրված ապահովմամբ ապահովում է մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսները վճարելու պարտավորության կատարումը՝ սույն Օրենսգրքի սույն հոդվածի 2-րդ կետին և 436-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

Հոդված 400. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց պատասխանատվությունը

Մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի և ակտերի պահանջները չպահպանելու համար մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք պատասխանատվություն են կրում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Գլուխ 55

Մաքսային ներկայացուցիչը

Հոդված 401. Մաքսային ներկայացուցչի գործունեությունը

1. Մաքսային ներկայացուցիչը հայտարարատուի կամ այլ շահագրգիռ անձանց անունից և նրանց հանձնարարությամբ իրականացնում է մաքսային գործառնություններ այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմնի կողմից նա ընդգրկվել է մաքսային ներկայացուցիչների ռեեստրում՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերին և ակտերին համապատասխան:

2. Մաքսային ներկայացուցչի հարաբերությունները հայտարարատուների կամ այլ շահագրգիռ անձանց հետ ձևավորվում են պայմանագրային հիմքի վրա:

3. Մաքսային ներկայացուցիչների՝ անմիջապես մաքսային գործառնություններ իրականացնող աշխատողների համար անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել որակավորման պահանջներ և որակավորման այդ պահանջներին այդ անձանց համապատասխանությունը հաստատող փաստաթուղթը նրանց տրամադրելու պայմաններ:

4. Մաքսային գործառնություններ իրականացնելիս մաքսային ներկայացուցչի համար չպետք է սահմանվեն պակաս

բարենպաստ պայմաններ կամ ներկայացվեն առավել խիստ պահանջներ, քան սույն Օրենսգրքին համապատասխան հայտարարատուի կամ այլ շահագրգիռ անձանց կողմից մաքսային գործառնությունների իրականացման համար սահմանված պայմանները և ներկայացվող պահանջները:

Հոդված 402. Մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկելու պայմանները

1. Որպես մաքսային ներկայացուցիչ գործունեություն իրականացնելուն հավակնող իրավաբանական անձին մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկելու պայմաններն են՝

1) ռիսկի ապահովագրության պայմանագրի առկայությունը մաքսային ներկայացուցչի քաղաքացիական պատասխանատվության համար, որը կարող է առաջանալ ներկայացվող անձանց գույքին վնաս հասցվելու կամ այդ անձանց հետ պայմանագիրը խախտելու հետևանքով՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող ապահովագրական գումարի չափով.

2) մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովումը՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող չափով, իսկ այն իրավաբանական անձի դեպքում, որի՝ որպես մաքսային ներկայացուցչի գործունեության ոլորտը կսահմանափակվի այն ապրանքների նկատմամբ մաքսային գործառնությունների իրականացմամբ, որոնց դեպքում արտահանման մաքսատուրքեր չեն գանձվում և որոնք ձևակերպվում են «արտահանում» մաքսային ընթացակարգով՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող չափով.

3) մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկվելու համար մաքսային մարմին դիմելու օրվա դրությամբ մաքսային վճարների, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսների վճարման՝ սահմանված ժամկետում չկատարված պարտավորության բացակայությունը.

4) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այլ պահանջներին համապատասխանությունը և այլ պայմանների պահպանումը:

2. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ որպես մաքսային ներկայացուցիչ գործունեություն իրականացնելուն հավակնող իրավաբանական անձին մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկելու պայման է հանդիսանում այդ անձի աշխատակազմում առնվազն 2 աշխատողների առկայությունը, որոնք ունեն անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ:

Հոդված 403. Մաքսային ներկայացուցիչների ռեեստրից հանելու հիմքերը

1. Մաքսային ներկայացուցիչների ռեեստրից մաքսային ներկայացուցչին հանելու հիմքերը հետևյալն են՝

1) մաքսային ներկայացուցչի կողմից սույն Օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պարտականությունները չկատարելը.

2) սույն Օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ կետին, 73-րդ հոդվածի 3-րդ կետին և 270-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան մաքսային մարմնի կողմից ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետում սույն Օրենսգրքի 405-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված պարտավորությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.

3) մաքսային ներկայացուցչի դիմումը՝ իրեն մաքսային ներկայացուցիչների ռեեստրից հանելու մասին.

4) մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի լուծարումը.

5) մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի վերակազմակերպումը՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող դեպքերի:

2. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել այլ հիմքեր մաքսային ներկայացուցիչների ռեեստրից իրավաբանական անձին հանելու համար:

Հոդված 404. Մաքսային ներկայացուցչի իրավունքները

1. Մաքսային գործառնություններ իրականացնելիս մաքսային ներկայացուցիչն ունի նույն իրավունքները, որոնք ունի այն անձը, որը լիազորում է նրան ներկայացնելու իր շահերը մաքսային մարմինների հետ փոխհարաբերություններում:

2. Իր գործունեությունն իրականացնելիս մաքսային ներկայացուցիչն իրավունք ունի իր կողմից ներկայացվող անձից պահանջելու մաքսային գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ, այդ թվում՝ առևտրային, բանկային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք կազմող տեղեկատվություն կամ այլ գաղտնի տեղեկատվություն պարունակող փաստաթղթեր և տեղեկություններ, և այդ փաստաթղթերն ու տեղեկություններն ստանալու այնպիսի ժամկետներում, որոնցով ապահովվում է սույն Օրենսգրքով սահմանված պահանջների կատարումը:

3. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել մաքսային ներկայացուցչի իրավունքը՝ սահմանափակելու իր գործունեության ոլորտը ապրանքների առանձին կատեգորիաների հետ կապված մաքսային

գործառնությունների իրականացմամբ, առանձին մաքսային գործառնությունների իրականացմամբ կամ գործունեության առանձին տարածքում մաքսային գործառնությունների իրականացմամբ:

4. Արգելվում է առանձին մաքսային ներկայացուցիչներին բացառիկ (էքսկլյուզիվ) և անհատական բնույթ կրող այլ արտոնություններ տրամադրելը:

Հոդված 405. Մաքսային ներկայացուցչի պարտականությունները

1. Մաքսային ներկայացուցիչը պարտավոր է՝

1) պահպանել մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկվելու պայմանները, որոնք սահմանվել են սույն Օրենսգրքի 402-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, ինչպես նաև անդամ պետությունների օրենսդրությամբ՝ սույն Օրենսգրքի 402-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետին համապատասխան.

2) հաշվետվություններ ներկայացնել մաքսային մարմիններ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

3) չհրապարակել, իր և (կամ) իր աշխատողների կողմից սեփական նպատակներով չօգտագործել և այլ անձանց չփոխանցել իր կողմից ներկայացվող անձանցից ստացված պետական, առևտրային, բանկային և օրենքով պահպանող այլ գաղտնիք կազմող տեղեկատվությունը, ինչպես նաև այլ գաղտնի տեղեկատվություն՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

4) սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան կատարել սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը՝ սույն Օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ կետին, 73-րդ հոդվածի 3-րդ կետին և 270-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան մաքսային մարմնի կողմից ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետի վերջին օրվանից ոչ ուշ.

5) իրեն մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկած մաքսային մարմնին տեղեկացնել մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկվելու ժամանակ իր կողմից ներկայացված տեղեկությունների փոփոխության մասին և այդ փոփոխությունները հաստատող փաստաթղթեր ներկայացնել այդ տեղեկությունները փոփոխվելու օրվանից կամ այդ փոփոխությունների մասին իրեն հայտնի դառնալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

6) կատարել սույն Օրենսգրքով սահմանված և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող այլ պարտականություններ:

2. Մաքսային գործառնություններ իրականացնելիս մաքսային ներկայացուցչի պարտականությունները պայմանավորված են մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով և ակտերով և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջներով ու պայմաններով:

3. Մաքսային ներկայացուցչի պարտականությունների մեջ չի մտնում մաքսային ընթացակարգերին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանների պահպանումը և այլ պարտականությունների կատարումը, որոնք, մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերին և ակտերին համապատասխան, վերապահվում են միայն նրա կողմից ներկայացվող անձանց:

4. Մաքսային ներկայացուցչի կողմից մաքսային գործառնությունները հայտարարատուի անունից իրականացնելու դեպքում մաքսային ներկայացուցիչն այդ հայտարարատուի հետ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու համապարտ պարտավորություն է կրում՝ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու՝ կատարման ենթակա պարտավորության լրիվ չափով:

5. Սույն Օրենսգրքին համապատասխան նախատեսված հանգամանքների ի հայտ գալու պարագայում, որոնց դեպքում մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման, այդ պարտավորությունը մաքսային ներկայացուցչի կողմից կատարվում է վերջինիս կողմից ներկայացվող անձի հետ համապարտ պարտավորության կարգով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պարտավորության կատարումը կապված է հետևյալի հետ.

1) այն մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները չպահպանելը, որով ձևակերպվել են ապրանքները.

2) սույն Օրենսգրքի 8-րդ գլխին համապատասխան՝ մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետների փոփոխությունը.

3) մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնություններ տրամադրելու նպատակները և պայմանները և (կամ) այդ արտոնությունների կիրառման հետ կապված՝ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումները խախտող գործողություններ կատարելը:

6. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել սույն հոդվածի 5-րդ կետում նշված դեպքերից զատ այլ դեպքեր, երբ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու՝ հայտարարատուի հետ համապարտ պարտավորության կարգով առաջացած պարտավորությունը ենթակա չէ կատարման մաքսային ներկայացուցչի կողմից:

7. Մաքսային մարմինների առջև մաքսային ներկայացուցչի պարտականությունները չեն կարող սահմանափակվել միայն ներկայացվող անձի հետ պայմանագրով:

8. Մաքսային բոլոր ներկայացուցիչների համար պարտականությունները միևնույնն են:

Գլուխ 56

Մաքսային փոխադրողը

Հոդված 406. Մաքսային փոխադրողի գործունեությունը

1. Մաքսային փոխադրողն իրականացնում է մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների փոխադրում (տրանսպորտային փոխադրում) Միության մաքսային տարածքով:

2. Մաքսային փոխադրողի կարգավիճակը հաստատվում է փաստաթղթով, որի ձևը սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Նշված փաստաթուղթը տրվում է մաքսային փոխադրողների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկած մաքսային մարմնի կողմից:

Ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս մաքսային փոխադրողի կարգավիճակը կարող է հաստատվել առանց սույն կետի առաջին պարբերության մեջ նշված փաստաթուղթը ներկայացնելու, եթե այդ փաստաթղթի մասին տեղեկությունները մաքսային մարմինը կարող է ստանալ մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերից՝ սույն Օրենսգրքի 80-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

Հոդված 407. Մաքսային փոխադրողների ռեեստրում ընդգրկվելու պայմանները

1. Որպես մաքսային փոխադրող գործունեություն իրականացնելուն հավակնող իրավաբանական անձին մաքսային փոխադրողների ռեեստրում ընդգրկելու պայմաններն են՝

1) մաքսային մարմին դիմելու օրվա դրությամբ 2 տարուց ոչ պակաս ժամանակահատվածի ընթացքում բեռների փոխադրման գործունեության իրականացումը.

2) մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովումը՝ 200 հազար եվրոյին համարժեք գումարի չափով, իսկ եթե Հանձնաժողովի կողմից սահմանվել է ապահովման այլ չափ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված գումարի չափով.

3) բեռների փոխադրման գործունեության իրականացման թույլատրագրի առկայությունը, եթե գործունեության այդ տեսակի համար, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, պահանջվում է նշված փաստաթուղթը.

4) սեփականության իրավունքով, տնտեսվարման իրավունքով, օպերատիվ կառավարման իրավունքով կամ վարձակալության իրավունքով ապրանքների փոխադրման համար օգտագործվող, այդ թվում՝ մաքսային կապարակնիքների և կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար պիտանի տրանսպորտային միջոցներ ունենալը.

5) մաքսային մարմին դիմելու օրվա դրությամբ մաքսային վճարների, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսների վճարման՝ սահմանված ժամկետում չկատարված պարտավորության բացակայությունը.

6) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող այլ պահանջներին համապատասխանությունը և այլ պայմանների պահպանումը:

2. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովման այլ չափ, քան այն, որը նախատեսված է սույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով:

Հոդված 408. Մաքսային փոխադրողների ռեեստրից հանելու հիմքերը

1. Մաքսային փոխադրողների ռեեստրից մաքսային փոխադրողին հանելու հիմքերը հետևյալն են՝

1) մաքսային փոխադրողի կողմից սույն Օրենսգրքի 409-րդ հոդվածի երկրորդից վեցերորդ պարբերություններով նախատեսված պարտականությունները չկատարելը.

2) մաքսային փոխադրողի դիմումը՝ իրեն մաքսային փոխադրողների ռեեստրից հանելու մասին.

3) մաքսային փոխադրողների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի լուծարումը.

4) մաքսային փոխադրողների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի վերակազմակերպումը՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող դեպքերի:

2. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել այլ հիմքեր մաքսային փոխադրողների ռեեստրից մաքսային փոխադրողին հանելու համար:

Հոդված 409. Մաքսային փոխադրողի պարտականությունները

Մաքսային փոխադրողը պարտավոր է՝

պահպանել մաքսային փոխադրողների ռեեստրում ընդգրկվելու պայմանները, որոնք սահմանվել են սույն Օրենսգրքի 407-րդ հոդվածի 1-ին կետի 2-4-րդ ենթակետերով, ինչպես նաև անդամ պետությունների օրենսդրությամբ՝ սույն Օրենսգրքի 407-րդ հոդվածի 1-ին կետի վեցերորդ ենթակետին համապատասխան.

պահպանել սույն Օրենսգրքով սահմանված պայմանները և պահանջներն ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրելիս.

վարել «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) ապրանքների հաշվառում և ներկայացնել հաշվետվություն մաքսային մարմիններին այդ ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) վերաբերյալ, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

չհրապարակել, սեփական նպատակներով չօգտագործել և այլ անձանց չփոխանցել ապրանքներն ուղարկողից, դրանք ստացողից կամ առաքողից (էքսպեդիտորից) ստացված պետական, առևտրային, բանկային և օրենքով պահպանող այլ գաղտնիք կազմող տեղեկատվությունը, ինչպես նաև այլ գաղտնի տեղեկատվություն՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

կատարել մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը սույն Օրենսգրքի 153-րդ և 309-րդ հոդվածներին համապատասխան՝ սույն Օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ կետին, 73-րդ հոդվածի 3-րդ կետին և 270-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան մաքսային մարմնի կողմից ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետի վերջին օրվանից ոչ ուշ.

իրեն մաքսային փոխադրողների ռեեստրում ընդգրկած մաքսային մարմնին տեղեկացնել մաքսային փոխադրողների ռեեստրում ընդգրկվելիս իր կողմից ներկայացված տեղեկությունների փոփոխության մասին և ներկայացնել այդ փոփոխությունները հաստատող փաստաթղթեր՝ այդ տեղեկությունների փոփոխման օրվանից կամ այդ փոփոխությունների մասին իրեն հայտնի դառնալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Գլուխ 57

Ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողը

Հոդված 410. Ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի գործունեությունը

1. Ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողն իրականացնում է մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների պահպանումը ժամանակավոր պահպանման պահեստում՝ սույն Օրենսգրքով սահմանված դեպքերում և պայմաններով:

2. Ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի հարաբերությունները հայտարարատուների կամ այլ շահագրգիռ անձանց հետ ձևավորվում են պայմանագրային հիմքի վրա:

Հոդված 411. Ժամանակավոր պահպանման պահեստները

1. Ժամանակավոր պահպանման պահեստ են համարվում հատուկ սահմանված և հարմարություններով ապահովված կառույցները, շինությունները (շինությունների մասերը) և (կամ) բաց հրապարակները, որոնք նախատեսված են ապրանքների ժամանակավոր պահպանման համար:

2. Ժամանակավոր պահպանման պահեստը համարվում է ստեղծված ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում անդամ պետության անձին ընդգրկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Ժամանակավոր պահպանման պահեստի գործունեությունը դադարեցվում է ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրից ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողին հանելու օրվան հաջորդող օրվանից:

4. Որպես ժամանակավոր պահպանման պահեստ օգտագործվելու համար նախատեսված կամ օգտագործվող կառույցների, շինությունների (շինությունների մասերի) և (կամ) բաց հրապարակների տեղակայման, հարմարություններով ապահովման և սարքավորման պահանջները, ինչպես նաև դրանց ստեղծման և գործունեության կարգը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 412. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկելու պայմանները

Որպես ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետող գործունեության իրականացնելուն հավակնող

իրավաբանական անձին ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկելու պայմաններն են՝

սեփականության իրավունքով, տնտեսավարման իրավունքով, օպերատիվ կառավարման իրավունքով կամ վարձակալության իրավունքով կառույցներ, շինություններ (շինության մասեր) և (կամ) բաց հրապարակներ ունենալը, որոնք նախատեսված են որպես ժամանակավոր պահպանման պահեստ օգտագործվելու համար և համապատասխանում են սույն Օրենսգրքի 411-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն սահմանված պահանջներին: Եթե կառույցները, շինությունները (շինությունների մասերը) և (կամ) բաց հրապարակները գտնվում են վարձակալության տակ, ապա ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկվելու մասին դիմումի ներկայացման օրվա դրությամբ վարձակալության պայմանագիրն այդ կառույցների, շինությունների (շինությունների մասերի) և (կամ) բաց հրապարակների մասով պետք է կնքվի առնվազն 1 տարի ժամկետով.

ռիսկի ապահովագրության պայմանագրի առկայություն ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի քաղաքացիական պատասխանատվության համար, որը կարող է առաջանալ այլ անձանց՝ պահպանման տակ գտնվող ապրանքին վնաս հասցվելու կամ այլ անձանց հետ պահպանման մասին պայմանագրի այլ պայմանների խախտման հետևանքով՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող ապահովագրական գումարի չափով.

մաքսային մարմին դիմելու օրվա դրությամբ մաքսային վճարների, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսների վճարման՝ սահմանված ժամկետում չկատարված պարտավորության բացակայությունը.

անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող այլ պահանջներին համապատասխանությունը և այլ պայմանների պահպանումը:

Հոդված 413. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրից հանելու հիմքերը

1. Ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողին ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրից հանելու հիմքերը հետևյալն են՝

1) ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի կողմից սույն Օրենսգրքի 414-րդ հոդվածի երկրորդից յոթերորդ և իններորդ պարբերություններով նախատեսված պարտականությունները չկատարելը.

2) ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի դիմումը՝ իրեն ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրից հանելու մասին.

3) ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի լուծարումը.

4) ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի վերակազմակերպումը՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող դեպքերի:

2. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել այլ հիմքեր ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողին ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրից հանելու համար:

Հոդված 414. Ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի պարտականությունները

Ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողը պարտավոր է՝

պահպանել ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկվելու պայմանները, որոնք սահմանվել են սույն Օրենսգրքի 412-րդ հոդվածի երկրորդ և երրորդ պարբերություններով, ինչպես նաև անդամ պետությունների օրենսդրությամբ՝ սույն Օրենսգրքի 412-րդ հոդվածի հինգերորդ պարբերությանը համապատասխան.

կատարել ժամանակավոր պահպանման պահեստներում ապրանքների պահպանման և գործառնությունների կատարման առնչությամբ սույն Օրենսգրքով սահմանված պայմանները և պահանջները.

ապահովել ժամանակավոր պահպանման պահեստում գտնվող ապրանքների պահպանվածությունը.

ապահովել մաքսային հսկողության իրականացման հնարավորությունը.

վարել ժամանակավոր պահպանման պահեստում գտնվող ապրանքների հաշվառում և մաքսային մարմիններին հաշվետվություններ ներկայացնել այդ ապրանքների վերաբերյալ, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

թույլ չտալ առանց մաքսային մարմինների թույլտվության ժամանակավոր պահպանման պահեստ՝ դրա աշխատողներ չհանդիսացող կամ ժամանակավոր պահպանման պահեստում գտնվող ապրանքների նկատմամբ լիազորություններ չունեցող կողմնակի անձանց մուտքը.

կատարել մաքսային մարմինների պահանջները՝ կապված մաքսային մարմինների պաշտոնատար անձանց՝ ժամանակավոր պահպանման պահեստում գտնվող ապրանքների մոտ մուտք գործելու հետ.

ժամանակավոր պահպանման պահեստի գործունեության դադարեցման դեպքում այդ պահեստի գործունեության դադարեցման մասին որոշման ընդունմանը հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ որոշման մասին

տեղեկացնել ժամանակավոր պահպանման պահեստ ապրանքներ հանձնած անձանց.

կատարել մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը սույն Օրենսգրքի 103-րդ հոդվածին համապատասխան՝ սույն Օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ կետին, 73-րդ հոդվածի 3-րդ կետին և 270-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան մաքսային մարմնի կողմից ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետի վերջին օրվանից ոչ ուշ.

տեղեկացնել իրեն ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկած մաքսային մարմնին ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկվելիս իր կողմից ներկայացված տեղեկությունների փոփոխության մասին և ներկայացնել այդ փոփոխությունները հաստատող փաստաթղթեր՝ այդ տեղեկությունների փոփոխման օրվանից կամ այդ փոփոխությունների մասին իրեն հայտնի դառնալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

կատարել սույն Օրենսգրքով սահմանված և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող այլ պարտականություններ:

Գլուխ 58

Մաքսային պահեստի տիրապետողը

Հոդված 415. Մաքսային պահեստի տիրապետողի գործունեությունը

1. Մաքսային պահեստի տիրապետողն իրականացնում է «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների կամ այլ ապրանքների պահպանում մաքսային պահեստում՝ սույն Օրենսգրքով սահմանված դեպքերում և պայմաններով:

2. Մաքսային պահեստի տիրապետողի հարաբերությունները հայտարարատուների կամ այլ շահագրգիռ անձանց հետ ձևավորվում են պայմանագրային հիմքով:

Հոդված 416. Մաքսային պահեստները և դրանց տեսակները

1. Մաքսային պահեստ են համարվում հատուկ սահմանված և հարմարություններով ապահովված կառույցները, շինությունները (շինությունների մասերը) և (կամ) բաց հրապարակները, որոնք նախատեսված են «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների պահպանման համար:

Եթե դա սահմանված է անդամ պետությունների օրենսդրությամբ, մաքսային պահեստում թույլատրվում է «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ Միության ապրանքների կամ այլ ապրանքների պահպանումը՝ այդ օրենսդրությամբ սահմանվող դեպքերում և կարգով:

2. Մաքսային պահեստը համարվում է ստեղծված մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում անդամ պետության անձին ընդգրկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Մաքսային պահեստի գործունեությունը դադարեցվում է մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրից մաքսային պահեստի տիրապետողին հանելու օրվան հաջորդող օրվանից:

4. Մաքսային պահեստները կարող են լինել բաց կամ փակ տիպի:

Մաքսային պահեստները համարվում են բաց տիպի պահեստներ, եթե դրանք հասանելի են ցանկացած տեսակի ապրանքների պահպանման և ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող բոլոր անձանց կողմից օգտագործման համար:

Մաքսային պահեստները համարվում են փակ տիպի պահեստներ, եթե դրանք նախատեսված են այդ մաքսային պահեստի տիրապետողի ապրանքների պահպանման համար:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել ապրանքների առանձին կատեգորիաներ, որոնք կարող են պահպանվել փակ տիպի մաքսային պահեստներում:

5. Որպես մաքսային պահեստ օգտագործվելու համար նախատեսված կամ օգտագործվող կառույցների, շինությունների (շինությունների մասերի) և (կամ) բաց հրապարակների տեղակայման, հարմարություններով ապահովման և սարքավորման պահանջները, ինչպես նաև դրանց ստեղծման և գործունեության կարգը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 417. Մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկելու պայմանները

Որպես մաքսային պահեստի տիրապետող գործունեություն իրականացնելուն հավակնող իրավաբանական անձին մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկելու պայմաններն են՝

սեփականության իրավունքով, տնտեսավարման իրավունքով, օպերատիվ կառավարման իրավունքով կամ

վարձակալության իրավունքով կառույցներ, շինություններ (շինությունների մասեր) և (կամ) բաց հրապարակներ ունենալը, որոնք նախատեսված են որպես մաքսային պահեստ օգտագործվելու համար և բավարարում են սույն Օրենսգրքի 416-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան սահմանված պահանջները: Եթե կառույցները, շինությունները (շինությունների մասերը) և (կամ) բաց հրապարակները գտնվում են վարձակալության տակ, ապա մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկվելու մասին դիմումի ներկայացման օրվա դրությամբ վարձակալության պայմանագիրը այդ կառույցների, շինությունների (շինության մասերի) և (կամ) բաց հրապարակների մասով պետք է կնքվի առնվազն 1 տարի ժամկետով, եթե այլ բան սահմանված չէ անդամ պետությունների օրենսդրությամբ.

որպես բաց տիպի մաքսային պահեստների տիրապետողներ մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձանց համար՝ ռիսկի ապահովագրության պայմանագրի առկայություն մաքսային պահեստի տիրապետողի քաղաքացիական պատասխանատվության համար, որը կարող է առաջանալ այլ անձանց՝ պահպանման տակ գտնվող ապրանքին վնաս հասցվելու կամ այլ անձանց հետ պահպանման մասին պայմանագրի այլ պայմանների խախտման հետևանքով՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող ապահովագրական գումարի չափով.

մաքսային մարմին դիմելու օրվա դրությամբ մաքսային վճարների, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսների վճարման՝ սահմանված ժամկետում չկատարված պարտավորության բացակայությունը.

անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող այլ պահանջներին համապատասխանությունը և այլ պայմանների պահպանումը:

Հոդված 418. Մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրից հանելու հիմքերը

1. Մաքսային պահեստի տիրապետողին մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրից հանելու հիմքերը հետևյալն են՝

1) մաքսային պահեստի տիրապետողի կողմից սույն Օրենսգրքի 419-րդ հոդվածի երկրորդից ութերորդ և տասներորդ պարբերություններով նախատեսված պարտականությունները չկատարելը.

2) մաքսային պահեստի տիրապետողի դիմումը՝ իրեն մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրից հանելու մասին.

3) մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի լուծարումը.

4) մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի վերակազմակերպումը՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող դեպքերի:

2. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել այլ հիմքեր մաքսային պահեստի տիրապետողին մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրից հանելու համար:

Հոդված 419. Մաքսային պահեստի տիրապետողի պարտականությունները

Մաքսային պահեստի տիրապետողը պարտավոր է՝

պահպանել սույն Օրենսգրքի 417-րդ հոդվածի երկրորդ և երրորդ պարբերություններով սահմանված՝ մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկվելու պայմանները.

պահպանել սույն Օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված՝ ապրանքները «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգին համապատասխան օգտագործելու պայմանները՝ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները մաքսային պահեստում գտնվելու և դրանց հետ կապված գործառնություններ իրականացնելու մասով.

ապահովել մաքսային պահեստում գտնվող ապրանքների պահպանվածությունը.

ապահովել մաքսային հսկողության իրականացման հնարավորությունը.

վարել մաքսային պահեստում պահպանվող ապրանքների հաշվառում և ներկայացնել հաշվետվություն այդ ապրանքների վերաբերյալ մաքսային մարմիններին, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

թույլ չտալ առանց մաքսային մարմինների թույլտվության մաքսային պահեստ՝ դրա աշխատողներ չհանդիսացող կամ մաքսային պահեստում պահպանվող ապրանքների նկատմամբ լիազորություններ չունեցող կողմնակի անձանց մուտքը.

կատարել մաքսային մարմինների պահանջները՝ կապված մաքսային մարմինների պաշտոնատար անձանց՝ մաքսային պահեստում պահպանվող ապրանքների մոտ մուտք գործելու հետ.

մաքսային պահեստի գործունեության դադարեցման դեպքում այդ պահեստի գործունեության դադարեցման մասին որոշման ընդունմանը հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ որոշման մասին տեղեկացնել մաքսային պահեստ ապրանքներ հանձնած անձանց.

կատարել մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը սույն Օրենսգրքի 162-րդ հոդվածին համապատասխան՝ սույն Օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ կետին և 73-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան մաքսային մարմնի կողմից ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետի վերջին օրվանից ոչ ուշ.

իրեն մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկած մաքսային մարմնին տեղեկացնել մաքսային պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկվելիս իր կողմից ներկայացված տեղեկությունների փոփոխության մասին և ներկայացնել այդ փոփոխությունները հաստատող փաստաթղթեր՝ այդ տեղեկությունների փոփոխության օրվանից կամ այդ փոփոխությունների մասին իրենց հայտնի դառնալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

կատարել սույն Օրենսգրքով սահմանված և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող այլ պարտականություններ:

Գլուխ 59

Ազատ պահեստի տիրապետողը

Հոդված 420. Ազատ պահեստի տիրապետողի գործունեությունը

1. Ազատ պահեստի տիրապետողն իրականացնում է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների տեղադրում և օգտագործում ազատ պահեստում՝ սույն Օրենսգրքին համապատասխան:

2. Ազատ պահեստի տարածքում կարող են իրականացվել ձեռնարկատիրական և այլ տեսակի գործունեություն՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

3. Անդամ պետության օրենսդրությամբ կարող է սահմանվել այդ անդամ պետությունում ստեղծված ազատ պահեստների տարածքում գործունեության առանձին տեսակներ իրականացնելու արգելք:

Հոդված 421. Ազատ պահեստները

1. Ազատ պահեստ են համարվում շենքերը (շենքերի մասերը), շենքերի համալիրը, հարմարություններով ապահովված և սարքավորված տարածքները և (կամ) բաց հրապարակները, որոնք գտնվում են պահպանման տակ կամ ֆիզիկական անձանց մուտքի նկատմամբ հսկողության ռեժիմ ունեն և որոնց սահմաններում, սույն Օրենսգրքին համապատասխան, կարող են տեղադրվել և օգտագործվել «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները, ինչպես նաև այլ ապրանքներ՝ սույն Օրենսգրքին համապատասխան (այսուհետ սույն գլխում՝ կառույցներ, շինություններ (շինությունների մասեր) և (կամ) բաց հրապարակներ):

2. Ազատ պահեստը համարվում է հիմնված անդամ պետության անձը ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկվելու օրվան հաջորդող օրվանից:

3. Ազատ պահեստի գործունեությունը դադարեցվում է ազատ պահեստների տիրապետողների ռեեստրից ազատ պահեստի տիրապետողին հանելու օրվան հաջորդող օրվանից:

4. Որպես ազատ պահեստ օգտագործվելու համար նախատեսված կամ օգտագործվող կառույցների, շինությունների (շինությունների մասերի) և (կամ) բաց հրապարակների տեղակայման, հարմարություններով ապահովման և սարքավորման պահանջները՝ ներառյալ ազատ պահեստի տարածքի ցանկապատման և սահմանագծի երկայնքով տեսահսկման համակարգի տեղադրման պահանջները, ինչպես նաև ազատ պահեստների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

5. Ազատ պահեստի տարածքում հսկիչ-անցագրային ռեժիմի ապահովումը՝ ներառյալ այդ տարածք անձանց մուտք գործելու կարգի սահմանումը, իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 422. Ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկելու պայմանները

Որպես ազատ պահեստի տիրապետող՝ գործունեություն իրականացնելուն հավակնող իրավաբանական անձին ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկելու պայմաններն են՝

սեփականության իրավունքով, տնտեսավարման իրավունքով, օպերատիվ կառավարման իրավունքով կամ վարձակալության իրավունքով կառույցներ, շինություններ (շինությունների մասեր) և (կամ) բաց հրապարակներ ունենալը, որոնք նախատեսված են որպես ազատ պահեստ օգտագործվելու համար և համապատասխանում են սույն Օրենսգրքի 421-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն սահմանված պահանջներին: Եթե կառույցները, շինությունները (շինությունների մասերը) և (կամ) բաց հրապարակները գտնվում են վարձակալության տակ, ապա ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկվելու մասին դիմումի ներկայացման օրվա դրությամբ վարձակալության պայմանագիրը այդ կառույցների, շինությունների (շինությունների մասերի) և (կամ) բաց հրապարակների նկատմամբ

պետք է կնքվի առնվազն 3 տարի ժամկետով, եթե այլ բան սահմանված չէ անդամ պետությունների օրենսդրությամբ.

մաքսային մարմին դիմելու օրվա դրությամբ մաքսային վճարների, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսների վճարման՝ սահմանված ժամկետում չկատարված պարտավորության բացակայությունը.

ապրանքների հաշվառման այնպիսի համակարգի առկայությունը, որը հնարավորություն է տալիս մաքսային գործառնություններ իրականացնելու ժամանակ մաքսային մարմիններ ներկայացված տվյալները համադրելու տնտեսական գործառնությունների իրականացման վերաբերյալ տեղեկությունների հետ՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող պահանջներին համապատասխան.

անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող այլ պահանջներին համապատասխանությունը և այլ պայմանների պահպանումը:

Հոդված 423. Ազատ պահեստների տիրապետողների ռեեստրից հանելու հիմքերը

1. Ազատ պահեստի տիրապետողին ազատ պահեստների տիրապետողների ռեեստրից հանելու հիմքերը հետևյալն են՝

1) ազատ պահեստի տիրապետողի կողմից սույն Օրենսգրքի 424-րդ հոդվածի երկրորդից իններորդ պարբերություններով նախատեսված պարտականությունները չկատարելը.

2) ազատ պահեստի տիրապետողի դիմումը՝ իրեն ազատ պահեստների տիրապետողների ռեեստրից հանելու մասին.

3) ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի լուծարումը.

4) ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի վերակազմակերպումը՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող դեպքերի:

2. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել այլ հիմքեր ազատ պահեստի տիրապետողին ազատ պահեստների տիրապետողների ռեեստրից հանելու համար:

Հոդված 424. Ազատ պահեստի տիրապետողի պարտականությունները

Ազատ պահեստի տիրապետողը պարտավոր է՝

պահպանել ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկվելու պայմանները, որոնք սահմանվել են սույն Օրենսգրքի 422-րդ հոդվածի երկրորդ և չորրորդ պարբերություններով, ինչպես նաև անդամ պետությունների օրենսդրությամբ՝ սույն Օրենսգրքի 422-րդ հոդվածի հինգերորդ պարբերությանը համապատասխան.

ապահովել ազատ պահեստի համապատասխանությունը սույն Օրենսգրքի 421-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն սահմանված պահանջներին՝ ազատ պահեստի գործունեության ժամանակահատվածում.

պահպանել «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները.

ապահովել մաքսային հսկողության իրականացման հնարավորությունը.

վարել «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հաշվառում և ներկայացնել մաքսային մարմիններին, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ, հաշվետվություն այդ ապրանքների և դրանց հետ իրականացված գործառնությունների, ինչպես նաև «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների մասին՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

թույլ չտալ առանց մաքսային մարմինների թույլտվության ազատ պահեստ՝ դրա աշխատողներ չհանդիսացող և ազատ պահեստում գտնվող ապրանքների նկատմամբ լիազորություններ չունեցող կողմնակի անձանց մուտքը.

կատարել մաքսային մարմինների պահանջները՝ կապված մաքսային մարմինների պաշտոնատար անձանց՝ ազատ պահեստում գտնվող ապրանքների մոտ մուտք գործելու հետ.

կատարել մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը սույն Օրենսգրքի 216-րդ հոդվածին համապատասխան՝ սույն Օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ կետին և 73-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան մաքսային մարմնի կողմից ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետի վերջին օրվանից ոչ ուշ.

իրեն ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկած մաքսային մարմնին տեղեկացնել ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում ընդգրկվելիս իր կողմից ներկայացված տեղեկությունների փոփոխության մասին և ներկայացնել այդ փոփոխությունները հաստատող փաստաթղթեր՝ այդ տեղեկությունների փոփոխության օրվանից կամ այդ փոփոխությունների մասին իրեն հայտնի դառնալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

կատարել սույն Օրենսգրքով սահմանված և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող այլ պարտականություններ:

Գլուխ 60

Անմաքս առևտրի խանութի տիրապետողը

Հոդված 425. Անմաքս առևտրի խանութի տիրապետողի գործունեությունը

Անմաքս առևտրի խանութի տիրապետողն իրականացնում է «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների պահպանում և իրացում անմաքս առևտրի խանութում՝ սույն Օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետում նշված անձանց համար:

Հոդված 426. Անմաքս առևտրի խանութները

1. Անմաքս առևտրի խանութ են համարվում հատուկ սահմանված և հարմարություններով ապահովված կառույցները և (կամ) շինությունները (շինությունների մասերը), որոնք կազմված են առևտրի սրահներից և պահեստներից, ինչպես նաև օժանդակ շինություններից (առկայության դեպքում):
2. Անմաքս առևտրի խանութը համարվում է ստեղծված անմաքս առևտրի խանութների տիրապետողների ռեեստրում անդամ պետության անձին ընդգրկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Անմաքս առևտրի խանութի գործունեությունը դադարեցվում է անմաքս առևտրի խանութների տիրապետողների ռեեստրից անմաքս առևտրի խանութի տիրապետողին հանելու օրվան հաջորդող օրվանից:
4. Անմաքս առևտրի խանութների տեղակայման, հարմարություններով ապահովման և սարքավորման, այդ թվում՝ տեսահսկման համակարգի տեղադրման պահանջները, դրանց ստեղծման և գործունեության կարգը, ինչպես նաև անմաքս առևտրի խանութներում ապրանքների իրացման կանոնները սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությամբ:

Հոդված 427. Անմաքս առևտրի խանութների տիրապետողների ռեեստրում ընդգրկելու պայմանները

Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնելուն հավակնող իրավաբանական անձին անմաքս առևտրի խանութների տիրապետողների ռեեստրում ընդգրկելու պայմաններն են՝

սեփականության իրավունքով, տնտեսվարման իրավունքով, օպերատիվ կառավարման իրավունքով կամ վարձակալության իրավունքով այնպիսի կառույցներ և (կամ) շինություններ (շինությունների մասեր) ունենալը, որոնք նախատեսված են որպես անմաքս առևտրի խանութ օգտագործվելու համար և համապատասխանում են անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող պահանջներին: Եթե կառույցները և (կամ) շինությունները (շինության մասերը) գտնվում են վարձակալության տակ, ապա անմաքս առևտրի խանութների տիրապետողների ռեեստրում ընդգրկվելու մասին դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ վարձակալության պայմանագիրը այդ կառույցների և (կամ) շինությունների (շինության մասերի) նկատմամբ պետք է կնքվի առնվազն 6 ամիս ժամկետով.

մանրածախ առևտրի համար գրանցման փաստաթղթերի կամ թույլատրագրերի առկայությունը, եթե դրանք ստանալու պարտականությունը նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ.

մաքսային մարմին դիմելու օրվա դրությամբ մաքսային վճարների, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսների վճարման՝ սահմանված ժամկետում չկատարված պարտավորության բացակայությունը.

անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող այլ պահանջներին համապատասխանությունը և այլ պայմանների պահպանումը:

Հոդված 428. Անմաքս առևտրի խանութների տիրապետողների ռեեստրից հանելու հիմքերը

1. Անմաքս առևտրի խանութների տիրապետողների ռեեստրից անմաքս առևտրի խանութի տիրապետողին հանելու հիմքերը հետևյալն են՝
1) անմաքս առևտրի խանութի տիրապետողի կողմից սույն Օրենսգրքի 429-րդ հոդվածի երկրորդից յոթերորդ պարբերություններով նախատեսված պարտականությունները չկատարելը.
2) անմաքս առևտրի խանութի տիրապետողի դիմումը՝ իրեն անմաքս առևտրի խանութի տիրապետողների ռեեստրից հանելու մասին.
3) անմաքս առևտրի խանութների տիրապետողների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի լուծարումը.
4) անմաքս առևտրի խանութների տիրապետողների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի վերակազմակերպումը՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող դեպքերի:

2. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել այլ հիմքեր անմաքս առևտրի խանութի տիրապետողին անմաքս առևտրի խանութների տիրապետողների ռեեստրից հանելու համար:

Հոդված 429. Անմաքս առևտրի խանութի տիրապետողի պարտականությունները

Անմաքս առևտրի խանութի տիրապետողը պարտավոր է՝

պահպանել անմաքս առևտրի խանութների տիրապետողների ռեեստրում ընդգրկվելու պայմանները, որոնք սահմանվել են սույն Օրենսգրքի 427-րդ հոդվածի երկրորդ և երրորդ պարբերություններով, ինչպես նաև անդամ պետությունների օրենսդրությամբ՝ սույն Օրենսգրքի 427-րդ հոդվածի հինգերորդ պարբերությանը համապատասխան.

պահպանել «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները, որոնք սահմանվել են սույն Օրենսգրքի 244-րդ հոդվածի 3-րդ կետով.

ապահովել «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպված և անմաքս առևտրի խանութում չիրացված ապրանքների պահպանվածությունը.

ապահովել մաքսային հսկողության իրականացման հնարավորությունը.

վարել անմաքս առևտրի խանութ ապրանքների մուտքագրման և դրանց իրացման հաշվառում, ինչպես նաև այդ ապրանքների վերաբերյալ մաքսային մարմիններին հաշվետվություններ ներկայացնել, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

կատարել մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը սույն Օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ սույն Օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ կետին և 73-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան մաքսային մարմնի կողմից ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետի վերջին օրվանից ոչ ուշ.

իրեն անմաքս առևտրի խանութների տիրապետողների ռեեստրում ընդգրկած մաքսային մարմնին տեղեկացնել անմաքս առևտրի խանութների տիրապետողների ռեեստրում ընդգրկվելիս իր կողմից ներկայացված տեղեկությունների փոփոխության մասին և ներկայացնել այդ փոփոխությունները հաստատող փաստաթղթեր՝ այդ տեղեկությունների փոփոխման օրվանից կամ այդ փոփոխությունների մասին իրեն հայտնի դառնալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

կատարել սույն Օրենսգրքով սահմանված և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանվող այլ պարտականություններ:

Գլուխ 61

Լիազորված տնտեսական օպերատորը

Հոդված 430. Լիազորված տնտեսական օպերատորը

1. Լիազորված տնտեսական օպերատորն այն իրավաբանական անձն է, որը ստեղծվել է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան և ընդգրկված է լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում՝ սույն գլխով սահմանված կարգի և պայմանների պահպանմամբ:

2. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելիս տրվում է լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման մասին վկայական:

3. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման մասին վկայականն ուժի մեջ մտնելու օրվանից լիազորված տնտեսական օպերատորը դասվում է ռիսկի ցածր մակարդակի կատեգորիային:

4. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու և այդպիսի ռեեստրից նրան հանելու կարգը, լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման մասին վկայական տրամադրելու, դրա գործողությունը կասեցնելու և վերսկսելու կարգը սահմանվում են սույն Օրենսգրքով, իսկ սույն Օրենսգրքով չկարգավորվող մասով՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

5. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելը, այդ ռեեստրից նրան հանելը, ինչպես նաև լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման մասին վկայականի գործողությունը կասեցնելը և վերսկսելն իրականացվում են այն անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որի օրենսդրությանը համապատասխան այդ անձը ստեղծվել է:

6. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի կողմից այդ ռեեստրում ընդգրկվելու պայմանների պահպանումը ստուգելիս, ինչպես նաև լիազորված տնտեսական օպերատորի կողմից իրեն այդ ռեեստրում ընդգրկելու պայմանների պահպանումը վերահսկելիս կարող են կիրառվել սույն Օրենսգրքի VI բաժնով նախատեսված՝ մաքսային հսկողության ձևերը և մաքսային հսկողության անցկացումն ապահովող միջոցները:

7. Լիազորված տնտեսական օպերատորը Միության մաքսային տարածքում իրավունք ունի օգտվելու սույն

Օրենսգրքի 437-րդ հոդվածով նախատեսված հատուկ պարզեցված ընթացակարգերից՝ սույն Օրենսգրքի դրույթների հաշվառմամբ:

8. Երրորդ կողմի հետ Միության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ սույն Օրենսգրքի 437-րդ հոդվածով նախատեսված առանձին հատուկ պարզեցված ընթացակարգերը կարող են տրամադրվել Միության անդամ չհանդիսացող պետությունների լիազորված տնտեսական օպերատորներին՝ փոխադարձ հիմունքներով:

9. Երրորդ կողմի հետ անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան՝ սույն Օրենսգրքի 437-րդ հոդվածով նախատեսված առանձին հատուկ պարզեցված ընթացակարգերը կարող են տրամադրվել Միության անդամ չհանդիսացող պետությունների լիազորված տնտեսական օպերատորներին՝ փոխադարձ հիմունքներով: Ընդ որում, այդպիսի հատուկ պարզեցված ընթացակարգերը կարող են կիրառվել միայն այդպիսի միջազգային պայմանագրերի կողմ հանդիսացող անդամ պետության տարածքում:

Հոդված 431. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրը

1. Մաքսային մարմինները վարում են լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրը՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող ձևով, տեղադրում են այն Ինտերնետ ցանցում՝ իրենց պաշտոնական կայքերում և ապահովում են դրա՝ ամիսն առնվազն մեկ անգամ թարմացումը:

2. Հանձնաժողովը մաքսային մարմինների կողմից վարվող՝ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրների հիման վրա ձևավորում է լիազորված տնտեսական օպերատորների ընդհանուր ռեեստրը, տեղադրում է այն Ինտերնետ ցանցում՝ Միության պաշտոնական կայքում և ապահովում է դրա՝ ամիսն առնվազն մեկ անգամ թարմացումը:

Լիազորված տնտեսական օպերատորների ընդհանուր ռեեստրի ձևը, այն ձևավորելու և վարելու կարգը, ինչպես նաև մաքսային մարմինների կողմից վարվող՝ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրներում պարունակվող տվյալները ներկայացնելու տեխնիկական պայմանները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Հոդված 432. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման մասին վկայականը և դրա տիպերը

1. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման մասին վկայականը (այսուհետ սույն գլխում՝ վկայական) կարող է լինել երեք տիպի:

2. Առաջին տիպի վկայականով լիազորված տնտեսական օպերատորին տրվում է սույն Օրենսգրքի 437-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հատուկ պարզեցված ընթացակարգերից օգտվելու իրավունք:

3. Երկրորդ տիպի վկայականով լիազորված տնտեսական օպերատորին տրվում է սույն Օրենսգրքի 437-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված հատուկ պարզեցված ընթացակարգերից օգտվելու իրավունք:

4. Երրորդ տիպի վկայականով լիազորված տնտեսական օպերատորին տրվում է սույն Օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված հատուկ պարզեցված ընթացակարգերից օգտվելու իրավունք:

5. Վկայականի ձևը և այն լրացնելու կարգը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

6. Վկայականն ուժի մեջ է մտնում լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո և ունի գործողության անսահմանափակ ժամկետ:

7. Վկայականն ուժի մեջ մտնելու օրվանից լիազորված տնտեսական օպերատորն իրավունք ունի օգտվելու սույն Օրենսգրքի 437-րդ հոդվածով նախատեսված հատուկ պարզեցված ընթացակարգերից:

8. Անդամ պետության այն մաքսային մարմինը, որը տրամադրել է վկայականը, լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու օրվանից ոչ ուշ, քան 5 օրացուցային օր հետո այդ անձին և այդ անդամ պետության մաքսային մարմիններին, ինչպես նաև, սույն Օրենսգրքի 368-րդ հոդվածին համապատասխան, այլ անդամ պետությունների մաքսային մարմիններին ներկայացվում է տեղեկատվություն լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու ամսաթվի և վկայականն ուժի մեջ մտնելու ամսաթվի վերաբերյալ:

Հոդված 433. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու պայմանները

1. Առաջին տիպի վկայականի տրամադրմամբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու պայմանները հետևյալն են՝

1) այդ իրավաբանական անձի կողմից արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելը, մաքսային գործի բնագավառում առնվազն 3 տարի որպես մաքսային ներկայացուցիչ, ժամանակավոր պահպանման պահեստի, մաքսային պահեստի տիրապետող կամ առնվազն 2 տարի որպես մաքսային փոխադրող գործունեություն իրականացնելը՝ մինչև մաքսային մարմնի կողմից լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման համար դիմումը (այսուհետ սույն գլխում՝ դիմում) գրանցելու օրը, որոնց ընթացքում՝

այն անձանց կողմից, որոնք իրականացնում են արտաքին տնտեսական գործունեություն, բացառությամբ ապրանքների փոխադրման հետ կապված ծառայությունների մատուցման գործունեության, յուրաքանչյուր տարվա համար ներկայացվել են ապրանքների հայտարարագրեր անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված քանակով, սակայն 10-ից ոչ պակաս, կամ Միության մաքսային տարածքով տեղափոխված ապրանքների հանրագումարային արժեքը յուրաքանչյուր տարվա համար կազմում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված մեծություն, սակայն 500 հազար եվրոյին համարժեք գումարից ոչ պակաս՝ դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

այն անձանց կողմից, որոնք իրականացնում են արտաքին տնտեսական գործունեություն՝ ուղղված ապրանքների փոխադրման հետ կապված ծառայությունների մատուցմանը, յուրաքանչյուր տարվա համար ներկայացվել է առնվազն 250 տարանցման հայտարարագիր.

այն անձանց կողմից, որոնք մաքսային գործի բնագավառում գործունեություն են իրականացնում որպես մաքսային ներկայացուցիչ, յուրաքանչյուր տարվա համար ներկայացվել են մաքսային հայտարարագրեր անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված քանակով, սակայն 200-ից ոչ պակաս, կամ նրանց կողմից ներկայացված մաքսային հայտարարագրերում հայտագրված՝ ապրանքների հանրագումարային արժեքը յուրաքանչյուր տարվա համար կազմում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված մեծություն, սակայն 500 հազար եվրոյին համարժեք գումարից ոչ պակաս՝ դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

այն անձանց կողմից, որոնք մաքսային գործի բնագավառում գործունեություն են իրականացնում որպես ժամանակավոր պահպանման պահեստների, մաքսային պահեստների տիրապետող, իրականացվել է այն ապրանքների պահպանումը, որոնց հանրագումարային արժեքը յուրաքանչյուր տարվա համար կազմում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված մեծություն, սակայն 500 հազար եվրոյին համարժեք գումարից ոչ պակաս՝ դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

այն անձանց կողմից, որոնք մաքսային գործի բնագավառում գործունեություն են իրականացնում որպես մաքսային փոխադրող, յուրաքանչյուր տարվա համար ներկայացվել է առնվազն 250 տարանցման հայտարարագիր.

2) սույն Օրենսգրքի 436-րդ հոդվածին համապատասխան տրամադրված՝ լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումը.

3) մաքսային մարմնի կողմից դիմումի գրանցման օրվա դրությամբ սահմանված ժամկետում մաքսային վճարների, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսների վճարման գծով չկատարված պարտավորության բացակայությունը բոլոր անդամ պետություններում.

4) մաքսային մարմնի կողմից դիմումի գրանցման օրվա դրությամբ պարտքերի (ապառքների) բացակայությունը՝ հարկերի և վճարների վերաբերյալ օրենսդրությանը (հարկային օրենսդրությանը) համապատասխան, այն անդամ պետությունում, որտեղ գրանցված է այդ իրավաբանական անձը.

5) մինչև մաքսային մարմնի կողմից դիմումի գրանցման օրը մեկ տարվա ընթացքում այդ իրավաբանական անձին այնպիսի վարչական իրավախախտումների համար վարչական պատասխանատվության ենթարկելու փաստերի բացակայությունը բոլոր անդամ պետություններում, որոնք կատարելու համար պատասխանատվության ենթարկելն անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է որպես լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելը մերժելու հիմք.

6) այդ իրավաբանական անձի բաժնետերը հանդիսացող, լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսն ունեցող, նրա հիմնադիրը (մասնակիցը), ղեկավարը, գլխավոր հաշվապահը հանդիսացող՝ անդամ պետությունների ֆիզիկական անձանց այն հանցագործությունների կամ քրեական իրավախախտումների համար բոլոր անդամ պետություններում քրեական պատասխանատվության ենթարկելու փաստերի բացակայությունը, որոնց վարույթը վերապահված է մաքսային և այլ պետական մարմիններին և որոնք կատարելու համար պատասխանատվության ենթարկելն անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է որպես լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելը մերժելու հիմք.

7) ապրանքների հաշվառման այն համակարգի առկայությունը, որը բավարարում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջները, թույլ է տալիս մաքսային գործառնությունների կատարման ժամանակ մաքսային մարմիններին ներկայացված տեղեկությունները համադրել տնտեսական գործառնությունների անցկացման մասին տեղեկությունների հետ և որն ապահովում է այդ տեղեկությունների մատչելիությունը (այդ թվում՝ հեռահար) մաքսային մարմինների համար: Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու ապրանքների հաշվառման համակարգին ներկայացվող տիպային պահանջներ:

2. Սույն հոդվածի 1-ին կետի 5-րդ և 6-րդ ենթակետերում նշված վարչական իրավախախտումների ու հանցագործությունների կամ քրեական իրավախախտումների համար վարչական և քրեական պատասխանատվություն նախատեսող՝ անդամ պետությունների վարչական և քրեական օրենսդրության հոդվածների մասին տեղեկատվությունը՝ այդպիսի վարչական իրավախախտումների ու հանցագործությունների կամ քրեական իրավախախտումների կազմի և պատժամիջոցների նշմամբ, մաքսային մարմինների կողմից ուղարկվում է Հանձնաժողով՝ այդ հոդվածների ընդհանուր ցանկի ձևավորման և Ինտերնետ ցանցում՝ Միության պաշտոնական կայքում տեղադրման համար:

Նշված հոդվածների ընդհանուր ցանկի ձևաչափը, այն կազմելու, վարելու ու դրա տեղեկություններն օգտագործելու

կարգը, ինչպես նաև ժամանման ու մեկնման վայրերի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու կարգն ու տեխնիկական պայմանները, այդ թվում՝ կառուցվածքն ու ձևաչափը, սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

3. Երկրորդ տիպի վկայականի տրամադրմամբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու պայմանները հետևյալն են՝

1) սույն հոդվածի 1-ին կետի 1-ին, 3-7-րդ ենթակետերում նշված պայմանները.

2) իրավաբանական անձի ֆինանսական կայունության համապատասխանությունը սույն հոդվածի 7-րդ կետին համապատասխան սահմանված իմաստին.

3) սեփականության իրավունքով, տնտեսավարման իրավունքով, օպերատիվ կառավարման իրավունքով կամ վարձակալության իրավունքով այնպիսի կառույցներ, շինություններ (շինությունների մասեր) և (կամ) բաց հրապարակներ (բաց հրապարակների մասեր) ունենալը, որոնք նախատեսված են ապրանքների ժամանակավոր պահպանման համար: Եթե կառույցները, շինությունները (շինությունների մասերը) և (կամ) բաց հրապարակները (բաց հրապարակների մասերը) գտնվում են վարձակալության տակ, ապա դիմումը ներկայացնելու օրն այդ կառույցների, շինությունների (շինության մասերի) և (կամ) բաց հրապարակների (բաց հրապարակների մասերի) վարձակալության պայմանագիրը պետք է կնքվի առնվազն մեկ տարի ժամկետով.

4) Հանձնաժողովի կողմից սահմանվող այն պահանջների պահպանումը, որոնք ներկայացվում են այն կառույցներին, շինություններին (շինությունների մասերին) և (կամ) բաց հրապարակներին (բաց հրապարակների մասերին), որոնց տարածքում իրականացվելու է ապրանքների ժամանակավոր պահպանում, ավարտվելու է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգը և (կամ) անցկացվելու է մաքսային հսկողություն լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի տրանսպորտային միջոցներին և աշխատողներին:

4. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանված լինել, որ այն դեպքում, երբ անդամ պետության այն իրավաբանական անձի ֆինանսական կայունությունը, որն իրականացնում է ապրանքների արտադրությանն ուղղված գործունեություն և (կամ) արտահանում է ապրանքներ, չի համապատասխանում սույն հոդվածի 7-րդ կետին համապատասխան սահմանված իմաստին, երկրորդ տիպի վկայականի տրամադրմամբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու պայմանը լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման տրամադրումն է՝ 150 հազար եվրոյից ոչ պակաս գումարին համարժեք չափով՝ դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

5. Երրորդ տիպի վկայականի տրամադրմամբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու պայմանները հետևյալն են՝

1) իրավաբանական անձն ընդգրկվել է լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում՝ առաջին կամ երրորդ տիպի վկայականի տրամադրմամբ՝ դիմումը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվանից առնվազն 2 տարվա ընթացքում: Նշված ժամկետի մեջ չի ներառվում այն ժամանակահատվածը, որի ընթացքում վկայականի գործողությունը կասեցվել է՝ սույն Օրենսգրքի 435-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վկայականի գործողությունը կասեցվել էր սույն Օրենսգրքի 435-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ և 12-րդ ենթակետերով նախատեսված հիմքերով.

2) սույն հոդվածի 3-րդ կետում նշված պայմանները.

6. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու լրացուցիչ պայմաններ:

7. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի ֆինանսական կայունությունը և ֆինանսական կայունությունը բնութագրող և այդ ռեեստրում ընդգրկելու համար անհրաժեշտ իմաստները որոշելու կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից և անդամ պետությունների օրենսդրությամբ՝ Հանձնաժողովի կողմից նախատեսված դեպքերում:

Հոդված 434. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու կարգը

1. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելու համար իրավաբանական անձը (այսուհետ սույն հոդվածում՝ դիմումատու) ներկայացնում է դիմում այն անդամ պետության լիազորված մաքսային մարմին, որի օրենսդրությանը համապատասխան այն ստեղծվել է:

Նշված դիմումի ձևը, այն լրացնելու կարգը և դրանում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերի ցանկը սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

2. Դիմումին կցվում են դրա մեջ ներկայացված տեղեկությունները հաստատող այլ փաստաթղթեր:

Դիմումը կարող է չուղեկցվել մաքսային մարմին փաստաթղթեր ներկայացնելով, եթե այդ փաստաթղթերի մասին տեղեկությունները և (կամ) դրանց մեջ նշված տեղեկությունները կարող են ստացվել մաքսային մարմինների կողմից այն տեղեկատվական համակարգերից, որոնք օգտագործվում են մաքսային մարմինների կողմից, ինչպես նաև անդամ պետությունների պետական մարմինների (կազմակերպությունների) տեղեկատվական համակարգերից՝ տեղեկատվական փոխգործակցության շրջանակներում:

3. Առաջին և երկրորդ տիպի վկայականների ստացմամբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում

ընդգրկվելու համար դիմումատուն իրավունք ունի ներկայացնելու մեկ դիմում:

4. Մաքսային մարմինը դիմումը գրանցելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում որոշում է ընդունում դիմումն ուսումնասիրելու կամ ուսումնասիրումը մերժելու վերաբերյալ:

Դիմումի ուսումնասիրումը մերժելու համար հիմքերի առկայության դեպքում մաքսային մարմինը տեղեկացնում է դրա մասին դիմումատուին:

5. Մաքսային մարմինը դիմումի ուսումնասիրությունը մերժում է հետևյալ դեպքերում՝

1) դիմումը լրացվել է սահմանված ձևին ոչ համապատասխան, կամ էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմումի կառուցվածքը և ձևաչափը չեն համապատասխանում այդպիսի դիմումի՝ սահմանված կառուցվածքին և ձևաչափին.

2) դիմումի մեջ նշված չեն դիմումի մեջ նշման ենթակա տեղեկություններ.

3) դիմումը ներկայացվել է տվյալ իրավաբանական անձին սույն Օրենսգրքի 435-րդ հոդվածի 8-րդ կետի 4-7-րդ ենթակետերով նախատեսված հիմքերով լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից հանելու օրվանից հետո մինչև 1 տարին լրանալը:

6. Դիմումի ուսումնասիրման ժամկետը սահմանվում է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ և չի կարող գերազանցել այն գրանցելու օրվանից 120 օրացուցային օրը:

7. Եթե դիմում ներկայացնելիս բացակայում են դիմումի ուսումնասիրումը մերժելու համար հիմքեր, իսկ դրա մեջ նշված տեղեկությունները դիմումատուի կողմից հաստատված չեն փաստաթղթերով, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի, ապա մաքսային մարմինը դիմումը գրանցելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է դիմումատուին այդպիսի փաստաթղթերը 1 ամսվա ընթացքում ներկայացնելու անհրաժեշտության մասին:

8. Դիմումի ուսումնասիրման ժամկետի ընթացքը կասեցվում է՝ մինչև սույն հոդվածի 7-րդ կետին համապատասխան հարցվող փաստաթղթերը ներկայացնելը կամ դրանք ներկայացնելու ժամկետը լրանալը:

9. Դիմումատուի կողմից սույն հոդվածի 7-րդ կետում նշված ժամկետի ընթացքում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մաքսային մարմինը որոշում է ընդունում դիմումի ուսումնասիրումը մերժելու մասին:

10. Սույն Օրենսգրքի 371-րդ հոդվածին համապատասխան մաքսային մարմնի կողմից փաստաթղթերի պատճենները և (կամ) տեղեկությունները ներկայացնելու մասին հարցումը, որն ուղարկվում է լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձանց կողմից այդ ռեեստրում ընդգրկվելու համար սույն Օրենսգրքի 433-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերով նախատեսված պայմանների պահպանումը ստուգելու նպատակով, ուղարկվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե սույն Օրենսգրքի 371-րդ հոդվածով նախատեսված ժամկետների ընթացքում ստացվել է այնպիսի պատասխան, որում ներառված չեն սույն Օրենսգրքի 433-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերում նշված պայմանները չպահպանելու մասին տեղեկություններ, կամ այդպիսի պատասխան չի ստացվել, ապա համարվում է, որ այն անդամ պետությունում, որի մաքսային մարմին ուղարկվել է հարցումը, լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման այդպիսի պայմանները պահպանվել են:

11. Առաջին կամ երկրորդ տիպի վկայականի տրամադրմամբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու մասին դիմումի ուսումնասիրման արդյունքներով, եթե լիազորված տնտեսական օպերատորների այդպիսի ռեեստրում ընդգրկման պայմանը լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումն է, ապա մաքսային մարմինը ծանուցում է անձին սույն Օրենսգրքի 433-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին, 3-7-րդ ենթակետերով կամ 3-րդ կետի 1-ին, 3-րդ կամ 4-րդ ենթակետերով սահմանված պայմանների պահպանման մասին կամ որոշում է ընդունում այդպիսի ռեեստրում ընդգրկելը մերժելու վերաբերյալ:

12. Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են մաքսային մարմնի կողմից նշված ծանուցումն ուղարկելու օրվանից ոչ ուշ, քան 2 ամիս հետո: Ընդ որում, մաքսային մարմնի կողմից նշված ծանուցումն ուղարկվելու օրվանից մինչև լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածի ընթացքում դիմումի ուսումնասիրման ժամկետը կասեցվում է:

13. Մաքսային մարմինը լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման տրամադրումը պատշաճ կերպով հաստատող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրացուցային օր հետո որոշում է ընդունում լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում դիմումատուին ընդգրկելու վերաբերյալ:

14. Եթե մինչև սույն հոդվածի 12-րդ կետի առաջին պարբերությունում նշված ժամկետը լրանալը լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը չեն ներկայացվել կամ ներկայացված փաստաթղթերով պատշաճ կերպով չի հաստատվում լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման տրամադրումը, ապա մաքսային մարմինը նշված ժամկետը լրանալու օրվանից ոչ ուշ, քան 10 օրացուցային օր հետո որոշում է ընդունում լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում դիմումատուին ընդգրկելը մերժելու վերաբերյալ:

15. Երկրորդ տիպի վկայականի տրամադրմամբ, եթե լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումը լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման պայմանը չէ, կամ երրորդ տիպի վկայականի տրամադրմամբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու մասին դիմումն ուսումնասիրելու արդյունքներով մաքսային մարմինը սույն հոդվածի 6-րդ կետում նշված ժամկետից ոչ ուշ որոշում է

ընդունում լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում դիմումատուին ընդգրկելու կամ այդ ռեեստրում ընդգրկելը մերժելու վերաբերյալ:

Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելը մերժելու հիմքը սույն Օրենսգրքի 433-րդ հոդվածով սահմանված պայմանները չպահպանելն է:

Հոդված 435. Վկայականի գործողությունը կասեցնելը, վերսկսելը և լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից հանելու համար հիմքերը

1. Վկայականի գործողությունը կասեցնելու համար հիմքերն են՝

1) վկայականի գործողությունը կասեցնելու մասին լիազորված տնտեսական օպերատորի դիմումը.

2) լիազորված տնտեսական օպերատորի նկատմամբ սնանկության վարույթ հարուցելը.

3) լիազորված տնտեսական օպերատորի կողմից սույն Օրենսգրքի 442-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները չկատարելը.

4) սույն Օրենսգրքի 436-րդ հոդվածով նախատեսված չափով լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման բացակայությունը, եթե այդպիսի ապահովման առկայությունը լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու պայմանն էր.

5) մաքսային վճարների, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը, սույն Օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ կետին և 73-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, մաքսային մարմնի կողմից ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետում չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, ինչպես նաև սահմանված ժամկետներում տույժեր, տոկոսներ չվճարելը.

6) լիազորված տնտեսական օպերատորի մոտ նրա՝ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկված լինելու անդամ պետությունից զատ այլ անդամ պետություններում սահմանված ժամկետներում չկատարված մաքսային վճարների, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսները վճարելու պարտավորության առկայության մասին տեղեկատվությունը.

7) սույն Օրենսգրքի 433-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետով նախատեսված՝ ապրանքների հաշվառման համակարգի բացակայությունը կամ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջներին ապրանքների հաշվառման այդպիսի համակարգի անհամապատասխանությունը.

8) իրավաբանական անձի ֆինանսական կայունության անհամապատասխանությունը սույն Օրենսգրքի 433-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան սահմանված իմաստներին, եթե իրավաբանական անձի ֆինանսական կայունության համապատասխանությունն այդպիսի իմաստներին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու պայմանն էր.

9) լիազորված տնտեսական օպերատորի կողմից ապրանքների ժամանակավոր պահպանման համար նախատեսված՝ սեփականության իրավունքով, տնտեսավարման իրավունքով, օպերատիվ կառավարման իրավունքով կամ վարձակալության իրավունքով կառույցների, շինությունների (շինությունների մասերի) և (կամ) բաց հրապարակների (բաց հրապարակների մասերի) բացակայությունը, եթե այդպիսի պահանջների պահպանումը լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու պայմանն էր.

10) Հանձնաժողովի կողմից սույն Օրենսգրքի 433-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետին համապատասխան սահմանված՝ լիազորված տնտեսական օպերատորի կառույցներին, շինություններին (շինության մասերին) և (կամ) բաց հրապարակներին (բաց հրապարակների մասերին), տրանսպորտային միջոցներին, աշխատողներին ներկայացվող պահանջները չպահպանելը, եթե այդպիսի պահանջների պահպանումը լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու պայմանն էր.

11) առնվազն մեկ անդամ պետությունում լիազորված տնտեսական օպերատորի նկատմամբ վարչական իրավախախտման գործ հարուցելը (վարչական վարույթ սկսելը) իրավախախտման մասին վկայող փաստերով, որոնց կատարման համար պատասխանատվության ենթարկելն անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է որպես վկայականի գործողության կասեցման հիմք.

12) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձանց բաժնետերերը հանդիսացող, բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող, այդ իրավաբանական անձանց հիմնադիրները (մասնակիցները), ղեկավարները, գլխավոր հաշվապահները հանդիսացող՝ անդամ պետությունների ֆիզիկական անձանց նկատմամբ ցանկացած անդամ պետությունում քրեական գործի հարուցումը այն հանցագործությունների կամ քրեական իրավախախտումների կատարման մասին վկայող փաստերով, որոնց վարույթը վերապահված է մաքսային և այլ պետական մարմիններին, և որոնց կատարման համար պատասխանատվության ենթարկելը անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է որպես վկայականի գործողության կասեցման հիմք:

2. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են վկայականի գործողությունը կասեցնելու համար սահմանվել լրացուցիչ հիմքեր:

3. Մաքսային մարմինը սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքերի առկայության մասին տեղեկատվությունն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում որոշում է ընդունում վկայականի գործողությունը կասեցնելու վերաբերյալ:

4. Այն մաքսային մարմինը, որը որոշում է ընդունել վկայականի գործողությունը կասեցնելու վերաբերյալ, այն ընդունելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է լիազորված տնտեսական օպերատորին այդպիսի որոշման մասին՝ նշելով կասեցման հիմքերի, ինչպես նաև դրա մասին ներկայացվում է տեղեկատվություն անդամ պետությունների մաքսային մարմիններին՝ սույն Օրենսգրքի 368-րդ հոդվածին համապատասխան:

5. Սույն հոդվածի 1-ին կետի 3-10-րդ ենթակետերով նախատեսված հիմքերով վկայականի գործողությունը կասեցնելու դեպքում լիազորված տնտեսական օպերատորը, վկայականի գործողության կասեցման մասին ծանուցումն ստանալու օրվանից 120 օրացուցային օրվա ընթացքում, պարտավոր է հավաստիացնել մաքսային մարմնին այն պատճառների վերացման մասին, որոնց հետ կապված կասեցվել էր վկայականի գործողությունը:

6. Եթե վկայականի գործողության կասեցման մասին ծանուցումն ստանալու օրվանից 120 օրացուցային օրվա ընթացքում լիազորված տնտեսական օպերատորը հաստատել է այն պատճառների վերացումը, որոնց հետ կապված կասեցվել էր վկայականի գործողությունը, ապա մաքսային մարմինն այդ հաստատումը ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում վերսկսում է վկայականի գործողությունը և տեղեկացնում է դրա մասին լիազորված տնտեսական օպերատորին, իր անդամ պետության մաքսային մարմիններին և այլ անդամ պետությունների մաքսային մարմիններին՝ սույն Օրենսգրքի 368-րդ հոդվածին համապատասխան:

7. Սույն հոդվածի 1-ին կետի 11-րդ և 12-րդ ենթակետերով նախատեսված հիմքերով կասեցված վկայականի գործողությունը վերսկսվում է հետևյալ որոշումներն ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝

1) դատարանի կամ այլ լիազորված մարմնի (պաշտոնատար անձի)՝ քրեական կամ վարչական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ որոշումը.

2) դատարանի կամ այլ լիազորված մարմնի (պաշտոնատար անձի)՝ քրեական գործի կամ վարչական իրավախախտման մասին գործի դադարեցման վերաբերյալ որոշումը:

8. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից լիազորված տնտեսական օպերատորին հանելու համար հիմքերն են՝

1) լիազորված տնտեսական օպերատորի դիմումը՝ իրեն լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից հանելու մասին.

2) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձը լուծարելը.

3) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձը վերակազմակերպելը՝ բացառությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանվող դեպքերի.

4) լիազորված տնտեսական օպերատորի կողմից վկայականի գործողության կասեցման մասին ծանուցումն ստանալու օրվանից 120 օրացուցային օրվա ընթացքում այն պատճառների վերացումը չհաստատելը, որոնց հետ կապված, կասեցվել էր վկայականի գործողությունը.

5) դատարանի կամ այլ լիազորված մարմնի (պաշտոնատար անձի)՝ այն վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն ուժի մեջ մտնելը, որի կատարման համար պատասխանատվության ենթարկելը անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է որպես լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից լիազորված տնտեսական օպերատորին հանելու համար հիմք.

6) այնպիսի հանցագործություն (քրեական իրավախախտում) կատարելու վերաբերյալ դատարանի վճիռն ուժի մեջ մտնելը, որի կատարման համար պատասխանատվության ենթարկելը անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված է որպես լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից լիազորված տնտեսական օպերատորին հանելու համար հիմք.

7) սույն Օրենսգրքի 442-րդ հոդվածով նախատեսված՝ լիազորված տնտեսական օպերատորի պարտավորություններն օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի անգամ չկատարելը:

9. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող են սահմանվել լրացուցիչ հիմքեր լիազորված տնտեսական օպերատորին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից հանելու համար:

10. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել պայմաններ, որոնց դեպքում վկայականի գործողությունը սույն հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետով նախատեսված հիմքով չի կասեցվում մաքսային մարմնի կողմից կամ իրավաբանական անձին, սույն հոդվածի 8-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված հիմքերով, չեն հանում լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից:

11. Մաքսային մարմինը, սույն հոդվածի 8-րդ կետով նախատեսված հիմքերի առաջացման կամ դրանց մասին տեղեկատվության ստացման օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում, որոշում է ընդունում լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից իրավաբանական անձին հանելու մասին:

12. Սույն հոդվածի 8-րդ կետի 4-7-րդ ենթակետերով նախատեսված հիմքերով լիազորված տնտեսական օպերատորին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից հանելու դեպքում՝ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելու մասին դիմում կարելի է ներկայացնել լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից այդ անձին հանելու օրվանից մեկ տարին լրանալուց հետո:

13. Մաքսային մարմինը, լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից իրավաբանական անձին հանելու մասին որոշումն ընդունելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում, դրա մասին ծանուցում է լիազորված տնտեսական օպերատորին՝ նշելով հանելու համար հիմքերը, ինչպես նաև դրա մասին տեղեկատվությունը հայտնում է իր անդամ պետության մաքսային մարմիններին և այլ անդամ պետությունների մաքսային մարմիններին՝ սույն Օրենսգրքի 368-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 436. Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումը

1. Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումը տրամադրվում է այն դեպքերում, երբ այդպիսի ապահովումը լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման պայմանն է:

2. Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովմամբ երաշխավորվում է լիազորված տնտեսական օպերատորի՝ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը, տույժերը, տոկոսները վճարելու պարտավորության կատարումը այն դեպքերում, երբ, սույն Օրենսգրքին համապատասխան, այդ իրավաբանական անձի համար առաջանում է այդ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորություն կամ նա մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարողի հետ համապարտ պարտավորություն է կրում մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման մասով:

3. Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումը լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձի կողմից կամ այդպիսի ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձի կողմից տրամադրվում է այն մաքսային մարմնին, որին ներկայացվել է լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու կամ լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման չափը նվազեցնելու կամ ապահովման մի միջոցը մյուսով փոխարինելու մասին դիմում, կամ տրամադրվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված այլ մաքսային մարմնի:

4. Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորության կատարումն ապահովվում է սույն Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետում նշված կամ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարումն ապահովելու համար սույն Օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված եղանակներով:

5. Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումն ապահովելու համար սույն հոդվածի 3-րդ կետում նշված իրավաբանական անձն իրավունք ունի ընտրելու սույն Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետում նշված կամ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարումն ապահովելու համար սույն Օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված եղանակներից ցանկացածը:

6. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումն ապահովվում է որոշակի եղանակով (եղանակներով):

7. Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումը կարող է ապահովվել սույն հոդվածի 3-րդ կետում նշված իրավաբանական անձի ընտրությամբ՝ մի քանի միջոցներով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 6-րդ կետը:

8. Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումը տրամադրած իրավաբանական անձն ունի ապահովման մի միջոցը մյուսով փոխարինելու իրավունք՝ հաշվի առնելով սույն հոդվածի 6-րդ կետը, եթե լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման փոխարինվող ապահովման վրա բռնագանձում չի տարածվում՝ սույն Օրենսգրքի 11-րդ գլխին, 77-րդ և 270-րդ հոդվածներին համապատասխան:

9. Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումը պետք է անընդմեջ ապահովվի այն ժամանակահատվածում, որում իրավաբանական անձն ընդգրկվել է լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում, իսկ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարումը սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ մինչև մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության դադարումը:

10. Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման միջոցները կիրառելու կարգը, մի ապահովման միջոցը մյուսով փոխարինելու կարգը, լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման չափը նվազեցնելու կարգը՝ սույն հոդվածի 13-16-րդ կետերին համապատասխան, ինչպես նաև այն արժույթը, որով տրամադրվում է այդ ապահովումը, սահմանվում են այն անդամ պետության կողմից, որի մաքսային մարմնին տրամադրվում է լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումը:

11. Եթե լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովում տրամադրելու համար պահանջվում է կատարել այն արտարժույթի վերահաշվարկը, որով սահմանված է այդ ապահովման չափը, սույն հոդվածի 10-րդ կետին համապատասխան՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված արժույթով, ապա այդ վերահաշվարկը կատարվում է երաշխավորության պայմանագրի կամ գույքի գրավի մասին պայմանագրի կնքման օրվա դրությամբ գործող փոխարժեքով (այդ պայմանագրերում փոփոխություններ կատարելու դեպքում՝ երաշխավորության պայմանագրում կամ գույքի գրավի մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ պայմանագրի կնքման օրվա դրությամբ), իսկ այլ եղանակներով լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումը տրամադրելու դեպքում՝

1) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու պայմանների պահպանման մասին ծանուցումը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ՝ այդ ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու նպատակներով լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումը տրամադրելիս.

2) մաքսային մարմնի կողմից լիազորված տնտեսական օպերատորի՝ լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման գումարի նվազեցման մասին դիմումը գրանցելու օրվա դրությամբ.

3) մաքսային մարմնի կողմից լիազորված տնտեսական օպերատորի ապահովման մի միջոցը մյուսով փոխարինելու մասին դիմումը գրանցելու օրվա դրությամբ կամ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու պայմանների պահպանման նպատակով լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման այլ ապահովում տրամադրելիս.

12. Առաջին տիպի վկայականի տրամադրմամբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելիս լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումը տրամադրվում է 1 միլիոն եվրոյից ոչ պակաս գումարին համարժեք չափով:

13. Այն դեպքում, երբ առաջին տիպի վկայականը չի կասեցվել իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու օրվանից 2 տարվա ընթացքում, 3-րդ տարվանից սկսած՝ լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումն ապահովվում է 700 հազար եվրոյից ոչ պակաս գումարին համարժեք չափով:

14. Այն դեպքում, երբ առաջին տիպի վկայականը չի կասեցվել իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու օրվանից 4 տարվա ընթացքում, 5-րդ տարվանից սկսած՝ լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումն ապահովվում է 500 հազար եվրոյից ոչ պակաս գումարին համարժեք չափով:

15. Այն դեպքում, երբ առաջին տիպի վկայականը չի կասեցվել իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու օրվանից 5 տարվա ընթացքում, 6-րդ տարվանից սկսած՝ լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումն ապահովվում է 300 հազար եվրոյից ոչ պակաս գումարին համարժեք չափով:

16. Այն դեպքում, երբ առաջին տիպի վկայականը չի կասեցվել իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու օրվանից 6 տարվա ընթացքում, 7-րդ տարվանից սկսած՝ լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումն ապահովվում է 150 հազար եվրոյից ոչ պակաս գումարին համարժեք չափով:

17. Մաքսային մարմնի կողմից դիմումը գրանցելու օրվա դրությամբ երկրորդ կամ երրորդ տիպի վկայական ունեցող լիազորված տնտեսական օպերատոր համարվող իրավաբանական անձին առաջին տիպի վկայականի տրամադրմամբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելիս լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումը տրամադրվում է սույն հոդվածի 12-րդ կետին համապատասխան սահմանված գումարի կամ սույն հոդվածի 18-21-րդ կետերով սահմանված գումարի չափով:

18. Այն դեպքում, երբ երկրորդ կամ երրորդ տիպի վկայականը չի կասեցվել լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում անձին ընդգրկելու օրվանից 2 տարվա ընթացքում, 3-րդ տարվանից սկսած՝ լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումն ապահովվում է 700 հազար եվրոյից ոչ պակաս գումարին համարժեք չափով:

19. Այն դեպքում, երբ երկրորդ կամ երրորդ տիպի վկայականը չի կասեցվել լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու օրվանից 4 տարվա ընթացքում, 5-րդ տարվանից սկսած՝ լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումն ապահովվում է 500 հազար եվրոյից ոչ պակաս գումարին համարժեք չափով:

20. Այն դեպքում, երբ երկրորդ կամ երրորդ տիպի վկայականը չի կասեցվել լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու օրվանից 5 տարվա ընթացքում, 6-րդ տարվանից սկսած՝ լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումն ապահովվում է 300 հազար եվրոյից ոչ պակաս գումարին համարժեք չափով:

21. Այն դեպքում, երբ երկրորդ կամ երրորդ տիպի վկայականը չի կասեցվել լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելու օրվանից 6 տարվա ընթացքում, 7-րդ տարվանից սկսած՝ լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումն ապահովվում է 150 հազար եվրոյից ոչ պակաս գումարին համարժեք չափով:

22. Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում, մաքսային ներկայացուցիչների ռեեստրում և (կամ) մաքսային փոխադրողների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելիս լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումը և մաքսային գործի բնագավառում որպես մաքսային ներկայացուցիչ գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովումը տրամադրվում են՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 399-րդ հոդվածի 16-րդ կետը:

23. Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման վերադարձն իրականացվում է այդ իրավաբանական անձի մոտ սահմանված ժամկետում մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսների վճարման չկատարված պարտավորության բացակայության ժամանակ հետևյալ դեպքերում՝

1) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելուն հավակնող իրավաբանական անձին այդ ռեեստրում ընդգրկվելը մերժելը.

2) լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման մի միջոցը մյուսով փոխարինելը՝ սույն հոդվածի 8-րդ կետին համապատասխան.

3) լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման անհրաժեշտ չափը նվազեցնելը՝ սույն հոդվածով նախատեսված դեպքերում.

4) լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից լիազորված տնտեսական օպերատորին հանելը, եթե լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու պայմանը լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումն էր.

5) երրորդ տիպի վկայականի տրամադրմամբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում իրավաբանական անձին ընդգրկելը:

24. Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման վերադարձն իրականացվում է անդամ պետության այն մաքսային մարմնի կողմից, որին տրամադրվել էր այդ ապահովումը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

25. Եթե լիազորված տնտեսական օպերատորի նկատմամբ անցկացվում է մաքսային հսկողություն՝ մաքսային ստուգման ձևով, ապա լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման վերադարձն իրականացվում է այդ ստուգման ավարտից հետո:

Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել այլ պայմաններ, որոնց պահպանումը պարտադիր է լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման վերադարձն իրականացնելու համար:

26. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովման տրամադրումը հաստատող փաստաթղթերը սույն Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի 2-4-րդ ենթակետերում նշված կամ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարումն ապահովելու համար սույն Օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված եղանակներով վերադարձնելու կարգը և դեպքերը:

27. Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումը, որը տրամադրվել է սույն Օրենսգրքի 399-րդ հոդվածի 9-րդ կետին համապատասխան, պետք է ապահովի մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսները վճարելու պարտավորությունների կատարումը՝ սույն Օրենսգրքի 399-րդ հոդվածի 2-րդ կետին և սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

Հոդված 437. Լիազորված տնտեսական օպերատորին՝ հատուկ պարզեցված ընթացակարգերով աշխատելու հնարավորության տրամադրումը

1. Հատուկ պարզեցված ընթացակարգեր ասելով ենթադրվում են առանձին մաքսային գործառնություններ կատարելու և մաքսային հսկողություն անցկացնելու առանձնահատկությունները և սույն Օրենսգրքի դրույթների կիրառման այլ առանձնահատկություններ, որոնք կիրառվում են՝ կախված լիազորված տնտեսական օպերատորի վկայականի տիպից:

2. Առաջին տիպի վկայականը լիազորված տնտեսական օպերատորին տալիս է հետևյալ հատուկ պարզեցված ընթացակարգերից օգտվելու իրավունք՝

1) Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման, Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման, մաքսային հայտարարագրման և առաջնահերթ կարգով ապրանքների բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ կատարելը.

2) մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում չտրամադրելն այն ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս, որոնց դեպքում որպես հայտարարատու հանդես է գալիս լիազորված տնտեսական օպերատորը, եթե այդ ապահովման տրամադրումը սահմանված է սույն Օրենսգրքի 143-րդ հոդվածին համապատասխան:

3) սույն Օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածներով նախատեսված առանձնահատկություններով՝ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում չտրամադրելն այն ապրանքները բաց թողնելիս, որոնց դեպքում որպես հայտարարատու հանդես է գալիս լիազորված տնտեսական օպերատորը.

4) ապրանքները բաց թողնելը՝ մինչև սույն Օրենսգրքի 120-րդ և 441-րդ հոդվածներով ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը.

5) մաքսային հսկողություն անցկացնելը՝ առաջնահերթ կարգով մաքսային տեսազննման կամ մաքսային զննման ձևով այն նշանակելու դեպքում.

6) տրանսպորտային միջոցների բեռնասրահների (հատվածամասերի) կամ դրանց մասերի վրա լիազորված տնտեսական օպերատորի կողմից տեղադրված կապարակնիքները մաքսային մարմինների կողմից որպես նույնականացման միջոց ճանաչելը: Այդպիսի կապարակնիքներին ներկայացվող պահանջները սահմանվում են

Հանձնաժողովի կողմից.

7) լիազորված տնտեսական օպերատորի կողմից փոխադրվող ապրանքների համար ապրանքների փոխադրման երթուղի չսահմանելը.

8) մաքսային մարմինների կողմից անցկացվող փորձնական նախագծերում և ժամանակի նվազեցմանն ու մաքսային գործառնությունների կատարման կարգի օպտիմալացմանն ուղղված փորձարկումներում առաջնահերթ կարգով մասնակցելը.

9) մաքսային հսկողության տակ գտնվող և Միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների բեռնաթափում, փոխաբեռնում (վերաբեռնում) և այլ բեռնային գործողություններ իրականացնելը լիազորված տնտեսական օպերատոր հանդիսացող փոխադրողի կողմից՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող (տրանսպորտով փոխադրվող) ապրանքների, ինչպես նաև այդպիսի ապրանքներ փոխադրող միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներն այլ տրանսպորտային միջոցներով փոխարինման, այդ թվում՝ տեղադրված կապարակնիքներն ու կնիքները հեռացնելու միջոցով՝ առանց այն մաքսային մարմնի թույլտվության, որի գործունեության ոլորտում իրականացվում է համապատասխան գործողությունը, կամ առանց նրան ծանուցելու:

3. Երկրորդ տիպի վկայականը լիազորված տնտեսական օպերատորին տալիս է հետևյալ հատուկ պարզեցված ընթացակարգերից օգտվելու իրավունք՝

1) լիազորված տնտեսական օպերատորների ապրանքների ժամանակավոր պահպանումը լիազորված տնտեսական օպերատորի կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում).

2) լիազորված տնտեսական օպերատորի կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում) լիազորված տնտեսական օպերատոր չհանդիսացող անձանց ապրանքների ժամանակավոր պահպանում, եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ.

3) ապրանքները՝ լիազորված տնտեսական օպերատորի կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում) ստեղծված մաքսային հսկողության գոտի հասցնելը, դրանք մաքսային հսկողության գոտում տեղակայելը, մաքսային հսկողություն անցկացնելը և այդպիսի կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու հետ կապված մաքսային գործառնություններ կատարելը.

4) լիազորված տնտեսական օպերատորի կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում) մաքսային հսկողություն անցկացնելը.

5) ապրանքների մաքսային հայտարարագրման ու բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ կատարելն այն մաքսային մարմնից տարբեր մաքսային մարմնում, որի գործունեության տարածքում գտնվում են ապրանքները, եթե այդ մաքսային մարմինները գտնվում են մեկ անդամ պետության տարածքում. Անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ կարող է սահմանվել այդ հատուկ պարզեցված ընթացակարգն իրականացնելիս նշված մաքսային գործառնությունների կատարման կարգը.

6) մաքսային հսկողություն անցկացնելը՝ առաջնահերթ կարգով մաքսային տեսազննման կամ մաքսային զննման ձևով այն նշանակելու դեպքում.

7) լիազորված տնտեսական օպերատորի կողմից այն նույնականացման միջոցները կիրառելը, որոնք օգտագործվում են մաքսային մարմինների կողմից՝ սույն հոդվածի 7-րդ կետին համապատասխան սահմանված կարգով.

8) սույն Օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածներով նախատեսված առանձնահատկություններով՝ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովում չտրամադրելն այն ապրանքները բաց թողնելիս, որոնց դեպքում որպես հայտարարատու հանդես է գալիս լիազորված տնտեսական օպերատորը.

9) ապրանքները բաց թողնելը՝ մինչև սույն Օրենսգրքի 120-րդ և 441-րդ հոդվածներով ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը.

10) ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման չտրամադրելը սույն Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու դեպքում, եթե լիազորված տնտեսական օպերատորը հանդիսանում է ապրանքների հայտարարատու:

4. Երրորդ տիպի վկայականը լիազորված տնտեսական օպերատորին տալիս է սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում նշված հատուկ պարզեցված ընթացակարգերից օգտվելու իրավունք:

5. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու սույն հոդվածով չնախատեսված այլ հատուկ պարզեցված ընթացակարգեր, որոնք տրամադրվում են լիազորված տնտեսական օպերատորներին:

6. Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու դեպքեր և (կամ) ապրանքների կատեգորիաներ, որոնց առնչությամբ սույն հոդվածով նախատեսված առանձին հատուկ պարզեցված ընթացակարգերը չեն կիրառվում:

7. Լիազորված տնտեսական օպերատորների կողմից այն նույնականացման միջոցների կիրառման կարգը, որոնք օգտագործվում են մաքսային մարմինների կողմից, ինչպես նաև դրանց հանդեպ ներկայացվող պահանջները սահմանվում են Հանձնաժողովի կողմից:

Հոդված 438. Մաքսային գործառնությունների իրականացում առաջնահերթ կարգով

1. Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման կամ Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման հետ կապված մաքսային գործառնությունները, որոնք կատարվում են առաջին և երրորդ տիպի վկայական ունեցող լիազորված տնտեսական օպերատորի կողմից, կատարվում են առաջնահերթ կարգով՝ Միության մաքսային տարածքով ապրանքների տեղափոխման վայրերում տեխնիկական և ենթակառուցվածքային հնարավորությունների առկայության դեպքում:

2. Միության մաքսային տարածքով ապրանքների տեղափոխման վայրերում տեխնիկական և ենթակառուցվածքային հնարավորությունների առկայության դեպքում մաքսային գործառնություններն առաջնահերթ կարգով կատարելը կազմակերպելու համար մաքսային մարմինները՝

1) սահմանում են պաշտոնատար անձանց՝ այդ գործառնությունները կատարելու համար.

2) նախատեսում են անդամ պետությունների պետական (մաքսային) սահմաններով ավտոմոբիլային անցակետերում առանձին երթևեկության գոտիներ առաջին կամ երրորդ տիպի վկայականներ ունեցող լիազորված օպերատորների համար, և այդ անցակետերի ցանկը տեղադրում են Ինտերնետ ցանցում՝ իրենց պաշտոնական կայքերում:

3. Ապրանքների մաքսային հայտարարագրման և բացթողման հետ կապված մաքսային գործառնությունները մաքսային մարմնի կողմից կատարվում են առաջնահերթ կարգով, եթե՝

1) ապրանքների հայտարարատուն առաջին կամ երրորդ տիպի վկայական ունեցող լիազորված տնտեսական օպերատորն է.

2) մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնությունները կատարվում են այն մաքսային ներկայացուցչի կողմից, որը առաջին կամ երրորդ տիպի վկայական ունեցող լիազորված տնտեսական օպերատոր է:

Հոդված 439. Ապրանքների ժամանակավոր պահպանության առանձնահատկությունները լիազորված տնտեսական օպերատորի կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում)

1. Ապրանքների ժամանակավոր պահպանումը կարող է իրականացվել երկրորդ կամ երրորդ տիպի վկայական ունեցող լիազորված տնտեսական օպերատորի այն կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում), որոնք համապատասխանում են սույն Օրենսգրքի 433-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն նախատեսված պահանջներին:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված կառույցները, շինությունները (շինությունների մասերը) և (կամ) բաց հրապարակները (բաց հրապարակների մասերը) համարվում են մաքսային հսկողության գոտի:

3. Լիազորված տնտեսական օպերատորի կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում) թույլատրվում է ժամանակավոր պահպանման տակ գտնվող ապրանքների հետ այլ ապրանքների պահպանումը՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն Օրենսգրքի 435-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքերով վկայականի գործողությունը կասեցնելու դեպքում լիազորված տնտեսական օպերատորի կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում) ապրանքները ժամանակավոր պահպանման հանձնելը չի թույլատրվում՝ մինչև սույն Օրենսգրքի 435-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերին համապատասխան, վկայականի գործողությունը վերսկսելը:

Հոդված 440. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողության դադարեցման առանձնահատկությունները լիազորված տնտեսական օպերատորի կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում) ստեղծված մաքսային հսկողության գոտի ապրանքները հասցնելիս

1. «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու համար լիազորված տնտեսական օպերատորի կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում) ստեղծված մաքսային հսկողության գոտի ապրանքները հասցնելուց հետո փոխադրողը պարտավոր է լիազորված տնտեսական օպերատորին ներկայացնել տեղեկություններ տարանցման հայտարարագրի համարի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել իր մոտ առկա տրանսպորտային (փոխադրման) և առևտրային փաստաթղթերը:

2. Լիազորված տնտեսական օպերատորը պարտավոր է՝

1) անցկացնել այն տրանսպորտային միջոցի տեսազննումը, որով առաքվել են ապրանքները, նույնականացման միջոցների փոփոխման, հեռացման, ոչնչացման կամ փոխարինման և (կամ) այդ տրանսպորտային միջոցի բեռնասրահների (հատվածամասերի) վնասման մասին վկայող փաստերի առկայությունը կամ բացակայությունը սահմանելու նպատակով.

2) ուղարկել նշանակման մաքսային մարմին մաքսային հայտարարագրի համարի, նույնականացման միջոցների առկայության (բացակայության), նույնականացման միջոցների՝ ներառյալ դրանց համարների, ինչպես նաև նույնականացման միջոցների փոփոխման, հեռացման, ոչնչացման կամ փոխարինման և (կամ) տրանսպորտային միջոցների բեռնասրահների (հատվածամասերի) վնասման նշանների առկայության (բացակայության) մասին տեղեկություններ՝ փոխադրողից սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկություններն ու փաստաթղթերն ստանալու պահից 1 ժամվա ընթացքում, իսկ դրանք նշանակման մաքսային մարմնի աշխատանքային ժամից դուրս ստանալու դեպքում՝ այդ մաքսային մարմնի աշխատանքային ժամի մեկնարկից ոչ ուշ, քան 1 ժամվա ընթացքում.

3) ապահովել ապրանքների պահպանումը և (կամ) թույլ չտալ կատարել ապրանքների հետ կապված այնպիսի գործողություններ, որոնց հետևանքով դրանց վիճակը փոփոխվում է, և փաթեթվածքը խախտվում է, թույլ չտալ դրանցից օգտվել կամ դրանք տնօրինել՝ մինչև մաքսային մարմնից նույնականացման միջոցները հանելու համար թույլտվություն ստանալը:

3. Նշանակման մաքսային մարմինը, սույն հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տեղեկություններն ստանալու պահից ոչ ուշ, քան 3 ժամվա ընթացքում, իսկ եթե դրանք ստացվել են նշանակման մաքսային մարմնի աշխատանքային ժամի ավարտին նախորդող 3 ժամից ավելի ուշ, ապա այդ մաքսային մարմնի աշխատանքային ժամի մեկնարկից ոչ ուշ, քան 3 ժամվա ընթացքում, թույլ է տալիս հեռացնել նույնականացման միջոցները, եթե դրանք կիրառվել են կամ տեղեկացնում է նույնականացման միջոցների հեռացման արգելքի մասին, իսկ այն ապրանքների մասով, որոնց հետ կապված նույնականացման միջոցներ չեն կիրառվել, թույլ է տալիս կամ արգելում է ապրանքների հետ հետագա գործողություններ կատարելը:

4. Այն դեպքում, երբ նշանակման մաքսային մարմինը լիազորված տնտեսական օպերատորին թույլ է տվել հեռացնել նույնականացման միջոցները, եթե դրանք կիրառվել են, լիազորված տնտեսական օպերատորը փոխադրողի ներկայությամբ իրականացնում է նույնականացման միջոցների հեռացումը և փոխադրողից ընդունում է ապրանքները՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Այն դեպքում, երբ նույնականացման միջոցները չեն կիրառվել, և նշանակման մաքսային մարմինը թույլ է տվել ապրանքների հետ կապված հետագա գործողությունների անցկացումը, լիազորված տնտեսական օպերատորը փոխադրողից ընդունում է ապրանքները՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Լիազորված տնտեսական օպերատորի կողմից փոխադրողից ապրանքներն ընդունելու փաստը հաստատվում է փոխադրողի մոտ առկա տրանսպորտային (փոխադրման), առևտրային փաստաթղթերի մեջ փոխադրողից ապրանքներն ընդունելու ամսաթվի և ժամի վերաբերյալ նշումներ կատարելու միջոցով:

Նշված նշումները կատարելուց հետո լիազորված տնտեսական օպերատորն անհապաղ նշանակման մաքսային մարմին է ուղարկում տարանցման հայտարարագրի համարի, փոխադրողից ապրանքներն ընդունելու ամսաթվի և ժամի վերաբերյալ տեղեկություններ պարունակող ծանուցում:

5. Նշանակման մաքսային մարմինը, լիազորված տնտեսական օպերատորից սույն հոդվածի 4-րդ կետի չորրորդ պարբերության մեջ նշված ծանուցումն ստանալուց հետո, ավարտում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն այդ ծանուցումն ստանալու պահից ոչ ուշ, քան 4 ժամվա ընթացքում, իսկ այն դեպքում, երբ նա ստացել է նշանակման մաքսային մարմնի աշխատանքային ժամի ավարտին նախորդող 4 ժամից ավելի ուշ, ապա՝ այդ մաքսային մարմնի աշխատանքային ժամի մեկնարկից ոչ ուշ, քան 4 ժամվա ընթացքում:

«Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը ձևակերպվում է մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի օգտագործմամբ՝ առանց սույն Օրենսգրքի 151-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված նշումները կատարելու:

Նշանակման մաքսային մարմինը ծանուցում է լիազորված տնտեսական օպերատորին «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու մասին:

Փոխադրողը կարող է ժամանել նշանակման մաքսային մարմին՝ սույն Օրենսգրքի 151-րդ հոդվածի 9-րդ կետին համապատասխան նշումներ կատարելու միջոցով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելը ձևակերպելու համար:

6. Լիազորված տնտեսական օպերատորի կողմից ապրանքները փոխադրողից ընդունելը ձևակերպելուց հետո, սույն հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան, այդ ապրանքները համարվում են լիազորված տնտեսական օպերատորի կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում) ժամանակավոր պահպանման հանձնված:

7. Այն դեպքում, երբ նշանակման մաքսային մարմինը լիազորված տնտեսական օպերատորին ծանուցել է մաքսային զննում կամ մաքսային տեսազննում անցկացնելու նկատառումներով նույնականացման միջոցների հեռացումն արգելելու մասին, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է սույն Օրենսգրքի 151-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերին համապատասխան:

8. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելիս այն ապրանքների նկատմամբ, որոնց ստացողը լիազորված տնտեսական օպերատորն է:

9. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել երկաթուղային տրանսպորտով փոխադրվող ապրանքները լիազորված տնտեսական օպերատորի կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում) ստեղծված մաքսային հսկողության գոտի հասցնելիս դրանց առնչությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու առանձնահատկությունների այլ կամ սույն հոդվածով նախատեսվածից տարբեր դեպքեր:

Հոդված 441. Այն ապրանքների հետ կապված մաքսային գործառնություններ կատարելու և դրանք բաց թողնելու առանձնահատկությունները, որոնց դեպքում որպես հայտարարատու հանդես է գալու լիազորված տնտեսական օպերատորը

1. Այն ապրանքները, որոնց դեպքում որպես հայտարարատու հանդես է գալու լիազորված տնտեսական օպերատորը, կարող են ապրանքների բացթողման համար հայտագրվել մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը՝ հետևյալ մաքսային ընթացակարգերին համապատասխան՝

1) ներքին սպառման համար բացթողում

2) մաքսային տարածքում վերամշակում

3) ներքին սպառման համար վերամշակում

4) ազատ մաքսային գոտի

5) ազատ պահեստ

6) ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)՝ առանց ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու և առանց հատուկ, հակագնացգման, փոխհատուցման տուրքերը վճարելու:

2. Մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքները բացթողման համար հայտագրելիս այն լիազորված տնտեսական օպերատորը, որը հանդես է գալու որպես ապրանքների հայտարարատու, մինչև ապրանքների հայտարարագիրը ներկայացնելը, ապրանքների բացթողման մասին դիմումը ներկայացնում է էլեկտրոնային փաստաթղթի ձևով:

3. Անկախ սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներից՝ ապրանքների հայտարարագիր ներկայացնելուց առաջ ապրանքների բացթողման մասին դիմումը կարող է ներկայացվել թղթային կրիչով փաստաթղթի ձևով, եթե մաքսային մարմինը հնարավորություն չունի ապահովելու անձի կողմից էլեկտրոնային փաստաթղթի ձևով այդ դիմումը ներկայացնելու անհրաժեշտության իրագործումը՝ տեխնիկական խափանումների, կապի միջոցների (հեռահաղորդակցության ցանցերի և Ինտերնետ ցանցի) աշխատանքի խախտումների, էլեկտրաէներգիայի անջատման հետևանքով մաքսային մարմինների կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգերի անսարքությունների պատճառով և անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում: Այդ դեպքում մինչև ապրանքների հայտարարագրի հայտագրումը ապրանքների բացթողման մասին դիմումը ներկայացվում է սույն Օրենսգրքի 120-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

4. Ապրանքների հայտարարագիրն այն ապրանքների մասով, որոնց բացթողումն իրականացվել է մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը, պետք է ներկայացվի ապրանքների բացթողման մասին դիմում ներկայացրած լիազորված տնտեսական օպերատորի կողմից ոչ ուշ, քան ապրանքների բացթողման ամսվան հաջորդող ամսվա 15-րդ օրը:

Նշված ժամկետի հաշվարկումն իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 4-րդ հոդվածի 6-րդ կետը:

5. Ապրանքները բացթողման համար հայտագրելիս մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնացգման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման տրամադրում չի պահանջվում այն ապրանքների մասով ապրանքների հայտարարագիր ներկայացնելու համար, որոնց դեպքում որպես հայտարարատու հանդես է գալու լիազորված տնտեսական օպերատորը:

Հոդված 442. Լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունները

1. Լիազորված տնտեսական օպերատորը պարտավոր է՝

1) պահպանել լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու պայմանները, որոնք սահմանված են սույն Օրենսգրքի 433-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետով.

2) ապահովել լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումը՝ սույն Օրենսգրքի 436-րդ հոդվածին համապատասխան.

3) տեղեկացնել այդ իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկած մաքսային մարմնի լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման ժամանակ նրա կողմից ներկայացված տեղեկությունների փոփոխման մասին, և ներկայացնել այդ փոփոխությունները հաստատող փաստաթղթեր՝ այդ տեղեկությունների փոփոխման օրվանից 14 օրացուցային օրվա ընթացքում կամ այն օրվանից, երբ նրան հայտնի են դարձել այդ փոփոխությունները.

4) կատարել մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնացգման, փոխհատուցման տուրքերը վճարելու

պարտավորությունը սույն Օրենսգրքին համապատասխան՝ ոչ ուշ, քան սույն Օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ կետին և 73-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան մաքսային մարմնի կողմից ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետի վերջին օրը.

5) կատարել սույն Օրենսգրքով, մաքսային կարգավորման ոլորտի այլ միջազգային պայմանագրերով ու ակտերով և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

2. Առաջին կամ երրորդ տիպի վկայականի տրամադրմամբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկված լիազորված տնտեսական օպերատորները, սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պարտավորությունները պահպանելուց բացի, պարտավոր են նաև պահպանել սույն Օրենսգրքի 437-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան Հանձնաժողովի կողմից սահմանվող՝ կապարակնիքներին ներկայացվող պահանջները:

3. Երկրորդ կամ երրորդ տիպի վկայականի տրամադրմամբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկված լիազորված տնտեսական օպերատորները, սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պարտավորությունները պահպանելուց բացի, պարտավոր են նաև՝

1) պահպանել լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու պայմանները, որոնք սահմանված են սույն Օրենսգրքի 433-րդ հոդվածի 3-րդ կետի 2-4-րդ ենթակետերով.

2) պահպանել սույն Օրենսգրքի 437-րդ հոդվածի 7-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի կողմից սահմանվող՝ մաքսային մարմինների կողմից օգտագործվող նույնականացման միջոցների կիրառման կարգը.

3) կատարել մաքսային մարմինների պահանջները լիազորված տնտեսական օպերատորի այն կառույցներին, շինություններին (շինությունների մասերին) և (կամ) բաց հրապարակներին (բաց հրապարակների մասերին) մաքսային մարմինների պաշտոնատար անձանց անարգել հասանելիություն տրամադրելու վերաբերյալ, որոնցում իրականացվում է մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների պահպանումը, ինչպես նաև այդպիսի ապրանքների հաշվառման համակարգին անարգել հասանելիություն տրամադրելու վերաբերյալ:

4. Մաքսային մարմնին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման ժամանակ նրա կողմից ներկայացված տեղեկությունների փոփոխության մասին սույն հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետի ընթացքում տեղեկատվություն չտրամադրելու դեպքում լիազորված տնտեսական օպերատորը պատասխանատվություն է կրում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

5. Իրավաբանական անձին տրված վկայականի գործողությունը կասեցնելու կամ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից իրավաբանական անձին հանելու դեպքում այդ անձը պարտավոր է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման), ապրանքների ժամանակավոր պահպանման և այլ դեպքերում կատարել մաքսային գործառնություններ կամ այլ գործողություններ, որոնց կատարման պարտավորությունն առաջացել է մինչև վկայականի գործողությունը կասեցնելը կամ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրից իրավաբանական անձին հանելը:

Հոդված 443. Մաքսային մարմինների և լիազորված տնտեսական օպերատորների փոխգործակցությունը

1. Մաքսային մարմնի և լիազորված տնտեսական օպերատորի միջև փոխգործակցության կազմակերպման նպատակներով կնքվում է համաձայնագիր (հուշագիր կամ այլ փաստաթուղթ), եթե դա սահմանված է անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

2. Լիազորված տնտեսական օպերատորը մաքսային մարմնի հետ ընդհանուր փոխգործակցության համար պատասխանատու անձին կարող է սահմանել ղեկավարների և նրա աշխատակազմում գտնվող այն անձանց կազմից, որոնք պատասխանատու են հատուկ պարզեցված ընթացակարգերի կիրառմամբ մաքսային գործառնություններ կատարելու համար:

3. Մաքսային մարմինները հատուկ պարզեցված ընթացակարգերը կիրառելիս լիազորված տնտեսական օպերատորների հետ փոխգործակցության համակարգման նպատակներով, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում, կարող են սահմանել պաշտոնատար անձանց, որոնք պատասխանատու են այդպիսի փոխգործակցության կազմակերպման համար:

4. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել մաքսային մարմինների և լիազորված տնտեսական օպերատորի փոխգործակցության կարգը:

ԲԱԺԻՆ IX

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 444. Ընդհանուր անցումային դրույթներ

1. Սույն Օրենսգիրքը կիրառվում է մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով և ակտերով կարգավորվող և այն ուժի մեջ մտնելու օրվանից առաջացած հարաբերությունների նկատմամբ:

2. Մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով և ակտերով կարգավորվող՝ մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելն առաջացած հարաբերությունների մասով սույն Օրենսգիրքը կիրառվում է այն իրավունքների և պարտավորությունների նկատմամբ, որոնք կառաջանան այն ուժի մեջ մտնելու օրվանից՝ հաշվի առնելով սույն Օրենսգրքի 448-465-րդ հոդվածներով նախատեսված դրույթները:

3. Սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող մաքսային իրավահարաբերությունները կարգավորող՝ Հանձնաժողովի որոշումները պահպանում են իրենց իրավաբանական ուժը և կիրառվում են սույն Օրենսգրքին չհակասող մասով:

4. Եթե սույն Օրենսգրքին համապատասխան կիրառվող՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերը և ակտերը սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու պահին չեն մտել ուժի մեջ, ապա մինչև դրանց ուժի մեջ մտնելը կիրառվում է անդամ պետությունների՝ համապատասխան իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությունը, եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ:

5. Մինչև Հանձնաժողովի այն որոշումն ուժի մեջ մտնելը, որով սահմանվում են այն ապրանքների կատեգորիաները, որոնք չեն դասվում անձնական օգտագործման ապրանքների շարքին, կիրառվում է «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիրը:

Մինչև Հանձնաժողովի այն որոշումն ուժի մեջ մտնելը, որով սահմանվում են մաքսատուրքերի, հարկերի միասնական դրույքաչափերը՝ պայմանավորված անձնական օգտագործման ապրանքների կատեգորիաներով, արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերով և անձնական օգտագործման ապրանքները Միության մաքսային սահման ներմուծելու եղանակներով, կիրառվում է «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիրը:

Մինչև Հանձնաժողովի այն որոշումն ուժի մեջ մտնելը, որով սահմանվում են անձնական օգտագործման ապրանքների այն կատեգորիաները, որոնց համար ենթակա են վճարման միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերը, հարկերը, կիրառվում է «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիրը:

Մինչև Հանձնաժողովի այն որոշումն ուժի մեջ մտնելը, որով սահմանվում են առանց մաքսատուրքեր, հարկեր վճարելու՝ անձնական օգտագործման ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելու արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերը՝ պայմանավորված Միության մաքսային տարածք անձնական օգտագործման այդ ապրանքները ներմուծելու եղանակներով, կիրառվում է «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիրը:

Մինչև Հանձնաժողովի այն որոշումն ուժի մեջ մտնելը, որով սահմանվում են օգտագործման մեջ եղած անձնական օգտագործման այն ապրանքների ցանկն ու թիվը, որոնք օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային տարածքում իրենց գտնվելու ժամանակահատվածում, անկախ այդ ապրանքների արժեքից և (կամ) քաշից, կարող են ներմուծվել՝ առանց մաքսատուրքեր, հարկեր վճարելու, կիրառվում է «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիրը:

Մինչև Հանձնաժողովի այն որոշումն ուժի մեջ մտնելը, որով սահմանվում են անձնական օգտագործման ապրանքների կատեգորիաներով, Միության մաքսային տարածք այդ ապրանքները ներմուծող անձանցով և (կամ) Միության մաքսային տարածք անձնական օգտագործման այդ ապրանքները ներմուծելու եղանակներով պայմանավորված՝ անձնական օգտագործման ապրանքները մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ Միության մաքսային տարածք ներմուծելու դեպքերն ու պայմանները, կիրառվում է «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիրը:

Մինչև Հանձնաժողովի այն որոշումն ուժի մեջ մտնելը, որով սահմանվում է անձնական օգտագործման տրանսպորտային միջոց հանդիսացող ավտոտրանսպորտային, մոտոտրանսպորտային միջոցների շարժիչի թողարկման պահը և աշխատանքային ծավալը որոշելու կարգը, կիրառվում է «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիրը:

6. Մինչև սույն Օրենսգրքի 147-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան ընդունված՝ Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելը և մինչև սույն Օրենսգրքի 147-րդ հոդվածի 9-րդ կետի կատարումն ապահովող ընդհանուր գործընթացի՝ Միության շրջանակներում իրագործումը սկսելը կիրառվում է ««Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի վճարման

ապահովում տրամադրելուն առնչվող որոշ հարցերի, այդ ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման առանձնահատկությունների և բռնագանձված գումարները փոխանցելու կարգի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիրը:

7. Սույն հոդվածի 5-րդ և 6-րդ կետերում և սույն Օրենսգրքի 448-րդ հոդվածի 2-րդ կետում նշված միջազգային պայմանագրերը կիրառվում են սույն Օրենսգրքին չհակասող մասով՝ միայն Հանձնաժողովի իրավասությանը վերապահված՝ սույն հոդվածի 5-րդ և 6-րդ կետերով և սույն Օրենսգրքի 448-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հարցերի մասով և հաշվի առնելով սույն Օրենսգրքի 451-րդ հոդվածը:

8. Մինչև սույն Օրենսգրքի 209-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետին և 217-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան ընդունված՝ Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելը՝ սույն Օրենսգրքի 209-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում ներմուծման մաքսատուրքերի՝ ադվալորային դրույքաչափով հաշվարկման բազա է հանդիսանում այն ապրանքների մաքսային արժեքը, որոնք պատրաստվել (ստացվել) են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից, իսկ սույն Օրենսգրքի 217-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ այդպիսի բազա է հանդիսանում «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների մաքսային արժեքը:

9. Մինչև սույն Օրենսգրքի 391-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան ընդունված՝ Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելը՝ կիրառվում են «Մաքսային հսկողություն իրականացնելիս մաքսային փորձաքննություն անցկացնելու կարգի մասին» Մաքսային միության Հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի թիվ 258 որոշմամբ հաստատված՝ Մաքսային հսկողություն իրականացնելիս մաքսային փորձաքննություն անցկացնելու կարգի 24-րդ կետի դրույթները:

10. «Այն ապրանքների կատեգորիաների ցանկի մասին, որոնց նկատմամբ կարող է սահմանվել հատուկ մաքսային ընթացակարգ, և այդ ընթացակարգով ձևակերպելու պայմանների մասին» Մաքսային միության Հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի թիվ 329 որոշմամբ և «Քաղաքացիական ուղևորատար օդանավեր ներմուծելու դեպքում սակագնային արտոնությունների, մաքսատուրքերից, հարկերից լրիվ ազատման, ինչպես նաև ժամանակավոր ներմուծման ժամկետների հետաձգման և առանձին մաքսային ընթացակարգերի կիրառման մասին» Մաքսային միության Հանձնաժողովի 2010 թվականի հուլիսի 16-ի թիվ 328 որոշման 6-րդ կետով սահմանված ապրանքների նկատմամբ, մինչև սույն Օրենսգրքի 254-րդ հոդվածին համապատասխան այդ ապրանքները հատուկ մաքսային ընթացակարգով ձևակերպելու պայմանները և ապրանքների այդ կատեգորիաների նկատմամբ այն կիրառելու կարգը կարգավորող՝ Հանձնաժողովի որոշումներն ուժի մեջ մտնելը, հատուկ մաքսային ընթացակարգը կիրառվում է Մաքսային միության մաքսային օրենսգրքի 202-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ընդունված անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ ապրանքների կատեգորիաները սահմանած՝ Հանձնաժողովի նշված որոշումներով սահմանված պայմաններով:

Հոդված 445. Անցումային դրույթներ՝ մաքսային մարմիններին նախնական տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ

1. Մինչև սույն Օրենսգրքի 11-րդ հոդվածի 17-րդ կետին համապատասխան ընդունված՝ Հանձնաժողովի որոշումներն ուժի մեջ մտնելը նախնական տեղեկատվությունը տրամադրվում է մաքսային մարմիններին «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների ու տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվություն տրամադրելու ու փոխանակելու մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագրին համապատասխան ընդունված՝ Հանձնաժողովի ակտերով նախատեսված դեպքերում ու կարգով:

2. Սույն Օրենսգրքի 11-րդ հոդվածի 17-րդ կետին համապատասխան ընդունված և նախնական տեղեկատվության կազմը, այդպիսի տեղեկատվության կառուցվածքն ու ձևաչափը, դրա տրամադրման կարգն ու ժամկետները, մաքսային մարմիններին տրանսպորտի մեկ տեսակով փոխադրվող ապրանքների վերաբերյալ նախնական տեղեկատվություն տրամադրելու պարտավորություն կամ իրավունք ունեցող անձանց սահմանող՝ Հանձնաժողովի որոշումներն ուժի մեջ մտնելուն զուգահեռ նախնական տեղեկատվություն տրամադրվում է այդ որոշումներին համապատասխան:

Հոդված 446. Անցումային դրույթներ՝ ներմուծվող ապրանքների ծագումը որոշելու կանոնների կիրառման վերաբերյալ

1. Սույն Օրենսգրքի 28-31-րդ հոդվածների, 36-րդ հոդվածի 6-րդ կետի, 49-րդ հոդվածի 4-րդ կետի, 109-րդ հոդվածի 7-րդ և 10-րդ կետերի ու 314-րդ հոդվածի դրույթները կիրառվում են՝ հաշվի առնելով «Միության մասին» պայմանագրի 102-րդ հոդվածի 1-ին, 3-5-րդ կետերը:

2. Մինչև Հանձնաժողովի՝ սակագնային առանձնաշնորհումների վերականգնման դեպքերը և պայմանները սահմանող՝ սույն Օրենսգրքի 49-րդ հոդվածի 4-րդ կետում նշված որոշման ուժի մեջ մտնելը՝ սակագնային առանձնաշնորհումները վերականգնվում են՝ մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագիրը գրանցելու օրվանից մինչև 1 տարին լրանալն ապրանքների ծագումը հավաստելու և սակագնային առանձնաշնորհումներ

տրամադրելու այլ պայմանները պահպանելու պայմանով: Այդ դեպքում ներմուծման մաքսատուրքերի վճարված գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման)՝ սույն Օրենսգրքի 10-րդ գլխին համապատասխան:

Հոդված 447. Անցումային դրույթներ՝ սույն Օրենսգրքի 48-րդ հոդվածի վերաբերյալ

Առաջիկայում վճարման ենթակա ներմուծման մաքսատուրքերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվին մուծվող դրամական միջոցները (փողը) կանխավճար համարելու հնարավորության մասով սույն Օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները կիրառվում են այն միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից, որով նախատեսվում է «Միության մասին» պայմանագրում փոփոխություններ կատարել ներմուծման մաքսատուրքերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվին կանխավճար հաշվանցելու հնարավորության մասով:

Հոդված 448. Անցումային դրույթներ՝ սույն Օրենսգրքի 59-րդ հոդվածի վերաբերյալ

1. Մինչև Հանձնաժողովի կողմից սույն Օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետում նշված այն ապրանքների ցանկը որոշելը, որոնց հետ կապված կարող է տրամադրվել ներմուծման մաքսատուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն՝

1) սույն Օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի կիրառման նպատակներով գյուղատնտեսական տեխնիկայի շարքին դասվում է Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8424 81, 8433 51 և 8433 59 ենթադիրքերում դասակարգվող գյուղատնտեսական տեխնիկան.

2) այլ ապրանքների ցանկը, որոնց դեպքում, սույն Օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետին համապատասխան, կարող է տրամադրվել ներմուծման մաքսատուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն, կարող է սահմանվել՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

2. Մինչև Հանձնաժողովի կողմից այն ապրանքների ցանկը որոշելը, որոնց հետ կապված կարող է տրամադրվել սույն Օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ կետում նշված՝ ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորություն, ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորությունը, սույն Օրենսգրքի 60-րդ հոդվածին համապատասխան, ներմուծման մաքսատուրքերի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու տոկոսների վճարմամբ տրամադրվում է «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների բացթողման օրվան հաջորդող օրվանից վեց ամիսը չգերազանցող ժամկետով՝ «Մաքսատուրքերը վճարելու ժամկետները փոփոխելու հիմքերի, պայմանների ու կարգի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետի առաջին մասի 7-րդ ենթակետով նախատեսված հիմքի առկայության դեպքում և նշված կետի երկրորդ ու երրորդ մասերի հաշվառմամբ:

Ներմուծման մաքսատուրքերի վճարումը նշված հիմքով հետաձգելու կամ տարաժամկետ կատարելու հնարավորությունը տրամադրվում է սույն Օրենսգրքի 8-րդ գլխին համապատասխան:

Հոդված 449. Անցումային դրույթներ՝ մաքսային գործառնությունների իրականացման առանձնահատկությունների վերաբերյալ

1. Մինչև Միության շրջանակներում միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելը, որով թույլատրվում է ապրանքների հայտարարագիրը ներկայացնել Մաքսային միության մաքսային տարածքում ցանկացած մաքսային մարմին, ապրանքների հայտարարագիրը ներկայացվում է՝

1) այն անդամ պետության մաքսային մարմին, որի օրենսդրությանը համապատասխան ստեղծվել է, գրանցված է, կամ որի տարածքում մշտապես բնակվում է ապրանքների հայտարարատու հանդիսացող անձը, եթե որպես ապրանքների հայտարարատու հանդես է գալիս անդամ պետության՝ սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված անձը, ինչպես նաև սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի երկրորդ պարբերությունում նշված օտարերկրյա անձը.

2) այն անդամ պետության մաքսային մարմին, որի տարածքում գտնվում են հայտարարագրվող ապրանքները, եթե որպես ապրանքների հայտարարատու հանդես է գալիս սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի երրորդ կամ չորրորդ պարբերությունում կամ սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետում նշված օտարերկրյա անձը.

3) այն անդամ պետության մաքսային մարմին, որի տարածքում գտնվում են հայտարարագրվող ապրանքները և սույն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված անձը, եթե որպես ապրանքների հայտարարատու հանդես է գալիս այդ անձը:

2. Սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ժամանակավոր պահպանման մեջ գտնվող ապրանքների ժամանակավոր պահպանման ժամկետը հաշվարկվում է սույն Օրենսգրքի 101-րդ հոդվածին համապատասխան:

3. Այն ապրանքները, որոնց մասին մաքսային հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվել է մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը, ենթակա են հայտագրված մաքսային ընթացակարգով ձևակերպման՝ Մաքսային միության օրենսդրությանը և անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված կարգով և պայմաններով՝ մաքսային մարմնի կողմից այդ մաքսային հայտարարագիրը գրանցելու օրվա դրությամբ:

4. Անկախ սույն Օրենսգրքի 104-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներից՝ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը Հայաստանի Հանրապետությունում ապրանքների մաքսային հայտարարագրումը կիրականացվի գրավոր կամ էլեկտրոնային ձևով՝ հայտարարատուի ընտրությամբ:

5. Մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը Մաքսային միության մաքսային Օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան բաց թողնված ապրանքների մաքսային հայտարարագրումն ու հայտարարատուի՝ այդ բացթողման հետ կապված մյուս պարտավորություններն իրականացվում և ենթակա են կատարման՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ այդ ապրանքների բացթողման օրվա դրությամբ նախատեսված ժամկետում, կարգով ու պայմաններով:

6. Այն ապրանքների դեպքում, որոնց մաքսային հայտարարագրումը մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելն իրականացվում էր Մաքսային միության մաքսային օրենսգրքի 194-րդ հոդվածին համապատասխան, անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ, դրանց բացթողման, մաքսային ընթացակարգերով ձևակերպման և (կամ) մաքսային ընթացակարգերի գործողությունն ավարտելու հետ կապված մաքսային գործառնությունների իրականացումը սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո իրականացվում է Մաքսային Միության մաքսային օրենսդրությամբ և անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ու պայմաններով:

Հոդված 450. Անցումային դրույթներ՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների առանձին կատեգորիաների վերաբերյալ

Այն ապրանքների դեպքում, որոնք մինչև 2010 թվականի հուլիսի 1-ը ձևակերպվել են Ղազախստանի Հանրապետությունում «ապրանքների բացթողում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով և Ռուսաստանի Դաշնությունում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ռեժիմով՝ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված՝ այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների հետ կապված արտոնությունների կիրառմամբ, և որոնց մասով Մաքսային միության մաքսային օրենսգրքի 211-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված և այդ ապրանքների «ապրանքների բացթողում ազատ շրջանառության համար» և «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ռեժիմներին համապատասխան բացթողման օրվանից հաշվարկված ժամկետը սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ լրացել է, իսկ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 211-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան՝ մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը վրա չի հասել, մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը դադարեցվել է 2015 թվականի հուլիսի 2-ին:

Հոդված 451. Անցումային դրույթներ՝ ապահովման հավաստագրի ձևակերպման վերաբերյալ

Եթե «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպումն իրականացվում է մեկ անդամ պետության մաքսային մարմնի կողմից, իսկ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունների կատարման ապահովումը տրամադրվում է այն անդամ պետության մաքսային մարմնին, որտեղ գտնվում է նշանակման մաքսային մարմինը, ապա, անկախ սույն Օրենսգրքի 147-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներից, մինչև 2018 թվականի հունվարի 1-ն ապահովման հավաստագիրը կարող է ձևակերպվել էլեկտրոնային փաստաթղթի կամ թղթային կրիչի վրա փաստաթղթի ձևով:

Հոդված 452. Անցումային դրույթներ՝ մաքսային ընթացակարգերի կիրառման վերաբերյալ

1. Այն մաքսային ընթացակարգերով ձևակերպված ապրանքների նկատմամբ, որոնց գործողությունը սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ չի ավարտվել, սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից ապրանքների օգտագործման պայմանները ենթակա են կատարման՝ սույն Օրենսգրքով նախատեսված այդ մաքսային ընթացակարգերին համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ապրանքների նկատմամբ առաջացած մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը, որի կատարման ժամկետը (վճարման ժամկետը) վրա չի հասել մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրը, ենթակա է կատարման՝ սույն Օրենսգրքով նախատեսված կարգով, ժամկետներում և չափերով, հանգամանքների ի հայտ գալու դեպքում, և (կամ) դադարում է՝ սույն Օրենսգրքին համապատասխան:

3. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են նաև հետևյալի նկատմամբ՝

1) Մաքսային Միության մաքսային Օրենսգրքի 370-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերին համապատասխան՝ մաքսային ընթացակարգերով ձևակերպված՝ ճանաչված ապրանքների.

2) «Ազատ պահեստների և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի 19-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված համարվող ապրանքների.

3) «Մաքսային Միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի վերաբերյալ» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի 23-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված համարվող ապրանքների:

Հոդված 453. Անցումային դրույթներ՝ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի կիրառման վերաբերյալ

1. Մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ներմուծման մաքսատուրքերի, հարկերի լրիվ կամ մասնակի պայմանական ազատմամբ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից կիրառվում են սույն Օրենսգրքի այն դրույթները, որոնցով կարգավորվում են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման ու վճարման առանձնահատկությունները՝ առանց ներմուծման մաքսատուրքեր, հարկեր կամ դրանց մասնակի վճարմամբ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների համար:

2. Մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելն առաջացած և կատարման ենթակա «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունը նշված մաքսային ընթացակարգի գործողությունը չավարտելու հետ կապված, որը սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ չի կատարվել ամբողջ չափով, ենթակա է կատարման ներմուծման մաքսատուրքերի, հարկերի գումարների չափով, որոնք վճարման ենթակա կլինեին այնպես, ինչպես, եթե այդ ապրանքների նկատմամբ կիրառվեր ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից մասնակի ազատում՝ Մաքսային Միության մաքսային Օրենսգրքի 282-րդ հոդվածին համապատասխան, ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման ժամկետը վրա հասնելու օրվանից մինչև Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանման օրն ընկած ժամանակահատվածի համար, սակայն ոչ ավելի՝ ներմուծման այն մաքսատուրքերի, հարկերի գումարից, որոնք վճարման ենթակա կլինեին, եթե «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները ձևակերպվեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով, որոնք հաշվարկվել էին ապրանքները «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված մաքսային հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ:

Սույն կետի դրույթները կիրառվում են նշված այն ապրանքների նկատմամբ, որոնք Միության մաքսային տարածքից արտահանվել են «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգի գործողության ժամկետը լրանալուց հետո:

Հոդված 454. Անցումային դրույթներ՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ

1. Մինչև Հանձնաժողովի՝ սույն Օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված որոշումն ուժի մեջ մտնելը, որով սահմանվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները՝ որպես Միության ապրանքներ ճանաչելու համար բավարար համարվող պայմանների, արտադրական ու տեխնոլոգիական գործողությունների ցանկը, «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները՝ որպես Միության ապրանքներ ճանաչելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում, Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում և Ղրղզստանի Հանրապետությունում կիրառվում են այդ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված բավարար վերամշակման չափանիշները:

Սույն կետի առաջին պարբերությունում նշված ապրանքները, որոնց ծագումը Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության և Ղրղզստանի Հանրապետության համար հաստատված է CT-1 ձևի ապրանքի ծագման հավաստագրով, իսկ Ղազախստանի Հանրապետության համար՝ «CT-KZ» ձևի ապրանքի ծագման հավաստագրով, ճանաչվում են որպես Միության ապրանքներ:

2. Սույն Օրենսգրքի 208-րդ հոդվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետում նշված հանգամանքների առկայության դեպքում սույն Օրենսգրքի 208-րդ հոդվածի 10-րդ կետը չի կիրառվում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների նկատմամբ մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրը:

Հոդված 455. Անդամ պետությունների առանձին ԱՏԳ-ներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կիրառման առանձնահատկությունները

1. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի կիրառման՝ սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները կիրառվում են՝

1) 2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Ռուսաստանի Դաշնությունում գործող երեք ԱՏԳ-ներում, որոնց սահմաններն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են Միության մաքսային սահմանի հատվածների հետ,

2) հինգ ԱՏԳ-ներում, որոնց սահմաններն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են Միության մաքսային սահմանի հատվածների հետ, կամ որոնց սահմաններում տեղակայված են օդային տրանսպորտով Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրերը.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվող՝ Հայաստանի Հանրապետությունում մեկ ԱՏԳ-ի համար.

Բելառուսի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվող՝ Բելառուսի Հանրապետությունում երկու ԱՏԳ-ների համար.

Ղազախստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվող՝ Ղազախստանի Հանրապետությունում մեկ ԱՏԳ-ի համար.

Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվող՝ Ղրղզստանի Հանրապետությունում մեկ ԱՏԳ-ի համար:

Անդամ պետությունների կողմից տրամադրվող տեղեկատվության հիման վրա՝ Հանձնաժողովը վարում է սույն կետի 2-րդ ենթակետում նշված ԱՏԳ-ների ռեեստրը:

2. Սույն Օրենսգրքի 11-րդ հոդվածին համապատասխան՝ մաքսային մարմիններին տրամադրվող նախնական տեղեկատվությունը կարող է չներկայացվել Միության մաքսային սահմանով տեղափոխվող և սույն հոդվածի 1-ին կետում նշված ԱՏԳ տարածքներ ներմուծվող ապրանքների նկատմամբ, եթե դա նախատեսված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում ստեղծվել են այդ ԱՏԳ-ները:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ԱՏԳ տարածքներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների օգտագործմամբ պատրաստված (ստացված) ապրանքների նկատմամբ, այլ գործողությունների հետ մեկտեղ՝ թույլատրվում է սույն Օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետում նշված՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերամշակման գործողությունների իրականացման ժամանակ ապրանքների ծախսում (սպառում) չհանդիսացող սպառումը՝ այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանվող դեպքերում, որի տարածքում է ստեղծվել ԱՏԳ-ն:

Սույն կետին համապատասխան ապրանքների սպառման դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու կարգը սահմանվում է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի տարածքում է ստեղծվել ԱՏԳ-ը:

4. Անձի կողմից սույն հոդվածի 1-ին կետում նշված ԱՏԳ ռեզիդենտի (մասնակցի, սուբյեկտի) կարգավիճակը կորցնելու դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով ավարտվում է՝ հաշվի առնելով այդ ԱՏԳ-ի գործունեության առանձնահատկությունները:

5. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ԱՏԳ-ների նկատմամբ անդամ պետությունների օրենսդրությամբ՝

1) կարող է սահմանվել, որ այդպիսի ԱՏԳ-ների տարածքներում տեղավորման և (կամ) օգտագործման համար «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նկատմամբ որպես այդպիսի ապրանքների հայտարարատուներ կարող են հանդես գալ այդ ԱՏԳ-ների ռեզիդենտներ (մասնակիցներ, սուբյեկտներ) չհանդիսացող անդամ պետության՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված իրավաբանական անձինք, որի տարածքում ստեղծվել են այդ ԱՏԳ-ները.

2) կարող են սահմանվել դեպքեր, երբ նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ համարվող ԱՏԳ-ների համար սույն Օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ապրանքների ձևակերպման առանձնահատկությունները կիրառվում են այդ ԱՏԳ-ների տարածքներ ներմուծվող ապրանքների նկատմամբ: Այս դեպքերում նշված ԱՏԳ-ների տարածքներ ներմուծվող ապրանքները ենթակա են մաքսային հայտարարագրման՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված այնպիսի ժամկետում, որը չի կարող գերազանցել դրանք այդ ԱՏԳ-ի տարածք ներմուծելու օրվանից 4 ամիսը.

3) կարող են սահմանվել այնպիսի մաքսային գործառնությունների իրականացման առանձնահատկություններ, որոնք կապված են ապրանքներն այդ ԱՏԳ-ների տարածքներ ներմուծելիս Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման և ապրանքներն այդ ԱՏԳ-ների տարածքներից արտահանելիս Միության մաքսային տարածքից ապրանքների մեկնման հետ.

4) կարող է սահմանվել, որ սույն Օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերը չեն կիրառվում.

5) կարող է սահմանվել, որ ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման ժամկետը վրա չի հասնում՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքների և (կամ) «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա

ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կորստի դեպքում, եթե նշված ապրանքները կորել են այդ ԱՏԳ-ի տարածքում.

6. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպման ենթակա չեն Ռուսաստանի Դաշնության՝ սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ԱՏԳ-ների տարածքներում գտնվող Միության ապրանքները կամ այդ ԱՏԳ-ների տարածքներ ներմուծվող Միության ապրանքները:

7. Ռուսաստանի Դաշնության՝ Միության մաքսային տարածքի մնացած մասի հետ ընդհանուր ցամաքային սահման ունեցող, սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները կարող են արտահանվել այդ ԱՏԳ-ի տարածքներից՝ առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու, եթե այդ ապրանքներն այդ ԱՏԳ-ի ռեզիդենտների կողմից սեփական արտադրական և տեխնոլոգիական կարիքների համար արտահանվում են այն անդամ պետության վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքի մնացած մաս, որի տարածքում ստեղծված է այդ ԱՏԳ-ն:

8. Ռուսաստանի Դաշնության՝ Միության մաքսային տարածքի մնացած մասի հետ ընդհանուր ցամաքային սահմաններ չունեցող, սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ԱՏԳ տարածքներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված տրանսպորտային միջոցները, որոնք սույն հոդվածի 10-րդ կետին համապատասխան՝ օգտագործվում են որպես միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ, կարող են ժամանակավորապես արտահանվել այդ ԱՏԳ-ների տարածքներից՝ առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու:

9. Ռուսաստանի Դաշնության՝ Միության մաքսային տարածքի մնացած մասի հետ ընդհանուր ցամաքային սահմաններ չունեցող, սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ԱՏԳ տարածքներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված, որպես միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ օգտագործվող տրանսպորտային միջոցների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքների փոխանցումը թույլատրվում է առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու:

Նշված տրանսպորտային միջոցների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքների փոխանցման դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների օգտագործման պայմանները պահպանելու պարտականությունը և այդ մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու պարտականությունը վերապահվում է այն անձին, որին փոխանցվել են տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման այդ իրավունքները:

10. Ռուսաստանի Դաշնության՝ Միության մաքսային տարածքի մնացած մասի հետ ընդհանուր ցամաքային սահմաններ չունեցող, սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ԱՏԳ տարածքներում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված և օտարերկրյա ապրանքների կարգավիճակ ունեցող տրանսպորտային միջոցները կարող են օգտագործվել որպես միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ այդ ԱՏԳ տարածքների ու Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքների միջև ապրանքների, ուղևորների և (կամ) ուղեբեռի փոխադրման համար, ինչպես նաև այդ ԱՏԳ տարածքների ու Ռուսաստանի Դաշնության տարածքի մնացած մասի միջև ապրանքների, ուղևորների և (կամ) ուղեբեռի փոխադրման համար՝ հետևյալ պայմանները կատարելու դեպքում՝

1) տրանսպորտային միջոցը գրանցված (կցագրված) է այն վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքում, որի տարածքում ստեղծվել է ԱՏԳ-ն.

2) տրանսպորտային միջոցը գտնվում է այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված իրավաբանական անձի սեփականության ներքո, որի տարածքում ստեղծվել է ԱՏԳ-ն:

11. Այն տրանսպորտային միջոցների նկատմամբ, որոնք սույն հոդվածի 10-րդ կետին համապատասխան կարող են օգտագործվել որպես միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ, կիրառվում են սույն Օրենսգրքի 38-րդ գլխի դրույթները՝ հաշվի առնելով սույն հոդվածի 12-20-րդ կետերով սահմանված առանձնահատկությունները:

12. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները չեն կարող օգտագործվել Միության մաքսային տարածքի մնացած մասում բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռի փոխադրման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ փոխադրումը սույն հոդվածի 10-րդ կետում նշված ԱՏԳ տարածքների և Ռուսաստանի Դաշնության տարածքի մնացած մասի միջև բեռների, ուղևորների և (կամ) ուղեբեռի փոխադրման մասն է կազմում:

Սույն կետի առաջին պարբերությունում նշված փոխադրումներն իրականացնելիս բեռների և (կամ) ուղեբեռի բեռնման (բեռնաթափման, դատարկման), ուղևորների նստեցման (ցած իջեցման) հետ կապված գործողությունների կատարումը թույլատրվում է միայն Ռուսաստանի Դաշնության տարածքում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործողությունները կատարվում են վթարի կամ անհաղթահարելի ուժի գործողության հետևանքով:

Միության անդամ չհանդիսացող պետության տարածքում օդանավի հարկադրված վայրէջքից հետո բեռների և (կամ) ուղեբեռի բեռնում (բեռնաթափում, դատարկում), ուղևորների նստեցում (ցած իջեցում) չի թույլատրվում՝ բացառությամբ վթարի կամ անհաղթահարելի ուժի գործողության հետ կապված դեպքերի:

13. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների՝ Ռուսաստանի Դաշնության տարածքում գտնվելու ժամկետը կարող է սահմանափակվել այդ անդամ պետության օրենսդրությամբ:

14. Միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները ենթակա են մաքսային հայտարարագրման ու բացթողման՝

1) սույն հոդվածի 10-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքներից Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներ միջազգային փոխադրում իրականացնելու դեպքում.

միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներն այդ ԱՏԳ-ների տարածքներից Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներ արտահանելու դեպքում,

միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներից այդ ԱՏԳ-ների տարածքներ հետադարձ ներմուծման դեպքում.

2) սույն հոդվածի 10-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքներից Ռուսաստանի Դաշնության տարածքի մնացած մաս միջազգային փոխադրում իրականացնելու դեպքում.

միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներն այդ ԱՏԳ-ների տարածքներից արտահանելու դեպքում,

միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածք ներմուծելու դեպքում.

Միության մաքսային տարածք միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների հետադարձ արտահանման դեպքում.

միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներն այդ ԱՏԳ-ների տարածքներ հետադարձ ներմուծման դեպքում:

15. Սույն հոդվածի 14-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքերում միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրումը, իսկ երկաթուղային տրանսպորտային միջոցների դեպքում՝ նաև սույն հոդվածի 14-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքերում, իրականացվում է սույն Օրենսգրքի 278-րդ հոդվածի 3-6-րդ կետերով սահմանված կարգով:

Սույն հոդվածի 14-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքերում միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրումը, բացառությամբ երկաթուղային տրանսպորտային միջոցների, իրականացվում է միայն տրանսպորտային միջոցի հայտարարագրի օգտագործմամբ, որի ձևը սահմանվում է Հանձնաժողովի կողմից: Նշված դեպքում մաքսային հայտարարագրում անցկացնելիս երրորդ կողմի հետ անդամ պետությունների՝ տրանսպորտի ոլորտի միջազգային պայմանագրերով նախատեսված ստանդարտ փաստաթղթերը չեն կարող օգտագործվել որպես տրանսպորտային միջոցի հայտարարագիր:

16. Սույն հոդվածի 10-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքներից արտահանված՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածքի մնացած մաս ներմուծելու դեպքում, բացառությամբ երկաթուղային տրանսպորտային միջոցների, որպես տրանսպորտային միջոցների հայտարարագիր օգտագործվում է այդ ԱՏԳ-ների տարածքներից ապրանքներն արտահանելիս միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրման ժամանակ ներկայացված տրանսպորտային միջոցների հայտարարագիրը:

17. Սույն հոդվածի 14-րդ կետի 2-րդ ենթակետի երկրորդ պարբերությունում նշված դեպքերում միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրման դեպքում, ի հավելումն տրանսպորտային միջոցի հայտարարագրում նշման ենթակա տեղեկությունների, նշվում են տեղեկություններ, որոնցով հաստատվում է այդ տրանսպորտային միջոցները «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպելու փաստը:

18. Այն օդանավերի հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման առանձնահատկությունները, որոնք, սույն հոդվածի 10-րդ կետին համապատասխան, կարող են օգտագործվել որպես միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ, սահմանվում են այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում ստեղծվել են ԱՏԳ-ները:

19. Սույն հոդվածի 10-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքների և Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքների միջև միջազգային փոխադրումներ իրականացնող և Միության մաքսային տարածքի սահմաններից դուրս գտնվող՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները կարող են ձևակերպվել «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով:

Այդ ԱՏԳ-ների տարածքների և Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքների միջև միջազգային փոխադրումներ իրականացնող միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքն օտարերկրյա անձին փոխանցելու դեպքում որպես այդ գործարքի կողմ հանդես եկած՝ այն անդամ պետության անձը, որի տարածքում ստեղծվել է այդ ԱՏԳ-ն, ժամանակավորապես արտահանված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում այդ տրանսպորտային միջոցը ձևակերպում է «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով:

20. Սույն հոդվածի 10-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքներից արտահանված և այդ ԱՏԳ-ների տարածքներ հետ ներմուծվող միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները պահպանում են օտարերկրյա ապրանքների կարգավիճակը:

21. «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները և «ազատ մաքսային գոտի»

մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները Ռուսաստանի Դաշնության՝ սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ԱՏԳ տարածքներից կարող են արտահանվել՝ առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու՝ այն դեպքերում, եթե այդ ապրանքները՝

ֆիզիկական անձանց կողմից արտահանվում են Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ անձնական օգտագործման ապրանքների առնչությամբ սահմանված արժեքային, քաշային և (կամ) քանակական այն նորմերի սահմաններում, որոնց սահմաններում դրանք ներմուծվում են Միության մաքսային տարածք՝ առանց մաքսատուրքեր, հարկեր վճարելու.

ֆիզիկական անձանց կողմից Միության անդամ չհանդիսացող պետության տարածք են արտահանվում՝ որպես անձնական օգտագործման ապրանքներ:

Եթե «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները Միության մաքսային տարածքի մնացած մաս նշված ԱՏԳ-ների տարածքներից ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման ապրանքներ՝ արտահանվում են անձնական օգտագործման ապրանքների առնչությամբ սահմանված այն արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերի գերազանցմամբ, որոնց սահմաններում դրանք ներմուծվում են Միության մաքսային տարածք՝ առանց մաքսատուրքեր, հարկեր վճարելու, ապա «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն այս ապրանքների առնչությամբ ավարտվում է ազատ շրջանառության մեջ բացթողմամբ՝ սույն Օրենսգրքի 37-րդ գլխին համապատասխան՝ մաքսատուրքերը, հարկերը վճարելով անձնական օգտագործման ապրանքների առնչությամբ սահմանված միասնական դրույքաչափերով:

22. Ռուսաստանի Դաշնության՝ սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ԱՏԳ այն տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքները, որի սահմաններն ամբողջությամբ համընկնում են Միության մաքսային սահմանի հատվածների հետ, կարող են ժամանակավորապես արտահանվել այդ ԱՏԳ տարածքից առանց «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու, եթե այդ ապրանքները տրանսպորտային միջոցներ են, որոնք գրանցված են այն անդամ պետության վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքում, որի տարածքում ստեղծվել է այդ ԱՏԳ-ն, և ֆիզիկական անձի կողմից արտահանվում են այդ ԱՏԳ տարածքից՝ որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ՝

1) Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով՝ առավելագույնը երկու ամսով այդ ժամկետը երկարաձգելու հնարավորությամբ.

2) Միության անդամ չհանդիսացող պետության տարածք՝ առանց արտահանման ժամկետի սահմանափակման՝ սույն Օրենսգրքի դրույթներին համապատասխան:

23. Ռուսաստանի Դաշնության՝ սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ԱՏԳ տարածքներում կիրառվող «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտվում է՝ առանց ապրանքները մաքսային ընթացակարգերով ձևակերպելու, եթե «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված՝ անձնական օգտագործման ապրանքները, այդ թվում՝ մինչև 2006 թվականի հունվարի 1-ն այդ ԱՏԳ-ների տարածքներ ներմուծված մարդատար ավտոմեքենաները և մարդկանց փոխադրման համար նախատեսված և Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 8703 ապրանքային դիրքում դասակարգվող այլ շարժիչային տրանսպորտային միջոցները՝ բացառությամբ մոտոամենագնացների (քվադրոցիկլների), ձյունագնացների և ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթևեկելու համար չնախատեսված այլ մարդատար տրանսպորտային միջոցների (սույն հոդվածում այսուհետ՝ ավտոմեքենաներ), և (կամ) կցորդներն արտահանվում են այդ ԱՏԳ-ների տարածքներից այն ֆիզիկական անձանց կողմից, որոնք ավելի վաղ մշտապես բնակվել են անդամ պետության այն վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքում, որտեղ ստեղծվել է այդ ԱՏԳ-ն և որոնք անդամ պետության այն վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքից, որում ստեղծվել է այդ ԱՏԳ-ն, տեղափոխվել են անդամ պետության տարածք մշտական բնակության համար, կամ անդամ պետության գործադիր իշխանության դաշնային մարմինների այն զինծառայողների և պաշտոնատար անձանց կողմից, որոնք անդամ պետության այն վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքից, որում ստեղծվել է այդ ԱՏԳ-ն, մեկնում են ծառայության նոր վայր (սույն հոդվածում այսուհետ՝ տեղափոխվող անձինք).

Սույն կետի առաջին պարբերությունում նշված ապրանքների դեպքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվում է այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում ստեղծվել է այդ ԱՏԳ-ն՝ առանց ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու՝ անկախ դրանց մաքսային արժեքից ու քաշից, հետևյալ պայմանների կատարման դեպքում՝

արտահանվող ապրանքներն օգտագործման մեջ եղած անձնական օգտագործման ապրանքներ են և ձեռք են բերվել մինչև այն փաստաթղթի տրամադրման օրը, որով հաստատվում է անձի՝ անդամ պետության տարածք, այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, մշտական բնակության տեղափոխված ճանաչվելու փաստը.

անձնական օգտագործման ապրանքների փաստացի արտահանումը նշված ԱՏԳ-ների տարածքից իրականացվում է այն փաստաթղթի տրամադրման օրվանից 18 ամսից ոչ ուշ, որով հաստատվում է անձի՝ անդամ պետության տարածք, այդ պետության օրենսդրությանը համապատասխան, մշտական բնակության տեղափոխված ճանաչվելու փաստը.

այն վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքում տեղակայված մաքսային մարմնին, որտեղ ստեղծվել է նշված ԱՏԳ-ն, տեղափոխվող անձի կամ նրա ընտանիքի անդամի կողմից ներկայացվել են այնպիսի փաստաթղթեր, որոնցով հաստատվում է անձի՝ անդամ պետության տարածք, այդ անդամ պետության օրենսդրությանը

համապատասխան, մշտական բնակության տեղափոխված ճանաչվելու փաստը, կամ այդպիսի փաստաթղթերի՝ սահմանված կարգով հաստատված պատճենները.

նշված ԱՏԳ տարածքից արտահանվող ավտոմեքենաների ու կցորդների թիվը սահմանափակվում է մեկ ավտոմեքենայով և մեկ կցորդով, ու դրանք տեղափոխվող անձի սեփականությունն են.

նշված ԱՏԳ տարածքից արտահանվող ավտոմեքենաների ու կցորդների գրանցումն իրականացվում է անդամ պետության այն վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքում, որտեղ ստեղծվել է այդ ԱՏԳ-ն, տեղափոխվող անձի անունով այն փաստաթղթի տրամադրման օրվանից առնվազն 6 ամիս առաջ, որով հաստատվում է անձի՝ անդամ պետության տարածք, այդ պետության օրենսդրությանը համապատասխան, մշտական բնակության ժամանած (տեղափոխված) ճանաչվելու փաստը:

Նշված ապրանքները Միության ապրանքների կարգավիճակ են ձեռք բերում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտվելու օրվանից:

Անդամ պետության գործադիր իշխանության դաշնային մարմինների այն զինծառայողների ու պաշտոնատար անձանց կողմից, որոնք այն վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքից, որտեղ ստեղծվել է նշված ԱՏԳ-ն, մեկնում են ծառայության նոր վայր՝ որպես անձի՝ անդամ պետության տարածք մշտական բնակության ժամանած (տեղափոխված) ճանաչվելու փաստը հաստատող փաստաթուղթ մաքսային մարմին ներկայացվում են այն փաստաթղթերը, որոնցով հաստատվում են այն վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքից, այդ պետության օրենսդրությանը համապատասխան, ծառայության նոր վայր մեկնելու հիմքերը, որտեղ ստեղծվել է այդ ԱՏԳ-ն:

Սույն կետով նախատեսված՝ մաքսատուրքերից, հարկերից ազատումը տեղափոխվող անձին տրամադրվում է մեկ անգամ:

24. Ռուսաստանի Դաշնության՝ սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ԱՏԳ-ների տարածքներից ֆիզիկական անձանց կողմից արտահանվող՝ Միության ապրանքներ հանդիսացող անձնական օգտագործման ապրանքները Միության մաքսային տարածքի մնացած մաս ներմուծվելու դեպքում պահպանում են Միության ապրանքների կարգավիճակը՝ սույն հոդվածով սահմանված առանձնահատկություններին համապատասխան:

25. Միության ապրանքներ հանդիսացող անձնական օգտագործման ապրանքները, որոնք փոխադրողի կողմից Միության մաքսային տարածքի մնացած մասի հետ ընդհանուր ցամաքային սահմաններ չունեցող ԱՏԳ-ների տարածքներից Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով փոխադրման պայմանագրով (բեռնագրով, կոնոսամենտով և այլ փաստաթղթերով) փոխադրվում են Միության մաքսային տարածքի մնացած մաս, սույն Օրենսգրքի 22-րդ և 43-րդ գլուխներին համապատասխան ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ հաշվի առնելով սույն կետի դրույթները:

Անձնական օգտագործման ապրանքներն առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման Միության մաքսային տարածք ներմուծելու համար սահմանված արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերի սահմաններում անձնական օգտագործման նշված ապրանքները «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելիս չեն տրամադրվում այնպիսի փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ, որոնցով հաստատվում է Միության ապրանքների կարգավիճակը:

26. Անձնական օգտագործման օտարերկրյա ապրանքների դեպքում, մինչև փոխադրման պայմանագրով (բեռնագրով, կոնոսամենտով և այլ փաստաթղթերով) դրանք փոխադրողին փոխանցելը, սույն հոդվածի 25-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքներից Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքի մնացած մաս դրանք արտահանելու համար ֆիզիկական անձը պարտավոր է իրականացնելու մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնությունները և Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների մասով սահմանված կարգով վճարելու մաքսատուրքերը, հարկերը՝ բացառությամբ սույն հոդվածի 25-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի:

27. Սույն հոդվածի 25-րդ կետում նշված անձնական օգտագործման ապրանքների մասով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու հետ կապված մաքսային գործառնություններն իրականացնող նշանակման մաքսային մարմին է համարվում այն մաքսային մարմինը, որի գործունեության տարածքում գտնվում է անձնական օգտագործման այդ ապրանքները ստացողը, իսկ երկաթուղային տրանսպորտով փոխադրվող անձնական օգտագործման ապրանքների մասով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու հետ կապված մաքսային գործառնություններն իրականացնող նշանակման մաքսային մարմին՝ այն մաքսային մարմինը, որի գործունեության տարածքում է գտնվում նշանակման կայարանը:

28. Միության ապրանքներ հանդիսացող անձնական օգտագործման ապրանքներով փոստային առաքանիները փոխանցվում են փոստային կապի նշանակված օպերատորին՝ սույն հոդվածի 25-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքներից Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքի մնացած մաս դրանք արտահանելու համար: Սույն Օրենսգրքի 22-րդ գլխին համապատասխան՝ այդպիսի փոստային առաքանիները ձևակերպվում են «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 26-րդ կետը:

Առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման Միության մաքսային տարածք ներմուծելու համար սահմանված արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերի սահմաններում անձնական օգտագործման ապրանքներով փոստային առաքանիները ֆիզիկական անձի կողմից փոխանցվում են (փոստային փաստաթղթերով) փոստային կապի

նշանակված օպերատորին սույն հոդվածի 25-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքներից Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքի մնացած մաս, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, դրանք արտահանելու համար՝ առանց դրանց կարգավիճակը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու:

Անձնական օգտագործման օտարերկրյա ապրանքների դեպքում, մինչև փոխադրման պայմանագրով (փոստային փաստաթղթերով) դրանք փոստային կապի նշանակված օպերատորին փոխանցելը, սույն հոդվածի 25-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքներից Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով Միության մաքսային տարածքի մնացած մաս դրանք արտահանելու համար ֆիզիկական անձը պարտավոր է իրականացնել մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնությունները և Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների մասով սահմանված կարգով վճարելու մաքսատուրքերը, հարկերը՝ բացառությամբ սույն հոդվածի 26-րդ կետով նախատեսված դեպքի:

Փոստային վագոններում փոխադրվող՝ անձնական օգտագործման ապրանքներով փոստային առաքանիների մասով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու հետ կապված մաքսային գործառնություններն իրականացնող նշանակման մաքսային մարմին է համարվում այն մաքսային մարմինը, որի գործունեության տարածքում է գտնվում նշանակման կայարանը:

29. Անձնական օգտագործման այն ապրանքները, որոնք Միության մաքսային տարածքի մնացած մասից Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով ուղեկցվող ուղերեռով սույն հոդվածի 25-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքներ են արտահանվում ջրային, օդային կամ երկաթուղային տրանսպորտով՝ առանց Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներում միջանկյալ կանգառներ կամ վայրէջքներ կատարելու, և որոնք չեն գտնվում մաքսային հսկողության տակ, այդ ԱՏԳ-ների տարածքներ ներմուծվելիս դիտարկվում են որպես Միության ապրանքներ:

30. Անձնական օգտագործման այն ապրանքները, բացառությամբ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների, որոնք ֆիզիկական անձանց կողմից Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով ուղեկցվող ուղերեռով տեղափոխվում են Միության մաքսային տարածքի մնացած մասի և սույն հոդվածի 25-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքների միջև, ենթակա չեն մաքսային հայտարարագրման հետևյալ դեպքերում՝

1) անձնական օգտագործման այդ ապրանքները, այդ թվում՝ սույն կետի առաջին պարբերությունում չնշված՝ Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման այլ ապրանքների հետ միասին, ներմուծվում են Միության մաքսային տարածք այն անձնական օգտագործման ապրանքների մասով սահմանված արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերի սահմաններում, որոնց սահմաններում դրանք ներմուծվում են Միության մաքսային տարածք՝ առանց մաքսատուրքեր, հարկեր վճարելու.

2) այդ ապրանքների հետ կապված արգելքներ ու սահմանափակումներ չեն կիրառվում, և չի պահանջվում ներկայացնել այնպիսի փաստաթղթեր, որոնցով հաստատվում է այդ սահմանափակումների պահպանումը:

31. Սույն հոդվածի 30-րդ կետում նշված ապրանքները, սույն հոդվածի 30-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված դեպքերից բացի այլ դեպքերում, ենթակա են ժամանման վայրում սահմանված կարգով մաքսային հայտարարագրման:

32. Միության ապրանքներ հանդիսացող անձնական օգտագործման այն ապրանքների հետ կապված մաքսային գործառնությունները, որոնք Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվում են Միության մաքսային տարածքի մնացած մասի և սույն հոդվածի 25-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքների միջև, իրականացվում են՝ հաշվի առնելով այդ ապրանքների նույնականացումը:

Նշված ապրանքների նույնականացումն իրականացվում է մեկնման վայրի մաքսային մարմնի կողմից՝ սույն հոդվածի 33-րդ և 34-րդ կետերով նախատեսված փաստաթղթերի օգտագործմամբ:

33. Անձնական օգտագործման այն ապրանքները, բացառությամբ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների, որոնք ֆիզիկական անձանց կողմից Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով ուղեկցվող ուղերեռով տեղափոխվում են Միության մաքսային տարածքի մնացած մասի և սույն հոդվածի 25-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքների միջև, ժամանման վայրի մաքսային մարմնի կողմից դիտարկվում են որպես Միության ապրանքներ՝ այդ ապրանքների նույնականացումը հնարավոր դարձնող տեղեկություններ և մեկնման վայրի մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձի կողմից դրված ու նրա անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով և ստորագրությամբ հաստատված «Եվրասիական տնտեսական Միության ապրանքներ» նշում պարունակող ուղևորային մաքսային հայտարարագրի առկայության դեպքում:

34. Անդամ պետությունների տարածքներում գրանցված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները, որոնք ֆիզիկական անձանց կողմից Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով տեղափոխվում են Միության մաքսային տարածքի մնացած մասի և սույն հոդվածի 25-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքների միջև, մեկնման վայրի մաքսային մարմնի և ժամանման վայրի մաքսային մարմնի կողմից դիտարկվում են որպես Միության ապրանքներ ու ենթակա չեն մաքսային հայտարարագրման՝ այդ գրանցումը հաստատող և այդ տրանսպորտային միջոցների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների վերաբերյալ նշումներ չպարունակող փաստաթղթերի առկայության դեպքում:

35. Թույլատրվում է այդ ԱՏԳ-ի տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս առավելագույնը երկու ամսով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցների ժամանակավոր

արտահանումը, որոնք ձևակերպված են «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով այն ԱՏԳ-ի տարածքում, որի սահմաններն ամբողջությամբ համընկնում են Միության մաքսային սահմանի հատվածների հետ, և որոնք գրանցված են Միության այն անդամ պետության վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքում, որի տարածքում ստեղծվել է այդ ԱՏԳ-ն՝ այդ ԱՏԳ տարածքից մեկնման վայրում և Միության մաքսային տարածքի մնացած մաս ժամանման վայրում դրանց մաքսային հայտարարագրման պայմանով: Ընդ որում, մեկնման վայրի մաքսային մարմնին տրամադրվում է անձնական օգտագործման այդ տրանսպորտային միջոցների համար մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցների համար սահմանված չափով, որոնք գրանցված են Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներում, և որոնք ներմուծվում են Միության մաքսային տարածք՝ սույն Օրենսգրքի 271-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ հաշվի առնելով սույն կետի երկրորդ պարբերությունը:

Ավելի, քան վեց ամիս տրանսպորտային միջոցի սեփականատերը հանդիսացող և մաքսային մարմին դիմելու օրվա դրությամբ սահմանված ժամկետներում մաքսային վճարների վճարման գծով չկատարված պահանջներ չունեցող ֆիզիկական անձի կողմից (այդ ֆիզիկական անձի վստահված անձի կողմից, որն ունի անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը ժամանակավորապես արտահանելու իրավունք) անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցը Միության մաքսային տարածքի մնացած մաս ժամանակավորապես արտահանելու դեպքում, որը ձևակերպված է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով այդ ԱՏԳ տարածքում և գրանցված է վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքում, որտեղ ստեղծվել է այդ ԱՏԳ-ն, և այն անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված վարչական իրավախախտումների համար տվյալ անձին վարչական պատասխանատվության չենթարկելու փաստերի բացակայության դեպքում, որի տարածքում ստեղծվել է այդ ԱՏԳ-ն, մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում չի տրամադրվում՝ բացառությամբ այն դեպքի, երբ անձնական օգտագործման երկրորդ և հաջորդող տրանսպորտային միջոցները ժամանակավորապես արտահանվում են մինչև իր կողմից ավելի վաղ արտահանված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի հետադարձ ներմուծումն այդ ԱՏԳ տարածք:

Եթե ֆիզիկական անձը կատարում է սույն կետի առաջին և երկրորդ պարբերություններով նախատեսված պայմանները, ապա մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձն ուղևորային մաքսային հայտարարագրում կատարում է «Արտահանումը Եվրասիական տնտեսական Միության մաքսային տարածքի մնացած մաս թույլատրվում է» նշումը, որը հաստատվում է այդ անձի անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով և ստորագրությամբ:

Սույն կետի առաջին և երկրորդ պարբերություններում նշված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներն ենթակա չեն ներմուծման Միության մաքսային տարածքի մնացած մաս այն դեպքում, երբ ներմուծումն իրականացնող անձը չունի սույն կետի երրորդ պարբերությամբ նախատեսված նշումը պարունակող մաքսային հայտարարագիր:

Այն դեպքում, երբ ավելի վաղ արտահանված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներն անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների փաստացի արտահանումն իրականացրած ֆիզիկական անձանց կողմից մինչև սահմանված ժամկետի լրանալը հետ չեն ներմուծվում այդ ԱՏԳ-ի տարածք, այդ տրանսպորտային միջոցների համար մաքսատուրքերը, հարկերը մեկնման վայրի մաքսային մարմնի կողմից գանձվում են մաքսատուրքերի, հարկերի համապատասխան այն գումարների չափերով, որոնք վճարման ենթակա կլինեին այդ տրանսպորտային միջոցներն ազատ շրջանառության համար բացթողման դեպքում և որոնք հաշվարկված են ուղևորային մաքսային այն հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցելու օրվա դրությամբ, որին համապատասխան անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները ժամանակավորապես արտահանվել են այդ ԱՏԳ տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս ներմուծվելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները ոչնչացվել են վթարի կամ անհաղթահարելի ուժի գործողության հետևանքով, ինչպես նաև ձևակերպվել են այլ մաքսային ընթացակարգով կամ դրվել են ազատ շրջանառության մեջ:

Անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներն այլ մաքսային ընթացակարգով ձևակերպելու կամ ազատ շրջանառության մեջ դնելու հետ կապված մաքսային գործառնություններն իրականացվում են այդ ԱՏԳ-ի տարածքում տեղակայված մաքսային մարմինների կողմից:

Հայտարարատուի գրավոր ձևով (ազատ ձևով) հիմնավորված դիմումի հիման վրա սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված ժամկետը մեկնման վայրի մաքսային մարմնի կողմից կարող է մեկ անգամ երկարաձգվել երկու ամսով՝ առանց անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը մաքսային մարմին փաստացի ներկայացնելու:

36. Անձնական օգտագործման այն տրանսպորտային միջոցները, որոնք Ռուսաստանի Դաշնության տարածքում հանվել են գրանցման հաշվառումից և ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվում են սույն հոդվածի 25-րդ կետում նշված ԱՏԳ տարածքների և Միության մաքսային տարածքի մնացած մասի միջև Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով, ժամանման վայրի մաքսային մարմնի կողմից դիտվում են որպես Միության ապրանքներ՝ այդ տրանսպորտային միջոցների նույնականացումը հնարավոր դարձնող տեղեկություններ և մեկնման վայրի մաքսային մարմնի լիազորված պաշտոնատար անձի կողմից դրված ու նրա անձնական համարակալված կնիքի դրոշմվածքով և ստորագրությամբ հաստատված «Եվրասիական տնտեսական միության ապրանքներ» նշում պարունակող ուղևորային մաքսային հայտարարագրի առկայության դեպքում:

37. Եթե օտարերկրյա ապրանքներ համարվող անձնական օգտագործման ապրանքները, բացառությամբ սույն կետի

երկրորդ պարբերությունում նշված ապրանքների, Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով ֆիզիկական անձանց կողմից սույն հոդվածի 25-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքներից արտահանվում են Միության մաքսային տարածքի մնացած մաս այն արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերի գերազանցմամբ, որոնք սահմանված են անձնական օգտագործման ապրանքների մասով և որոնց սահմաններում դրանք ներմուծվում են Միության մաքսային տարածք առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման, ապա մեկնման վայրի մաքսային մարմնի կողմից մաքսատուրքերը, հարկերը գանձվում են Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների մասով սահմանված չափով:

Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքներով ֆիզիկական անձանց կողմից սույն հոդվածի 25-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքներից Միության մաքսային տարածքի մնացած մաս այդ ԱՏԳ տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված տրանսպորտային միջոցները որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ արտահանվելու դեպքում այդ ԱՏԳ տարածքում տեղակայված մեկնման վայրի մաքսային մարմնի կողմից գանձվում են մաքսատուրքեր, հարկեր Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների համար սահմանված չափով՝ բացառությամբ սույն հոդվածի 35-րդ կետով նախատեսված դեպքերի:

38. Սույն հոդվածի 27-37-րդ կետերի դրույթները չեն տարածվում Միության ապրանքներ համարվող անձնական օգտագործման ապրանքների վրա, որոնք սույն հոդվածի 25-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքներից օդային տրանսպորտով փոխադրվում են Միության մաքսային տարածքի մնացած մաս՝ առանց Միության անդամ չհանդիսացող պետության տարածքում օդանավով վայրէջք կատարելու:

39. Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը ենթակա է կատարման սույն կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում:

Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու ժամկետ է համարվում՝

1) եթե սույն հոդվածի 10-րդ կետում նշված միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների օգտագործման՝ սույն Օրենսգրքով սահմանված պայմանները խախտվում են սույն հոդվածի 10-րդ կետում նշված ԱՏԳ տարածքների և Միության անդամ չհանդիսացող պետությունների տարածքների միջև ապրանքների, ուղևորների, ուղեբեռի փոխադրում իրականացնելիս կամ սույն հոդվածի 10-րդ կետում նշված ԱՏԳ տարածքների և Ռուսաստանի Դաշնության մնացած տարածքի միջև ապրանքների, ուղևորների, ուղեբեռի փոխադրում իրականացնելիս՝ այդ պայմանները խախտելու առաջին օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ՝ այդպիսի խախտման վերաբերյալ փաստը բացահայտելու օրը.

2) եթե «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցը ֆիզիկական անձի կողմից սույն հոդվածի 25-րդ կետում նշված ԱՏԳ-ների տարածքներից Միության մաքսային տարածքի մնացած մաս արտահանելու՝ սույն հոդվածի 35-րդ կետում նշված պայմանները խախտվում են՝ այդ պայմանները խախտելու առաջին օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ, ապա այդ խախտման փաստը բացահայտելու օրը.

3) եթե «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները ֆիզիկական անձանց կողմից այն վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքից, որտեղ ստեղծվել է Ռուսաստանի Դաշնության՝ սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված, Միության մաքսային տարածքի մնացած մասի հետ ընդհանուր ցամաքային սահման ունեցող ԱՏԳ-ն, արտահանվում են Միության մաքսային տարածքի մնացած մաս, ապա՝ այն վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքից, որտեղ ստեղծվել է այդ ԱՏԳ-ն, ապրանքներն արտահանելու օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ, ապա այդ արտահանման փաստը բացահայտելու օրը.

4) եթե ֆիզիկական անձանց կողմից օգտագործվում են սույն կետի 3-րդ ենթակետում նշված ԱՏԳ-ի տարածքում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված և այն վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքի մնացած մաս ոչ անձնական օգտագործման համար արտահանված, անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները, որտեղ ստեղծվել է այդ ԱՏԳ-ն, ապա՝ այլ նպատակներով օգտագործելու առաջին օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ, ապա այդ խախտման փաստը բացահայտելու օրը.

5) եթե սույն կետի 3-րդ ենթակետում նշված ԱՏԳ-ի տարածքում ԱՏԳ-ի մասնակցի կողմից որպես սեփական արտադրական և տեխնոլոգիական կարիքների համար նախատեսված ապրանքներ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներն այն վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքից, որտեղ ստեղծվել է այդ ԱՏԳ-ն, արտահանվել են Միության մաքսային տարածքի մնացած մաս, ապա՝ այդ վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքից այդպիսի ապրանքների արտահանման օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ, ապա այն օրը, երբ բացահայտվել է այդ արտահանման փաստը.

6) եթե սույն կետի 3-րդ ենթակետում նշված ԱՏԳ-ի մասնակցի կողմից վարչատարածքային կառուցվածքի միավորի տարածքի մնացած այն մաս ավելի վաղ արտահանված ապրանքները, որտեղ ստեղծվել է այդ ԱՏԳ-ն, օգտագործվում են սեփական արտադրական և տեխնոլոգիական կարիքների համար, սեփական արտադրական և տեխնոլոգիական կարիքներից տարբերվող նպատակներով՝ ապրանքներն այլ նպատակներով օգտագործելու առաջին օրը, իսկ եթե այդ օրը սահմանված չէ՝ այդ խախտման փաստը հայտնաբերելու օրը:

40. Սույն հոդվածի 39-րդ կետում նշված հանգամանքների ի հայտ գալու դեպքում ներմուծման մաքսատուրքերը,

հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման ներմուծման մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի գումարներին համապատասխանող այնպիսի չափերով, որոնք ենթակա կլինեին վճարման, եթե ապրանքները ձևակերպված լինեին «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ առանց սակագնային առանձնաշնորհումների և ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման: Ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվարկվում են ապրանքները «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար ներկայացված ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու օրվա դրությամբ:

Հոդված 456. Անցումային դրույթներ՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ

1. «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների կարգավիճակն այն ազատ պահեստում, որի տիրապետողն ընդգրկված է ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում Հայաստանի Հանրապետությունում մինչև 2016 թվականի դեկտեմբերի 1-ը, Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում մինչև 2012 թվականի հունվարի 1-ը, ինչպես նաև այն ազատ պահեստում, որի տիրապետողները Ղրղզստանի Հանրապետությունում «Ալթըն-Աժըդաար» ՍՊԸ-ն, «Կոկա-կոլա Բիշքեկ բոթլերս» ՓԲԸ-ն, «Իլբիրս» ԲԲԸ-ն, «Ավինյեն» ՍՊԸ-ն, «Մետաքսի ճանապարհ» ՍՊԸ-ն և «Ռենեսանս» ՍՊԸ-ն են, այն դեպքում, երբ այդպիսի ապրանքները չեն արտահանվում Միության մաքսային տարածքից դուրս, մինչև 2017 թվականի հունվարի 1-ը սահմանվում է սույն Օրենսգրքի 218-րդ հոդվածին համապատասխան՝ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի դրույթների հաշվառմամբ:

2. Այնպիսի ազատ պահեստների դեպքում, որոնց տիրապետողներն ընդգրկվել են ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում մինչև 2010 թվականի մայիսի 1-ը, Հանձնաժողովն իրավունք ունի սահմանելու «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված)՝ օտարերկրյա ապրանքների կարգավիճակ ստացող ապրանքների ցանկ՝ անկախ սույն Օրենսգրքի 218-րդ հոդվածին համապատասխան սահմանված՝ բավարար վերամշակման չափանիշների կատարումից: Ապրանքների նշված ցանկը կիրառվում է այն դեպքում, երբ այդ ապրանքները չեն արտահանվում Միության մաքսային տարածքից դուրս:

3. Հանձնաժողովն իրավունք ունի ազատ պահեստների տիրապետողների ռեեստրում մինչև 2010 թվականի մայիսի 1-ն ընդգրկված՝ ազատ պահեստների առանձին տիրապետողների նկատմամբ սահմանելու սահմանափակումներ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) այն ապրանքների քանակի առումով, որոնք կարող են ճանաչվել որպես Միության ապրանքներ այն դեպքում, երբ այդ ապրանքների բացթողումը Միության մաքսային տարածք իրականացվում է այնպիսի քանակությամբ և այնպիսի պայմաններով, որոնք էական տնտեսական վնաս են հասցնում անդամ պետության տնտեսության ճյուղին կամ ստեղծում են այդպիսի վնաս պատճառելու սպառնալիք: Նշված սահմանափակումները սահմանելու մասին որոշումը կայացվում է Հանձնաժողովի կողմից սահմանվող կարգով և կիրառվում է այն դեպքում, երբ այդ ապրանքները չեն արտահանվում Միության մաքսային տարածքից դուրս:

4. Մինչև Հանձնաժողովի՝ սույն Օրենսգրքի 218-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված որոշումն ուժի մեջ մտնելը, որով սահմանվում է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված օտարերկրյա ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքները որպես Միության ապրանքներ ճանաչելու համար բավարար պայմանների, արտադրական ու տեխնոլոգիական գործողությունների ցանկը, նշված ապրանքները որպես Միության ապրանքներ ճանաչելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում, Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում և Ղրղզստանի Հանրապետությունում կիրառվում են այդ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված բավարար վերամշակման չափանիշները:

5. Սույն հոդվածի 4-րդ կետում նշված ապրանքները, որոնց ծագումը Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության և Ղրղզստանի Հանրապետության համար հաստատված է CT-1 ձևի ապրանքի ծագման հավաստագրով, իսկ Ղազախստանի Հանրապետության համար՝ «CT-KZ» ձևի ապրանքի ծագման հավաստագրով, ճանաչվում են որպես Միության ապրանքներ:

Հոդված 457. Անցումային դրույթներ՝ անձնական օգտագործման ապրանքների և պաշարների վերաբերյալ

1. Անձնական օգտագործման այն ապրանքների և պաշարների նկատմամբ, որոնց մաքսային հայտարարագրումը և (կամ) բացթողումը մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելն իրականացվել են՝ առանց մաքսային ընթացակարգերով ձևակերպման, և որոնք սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գտնվել են մաքսային հսկողության ներքո, սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից ենթակա են պահպանման սույն Օրենսգրքով նախատեսված այն պայմանները, որոնք սահմանվել են ապրանքների այդպիսի կատեգորիաների օգտագործման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ապրանքների նկատմամբ առաջացած ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորությունը, որի կատարման ժամկետը (վճարման ժամկետը) վրա չի հասել մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրը, ենթակա է կատարման՝ հանգամանքների ի հայտ գալու դեպքում, կարգով, ժամկետներում և չափերով, որոնք նախատեսված են սույն Օրենսգրքով, և (կամ) դադարում է՝ սույն Օրենսգրքին համապատասխան:

3. Սույն Օրենսգրքի 256-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի դրույթները կիրառվում են մինչև Հանձնաժողովի այն որոշումն ուժի մեջ մտնելը, որն ընդունվել է նշված հոդվածի 5-րդ կետին համապատասխան, և որով սահմանվում են Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելու չափանիշների քանակական բնութագրերը:

Մինչև Հանձնաժողովի նշված որոշումն ուժի մեջ մտնելը համապատասխան իրավահարաբերությունների կարգավորումն իրականացվում է՝ «Ֆիզիկական անձանց կողմից Մաքսային Միության մաքսային սահմանով անձնական օգտագործման ապրանքների փոխադրման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան:

4. Անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունը, որն առաջացել է և ենթակա է կատարման մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը՝ կապված օտարերկրյա ֆիզիկական անձի կողմից այդպիսի տրանսպորտային միջոցներն այլ օտարերկրյա ֆիզիկական անձին առանց մաքսային մարմնի թույլտվության փոխանցելու կամ անդամ-պետության ֆիզիկական անձի կողմից ներմուծված այդպիսի տրանսպորտային միջոցները ծնողներին, երեխաներին, գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսնուն (կնոջը) փոխանցելու հետ, և որը չի կատարվել սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, դադարում է սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մաքսատուրքերի, հարկերի չվճարված (չբռնագանձված) գումարների չափով:

5. Անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունը, որն առաջացել է և ենթակա է կատարման մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը՝ կապված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները մինչև այն ժամկետի լրանալը չարտահանելու հետ, որի ընթացքում ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները կարող են ժամանակավորապես գտնվել Միության մաքսային տարածքում, և որը չի կատարվել սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, դադարում է սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մաքսատուրքերի, հարկերի չվճարված (չբռնագանձված) գումարների չափով՝ հետևյալ պայմանների միաժամանակյա պահպանման դեպքում.

1) Միության մաքսային տարածքից արտահանելու նպատակով այդպիսի տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագրումն իրականացվել է այն ժամկետը լրանալու օրվանից

6 ամսից ոչ ուշ, որի ընթացքում ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները կարող են ժամանակավորապես գտնվել Միության մաքսային տարածքում.

2) անձնական օգտագործման այդպիսի տրանսպորտային միջոցների առնչությամբ վրա չի հասել մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը՝ կապված «Մաքսային Միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի դրույթների խախտմամբ դրանց փոխանցման հետ՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետում նշված ֆիզիկական անձանց դրանց փոխանցման:

Հոդված 458. Անցումային դրույթներ՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ

1. Միջազգային փոխադրում իրականացնող այն տրանսպորտային միջոցները, որոնք Միության մաքսային տարածք են ներմուծվել մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը, գտնվում և օգտագործվում են Միության մաքսային տարածքում ու ենթակա Միության մաքսային տարածքից արտահանման՝ սույն Օրենսգրքի 38-րդ գլխի դրույթներին համապատասխան:

2. Միջազգային փոխադրում իրականացնող այն տրանսպորտային միջոցները, որոնք Միության մաքսային տարածքից արտահանվել են մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը, գտնվում և օգտագործվում են Միության մաքսային տարածքում, ինչպես նաև հետ են ներմուծվում Միության մաքսային սահման՝ սույն Օրենսգրքի 38-րդ գլխի դրույթներին համապատասխան:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների մասով առաջացած մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորությունը, որի կատարման ժամկետը (վճարման ժամկետը) վրա չի հասել մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը, ենթակա է կատարման սույն Օրենսգրքով նախատեսված հանգամանքների ի հայտ գալու դեպքում, կարգով, ժամկետներում և չափերով, և (կամ) դադարում է սույն Օրենսգրքին համապատասխան:

4. Ժամանակավոր ներմուծված՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մասով

մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունը, որն առաջացել է և ենթակա է կատարման մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը՝ կապված Մաքսային միության մաքսային Օրենսգրքի 344-րդ հոդվածի 2-րդ կետում նշված գործողությունների կատարման հետ՝ առանց ժամանակավոր ներմուծված՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները մաքսային ընթացակարգերով ձևակերպելու, և որն ամբողջությամբ չի կատարվել սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, ենթակա է կատարման մաքսատուրքերի, հարկերի այն գումարների չափով, որոնք ենթակա կլինեին վճարման, եթե միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները ձևակերպվեին «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 282-րդ հոդվածին համապատասխան մաքսատուրքերի, հարկերի վճարումից մասնակի ազատմամբ՝ դրանց բացթողման օրվան հաջորդող օրվանից մինչև Միության մաքսային տարածքից ապրանքների արտահանման օրն ընկած ժամանակահատվածի համար՝ որպես ժամանակավոր ներմուծված՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ:

5. Ժամանակավոր ներմուծված՝ միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մասով մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորությունը, որն առաջացել է և ենթակա է կատարման մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը՝ կապված Մաքսային միության մաքսային օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված պայմաններն անդամ պետության անձի կողմից չպահպանելու հետ, և որը չի կատարվել ամբողջ չափով սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, դադարեցվում է սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մաքսատուրքերի, հարկերի չվճարված (չբռնագանձված) գումարների չափով:

Հոդված 459. Անցումային դրույթներ՝ ապրանքները խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխելիս մաքսային գործառնություններ իրականացնելու վերաբերյալ

Մինչև սահմանակից պետություն հանդիսացող երրորդ կողմի հետ անդամ պետության այն միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելը, որոնցով սահմանվում են խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների՝ սույն Օրենսգրքի 292-րդ հոդվածի 1-4-րդ կետերով նախատեսված հաշվառքի սարքերի՝ մաքսային մարմինների պաշտոնատար անձանց համար հասանելիության կարգը, թույլատրվում է օգտագործել փոխադրողի կողմից ներկայացվող՝ խողովակաշարային տրանսպորտով կամ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների՝ սահմանակից պետության տարածքում տեղակայված հաշվառքի սարքերի տվյալները:

Հոդված 460. Անցումային դրույթներ՝ ընդերքօգտագործման ոլորտում (վառելիքաէներգետիկ հատվածում) առաջացած իրավահարաբերությունների վերաբերյալ

1. Այն իրավահարաբերությունների նկատմամբ, որոնք Ռուսաստանի Դաշնությունում՝ ընդերքօգտագործման ոլորտում (վառելիքաէներգետիկ հատվածում) առաջացել են մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը և ծագում են այն ուժի մեջ մտնելուց հետո, կիրառվում է Ռուսաստանի Դաշնության մաքսային օրենսդրությունը, որին համապատասխան գործում են համապատասխան պայմանագրերը, իսկ այդ մաքսային օրենսդրություններով չկարգավորվող մասով՝ սույն Օրենսգիրքը:

2. Այն իրավահարաբերությունների նկատմամբ, որոնք Ղազախստանի Հանրապետությունում՝ ընդերքօգտագործման ոլորտում (վառելիքաէներգետիկ հատվածում) առաջացել են մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը և առաջանում են այն ուժի մեջ մտնելուց հետո, կիրառվում է Ղազախստանի Հանրապետության մաքսային օրենսդրությունը, որին համապատասխան գործում են համապատասխան պայմանագրերը՝ հետևյալ առանձնահատկությունների հաշվառմամբ՝

1) Ղազախստանի Հանրապետության այդ մաքսային օրենսդրությամբ չկարգավորվող մասով կիրառվում են սույն Օրենսգրքի դրույթները.

2) ներմուծման մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության առաջացման կամ դադարեցման մասով, այդ թվում՝ ընդերքօգտագործման վերաբերյալ պայմանագրերի շրջանակներում մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ «ապրանքների բացթողում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով կամ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների մասով, կիրառվում են սույն Օրենսգրքի դրույթները.

3) պայմանականորեն բաց թողնված ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման մասով, արտոնությունների տրամադրման պայմաններին համապատասխանող նպատակներով, կիրառվում է Ղազախստանի Հանրապետության մաքսային օրենսդրությունը:

3. Ղազախստանի Հանրապետություն ներմուծված և ընդերքօգտագործման վերաբերյալ պայմանագրերի շրջանակներում մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատմամբ «ապրանքների բացթողում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձևակերպված ապրանքների դեպքում մինչև 2010 թվականի հուլիսի 1-ը մաքսատուրքերը,

հարկերը վճարելու պարտավորությունը դադարեցվում է սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից՝ պայմանով, որ այդ ապրանքների համար մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը, այդ ապրանքները մաքսատուրքերի, հարկերի վճարումից ազատելու պայմանների խախտման հետ կապված, վրա չի հասել, և այդ ապրանքները ճանաչվում են որպես Միության ապրանքներ:

Հոդված 461. Անցումային դրույթներ՝ սույն Օրենսգրքի 370-րդ հոդվածի վերաբերյալ

Մինչև տեղեկատվության փոխանակման սույն Օրենսգրքի 370-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տեխնիկական պայմաններն ընդունելը կիրառվում են տեղեկատվության փոխանակման այն տեխնիկական պայմանները, որոնք հաստատված են «Մաքսային Միության անդամ պետությունների մաքսային մարմինների վերլուծական և հսկողական գործառույթներն իրականացնելու նպատակով տեղեկատվության փոխանակումը կազմակերպելու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 19-ի համաձայնագրի 4-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 462. Անցումային դրույթներ՝ սույն Օրենսգրքի 371-րդ և 373-րդ հոդվածների դրույթների վերաբերյալ

1. Սույն հոդվածի կիրառման նպատակներով՝

1) կենտրոնական մաքսային մարմիններ ասելով ենթադրվում է՝

Հայաստանի Հանրապետության համար՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն.

Բելառուսի Հանրապետության համար՝ Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեն.

Ղազախստանի Հանրապետության համար՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեն.

Ղրղզստանի Հանրապետության համար՝ Ղրղզստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայությունը.

Ռուսաստանի Դաշնության համար՝ Դաշնային մաքսային ծառայությունը:

2) տարածքային մաքսային մարմիններ ասելով ենթադրվում է՝

Հայաստանի Հանրապետության համար՝ մաքսատներ, մաքսային կետեր.

Բելառուսի Հանրապետության համար՝ մաքսատներ.

Ղազախստանի Հանրապետության համար՝ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեի տարածքային ստորաբաժանումները՝ ըստ շրջանների (ըստ հանրապետական նշանակության քաղաքների, մայրաքաղաքի), մաքսատներ.

Ղրղզստանի Հանրապետության համար՝ մաքսատներ.

Ռուսաստանի Դաշնության համար՝ տարածաշրջանային մաքսային վարչություններ և մաքսատներ.

2. Մինչև Հանձնաժողովի կողմից այն մաքսային մարմիններին սահմանելը, որոնք, սույն Օրենսգրքի 371-րդ հոդվածին համապատասխան, ուղարկում ու կատարում են փաստաթղթերի պատճենների և (կամ) տեղեկությունների տրամադրման վերաբերյալ հարցումներ, այդպիսի հարցումների ուղարկումն ու կատարումն իրականացվում են ինչպես կենտրոնական մաքսային մարմինների, այնպես էլ անմիջականորեն տարածքային մաքսային մարմինների միջև փոխգործակցության շրջանակներում: Այն դեպքում, երբ հնարավոր չէ սահմանել, թե որ մաքսային մարմին պետք է ուղարկել հարցումը, հարցումները կենտրոնական մաքսային մարմինների կողմից ուղարկվում են կենտրոնական մաքսային մարմիններին:

3. Մինչև Հանձնաժողովի կողմից այն մաքսային մարմիններին սահմանելը, որոնք, սույն Օրենսգրքի 373-րդ հոդվածին համապատասխան, ուղարկում և ապահովում են մաքսային հսկողություն անցկացնելու վերաբերյալ հանձնարարականների կատարումը, այդպիսի հանձնարարականների ուղարկումն ու կատարման ապահովումն իրականացվում են կենտրոնական մաքսային մարմինների կողմից: Կենտրոնական մաքսային մարմինների կողմից սահմանված դեպքերում հանձնարարականների ուղարկումն ու կատարումը կարող են իրականացվել տարածքային մաքսային մարմինների կողմից:

4. Մինչև Հանձնաժողովի կողմից մաքսային մարմինների սահմանումը, որոնց կողմից սույն Օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ կետի 12-րդ ենթակետին համապատասխան ապահովվում է այդ ենթակետի դրույթների կատարումը, շահագրգիռ անդամ պետության համապատասխան պետական մարմնի հաստատումը, որը միջնորդել է առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման պարտավորության կատարման ապահովում տրամադրելու և (կամ) առանց հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման պարտավորության կատարման ապահովում տրամադրելու ապրանքների բացթողման համար, ներկայացվում է այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմնի կողմից, որի տարածքում գտնվում է նշանակման մաքսային մարմինը, այն անդամ պետության կենտրոնական մաքսային մարմին, որի տարածքում տեղակայված է ուղարկող մաքսային մարմինը:

Հոդված 463. Անցումային դրույթներ՝ սույն Օրենսգրքի 385-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ

Անկախ սույն Օրենսգրքի 385-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներից՝ մտավոր սեփականության այնպիսի օբյեկտներ, ինչպիսիք են ապրանքների ծագման տեղանունները, ընդգրկվում են Անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրում սույն Օրենսգրքի 384-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված՝ Հանձնաժողովի այն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, որով սահմանվում է մաքսային մարմինների կողմից մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցների ընդունման կարգը՝ մտավոր սեփականության այնպիսի օբյեկտներ պարունակող ապրանքների նկատմամբ, ինչպիսիք են ապրանքների ծագման տեղանունները:

Հոդված 464. Անցումային դրույթներ՝ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց վերաբերյալ

1. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձինք, որոնք ընդգրկված են մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրում, մաքսային միության մաքսային օրենսդրությանը համապատասխան, սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո մաքսային գործի բնագավառում գործունեություն են իրականացնում սույն Օրենսգրքին համապատասխան՝ հաշվի առնելով սույն հոդվածի դրույթները:

2. Մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրում ընդգրկելու պայմանների պահպանման նպատակներով տրամադրված՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը, մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը, ճանաչվում է որպես մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովում սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից և ապահովում է մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի՝ մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի, տույժերի, տոկոսները վճարելու պարտավորության կատարումը՝ սույն Օրենսգրքին համապատասխան:

3. Մինչև սույն Օրենսգրքի 402-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված՝ Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելը մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովումը, որի տրամադրումը պայման է որպես մաքսային ներկայացուցիչ գործունեություն իրականացնելու համար հավակնող իրավաբանական անձին մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկելու համար, տրամադրվում է մեկ միլիոն եվրոյին համարժեք գումարի չափով:

4. Այն դեպքում, երբ Հանձնաժողովի կողմից կսահմանվի սույն հոդվածի 3-րդ կետում նշված՝ մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովման չափից տարբեր չափ, մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկված անձինք, մինչև Հանձնաժողովի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելը, պարտավոր են այդ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսից ոչ ուշ տրամադրել նշված ապահովումը Հանձնաժողովի կողմից սահմանված չափով:

5. Սույն հոդվածի 3-րդ կետի դրույթները չեն կիրառվում, եթե մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի պարտավորությունների կատարման ապահովումը տրամադրվում է որպես մաքսային ներկայացուցիչ գործունեություն իրականացնելու համար հավակնող այն իրավաբանական անձին մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկելու համար, որի գործունեության ոլորտը որպես մաքսային ներկայացուցիչ սահմանափակ կլինի արտահանման մաքսատուրքերով չհարկվող և «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հետ կապված մաքսային գործառնությունների իրականացմամբ:

6. Սույն Օրենսգիրքը Բելառուսի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում ուժի մեջ մտնելուց հետո, մինչև այդ անդամ պետությունների օրենսդրությունում փոփոխություններ կատարելը, մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկելու՝ սույն Օրենսգրքի 402-րդ հոդվածով և անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պայմանների հետ մեկտեղ առկա է նաև հետևյալ պայմանը. մաքսային ներկայացուցիչն իր աշխատակազմում պետք է ունենա առնվազն 2 աշխատող, որոնք ունեն անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պահանջներին իրենց համապատասխանությունը հաստատող փաստաթուղթ:

Բելառուսի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկված անձինք մինչև սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը, այն ուժի մեջ մտնելուց հետո մաքսային ներկայացուցչի այլ պարտավորությունների հետ մեկտեղ պարտավոր են պահպանել սույն կետի առաջին պարբերությունում նշված՝ մաքսային ներկայացուցիչների ռեեստրում ընդգրկվելու պայմանը:

Հոդված 465. Անցումային դրույթներ՝ լիազորված տնտեսական օպերատորների վերաբերյալ

1. Այն իրավաբանական անձինք, որոնց լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակը տրվել է Մաքսային միության մաքսային օրենսդրությանը և դրան համապատասխան ընդունված՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակը պահպանում են սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից 2 տարվա ընթացքում:

Նշված ժամկետի ընթացքում լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման մասին վկայականում փոփոխություններ կատարելը, այդ վկայականների գործողությունը կասեցնելը և չեղարկելը, ինչպես նաև լիազորված տնտեսական օպերատորների ռեեստր վարելն իրականացվում են սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու պահին գործող՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված իրավաբանական անձինք սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից 2 տարվա ընթացքում այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմնի կողմից տրվել է լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակը, իրավունք ունեն օգտվելու սույն Օրենսգրքի 437-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերով և 3-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված հատուկ պարզեցված ընթացակարգերից այն կարգով և այնպիսի պայմաններով, որոնք սահմանված են սույն Օրենսգրքով՝ հաշվի առնելով սույն կետի երկրորդ պարբերությունը:

Լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկված իրավաբանական անձինք, մինչև սույն Օրենսգիրքը Ղազախստանի Հանրապետությունում ուժի մեջ մտնելը, սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից 2 տարվա ընթացքում նշված հատուկ պարզեցված ընթացակարգերի հետ մեկտեղ իրավունք ունեն օգտվելու սույն Օրենսգրքի 437-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հատուկ պարզեցված ընթացակարգից այն կարգով և այնպիսի պայմաններով, որոնք սահմանված են սույն Օրենսգրքով:

Սույն կետի առաջին և երկրորդ պարբերություններով նախատեսված հատուկ պարզեցված ընթացակարգերի կիրառման նպատակներով՝ սույն հոդվածի 1-ին կետի առաջին պարբերությունում նշված լիազորված տնտեսական օպերատորների կառույցներին, շինություններին (շինությունների մասերին) և (կամ) բաց հրապարակներին (բաց հրապարակների մասերին) ներկայացվում են սույն Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու պահին գործող՝ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված պահանջներ:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված լիազորված տնտեսական օպերատորները կարող են դիմում ներկայացնել լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում երրորդ տիպի վկայականի տրամադրմամբ ընդգրկվելու համար՝ սույն Օրենսգրքի 433-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պայմանը պահպանելու դեպքում, ինչպես նաև պայմանով, որ մինչև լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելու վերաբերյալ դիմումը մաքսային մարմնի գրանցելու օրն առնվազն 2 տարի այն առկա լինի լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում:

Եթե անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան նախատեսված է եղել լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման մասին վկայականի գործողության կասեցում, ապա նշված ժամկետը հաշվարկելիս դրա մեջ չի ներառվում այն ժամանակահատվածը, որի ընթացքում վկայականի գործողությունը կասեցվել է:

4. Սույն հոդվածի 1-ին կետում նշված իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում առաջին տիպի վկայականի տրամադրմամբ ընդգրկելու դեպքում լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովումը տրամադրվում է՝ հաշվի առնելով սույն կետը:

Այն դեպքում, երբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման մասին վկայականի գործողությունը չի կասեցվել սույն հոդվածի 1-ին կետում նշված իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու օրվանից 2 տարվա ընթացքում, այդ իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում առաջին տիպի վկայականի տրամադրմամբ ընդգրկելիս լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումն ապահովվում է առնվազն 700 հազար եվրոյին համարժեք չափով:

Այն դեպքում, երբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման մասին վկայականի գործողությունը չի կասեցվել սույն հոդվածի 1-ին կետում նշված իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու օրվանից 4 տարվա ընթացքում, այդ իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում առաջին տիպի վկայականի տրամադրմամբ ընդգրկելիս լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումն ապահովվում է առնվազն 500 հազար եվրոյին համարժեք չափով:

Այն դեպքում, երբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման մասին վկայականի գործողությունը չի կասեցվել սույն հոդվածի 1-ին կետում նշված իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու օրվանից 5 տարվա ընթացքում, այդ իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում առաջին տիպի վկայականի տրամադրմամբ ընդգրկելիս լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումն ապահովվում է առնվազն 300 հազար եվրոյին համարժեք չափով:

Այն դեպքում, երբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման մասին վկայականի գործողությունը չի կասեցվել սույն հոդվածի 1-ին կետում նշված իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելու օրվանից 6 տարվա ընթացքում, այդ իրավաբանական անձին լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում առաջին տիպի վկայականի տրամադրմամբ ընդգրկելիս լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարումն ապահովվում է առնվազն 150 հազար եվրոյին համարժեք չափով:

Սույն հոդվածի 1-ին կետում նշված լիազորված տնտեսական օպերատորի կողմից տրամադրված՝ մաքսատուրքերի,

հարկերի վճարման ապահովումը ճանաչվում է որպես այդ անձին սույն Օրենսգրքին համապատասխան լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկելիս լիազորված տնտեսական օպերատորի պարտավորությունների կատարման ապահովում՝ մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովումը տրամադրելու օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝ Մաքսային Միության մաքսային Օրենսգրքին համապատասխան:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Եվրասիական տնտեսական միության
մաքսային օրենսգրքի

Կ Ա Ր Գ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների փոխգործակցության՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր բռնագանձելիս և մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձված գումարները Եվրասիական տնտեսական միության այն անդամ պետություն փոխանցելիս, որտեղ ենթակա են վճարման մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը

1. Սույն Կարգը կիրառվում է այն դեպքերում, երբ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 61-րդ, 74-րդ և 266-րդ հոդվածներին համապատասխան ենթակա են վճարման Եվրասիական տնտեսական միության մեկ անդամ պետությունում (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություն), իսկ մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձումը, Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ կետին, 77-րդ հոդվածի 5-րդ կետին և 270-րդ հոդվածի 12-րդ կետին համապատասխան իրականացվում է այլ անդամ պետության մաքսային մարմնի կողմից, որի մաքսային մարմին տրամադրված է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) ժամանակ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը և (կամ) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը, կամ որի մաքսային մարմնի կողմից որպես «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատու հանդես եկող անձն ընդգրկվել է մաքսային փոխադրողների ռեեստրում կամ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում, կամ որի մաքսային մարմնին տրամադրված է օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային տարածք ժամանակավորապես ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովում:

2. Սույն Կարգի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

«լիազորված մարմնի միասնական հաշիվ»՝ անդամ պետության լիազորված մարմնի համար ազգային (կենտրոնական) բանկում կամ ազգային (կենտրոնական) բանկում թղթակցային հաշիվ ունեցող անդամ պետության լիազորված մարմնում բացված հաշիվ՝ այդ անդամ պետության բյուջեների միջև մուտքերի հաշվեգրման և բաշխման համար.

«մաքսային մարմնի՝ դրամական միջոցների ժամանակավոր տեղաբաշխման հաշիվ»՝ Ղազախստանի Հանրապետության մաքսային մարմնի համար լիազորված մարմնում բացված հաշիվ՝ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման և հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման գումարները հաշվեգրելու համար.

«արտարժութային հաշիվ»՝ մեկ անդամ պետության լիազորված մարմնի համար մյուս անդամ պետության արժույթով ազգային (կենտրոնական) բանկում բացված հաշիվ՝ մյուս անդամ պետությունների կողմից ներմուծման մաքսատուրքերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բաշխումից ստացված մուտքերը հաշվեգրելու համար.

«լիազորված մարմին»՝ անդամ պետության այն պետական մարմինը, որն իրականացնում է տվյալ անդամ պետության բյուջեի կատարման դրամարկղային սպասարկումը.

«կենտրոնական մաքսային մարմիններ»՝ անդամ պետությունների պետական մարմինները, որոնք լիազորված են մաքսային գործի ոլորտում:

3. Այն անդամ պետության մաքսային մարմինը, որտեղ Օրենսգրքի 61-րդ, 74-րդ և 266-րդ հոդվածներին համապատասխան, մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են

վճարման, այն անդամ պետության՝ մաքսային կարգավորման օրենսդրությամբ սահմանված մաքսային մարմնին, որի մաքսային մարմնին տրամադրված է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը (կամ) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը, կամ որի մաքսային մարմնի կողմից որպես «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատու հանդես եկող անձն ընդգրկվել է մաքսային փոխադրողների ռեեստրում կամ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում, ուղեկցող նամակով ուղարկում է հետևյալ փաստաթղթերը՝

1) այն փաստաթղթի հաստատված պատճենը, որով, Օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ կետին, 73-րդ հոդվածի 3-րդ կետին և 270-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան, մաքսային մարմինը ծանուցում է մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարողին, ինչպես նաև այն անձանց, որոնք, Օրենսգրքին և (կամ) անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան, մաքսատուրքեր, հարկեր, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր վճարողի հետ մաքսատուրքերը, հարկերը վճարելու համապարտ կամ լրացուցիչ (սուբսիդիար) պարտավորություն են կրում, սահմանված ժամկետում չվճարված մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների մասին.

2) այն փաստաթղթերի հաստատված պատճենները, որոնք ստացվել են մաքսային հսկողության անցկացման ընթացքում և (կամ) կազմվել են այդպիսի հսկողության անցկացման արդյունքներով, վարչական վարույթի, քրեական գործերով քննության կամ ստուգման ընթացքում, որոնց վարումը (անցկացումը) իրականացվում է անդամ պետությունների մաքսային կամ այլ պետական մարմինների կողմից՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, և որոնցով հաստատվում է օտարերկրյա ապրանքների՝ այն անդամ պետության տարածքում գտնվելու փաստը, որի մաքսային մարմինը չի իրականացնել ապրանքների բացթողում «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան կամ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների բացթողում Միության մաքսային տարածքում ժամանակավորապես գտնվելու համար, կամ դրանց ներմուծումն այդ անդամ պետության տարածք: Այդ փաստաթղթերի պատճենները չեն ուղարկվում այն դեպքում, երբ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը, Օրենսգրքի 61-րդ, 74-րդ և 266-րդ հոդվածներին համապատասխան, ենթակա են վճարման այն անդամ պետությունում, որի մաքսային մարմինն իրականացրել է ապրանքների բացթողում «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, կամ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների բացթողում Միության մաքսային տարածքում ժամանակավորապես գտնվելու համար:

4. Ուղեկցող նամակը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

1) տարանցման հայտարարագրի գրանցման համարի կամ ուղևորային մաքսային հայտարարագրի գրանցման համարի վերաբերյալ.

2) ապահովման հավաստագրի (ապահովման հավաստագրի առկայության դեպքում) գրանցման համարի, մաքսային փոխադրողի կամ լիազորված տնտեսական օպերատորի վերաբերյալ.

3) ըստ տեսակների բռնագանձման ու փոխանցման ենթակա մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարի կամ բռնագանձման ու փոխանցման ենթակա այն մաքսատուրքերի, հարկերի գումարի վերաբերյալ, որոնք գանձվում են միասնական դրույքաչափերով, կամ միագումար մաքսային վճարի ձևով մաքսատուրքերի, հարկերի գումարի վերաբերյալ այն անդամ պետության արժույթով, որտեղ, Օրենսգրքի 61-րդ, 74-րդ և 266-րդ հոդվածներին համապատասխան, մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման.

4) բյուջետային դասակարգման այն ծածկագրի վերաբերյալ, որով բռնագանձված դրամական միջոցները (փողը) ենթակա են հաշվեգրման:

5. Այն անդամ պետության՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված մաքսային մարմինը, որի մաքսային մարմնին տրամադրված է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը և (կամ) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը, կամ որի մաքսային մարմնի կողմից որպես «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատու հանդես եկող անձն ընդգրկվել է մաքսային փոխադրողների ռեեստրում կամ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում, իրականացնում է մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր բռնագանձում՝ այդ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, սույն Կարգի 3-րդ կետում նշված փաստաթղթերի հիման վրա:

Մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը բռնագանձում են այն անդամ պետության արժույթով, որի մաքսային մարմինն իրականացնում է մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքեր բռնագանձում:

Անդամ-պետության արժույթի վերահաշվարկը, որտեղ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման՝ Օրենսգրքի 61-րդ, 74-րդ և 266-րդ հոդվածներին համապատասխան, այն անդամ պետության արժույթի, որի մաքսային մարմնի կողմից իրականացվում է մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձում, կատարվում է սույն Կարգի 3-րդ կետում նշված ուղեկցող նամակը՝ մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձում իրականացնող մաքսային մարմնում գրանցման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

6. Սույն Կարգի 5-րդ կետին համապատասխան բռնագանձված մաքսատուրքերը, հարկերը, հատուկ,

հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են փոխանցման այն արտարժութային հաշվին, որտեղ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման, հետևյալ ժամկետներում՝

1) դրամական միջոցների (փողի) մուտքագրման միջոցով տրամադրված՝ մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման և (կամ) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման հաշվին մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձման դեպքում՝ սույն Կարգի 3-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվանից 12 աշխատանքային օրից ոչ ուշ.

2) դրամական միջոցների (փողի) մուտքագրումից բացի այլ եղանակով տրամադրված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման և (կամ) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովման հաշվին մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձման դեպքում, ինչպես նաև մաքսային փոխադրողներից կամ լիազորված տնտեսական օպերատորներից մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձման դեպքում՝ այն անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին (մաքսային մարմնի դրամական միջոցները (փողը) ժամանակավորապես տեղաբաշխելու հաշիվ) դրամական միջոցների (փողի) մուտքի օրվանից 12 աշխատանքային օրից ոչ ուշ, որի մաքսային մարմնին տրամադրված է մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը և (կամ) հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու պարտավորության կատարման ապահովումը կամ որի մաքսային մարմնի կողմից որպես «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների հայտարարատու հանդես եկող անձն ընդգրկվել է մաքսային փոխադրողների ռեեստրում կամ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում:

7. Սույն Կարգի 6-րդ կետին համապատասխան փոխանցման ենթակա մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը հաշվառվում են լիազորված մարմնի միասնական հաշվում բյուջետային դասակարգման՝ բռնագանձված դրամական միջոցները (փողը) այլ անդամ պետություններին փոխանցելու համար նախատեսված առանձին ծածկագրերով, իսկ Ղազախստանի Հանրապետությունում՝ մաքսային մարմնի դրամական միջոցները (փողը) ժամանակավորապես տեղաբաշխելու հաշվում:

8. Սույն Կարգի 5-րդ կետին համապատասխան մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բռնագանձում իրականացրած՝ անդամ պետության մաքսային մարմինը, սույն Կարգի 6-րդ կետով սահմանված ժամկետի լրանալուց առաջ 3 աշխատանքային օրից ոչ ուշ, իր պետության լիազորված մարմին ուղարկում է հանձնարարական բռնագանձված դրամական միջոցները (փողը) այն անդամ պետության արտարժութային հաշվին փոխանցելու համար, որտեղ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման:

Բռնագանձված դրամական միջոցների (փողի) փոխանցումն այն անդամ պետության արտարժութային հաշվին, որտեղ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը ենթակա են վճարման, ամբողջ ծավալով իրականացվում է լիազորված մարմնի կողմից՝ մաքսային մարմնի համապատասխան հանձնարարականն ուղարկելու օրվանից 3 աշխատանքային օրից ոչ ուշ:

Հաշվարկային (վճարման) փաստաթղթում (վճարման հանձնարարականում) նշվում են բյուջետային դասակարգման այն ծածկագիրը, որով բռնագանձված դրամական միջոցները (փողը) ենթակա են հաշվեգրման և որի վերաբերյալ տեղեկություններն ընդգրկված են սույն Կարգի 4-րդ կետում նշված՝ մաքսային մարմնի ուղեկցող նամակում, ինչպես նաև այդ ուղեկցող նամակի ամսաթիվն ու համարը:

9. Սույն Կարգի 5-րդ կետին համապատասխան բռնագանձված դրամական միջոցները (փողը), որոնք այլ անդամ պետությունների լիազորված մարմիններից մուտքագրել են այն անդամ պետության արտարժութային հաշվին, որտեղ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը, ենթակա են վճարման, փոխանցվում են այդ անդամ պետության բյուջե որպես եկամուտ՝ ներմուծման մաքսատուրքերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվեգրման և բաշխման համար սահմանված կարգով՝ ներմուծման մաքսատուրքերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի բաշխումից ստացված գումարներն անդամ պետության բյուջե որպես եկամուտ փոխանցելու մասով:

Սույն Կարգի 5-րդ կետին համապատասխան բռնագանձված դրամական միջոցները (փողը), որոնք այլ անդամ պետություններից փոխանցվել են անդամ պետության բյուջե որպես եկամուտ, այդ անդամ պետության մաքսային մարմնի կողմից ենթակա են մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի հաշվին հաշվանցման՝ ըստ բյուջետային դասակարգման համապատասխան ծածկագրերի, տվյալ անդամ պետության արտարժութային հաշվին դրամական միջոցները (փողը) հաշվեգրելու օրվանից 10 աշխատանքային օրից ոչ ուշ:

10. Մաքսային մարմինները, Օրենսգրքի 368-րդ հոդվածին համապատասխան, փոխանակվում են Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ կետին և 77-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան բռնագանձված մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների փոխանցման վերաբերյալ տեղեկատվությամբ:

11. Սույն Կարգի իրագործման նպատակներով՝ կենտրոնական մաքսային մարմինները փոխանակվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված մաքսային մարմինների վերաբերյալ տեղեկատվությամբ՝ Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

12. Սույն Կարգի իրագործման նպատակներով՝ լիազորված մարմինները փոխանակվում են իրենց պետությունների

արտարժութային հաշիվների վերաբերյալ տեղեկություններով:

Եթե մեկ անդամ պետության արտարժութային հաշվի վավերապայմանները փոխվում են, ապա այդ անդամ պետության լիազորված մարմինը նշված փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից 10 օրացուցային օրից ոչ ուշ այլ անդամ պետությունների լիազորված մարմիններին իրազեկում է հաշվի ճշգրտված վավերապայմանների մասին:

Սույն Կարգի իրագործման համար անհրաժեշտ այլ տեղեկությունների փոփոխման դեպքում լիազորված մարմինն այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան 3 օրացուցային օր առաջ մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին իրազեկում է այդ փոփոխությունների մասին:

13. Կենտրոնական մաքսային մարմինների հետ համաձայնեցմամբ կատարվում է փոխանակում սույն Կարգի 11-րդ կետում նշված տեղեկատվությունից տարբեր՝ սույն Կարգի իրագործման համար անհրաժեշտ այլ տեղեկատվությամբ՝ էլեկտրոնային ձևով՝ կենտրոնական մաքսային մարմինների միջոցով:

Այդ տեղեկատվության կազմն ու կառուցվածքը, այդ տեղեկատվության փոխանակման ձևաչափն ու կանոնակարգը, ինչպես նաև դրա պաշտպանության եղանակները սահմանվում են կենտրոնական մաքսային մարմինների կողմից:

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Եվրասիական տնտեսական միության
մաքսային օրենսգրքի

Ց Ա Ն Կ

կանոնավոր կերպով տեղեկատվության փոխանակման համար տեղեկությունների

1. Ապրանքների հայտարարագրից ու Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ կետում և 277-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված փաստաթղթերից տեղեկությունների ցանկը՝

1) ապրանքների հայտարարագրի գրանցման համարը.

2) Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման ուղղությունը.

3) ապրանքների ընդհանուր թիվը.

4) բեռնատեղիների ընդհանուր թիվը, որը համապատասխանում է հայտարարագրվող ապրանքներին և նշված է տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթերում.

5) հայտագրված մաքսային ընթացակարգը.

6) նախորդող մաքսային ընթացակարգը.

7) ուղարկող երկիրը.

8) ապրանքների ծագումը.

9) նշանակման երկիրը.

10) առուվաճառք իրականացնող երկիրը.

11) այն տրանսպորտի տեսակը, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) Միության մաքսային սահմանով, և այն տրանսպորտի տեսակը, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) Միության մաքսային սահմանով.

12) այն տրանսպորտային միջոցի համարը, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) Միության մաքսային սահմանով, և այն տրանսպորտային միջոցի համարը, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) Միության մաքսային սահմանով, կամ այլ նույնականացման տեղեկություններ այդ տրանսպորտային միջոցների վերաբերյալ.

13) այն տրանսպորտային միջոցի գրանցման երկիրը, որով իրականացվում է ապրանքների փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) Միության մաքսային սահմանով.

14) ապրանքների բեռնման (բեռնաթափման) վայրը.

15) ապրանքների գտնվելու վայրը.

16) կոնտեյներային փոխադրման նշանը.

17) ապրանքների գնի արժույթը.

18) ապրանքների գնի փոխարժեքը.

19) ապրանքների ընդհանուր արժեքը՝ ապրանքների գնի արժույթով.

20) ապրանքի համարն ապրանքների հայտարարագրում.

21) ապրանքի ծածկագիրը՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան.

22) բեռնատեղիները և ապրանքների նկարագրությունը.

23) ապրանքի զտաքաշը.

24) ապրանքի համաքաշը.

25) քվոտան.

26) նախորդող մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների տեղափոխման ժամանակ ներկայացված մաքսային հայտարարագրի գրանցման համարը.

27) ապրանքի արժեքը՝ ապրանքի գնի արժույթով.

28) մաքսային ընթացակարգի գործողության ժամկետի վերաբերյալ տեղեկությունները և ապրանքները մաքսային ընթացակարգով ձևակերպելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ, ապրանքների հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթերը՝ բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք նշվում են ապրանքների հայտարարագրում՝ անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան.

29) լրացուցիչ չափման միավորը՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան.

30) ապրանքի քանակը՝ լրացուցիչ չափման միավորով.

31) մատակարարման պայմանները (մատակարարման բազիսային պայմանը և աշխարհագրական կետի անվանումը՝ մատակարարման բազիսային պայմանին համապատասխան).

32) ապրանքի վիճակագրական արժեքը.

33) մաքսային հսկողության արդյունքներով կազմված մաքսային փաստաթղթի համարը.

34) ապրանքների բացթողման առանձնահատկությունները.

35) ապրանքի մաքսային արժեքը.

36) ապրանքի մաքսային արժեքի որոշման մեթոդը.

37) փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի լրացուցիչ հավելագրումները (լրացուցիչ հավելագրումների տեսակների մանրամասներով).

38) փաստացի վճարված կամ վճարման ենթակա գնի նվազեցումները (նվազեցումների տեսակների մանրամասներով).

39) ԱՄՆ դոլարի փոխարժեքը.

40) մաքսային վճարների, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի, ինչպես նաև «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ «Միության մասին» պայմանագիր) 50-րդ հոդվածին համապատասխան սահմանված այլ տուրքերի դրույքաչափերը (ըստ վճարումների տեսակների).

41) տեղեկություններ ներմուծման մաքսատուրքի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի, ինչպես նաև «Միության մասին» պայմանագրի 50-րդ հոդվածին համապատասխան սահմանված այլ տուրքի գումարի հաշվարկման վերաբերյալ (վճարի տեսակը, հաշվարկման հիմքը, դրույքաչափը, գումարը, վճարի առանձնահատկությունը).

42) տեղեկություններ ներմուծման մաքսատուրքի, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի, ինչպես նաև «Միության մասին» պայմանագրի 50-րդ հոդվածին համապատասխան սահմանված այլ տուրքի գումարի, ինչպես նաև այդ վճարների մասով հավելագրված տույժերի ու տոկոսների գումարների վճարման վերաբերյալ (վճարման տեսակը, գումարը, վճարման եղանակը).

43) տրամադրված՝ ներմուծման մաքսատուրքի վճարման հետաձգման (տարաժամկետ վճարման) հնարավորությունը.

44) ներմուծման մաքսատուրքերի վճարման արտոնությունները և (կամ) սակագնային առանձնաշնորհումները.

45) ապրանքի բացթողման ամսաթիվը.

46) ապրանքների հայտարարագրի ճշգրտման գրանցման համարը և գրանցման ամսաթիվը.

47) ապրանքների հայտարարագրի ճշգրտման տիպը.

48) ապրանքների հայտարարագրում փոփոխություններ (լրացումներ) կատարելու ամսաթիվն ապրանքների հայտարարագրի ճշգրտման բացակայության դեպքում.

49) Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ կետում և 277-րդ հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված փաստաթղթերի գրանցման համարն ու գրանցման ամսաթիվը:

2. Ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշումից տեղեկությունների ցանկը՝

1) ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման գրանցման համարը.

2) ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման ընդունման ամսաթիվը.

3) ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման ընդունման վերաբերյալ հայտում նշված ապրանքի անվանումը.

4) ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման մեջ նշված՝ ապրանքի ծածկագիրը՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան.

5) ապրանքի վերաբերյալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են դասակարգման համար և նշված են ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման ընդունման վերաբերյալ հայտում.

6) ապրանքի դասակարգման վերաբերյալ նախնական որոշման ընդունման հիմնավորումը.

7) ծառայողական նշումներ (առկայության դեպքում):

ՀԱՎԵԼՎԱԾ 2
«Եվրասիական տնտեսական միության
մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի

Ց Ա Ն Կ

Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այն միջազգային պայմանագրերի, որոնց գործողությունը դադարեցվում է «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրն ուժի մեջ մտնելու կապակցությամբ

I. Այն միջազգային պայմանագրերը, որոնց գործողությունը դադարեցվում է «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից

1. «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագիր:
2. «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագիր:
3. ««Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2010 թվականի ապրիլի 16-ի արձանագրություն:
4. «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև փոխադարձ վարչական օգնության մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիր:
5. «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների և այլ պետական մարմինների միջև տեղեկատվության փոխանակմանը ներկայացվող պահանջների մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիր:
6. «Մաքսային միության մաքսային տարածքով երկաթուղային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների մաքսային տարանցման առանձնահատկությունների մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիր:
7. «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ նախնական տեղեկատվություն փոխանակելու և ներկայացնելու մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիր:
8. «Մաքսային միության անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային ռեեստրի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիր:
9. «Միջազգային փոստային առաքանիներով առաքվող ապրանքների հետ կապված մաքսային գործառնությունների առանձնահատկությունների մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիր:
10. «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից մաքսային հսկողության որոշակի ձևերի կիրառումից ազատելու մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիր:
11. «Ազատ պահեստների և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիր:
12. «Ուղևորների փոխադրում իրականացնող միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցները, ինչպես նաև բեռներ և (կամ) ուղեբեռ փոխադրող կցորդները, կիսակցորդները, կոնտեյներները և երկաթուղային շարժակազմը Մաքսային միության մաքսային տարածքում ներքին փոխադրումներում օգտագործելու առանձնահատկությունների մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիր:
13. «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից կանխիկ դրամական միջոցների և (կամ) դրամական գործիքների տեղափոխման կարգի մասին» 2010 թվականի հուլիսի 5-ի պայմանագիր:
14. «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների վերլուծական և վերահսկողական գործառույթներն իրականացնելու նպատակով տեղեկությունների փոխանակումը կազմակերպելու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 19-ի համաձայնագիր:
15. ««Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2012 թվականի ապրիլի 23-ի արձանագրություն:

II. Այն միջազգային պայմանագրերը, որոնց գործողությունը դադարեցվում է Եվրասիական տնտեսական Հանձնաժողովի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային Օրենսգրքի 444-րդ հոդվածի և 448-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն

1. «Մաքսատուրքերը վճարելու ժամկետների փոփոխման հիմքերի, պայմանների և կարգի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիր:
2. ««Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում տրամադրելուն առնչվող որոշ հարցերի, այդ

ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման առանձնահատկությունների և բռնագանձված գումարները փոխանցելու կարգի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագիր:

3. «Մաքսային Միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագիր:

4. ««Մաքսային Միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 19-ի արձանագրություն:

5. ««Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովում տրամադրելուն առնչվող որոշ հարցերի, այդ ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի բռնագանձման առանձնահատկությունների և բռնագանձված գումարները փոխանցելու կարգի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 19-ի արձանագրություն:

ՀԱՎԵԼՎԱԾ 3
«Եվրասիական տնտեսական միության
մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի

Ց Ա Ն Կ

Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այն միջազգային պայմանագրերի դրույթների, որոնք ուժը կորցրած են ճանաչվում «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրն ուժի մեջ մտնելու կապակցությամբ

I. Այն միջազգային պայմանագրերի դրույթները, որոնք ուժը կորցրած են ճանաչվում «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից

1. «Մաքսատուրքերը վճարելու ժամկետների փոփոխման հիմքերի, պայմանների և կարգի մասին» 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագրի 1-5-րդ հոդվածները, 6-րդ հոդվածի 1-ին կետի առաջին մասի 1-6-րդ ենթակետերը, 2-րդ և 3-րդ կետերը, 7-10-րդ հոդվածները:

2. «Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի շուրջ» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին, 5-րդ և 7-րդ կետերը, 10-րդ հոդվածի 1-ին կետը, 2-րդ կետի առաջինից չորրորդ պարբերությունները, 5-րդ և 6-րդ կետերը, 11-21-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածները:

3. «Հայաստանի Հանրապետության միանալու առնչությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում ու Մաքսային միության և միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի ձևավորման շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի թիվ 2 հավելված) 7- 10-րդ, 12-14-րդ կետերը, 15-րդ կետի չորրորդից յոթերորդ պարբերությունները, 16-րդ, 18-րդ և 22-րդ կետերը:

4. «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի 3-րդ հավելվածի 27-րդ կետ:

5. «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում և Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերում կատարվող փոփոխությունների 7-10-րդ կետերը, 12-14-րդ կետերը, 15-րդ կետի երրորդից տասնչորսերորդ պարբերությունները, 17-րդ, 18-րդ և 20-րդ կետերը («Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու առնչությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում և Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող առանձին միջազգային պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին» 2015 թվականի մայիսի 8-ի արձանագրության հավելված):

II. Այն միջազգային պայմանագրերի դրույթները, որոնք ուժը կորցրած են ճանաչվում Եվրասիական տնտեսական Հանձնաժողովի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 444-րդ հոդվածի համաձայն

1. «Հայաստանի Հանրապետության միանալու առնչությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում ու Մաքսային միության և միասնական տնտեսական տարածքի

իրավապայմանագրային բազայի ձևավորման շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» 2014 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի թիվ 2 հավելված) 11-րդ և 17-րդ կետերը:

2. «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում և Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերում կատարվող փոփոխությունների 11-րդ և 16-րդ կետերը («Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու առնչությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում և Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող առանձին միջազգային պայմանագրերում փոփոխություններ կատարելու մասին» 2015 թվականի մայիսի 8-ի արձանագրության հավելված):

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից: